

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

2015 թվական

Հատոր VII

ԵՐԵՎԱՆ
ԵԱՀԿ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿ
ԵՎ
ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
2016

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 67.411
Հ 247

Սույն տպագրությունը հնարավոր է դարձել իրականացնել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Սույն ձեռնարկի մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տեսակետներին:



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Կազմեցին՝

Արմեն Հովհաննիսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Անի Դանիելյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի ավագ օգնական

Հ 247 Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով
որոշումների ժողովածու/Կազմ՝ Ա. Հովհաննիսյան, Ա. Դանիելյան. – Եր.:
Աստղիկ, 2016, Հ. VII. - 858 էջ:

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 67.411

ISBN 978-92-9235-126-7

Գիրքը վաճառքի ենթակա չէ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	V
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների առարկայական դասակարգում	VII
Աղբյուրների ցանկ թիվ 1.	
ՀՀ Սահմանադրության դրույթներ	XXIII
Աղբյուրների ցանկ թիվ 2.	
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ	XXIV
Աղբյուրների ցանկ թիվ 3.	
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ.....	XXVI
Աղբյուրների ցանկ թիվ 4.	
ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտեր.....	XXVII
1. Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0002/01/14	1
2. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0064/11/14	15
3. Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԳԴ/0002/01/14	25
4. Ս.Շահնազարյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0002/11/14	43
5. Գ.Ղլիջյանի վերաբերյալ որոշում, ԳԴ5/0005/01/14.....	54
6. Մ. Հովհաննիսյանի և Լ. Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0001/11/14.....	66
7. Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0043/11/14.....	79
8. Հ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0172/01/12	91
9. Ա.Հովհաննեսյանի վերաբերյալ որոշում, ԳԴ/0014/01/14.....	113
10. Տ.Կոստանդյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0030/01/12.....	126
11. Կ.Ժաժոյանի վերաբերյալ որոշում, ՇԴ2/0004/01/14	137
12. Հ.Մազմանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0121/11/14	151
13. Ս.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0031/01/14.....	163
14. Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0006/01/14.....	173
15. Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0204/01/13.....	186
16. Ս.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0078/01/13	203
17. Վ.Պարոնիկյանի վերաբերյալ որոշում, ԳԴ1/0006/01/13.....	212
18. Մ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0020/01/13.....	221
19. Ի.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0083/01/14.....	236
20. Ս.Ափոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0033/01/13	247
21. Մ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0144/01/12.....	265
22. Ի.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0019/01/14	277
23. Հ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0051/01/14.....	290
24. Մ.Ալնոյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0174/01/14.....	307
25. Լ.Խոստիկյանի և Ա.Ալեքսանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0046/01/14	320

26. «Մարսերալ» ՍՊԸ-ի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0011/11/14	332
27. Ա.Մայխասյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0051/11/14.....	341
28. Ե.Ալոյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0048/01/14.....	377
29. Գ.Դուրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0052/06/14	393
30. «ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0867/07/14.....	407
31. «Արդշինինվեստանկ» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում, ԳԴ3/0001/11/14.....	417
32. Գ.Աթաբեկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0149/01/14	431
33. Ի.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0070/01/13.....	445
34. Վ.Խնոնի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0179/11/14	456
35. Ա.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0094/01/13.....	468
36. Ա.Կարապետյանի և Ռ.Գուլգուլյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0011/01/14.....	485
37. Պ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0143/11/14	499
38. Ժ.Զաքարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0248/11/14.....	507
39. Վ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0041/01/14.....	515
40. Հ.Մարտիրոսյանի և Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0184/11/14.....	527
41. Ն.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0191/01/14.....	538
42. Լ.Նավասարդյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0064/01/13.....	549
43. Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0011/14/15	559
44. Ա.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0386/06/15	571
45. Գ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0110/01/12.....	582
46. Ա.Մակարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0016/11/15	600
47. Զ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0091/01/14.....	611
48. Էդ.Նազդալյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0108/01/14	623
49. Ա.Կիվիթյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0100/11/14	640
50. Ն.Արմենակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0231/01/14.....	648
51. Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0011/01/14.....	660
52. Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0009/01/15	688
53. Ն.Ավալյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0109/06/15	698
54. Ս.Թադևոսյանի և Ս.Նաջարյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0073/07/15	713
55. Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0039/01/15	732
56. Ն.Ափոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0009/01/13.....	745
57. Գ.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0028/01/14.....	772
58. Մ.Սաֆարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0067/01/14	787
59. Ն.Սահակյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0030/01/12	807



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
2015 ԹՎԱԿԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանը 2009 թվականից նախաձեռնել է իր որոշումների ամենամյա ժողովածուների հրատարակման գործընթաց: Անվիճելի է, որ քրեական պալատի կայացրած որոշումները լուրջ դերակատարություն ունեն քրեական արդարադատության ոլորտում իրավունքի գերակայությունն ապահովելու, վստահելի, կանխատեսելի և թափանցիկ արդարադատություն ձևավորելու, այդ համատեքստում մարդու իրավունքները և ազատությունները երաշխավորելու գործում: Դրանով է պայմանավորված այդ որոշումներն ինչպես իրավաբանական հանրությանը, այնպես էլ հասարակության լայն շրջանակներին հասու դարձնելու կարևորությունն ու հրատապությունը:

Ձևավորված ավանդույթի շարունակությունն է սույն ժողովածուն, որը հանդիսանում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների 7-րդ հատորակը: Ժողովածուն ընդգրկում է 2015 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից կայացված բոլոր որոշումները, որոնք թվով 59-ն են: Դրանք վերաբերում են ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքին:

Մասնավորապես, Գրիգոր Մանուկյանի գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է սպանության ավարտված հանցավորձի դեպքում հանցակազմի շրջանակներից դուրս գտնվող և հանցագործությունից կամովին հրաժարում չհամարվող անձի հետհանցավոր դրական վարքագծի նշանակության, ինչպես նաև սպանության ավարտված հանցավորձից կամովին հրաժարվելու հնարավորության խնդիրներին: Աշոտ Մալխասյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի որոշմամբ հատկապես ընդգծվել են անձի կյանքի իրավունքի ապահովման դատավարական բաղադրիչի շրջանակներում արդյունավետ քննություն կատարելու պետության պարտականությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած իրավական չափանիշների հիման վրա նախադեպային դիրքորոշումներ է արտահայտել նաև այնպիսի իրավական հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ մշակումն արգելված թմրանյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդված), զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու) եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին

մաս), պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու (ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդված) հանցակազմերի մեկնաբանումը, կասկածյալի (մեղադրյալի) դատավարական կարգավիճակ ունեցող անձին սուտ մատնություն կատարելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդված) քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը, նվազ կարևոր արարքի (ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս) հասկացությունը, տևող կամ շարունակվող հանցագործությունների դեպքում ռեցիդիվի գնահատման, փոխադարձ կովի ժամանակ անհրաժեշտ պաշտպանության թույլատրելիության հարցերը, վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով քրեական հետապնդում չիրականացնելիս անձի դիրքորոշման իրավական նշանակությունը, դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ առարկելու՝ մեղադրողի իրավունքի իրացման կառուցակարգը, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ ընտրելը մերժելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննիչ վերանայման սահմանները, մեղադրանքը փոփոխելու կարգի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդված) խախտում արձանագրելու դեպքում վերադաս ատյանի դատարանի լիազորությունները, մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելիս կայացվող դատավարական որոշման բնույթը, խուզարկություն կատարելը թույլատրելի անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի ապահովման հիմնախնդիրը և այլն:

Ժողովածուի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դրանում սահմանված է որոշումների առարկայական դասակարգման գործիք, որում առանձին ներկայացվում է, թե կոնկրետ որոշումը որ իրավադրույթի մեկնաբանությանն է վերաբերում: Ավելին, դրանում, ինչպես և նախորդ հատորներում, սահմանված են յուրաքանչյուր որոշման առարկայական մյուս բնութագրիչները, որոնք վերաբերում են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում վկայակոչված և կիրառված ՀՀ Սահմանադրության դրույթներին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին:

Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որում նույնությամբ առկա են հատորյակում ներառված դատական ակտերը, ինչն առավել դյուրին է դարձնում ժողովածուում գետեղված դատական ակտերին ծանոթանալը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածուի սույն հատորը հնարավոր է դարձել հրատարակել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ մեր երկարատև և արդյունավետ գործակցության շնորհիվ:

Դ.Զ.ԱՎԵՏԻՍՅԱՆ
*ՀՀ վճռաբեկ դատարանի
քրեական պալատի նախագահ,
իրավագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ վաստակավոր իրավաբան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Ն-Ի Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվության հիմքը (ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդված)

Ն-Ի-1 Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0002/01/14
(1², նույն որոշումը տե՛ս նաև Ն-ԻԻ-1, Ն-IV-1, Ն-XXX-1).....1
Ն-Ի-2 Վ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0041/01/14
(39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-2, Ն-XXIX-1).....515

Ն-ԻԻ Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրինականության սկզբունքը (ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդված)

Ն-ԻԻ-1 Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0002/01/14
(1, նույն որոշումը տե՛ս նաև Ն-Ի-1, Ն-IV-1, Ն-XXX-1).....1
Ն-ԻԻ-2 Մ.Ախնոյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0174/01/14
(24, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-4, Ն-XII-2, Ն-XVI-4).....307
Ն-ԻԻ-3 Գ.Աթաբեկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0149/01/14
(32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-9, Ն-XIII-2, Ն-XXV-2).....431
Ն-ԻԻ-4 Ա.Նունուշյանի վերաբերյալ որոշում,
ԵԱՆԴ/0094/01/13 (35, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-5, Ն-XII-3,
Ն-XIV-1, Ն-XX-1).....468
Ն-ԻԻ-5 Ն.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0191/01/14
(41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-7, Ն-XXIII-2)538

Ն-III Մեկնաբանվող իրավադրույթներ՝ պատժի արդարացիությունը, պատժի նպատակները, պատժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածներ)

Ն-III-1 Ս.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0031/01/14
(13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-2, Ն-XXXV-1).....163
Ն-III-2 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0204/01/13
(15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-XIII-1, Ն-XVI-3, Ն-XIX-1).....186
Ն-III-3 Մ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0144/01/12
(21, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXII-1).....265
Ն-III-4 Մ.Ախնոյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0174/01/14
(24, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-2, Ն-XII-2, Ն-XVI-4).....307
Ն-III-5 Ա.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0094/01/13
(35, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-4, Ն-XII-3, Ն-XIV-1, Ն-XX-1).....468

¹ Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Ն» տառով:

² Որոշման հերթական համարը:

Ն-III-6 Ա.Կարապետյանի և Ռ.Գուրգույանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0011/01/14 (36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-5, Ն-XXIII-1).....	485
Ն-III-7 Ն.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0191/01/14 (41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-5, Ն-XXIII-2).....	538
Ն-III-8 Ս.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԿԴԴ/0078/01/13 (16, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIX-2).....	203
Ն-III-9 Գ.Աթաբեկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0149/01/14 (32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-3, Ն-XIII-2, Ն-XXV-2).....	431
Ն-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործության հասկացությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդված)	
Ն-IV-1 Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0002/01/14 (1, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-II-1, Ն-XXX-1).....	1
Ն-IV-2 Վ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0041/01/14 (39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-2, Ն-XXIX-1).....	515
Ն-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ նվազ կարևոր արարք (ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս)	
Ն-V-1 Ն.Արմենակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0231/01/14 (50).....	648
Ն-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների ռեցիդիվը (ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդված)	
Ն-VI-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0204/01/13 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-2, Ն-XIII-1, Ն-XXVI-3, Ն-XIX-1).....	186
Ն-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ավարտված և չավարտված հանցագործությունները (ՀՀ քրեական օրենսգրքի 33-րդ հոդված)	
Ն-VII-1 Գ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0110/01/12 (45, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Ն-IX-1, Ն-XXII-2).....	582
Ն-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցափորձը (ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդված)	
Ն-VIII-1 Գ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0110/01/12 (45, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Ն-IX-1, Ն-XXII-2).....	582
Ն-VIII-2 Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0011/01/14 (51, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXII-3, Ն-XXVII-2).....	660
Ն-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունից կամովին հրաժարումը (ՀՀ քրեական օրենսգրքի 36-րդ հոդված)	
Ն-IX-1 Գ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0110/01/12 (45, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Ն-VIII-1, Ն-XXII-2).....	582
Ն-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցակցության հասկացությունը և հանցակիցների տեսակները (ՀՀ քրեական օրենսգրքի 37-38-րդ հոդվածներ)	
Ն-X-1 Գ.Ղլիջյանի վերաբերյալ որոշում, ԳԴ5/0005/01/14 (5, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1).....	54

Ն-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ անհրաժեշտ պաշտպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդված)

Ն-XI-1 Գ.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0028/01/14 (57, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIV-1).....772
Ն-XI-2 Մ.Սաֆարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0067/01/14 (58, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIV-2).....787

Ն-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ (ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդված)

Ն-XII-1 Ա.Հովհաննեսյանի վերաբերյալ որոշում, ԳԴ/0014/01/14 (9, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-1, Ն-XXVIII-1).....113
Ն-XII-2 Մ.Ախնտյանի վերաբերյալ որոշում, ՄԴ3/0174/01/14 (24, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-2, Ն-III-4, Ն-XVI-4).....307
Ն-XII-3 Ա.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0094/01/13 (35, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-4, Ն-III-5, Ն-XIV-1, Ն-XX-1).....468

Ն-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ (ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդված)

Ն-XIII-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՄԴ/0204/01/13 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-2, Ն-VI-1, Ն-XVI-3, Ն-XIX-1).....186
Ն-XIII-2 Գ.Աթաբեկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0149/01/14 (32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-3, Ն-III-9, Ն-XXV-2).....431

Ն-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված)

Ն-XIV-1 Ա.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0094/01/13 (35, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-4, Ն-III-5, Ն-XII-3, Ն-XX-1).....468

Ն-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցանքների համակցությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդված)

Ն-XV-1 Ի.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0070/01/13 (33, նույն որոշումը տե՛ս նաև Դ³-II-2, Դ-XL-1, Դ-XLI-2, Դ-XLV-1).....445

Ն-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)

Ն-XVI-1 Ա.Հովհաննեսյանի վերաբերյալ որոշում, ԳԴ/0014/01/14 (9, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-1, Ն-XXVIII-1).....113
Ն-XVI-2 Ս.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0031/01/14 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-XXXV-1).....163
Ն-XVI-3 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՄԴ/0204/01/13 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-2, Ն-VI-1, Ն-XIII-1, Ն-XIX-1).....186

³ Սույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Դ» տառով:

Ն-XVI-4 Մ.Ախնոյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0174/01/14 (24, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-2, Ն-III-4, Ն-XII-2).....	307
Ն-XVI-5 Ա.Կարապետյանի և Ռ.Գուլգույյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0011/01/14 (36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-6, Ն-XXIII-1).....	485
Ն-XVI-6 Զ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0091/01/14 (47, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIV-1).....	611
Ն-XVI-7 Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0039/01/15 (55).....	732

Ն-XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով

(ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդված)

Ն-XVII-1 Հ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0172/01/12 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VII-1, Դ-XI-2, Դ-XXI-1).....	91
Ն-XVII-2 Հ.Մազմանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0121/11/14 (12, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XI-3).....	151
Ն-XVII-3 Լ.Նավասարդյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0064/01/13 (42, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-2, Դ-XI-6).....	549

Ն-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ համաներումը

(ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդված)

Ն-XVIII-1 Լ.Խոստիկյանի, Ա.Ալեքսանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0046/01/14 (25).....	320
---	-----

Ն-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատվածությունը

(ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդված)

Ն-XIX-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0204/01/13 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-8).....	186
Ն-XIX-2 Ս.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԿԴԴ/0078/01/13 (16, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIX-2).....	203

Ն-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ անչափահասների քրեական պատասխանատվությունը և պատիժը

(ՀՀ քրեական օրենսգրքի 85-րդ և 90-րդ հոդվածներ)

Ն-XX-1 Ա.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0094/01/13 (35, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-4, Ն-III-5, Ն-XII-3, Ն-XIV-1).....	468
---	-----

Ն-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելը, փոփոխելը և դադարեցնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 97-99-րդ, 101-րդ հոդվածներ)

Ն-XXI-1 Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0011/14/15 (43).....	559
---	-----

Ն-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանությունը

(ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված)

Ն-XXII-1 Մ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԱԲԴ/0144/01/12 (21, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-3).....	265
---	-----

Ն-XXII-2 Գ.Մանուկյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0110/01/12 (45, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Ն-VIII-1, Ն-IX-1).....	582
Ն-XXII-3 Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0011/01/14 (51, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-2, Ն-XXVII-2).....	660
Ն-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դիտավորությանը առողջությանը ծանր վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված)	
Ն-XXIII-1 Ա.Կարապետյանի և Ռ.Գույգույանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0011/01/14 (36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-6, Ն-XVI-5).....	485
Ն-XXIII-2 Ն.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0191/01/14 (41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-5, Ն-III-7).....	538
Ն-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդված)	
Ն-XXIV-1 Գ.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԿԴՅ/0028/01/14 (57, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-1).....	772
Ն-XXIV-2 Մ.Սաֆարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0067/01/14 (58, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-2).....	787
Ն-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գողությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված)	
Ն-XXV-1 Գ.Ղիջյանի վերաբերյալ որոշում, ԳԴՅ/0005/01/14 (5, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1).....	54
Ն-XXV-2 Գ.Աթաբեկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0149/01/14 (32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-3, Ն-III-9, Ն-XIII-2).....	431
Ն-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված)	
Ն-XXVI-1 Ս.Ափոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0033/01/13 (20, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIII-3, Դ-XLIX-1).....	247
Ն-XXVI-2 Լ.Նավասարդյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0064/01/13 (42, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVII-3, Դ-XI-6) Դ-X-2.....	549
Ն-XXVI-3 Ն.Ափոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0009/01/13 (56, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-2, Դ-XXII-1, Դ-XXV-1, Դ-XXXIII-5, Դ-XXXV-1).....	745
Ն-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապօրինի կերպով գնք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված)	
Ն-XXVII-1 Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԳԴ/0002/01/14 (3, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VIII-1, Դ-XI-1, Դ-XXIV-1, Դ-XXV-1, Դ-XXVI-1).....	25

Ն-XXVII-2 Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում,
ԵԱՆԳ/0011/01/14 (51, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-2, Ն-XXII-3).....660

Ն-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված)

Ն-XXVIII-1 Ա.Հովհաննեսյանի վերաբերյալ որոշում,
ԳԴ/0014/01/14 (9, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-1, Ն-XVI-1).....113

Ն-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդված)

Ն-XXIX-1 Վ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0041/01/14
(39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-2, Ն-IV-2).....515

Ն-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ մշակույն արգելված թմրանյութեր, հոգեմեա (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդված)

Ն-XXX-1 Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0002/01/14
(1, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-II-1, Ն-IV-1).....1

Ն-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ կաշառք ստանալը (ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդված)

Ն-XXXI-1 Կ.Ժաժոյանի վերաբերյալ որոշում, ՇԴ2/0004/01/14
(11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXII-1).....137

Ն-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը (ՀՀ քրեական օրենսգրքի 311¹-րդ հոդված)

Ն-XXXII-1 Կ.Ժաժոյանի վերաբերյալ որոշում, ՇԴ2/0004/01/14
(11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXI-1).....137

Ն-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը (ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդված)

Ն-XXXIII-1 Վ.Պարոնիկյանի վերաբերյալ որոշում, ԳԴ1/0006/01/13
(17, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XI-4).....212

Ն-XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ սուտ մատնությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդված)

Ն-XXXIV-1 Հ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0051/01/14
(23, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XV-1, Դ-XX-1).....290

Ն-XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը

(ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդված)	
Ն-XXXV-1 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0031/01/14 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-XVI-2).....	163
Ն-XXXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդված)	
Ն-XXXVI-1 Ե.Ալոյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0048/01/14 (28).....	377
Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ	
Դ-1 Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդված)	
Դ-1-1 Ա.Մալխասյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0051/11/14 (27, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XI-5).....	341
Դ-1-2 «ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0867/07/14 (30, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-1, Դ-XXIII-1, Դ-XXIV-1, Դ-XXVIII-1, Դ-XLVII-2).....	407
Դ-1-3 Հ.Մարտիրոսյանի և Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0184/11/14 (40, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIII-1, Դ-XIX-2, Դ-XX-1).....	527
Դ-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրինականության սկզբունքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդված)	
Դ-II-1 Գ.Դուրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0052/06/14 (29, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-1, Դ-XXVI-1, Դ-XXVIII-1, Դ-XXIX-1, Դ-XXX-2).....	393
Դ-II-2 Ի.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0070/01/13 (33, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XV-1, Դ-XL-1, Դ-XLI-2, Դ-XLV-1).....	445
Դ-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ հավասարությունը օրենքի և դատարանի առջև (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված)	
Դ-III-1 Տ.Տոստանդյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0030/01/12 (10, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VI-1, Դ-XLVI-1, Դ-XLVIII-1).....	126
Դ-III-2 «Մարսերալ» ՍՊԸ-ի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0011/11/14 (26, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLIII-1).....	332
Դ-III-3 Վ.Խնտևի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0179/11/14 (34).....	456
Դ-III-4 Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0009/01/15 (52, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXVIII-1).....	688
Դ-III-5 Ն.Սահակյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0030/01/12 (59, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IX-2, Դ-XI-7, Դ-XXXIII-6, Դ-XLVI-2, Դ-XLVIII-2).....	807
Դ-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ անձի անձեռնմխելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդված)	
Դ-IV-1 Գ.Դուրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0052/06/14 (29, նույն որոշումը տե՛ս նաև Դ-II-1, Դ-XXVI-1, Դ-XXVIII-1, Դ-XXIX-1, Դ-XXX-2).....	393

Դ-IV-1 Ա.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0386/06/15 (44, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVI-2, Դ-XXVII-1, Դ-XXX-1).....	571
Դ-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ բնակարանի անձեռնմխելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդված)	
Դ-V-1 «ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0867/07/14 (30, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-2, Դ-XXIII-1, Դ-XXIV-1, Դ-XXVIII-1, Դ-XLVII-2).....	407
Դ-V-2 Ս.Թադևոսյանի և Ս.Նաչարյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0073/07/15 (54, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIII-2, Դ-XXVIII-2).....	713
Դ-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության լեզուն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդված)	
Դ-VI-1 Տ.Կոստանդյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0030/01/12 (10, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-1, Դ-XLVI-1, Դ-XLVIII-1)	126
Դ-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)	
Դ-VII-1 Հ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0172/01/12 (8, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVII-1, Դ-XI-2, Դ-XXI-1).....	91
Դ-VII-2 Պ.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0143/11/14 (37, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXI-5).....	499
Դ-VII-3 Ժ.Զաքարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0248/11/14 (38, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXI-6).....	507
Դ-VII-4 Ա.Կիվիրյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0100/11/14 (49, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXI-8).....	640
Դ-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)	
Դ-VIII-1 Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԳԴ/0002/01/14 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVII-1, Դ-XI-1, Դ-XXIV-1, Դ-XXV-1, Դ-XXVI-1).....	25
Դ-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդված)	
Դ-IX-1 Մ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0020/01/14 (17, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIX-1).....	212
Դ-IX-2 Ն.Սահակյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0030/01/12 (59, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-5, Դ-XI-7, Դ-XXXIII-6, Դ-XLVI-2, Դ-XLVIII-2).....	807
Դ-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդված)	
Դ-X-1 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԿԴԻ/0006/01/14 (նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIV-1, Դ-XVI-1, Դ-XXIII-1, Դ-XXII-1, Դ-XXV-1, Դ-XXVI-2).....	173

Գ-Ճ-2 Ն.Ափոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0009/01/13 (56, նույն որոշումը տևն նաև Ն-XXVI-3, Գ-XXII-1, Գ-XXV-1, Գ-XXXIII-5, Գ-XXXV-1).....745

Գ-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)

Գ-XI-1 Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԳԳ/0002/01/14 (3, նույն որոշումը տևն նաև Ն-XXVII-1, Գ-VIII-1, Գ-XXIV-1, Գ-XXV-1, Գ-XXVI-1).....25

Գ-XI-2 Հ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0172/01/12 (8, նույն որոշումը տևն նաև Ն-XXVII-1, Գ-VII-1, Գ-XXI-1).....91

Գ-XI-3 Հ.Մազմանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0121/11/14 (12, նույն որոշումը տևն նաև Ն-XXVII-2).....151

Գ-XI-4 Վ.Պարոնիկյանի վերաբերյալ որոշում, ԳԳ/0006/01/13 (17, նույն որոշումը տևն նաև Ն-XXXIII-1).....212

Գ-XI-5 Ա.Մալխասյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0051/11/14 (27, նույն որոշումը տևն նաև Գ-I -1).....341

Գ-XI-6 Լ.Նավասարդյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0064/01/13 (42, նույն որոշումը տևն նաև Ն-XXVII-3, Ն-XXVI-2).....549

Գ-XI-7 Ն.Սահակյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12 (59, նույն որոշումը տևն նաև Գ-III-5, Գ-IX-2, Գ-XXXIII-6, Գ-XLVI-2, Գ-XLVIII-2)....807

Գ-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի լիազորությունները
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդված)

Գ-XII-1 Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0043/11/14 (7, նույն որոշումը տևն նաև Գ-XXVII-2, Գ-XIX-1, Գ-XXXI-4).....79

Գ-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդված)

Գ-XIII-1 Հ.Մարտիրոսյանի և Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0184/11/14 (40, նույն որոշումը տևն նաև Գ-I-3, Գ-XIX-2, Գ-XX-1).....527

Գ-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի իրավունքները և պարտականությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդված)

Գ-XIV-1 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0006/01/14 (14, նույն որոշումը տևն նաև Գ-X-1, Գ-XVI-1, Գ-XXIII-1, Գ-XXII-1, Գ-XXV-1, Գ-XXVI-2).....173

Գ-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ կասկածյալի, մեղադրյալի իրավունքները և պարտականությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ, 65-րդ հոդվածներ)

Գ-XV-1 Հ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0051/01/14 (23, նույն որոշումը տևն նաև Ն-XXXIV-1, Գ-XX-1).....290

Դ- XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վկան

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդված)

Դ-XVI-1 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0006/01/14 (14, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-1, Դ-XIV-1, Դ-XXIII-1, Դ-XXII-1, Դ-XXV-1, Դ-XXVI-2).....173

Դ- XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավարության մասնակից ճանաչելու պահանջի իրավունքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդված)

Դ-XVII-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0064/11/14 (2, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-1, Դ-XXXI-1).....15

Դ-XVII-2 Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0043/11/14 (7, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XII-1, Դ-XIX-1, Դ-XXXI-4).....79

Դ- XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների պարզաբանումը, դրանց իրականացման հնարավորության ապահովումը

(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդված)

Դ-XVIII-1 «Արդշինիսվետսբանկ» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում, ԳԴ3/0001/11/14 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLI-1).....417

Դ- XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ միջնորդությունների և պահանջների՝ քննության առնելու պարտադիր լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդված)

Դ-XIX-1 Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0043/11/14 (7, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XII-1, Դ-XVII-2, Դ-XXXI-4).....79

Դ-XIX-2 Հ.Մարտիրոսյանի և Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0184/11/14 (40, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-3, Դ-XIII-1, Դ-XX-1).....527

Դ- XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման ազատությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդված)

Դ-XX-1 Հ.Մարտիրոսյանի և Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0184/11/14 (40, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-3, Դ-XIII-1, Դ-XIX-2).....527

Դ- XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես ապացույց չթույլատրվող նյութերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդված)

Դ-XXI-1 Հ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0172/01/12 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVII-1, Դ-VII-1, Դ-XI-2).....91

Դ- XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացուցման ենթակա հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդված)

Դ-XXII-1 Ն.Ավոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0009/01/13 (56, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVI-3, Դ-X-2, Դ-XXV-1, Դ-XXXIII-5, Դ-XXXV-1).....745

Դ-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդված)

Դ-XXIII-1 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԿԴ/0006/01/14 (14, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-1, Դ-XIV-1, Դ-XVI-1, Դ-XXII-1, Դ-XXV-1, Դ-XXVI-2).....173

Դ-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ փորձագետի եզրակացությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդված)

Դ-XXIV-1 Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԳԴ/0002/01/14 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVII-1, Դ-VIII-1, Դ-XI-1, Դ-XXV-1, Դ-XXVI-1).....25

Դ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների ստուգումը, գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-127-րդ հոդվածներ)

Դ-XXV-1 Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԳԴ/0002/01/14 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVII-1, Դ-VIII-1, Դ-XI-1, Դ-XXIV-1, Դ-XXVI-1).....25

Դ-XXV-1 Ն.Ափոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0009/01/13 (56, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-3, Դ-X-2, Դ-XXII-1, Դ-XXXIII-5, Դ-XXXV-1).....745

Դ-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)

Դ-XXVI-1 Գ.Դուրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0052/06/14 (29, նույն որոշումը տե՛ս նաև Դ-II-1, Դ-IV-1, Դ-XXVIII-1, Դ-XXIX-1, Դ-XXX-2)....393

Դ-XXVI-2 Ա.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0386/06/15 (44, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-1, Դ-XXVII-1, Դ-XXX-1).....571

Դ-XXVI-3 Ն.Ավալյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0109/06/15 (53, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-1).....698

Դ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդված)

Դ-XXVII-1 Ա.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0386/06/15 (44, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-1, Դ-XXVI-2, Դ-XXX-1).....571

Դ-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանավորումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդված)

Դ-XXVIII-1 Գ.Դուրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0052/06/14 (29, նույն որոշումը տե՛ս նաև Դ-II-1, Դ-IV-1, Դ-XXVI-1, Դ-XXIX-1, Դ-XXX-2).....393

Դ-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված)

Դ-XIX-1 Ն.Ավալյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0109/06/15 (53, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVI-3).....698

Դ-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ֆիզիկական անձանց հաղորդումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդված)
Դ-XX-1 Հ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0051/01/14 (23, նույն որոշումը տե՛ս նաև Ե-XXXIV-1, Դ-XV-1).....290

Դ-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ժամկետները և կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներ)
Դ-XXI-1 Ս.Շահնազարյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0002/11/14 (4, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-2, Դ-XXXI-2).....43

Դ-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի հարցաքննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդված)
Դ-XXII-1 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0006/01/14 (14, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-1, Դ-XIV-1, Դ-XVI-1, Դ-XXIII-1, Դ-XXV-1, Դ-XXVI-2).....173

Դ-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ խուզարկություն կատարելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդված)
Դ-XXIII-1 «ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0867/07/14 (30, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-2, Դ-V-1, Դ-XXIV-1, Դ-XXVIII-1, Դ-XLVII-2)...407
Դ-XXIII-2 Ս.Թադևոսյանի և Ս.Նաչարյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0073/07/15 (54, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-2, Դ-XXIII-2).....713

Դ-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ խուզարկություն կատարելու կատարելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդված)
Դ-XXIV-1 «ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0867/07/14 (30, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-2, Դ-V-1, Դ-XXIII-1, Դ-XXVIII-1, Դ-XLVII-2)...407

Դ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ փորձագետի եզրակացությունը, լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-րդ և 251-րդ հոդվածներ)
Դ-XXV-1 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0006/01/14 (14, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-1, Դ-XIV-1, Դ-XVI-1, Դ-XXIII-1, Դ-XXII-1, Դ-XXVI-2).....173

Դ-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ փորձագետի հարցաքննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 252-րդ հոդված)
Դ-XXVI-1 Գ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԳԴ/0002/01/14 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ե-XXVII-1, Դ-VIII-1, Դ-XI-1, Դ-XXIV-1, Դ-XXV-1).....25
Դ-XXVI-2 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0006/01/14 (14, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-1, Դ-XIV-1, Դ-XVI-1, Դ-XXIII-1, Դ-XXII-1, Դ-XXV-1).....173

Դ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական վերահսկողության ոլորտը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդված)
Դ-XXVII-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0064/11/14 (2, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVII-1, Դ-XXXI-1).....15

Դ-XXVII-2 Ս.Շահնագարյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0002/11/14
(4, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXI-1, Դ-XXXI-2).....43

Դ-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունները և դրանց քննարկման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-283-րդ հոդվածներ)

Դ-XXVIII-1 «ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0867/07/14 (30, նույն որոշումը տե՛ս նաև Դ-I-2, Դ-V-1, Դ-XXIII-1, Դ-XXIV-1, Դ-XLVII-2).....407

Դ-XXVIII-2 Ս.Թադևոսյանի և Ս.Նաջարյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0073/07/15 (54, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-2, Դ-XXIII-2).....713

Դ-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը, վերջինիս արդյունքում կայացվող դատական որոշման բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ, 287-րդ հոդվածներ)

Դ-XXIX-1 Գ.Դուրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0052/06/14 (29, նույն որոշումը տե՛ս նաև Դ-II-1, Դ-IV-1, Դ-XXVI-1, Դ-XXVIII-1, Դ-XXX-2).....393

Դ-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդված)

Դ-XXX-1 Ա.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0386/06/15
(44, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-1, Դ-XXVI-2, Դ-XXVII-1).....571

Դ-XXX-2 Գ.Դուրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0052/06/14
(29, նույն որոշումը տե՛ս նաև Դ-II-1, Դ-IV-1, Դ-XXVI-1, Դ-XXVIII-1, Դ-XXIX-1).....393

Դ-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետագա դատական վերահսկողությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)

Դ-XXXI-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0064/11/14
(2, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVII-1, Դ-XXVII-1).....15

Դ-XXXI-2 Ս.Շահնագարյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0002/11/14
(4, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXI-1, Դ-XXVII-2).....43

Դ-XXXI-3 Մ.Հովհաննիսյանի և Լ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0001/11/14 (6, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIII-1, Դ-XLVII-1).....66

Դ-XXXI-4 Հ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0043/11/14
(7, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XII-1, Դ-XVII-2, Դ-XIX-1).....79

Դ-XXXI-5 Պ.Սուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0143/11/14
(37, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VII-2).....499

Գ-XXXI-6 Ժ.Զաքարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0248/11/14 (38, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-3).....	507
Գ-XXXI-7 Ա.Մակարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0016/11/15 (46, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXIII-4).....	600
Գ-XXXI-8 Ա.Կիվիդյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0100/11/14 (49, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VII-4).....	640

Գ-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդված)

Գ-XXXII-1 Էդ.Նազդալյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0108/01/14 (48).....	623
--	-----

Գ-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված)

Գ-XXXIII-1 Մ.Հովհաննիսյանի և Լ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0001/11/14 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXI-3, Գ-XLVII-1).....	66
Գ-XXXIII-2 Ի.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0083/01/14 (19, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVI-1, Գ-XLII-1, Գ-XLIV-1).....	236
Գ-XXXIII-3 Ս.Ափոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0033/01/13 (20, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1, Գ-XLIX-1).....	247
Գ-XXXIII-4 Ա.Մակարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0016/11/15 (46, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXI-7).....	600
Գ-XXXIII-5 Ն.Ափոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0009/01/13 (56, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-3, Գ-X-2, Գ-XXII-1, Գ-XXV-1, Գ-XXXV-1).....	745
Գ-XXXIII-6 Ն.Սահակյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12 (59, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-5, Գ-IX-2, Գ-XI-7, Գ-XLVI-2, Գ-XLVIII-2).....	807

Գ-XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճիռ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարցերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդված)

Գ-XXXIV-1 Զ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0091/01/14 (47, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-6).....	611
--	-----

Գ-XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրական դատավճիռը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդված)

Գ-XXXV-1 Ն.Ափոյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0009/01/13 (56, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-3, Գ-X-2, Գ-XXII-1, Գ-XXV-1, Գ-XXXIII-5).....	745
---	-----

Գ-XXXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերը (ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 371-րդ և 372-րդ հոդվածներ)	
Գ-XXXVI-1 Ի.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0083/01/14 (19, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIII-2, Դ-XLII-1, Դ-XLIV-1).....	236
Գ-XXXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ արագացված կարգի կիրառման հիմքերը, արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ և 375.3-րդ հոդվածներ)	
Գ-XXXVII-1 Ի.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0019/01/14 (22).....	277
Գ-XXXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդված)	
Գ-XXXVIII-1 Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0009/01/15 (52, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-4).....	688
Գ-XXXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդված)	
Գ-XXXIX-1 Մ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0020/01/14 (17, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IX-1).....	212
Գ-XL Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոքը և վարույթ ընդունելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդված)	
Գ-XL-1 Ի.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0070/01/13 (33, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XV-1, Դ-II-2, Դ-XLI-2, Դ-XLV-1).....	445
Գ-XLI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդված)	
Գ-XLI-1 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում, ԳԳ3/0001/11/14 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-1).....	417
Գ-XLI-2 Ի.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0070/01/13 (33, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XV-1, Դ-II-2, Դ-XL-1, Դ-XLV-1).....	445
Գ-XLII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ վերանայման առարկան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդված)	
Գ-XLII-1 Ի.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0083/01/14 (19, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIII-2, Դ-XXXVI-1, Դ-XLIV-1).....	236
Գ-XLIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդված)	
Գ-XLIII-1 «Մարսերալ» ՍՊԸ-ի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0011/11/14 (26, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-2).....	332

Գ-XLIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդված)

Գ-XLIV-1 Ի.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0083/01/14
(19, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXIII-2, Գ-XXXVI-1, Գ-XLII-1).....236

Գ-XLV Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդված)

Գ-XLV-1 Ի.Նունուշյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0070/01/13
(33, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XV-1, Գ-II-2, Գ-XL-1, Գ-XLI-2).....445

Գ-XLVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի ու որոշումների վերանայումը վճռաբեկության կարգով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդված)

Գ-XLVI-1 Տ.Կոստանդյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0030/01/12
(10, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-1, Գ-VI-1, Գ-XLVIII-1).....126

Գ-XLVI-2 Ն.Սահակյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0030/01/12
(59, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-5, Գ-IX-2, Գ-XI-7, Գ-XXXIII-6, Գ-XLVIII-2)...807

Գ-XLVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդված)

Գ-XLVII-1 Մ.Հովհաննիսյանի և Լ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում,
ԱԲԱԴ/0001/11/14 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXI-3, Գ-XXXIII-1).....66

Գ-XLVII-2 «ՀՏԻ ԳՀԻ» ՓԲԸ-ի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0867/07/14
(30, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-2, Գ-V-1, Գ-XXIII-1, Գ-XXIV-1, Գ-XXVIII-1).....407

Գ-XLVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճռաբեկ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդված)

Գ-XLVIII-1 Տ.Կոստանդյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0030/01/12
(10, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-1, Գ-VI-1, Գ-XLVI-1).....126

Գ-XLVIII-2 Ն.Սահակյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0030/01/12
(59, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-5, Գ-IX-2, Գ-XI-7, Գ-XXXIII-6, Գ-XLVI-2)....807

Գ-XLIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ արդարացման դատավճռի բեկանումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդված)

Գ-XLIX-1 Ս.Ափոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0033/01/13
(20, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1, Գ-XXXIII-3).....247

Աղբյուրների ցանկ թիվ 1
ՀՀ Սահմանադրության դրույթներ

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված	(12), (31), (54),
ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված	(29), (33), (40)
ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդված	(27)
ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդված	(29), (44)
ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդված	(23), (31)
ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդված	(4), (14), (37), (38), (49)
ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդված	(1), (14)
ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդված	(30), (54),
ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված	(23)
ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդված	(10), (26), (34), (52), (59)

Աղբյուրների ցանկ թիվ 2

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. *Artico v. Italy*,
1980 թվականի մայիսի 13-ի վճիռ (12)
2. *Bricmont v Belgium*,
1989 թվականի հուլիսի 7-ի վճիռ (8)
3. *Kamasinski v. Austria*,
1989 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ (48)
4. *Brandstetter v. Austria*,
1991 թվականի օգոստոսի 28-ի վճիռ (23)
5. *McCann and Others v. The United Kingdom*,
1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռ (27)
6. *Gulec v. Turkey*,
1998 թվականի հուլիսի 27-ի վճիռ (27)
7. *Ergi v. Turkey*,
1998 թվականի հուլիսի 28-ի վճիռ (27)
8. *Yaşa v. Turkey*,
1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռ (27)
9. *Assenov and Others v. Bulgaria*,
1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (27)
10. *Pelissier and Sassi v. France*,
1999 թվականի ապրիլի 25-ի վճիռ (48)
11. *Hugh Jordan v. United Kingdom*,
2001 թվականի մայիսի 4-ի վճիռ (27)
12. *G.K. v. Poland*,
2004 թվականի հունվարի 20-ի վճիռ (12)
13. *Van Rossem v. Belgium*,
2004 թվականի դեկտեմբերի 9-ի վճիռ (54)
14. *Buck v. Germany*,
2005 թվականի ապրիլի 28-ի վճիռ (54)
15. *Salov v. Ukraine*,
2005 թվականի սեպտեմբերի 6-ի վճիռ (12)
16. *Sokurenko and Strygun v. Ukraine*.

2006 թվականի հուլիսի 20-ի վճիռ	(29)
<i>17. Hermi v. Italy,</i>	
2006 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռ	(12)
<i>18. Radchikov v. Russia,</i>	
2007 թվականի մայիսի 24-ի վճիռ	(18)
<i>19. Smirnov v. Russia,</i>	
2007 թվականի հունիսի 7-ի վճիռ	(54)
<i>20. Association for European Integration and Human Rights and Ekimdzhiev v. Bulgaria,</i>	
2007 թվականի հունիսի 28-ի վճիռ	(11)
<i>21. Šubinski v. Slovenia,</i>	
2007 թվականի հունվարի 18-ի վճիռ	(12)
<i>22. Iliya Stefanov v. Bulgaria,</i>	
2008 թվականի մայիսի 22-ի վճիռ	(54)
<i>23. Liberty and Others v. the United Kingdom,</i>	
2008 թվականի հուլիսի 1-ի վճիռ	(11)
<i>24. Xseraj v. Albania,</i>	
2008 թվականի հուլիսի 29-ի վճիռ	(18)
<i>25. Kats and Others v. Ukraine,</i>	
2008 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ	(27)
<i>26. Kolesnichenko v. Russia,</i>	
2009 թվականի ապրիլի 9-ի վճիռ	(54)
<i>27. Ratushna v. Ukraine,</i>	
2010 թվականի դեկտեմբերի 2-ի վճիռ	(54)
<i>28. AL-Khawaja and Tahery v. the United Kingdom,</i>	
2011 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռ	(8)
<i>29. Sefilyan v. Armenia,</i>	
2012 թվականի հունվարի 2-ի վճիռ	(11)
<i>30. Gorelov v. Russia,</i>	
2014 թվականի հունվարի 9-ի վճիռ	(27)

Աղբյուրների ցանկ թիվ 3

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

- | | |
|--|---------------------------|
| 1. ՍԴՈ-844, 2009 թվականի դեկտեմբերի 7 | (2), (6), (7), (31), (46) |
| 2. ՍԴՈ-871, 2010 թվականի մարտի 30 | (27) |
| 3. ՍԴՈ-934, 2011 թվականի փետրվարի 4 | (48) |
| 4. ՍԴՈ-931, 2010 թվականի դեկտեմբերի 28 | (22) |

Աղբյուրների ցանկ թիվ 4

ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտեր

1. *Պ.Բայրամյանի գործով*
2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշում (9)
2. *Ա.Ճուղուրյանի գործով*
2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշում (44)
3. *Ս.Հունիկյանի գործով*
2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08 որոշում (45)
4. *Ս.Այվազյանի գործով*
2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08 որոշում (27)
5. *Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի գործով*
2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշում (5)
6. *Ա.Ավերիսյանի գործով*
2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշում (29), (44), (53)
7. *Ա.Ղալալյանի գործով*
2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0225/06/08 որոշում (29)
8. *Հ.Բաղդասարյանի գործով*
2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ2/0059/01/08 որոշում (51)
9. *Գ.Մադաթյանի գործով*
2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշում (9),(13),
(15), (21), (50)
10. *Ռ.Արշալույսյանի գործով*
2009 թվականի փետրվարի 17-ի որոշում (31)
11. *Ե.Միսակյանի գործով*
2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ1/0003/11/08 որոշում (6), (31),
(37), (46)
12. *Ե.Սարգսյանի գործով*
2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅԲԲԴ/0109/01/08 որոշում (55)
13. *Ս.Ավերիսյանի գործով*
2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԵԿԴ/0019/11/09 որոշում (7)
14. *Ա.Կարախանյանի գործով*
2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԵԲԲԴ/0569/01/08 որոշում (29)
15. *Ա.Սարգսյանի գործով*

- 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵԱԲԴ/0295/01/08 որոշում (11)
- 16. Ս.Նայրանդյանի գործով*
- 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅԲԲԴ2/0144/01/09 որոշում (48)
- 17. Ն.Պողոսյանի գործով*
- 2010 թվականի մարտի 26-ի թիվ ՀՅԲԲԴ2/0153/01/08 որոշում (23)
- 18. Տ.Քամայանի գործով*
- 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵՇԴ/0097/01/09 որոշում (22)
- 19. Ֆ.Գալստյանի գործով*
- 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշում (6), (20), (23), (37), (46), (56)
- 20. Խ.Ղազարյանի գործով*
- 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԷԴ/0138/01/09 որոշում (24)
- 21. Ա.Սահակյանի գործով*
- 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10 որոշում (9)
- 22. Լ.Գուլյանի գործով*
- 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0051/11/09 որոշում (27)
- 23. Ա.Սարունցի գործով*
- 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԴ/0001/11/10 որոշում (33)
- 24. Ա.Հակոբյանի գործով*
- 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0149/01/09 որոշում (57), (58)
- 25. Ա.Պասյանի գործով*
- 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշում (48)
- 26. Կ.Փափազյանի գործով*
- 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԷԴ/0002/11/10 որոշում (27)
- 27. Գ.Պետրոսյանի գործով*
- 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0126/01/10 որոշում (55)
- 28. Լ.Ավետիսյանի գործով*
- 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշում (20), (56)
- 29. Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի գործով*
- 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0209/01/10 որոշում (22)
- 30. Հ.Մելքոնյանի գործով*
- 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԱԴԴ/0009/11/10 որոշում (31)

31. *Մ. և Կ. Մարգարյանների գործով*
 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0282/01/09 որոշում (52)
32. *«Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով*
 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴԴ/0003/11/10 որոշում (26)
33. *Ե.Մելքոնյանի գործով*
 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշում (3)
34. *Ս.Գրիգորյանի գործով*
 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵԿԴ/0281/01/10 որոշում (33)
35. *Հ.Հարությունյանի գործով*
 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշում (2), (4)
36. *Մ.Էլրյանի և մյուսների վերաբերյալ գործով*
 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշում (28), (33)
37. *Ա.Սաղաթելյանի գործով*
 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշում (8), (12), (42)
38. *Վ.Ավերիսյանի գործով*
 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11 որոշում (1), (25)
39. *Ա.Բարսյանի և Ս.Թումանյանի գործով*
 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշում (48)
40. *Ա.Բաղդասարյանի գործով*
 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10 որոշում (45), (51)
41. *Ն.Մարգարյանի գործով*
 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշում (16), (24), (35)
42. *Ս.Սաքանյանի գործով*
 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշում (3), (56), (58)
43. *Ա.Թորոսյանի գործով*
 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0118/01/11 որոշում (57), (58)
44. *Գ.Ղազարյանի գործով*
 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԴ/0121/01/11 որոշում (19), (33)
45. *Ա.Առուարամյանի գործով*
 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՏԴ/0145/01/11 որոշում (22)
46. *Ա.Մկրտչյանի գործով*
 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0326/01/09 որոշում (21)

47. *Ս.Հովհաննիսյանի գործով*
2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՍԴ/0204/01/11 որոշում (28)
48. *Վ.Մաթևոսյանի գործով*
2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշում (20), (56)
49. *Վ.Բաղդասարյանի գործով*
2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԴ4/0002/01/11 որոշում (46)
50. *Է.Ասատրյանի գործով*
2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշում (9)
51. *Թ.Գևորգյանի գործով*
2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԼԴ/0203/01/11 որոշում (12)
52. *Ա.Հարությունյանի գործով*
2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵՇԴ/0110/01/11 որոշում (19)
53. *Ս.Սարգսյանի գործով*
2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12 որոշում (24), (47), (55)
54. *Ս.Անպոնյանի գործով*
2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշում (27)
55. *Վ.Պողոսյանի գործով*
2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ1/0062/06/12 որոշում (44)
56. *Լ. և Ռ. Թարվերդյանների գործով*
2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԱՎԴ2/0007/01/12 որոշում (52)
57. *Ա.Առաքելյանի գործով*
2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱՆԴ/0122/01/12 որոշում (9),
58. *Ա.Բաղդասարյանի գործով*
2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0009/11/13 որոշում (6), (12)
59. *Ա.Գաբրիելյանի գործով*
2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՎԲ-04/13 որոշում (8)
60. *Ա.Զյարլիցևի գործով*
2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԿԴ/0020/06/13 որոշում (44)
61. *Ա.Սերոբյանի և Էդ.Պետրոսյանի գործով*
2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0002/01/13 որոշում (48)
62. *Դ.Ղամբարյանի և մյուսների գործով*
2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշում (5), (45)
63. *Ս.Աղախանյանի գործով*
2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշում (47), (55)

64. *Ա. Ծարուրյանի գործով*
2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0045/14/13 որոշում (43)
65. *Գ. Խնուսյանի գործով*
2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշում (20), (46), (59)
66. *Գ. Ղևոնդյանի գործով*
2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշում (34)
67. *Հ. Մովսիսյանի գործով*
2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՍԴ/0389/01/11 որոշում (28)
68. *Ա. Միսնոյանի գործով*
2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0055/11/13 որոշում (34)
69. *Ա. Գրիգորյանի գործով*
2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԿԴ/0125/11/13 որոշում (31)
70. *Ս. Աբրահամյանի գործով*
2014 թվականի մարտի 28-ի թիվ ԿԴ1/0053/01/12 որոշում (17)
71. *Ս. Մարգարյանի գործով*
2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 որոշում (53)
72. *Ս. Ղանթարյանի և այլոց գործով*
2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշում (8), (12), (15), (42)
73. *Ա. Պողոսյանի գործով*
2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՏԴ/0071/01/13 որոշում (22)
74. *Ժ. Սեֆիլյանի գործով*
2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշում (11)
75. *Հ. Պարանյանի գործով*
2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԷԴ/0132/01/13 որոշում (13)
76. *Մ. Սարուխանյանի գործով*
2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԴ/0185/01/13 որոշում (28)
77. *Ն. Չաքմազյանի գործով*
2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՆԴ/0060/01/13 որոշում (13), (24)
78. *Ռ. Նիսազյանի գործով*
2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշում (27)
79. *Տ. Մարտիրոսյանի գործով*
2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵՇԴ/0121/01/12 որոշում (14), (32)

80. *Ա.Շահրազյանի գործով*
2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշում (13), (21), (36), (41)
81. *Ա.Շաքարյանի գործով*
2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0163/01/13 որոշում (16), (47)
82. *Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի գործով*
2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշում (3), (13), (14), (15), (21), (23), (50), (56)
83. *Գ.Խնուսյանի գործով*
2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշում (10), (59)
84. *Գ.Ոսկանյանի գործով*
2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0119/01/13 որոշում (13)
85. *Դ.Վարդանյանի գործով*
2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԱԲԴ/0056/06/14 որոշում (53)
86. *Բ.Միսակյանի գործով*
2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՇԴ2/0007/15/13 որոշում (26)
87. *Դ.Միսիրյանի գործով*
2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԵԴ/0122/01/13 որոշում (1)
88. *Դ.Վարոսյանի գործով*
2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՇԴ/0005/11/14 որոշում (26)
89. *Ա.Հակոբյանի գործով*
2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԵԿԴ/0064/11/14 որոշում (7)
90. *Հ.Սարգսյանի գործով*
2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ՇԴ/0172/01/12 որոշում (12)
91. *Հ.Մազմանյանի գործով*
2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշում (42)
92. *Ս.Խաչատրյանի գործով*
2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14 որոշում (36), (41)
93. *Գ.Մանուկյանի գործով*
2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշում (51)
94. *Պ.Մուրադյանի գործով*
2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0143/11/14 որոշում (38), (49)
95. *Զ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի գործով*
2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0091/01/14 որոշում (55)

1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴ/0002/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վարդան Վոլոդյայի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով հարուցված թիվ 13800813 քրեական գործի նյութերով 2013 թվականի հոկտեմբերի 4-ին հարուցվել է թիվ 13112813 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և առանձնացվել առանձին վարույթում:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի հոկտեմբերի 7-ի որոշմամբ Վարդան Վոլոդյայի Ղազարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2013 թվականի հոկտեմբերի 7-ին Վ.Ղազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ Վ.Ղազարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել ու նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2013 թվականի դեկտեմբերի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 30-ի դատավճռով Վ.Ղազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառմամբ պատժի կրման ընթացքում Վ.Ղազարյանի նկատմամբ նշանակվել է հարկադիր բուժում թմրամոլության դեմ:

Վ.Ղազարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղաազրված արարքում ճանաչվել է անպարտ և արդարացվել հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Վ.Ղազարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Մեղադրող Մ.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 30-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը:

Վճարելի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վ.Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «Վ.Ղազարյանը, 2013 թվականի ընթացքում կանեփի թփեր աճեցնելու համար արհեստականորեն սրեղծել է այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն կանեփի թփի աճեցմանը, այն է՝ սպահովվել է լուսային, ջերմային և օդափոխության համար բոլոր պայմանները և իր տանը կից շինություններում հողով լի ծաղկամաններում, ինչպես նաև տան հողամասում աճեցրել ու մշակել է առանձնապես խոշոր չափերի, ընդհանուր թվով 191 հատ մշակումն արգելված թմրանյութ պարունակող կանեփի՝ «Canabis» խմբի բույսեր» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 255-261):

6. Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում Վ.Ղազարյանին արդարացնելով, պատճառաբանել է. «[ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը] բլանկետային է և օրենսդիրը նախատեսել է, որ հանցակազմ կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե մեկ այլ իրավական ակտով րվյալ դեպքում օրենքով, պետք է արգելված լինի որոշակի բույսեր ցանել կամ աճեցնելը, կամ էլ օրենքով հատուկ կարգ պետք է սահմանված լինի դրանց մշակման համար, որի խախտումը նոր միայն կառուցանի քրեական պարասխանաարվություն:

Փաստորեն նախարանական մարմինը մեղադրանք առաջադրելիս, մեղադրանքի հիմքում դրել է ՀՀ քր.օր-ին կից թիվ 5-րդ հավելվածի 5-րդ կետը: 5-րդ հավելվածի վերնագիրն է «Մշակումն արգելված թմրամիջոցներ հոգեմեղր /հոգեներգործուն/, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի խոշոր և առանձնապես խոշոր չափերը»: Վերնագրից ակնհայտ է դառնում, որ մշակումն արգելված պետք է լինի այդ հավելվածում որոնց թվում 5-րդ կետում, նշված բույսերը, որոնք իրենց մեջ պարունակում են թմրամիջոցներ, հոգեմեղր /հոգեներգործուն/, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր: Այսինքն հավելվածն է պահանջում որպեսզի մեկ այլ օրենքով կամ իրավական ակտով արգելված լինեն այդ բույսերը, (...) քանի որ չկա որևէ իրավական ակտ, որը կարգավորի, սահմանափակի կամ արգելի վերը նշված բույսերի ցանելը կամ աճեցնելը, ուստի Վարդան Ղազարյանի կամ այլ անձի կողմից կանեփի տեսակի բույսի աճեցումը չի կարող դիտվել հանցագործություն և անձը չի կարող ենթարկվել քրեական պարասխանաարվության ու քանի որ բացակայում է հանցադեպը, սպա Վարդան Ղազարյանը չի կարող պարասխանաարվության ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով, ուստի և նա պետք է անպարտ ճանաչվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հանցադեպի բացակայության հիմքով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 84-92):

7. Անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Վերաքննիչ դատարանը ևս իր դատական ակտում նշել է, որ. «ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը բլանկետային է, այսինքն պետք է քրեորեն պարզելի համարվի մշակումն արգելված թմրանյութեր «հոգեներգործող, խիար ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը, իսկ ՀՀ-ում բացակայում է որևէ իրավական ակտ կամ օրենքով սահմանված հարուկ կարգ դրանց մշակումն արգելելու համար, ուստի տվյալ դեպքում կաննեի տեսակի բույսի աճեցնելը չի կարող քրեական պատասխանատվության հիմք հանդիսանալ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 153-158):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերի պնդմամբ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Մասնավորապես, բողոք բերած անձը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանն անտեսել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի բաղկացուցիչ մաս հանդիսացող թիվ 5 հավելվածը, սահմանելով մշակումն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի խոշոր և առանձնապես խոշոր չափերը, դրանով իսկ միաժամանակ սահմանում է նաև այդ ցանկում թվարկված բույսերի մշակման արգելք, ինչը բավարար պայման է ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի կիրառման համար: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի թիվ 5 հավելվածն ինքնին արգելում է դրանում թվարկված բույսերի մշակումը: Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը, սխալ մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի քրեաիրավական նորմը և այն չդիտարկելով ՀՀ քրեական օրենսգրքի թիվ 5 հավելվածի արգելող կանոնի հետ միասնության մեջ, թույլ է տվել դատական սխալ, այն է՝ քրեական օրենքի սխալ կիրառում, որի արդյունքում հանցանք կատարած անձն ազատվել է քրեական պատասխանատվությունից: Ըստ բողոքաբերի՝ քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձի արդարացումը խախտում է ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածով ամրագրված պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը:

Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշմանը՝ բողոքաբերը նշել է, որ այն նույնպես անհիմն է և չպատճառաբանված, քանի որ բառացիորեն վկայակոչում է ստորադաս դատարանի դիրքորոշումն առանց որևէ այլ հիմնավորման:

9. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար, քանի որ բողոքարկվող դատական ակտում ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի մեկնաբանությունը հակասում է նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ՝ թիվ ԵԿԴ/0013/01/13 քրեական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունվարի 17-ի դատավճռում այդ նորմին տրված մեկնաբանությանը: Մասնավորապես, նշված դատավճռում Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը և թիվ 5 հավելվածը, հանգել է եզրակացության, որ օրենսդրի կողմից քրեորեն պատժելի արարք է համարվում խոշոր և առանձնապես խոշոր չափերով թմրանյութեր, հոգեմետ խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը, այսինքն՝ մշակելը, ինչն արգելված է: Իսկ կանեփի թուփը պարունակում է թմրանյութ, հետևաբար դրա մշակումն արգելված է: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը նման եզրահանգման է եկել՝ գտնելով, որ «մշակումն արգելված» բառակապակցությունը (ինչը նշանակում է ցանել, ջրել, աճեցնել, քաղհանել և այլն) չի կարող վերաբերել թմրանյութերին, հոգեմետ խիստ ներգործող կամ թունավոր նյութերին, որոնց ստացումը, ստեղծումն ու արտադրությունը կապված է այլ գործողությունների հետ, այլ այն վերաբերում է թմրանյութեր, հոգեմետ խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի մշակմանը, ինչն օրենքով արգելված է:

Բողոքաբերի պնդմամբ բողոքարկվող դատական ակտում ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի մեկնաբանությունը հակասում է նաև նույնանման փաստական հանգամանքներով թիվ ԱՎԴ/0101/01/13 և թիվ ԱՎԴ-2/0054/01/13 գործերով Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի համապատասխանաբար 2013 թվականի դեկտեմբերի 17-ի և 2014 թվականի հունվարի 24-ի, թիվ ԵԱԿԴ/0087/01/13 գործով Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի, թիվ ԿԴԿ/0048/01/13 գործով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունվարի 24-ի, թիվ ԱՐԱԴ/0032/01/13, թիվ ԱՐԱԴ/0033/01/13 և թիվ ԱՐԱԴ/0028/01/13 գործերով Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի համապատասխանաբար 2014 թվականի փետրվարի 3-ի, 2014 փետրվարի 7-ի և 2014 թվականի ապրիլի 10-ի մեղադրական դատավճիռներում այդ նորմին տրված մեկնաբանությանը:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 30-ի դատավճիռն անվիժի թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի իրացումն է, քանի որ տարբեր գործերով ստորադաս դատարանների դատական ակտերում ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը (մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը) կիրառվել է իրար հակասող մեկնաբանությամբ: Այդ առումով Վճարելի դատարանը գտնում է, որ մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու հանցակազմի մեկնաբանության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վ.Ղազարյանին մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր առանձնապես խոշոր չափերով ապօրինի ցանելը կամ աճեցնելը) որակելու անհնարինության մասին ստորադաս դատարանների հետևությունը:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան ձևակերպված է հետևյալ բովանդակությամբ. «Մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը խոշոր չափերով»:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը պատասխանատվություն է սահմանում համապատասխան բույսերն առանձնապես խոշոր չափերով ապօրինի ցանելու կամ աճեցնելու համար:

Մեջբերված հոդվածի դիսպոզիցիայի վերլուծությունից երևում է, որ անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված

հանցակազմն առկա է, երբ նա ապօրինի, խոշոր կամ առանձնապես խոշոր չափով ցանում կամ աճեցնում է մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

ա) անձը ցանել կամ աճեցրել է մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր **խոշոր կամ առանձնապես խոշոր չափերով,**

բ) (ա) կետում նշված չափերով համապատասխան բույսերը անձը **ցանել կամ աճեցրել է ապօրինի:**

Վերոնշյալ (ա) կետում շարադրված պայմանը կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքին կից թիվ 5 հավելվածով (այսուհետ նաև՝ Հավելված 5), որը սահմանում է մշակումն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի խոշոր և առանձնապես խոշոր չափերը: Ինչ վերաբերում է (բ) կետում նշված պայմանին, այն է՝ համապատասխան բույսեր **ապօրինի ցանելը կամ աճեցնելը**, ապա կոնկրետ դեպքում «**ապօրինի**» եզրույթը ենթադրում է, որ պետք է առկա լինի քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող համապատասխան գործողություններն իրականացնելու (**ցանելու կամ աճեցնելու**)՝ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգ, իսկ իրավակիրառողը այդ կարգի հաշվառմամբ պետք է քննություն իրականացնի և գնահատման ենթարկի այդ բույսերը ցանելու կամ աճեցնելու օրինականությունը:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի ձևակերպումից հետևում է, որ այն նկարագրված է բլանկետային դիսպոզիցիայով. քրեական պատասխանատվություն նախատեսելով կոնկրետ չափերով համապատասխան բույսեր ապօրինի, այսինքն՝ օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված պահանջների խախտմամբ ցանելու կամ աճեցնելու համար՝ այն չի սահմանում այդ պահանջները և, ըստ այդմ, ենթադրում է հղում նորմատիվ իրավական այլ ակտի (ակտերի), որը պետք է ամրագրի դրանք: Դրանից հետևում է, որ մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելու կամ աճեցնելու օրինականության պահանջների վերաբերյալ կարգավորումները բացահայտելու համար անհրաժեշտ է դիմել նորմատիվ իրավական այլ ակտերի օգնությանը:

Այսպես՝ թմրանյութերի և հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական նորմատիվ իրավական ակտը «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքն է (այսուհետ նաև՝ Օրենք): Սակայն այս ոլորտին առնչվող օրենսդրական կարգավորումներ պարունակում է նաև

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը: Բացի այդ, առկա են թմրամիջոցների շրջանառությանն առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ կառավարության որոշումներ:

15. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառությունն ասելով՝ պետք է հասկանալ նշված նյութերի մշակումը, արտադրությունը, պատրաստումը, վերամշակումը, մեծածախ առևտուրը, տեղափոխումը, պահումը, բացթողումը, իրացումը, ձեռքբերումը, օգտագործումը, առաքումը, բաշխումը, արտահանումը, ներմուծումը և ոչնչացումը: Ըստ այդմ էլ Օրենքում տրված առանձին կարգավորումները վերաբերում են թմրամիջոցների շրջանառության՝ բացառապես նշված ձևերի հետ կապված իրավահարաբերություններին: Վերոշարադրյալից բխում է, որ Օրենքը, սահմանելով և այս կամ այն չափով կանոնակարգելով թմրամիջոցների (ընդ որում, Օրենքում տեղ գտած հիմնական հասկացությունները սահմանող 3-րդ հոդվածի համաձայն՝ թմրամիջոցներ ասելով՝ պետք է հասկանալ նաև այդպիսիք պարունակող բույսերը) շրջանառության ձևերը, դրանց շարքում, սակայն, չի ներառում թմրանյութեր պարունակող բույսեր ցանելը կամ անեցնելը և, ըստ այդմ, որևէ օրենսդրական կարգավորում չի պարունակում նշված գործողությունների կատարման կարգի վերաբերյալ: Օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետը բովանդակում է սուսկ ընդհանուր բնույթի դրույթ այն մասին, որ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման վերահսկողության իրականացման լիազորված մարմինների հիմնական լիազորություններն են Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող բույսերի վեգետացիոն շրջանի ժամկետների և այդ կապակցությամբ վերահսկման ենթակա տարածքների սահմանագծերի հաստատումը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը անհրաժեշտ է համարում նշել, որ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի» մասին ՀՀ օրենքի, ինչպես նաև նույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա ընդունված ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման վերլուծությունից հետևում է, որ թմրանյութեր պարունակող բույսեր ցանելը կամ անեցնելը չի կլանվում նաև «թմրամիջոցների մշակում» հասկացության ներքո:

Մասնավորապես, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի» մասին ՀՀ օրենքի՝ «Նոր թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մշակումը» վերտառությամբ 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բժշկական նպատակներով օգտագործվող նոր

թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մշակումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նոր թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մշակումն իրականացվում է միայն պետական պատվերներին համապատասխան և հանձնարարվում է գիտահետազոտական կազմակերպություններին: Իսկ թմրամիջոցների շրջանառության, այդ թվում՝ մշակման կարգը սահմանող ՀՀ կառավարության վերոգրյալ որոշումը պարունակում է մշակման վերաբերյալ միայն մեկ դրույթ՝ նույն որոշման թիվ 1 հավելվածի 3-րդ կետը, համաձայն որի՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների մշակման, արտադրության, պատրաստման համար անհրաժեշտ են ասիստենտական սենյակ, փաթեթավորման սենյակ՝ լվացարանով, ամանեղենի մանրէազերծման սենյակ, պահեստ, շշերի պահպանման սենյակ, դեղափոշիների պահպանման սենյակ, տնտեսական ապրանքների պահպանման սենյակ, սանհանգույց՝ լվացարանով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «մշակում» եզրույթը ներպետական օրենսդրության իմաստով ենթադրում է ոչ թե համապատասխան բույսերի սերմեր ցանելը և (կամ) դրանք աճեցնելը, այլ թմրամիջոցների՝ լաբորատոր պայմաններում ստացման գործընթացը:

15.1. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 18-ի թիվ 281-Ն որոշման վերլուծությունից հետևում է, որ ի տարբերություն թմրամիջոցների (կամ հոգեմետ նյութերի կամ ՀՀ կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների) արտադրությանը, ներմուծմանը, արտահանմանը և մեծածախ առևտրին՝ թմրանյութեր պարունակող բույսեր ցանելու կամ աճեցնելու գործունեության լիցենզավորման կարգ նույնպես սահմանված չէ:

16. Այսպիսով, մի կողմից նախատեսված է քրեական պատասխանատվություն օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված կարգի խախտմամբ համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու համար, մյուս կողմից որևէ կարգ նախատեսված չէ: Նախատեսելով քրեական պատասխանատվություն թմրանյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու համար՝ օրենսդիրը նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ նշված գործողություններն իրականացնելն իրավաչափորեն դիտարկել է որպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության ձև, սակայն չնախատեսելով համապատասխան կարգ՝ ըստ էության հետևողական չի եղել խնդրի համապարփակ օրենսդրական կարգավորման հարցում:

17. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ

(հոգ են երգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի, այսինքն՝ **նորմատիվ իրավական ակտով սահմանված պահանջների խախտմամբ** ցանելու կամ աճեցնելու համար, սակայն թմրամիջոցների և հոգ են ետ (հոգ են երգործուն) նյութերի շրջանառությունը կանոնակարգող օրենսդրությամբ սահմանված չէ նշված բույսերը ցանելու կամ աճեցնելու որևէ կարգ:

18. Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: (...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն չի համարվել: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պարասխանաարվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:

2. Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»:

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վրանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով: (...)»:

19. Նախորդ կետում նշված նորմերը Վճռարեկ դատարանը վերլուծել է Վ.Ավետիսյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ. «(...) [Ա]նձին հանցագործություն (հանցագործություններ) կատարելու մեջ մեղավոր ճանաչելու և այդ հանցագործության (հանցագործությունների) համար պատիժ նշանակելու միակ հիմքն է կատարման պահին նրա արարքն օրենքով հանցագործություն համարվելը և այդ հանցագործության համար պատիժ նախատեսված լինելը: Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պարասխանաարվության և պատժի այլ կերպ, քան օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, կարգով և չափով: Անձը չի կարող ենթարկվել պարասխանաարվության այնպիսի արարքի համար, որն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով նախատեսված չէ գործող օրենքով:

(...) «[Զ]կա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր

ճանաչում արագած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն փաստ: Այն բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հեղինակարար նշված սկզբունքից որևէ շեղում անթույլատրելի է» (տես Վարուժան Գագիկի Ավետիսյանի գործով ՀՀ վճարելի դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11 որոշման 13-րդ կետը):

19.1. Դ.Միմիդյանի գործի շրջանակներում զարգացնելով Վ.Ավետիսյանի գործով արտահայտված վերոհիշյալ դիրքորոշումը՝ Վճարելի դատարանը նշել է. «(...) միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը (...): Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով: Այս առումով Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է «օրենք» հասկացությանն առաջադրվող այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսիք են հասանելիությունը և կանխատեսելիությունը (...): Որակական այս պահանջները պետք է ապահովվեն ինչպես հանցագործության, այնպես էլ դրա համար պատժի նշանակման ժամանակ (...): Անձը համապատասխան դրույթի տրտազի ընկալումից և, անհրաժեշտության դեպքում, դրա կապակցությամբ դատարանների տված մեկնաբանությունից պետք է հասկանա, թե որ գործողությունների և անգործության համար է քրեական պատասխանատվություն նախատեսվում և ինչ պատիժ կնշանակվի այդ գործողությունների կատարման և/կամ անգործության համար (...):

(...) օրենքի՝ իրավական որոշակիության չափանիշին բավարարելն առաջին հերթին օրենսդրական կարգավորման խնդիր է, իսկ դատական մեկնաբանումը լրացնող դերակատարություն ունի: Օրենսդրի խնդիրն է հնարավորինս հստակ և որոշակի սահմանել հանցավոր համարվող արարքը և դրա համար պատիժը, իսկ դատարանների խնդիրն է՝ օրենսդրի կողմից սահմանված արարքի էությանը համապատասխան մեկնաբանել նորմերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը զարգացող հասարակական հարաբերություններին:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի որևէ նորմում առկա օրենսդրական բացը չի կարող վերացվել, հաղթահարվել կամ լրացվել դատական մեկնաբանման միջոցով, քանի որ օրինականության սկզբունքի անքակտելի փաստ է քրեական օրենքը տարածական մեկնաբանելու և անալոգիայով կիրառելու արգելքը: Հետևաբար նման իրավիճակն օրենսդրական կարգավորման խնդիր է:

(...) դատական մեկնաբանման շրջանակները սահմանափակված են օրինականության սկզբունքով: Այդպիսի մեկնաբանումը հնարավոր է այն դեպքում, երբ իրականացվում է օրենսդրի կողմից սահմանված իրավակարգավորման շրջանակներում, քիտում է դրա էությունից և բացառում քրեական օրենքի տարածական մեկնաբանումը կամ անալոգիայով

կիրառումը: Վերոգրյալից հետևում է, որ այն դեպքում, երբ հանցակազմի պարարադիր հարկանիշը սահմանող հասկացության բովանդակության բացահայտումը կախված չէ գործի կոնկրետ հանգամանքներից, կարող է սահմանվել դրանցից վերացարկված, սակայն սահմանված չէ օրենքով, դատարանը, չունենալով գնահատման օբյեկտիվ չափանիշներ, գրկված է դրանք մեկնաբանելու հնարավորությունից: Եման դեպքերում օրենքը չի համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար դրա հիման վրա անձին դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պարիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) կանոնի խախտման» (տես Դավիթ Սիմիդյանի գործով Վճռարեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԵԴ/0122/01/13 որոշման 16-18-րդ կետերը):

20. Վերահաստատելով և զարգացնելով 19-19.1. կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ նորմի որոշակի լինելու պահանջը հատուկ նշանակություն ունի քրեական օրենքի համար՝ հաշվի առնելով այն իրավական հետևանքների առանձնահատուկ բնույթը, որոնք առաջանում են քրեաիրավական նորմի պահանջների խախտման պարագայում: Այս պահանջի խախտումը արժեզրկում է ոչ միայն օրինականության, այլ նաև քրեական իրավունքի մյուս սկզբունքները: Քրեաիրավական նորմը պետք է պարունակի հստակ կարգադրագրեր (վարքագծի կանոններ), հակառակ պարագայում այդ նորմի հասցեատերը գրկվում է իր վարքագիծը դրա պահանջներին համապատասխանեցնելու և համապատասխան իրավական հետևանքները կանխատեսելու հնարավորությունից: Անձին քրեական պատասխանատվության ենթարկելը նման դեպքում հանգեցնում է նաև օբյեկտիվ մեղսայնացման՝ խախտելով ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը:

21. Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի դիսպոզիցիան նկարագրված է բլանկետային դիսպոզիցիայով՝ վերոհիշյալ նորմը պետք է դիտարկել և դրա որոշակիությունը գնահատել համապատասխան ճյուղային օրենսդրության նորմերի հետ ունեցած համակարգային կապերի լույսի ներքո: ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը, պատասխանատվություն նախատեսելով թմրանյութեր պարունակող բույսեր **սպօրինի**, այլ կերպ՝ նորմատիվ իրավական ակտով սահմանված պահանջների խախտմամբ ցանելու կամ աճեցնելու համար, ինքնին համապատասխան գործողությունների իրականացման կարգ չի սահմանում՝ թողնելով դա այլ իրավական ակտերի կարգավորմանը: Մինչդեռ թմրանյութերի շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդրորեն կանոնակարգված չէ համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու կարգը: Այսպիսով, առկա է օրենսդրական բաց այն առումով, որ սահմանված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ

կողմը կազմող գործողությունների իրականացման կարգը: Իսկ նման պայմաններում իրավակիրատողը գրկված է համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու դեպքում անձի գործողությունների հակաօրինականությունը գնահատելու, ուստիև նրա արարքում տվյալ հանցակազմի առկայությունը հաստատելու օբյեկտիվ հնարավորությունից: Արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, *հետևաբար դրա հիման վրա անձին դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պարիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնի խախտման:*

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վ.Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ վերջինս կանեփի թփեր աճեցնելու համար արհեստականորեն ստեղծել է այնպիսի պայմաններ, որոնք նպաստում են կանեփի թփի աճեցմանը, այն է՝ ապահովել է լուսային, ջերմային և օդափոխության համար բոլոր պայմանները և իր տանը կից շինություններում հողով լի ծաղկամաններում, ինչպես նաև տան հողամասում աճեցրել ու մշակել է առանձնապես խոշոր չափերի, ընդհանուր թվով 191 հատ մշակումն արգելված թմրանյութ պարունակող կանեփի՝ «Canabis» խմբի բույսեր (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին առյանի և Վերաքննիչ դատարանները գտել են, որ նախաքննության մարմինը Վ.Ղազարյանի կողմից կանեփի բույսեր աճեցնելու գործողություններին տվել է ոչ ճիշտ իրավական գնահատական: Վերոհիշյալ դիրքորոշումը ստորադաս դատարանները հիմնավորել են նրանով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը բլանկետային է, այսինքն՝ քրեորեն պատժելի է համարվում մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը, մինչդեռ առկա չէ որևէ նորմատիվ իրավական ակտ, որը կսահմաներ այդպիսի բույսեր ցանելու կամ աճեցնելու կարգը: Արդյունքում դատարանները եզրահանգել են, որ Վ.Ղազարյանը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել կանեփի բույսեր աճեցնելու համար, քանի որ վերջինիս արարքում բացակայում է հանցագործության դեպքը (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

23. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստերի նկատմամբ կիրառելով 14-21-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռարեկ դատարանը եզրահանգում է, որ Վ.Ղազարյանին մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով որակելու անհնարինության մասին ստորադաս դատարանների հետևությունը հիմնավոր է:

24. Այսպիսով, հիմք ընդունելով վերը շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանները կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր, թույլ չեն տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, հետևաբար բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշումը՝ Վարդան Վոլոդյայի Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով արդարացնելու մասին, թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0064/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախազահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Ը.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դիմող Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
դիմողի ներկայացուցիչ Ա.ՀԱԿՈԲՅԱՆԻ
Գ.ՄԵԼԻՔՅԱՆԻ

2015 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հունիսի 30-ի որոշման դեմ դիմող Աշոտ Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի նոյեմբերի 14-ին դիմող Աշոտ Հակոբյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին այն մասին, որ «Էլֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նախկին տնօրեն Ֆ.Սարգսյանը, նրա եղբայր՝ ՀՀ ոստիկանության աշխատակից Ս.Սարգսյանը, և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության նախկին պաշտոնյա Ս.Ղուշյանը

խարդախությամբ իրենից հափշտակել են առանձնապես խոշոր չափի գումար, տվել սուտ ցուցմունքներ, որոնք զուգորդվել են այլ արհեստական ապացույցներ ստեղծելով, ինչպես նաև Ֆ.Սարգսյանը և Ս.Սարգսյանը, ապրանքների ձեռքբերման փաստաթղթերում ապրանքների գներն իրականից ցածր նշելով, ՀՀ տարածքում մաքսազերծումը կատարել են նվազեցված արժեքով:

ՀՀ հատուկ քննչական ծառայության՝ հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Է.Հակոբյանի՝ 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է Ֆ.Սարգսյանի, Ս.Սարգսյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ, 338-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի բացակայության, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով, իսկ Ս.Սարգսյանի և Ս.Ղուշչյանի մասով՝ 310-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների դեպքերի բացակայության պատճառաբանությամբ:

2. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Է.Հակոբյանի՝ 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման դեմ դիմող Ա.Հակոբյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն:

ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Հ.Բաղայանը 2014 թվականի հունվարի 23-ին որոշում է կայացրել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Է.Հակոբյանի՝ 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշումը վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցելու մասին:

3. 2014 թվականի փետրվարի 7-ին դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանը միջնորդություն է ներկայացրել նախաքննության մարմնին՝ խնդրելով թիվ 61200414 քրեական գործով հարուցել նոր քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և թիվ 61200414 քրեական գործով դիմող Ա.Հակոբյանին ճանաչել որպես տուժող, իսկ իրեն՝ տուժողի ներկայացուցիչ:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի միջնորդությունը թիվ 61200414 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նոր քրեական գործ հարուցելու մասով մերժվել է, իսկ թիվ 61200414 քրեական գործով դիմող Ա.Հակոբյանին որպես տուժող, իսկ Գ.Մելիքյանին տուժողի ներկայացուցիչ ճանաչելու մասով՝ հետաձգվել:

2014 թվականի մարտի 28-ին դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանը կրկին միջնորդություն է ներկայացրել նախաքննության մարմնին՝ խնդրելով թիվ 61200414 քրեական գործով դիմող Ա.Հակոբյանին ճանաչել որպես տուժող, իսկ իրեն՝ տուժողի ներկայացուցիչ:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ կայացվել է դատավարության մասնակից ճանաչելու պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշում:

4. 2014 թվականի ապրիլի 10-ին դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանը նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի որոշման դեմ բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 16-ի որոշմամբ դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի բողոքը մերժվել է:

5. Դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հունիսի 30-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հունիսի 30-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանը:

Վճարելի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

7. Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի՝ դատավարության մասնակից ճանաչելու պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշման համաձայն՝ «Նկատի ունենալով, որ Աշոտ Հակոբյանի հաղորդման հիման վրա նախապարտադրված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և թիվ 61200414 քրեական գործը հարուցելու մասին կայացված որոշմամբ քրեական գործը հարուցվել է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հարկանիշներով և այս ընթացքում կարարված քննչական և դատավարական գործողությունների արդյունքում չեն հաստատվել նոր՝ այդ թվում և Աշոտ Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության դեպքերի րեդի ունենալը, ուստի նման պայմաններում Աշոտ Հակոբյանի հանդեպ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կարարելու և դրա արդյունքում անմիջականորեն գույքային վնաս պարճառելու հարցը դեռևս չի հաստատվել, որպեսզիք էական հանգամանքներ են և հերևաբար մինչև դրանց պարզումը միջնորդության լուծումը ենթակա է հետաձգման» (տե՛ս նյութեր, թերթ 10):

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 16-ի որոշման համաձայն՝ «(...) Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի կողմից ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ բաժնի պետի տեղակալ Կ.Սահակյանի վարույթում գրնվող թիվ 61200414 քրեական գործով 2014 թվականի ապրիլի 2-ին կայացված պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշումը նախ պետք է վերադասության կարգով բողոքարկվեր համապարասխան դարախազի[ն], հետո նոր միայն դատարան: Այսինքն բողոք բերած անձի կողմից խախտվել [են] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ընթացակարգերը:

Մինչույն ժամանակ դատարանը չի անդրադառնում բողոքի հիմքերին, քանի որ բողոք բերած անձի կողմից չեն պահպանվել բողոքարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ընթացակարգերը» (տե՛ս նյութեր, թերթ 39):

9. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հունիսի 30-ի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը եկավ հետևության, որ ընդհանուր իրավասության դատարանի որոշումը հիմնավորված և պարճառաբանված է, այն բեկանելու և վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքեր չկան» (տե՛ս նյութեր, թերթ 87-88):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ և 290-րդ հոդվածների պահանջները, կայացրել ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՌ-844 որոշմանը հակասող դատական ակտեր:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով դատավարության մասնակից ճանաչելու պահանջի լուծումը հետաձգելու մասին նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի որոշումը, բողոքը մերժել է՝ պատճառաբանելով, որ այն նախ պետք է բողոքարկվեր դատախազին և նոր միայն դատարան: Իսկ Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, քրեադատավարական խախտումը վերացնելու փոխարեն կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «*եթե նրանց բողոքները չեն բավարարվել դարախազի կողմից*» պահանջը, որը ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՌ-844 որոշմամբ ճանաչվել է հակասահմանադրական:

Ավելին, ըստ բողոքաբերի՝ դատավարության մասնակից ճանաչելու պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշումը բողոքարկելու կարգի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի

1-ին մասի կարգավորումը կիրառելի չէ, քանի որ այն սահմանված է նույն օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասով:

11. Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ ստորադաս դատարանները, անհիմն կիրառելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, գտել են, որ բողոք բերած անձի կողմից չի պահպանվել բողոքարկման կարգը: Արդյունքում ստորադաս դատարանները չեն անդրադարձել բողոքի հիմքերին: Մինչդեռ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր էր Ա.Հակոբյանին ներգրավել որպես տուժող, քանի որ նա, հանդիսանալով հանցագործության հետևանքով վնաս կրած անձ, վկայի կարգավիճակում չի կարող արդյունավետ իրականացնել իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

12. Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հունիսի 30-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության կամ կայացնել նոր դատական ակտ՝ վերացնելով միջնորդության լուծումը հետաձգելու մասին որոշումը և պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին Ա.Հակոբյանին ներգրավել որպես տուժող, իսկ նրա ներկայացուցիչ Գ.Մելիքյանին՝ տուժողի ներկայացուցիչ:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճարելի դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ և 290-րդ հոդվածներով սահմանված իրավական կառուցակարգերի հարաբերակցության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյոք դատավարության մասնակից ճանաչելու պահանջի լուծումը հետաձգելու մասին նախաքննության մարմնի որոշումը նախապես դատախազին չբողոքարկելով՝ դիմող Ա.Հակոբյանը խախտել է վերոնշյալ որոշումը դատարան բողոքարկելու դատավարական կարգը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է. «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է. «Դիմողն իրավունք ունի իրեն դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշման պատճենն ստանալուց 5 օրվա ընթացքում համապատասխան մերժումը բողոքարկել դատարան կամ, եթե քրեական վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման պատճենը չի ստացվել բողոք տալու պահից մեկ ամսվա ընթացքում դիմել դատարան՝ իրեն դատավարության մասնակից ճանաչելու մասին պահանջով»:

Վճարելի դատարանը կրկնում է իր նախադեպային պրակտիկայում ձևավորած դիրքորոշումն առ այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը նպատակ է հետապնդում սահմանել քրեական դատավարության համակարգում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկը՝ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության իրավական կառուցակարգը: Ընդ որում, այդ իրավանորմն ընդհանրական է. այն չի սահմանում վերահսկողության կոնկրետ օբյեկտները (*տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման 18-րդ կետը*):

Վերահսկողության կոնկրետ օբյեկտներ սահմանելու առումով ընդհանրական բնույթ ունի նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը, որը նախատեսում է մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների և որոշումների դեմ դատարան բողոք ներկայացնելու դատավարական կարգը: Մասնավորապես, համաձայն վերջինիս՝ մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների և որոշումների դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել, եթե մինչ այդ դրանք բողոքարկվել են դատախազական կարգով:

Ի տարբերություն վերջինիս՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասը բովանդակում է հատուկ իրավանորմ՝ հստակ կարգավորելով դատական վերահսկողության օբյեկտներից՝

դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշման բողոքարկման կարգը: Մասնավորապես, ըստ նշյալ նորմի՝ դիմողն իրավունք ունի իրեն դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշումը բողոքարկելու անմիջականորեն դատարան:

Այլ խոսքով՝ ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ նույն օրենսգրքի 100-րդ հոդվածով նախատեսված չէ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումը դատարան բողոքարկելու իրավունքի իրացման համար նախապես դատախազական կարգով բողոքարկելու պայման:

15.1. Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեադատավարական օրենքում նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր նորմերից, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասից, առանձնացրել է այդ նույն իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասը՝ արդյունքում հստակեցնելով դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշման բողոքարկման կարգը:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ընդհանուր նորմից բացառություն է, իսկ այդպիսի բացառության սահմանումը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասի ուժով չի համարվում հակասություն:

16. Վերահաստատելով իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը (տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման 21-րդ կետը): Հետևաբար դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշումը դատարան բողոքարկելու դատավարական կարգի հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ պետք է կիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասը, այլ ոչ թե նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2014 թվականի մարտի 28-ին դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանը միջնորդություն է ներկայացրել նախաքննության մարմնին՝ խնդրելով դիմող

Ա.Հակոբյանին ճանաչել որպես տուժող, իսկ իրեն՝ տուժողի ներկայացուցիչ, որի արդյունքում նախաքննության մարմինը 2014 թվականի ապրիլի 2-ին կայացրել է դատավարության մասնակից ճանաչելու պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշում (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի որոշման դեմ դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանը բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան, ինչը վերջինիս՝ 2014 թվականի մայիսի 16-ի որոշմամբ մերժվել է այն պատճառաբանությամբ, որ բողոք բերած անձի կողմից չեն պահպանվել բողոքարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ընթացակարգերը, քանի որ վիճարկվող որոշումը նախ պետք է բողոքարկվեր համապատասխան դատախազին և նոր միայն դատարան (տե՛ս սույն որոշման 4-րդ և 8-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով դիմող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի վերաքննիչ բողոքը, այն մերժել է՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված է, այն բեկանելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 5-րդ և 9-րդ կետերը):

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-16-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատավարության մասնակից ճանաչելու պահանջի լուծումը հետաձգելու մասին նախաքննության մարմնի որոշումը նախապես դատախազին չբողոքարկելով՝ դիմող Ա.Հակոբյանը չի խախտել վերոնշյալ որոշումը դատարան բողոքարկելու դատավարական կարգը:

Այս կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը դատավարության մասնակից ճանաչելու պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքում կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ոչ թե 100-րդ հոդվածով նախատեսված հատուկ կառուցակարգը, այլ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր կառուցակարգը: Իսկ Վերաքննիչ դատարանն իր հերթին, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, քրեադատավարական օրենքի խախտումը վերացնելու փոխարեն դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ, ինչի արդյունքում խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ և 290-րդ հոդվածների պահանջները:

19. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չէ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի գործողությունները կամ որոշումները դատարան բողոքարկելու համար նախապես դատախազին

բողոքարկելու պահանջ, քանի որ այդ մասում նշված նորմը ճանաչվել է հակասահմանադրական, Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-844 որոշման եզրափակիչ մասից հետևում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումները կամ գործողությունները դատարան բողոքարկելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատախազին բողոքարկված լինելու պարտադիր պայմանը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ինքնին հակասահմանադրական չի ճանաչվել: Հետևաբար բողոք բերած անձի վերոնշյալ փաստարկը Վճարելի դատարանը հիմնավորված չի համարում:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերոնշյալը Վճարելի դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ իրավասու չէ անդրադառնալ բողոքի հիմքերի վերաբերյալ բողոքաբերի մյուս փաստարկներին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), քանի որ ստորադաս դատարանների կողմից դրանց կապակցությամբ քննություն չի իրականացվել: Հետևաբար նշված փաստարկները պետք է քննարկման առարկա դարձվեն գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Աշոտ Հակոբյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի բողոքը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 16-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունիսի 30-ի որոշումները բեկանել ու գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԴ/0002/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
պաշտպան	Ռ.ՀԱԿՈԲՅԱՆԻ

2015 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գրիգոր Վարուժանի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հուլիսի 24-ի որոշման դեմ ամրաստանյալ Գ.Գրիգորյանի պաշտպան Ռ.Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2011 թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 40106611 քրեական գործը՝ Գրիգոր Գրիգորյանի կողմից ապօրինի զենք ձեռք բերելու, պահելու և կրելու դեպքի առթիվ:

Նախաքննության մարմնի 2011 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ Գ.Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2011 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ Գ.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2013 թվականի հոկտեմբերի 10-ին Գ.Գրիգորյանը հայտնաբերվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Վարույթն իրականացնող մարմնի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ Գ.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի փետրվարի 5-ին վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել Գ.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխելու, լրացնելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք առաջադրելու մասին:

2014 թվականի փետրվարի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան:

2. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճվել է, իսկ Գ.Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը՝ դադարեցվել՝ ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 5-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ:

Նույն դատարանի 2014 թվականի ապրիլի 16-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Գ.Գրիգորյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հուլիսի 24-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 16-ի դատավճիռը ու «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշումը՝ բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 24-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել պաշտպան Ռ.Հակոբյանը:

Վճարելի դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Գ.Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) սպորինի կերպով ձեռք է բերել, պահել ու կրել է 9 մմ րբամաշափի ռազմամթերք հանդիսացող սկոսափող հրազենի փամփուշներ և դրանք կրակող «Մակարով» տեսակի սպրձանակին նման հրազեն, որոնցով 2011 թվականի դեկտեմբերի 11-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորայրու համայնքի Գ.Լուսավորչի փողոցի 6-րդ բնակարանին հարակից՝ Հովհաննես Վարանցույի Հովհաննիսյանին պարկանող ավրորնակի ներսում արձակել է կրակոց, որի հետևանքով նույն համայնքի բնակիչ Մհեր Դադիկոյի Կարապետյանի առողջությանը պարճատվել է միջին վնաս՝ առողջության րևական քայքայումով:

Բացի այդ, նա, առանց սահմանված փաստաթղթերի՝ 2000 թվականի հոկտեմբերի 10-ին 040-ի կողմից րրված AE0581936 համարի Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի ու առանց պարշաճ թույլրվության՝ անձնագիրն օրարերկրյա պետություններում վավերականության ժամկետի րվյալների, 2011 թվականի դեկտեմբերի 11-ին կարարված դեպքից հետո, գործով չպարզված օրը և ժամին, հարել է Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը, սպա 2013 թվականի հոկտեմբերի 10-ին ժամը 14:58-ին, Երևանի «Զվարթնոց» օդակայանի թիվ UT 729 չվերթով, ՀՀ վերադարձի թիվ 269725 վկայականով, վերադարձել է Հայաստանի Հանրապետություն (...)» (տես քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 366-370):

6. Դատաբժշկական փորձաքննության թիվ 194 եզրակացության համաձայն՝ «(...) Մհեր Դադիկոյի Կարապետյանի մոտ վնասվածքները ձախ ուրնաթաթի միջանցիկ վերքերի ձևով հասցվել է հրազենից արձակված գնդակով, հնարավոր է գործի հանգամանքներում նշված պայմաններում և ժամկետում (...): Վերը նշված վնասվածքները հրազենային գնդակային են (...): Վերքը միջանցիկ է (...): Կրակոցը ունի վերևից ներքև ուղղություն» (տես քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 104-105):

7. Դատաքիմիական և դատաճգարանական համալիր փորձաքննության (կատարվել է փորձագետներ Ս.Ալեքսանյանի (դատաքիմիական մաս) և Ա.Պողոսյանի (դատաճգարանական մաս) կողմից) թիվ 593 եզրակացության համաձայն՝ «(...) Փորձաքննությանը րբամադրվել [են] (...) սև գույնի, րդամարդու կիսաճիրք կոշիկներ (...): Մհեր Դադիկոյի Կարապետյանի փորձաքննության ներկայացված ձախ ուրքի կոշիկի վրա առկա (...)

վնասվածքները հանդիսանում են իրար շարունակությունը կազմող հրագենային գնդակային մուտքի ու ելքի միջանցիկ վնասվածքներ, կարող էին պատրճառվել 5.5-9 մմ տրամաչափի գնդակով (...) կատարված մեկ կրակոցի արդյունքում (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 248-255):

8. 2014 թվականի հունվարի 31-ի՝ փորձագետի հարցաքննության արձանագրության համաձայն՝ փորձագետ Ա.Պողոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 5.5 մմ - 9 մմ չափային միջանցքի մեջ են մտնում 5.45, 5.6, 6.35, 7.62, 7.65 և 9 մմ տրամաչափի փամփուշտներ՝ նախատեսված ակոսափող հրագենի՝ ինքնաձիգների, ատրճանակների և հրացանների համար (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 351):

9. Փորձագետ Ա.Պողոսյանը 2014 թվականի մարտի 20-ի դատական նիստում ցուցմունք է տվել այն մասին, որ «(...) 5.5-ից 9 մմ տրամաչափի փամփուշտները կարող են կրակվել նաև ինքնաշեն հարթափող կամ նույնիսկ ոչ ինքնաշեն գործարանային հարթափող զենքերից, թեև նրանք արտադրված են գործարանային արտադրության ակոսափող զենքերի համար: Որպես փորձագետ չի կարող պարկերացնել Մակարովին նմանվող ուրիշ ատրճանակ: Փամփուշտի (...) ռազմամթերք հանդիսանալու փաստը որոշվում է համապատասխան փորձաքննությամբ ու իրենք են ապացույց օբյեկտի առկայության ժամանակ: Եթե փորձագետը չունենա փամփուշտ, չի կարող ասել՝ այն ռազմամթերք հանդիսանում է, թե՛ ոչ (...): Զրեական գործում առկա տվյալներով որոշել Գ.Գրիգորյանի մոտ առկա հրագենը ակոսափող է եղել, թե՛ ոչ, հնարավոր չէ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 60-62):

10. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 16-ի դատավճռի համաձայն. «Դատարանը, գնահատելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները [դատաբժշկական փորձաքննության թիվ 194 եզրակացությունը, դատաբիմիական և դատաձգարանական համալիր փորձաքննության թիվ 593ք եզրակացությունը, փորձագետ Ա.Պողոսյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքները, ինչպես նաև ամբաստանյալ Գրիգոր Գրիգորյանի նախաքննական, վկաներ Մհեր Կարապետյանի նախաքննական, Հովհաննես Հովհաննիսյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքները], գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ պետք է ճանաչել և հոչակել ամբաստանյալ Գրիգոր Գրիգորյանի անմեղությունը և նրա նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ ապացույցների անբավարարության հիմքով հետևյալ պատճառարանությամբ.

(...) դատական քննության ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը չհիմնավորվեց, գործով չպարզվեց թե ինչ տեսակի զենքից է կրակոցն արձակվել, այն եղել է ողորկափող, թե ակոսափող, որպիսի հանգամանքը չկարողացավ հստակեցնել

նաև փորձագետը՝ հայրենելով, որ կրակոցը կարող էր արձակված լինել ինչպես ողորկափող հրազենից, այնպես էլ ակոսափող հրազենից:

[ՀՀ քրեական] օրենսգրքի 235-րդ հոդվածով ողորկափող հրազեն սպորինի կերպով պահելու կամ կրելու համար քրեական պատասխանատվություն չի սահմանում:

Ինչպես նախաքննությամբ, այնպես էլ դատաքննությամբ ամբաստանյալ Գրիգոր Գրիգորյանի կողմից ակոսափող հրազեն կրելը և պահելը չի հիմնավորվել, չի հայտնաբերվել նաև ռազմամթերք հանդիսացող գնդակը կամ պարկուճը, հետևաբար առաջադրված մեղադրանքը չի ապացուցվել և սպառվել են ապացույցներ ձեռք բերելու դատավարական բոլոր հնարավորությունները, իսկ չփարատված կասկածը մեկնաբանվում է հոգուր ամբաստանյալի (...)» (տես քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 60-62):

11. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Առաջին արյանի դատարանը (...) [հիմք է ընդունել] բացառապես քրեական գործի նախաքննության ընթացքում նշանակված դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննության թիվ 593ք եզրակացությունը կազմած փորձագետներից միայն մեկի՝ փորձագետ Արայիկ Պողոսյանի դատաքննական ցուցմունքը՝ միաժամանակ անստեղծվել վերջինիս նախաքննական ու դատաքննական ցուցմունքների միջև ծագած որոշակի հակասությունները: Արդյունքում Առաջին արյանի դատարանն անստեղծ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածով ամրագրված՝ ապացույցների գնահատմանը ներկայացվող օրենսդրական պահանջը, փորձագետի դատաքննական ցուցմունքին՝ քրեական գործով ձեռք բերված մյուս ապացույցների համեմատ փոխել է ակնհայտ առավել նշանակություն և ըստ էության պարզաձև իրավական վերլուծության ու գնահատման չի ենթարկել քրեական գործում առկա՝ դատաբժշկական փորձաքննության թիվ 194, ինչպես նաև դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննության թիվ 593ք եզրակացությունները:

(...) [Դ]ատաքննության ընթացքում փորձագետ Ա. Պողոսյանին առաջադրված և գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերը դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ փորձագետներին առաջադրված չեն եղել, իսկ փորձագետ Ա. Պողոսյանը դատաքննության ընթացքում հարցաքննվել է ոչ թե իր կողմից փոխված եզրակացությունը պարզաբանելու (ընդ որում, փորձագետի թիվ 593ք եզրակացությունը կազմվել է փորձագետ Ա. Պողոսյանի և փորձագետ Ս. Ալեքսանյանի կողմից համատեղ), այլ հարույկ մասնագիտական գիտելիքներ պահանջող և գործի վերջնական ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքների ու փորձաքննությամբ չառաջադրված հարցերի կապակցությամբ հետևություններ ներկայացնելու համար, որը հնարավոր էր բացառապես դատաձգաբանական, դատաքիմիական և դատաբժշկական

բնագավառի հատուկ գիտելիքների համալիր օգտագործմամբ կատարված փորձաքննության շրջանակներում, ինչը կոնկրետ դեպքում չի արվել՝ խոչընդոտելով գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման գործընթացին:

(...) [Գ]նկրետ դեպքում Առաջին արյանի դատարանն անընդհատ է քրեադատավարական օրենքով ամրագրված իմպերատիվ պահանջն առայն, որ փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մաս):

(...) Վերաքննիչ դատարանը (...) գտնում է, որ մեղադրողի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն (...) և սույն գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Նոր դատաքննությամբ անհրաժեշտ է քրեական գործով ձեռք բերված մյուս փաստական փյուռիկների համադրությամբ վերաբին պարզաձև իրավական վերլուծության ենթարկել քրեական գործում առկա՝ դատաբժշկական փորձաքննության թիվ 194, ինչպես նաև դատաքիմիական և դատաձգարանական համալիր փորձաքննության թիվ 593բ եզրակացությունները, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու և քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ համադրելու սկզբունքով վերջնական գնահատման ենթարկել այդպիսիք, այնուհետև, դրանցում րեդ գրած հետևությունները պարզաբանելու նկատառումներից ելնելով հարցաքննել նշված փորձաքննությունները կատարած փորձագետներին, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նշանակել համապատասխան փորձաքննություն (փորձաքննություններ), որից հետո միայն հնարավոր կլինի կայացնել գործն ըստ էության ճիշտ լուծող վերջնական դատական ակտ:

(...) վերը շարադրված բացահայտման ենթակա անհրաժեշտ հանգամանքները պարզաձև իրավական վերլուծության ու գնահատման ենթարկելու և առկա հակասությունները վերացնելու արդյունքում նոր միայն հնարավոր կլինի հիմնավոր հետևության հանգել ինչպես ամբաստանյալ Գրիգոր Վարուժանի Գրիգորյանին մեղսագրված և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորության կամ անմեղության մասին, այնպես էլ նրա նկատմամբ Համաներման ակտի համապատասխան դրույթի կիրառման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու ու քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորության վերաբերյալ (...)» (տես քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 62-83):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Պաշտպան Ռ.Հակոբյանը, իր համաձայնությունը հայտնելով Առաջին ատյանի դատարանի դատավճռում տեղ գտած հիմնավորումներին,

գտել է, որ իր պաշտպանյալին առաջադրված մեղադրանքի նկարագրությոնը թերի է, քանի որ դրանով չի հստակեցվում հրազենի՝ ակոսափող կամ ողորկափող լինելը: Բողոք բերած անձի համոզմամբ, Գ.Գրիգորյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով որակելու համար տվյալ հանցակազմի պարտադիր հատկանիշը՝ հրազենի ակոսափող լինելը, պետք է հաստատվեր գործով ձեռք բերված ապացույցների բավարար ամբողջությամբ, ինչը սույն գործով տեղի չի ունեցել: Նման իրավիճակում Առաջին ատյանի դատարանը, ըստ բողոքաբերի, իրավացիորեն կայացրել է արդարացման դատավճիռ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը բեկանել է այն:

13. Բողոքի հեղինակը գտել է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ

ա) Առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել դատաքիմիական և դատաձգաբանական թիվ 593 համալիր փորձաքննության եզրակացությունը կազմած փորձագետներից միայն մեկի՝ Ա.Պողոսյանի դատաքննական ցուցմունքը՝ անտեսելով վերջինիս նախաքննական ու դատաքննական ցուցմունքների միջև ծագած որոշակի հակասությունները:

Ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանի կողմից միայն փորձագետ Ա.Պողոսյանին հարցաքննելը պայմանավորված է այն հանգամանքով, որ մեղադրական եզրակացության մեջ որպես ապացույց վկայակոչվել է միայն այդ անձի ցուցմունքը, ինչպես նաև նրանով, որ Ա.Պողոսյանը սպառիչ պատասխանել է կողմերին հետաքրքրող հարցերին, և մյուս փորձագետին հարցաքննելու անհրաժեշտություն չի առաջացել:

Ինչ վերաբերում է փորձագետ Ա.Պողոսյանի՝ նախաքննական ու դատաքննական ցուցմունքների միջև առկա հակասություններին, ապա բողոքի հեղինակը գտել է, որ այդպիսիք առկա չեն, ավելին՝ Ա.Պողոսյանը պնդել է իր նախաքննական ցուցմունքները:

բ) փորձագետ Ա.Պողոսյանը դատաքննության ընթացքում հարցաքննվել է հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքների վերաբերյալ, որոնց պարզաբանման համար անհրաժեշտ է կատարել դատաձգաբանական, դատաքիմիական և դատաբժշկական բնագավառի համալիր փորձաքննություններ:

Բողոքաբերի համոզմամբ՝ սույն գործով բացակայում են թե՛ գենքը, թե՛ փամփուշները և թե՛ կրակոցի արգասիքները, որպիսի պայմաններում գենքի՝ գործարանային կամ ինքնաշեն, ակոսափող կամ ողորկափող լինելու հարցերի վերաբերյալ համալիր փորձաքննություններ նշանակելու մասին խոսք լինել չի կարող:

Ամփոփելով վերը նշվածը՝ բողոքի հեղինակը եկել է այն եզրահանգման, որ Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք Վերաքննիչ դատարանի

համար կարող էին ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ:

14. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պաշտպան Ռ.Հակոբյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 24-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 16-ի դատավճռին ու քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմանը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Վճարելի դատարանն արձանագրում է, որ կատարված հանցագործությանը անձի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մաս) արդարացման դատական ակտ կայացնելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի սույն գործով անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

16. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Գ.Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով կայացված արդարացման դատավճիռը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«(...) 2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարսրվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ջրեական հետապնդումը ենթակա է դադարեցման (...) կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները»:

Մեջբերված քրեադատավարական դրույթների վերլուծությունից երևում է, որ անմեղության կանխավարկածի պահանջով անձի մեղավորությունը հանցանք կատարելու մեջ պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Այս առումով Վճարելի դատարանը վերահաստատում է Ս.Սաքանյանի գործով որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ «(...) ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պարձառաքանվածությունը (...):

(...) [Ա]պացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաքանակական ցուցանիշով, այդ պարձառով ՀՀ քրեադատավարական օրենքն օգրագործում է «ապացույցների համակցություն» հասկացությունը: Ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝

1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,

2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,

3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում» (տե՛ս Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճարելի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 15-րդ և 17-րդ կետերը):

Վճարելի դատարանը վերահաստատում է նաև իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն առ այն, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական

չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը **բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը**: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ **ցանկացած ողջամիտ կասկած** (մանրամասն տես *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճարելի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 33-րդ կետը*):

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործում առկա ապացույցների համակցությամբ հնարավոր չէ «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատել անձի մեղավորությունը նրան մեղսագրվող արարքում, անձի նկատմամբ տվյալ մեղադրանքի շրջանակներում չի կարող կայացվել մեղադրական դատավճիռ:

17.1. Ի ապահովումն վերոնշյալի, ինչպես նաև անմեղության կանխավարկածի բաղադրատարր հանդիսացող՝ չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները: Այլ խոսքով՝ քննարկվող հիմքով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե.

ա) կատարված հանցագործությանն անձի մասնակցությունը «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված չէ,

բ) սպառված են (ա) կետում նշված փաստը հաստատելուն ուղղված նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

18. Վերոնշյալին համապատասխան՝ Վերաքննիչ դատարանը, ստուգելով կատարված հանցագործությանը անձի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մաս) առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճռի օրինականությունը, պետք է ղեկավարվի սույն որոշման 17-17.1-րդ կետերում վերլուծված սկզբունքով (անմեղության կանխավարկած), չափանիշով («հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ) և հիմքերով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառելիության հիմքերը):

19. Սույն որոշմամբ առաջադրված իրավական հարցի շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներին:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը պարժվում է (...):»:

Մեջբերված նորմի վերլուծությունից հետևում է, որ դրանով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հոդվածում նշված առարկաներն ապօրինի կերպով ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու ձևով: Օբյեկտի պարտադիր հատկանիշ է հանցագործության առարկան, որպիսին հանդիսանում են հրազենը, ռազմամթերքը, ակոսափող հրազենի փամփուշտները, պայթուցիկ նյութերը կամ պայթուցիկ սարքերը: Դրա հետ մեկտեղ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան բացառություն է նախատեսում ողորկափող հրազեն և դրա փամփուշտներ ձեռքբերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար: Հետևաբար ողորկափող հրազենը և դրա փամփուշտները քննարկվող հանցակազմի առարկա չեն (*տես mutatis mutandis Երվանդ Մելքոնյանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշումը*):

20. Սույն որոշման 17-րդ և 19-րդ կետերի համադրված վերլուծության հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով ապացուցման առարկայի շրջանակում՝ որպես հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ կետ), ի թիվս այլնի, ընդգրկվում է հանցագործության առարկան: Այսինքն՝ քննարկվող հոդվածով անձին մեղավոր ճանաչելիս գործով ձեռք բերված թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ պետք է ապացուցվի նաև հանցագործության առարկայի (հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր) առկայությունը:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գ.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել 9 մմ տրամաչափի ռազմամթերք հանդիսացող ակոսափող հրազենի փամփուշտներ և դրանք կրակող «Մակարով» տեսակի ատրճանակին նման հրազեն ապօրինի ձեռքբերելու, պահելու և կրելու համար (տես սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, գնահատելով գործում առկա ապացույցները, այդ թվում նաև դատաբժշկական փորձաքննության թիվ 194, դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննության թիվ 593ք եզրակացությունները, փորձագետ Ա.Պողոսյանի ցուցմունքները, եզրահանգել է, որ ինչպես նախաքննությամբ, այնպես էլ դատաքննությամբ ամբաստանյալ Գրիգոր Գրիգորյանի կողմից ակոսափող հրազեն կրելը և պահելը չի հիմնավորվել, չի հայտնաբերվել նաև զենքը, ռազմամթերք հանդիսացող գնդակը կամ պարկուճը, հետևաբար առաջադրված մեղադրանքը չի ապացուցվել և սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու դատավարական բոլոր հնարավորությունները, իսկ չփարատված կասկածը մեկնաբանվում է հոգուտ ամբաստանյալի: Արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով Առաջին ատյանի դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով (տես սույն որոշման 2-րդ և 10-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել բացառապես քրեական գործի նախաքննության ընթացքում նշանակված դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննության թիվ 593ք եզրակացությունը կազմած փորձագետներից միայն մեկի՝ փորձագետ Արայիկ Պողոսյանի դատաքննական ցուցմունքը՝ միաժամանակ անտեսելով վերջինիս նախաքննական ու դատաքննական ցուցմունքների միջև ծագած որոշակի հակասությունները: Արդյունքում Առաջին ատյանի դատարանն ըստ էության պատշաճ իրավական վերլուծության ու գնահատման չի ենթարկել քրեական գործում առկա՝ դատաբժշկական փորձաքննության թիվ 194, ինչպես նաև դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննության թիվ 593ք եզրակացությունները: Դատաքննության ընթացքում փորձագետ Ա.Պողոսյանին առաջադրված և գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերը դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ փորձագետներին առաջադրված չեն եղել, իսկ փորձագետ Ա.Պողոսյանը դատաքննության ընթացքում հարցաքննվել է ոչ թե իր կողմից տրված եզրակացությունը պարզաբանելու (ընդ որում, փորձագետի թիվ 593ք եզրակացությունը կազմվել է փորձագետ Ա.Պողոսյանի և փորձագետ Ս.Ալեքսանյանի կողմից համատեղ), այլ հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող և գործի վերջնական ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքների ու փորձաքննությամբ չառաջադրված հարցերի կապակցությամբ հետևություններ ներկայացնելու համար: Կոնկրետ դեպքում Առաջին ատյանի դատարանն անտեսել է քրեադատավարական օրենքով ամրագրված իմպերատիվ պահանջն առ այն, որ փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի

եզրակացությանը: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ մեղադրողի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն՝ բեկանել ամբաստանյալ Գ.Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 16-ի դատավճիռը, ինչպես նաև նույն դատարանի 2014 թվականի ապրիլի 16-ի՝ Գ.Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի վարույթը կարճելու ու նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Մինևույն ժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ նոր դատաքննությամբ անհրաժեշտ է քրեական գործով ձեռք բերված մյուս փաստական տվյալների համադրությամբ վերստին պատշաճ իրավական վերլուծության ենթարկել քրեական գործում առկա՝ դատաբժշկական փորձաքննության թիվ 194, ինչպես նաև դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննության թիվ 593ք եզրակացությունները, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու և քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ համադրելու սկզբունքով վերջնական գնահատման ենթարկել այդպիսիք, այնուհետև դրանցում տեղ գտած հետևությունները պարզաբանելու նկատառումներից ելնելով հարցաքննել նշված փորձաքննությունները կատարած փորձագետներին, իսկ անհրաժեշտության դեպքում նշանակել համապատասխան փորձաքննություն (փորձաքննություններ), որից հետո միայն հնարավոր կլինի կայացնել գործն ըստ էության ճիշտ լուծող վերջնական դատական ակտ (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

22. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 17-20-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործի նյութերում առկա չէ որևէ որոշակի ապացույց Գ.Գրիգորյանին մեղսագրվող հանցագործության առարկայի տեսակի ու հատկանիշների վերաբերյալ: Այսինքն՝ չի հիմնավորվել ամբաստանյալի կողմից ապօրինի պահվող հրազենի՝ ակոսափող կամ ողորկափող, ինչպես նաև փամփուշտների՝ ակոսափող հրազենի փամփուշտներ կամ ռազմամթերք լինելու հանգամանքները, ավելին՝ չեն հայտնաբերվել հանցագործության առարկաները՝ 9 մմ տրամաչափի ակոսափող հրազենի փամփուշտները և «Մակարով» ատրճանակին նման հրազենը: Տուժողին պատճառված վնասի և նրա կոշիկի հիման վրա արդեն իսկ փորձաքննություններ կատարված լինելու, վկաներին, ամբաստանյալին, տուժողին հարցաքննելու և հանցագործության առարկան հայտնաբերված չլինելու պայմաններում առկա չէ դատավարական որևէ միջոց հանցագործության առարկայի նույնացման համար:

Նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտելով գործում առկա ապացույցները,

այդ թվում՝ փորձագիտական եզրակացությունները և փորձագետ Ա.Պողոսյանի ցուցմունքները, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, ամբաստանյալ Գ.Գրիգորյանի նկատմամբ կայացրել է արդարացման դատավճիռ: Առաջին ատյանի դատարանն իրավաչափորեն եկել է այն եզրահանգման, որ Գ.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը չի հիմնավորվել գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, իսկ չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ ամբաստանյալի: Մինևույն ժամանակ Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

22.1. Մինչդեռ Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռն այն պատճառաբանությամբ, որ Առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել բացառապես փորձագետներից մեկի հակասական դատաքննական ցուցմունքը, արդյունքում լրիվ և բազմակողմանի քննություն չի իրականացրել:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի որոշման մեջ տեղ գտած այն դատողությանը, որ դատաքիմիական և դատաձգաբանական **համալիր** փորձաքննությունն իրականացվել է երկու փորձագետի (Ս.Ալեքսանյանի և Ա.Պողոսյանի) կողմից, սակայն սույն գործի քննության շրջանակներում հարցաքննվել է միայն փորձագետ Ա.Պողոսյանը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող եզրակացությունը, ըստ էության, իրենից ներկայացնում է երկու տարբեր բնագավառների վերաբերյալ հատուկ գիտելիքների ամբողջություն, որի դատաքիմիական մասն իրականացվել է փորձագետ Ս.Ալեքսանյանի, իսկ դատաձգաբանական մասը՝ փորձագետ Ա.Պողոսյանի կողմից: Հետևաբար միանգամայն իրավաչափ է փորձագետ Ա.Պողոսյանի հարցաքննությունն այն պայմաններում, երբ դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննության եզրակացությունը պարզաբանելու կամ լրացնելու անհրաժեշտություն է առաջացել միայն դրա դատաձգաբանական մասի հետ կապված:

23. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Առաջին ատյանի դատարանը փորձագետ Ա.Պողոսյանի ցուցմունքները գնահատելիս անտեսել է նրա նախաքննական և դատաքննական ցուցմունքների միջև առկա հակասությունը, ինչպես նաև խախտել է քրեադատավարական օրենքով ամրագրված իմպերատիվ պահանջն առ այն, որ փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

2. Փորձագետը կարող է հարցաքննվել իր տված եզրակացության պարզաբանման կապակցությամբ:

3. Փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը»:

Նույն օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Եթե փորձագետի եզրակացությունը բավարար չափով պարզ չէ, ունի բացեր, որոնք լրացնելու համար չեն պահանջվում լրացուցիչ հետազոտություններ կամ անհրաժեշտություն է առաջացել ճշտելու փորձագետի կողմից կիրառված մեթոդները և հասկացությունները, քննիչն իրավունք ունի հարցաքննել փորձագետին (...):»:

Մեջբերված քրեադատավարական դրույթների համադրված վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգումներ անել այն մասին, որ փորձագետի ցուցմունքները կոչված են լրացնելու, պարզաբանելու փորձագետի եզրակացությունը: Մինևույն ժամանակ փորձագետի հարցաքննությունը չի կարող փոխարինել եզրակացությանը: Ի ապահովումն այդ պահանջի՝ քրեադատավարական օրենսդրությունը հստակ նախատեսում է փորձագետի հարցաքննության հիմքերը, այն է՝

1) երբ փորձագետի եզրակացությունը բավարար չափով պարզ չէ, այն ունի բացեր, եթե դրանք լրացնելու համար չեն պահանջվում լրացուցիչ հետազոտություններ,

2) երբ անհրաժեշտություն է առաջացել ճշտելու փորձագետի կողմից կիրառված մեթոդները:

23.1. Սույն գործի փաստերից հետևում է, որ.

- վարույթն իրականացնող մարմնի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի՝ քրեական գործով դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ փորձագետներին առաջադրվել է հարց այն մասին, թե «գ) *Ըստ վնասվածքի կառուցվածքային և չափային առանձնահատկությունների՝ ինչ տրամաչափի է եղել վնասվածք առաջացրած հրազենի տեսակը և փամփուշտի գնդակի տրամաչափը*» (տե՛ս հատոր 1-ին, գ.թ. 143-144),

- դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ Մ.Կարապետյանի կոշիկի վրա առկա վնասվածքների պատճառումը հնարավոր էր 5,5-9 մմ տրամաչափի գնդակով: Մինևույն ժամանակ եզրակացությունը չի պարունակում տվյալներ հանցագործության առարկա հանդիսացող հրազենի և դրա փամփուշտների տեսակի վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը),

- դատաձգաբանական մասն իրականացրած փորձագետ Ա.Պողոսյանն իր նախաքննական ցուցմունքներով **պարզաբանել է** 5,5-9 մմ չափային միջանցքում գտնվող փամփուշտների և դրանք կրակող հրազենի տիպերը՝ նշելով միայն ակոսափող տեսակի զենքերը, իսկ դատաքննական

ցուցմունքներով **լրացրել է** նախորդ ցուցմունքերը և հայտնել, որ 5,5-9 մմ տրամաչափի փամփուշտները կարող են կրակվել նաև ինքնաշեն հարթափող կամ ոչ ինքնաշեն գործարանային հարթափող զենքերից (տե՛ս սույն որոշման 8-րդ և 9-րդ կետերը):

Վերոգրյալից հետևում է, որ փորձագետ Ա.Պողոսյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներում հակասություններ առկա չեն, ինչպես նաև փորձագետի ցուցմունքները չեն փոխարինել փորձագիտական եզրակացությանը, քանի որ նրա հարցաքննությունը կատարվել է փորձագիտական եզրակացության այնպիսի բացի վերաբերյալ, որի կապակցությամբ չի պահանջվել լրացուցիչ հետազոտություն:

24. Հիմք ընունելով սույն որոշման 17-23.1-րդ կետերում արված վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե գործում առկա կոնկրետ որ ապացույցներն են տեղեկություններ պարունակում Գ.Գրիգորյանին մեղսագրվող հանցագործության առարկայի առկայության մասին, որոնք Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել: Իսկ ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված փորձաքննությունների եզրակացություններին (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետեր), ապա դրանք կրում են հավանական բնույթ և ինչպես առանձին, այնպես էլ այլ ապացույցների հետ համակցության մեջ չեն պարունակում այնպիսի տեղեկություններ, որոնք թույլ կտան «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշին համապատասխան եզրահանգումներ կատարել հանցագործության առարկայի, դրա տեսակի կամ հատկանիշների վերաբերյալ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, որպես գործի նոր քննության ծավալ սահմանելով գործում առկա ապացույցները կրկին գնահատելը և փորձագետներին հարցաքննելը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում համապատասխան փորձաքննություն նշանակելը, չի պատճառաբանել՝

- դատաբժշկական կամ դատաքիմիական փորձաքննություն իրականացրած փորձագետները զենքի կամ փամփուշտների տեսակի հետ կապված ինչպիսի հարցեր կարող են պարզաբանել,

- ինչ տվյալ ձեռք բերելուն կարող է ուղղված լինել համապատասխան փորձաքննություն նշանակելն այն պայմաններում, երբ հանցագործության առարկան՝ հրազենը և դրա փամփուշտները (անգամ պարկուճը կամ գնդակը) չեն հայտաբերվել, իսկ տուժողի կոշիկի հիման վրա փորձաքննություն արդեն իսկ իրականացվել է: Ավելին՝ փորձաքննության դատաձգաբանական մասն իրականացրած փորձագետի դատաքննական ցուցմունքի համաձայն քրեական գործում առկա տվյալներով Գ.Գրիգորյանի մոտ առկա հրազենը ակոսափող է եղել, թե՛ ոչ, հնարավոր չէ որոշել, իսկ

երթ փորձագետը չունենա փամփուշտ, չի կարող ասել այն ռազմամթերք է, թե՛ ոչ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Նման պայմաններում ստացվում է, որ Վերաքննիչ դատարանը տուժողի կոշիկի հետազոտման համար նոր փորձաքննություն նշանակելու դեպքում առանց հիմնավորման հնարավոր է համարել հանցագործության առարկայի՝ հրազենի և փամփուշտների նույնացումն անգամ այն դեպքում, երբ փորձագետի պնդմամբ սույն գործում առկա տվյալներով դա անհնարին է:

Ամփոփելով վերոնշյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Գ.Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով կայացված արդարացման դատավճիռը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատարանի քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»*

Ուստի Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 35-րդ, 127-րդ, 252-րդ հոդվածների խախտում, որը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելուն և ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճարելի դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով ապացույցների ազատ գնահատման սկզբունքի պահանջները, սույն գործով բոլոր ապացույցները հետազոտել է պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում և գնահատել ոչ բավարար Գ.Գրիգորյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ հաստատված համարելու համար: Հաշվի առնելով, որ սույն գործով արդարացման դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանի կողմից քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ չի տրվել, իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 16-ի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական

հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բեկանումն ըստ էության պայմանավորել է արդարացման դատավճռի բեկանմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում Գ.Գրիգորյանին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով արդարացնելու, ինչպես նաև՝ Համաներման ակտի կիրառմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով նրա վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի հետևություններն օրինական են և հիմնավորված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Գրիգոր Վարուժանի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 24-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 16-ի որոշմանը և նույն դատարանի 2014 թվականի ապրիլի 16-ի արդարացման դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0002/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր. Բաղայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Կարապետյանի (այսուհետ նաև՝ Քննիչ)՝ 2013 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ և 118-րդ հոդվածների հատկանիշներով հարուցվել է թիվ 11120013 քրեական գործը:

Քննիչի՝ 2013 թվականի նոյեմբերի 30-ի «Քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չիրականացնելու, խափանման

միջոցը վերացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին» որոշման 1-ին կետով քրեական գործի վարույթը կարճվել է, Մարինե Գառնիկի Աբրոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, իսկ Մամվել Լադիկի Շահնազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ և 118-րդ հոդվածներով, 34-213-րդ հոդվածի 1-ին մասով իրականացվող քրեական հետապնդումը՝ դադարեցվել համաներման ակտ ընդունվելու պատճառաբանությամբ:

Նույն որոշման 2-րդ կետով Մարինե Աբրոյանի և Տիգրան Խենյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդում չի իրականացվել նրանց արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Մ.Աբրոյանի և Տ.Խենյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը Ս.Շահնազարյանի կողմից բողոքարկվել է Երևան քաղաքի դատախազին:

Դատախազ Ա.Դավթյանի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. 2014 թվականի փետրվարի 7-ին Ս.Շահնազարյանը բողոք է ներկայացրել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քննիչ Ա.Կարապետյանի՝ 2013 թվականի նոյեմբերի 30-ի որոշման 2-րդ կետը և պարտավորեցնել հարուցել քրեական գործ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 20-ի որոշմամբ ներկայացված բողոքը բավարարվել է, քրեական հետապնդում չիրականացնելու մասով քննիչ Ա.Կարապետյանի որոշումը՝ վերացվել:

4. Դատախազ Կ.Ադամյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 20-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բադալյանը:

Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բադալյանի վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. «Քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չիրականացնելու, խափանման միջոցը վերացնելու և քրեական գործով

վարույթը կարճելու մասին» քննիչ Ա.Կարապետյանի՝ 2013 թվականի նոյեմբերի 30-ի որոշման համաձայն՝ «(...) Նախաքննությամբ (...) հիմնավորվել է, որ Սամվել Լադիկի Շահնազարյանը 2011 թվականի նոյեմբերի 2-ից 2012 թվականի սպրիլի 25-ը ընկած ժամանակահատվածում մաս-մաս, ամսեկան 10, 15 և 20 րոկոս րոկոսադրույքներով Մարինե Գառնիկի Աբրոյանին փվել է ընդհանուր 13.595.000 ՀՀ դրամ և 30.000 ԱՄՆ դոլար, որի դիմաց, սակայն, րոկոսավճարներ չի ստացել: (...) Թեև րոկոսավճարները կամ մայր գումարը Ս.Շահնազարյանի կողմից ստանալը չի հիմնավորվել, այնուհանդերձ նշված գումարները Մ.Աբրոյանի կամ որևէ այլ անձի կողմից խարդախությամբ հափշտակված համարվել չեն կարող, քանի որ նախ և առաջ դրանք Մ.Աբրոյանի փրապետության փակ են անցել Ս.Շահնազարյանի ծավալած հանցավոր գործունեության արդյունքում, բացի այդ հերքվել է արտադրամասը կառուցելու կամ այն թեկուզ կարճ ժամանակահատվածով աշխարհեցնելու վարկածը: Այդ առիթով Ս.Շահնազարյանը փվել է ընդամենը ոչ արժանահավաք ցուցմունքներ, չի ներկայացրել անգամ որևէ փաստաթուղթ, որը կվկայեր, օրինակ, արտադրամասը կառուցելու թույլտվության կամ ձեռնարկափրական գործունեություն ծավալելու մասին (...):»:

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Ամբողջ նախաքննության ընթացքում Սամվել Շահնազարյանի կողմից բերված փաստարկները չեն ստուգվել:

Մասնավորապես, Սամվել Շահնազարյանի գումարները խարդախությամբ հափշտակելու մասով չեն հարցաքննվել նրա ընտանիքի անդամներն ու հարևանները, որոնք՝ ըստ Ս.Շահնազարյանի, կարող են հաստատել Մարինե Աբրոյանի և Տիգրան Խենչյանի մեղավորությունը:

Բացի այդ, քրեական հետապնդումն իրականացնող մարմնի կողմից չեն ձեռնարկվել օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ Տիգրան Խենչյանին հայտնաբերելու և նրան հարցաքննելու ուղղությամբ:

(...)

Եման պայմաններում դատարանը գտնում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը չի ձեռնարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, որպիսի պայմաններում խախտվել են Սամվել Շահնազարյանի իրավունքները (...):»:

Նույն որոշմամբ, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածին՝ Առաջին ատյանի դատարանը որոշել է. «Մարինե Աբրոյանի և Տիգրան Խենչյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդում չիրականացնելու մասով [Բննիչի] որոշումը վերացնել» (տես նյութեր, թերթ 40-41):

8. Վերաքննիչ դատարանը, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներին, կայացրել է որոշում, որի համաձայն՝ «(...) [Ա]ռաջին աստիճանի դատարանը դիմող Ս.Շահնազարյանի բողոքը քննության առնելիս՝ գտնելով, որ Մարինե Աբրոյանի և Տիգրան Խենյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդում չիրականացնելու մասով ՀՀ ոստիկանության Շենգավիթի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Կարապետյանի 2013 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը օրինական և հիմնավորված չէ, պարճառաբանված որոշում է կայացրել դիմողի բողոքը բավարարելու և բողոքարկվող որոշումը վերացնելու վերաբերյալ (...)» (տե՛ս նյութեր, թերթ 81):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձի պնդմամբ Վերաքննիչ դատարանի դատական ակտը օրինական և հիմնավոր չէ, ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 5-րդ, 19-րդ հոդվածները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 278-րդ, 290-րդ, ինչպես նաև 358-րդ հոդվածների պահանջները:

10. Մասնավորապես բողոքաբերը նշել է, որ Առաջին աստիճանի դատարանը, դուրս գալով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր լիազորությունների շրջանակից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջների խախտմամբ վերացրել է վարույթը կարճված քրեական գործով կայացված քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանը նշված որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման արդյունքում որևէ իրավական նորմի խախտում չի արձանագրել:

11. Բողոքաբերը նշել է նաև, որ ստորադաս դատարաններն իրենց որոշումների պատճառաբանական մասում նշել են, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը չի ձեռնարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Մասնավորապես չեն հարցաքննվել Ս.Շահնազարյանի ընտանիքի անդամներն ու հարևանները, միջոցներ չեն ձեռնարկվել Տ.Խենյանին հայտնաբերելու և հարցաքննելու ուղղությամբ: Մինչդեռ նախաքննության ընթացքում հարցաքննվել են Ս.Շահնազարյանի ընտանիքի անդամները (կինը, աղջիկը և փեսան), հարևանները, իսկ Տ.Խենյանն օրենքով սահմանված կարգով ծանուցվել է հարցաքննության ներկայանալու մասին, այնուհետև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածով սահմանված կարգով նրա նկատմամբ բերման ենթարկելու մասին որոշում է կայացվել,

սակայն պարզվել է, որ վերջինս Հայաստանի Հանրապետությունից բացակայում է:

12. Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ ստորադաս դատարանների կողմից խախտվել է Մ.Աբրոյանի և Տ.Խենյանի՝ ՀՀ ՄահաՆադրության 19-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը: Մասնավորապես Ս.Շահնագարյանի կողմից ներկայացված բողոքն անմիջականորեն առնչվել է նրանց իրավունքներին և օրինական շահերին, վերաբերել նրանց կողմից ենթադրաբար խարդախություն կատարելու մասով քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ որոշմանը, սակայն վերջիններիս հնարավորություն չի տրվել մասնակցելու ներկայացված բողոքի քննությանը, որի արդյունքում կայացվել է քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ որոշում: Բողոքաբերի կարծիքով՝ բողոքարկվող դատական ակտը քննարկվող հարցերի առումով հակասում է Հ.Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հունիսի 13-ի թիվ ԵԿԳ/0004/11/11 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

13. Մեջբերելով Լ.Ավետիսյանի գործով խարդախության հանցակազմի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ին կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը եզրահանգել է, որ սույն քրեական գործի նյութերով որևէ տվյալ ձեռք չի բերվել, որով կիմնավորվել, որ Մ.Աբրոյանը և Տ.Խենյանն ի սկզբանե նպատակ են ունեցել խարդախության միջոցով հափշտակելու Ս.Շահնագարյանի գումարները: Բացի այդ, քրեական գործով հիմնավորվել է, որ Ս.Շահնագարյանը վիճարկվող գումարը Մ.Աբրոյանին է տվել ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով՝ ամսական 10, 15 և 20 տոկոս տոկոսադրույքով գումարներ ստանալու նպատակով, և որպես այն հետ ստանալու երաշխիք՝ նրանց կողմից կազմվել են պարտավորագրեր:

14. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 20-ի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 25-ի որոշումները և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս կիրառելի իրավական կառուցակարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով

արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

16. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. քրեական հետապնդում չիրականացնելու մատուցվող Բննիչի որոշման դատական ստուգումը ստորադաս դատարանները պետք է իրականացնեին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ, թե՛ 290-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգով:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

(...)

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

18. Վճարելի դատարանը կրկնում է իր նախադեպային պրակտիկայում ձևավորած դիրքորոշումներն առ այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը նպատակ է հետապնդում սահմանել քրեական դատավարության համակարգում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկը՝ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության իրավական կառուցակարգը: Ընդ որում, այդ իրավանորմն ընդհանրական է. այն չի սահմանում վերահսկողության կոնկրետ օբյեկտները (տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման 18-րդ կետը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ իրավանորմեր, որոնք հստակ կարգավորում են մինչդատական վարույթի շրջանակներում ընդունվող դատավարական ակտերից մեկի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը և այդ որոշումների հետևանքով որոշակի իրավահարաբերությունների փոփոխությունները: Հակառակ դրան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներն ամրագրում են առավելապես ընդհանրական բնույթի նորմեր, որոնք մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանները և քրեական դատավարության այդ փուլում դատարանի լիազորությունները կարգավորում են ընդհանրական ձևով: ՀՀ քրեադատավարական օրենքում նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր նորմերից, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներից, առանձնացրել է այդ նույն իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը՝ հստակեցնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատական կարգն ու դրա արդյունքում դատարանի կողմից կայացվող որոշումը: Նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը (տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով վերը վկայակոչված որոշման 20-րդ և 21-րդ կետերը):

19. Զարգացնելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հատուկ կառուցակարգը դատական ստուգման առարկայի առումով սահմանափակված է քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշմամբ: Կիրառելով մեկնաբանման *expressio unius* հանրաճանաչ կանոնը, համաձայն որի՝ սպառիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված դատական ստուգման առարկայում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը չի կարող նույնացվել քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման հետ, քանի որ դրանք իրենցից ներկայացնում են տարբեր իրավական բնույթ, բովանդակություն, նպատակ և հետևանքներ ունեցող դատավարական որոշումներ:

Մասնավորապես քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն իրենից ներկայացնում է քրեական գործ հարուցելու փուլը եզրափակող և դատավարության հետագա ընթացքը բացառող որոշում: Այն կայացվում է ենթադրյալ հանցանքի հիմքերի բավարարության ստուգման ուղղությամբ իրականացվող դատավարական և (կամ) այլ գործողությունների արդյունքում, ընդ որում, դրա կայացման համար իրավական նշանակություն չունի ենթադրաբար հանցանք կատարած անձի փաստացի առկայությունը: Մինչդեռ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կայացվում է կոնկրետ անձի նկատմամբ՝ բացառելով տվյալ անձի նկատմամբ կոնկրետ դեպքի առթիվ քրեական հետապնդում իրականացնելը, այլ ոչ թե այդ դեպքի առթիվ իրականացվող վարույթի ընթացքը, որն ուղղված է մեղավոր անձին (անձանց) բացահայտելուն և օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելուն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դատական վերահսկողության նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգը կիրառելի չէ: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման նկատմամբ դատական վերահսկողության հատուկ կառուցակարգ, հետևաբար դրա նկատմամբ պետք է կիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կառուցակարգը:

20. Սույն գործի փաստերի համաձայն՝ Քննիչի՝ 2013 թվականի նոյեմբերի 30-ի «Քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական հետապնդում չիրականացնելու, խափանման միջոցը վերացնելու և քրեական

գործով վարույթը կարճելու մասին» որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, Մ.Աբրոյանի և Ս.Շահնազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ ու 118-րդ հոդվածներով, 34-213-րդ հոդվածի 1-ին մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել համաներման ակտ ընդունվելու պատճառաբանությամբ: Նույն որոշման 2-րդ կետով Մ.Աբրոյանի և Տ.Խենյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդում չի իրականացվել նրանց արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Նշված որոշման 2-րդ կետի դեմ դատական կարգով բողոք է ներկայացրել Ս.Շահնազարյանը՝ խնդրելով վերացնել քննիչ Ա.Կարապետյանի՝ 2013 թվականի նոյեմբերի 30-ի որոշման 2-րդ կետը և պարտավորեցնել հարուցել քրեական գործ (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Առաջին ստյանի դատարանը, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածին, որոշել է քրեական հետապնդում չիրականացնելու մասով վերացնել Քննիչի որոշումը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Վերաքննիչ դատարանն իր հերթին, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներին, օրինական ուժի մեջ է թողել Առաջին ստյանի դատարանի որոշումը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

21. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 18-19-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական հետապնդում չիրականացնելու մասով Քննիչի որոշման դատական ստուգումը ստորադաս դատարանները պետք է իրականացնեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգով:

Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ չնայած Առաջին ստյանի դատարանը հղում է կատարել 290-րդ, իսկ Վերաքննիչ դատարանը՝ 185-րդ և 290-րդ հոդվածներին, սակայն դատական ստուգումն, ըստ էության, իրականացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված կարգով: Վճարելի դատարանի վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ ստորադաս դատարաններն արդյունքում վերացրել են բողոքարկվող որոշումը: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով իրականացվող վարույթի շրջանակներում դատարանի լիազորությունները սահմանափակված են անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության կամ բողոքը մերժելու մասին որոշում կայացնելով: Նշված վարույթի շրջանակներում, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով իրականացվող վարույթի, դատարանն իրավասու չէ վերացնել բողոքարկվող որոշումը:

Արդյունքում ստորադաս դատարանները դուրս են եկել դատական վերահսկողության սահմաններից՝ թույլ տալով նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածների խախտումներ:

22. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները Ս.Շահնագարյանի բողոքի քննության մասին չեն տեղեկացրել Մ.Աբրոյանին և Տ.Խեմյանին (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը): Մինչդեռ ներկայացված բողոքն անմիջականորեն առնչվել է նրանց իրավունքներին և օրինական շահերին, վերաբերել նրանց կողմից ենթադրաբար խարդախություն կատարելու մասով քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ որոշմանը: Հետևաբար բողոքի կապակցությամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու համար դատարանները պարտավոր էին տեղեկացնել բողոքի դատական քննության մասին *(նշված հարցի կապակցությամբ mutatis mutandis տե՛ս Համբարձում Հարությունյանի գործով վերը վկայակոչված որոշումը)*:

Արդյունքում ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտում:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից գրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»*:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործով դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մինևս ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արձանագրված խախտումներն իրենց բնույթով այնպիսին են, որ գրկում են Վճռաբեկ դատարանին բողոքաբերի կողմից ներկայացված մնացած փաստարկներին (տե՛ս սույն որոշման 11-րդ և 13-րդ կետերը) անդրադառնալու հնարավորությունից, հետևաբար գործը պետք է ուղարկվի Վերաքննիչ դատարան՝ նոր քննության: Ընդ որում, նոր քննության շրջանակներում արդար դատաքննության իրավունքի պահանջների պահպանմամբ պետք է քննարկման առարկա դարձվեն նաև բողոքաբերի նշված փաստարկները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 397-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Սամվել Լադիկի Շահնագարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԴ5/0005/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ը.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գրիգոր Վոլոդյայի Դլիջյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի սեպտեմբերի 1-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Դլիջյանի պաշտպան Արթուր Խաչիկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

2014 թվականի հունվարի 20-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում (այսուհետ՝ Սևանի քննչական բաժանմունք) ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով հարուցվել է թիվ 42100214 քրեական գործը:

2014 թվականի հունվարի 21-ին վերը նշված հանցավոր արարքը կատարելու կասկածանքով ձերբակալվել են Գրիգոր Վոլոդյայի Դլիջյանը և Սարգիս Հովհաննեսի Անտոնյանը:

2014 թվականի հունվարի 23-ին Գ.Դլիջյանը և Ս.Անտոնյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունվարի 23-ի որոշումներով Գ.Դլիջյանի և Ս.Անտոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2014 թվականի մարտի 4-ին նախաքննական մարմնի կողմից որոշում է կայացվել Գ.Դլիջյանին և Ս.Անտոնյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխելու և կրկին մեղադրանք առաջադրելու մասին: Նույն օրը նրանք որպես մեղադրյալներ են ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2014 թվականի մարտի 5-ին Վիտալի Վորոնցովի Աբրահամյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Նույն օրը նախաքննական մարմնի կողմից որոշում է կայացվել թիվ 42100214 քրեական գործից մաս անջատելու մասին:

Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) ստացվել է 2014 թվականի մարտի 7-ին:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունիսի 25-ի դատավճռով Գ.Դլիջյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Նույն դատավճռով Ս.Անտոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա Ս.Անտոնյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 6 (վեց) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Գ.Դլիջյանի պաշտպան Ա.Խաչիկյանի և ամբաստանյալ Ս.Անտոնյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ բողոքները մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունիսի 25-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 1-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Ղլիջյանի պաշտպան Ա.Խաչիկյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հունվարի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Մեղադրական եզրակացության համաձայն՝ Գրիգոր Վոլոդյայի Ղլիջյանը մեղադրվում է այն բանի համար, որ. «(...) նա նախնական համաձայնության գալով Տավուշի մարզի Մովսես գյուղի բնակիչ Սարգիս Հովհաննեսի Ասրոնյանի հետ Գեղարքունիքի մարզի Ասրատամեջ գյուղում գրավող նույն գյուղի բնակիչ Վարդան Բորիսի Բալյանի հայրիկին՝ Բորիս Գրիգորի Բալյանին պարկանող առանձնապահից գողություն կատարելու մեջ 2014 թվականի հունվարի 16-ի լույս 17-ի գիշերը իրեն պարկանող Վազ 21 Նիվա մակնիշի ավտոմեքենայով Մովսես գյուղից գնացել են Գեղարքունիքի մարզի Ասրատամեջ գյուղում գրավող Վարդան Բորիսի Բալյանի հայրական տուն, կացնի հարվածներով կոտրել առանձնապահ մուտքի դռան փականը և, ապօրինի մուտք գործելով առանձնապահուն, այնտեղից գողացել (...) [մի շարք իրեր] և գողացված իրերը տեղափոխելով և տեղավորելով առանձնապահից 600 մետր հեռավորության վրա կայանված Նիվա մակնիշի ավտոմեքենայի մեջ հեռացել են Տավուշի մարզի Մովսես գյուղ, որի հետևանքով Վարդան Բորիսի Բալյանին պարճառվել է զգալի չափերի հասնող, ընդհանուրը 111.540 ՀՀ դրամ գումարի նյութական վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 222-230):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն. «Ամբաստանյալ Սարգիս Հովհաննեսի Ասրոնյանը իրեն լիովին մեղավոր ճանաչեց և ցուցմունք տվեց այն մասին, որ Գրիգոր Ղլիջյանին չի ասել թե ուր և ինչի համար են գնում: Միայն ասել է, որ ծանոթի տնից իրեր կան բերելու: Ճանապարհին՝ գերեզմանոցների մոտ, մեքենայի ակը ծակվել է: Ինքը Գրիգոր Ղլիջյանին թողել է այդտեղ և միայնակ գնացել և կատարել է գողությունը, որից հետո գողացված իրերը բերել և դրել է մեքենայի մեջ և այդտեղից գնացել են դեպի Մասրիկ գյուղ՝ իրենց տուն: Առանձնապահ սենյակներում գումար է փնտրել, դրանից հետո գողացված իրերը լցրել է երկու պարկերի մեջ և երկու անգամ, շալակած, տարել դեպի մեքենան: Այդ ժամանակ Գրիգոր Ղլիջյանը քնած է եղել և ինքը բացել է մեքենայի բեռնափոխակը և իրերը դրել այնտեղ: (...) Հայրնեց, որ գողությունը ինքն է կատարել, դա եղել է իր մտադրությունը (...): Նշել է, որ նախաքննության ընթացքում տված ցուցմունքներում հայտնել է, որ Գրիգոր Ղլիջյանի հետ նախնական պայմանավորվածություն է ունեցել, քանի որ քննիչն է այդպես

գրել, իսկ ինքը չի հասկացել, քանի որ գրել չգիտի, սակայն ցուցմունքների սկզբում ինքն է գրել, որ ցուցմունքը իր խնդրանքով արձանագրվի քննիչի կողմից, իսկ վերջում գրել է, որ ցուցմունքը գրված է իր խնդրանքով, ճիշտ է, որի համար ստորագրում է, որովհետև այդքանը կարող է գրել, հայերեն կարդում է, բայց ոչ այդքան լավ:

Նախաքննության ընթացքում որպես կասկածյալ հարցաքննված Սարգիս Հովհաննեսի Անտոնյանի դատաքննության ընթացքում հրապարակված և հետագործված 2014 թվականի հունվարի 21-ի և հունվարի 22-ի ցուցմունքների համաձայն (...) ինքը և Գրիգոր Ղլիջյանը որոշել են գնալ Գեղարքունիքի մարզի Անտոնյանց գյուղ, Վիրալիկի ծանոթի առանձնատուն և այնտեղից գողություն կատարել: Նախնական պայմանավորվածության համաձայն, հունվարի 16-ին, ժամը 20:00-ից 21:00-ն ընկած ժամանակահատվածում, ինքը և Գրիգոր Ղլիջյանը, վերջինիս պարկաշող «Նիվա» մակնիշի ավտոմեքենայով դուրս են եկել Տավուշի մարզի Մովսես գյուղից և ուղևորվել դեպի Գեղարքունիքի մարզի Անտոնյանց գյուղ: Հասնելով նշված գյուղ մեքենան կանգնեցրել են գյուղի գերեզմանատան մոտ: Գրիգոր Ղլիջյանը մնացել է մեքենայի մեջ, իսկ ինքը ոտքով գնացել է դեպի Վիրալիկի ծանոթի առանձնատուն: Հասնելով առանձնատան մոտ (...) կացինով հարվածելու միջոցով, կտրել է առանձնատան մուտքի դռան փականը և ներս մտել: Ներս մտնելուց հետո (...) [վերցրել է տարբեր իրեր]: Այդ ամենը երկու պայուսակի մեջ դնելուց հետո նույն ճանապարհով դուրս է եկել առանձնատնից և գնացել Գրիգոր Ղլիջյանի մոտ, որից հետո, երկուսով, անմիջապես հեռացել են այդտեղից՝ իրենց հետ տանելով գողացված ապրանքները: Հասնելով Տավուշի մարզի Մովսես գյուղ գողոնը բաժանել երկու մասի՝ իր և Գրիգոր Ղլիջյանի միջև: (...)

Ամբաստանյալ Գրիգոր Վոլոդյայի Ղլիջյանը իրեն մեղավոր չճանաչեց և ցուցմունք տվեց այն մասին, որ իրականում ինքը չի իմացել, որ Սարգիս Անտոնյանը գնում է գողություն կատարելու և եթե իմանար վերջինիս հետ չէր գնա: Նրա հետ գնացել է, քանի որ համագյուղացի են և վերջինս իր մեքենան նորոգել է և քանի որ նրան պարտք է եղել, այդ պարճառով չի մերժել Սարգիս Անտոնյանի խնդրանքը և հետը գնացել է Անտոնյանց գյուղ: (...) Հասնելով Անտոնյանց գյուղ մեքենայի անվաղորդը ծակվել է, ինքը դուրս է եկել մեքենայից, որպեսզի փոխի վնասված անվաղորդը, իսկ Սարգիս Անտոնյանը այդ ընթացքում գնացել է իրերը բերելու: Հետո ինքը քնել է մեքենայի մեջ: Վերադառնալով, Սարգիս Անտոնյանը արթնացրել է իրեն և նրանք հեռացել են: (...) Հայտնել է, որ չնայած նրան, որ նախաքննական ցուցմունքում գրված է, որ ինքն էլ է Սարգիս Անտոնյանի հետ գնացել գողության կատարման, սակայն դա գրվել է քննիչի թելադրանքով, բայց ցուցմունքի սկզբում ինքն է գրել, որ ցուցմունքը արձանագրվի քննիչի կողմից իր խնդրանքով և ստորագրել, իսկ վերջում գրել է, որ ցուցմունքը գրված է իր բառերից, ճիշտ է, որի համար էլ ստորագրել է: (...)

Նախաքննության ընթացքում որպես կասկածյալ հարցաքննված Գրիգոր Վոլոդյայի Ղլիջյանի՝ դատարանության ընթացքում հրապարակված և հեղափոխված 2014 թվականի հունվարի 21-ի ցուցմունքի համաձայն՝ (...) հունվարի 15-ին Սարգիս Ասրոնյանը (...) խնդրել է իրեն աջակցել (...) առանձնապես գողություն կատարելուն, քանի որ ինքը մեքենա ունի և ինքը համաձայնվել է, քանի որ Սարգիս Ասրոնյանին պարտք է եղել՝ փարբեր ժամանակահատվածներում նրա կողմից իր մեքենան վերանորոգելու համար: Հունվարի 16-ին, ժամը 20:00-ի սահմաններում, դուրս են եկել իրենց գյուղից և ուղևորվել դեպի Գեղարքունիքի մարզի Ասրառամեջ գյուղ: Հասնելով նշված գյուղ մեքենան կայանել են գյուղի գերեզմանատան մոտ, որից հեղափոխված մնացել է մեքենայի մեջ, իսկ Սարգիս Ասրոնյանը գնացել է դեպի Վիպալիկի ծանոթի առանձնատուն: Մտր մեկ ժամ հեղափոխված Սարգիս Ասրոնյանը վերադարձել է՝ ձեռքին ունենալով երկու պայուսակ, որոնց մեջ եղել են փարբեր իրեր: Այդ իրերը մեքենայի մեջ փակվորելուց հեղափոխված վերադարձել են Տավուշի մարզի Մովսես գյուղ: (...) Երբ հասել են գյուղ, Սարգիս Ասրոնյանը վերցրել է գողոնի մի մասը, իսկ մնացած մասը փակել իրեն, որպեսզի առավորյան որոշեն թե դրանք ինչ են անելու: Դրանից հեղափոխված իրերի մյուս մասը փարբել է իրենց տուն և դրել փան ակուդում:

(...) դատարանը ապացուցված է համարում, որ (...) Գ.Ղլիջյանը կատարել (...) [է] հանցագործություն, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախատեսված հանցագործության հարկանիշներին, հետևաբար ենթակա (...) [է] քրեական պատասխանատվության և պարժի այդ հոդվածով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 202-207):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն. «(...) ստորադաս դատարանը, պարզա՛ն հրավական ընթացակարգի շրջանակներում արուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ամբաստանյալ Գրիգոր Ղլիջյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության, նրան մեղաազրված արարքի քրեաիրավական գնահատականը ճիշտ է փրվել, ամբաստանյալին արդարացնելու հիմքերը բացակայում են, իսկ դատավճիռն այդ մասով օրինական և հիմնավորված է: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 282-288):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճարելի բողոք բերած անձը գտել է, որ ստորադաս դատարանները կիրառել են ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ և 48-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեին, չեն կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 5-րդ, 9-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեին, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 35-րդ, 360-րդ, 365-րդ, 366-րդ և 393-րդ հոդվածները, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի խախտմանը: Վճարելի բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ ստորադաս դատարանների հետևությունները հակասում են Վճարելի դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ և 38-րդ հոդվածներին տրված մեկնաբանություններին:

Վճարելի բողոքի հեղինակն ի հիմնավորումն իր փաստարկների՝ պնդել է, որ ստորադաս դատարանների հետևությունները հիմնված չեն գործի հանգամանքների օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման վրա, Գ.Ղլիջյանի մեղավորության վերաբերյալ դատարանները եկել են սխալ եզրահանգման, և նրան մեղսագրված արարքի քրեաիրավական գնահատականը ճիշտ չի տրվել: Մասնավորապես, ըստ Գ.Ղլիջյանին ներկայացված մեղադրանքի՝ նա ուրիշի գույքին տիրանալու նպատակով մուտք է գործել բնակարան, մինչդեռ ըստ դեպքի նկարագրության՝ Գ.Ղլիջյանը ավտոմեքենայով կանգնած է եղել մոտ 600 մետր հեռավորության վրա և այդ պայմաններում չէր կարող որևէ կերպ օժանդակել բնակարան մուտք գործելուն, խոչընդոտներ վերացնել կամ այլ կերպ ապահովել Ս.Անտոնյանի մտադրության իրականացումը: Բողոքաբերը շեշտել է, որ գործի նյութերում իսպառ բացակայում են Գ.Ղլիջյանի կողմից իրեն մեղսագրված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն (բնակարան ապօրինի մուտք գործելը և գույքին տիրանալը) կատարելու վերաբերյալ փաստեր և ապացույցներ:

Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանների թույլ տված խախտումները խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը, մինչդեռ այդպիսի խախտումներ թույլ չտալու դեպքում ստորադաս դատարանները Գ.Ղլիջյանին պետք է ճանաչեին անմեղ, քանի որ վերջինիս արարքում առկա է ընդամենը օժանդակության ձևական հանցակազմ:

9. Ելնելով վերոշարադրյալից՝ վճարելի բողոք բերած անձը խնդրել է Գ.Ղլիջյանի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, կամ կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ Գ.Ղլիջյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով

առաջադրված մեղադրանքում ճանաչելով անմեղ կամ կարճելով գործի վարույթը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Գ.Ղլիջյանը, որպես համակատարող, անմիջականորեն կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված արարք:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածը սահմանում է. «Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիրավորյալ համարեղ մասնակցությունը դիրավորյալ հանցագործությանը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն.

«1. Կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը:

2. Կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համարեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգրագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պարասխանարվության կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ:

(...)

5. Օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ փրամատրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները»:

Մեջբերված նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Ալիկ Մաթևոսյանի և Ռաֆիկ Հարությունյանի վերաբերյալ որոշման մեջ՝ դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ. «(...) Եթե կատարողները երկու կամ ավելի անձինք են, ապա այդպիսի հանցակցությունը կոչվում է համակատարում, որի դեպքում հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է կատարի հանցագործության օբյեկտիվ կողմը: Համակատարում նշանակում է, որ երկու կամ ավելի անձինք անմիջականորեն կատարում են հանցագործության օբյեկտիվ կողմը:

Համակատարում չէ հանցագործությանը այնպիսի մասնակցությունը, երբ անձանցից մեկը փվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը

հանդիսացող ոչ մի գործողություն չի կատարել, այլ միայն օժանդակել է հանցագործությանը:

(...)

Օժանդակողը կատարողից փարբերվում է այն բանով, որ նա հանցագործության օբյեկտիվ կողմն անմիջականորեն չի կատարում, այլ կամ հանցագործությունը նախապարաստելու պրոցեսում, կամ դրա ավարտման փուլում կատարողին օգնություն է ցույց տալիս հանցագործության ավարտման ռեալ (իրական) հնարավորություններ ստեղծելու միջոցով:

Օժանդակողը հանցագործության անմիջական կատարմանը չի մասնակցում, այլ տրամադրելով հանցագործության կատարման համար անհրաժեշտ միջոցներ կամ գործիքներ, վերացնելով խոչընդոտները և այլն, օգնում է կատարողին իրականացնել հանցակիցների դիտավորությունը: (...)

«(տե՛ս Ալիկ Մաթևոսյանի և Ռաֆիկ Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի թիվ ՎԲ-48/08 որոշման 29-30-րդ կետերը):

12. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գողությունը՝ ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակությունը՝

պարժվում է [համապարաստիան պարժով]:

(...)

3. Գողությունը, որը կատարվել է՝

(...)

1.1) բնակարան ապօրինի մուտք գործելով,

(...)

պարժվում է [համապարաստիան պարժով]:»:

Մեջբերված նորմի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով պատասխանատվություն է նախատեսված բնակարան ապօրինի մուտք գործելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություն կատարելու համար:

Վճռաբեկ դատարանը կրկնում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ «հափշտակություն» հասկացությունը բնորոշվում է որպես ուրիշի գույքն ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով վերցնելը կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Իսկ դրանից հետևում է, որ գողության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը՝ գործողությունը, դրսևորվում է նրանում, որ ուրիշի գույքը հանցավորի կողմից վերցվում և հանցավորինը կամ այլ անձինն է դարձվում: Ընդ որում, տվյալ գործողությունները կարող են կատարվել բազմաթիվ եղանակներով, սակայն արարքն ավարտված կհամարվի այն պահից, երբ հանցավորը գույքը վերցնելուց,

իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելուց հետո այն տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ունենա (տե՛ս Գ.Ղամբարյանի և մյուսների գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշման 31-րդ կետը):

Ինչ վերաբերում է քննարկվող արարքի կատարման եղանակին՝ բնակարան ապօրինի մուտք գործելուն, ապա Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ *մուտք գործելու* հիմնական ձևերից է համարվում հանցավորի ֆիզիկական ներթափանցումը կամ ներս մտնելը բնակարան: Միաժամանակ հարկ է նկատել, որ մուտք գործելը կհամարվի *ապօրինի*, եթե իրականացվի առանց համապատասխան իրավական հիմքերի:

13. Սույն որոշման 11-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանելով նախորդ կետում քննարկված հանցակազմը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ բնակարան ապօրինի մուտք գործելով գողությունը կատարվում է մեկից ավելի անձանց կողմից, արարքը կարող է որակվել որպես համակատարում, երբ անձը լրիվ կամ մասամբ կատարում է հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողություններ:

Հակառակ պարագայում անձի գործողությունները համապատասխան հանգամանքների առկայության դեպքում կարող են որակվել հանցակցության այլ ձևերով: Մասնավորապես, եթե հանցակիցը հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողություն չի կատարել, սակայն հանցագործության կատարմանն աջակցել է, օրինակ, խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով (օրինակ՝ հսկում է դրսում, որպեսզի կատարողն առանց խոչընդոտի կատարի հափշտակությունը, սպասում է ավտոմեքենայի մեջ կատարողի կողմից գողացված իրերը հետագայում նրա հետ միասին ապահով վայր տեղափոխելու նպատակով և այլն), ապա նրա արարքը պետք է որակվի որպես բնակարան ապօրինի մուտք գործելով գողության օժանդակություն:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Գ.Ղիջյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, նախնական համաձայնության գալով Ս.Անտոնյանի հետ Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղում գտնվող առանձնատնից գողություն կատարելու համար, 2014 թվականի հունվարի 16-ի լույս 17-ի գիշերն իրեն պատկանող ավտոմեքենայով գնացել են նշված առանձնատուն, կացնի հարվածներով կտորել վերջինիս մուտքի դռան փականը և, ապօրինի մուտք գործելով առանձնատուն, այնտեղից գողացել են տարբեր իրեր, իսկ գողացված իրերը տեղափոխելով և տեղավորելով առանձնատնից 600 մետր հեռավորության վրա կայանված ավտոմեքենայի մեջ՝ հեռացել են Տավուշի մարզի Մովսես գյուղ, որի հետևանքով Վ.Բայանին պատճառվել է զգալի չափերի հասնող,

ընդհանուր՝ 111.540 ՀՀ դրամ գումարի նյութական վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Ս.Անտոնյանի նախաքննական ցուցմունքների համաձայն՝ ինքը և Գ.Ղլիջյանը որոշել են գնալ Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղ և գողություն կատարել առանձնատնից: Հասնելով նշված գյուղ՝ մեքենան կանգնեցրել են գյուղի գերեզմանատան մոտ: Գ.Ղլիջյանը *մնացել է* մեքենայի մեջ, իսկ ինքը ոտքով գնացել է դեպի առանձնատուն: Հասնելով առանձնատան մոտ՝ կացնով կոտրել է վերջինիս մուտքի դռան փականը և ներս մտել: Վերցրած իրերը երկու պայուսակի մեջ դնելուց հետո դուրս է եկել առանձնատնից և գնացել Գ.Ղլիջյանի մոտ, ապա երկուսով անմիջապես հեռացել են այնտեղից (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Գ.Ղլիջյանը նախաքննության ժամանակ ցուցմունք է տվել առ այն, որ Ս.Անտոնյանը խնդրել է իրեն աջակցել առանձնատնից գողություն կատարելուն, քանի որ ինքն ավտոմեքենա ունի: Ինքը համաձայնել է: Հասնելով Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղ՝ մեքենան կայանել են գյուղի գերեզմանատան մոտ, ինքը *մնացել է* մեքենայի մեջ, իսկ Ս.Անտոնյանը գնացել է դեպի առանձնատուն: Մոտ մեկ ժամ հետո Ս.Անտոնյանը վերադարձել է՝ ձեռքին ունենալով երկու պայուսակ, որոնց մեջ եղել են տարբեր իրեր: Այդ իրերը մեքենայի մեջ տեղավորելուց հետո իրենք վերադարձել են գյուղ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Դատարանում Գ.Ղլիջյանն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ իրականում ինքը չի իմացել, որ Ս.Անտոնյանը գնում է գողություն կատարելու և եթե իմանար, վերջինիս հետ չէր գնա: Բացի այդ, վերջինս նշել է, որ հասնելով Անտառամեջ գյուղ՝ մեքենայի անվադողը ծակվել է, ինքը դուրս է եկել մեքենայից, որպեսզի փոխի վնասված անվադողը, իսկ Ս.Անտոնյանը այդ ընթացքում գնացել է իրերը բերելու: Հետո ինքը քնել է մեքենայի մեջ: Վերադառնալով Ս.Անտոնյանն արթնացրել է իրեն, և նրանք հեռացել են: Իսկ համաձայն Ս.Անտոնյանի դատարանում տված ցուցմունքների՝ վերջինս Գ.Ղլիջյանին չի ասել, թե ուր և ինչի համար են գնում: Միայն ասել է, որ ծանոթի տնից իրեր կան բերելու: Ճանապարհին՝ գերեզմանոցների մոտ, մեքենայի ակը ծակվել է: Ինքը Գ.Ղլիջյանին թողել է այդտեղ և միայնակ գնացել ու կատարել է գողությունը, որից հետո գողացված իրերը բերել և դրել է մեքենայի մեջ, ու այդտեղից գնացել են (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ պատճառաբանելով, որ դատարանն ամբաստանյալ Գ.Ղլիջյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության, նրան մեղսագրված արարքի քրեաիրավական գնահատականը ճիշտ է տրվել, ամբաստանյալին արդարացնելու հիմքերը բացակայում են, իսկ դատավճիռն այդ մասով օրինական և հիմնավորված է (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում մեջբերված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ՝

ա) ստորադաս դատարանները հաստատված են համարել Գ.Ղլիջյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարելու փաստը, մինչդեռ վերջիններիս կողմից դատական ակտերում շարադրված ապացույցներից որևէ մեկում առկա չէ որևէ տեղեկություն այն մասին, որ Գ.Ղլիջյանն ապօրինի մուտք է գործել Բ.Բայանին պատկանող առանձնատուն,

բ) դեպքի նկարագրությունը բովանդակող ապացույցներից (ամբաստանյալների ցուցմունքները) հետևում է, որ հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների իրականացման ընթացքում Գ.Ղլիջյանը Ս.Անտոնյանին սպասել է առանձնատնից որոշակի հեռավորության վրա գտնվող մեքենայում (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

գ) (բ) կետում վկայակոչված ապացույցները ստորադաս դատարանների կողմից անթույլատրելի կամ անարժանահավատ չեն ճանաչվել:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, առանց ամբաստանյալի կողմից հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները լրիվ կամ մասամբ կատարելու հանգամանքի վերաբերյալ որևէ ապացույցի, հաստատված են համարել նրա կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործություն կատարելու փաստը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Գ.Ղլիջյանը, որպես համակատարող, անմիջականորեն կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված արարք, անհիմն են:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Գ.Ղլիջյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով մեղադրական դատավճիռ կայացնելով՝ Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելիս նաև Վերաքննիչ դատարանը թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի և 38-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, անօրինական և չհիմնավորված դատական ակտերի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված դատական սխալներ:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումներն ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանելու Վերաքննիչ դատարանի դատական ակտը և գործն ուղարկելու նույն դատարան՝ նոր քննության: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գնահատելով գործում առկա ապացույցները, Գ.Ղլիջյանին մեղսագրվող արարքի իրավական որակման հարցում պետք է հանգի համապատասխան եզրահանգման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գրիգոր Վոլոդյայի Ղլիջյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

6.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԴ/0001/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ մասնակցությամբ դիմողդիմողի ներկայացուցիչ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ Մ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ Ս.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2015 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 2-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի նոյեմբերի 21-ին Մանվել Հովհաննիսյանը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Կենտրոնականի բաժին հաղորդում է ներկայացրել Մանվել Հովհաննիսյանի կողմից քաղաքաքացիական գործով կեղծ տեղեկանք ներկայացնելու և սուտ ցուցմունք տալու մասին:

2013 թվականի դեկտեմբերի 9-ին նախապատրաստված նյութերի արդյունքում ՀՀ ոստիկանության Աշտարակի բաժնի ավագ հետաքննիչ Զ.Ամիրյանի (այսուհետ՝ նաև Հետաքննիչ) որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

2013 թվականի դեկտեմբերի 16-ին Արագածոտնի մարզի դատախազի տեղակալ Ռ.Հայրապետյանի (այսուհետ՝ նաև Դատախազ) որոշմամբ Հետաքննիչի՝ 2013 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը վերացվել է, Մ.Հովհաննիսյանի կողմից սուտ մատնություն կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, և այն ուղարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արագածոտնի մարզի քննչական բաժին:

Վարույթն իրականացնող մարմնի՝ 2013 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ գործն ուղարկվել է ՀՀ Արագածոտնի մարզի դատախազություն՝ քննչական ենթակայության հարցը լուծելու համար, նույն օրը՝ նաև ՀՀ գլխավոր դատախազություն:

2014 թվականի հունվարի 29-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բադալյանը գրավոր հանձնարարություն է տվել Մ.Հովհաննիսյանի կողմից սուտ մատնություն կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործը կարճելու մասին:

2014 թվականի փետրվարի 14-ին Դատախազը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, որոշում է կայացրել Մ.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը հանցակազմի բացակայության հիմքով կարճելու մասին:

2. ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2014 թվականի մայիսի 5-ի որոշմամբ բավարարել է Մանվել և Լիդա Հովհաննիսյանների բողոքը, վերացրել Դատախազի՝ 2014 թվականի փետրվարի 14-ի որոշումը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել վերացնել Մ.Հովհաննիսյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բադալյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 5-ի որոշման եզրափակիչ մասից հանել «Վերացնել ՀՀ Արագածոտնի մարզի դատախազի տեղակալ Ռ.Հայրապետյանի «քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը հանցակազմի

բացակայության հիմքով կարճելու մասին» 2014 թվականի փետրվարի 14-ին որոշումը» պարբերությունը, իսկ վարույթն իրականացնող մարմնին Մ.Հովհաննիսյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելուն պարտավորեցնելու մասով Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 2-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանը:

Վճարելի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. 2013 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Կենտրոնականի բաժին Մ.Հովհաննիսյանի ներկայացրած հաղորդումը վերաբերել է Ս.Հովհաննիսյանի կողմից Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող քաղաքացիական գործով կեղծ տեղեկանք ներկայացնելուն և սուտ ցուցմունք տալուն (տե՛ս քրեական գործի նյութեր, 8-11 էջեր):

6. Դատախազի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի որոշման համաձայն՝ «(...) [Թ]րեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն անօրինական է և չի բխում նախապարտադրված նյութերով ձեռք բերված տվյալներից, քանի որ չնայած այն հանգամանքին, որ նախապարտադրված նյութերով հիմնավորվել է, որ Ս.Հովհաննիսյանը դատարանում կեղծ տեղեկանք չի ներկայացրել և սուտ ցուցմունք չի տվել, ՀՀՈ Աշտարակի բաժնի ավագ հետաքննիչ Զ.Ամիրջանը անդրադարձ չի կարարել Մ.Հովհաննիսյանի կողմից ՀՀՈ Երևան քաղաքի վարչության կենտրոնի բաժնում 21.11.2013թ. տված հաղորդմանը և իրավական գնահատական չի տվել Մ.Հովհաննիսյանի արարքին, այնինչ նախապարտադրված նյութերով առկա են Մ.Հովհաննիսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կարարելու հարկանիշներ (...)» (տե՛ս քրեական գործի նյութեր, 72-74 էջեր):

7. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանի՝ 2014 թվականի հունվարի 29-ի գրավոր հանձնարարության համաձայն՝ «Մտուգմամբ պարզվել է, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին Արագածոտնի մարզի դատախազի տեղակալ Ռ.Հայրապետյանի՝ 2013թ. դեկտեմբերի 16-ի որոշումն անօրինական է, որպիսի պայմաններում քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցները թույլատրելի լինել չեն կարող: (...)

[Ռ.Հայրապետյանի կողմից] հաշվի չի առնվել այն, որ Մանվել Հովհաննիսյանի կողմից ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնում հանցագործության մասին սուր մարտություն կատարելու դեպքը հանդիսացել է քրեական գործ հարուցելու առանձին առիթ, որպիսի պայմաններում մեկ այլ դեպքով նյութեր նախապարաստելու արդյունքում հետաքննության մարմնի կողմից կատարված ճիշտ հետևությունը, այն է՝ Մանվել Հովհաննիսյանի հաղորդման մեջ և բացարարություններում հանցագործության հարկանիշներ չլինելու մասին եզրահանգումը, չէր կարող համարվել անհիմն կամ անօրինական, ինչպես որ փաստացի դատախազի կողմից քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու վերաբերյալ որոշման կայացմամբ, համարվել է:

Գտնելով, որ Մանվել Մարգարի Հովհաննիսյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հարկանիշներ է պարունակում դատախազը, օգտվելով քրեական գործ հարուցելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությունից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, պետք է կայացնել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցելու մասին առանձին որոշում, իսկ Մանվել Հովհաննիսյանի հաղորդման հիման վրա նախապարաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշրարակի բաժնի ավագ հետաքննիչ Զ.Ամիրյանի՝ 2013թ. դեկտեմբերի 9-ի որոշումը դատախազի կողմից կարող էր վերացվել բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորման շրջանակներում (...):» (տե՛ս քրեական գործի նյութեր, 78-80 էջեր):

8. Առաջին ատյանի դատարանը, որոշում կայացնելով Դատախազի՝ 2014 թվականի փետրվարի 14-ի որոշումը վերացնելու և վարույթն իրականացնող մարմնին Մ.Հովհաննիսյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելուն պարտավորեցնելու մասին, իր դատական ակտում նշել է. «(...) ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանի հանձնարարականը ՀՀ Արագածոտնի մարզի դատախազի տեղակալ Ռ. Հայրապետյանը կատարել է և 2014թ. փետրվարի 14-ին որոշում է կայացրել Մանվել Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը հանցակազմի բացակայության հիմքով կարճելու վերաբերյալ՝ չանդրադատնալով ավագ հետաքննիչ Զ.Ամիրյանի 09.12.2014թ.-ին «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշմանը:

(...)

Դատախազը Մանվել Հովհաննիսյանի կողմից սուր մատնություն կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի վարույթի կարճման հիմքում դրել է արարքի մեջ հանցակազմի բացակայությունն առանց որևէ հիմնավորման և ապացույցների՝ չնշելով արդյոք այդ արարքում ընդհանրապես հանցակազմ չկա, թե բացակայում են հանցակազմի չորս տարրերից որևէ մեկը կամ մի քանիսը, ինչին կարող էր իրավական գնահատական փոխել միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն կատարելու արդյունքում: (...)» (տե՛ս քրեական գործի նյութեր, 41-49 էջեր):

9. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է. «(...) [Չ]պարճառարանված որոշում կայացնելով և միայն որոշման եզրափակիչ մասում նշելով Մ.Հովհաննիսյանի գործողություններում հանցակազմի բացակայության մասին և ըստ էության լուծում չբախտվելով վերջինիս հատորդման հիման վրա նախապարաստված նյութերով հետաքննիչի որոշմանը՝ Ռ.Հայրապետյանն իր 2013 թվականի դեկտեմբերի 16-ի (...) և 2014 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ [խախտել է] Մանվել և Լիդա Հովհաննիսյանների իրավունքներն ու օրինական շահերը:

(...) Դատախազ Ռ.Հայրապետյանը 2013 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ միաժամանակ վերացրել է հետաքննիչի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը: Սակայն 2014 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ դատախազ Ռ.Հայրապետյանն իր նախորդ որոշման այդ կետին չի անդրադարձել: Այսինքն՝ ներկա վիճակով առկա է հետաքննիչի՝ 2013 թվականի դեկտեմբերի 9-ի դատախազի կողմից վերացված 2014 փետրվարի 14-ի որոշումը: Ուժի մեջ գտնվող՝ դատախազի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի որոշման առկայության պայմաններում քրեական գործ չի հարուցվել մերժված նյութերի մասով:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի ցուցումով, Ռ.Հայրապետյանի 2014 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ չի լուծվել վերոհիշյալ անհատականության հարցը:

(...)

Վերադաս դատախազի կողմից չի քննարկվել դատախազ Ռ.Հայրապետյանի՝ 2013 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումն ամբողջությամբ վերացնելու՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին հետաքննիչի որոշման օրինականության հարցը լուծելու առումով: (...)» (տե՛ս քրեական գործի նյութեր, 124-142 էջեր):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Բողոքաբերը, մասնավորապես, նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված հանցակազմի տարրերից թեկուզև մեկի բացակայությունն արդեն իսկ վկայում է արարքում հանցակազմ չլինելու մասին: Բացի այդ, արարքում հանցակազմ չլինելու մասին վարույթն իրականացնող մարմնի չվերացված որոշումն արդեն իսկ մինչդատական վարույթում փաստում և հռչակում է մեղսագրված հանցավոր արարքի կատարման մեջ անձի անմեղությունը: Հետևաբար Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումն այն մասին, որ դատախազ Ռ.Հայրապետյանը Մ.Հովհաննիսյանի արարքում հանցակազմի բացակայության հանգամանքի վկայակոչմամբ գործի վարույթը կարճելիս պետք է հիմնավորեր և նշեր՝ արդյոք արարքի մեջ ընդհանրապես հանցակազմ չկա, թե բացակայում են հանցակազմի մեկ կամ մի քանի տարրերը, հիմնավորված չէ:

Բողոքաբերը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանի կողմից չի պատճառաբանվել, թե արարքում հանցակազմի բացակայության հիմքով Մ.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց դատախազի հրաժարվելը ինչպես է խախտել վերջինիս սահմանադրական իրավունքները և օրինական շահերը, ինչպիսի բացասական հետևանքներ է առաջացրել կամ կարող էր առաջացնել վերջինիս համար:

11. Բողոքաբերի պնդմամբ ստորադաս դատարանների կողմից վարույթն իրականացնող մարմնին Մ.Հովհաննիսյանի իրավունքների ու ազատությունների խախտումը վերացնել պարտավորեցնելու մասին որոշում կայացնելու հետևանքով ստեղծվում է դատական ակտի կատարման իրավական անհնարինություն: Մասնավորապես քրեական գործով վարույթը պետք է վերսկսվի այն պայմաններում, երբ այդ վարույթը սկսելու իրավաբանական հիմքը՝ Դատախազի՝ 2013 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումն, ինքնին անօրինական է:

12. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման մեջ դատախազը պետք է անդրադառնար Մ.Հովհաննիսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերում հանցագործության դեպքի բացակայության մասին Հետաքննիչի հետևության հիմնավորվածությանն ու օրինականությանը և քրեական գործ հարուցելու մերժված նյութերի մասով: Մինչդեռ բողոքաբերը գտել է, որ այդ դիրքորոշումը դուրս է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումից, քանի որ նշված օրենսգրքի որևէ իրավանորմ քրեական հետապնդման մարմնին իրավունք չի վերապահում քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելիս նույն որոշմամբ քրեական գործ հարուցել:

13. Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին Դատախազի՝ 2014 թվականի փետրվարի 14-ի որոշումը Մ.Հովհաննիսյանի կողմից օրենքով սահմանված կարգով վերադաս դատախազին չի բողոքարկվել, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

14. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 5-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 2-ի որոշումները, դատախազ Ռ.Հայրապետյանի՝ 2014 թվականի փետրվարի 14-ի որոշման դեմ Մանվել և Լիդա Հովհաննիսյանների կողմից ներկայացված բողոքը՝ մերժել:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Մանվել և Լիդա Հովհաննիսյանների իրավունքների և ազատությունների խախտման առկայության և, ըստ այդմ, վարույթն իրականացնող մարմնին այդ խախտումը վերացնելուն պարտավորեցնելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հեղափոխության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

(...)

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (...):»:

Վճարելի դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովումը,

- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարությամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարությամբ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները (տե՛ս Կոնստիտուցիոն իրավահասցրոդ Ներսես Միսակյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանի կողմից 2009 թվականի սպրիլի 10-ին կայացված թիվ ԱՐԴԻ/0003/11/08 որոշման 12-րդ կետը): Նույնաբովանդակ դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-844 որոշմամբ (տե՛ս վկայակոչված որոշման 5-րդ կետը):

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

1) դրա հետևությունները հիմնված են միայն դատաբնության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

2) այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.

3) դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պարճառաբանված:

Պարճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Ֆ. Գալսրյանի գործով որոշման մեջ՝ ճնավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Դատական ակտի պարճառաբանվածությունը կոչված է պարճաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության սրուգման համար:

(...) Պարճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օրյեկրիվորեն սահմանափակում է վերադաս դատական արյանի

հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հերևարար դատական ակտի չպատճառարանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

(...) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում՝ ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառարանվածությունը կամ ոչ բավարար պատճառարանվածությունը դիտել է՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի արդար դատական քննության իրավունքի խախտում (տե՛ս Սալովն ընդդեմ Ուկրաինայի (Salov v. Ukraine) 06.09.2005 թվականի որոշումը, գանգապ թիվ 65518/01, Բոլդեան ընդդեմ Ռումինիայի (Boldea v. Romania) 15.02.2007 թվականի որոշումը, գանգապ թիվ 19997/02, Գրադինարն ընդդեմ Մոլդովայի (Gradinar v. Moldova) 08.04.2008 թվականի որոշումը, գանգապ թիվ 7170/02)» (տե՛ս Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

Վերահաստատելով Ֆ.Գալստյանի գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը Գ.Խնուսյանի գործով որոշման շրջանակներում արձանագրել է. «(...) [Հ]աշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառարանված (կամ ոչ պատշաճ պատճառարանված) որոշումների կայացումն անընդունելի է: (...)» (տե՛ս Գևորգ Խնուսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

18. Սույն որոշման 16-րդ և 17-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների համադրված վերլուծությունից հետևում է, որ դատարանը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու շրջանակներում ներկայացված բողոքը հիմնավորված ճանաչելու դեպքում իր դատական ակտում պետք է հստակ պատճառարանի՝

ա) վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության որ պահանջն է խախտվել և ինչու է այն դրսևորվել,

բ) դրա հետևանքով անձի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել:

Հակառակ դեպքում դատարանի կայացրած որոշումը կդառնա կամայական և ինքնանպատակ: Մասնավորապես, եթե դատական ակտում

բացակայեն պատճառաբանություններ այն մասին, թե անձի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել և ինչի հետևանքով, վարույթն իրականացնող մարմնի համար անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու պարտականությունը ողջամտորեն կդառնա անիրագործելի: Ավելին, վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի իրավունքների կամ ազատությունների խախտում թույլ տրված լինելու փաստ կամայականորեն հաստատելու արդյունքում կխախտվի հանրային և մասնավոր շահերի ճիշտ հավասարակշռումը, ինչը կհակասի քրեական դատավարության տրամաբանությանը:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը Մ.Հովհաննիսյանի իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ եզրահանգումը հիմնավորել է նրանով, որ Դատախազը ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործով վարույթը կարճել է արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով՝ չնշելով՝ արդյոք այդ արարքում ընդհանրապես հանցակազմ չկա, թե բացակայում են հանցակազմի չորս տարրերից որևէ մեկը կամ մի քանիսը, ինչին կարող էր իրավական գնահատական տրվել միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն կատարելու արդյունքում: Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում ընդգծել է նաև այն հանգամանքը, որ Դատախազը, որոշում կայացնելով քրեական գործով վարույթը կարճելու և Մ.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին, չի անդրադարձել Հետաքննիչի՝ 2013 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման օրինականությանը և հիմնավորվածությանը (տես սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին իրավաչափ է համարել Մ.Հովհաննիսյանի իրավունքների և ազատությունների խախտման մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի հիմքում դրված պատճառաբանությունները: Մասնավորապես նշել է, որ Դատախազը քրեական գործով վարույթը կարճելու և Մ.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու որոշմամբ ըստ էության չի քննարկել և չի լուծել Մ.Հովհաննիսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին Հետաքննիչի որոշման օրինականության հարցը, ինչի արդյունքում խախտվել են դիմողի իրավունքներն ու օրինական շահերը: Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ Դատախազի՝ 2013 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ, ըստ էության, վերացվել է Հետաքննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը, սակայն քրեական գործ չի հարուցվել, իսկ Դատախազն իր՝ 2014 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի

տեղակալ Հր.Բաղալյանն իր հանձնարարության մեջ նշված խնդրին չեն անդրադարձել (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

20. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 16-18-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունների լույսի ներքո Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերում չեն պատճառաբանել, թե Մանվել և Լիդա Հովհաննիսյանների որ իրավունքները կամ ազատություններն են խախտվել Դատախազի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու որոշմամբ:

20.1. Ավելին, անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի՝ Մ.Հովհաննիսյանի իրավունքների և ազատությունների խախտման մասին եզրահանգման հիմքում դրված և նախորդ կետի առաջին նախադասությամբ մատնանշված հիմնավորմանը՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ անձը, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարճվել է արարքում հանցակազմի բացակայության հիմքով, ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մաս) և օգտվում այդ կարգավիճակից բխող բոլոր իրավունքներից (*մանրամասն տե՛ս նաև Արմեն Բաղդասարյանի գործով Վճռարեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0009/11/13 որոշման 16-րդ կետը*): Ընդ որում, արդարացնող այս հիմքով քրեական գործով վարույթը կարճելը փաստում է անձի անմեղությունը և հանգեցնում վերջինիս հնարավոր խախտված կամ որևէ կերպ սահմանափակված իրավունքների վերականգնմանն անկախ այն հանգամանքից, թե անձի արարքում հանցակազմի կոնկրետ որ տարրն է բացակայում, կամ թե բացակայում են այդ տարրերից մեկը, թե մի քանիսը: Այլ կերպ՝ համապատասխան դեպքերում անձը ipso facto (փաստի ուժով) ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ:

Վերոգրյալի հիման վրա Վճռարեկ դատարանն իրավաչափ չի համարում Առաջին ատյանի դատարանի վերը նշված դիրքորոշումը և իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի փաստարկին առ այն, որ Առաջին ատյանի դատարանի կողմից չի պատճառաբանվել, թե արարքում հանցակազմի բացակայության հիմքով Մ.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց Դատախազի հրաժարվելը ինչպես է խախտել վերջինիս սահմանադրական իրավունքները և օրինական շահերը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

20.2. Անդրադառնալով ստորադաս դատարանների այն դիրքորոշմանը, որ Դատախազն իր՝ 2014 թվականի փետրվարի 14-ի որոշման մեջ պետք է անդրադառնար Հետաքննիչի՝ 2013 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման օրինականությանն ու հիմնավորվածությանը՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ Դատախազի վերոհիշյալ որոշումը կայացվել է Մ.Հովհաննիսյանի կողմից սուտ մատնություն կատարելու, այլ ոչ թե Ս.Հովհաննիսյանի կողմից քաղաքացիական գործով կեղծ տեղեկանք

ներկայացնելու և սուտ ցուցմունք տալու փաստի առթիվ իրականացված քննության շրջանակներում: Իսկ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը որոշակի փաստի առթիվ հարուցված քրեական գործով վարույթը կարճելու և անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելիս մեկ այլ փաստի առթիվ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու կամ այդ որոշումը վերացնելու որևէ օրենսդրական կառուցակարգ չի նախատեսում: Հետևաբար Մ.Հովհաննիսյանի կողմից սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով հսկողություն իրականացնող Դատախազը, ինչպես նաև վերադաս դատախազը իրավասու չէին տվյալ գործի շրջանակներում անդրադառնալ Հետաքննիչի՝ 2013 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման օրինականությանը և հիմնավորվածությանը:

Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ Մանվել և Լիդա Հովհաննիսյանների կողմից բողոքարկվում է Դատախազի՝ 2014 թվականի փետրվարի 14-ի՝ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը հանցակազմի բացակայության հիմքով կարճելու մասին որոշումը, որի առարկայի շրջանակներից դուրս է Սամվել Հովհաննիսյանի կողմից քաղաքացիական գործով կեղծ տեղեկանք ներկայացնելու և սուտ ցուցմունք տալու փաստի առթիվ նախապատրաստված նյութերով վարույթն իրականացնող մարմինների որոշումների, գործողությունների կամ անգործության ստուգումը: Ավելին, դրանց վերաբերյալ բողոքաբերների կողմից բողոք չի ներկայացվել:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Հետաքննիչի որոշումը վերացնելու խնդրի կապակցությամբ եզրահանգումներ անելով (տե՛ս սույն որոշման 8-9-րդ կետը), դուրս են եկել բողոքի շրջանակներից:

21. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն եզրահանգում է, որ Մանվել և Լիդա Հովհաննիսյանների իրավունքների և ազատությունների խախտման առկայության և, ըստ այդմ, վարույթն իրականացնող մարմնին այդ խախտումը վերացնելուն պարտավորեցնելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները չեն պատճառաբանել, թե բողոք ներկայացնող անձանց որ իրավունքներն են խախտվել Դատախազի՝ 2014 թվականի փետրվարի 14-ի քրեական հետապնդում չիրականացնելու և գործի վարույթը կարճելու որոշմամբ, ինչում են դրանք դրսևորվել, դրանով իսկ թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչը նույն օրենսգրքի 398-րդ հոդվածի

իմաստով հանդիսանում է քրեադատավարական օրենքի էական խախտում:

Վերոգրյալ հանգամանքը Վճարելի դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանի դատական ակտը և գործն ուղարկելու Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները և գործի հանգամանքների բազմակողմանի վերլուծության ու գնահատման հիման վրա գա համապատասխան հետևության:

21.1. Հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճարելի դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկերի՝ սույն որոշման 13-րդ կետում բարձրացրած փաստարկը Վճարելի դատարանի կողմից չի կարող քննարկման առարկա դառնալ, քանի որ գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ տվյալ փաստարկը վերաքննիչ բողոքում չի մատնանշվել և վերաքննության կարգով չի քննարկվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Մանվել և Լիդա Հովհաննիսյանների բողոքը բավարարելու մասին Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 5-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 2-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

7.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0043/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ դիմող Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի նոյեմբերի 28-ին ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնում ԼՂՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12200712 քրեական գործը՝ Հ.Մովսիսյանի ինքնասպանության դեպքի առթիվ:

2013 թվականի մարտի 28-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի (այսուհետ նաև՝ ՀԿԳ) վարչությունում թիվ

12200712 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62202513 քրեական գործը՝ Հ.Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց պաշտոնական անփութության ենթադրյալ դեպքի առթիվ: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 12200712 քրեական գործը միացվել է թիվ 62202513 քրեական գործին:

1.1. 2013 թվականի մայիսի 29-ին դիմող Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցն ու Ա.Զալյանը դիմում են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին տրամադրել քրեական գործ հարուցելու մասին որոշումը և դիմող Հ.Պետրոսյանին ճանաչել տուժողի իրավահաջորդ:

2013 թվականի հունիսի 5-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ավագ քննիչ Մ.Բաբայանը կայացրել է Հ.Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մնացած մասով մերժելու մասին որոշում:

2013 թվականի հունիսի 27-ին դիմող Հ.Պետրոսյանը դիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու մասին ավագ քննիչ Մ.Բաբայանի 2013 թվականի հունիսի 5-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ դիմող Հ.Պետրոսյանի դիմումը մերժվել է:

1.2. 2013 թվականի հուլիսի 17-ին դիմող Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցը, Ա.Զալյանը դիմում են ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ խնդրելով դիմող Հ.Պետրոսյանին թիվ 62202513 քրեական գործով ճանաչել տուժողի իրավահաջորդ:

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ.Բաբայանի 2013 թվականի հուլիսի 23-ի գրությամբ հայտնվել է, որ ներկայացված դիմումը չի քննարկվել՝ նկատի ունենալով, որ չեն բերվել նոր փաստարկներ և քրեական դատավարության ընթացքում չի հաստատվել պահանջի բավարարման անհրաժեշտությունը:

1.3. 2013 թվականի օգոստոսի 16-ին դիմող Հ.Պետրոսյանի ներկայացուցիչ Ա.Սաքունցը դիմում է ներկայացրել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ խնդրելով վերացնել պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու մասին ավագ քննիչ Մ.Բաբայանի 2013 թվականի հունիսի 5-ի որոշումը, ինչպես նաև պարտավորեցնել նախաքննության մարմնին Հ.Մովսիսյանին ճանաչել տուժող, իսկ դիմող Հ.Պետրոսյանին՝ տուժողի իրավահաջորդ:

Վերոհիշյալ դիմումին ՀՀ գլխավոր դատախազությունը 2013 թվականի օգոստոսի 22-ին պատասխանել է գրությամբ:

1.4. 2013 թվականի դեկտեմբերի 18-ին դիմող Հ.Պետրոսյանի ներկայացուցիչները միջնորդություն են ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Բաբայանին՝ խնդրելով թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին ճանաչել տուժող, իսկ դիմող Հ.Պետրոսյանին՝ տուժողի իրավահաջորդ:

Քննիչի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի գրության համաձայն՝ դիմող Հ.Պետրոսյանի ներկայացուցիչների 2013 թվականի դեկտեմբերի 18-ի միջնորդությունը չի քննարկվել:

2013 թվականի դեկտեմբերի 28-ին դիմող Հ.Պետրոսյանի ներկայացուցիչները դիմում են ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին՝ խնդրելով իրենց տրամադրել քրեական գործի վարույթը կարճելու մասին 2013 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները, որը Քննիչի 2014 թվականի հունվարի 22-ի գրությամբ մերժվել է:

2. 2014 թվականի փետրվարի 24-ին դիմող Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցն ու Ա.Զալյանը դիմում են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով թիվ 62202513 քրեական գործով դիմող Հ.Պետրոսյանին ճանաչել դատավարության կողմ, ինչպես նաև պարտավորեցնել նախաքննության մարմնին տրամադրել քրեական գործի վարույթը կարճելու մասին 2013 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 19-ի որոշմամբ դիմող Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի ու Ա.Զալյանի բողոքը մերժվել է:

3. Դիմող Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի ու Ա.Զալյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 19-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դիմող Հ.Պետրոսյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանը:

Վճարելի դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ դիմող Հ.Պետրոսյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Քննիչի 2013 թվականի հունիսի 5-ի որոշման համաձայն՝ «Իրեն դատավարության մասնակից՝ րուժողի իրավահաջորդ ճանաչելու Հեղինե

Հարությանի Պետրոսյանի պահանջի լուծումը հետաձգել մինչև որոշում ընդունելու համար էական հանգամանքների պարզումը (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 23):

6. Քննիչի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 18-58կզ-13 գրության համաձայն՝ ««Հայկ Մովսիսյանին տուժող՝ Հեղինե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու պահանջների մասին» վերաբերող վարույթ [Ա.Սաքունցի և Ա.Զալյանի] 2013թ. դեկտեմբերի 18-ի միջնորդությունը ՀՀ հայրուկ քննչական ծառայությունում չի քննարկվել, քանի որ թիվ 62202513 քրեական գործով վարույթն արդեն իսկ 2013թ. դեկտեմբերի 10-ի որոշմամբ կարճվել է» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 76):

7. Քննիչի 2014 թվականի հունվարի 8-ի թիվ 18-59կզ-13 գրության համաձայն՝ «ՀՀ գլխավոր դատախազին ուղղված [Ա.Սաքունցի և Ա.Զալյանի] 18.12.2013թ. դիմումը՝ «պարտավորեցնել նախաքննության մարմնին՝ Հայկ Մովսիսյանին տուժող, Հեղինե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելուն» վերաբերող վարույթ, սրացվել է ՀՀ հայրուկ քննչական ծառայությունում:

Կրկին հայտնում եմ, որ թիվ 62202513 քրեական գործով վարույթն արդեն իսկ 2013թ. դեկտեմբերի 10-ի որոշմամբ կարճվել է, ուստի Ձեր դիմումում նշված հանգամանքները քննարկման չեն ենթարկվել» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 77):

8. Քննիչի 2014 թվականի հունվարի 22-ի գրության համաձայն՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պարճենը ուղարկվում է կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ հայրուկ քննչական ծառայության վարույթում քննված թիվ 62202513 քրեական գործով [դիմող Հ.Պետրոսյանը և նրա ներկայացուցիչները] չեն հանդիսացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով նշված դատավարության մասնակից, ուստի քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման և այդ նյութերի պարճենները չեն կարող տրամադրվել» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 36):

9. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 19-ի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը գրնում է, որ սույն գործի շրջանակներում քննիչի գործողությունները պետք է բողոքարկվեին համապատասխան դատախազին, այնուհետև՝ դատարան, մինչդեռ ՀՀ հայրուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Բարսյանի (...) գրությունները համապատասխան դատախազին չեն բողոքարկվել, ինչի արդյունքում Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի և Ա.Զալյանի կողմից թույլ է

տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգի խախտում» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 47):

10. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 4-ի որոշման համաձայն՝ «Այսպիսով հիմք ընդունելով դատական ակտում շարադրված իրավական վերլուծությունները, համաձայնվելով դատարանի եզրահանգումների հետ, վերլուծելով և գնահատելով նյութերում առկա փաստական տվյալները, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ասյանի դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ չի տրվել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է հիմք հանդիսանալ բողոքը բավարարելու համար, հետևաբար վերաքննիչ բողոքում նշված հիմքերով նյութական և դատավարական օրենքի էական խախտում թույլ չի տրվել, այդ առումով դատարանի որոշումը օրինական է, հիմնավորված ու պարճատարանված, լիովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին, ուստի վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 132):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոքաբերը նշել է, որ սույն քրեական գործով ստորադաս դատարանները որոշում կայացնելիս թույլ են տվել դատավարական իրավունքի էական խախտում, մասնավորապես՝ քրեադատավարական օրենքը հնարավորություն է տալիս նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձին մասնակցելու քրեադատավարական իրավահարաբերություններին, եթե դրանք առնչվում են այդ անձի իրավունքներին և օրինական շահերին, իսկ դիմողին դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու համապատասխան մերժումն առանց վերադաս դատախազին բողոքարկելու՝ բողոքարկել դատարան: Մինչդեռ ստորադաս դատարանները, շրջանցելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, մերժել են բողոքն այն պատճառաբանությամբ, որ դիմումատուն վարույթ իրականացնող մարմինների մերժումները չի բողոքարկել դատախազին:

12. Ըստ բողոքաբերի՝ սույն գործով դիմող Հ.Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ չճանաչելը եղել է նախաքննության մարմնի կամայական և սուբյեկտիվ որոշումը, հետևաբար թիվ 62202513 քրեական գործով Հ.Պետրոսյանը համապատասխանել է տուժողի իրավահաջորդի կարգավիճակին և հետևաբար իրավունք ունի տվյալ վարույթի արդյունքում կայացված որոշումը բողոքարկելու:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 4-ի դատական ակտը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատավարության մասնակից ճանաչելու պահանջի կապակցությամբ վարույթն իրականացնող մարմնի անգործության նկատմամբ դատական վերահսկողության ընթացակարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

15. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորված են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի և Ա.Զալյանի կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգի խախտում այն պատճառաբանությամբ, որ Քննիչի գործողությունները (գրությունները) դատախազին չեն բողոքարկվել:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն. «Դատարանի լիազորություններն են, մասնավորապես՝ (...) օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ

հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է. «Դիմողն իրավունք ունի իրեն դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշման պատճենն սրանսալուց 5 օրվա ընթացքում համապատասխան մերժումը բողոքարկել դատարան կամ, եթե քրեական վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման պատճենը չի սուսցվել բողոք փախու պահից մեկ ամսվա ընթացքում դիմել դատարան՝ իրեն դատավարության մասնակից ճանաչելու մասին պահանջով»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում օրենսդիրը դատարանին լիազորել է քննելու ոչ միայն քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների և գործողությունների, այլև անգործության դեմ բերված բողոքները: Չնայած անգործության և ոչ իրավաչափ գործողության դատական բողոքարկումը հետապնդում է իրավունքների պաշտպանության համանման նպատակ, սակայն «գործողություն» և «անգործություն» իրավական եզրույթները նույնարժեքային մեկնաբանվել չեն կարող այն պայմաններում, երբ օրենսդիրը սահմանել է դրանց բողոքարկման տարբեր ընթացակարգեր: Մասնավորապես վարույթն իրականացնող մարմինների գործողությունների (որոշումների) դատական բողոքարկման համար նախատեսված է դրանք դատախազին բողոքարկելու պարտադիր պահանջ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մաս), ինչպիսին բացակայում է անգործության բողոքարկման՝ ՀՀ քրեական դատավարության 100-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ընթացակարգում:

Այս առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ եթե վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական վերահսկողության իրավական կառուցակարգերի տեսանկյունից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասը և 290-րդ հոդվածի 1-ին մասը հարաբերակցվում են ինչպես, համապատասխանաբար, հատուկ և ընդհանուր նորմեր (*մանրամասն տրեն Աշոտ Հակոբյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԵԿԴ/0064/11/14 որոշման 15-16-րդ կետերը*), ապա անգործության դատական վերահսկողության կառուցակարգերի առումով դրանք որևէ ձևով չեն հարաբերակցվում, քանի որ կարգավորում են իրենց բնույթով տարբեր օբյեկտներ: Հետևաբար ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ նախապես դատախազին բողոքարկելու պահանջը կիրառելի չէ դատավարության մասնակից ճանաչելու պահանջը լուծելու կապակցությամբ վարույթն իրականացնող մարմնի անգործությունը բողոքարկելու իրավահարաբերությունների նկատմամբ:

17. Բարձրացված իրավական հարցին պատասխանելու և օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով վարույթն իրականացնող մարմնի անգործության բովանդակությանը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասի *«Դիմողն իրավունք ունի (...) եթե քրեական վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման պարճենը չի սրացվել բողոք փախու պահից մեկ ամսվա ընթացքում դիմել դատարան՝ իրեն դատավարության մասնակից ճանաչելու մասին պահանջով»* ձևակերպումից հետևում է, որ վարույթն իրականացնող մարմնի անգործության առումով դրա կարգավորման առարկան է դատավարության մասնակից ճանաչելու պահանջի կապակցությամբ համապատասխան որոշում չկայացնելը: Այլ խոսքով՝ քննարկվող հոդվածի իմաստով անգործություն պետք է գնահատել վարույթն իրականացնող մարմնի կողմից դատավարության մասնակից ճանաչելու պահանջը բավարարելու, դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշում չկայացնելը: Ընդ որում պահանջի լուծումը հետաձգելու որոշում կայացնելուց հետո մինչև դատավարության համապատասխան փուլի ավարտը վարույթն իրականացնող մարմնի կողմից այդ պահանջը վերջնական լուծելու (մերժելու կամ բավարարելու) վերաբերյալ որոշում չկայացնելը հավասարազոր է դրա կապակցությամբ անգործություն դրսևորելուն: Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը հիմնավորվում նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ. *«Միջնորդությունները և պահանջները պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե սույն օրենսգրքի դրույթներով այլ կարգ սահմանված չէ: Միջնորդության լուծումը կարող է հետաձգվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից մինչև միջնորդության վերաբերյալ որոշում ընդունելու համար էական հանգամանքների պարզումը»*, իսկ «անգործություն» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում պետք է ընկալվի որպես վարույթն իրականացնող համապատասխան մարմնի՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորությունների (որոշումների ընդունում, իրենց լիազորություններից բխող գործունեության իրականացում) չկատարում (*«անգործություն» եզրույթի նման մեկնաբանումը*

բխում է ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՄԳՌ-844 որոշման 7-րդ կետից): Այսինքն՝ միջնորդությունը կամ պահանջը լուծելու վերաբերյալ որոշում կայացնելը վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն է, որի չկատարումը պետք է գնահատվի որպես անգործություն:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2013 թվականի մայիսի 29-ին դիմող Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցը, Ա.Զալյանը դիմում են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին տրամադրել քրեական գործ հարուցելու մասին որոշումը և դիմող Հ.Պետրոսյանին ճանաչել որպես տուժողի իրավահաջորդ: 2013 թվականի հունիսի 5-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ավագ քննիչ Մ.Բաբայանը կայացրել է պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու մասին որոշում (տե՛ս սույն որոշման 1.1-րդ կետը):

Քննիչի 2013 թվականի հունիսի 5-ի «Պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու մասին» որոշման դեմ դիմողի ներկայացուցիչների բողոքը դատարանի կողմից մերժվել է, իսկ դատախազության կողմից չի քննարկվել (տե՛ս սույն որոշման 1.1-րդ և 1.3-րդ կետերը): Հ.Պետրոսյանի կողմից հետագայում ներկայացված դատավարության մասնակից ճանաչելու մասին միջնորդությունները վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն քննարկվել (տե՛ս սույն որոշման 1.2-րդ, 1.4-րդ կետերը):

Քննիչի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի և 2014 թվականի հունվարի 8-ի գրությունների համաձայն՝ քրեական գործի վարույթը կարճվել է 2013 թվականի դեկտեմբերի 10-ին (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը): Իսկ գործի նյութերում առկա չէ վարույթ իրականացնող մարմնի որոշում՝ դատավարության մասնակից ճանաչելու դիմողի պահանջը լուծելու մասին:

Դիմող Հ.Պետրոսյանի ներկայացուցիչները դիմում են ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին՝ խնդրելով իրենց տրամադրել քրեական գործի վարույթը կարճելու մասին 2013 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները, որը Քննիչի 2014 թվականի հունվարի 22-ի գրությամբ մերժվել է (տե՛ս սույն որոշման 1.4-րդ և 8-րդ կետերը):

Այնուհետև Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցը, Ա.Զալյանը դիմում են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով թիվ 62202513 քրեական գործով դիմող Հ.Պետրոսյանին ճանաչել դատավարության կողմ, ինչպես նաև պարտավորեցնել նախաքննության մարմնին տրամադրել քրեական գործի վարույթը կարճելու մասին 2013 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը բողոքը մերժել է այն պատճառաբանությամբ, որ դատավարության մասնակից ճանաչելու, քրեական գործի

վարույթը կարճելու մասին որոշման պատճենը և նյութերը տրամադրելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունների կապակցությամբ Քննիչի գրությունները նախ պետք է բողոքարկվեն համապատասխան դատախազին, այնուհետև՝ դատարան (տե՛ս սույն որոշման 2-րդ և 9-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի, Ա.Զայյանի վերաքննիչ բողոքը, մերժել է այն՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, հետևաբար Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված (տե՛ս սույն որոշման 3-րդ և 10-րդ կետերը):

19. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-17-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը, հետաձգելով դատավարության մասնակից ճանաչելու պահանջի լուծումը և առանց այդ պահանջին լուծում տալու կարճելով գործի վարույթը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով դրսևորել է անգործություն, որի հետևանքով էլ Հ.Պետրոսյանն իրեն դատավարության մասնակից ճանաչելու պահանջով դիմել է դատարան: Մինչդեռ ստորադաս դատարանների պատճառաբանություններից հետևում է, որ նրանք Հ.Պետրոսյանի՝ իրեն դատավարության մասնակից ճանաչելու պահանջը դիտարկել են որպես քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունների դեմ ներկայացված բողոք և այն քննել են համապատասխան ընթացակարգով:

Ստորադաս դատարանների՝ Քննիչի գործողությունները (համապատասխան գրությունները) դատախազին բողոքարկված չլինելու հիմքով Հ.Պետրոսյանի բողոքը մերժելու պատճառաբանության կապակցությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում մասնավորապես նշել, որ.

ա) քրեական հետապնդում իրականացնող մարմինների գրությունները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով որոշում չեն հանդիսանում և հետևաբար չեն կարող առաջացնել նույն դատավարական հետևանքները, ինչ որոշումները, մասնավորապես չեն կարող հանդիսանալ դատական բողոքարկման առարկա (*Վճռաբեկ դատարանը նմանաբովանդակ դիրքորոշում է ձևավորել Մյասնիկ Ավետիսյանի գործով 2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԵԿԳ/0019/11/09 որոշմամբ (տե՛ս, mutatis mutandis, 15-16-րդ կետերը)*),

բ) վարույթն իրականացնող մարմնի անգործության դատական բողոքարկման իրավական ընթացակարգը չի նախատեսում այն նախապես դատախազին բողոքարկելու պահանջ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ

Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի և Ա.Զալյանի կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգի խախտում այն պատճառաբանությամբ, որ Քննիչի գործողությունները (գրությունները) դատախազին չեն բողոքարկվել, հիմնավորված չեն:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները հանգել են սխալ եզրակացության այն մասին, որ դիմողի ներկայացուցիչները խախտել են դատավարության մասնակից ճանաչելու մասին նախաքննության մարմնի գործողությունների (անգործության) բողոքարկման դատավարական կարգը: Արդյունքում ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերոնշյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ իրավասու չէ անդրադառնալ Հ.Պետրոսյանի՝ տուժողի իրավահաջորդի կարգավիճակին համապատասխանելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին, քանի որ դրանք ըստ էության չեն քննարկվել և լուծվել ստորադաս դատարանների կողմից: Հետևաբար այդ փաստարկները պետք է քննարկման առարկա դառնան գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի, Ա.Զալյանի բողոքը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր

իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 19-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 4-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ/0172/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
պաշտպան	Լ.ՍԱՀԱԿՅԱՆԻ

2015 թվականի փետրվարի 27-ի

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հարություն Սամվելի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ ամբաստանյալ Հ.Սարգսյանի պաշտպան Լ.Սահակյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի ապրիլի 12-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շիրակի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 18110612 քրեական գործը:

2012 թվականի ապրիլի 13-ին Հարություն Սարգսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2012 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ Հ.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ Հ.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2012 թվականի նոյեմբերի 12-ին վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ Հ.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 188-րդ հոդվածի 1-ին մասով:

2012 թվականի նոյեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 12-ի դատավճռով Հ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 188-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նա դատապարտվել է ազատազրկման՝ 14 տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ 1 տարի ժամկետով՝ զրկվելով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից 1 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով, Հ.Սարգսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 15 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով 1 տարի ժամկետով:

3. Պաշտպանների վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի օգոստոսի 4-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 12-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պաշտպան Լ.Սահակյանը:

Վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունվարի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

2015 թվականի փետրվարի 24-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ Ա.Մելքոնյանը և Վ.Էլբակյանը ներկայացրել են վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել վճռաբեկ բողոքը և օրինական ուժի մեջ թողնել ստորադաս դատարանների դատական ակտերը:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի դատավճռով հաստատված է համարվել հետևյալը. «Ամբաստանյալ Հարություն Մամվելի Սարգսյանը համակրել է Գյումրու քաղաքապետ Վարդան Դուկասյանի դուստր Մանյա

Ղուկասյանին և ցանկացել է ամուսնանալ նրա հետ, այդ նպատակով Հարություն Սարգսյանի հայրը՝ Սամվել Սարգսյանը, 2012 թվականի փետրվարի վերջերին հանդիպել է Վարդան Ղուկասյանի հետ, սակայն վերջինս Սամվել Սարգսյանին դուրս է արել իր աշխատասենյակից՝ չցանկանալով նույնիսկ քննարկել այդ թեման: Ամեն դեպքում իր նպատակին հասնելու համար Սամվել Սարգսյանը նույն հարցը քննարկելու համար հանդիպել է Վարդան Ղուկասյանի ավագ եղբորը՝ Գևորգ Ղուկասյանին, ումից էլ տեղեկացել է, որ Մանյա Ղուկասյանը պատրաստվում է ամուսնանալ այլ անձի հետ: Չսայած դրան՝ Սամվել Սարգսյանը փորձել է Ղուկասյաններին հետ պահել Մանյա Ղուկասյանին այլ անձի հետ ամուսնացնելու մտադրությունից՝ որդուն ներկայացնելով որպես առավել գերադասելի թեկնածու, խնդրել է հնարավորություն տալ որդուն ծանոթացնելու Ղուկասյանների ընտանիքի հետ: Գևորգ Ղուկասյանը նույնպես մերժել է և հայրնել, որ ամեն ինչ արդեն որոշված է, շուրտով լինելու է Մանյա Ղուկասյանի նշանադրությունը: Մերժված լինելու մասին Սամվել Սարգսյանը հայրնել է ընտանիքի անդամներին, այդ թվում նաև Հարություն Սարգսյանին, իսկ ավելի ուշ տեղեկացել են, որ 2012 թվականի ապրիլի 12-ին Գյումրի քաղաքում պեղք է տեղի ունենա Մանյա Ղուկասյանի և Կարեն Եսայանի նշանադրության արարողությունը: Հարություն Սարգսյանը խանդի հողի, ինչպես նաև իր և իր ընտանիքի վիրավորված ինքնասիրությունն ու պատիվը վերականգնելու դրդումով որոշել է վրեժխնդիր լինել՝ Կարեն Եսայանին սպանելու և նշանադրության արարողությունը խափանելու միջոցով: Հանցավոր մտադրությունն իրականացնելու, հանցագործության կատարման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով Հարություն Սարգսյանը 2012 թվականի մարտի վերջերից պլանավորել, ծրագրել է Կարեն Եսայանի սպանությունը, ինչի համար մի քանի օր շարունակ գաղտնի հետևել է նրան: Չբացահայտվելու նպատակով իր արձագանքային, «Մերսեդես» մակնիշի «Ե» դասի, մգեցված ապակիներով, 32 ՍՍ 542 համարանիշի ավտոմեքենայի վրա տեղադրել է ապօրինի ճանապարհով առանց մարսային կետում հաշվառելու Հայաստանի Հանրապետություն ներկրած L BM 5255 հաշվառման համարանիշը: Նույն ժամանակահատվածում հետևել է նաև Մանյա Ղուկասյանին, գրեթե ամեն օր ավտոմեքենայով կանգնել, վերջինիս աշխատավայրից տուն և տնից աշխատավայր գնալու ճանապարհի տարբեր հատվածներում: 2012 թվականի ապրիլի 11-ին՝ ժամը 20:16-ին, Կարեն Եսայանն ու նրա ընկեր Ռոման Ղարաբեշիշյանն իրենց «Մերսեդես» մակնիշի «Ե» դասի, արձագանքային, 16 OL 850 համարանիշի և սև գույնի «Լեքսուս 470» մակնիշի ավտոմեքենաներով գնացել են Գյումրու Շիրակացի 109 հասցեում գրնվող ավտովաճման կետ՝ ավտոմեքենաները լվանալու նպատակով: Այդ ժամանակ ևս Հարություն Սարգսյանը շարունակել է գաղտնի հետևել Կարեն Եսայանին: Նա, իր վերը նշված ավտոմեքենայով ավտովաճման տարածք

մերնող մուրքից մոր 10 մեքր առաջ գնալով, այն կայանել է Շիրակացի փողոցի վրա, իջել է ավտոմեքենայից և դեմքով կանգնելով դեպի ավտոլվացման կեռի տարածքը՝ հեղեղ նրանց: «Լեքսուս 470» մակնիշի ավտոմեքենան լվանալու նպատակով թողնելով ավտոլվացման կեռում Ռոման Դարաքեշիշյանը և Կարեն Եսայանը վերջինիս «Մերսեդես» մակնիշի, 16 ՕԼ 850 համարանիշի ավտոմեքենայով հեռացել են ավտոլվացման կեռի տարածքից՝ վարաավիրանոց գնալու նպատակով: Հարություն Սարգսյանը, շարունակելով հեռապնդումը, գնացել է նրանց հեղեղից: Ժամը 20:55-ին, երբ Ռոման Դարաքեշիշյանը և Կարեն Եսայանը վերադարձել են ավտոլվացման կեռ՝ Կարեն Եսայանի ավտոմեքենան լվանալու նպատակով, նրանց հեռապնդող Հարություն Սարգսյանն իր ավտոմեքենան կայանել է Շիրակացի փողոցի վրա՝ ավտոլվացման կեռի դիմացի մայթին՝ ավտոմեքենայի դիմային մասն ուղղելով դեպի փողոցի կողմը, ապա իջնելով ավտոմեքենայից՝ դանդաղ քայլելով մերել է ավտոլվացման կեռի տարածք և սպասել մինչև Կարեն Եսայանն իր ավտոմեքենայով հեռանա ավտոլվացման կեռից ու ինքը շարունակի հեռապնդումը: Տեղացած անձրևի պատճառով Կարեն Եսայանը որոշել է գիշերն ավտոմեքենան թողնել ավտոլվացման կեռում և ընկերների հեղ նրանց ավտոմեքենայով հեռանալ ավտոլվացման կեռից: Անակնկալի գալով Հարություն Սարգսյանն անմիջապես մերել է ավտոլվացման կեռ և տեսնելով, որ Կարեն Եսայանի ավտոմեքենան մնալու է այդտեղ, վազքով գնացել է նրանց հեղեղից, նսրել իր ավտոմեքենան և շարժվել Կարեն Եսայանի գնացած ուղղությամբ: Մեկ անգամ ևս համոզվելու համար, որ Կարեն Եսայանի ավտոմեքենան գիշերը մնալու է ավտոլվացման կեռում և պարզելու, թե առավորյան ավտոլվացման կեռը ժամը քանիսին է բացվելու, Հարություն Սարգսյանը ժամը 22:13-ին իր «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով վերադարձել է ավտոլվացման կեռի տարածք: Կեռի տնօրեն Էդուարդ Խաչատրյանից տեղեկանալով, որ հաջորդ օրը լվացման կեռի աշխատանքն սկսվելու է առավորյան ժամը 09:00-ին, հեռացել է: Հաստատապես իմանալով, որ ավտոլվացման կեռի աշխատանքներն սկսվում են ժամը 09:00-ին, սպանությունն իրագործելու և չնախարեալած հանգամանքների պատճառով Կարեն Եսայանին տեսադաշտից չկորցնելու համար Հարություն Սարգսյանը 2012 թվականի ապրիլի 12-ին իր արժաթագույն «Մերսեդես» մակնիշի «Ե» դասի, Լ BM 5255 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով ավտոլվացման կեռի տարածք է ժամանել աշխատանքներն սկսվելուց մեկ ժամ առաջ՝ ժամը 07:59-ին: Ավտոլվացման կեռի պատրուհանից ներս նայելով և համոզվելով, որ Կարեն Եսայանի ավտոմեքենան տեղում է, Հարություն Սարգսյանն իր ավտոմեքենան կայանել է ավտոլվացման կեռի դարպասի դիմացի հարվածում՝ ավտոմեքենայի առջևի մասով դեպի լվացման կեռը՝ դրանով իսկ տեսադաշտում պահելով լվացման կեռի մուրքն ու ելքը՝ սպահովելով հեռապնդումն անմիջապես սկսելու

հնարավորությունը: Շուրջ երկու ժամ մինչև Կարեն Եսայանի գալը, մնացել է նույն դիրքում առանց տեղաշարժվելու և ավրումեքենայից իջնելու: Ընդ որում անշարժ և աննկատ դիրքում է մնացել նաև այն ժամանակ, երբ ժամը 09:00-ից սկսվել է ավրովացման կերի աշխարանքը:

Ժամը 10:04-ին Կարեն Եսայանը միայնակ գալով ավրովացման կեր, իր ավրումեքենայով դուրս է եկել կերից և ուղևորվել դեպի Շիրակացու փողոց: Հարություն Սարգսյանն իր ավրումեքենայով անմիջապես շարժվել և հետապնդել է նրան: Ալեք Մանուկյան փողոցի 21 հասցեում գործող բենզալցակայանի հանդիպակաց հարվածում ազդանշանով կանգնեցրել է իր առջևից ընթացող Կարեն Եսայանին, ապա, իջնելով ավրումեքենայից, նսրել է նրա ավրումեքենան վարորդի կողքի նստավայրին: Շուրջ մեկ րոպե զրուցելուց հետո Հարություն Սարգսյանը և Կարեն Եսայանը վերջինիս ավրումեքենայով հեռացել են այդտեղից և ժամը 10:30-ի սահմաններում հասել Գյումրի քաղաքի «Մայր Հայաստան» հուշահամալիրին հարակից ամալի տարածք, որտեղ էլ Հարություն Սարգսյանը, իջնելով ավրումեքենայից, իր մոտ գրնվող 16 [մմ] տրամաչափի ողորկափող հրազենից գլխի շրջանում արձակած մեկ կրակոցով ապօրինաբար, դիրավորությամբ, կյանքից զրկել՝ սպանել է Կարեն Եսայանին, ինչից հետո վերադարձել է Ալ. Մանուկյան փողոց, նսրել նույն վայրում թողած իր ավրումեքենան և ուղևորվել տուն:

Կատարված հանցագործության հետքերը թաքցնելու և իր համար այլուրեքություն ստեղծելու նպատակով Հարություն Սարգսյանը փոխել է ավրումեքենայի վրա տեղադրված արտասահմանյան համարանիշները և դրանք դրել վարորդի նստավայրի ուղևորակի գորգի տակ, ավրումեքենայի վրա տեղադրել իրական հաշվառման համարանիշը՝ 32 ՍՍ 542: Բացի այդ՝ միաժամանակ փոխել է սպանության պահին հագին եղած հագուստները, որոնցից «Պոլո» գրատմամբ սփորթը գցել է տան լոգասենյակում լվացման ենթակա հագուստների մեջ, «STESSO» պիտակով անդրավարտիքը դրել է տան բակում կայանված «Մերսեդես» մակնիշի, 13 ՍՍ 464 համարանիշի, սև գույնի, «Կատաֆալկա» տեսակի թափքով ավրումեքենայի վարորդի կողքի նստավայրի տակ, ապա իր արծաթագույն, «Մերսեդես» մակնիշի «Ե» դասի, 32 ՍՍ 542 համարանիշի ավրումեքենայով ուղևորվել է դեպի Բավրա մաքսակետ և ժամը 11:20-ին հարելով ՀՀ սահմանը՝ մեկնել է Վրաստանի Հանրապետություն, որտեղից էլ երեք ժամ անց կրկին վերադարձել է Գյումրի:

Հարկանշական է, որ ի հակառակ իր գործերի մասին ծնողներին հաշվելու չլինելու սովորությանը՝ սպանությունից հետո Վրաստան մեկնելու փաստն ի ցույց դնելու նպատակով գնալու և վերադառնալու ճանապարհին Հարություն Սարգսյանը պարբերաբար հեռախոսային խոսակցություններ է ունեցել հարազատների հետ՝ շեշտելով, որ գործով մեկնում է Վրաստան:

Բացի այդ, Հարություն Սարգսյանը 2011 թվականի ընթացքում առանց պետական գրանցման իրականացրել է ապօրինի ձեռնարկարհրություն, այն է՝ 2010 թվականի դեկտեմբերի 17-ին Հայաստանի Պապոյանի անվանը Հայաստանի Հարապետություն է ներմուծել «Մերսեդես Բենց Ե 200» մակնիշի, 1993 թվականի արտադրության ավտոմեքենա՝ 1.191.218 ՀՀ դրամ մաքսային արժեքով, որը 2011 թվականի մայիս ամսին 3.075.000 ՀՀ դրամին համարժեք 8.200 ԱՄՆ դոլարով իրացրել է Ալեքսան Մկրտչյանին, 2011թ մայիսի 24-ին կրկին Հայաստանի Պապոյանի անվանը Հայաստանի Հանրապետություն է ներմուծել «Մերսեդես Բենց Ե 230» մակնիշի, 1997 թվականի արտադրության ավտոմեքենա՝ 1.873.812 ՀՀ դրամ մաքսային արժեքով, որը 2011 թվականի հունիս ամսին 4.995.000 ՀՀ դրամին համարժեք 13.500 ԱՄՆ դոլարով իրացրել է Արմեն Խաչատրյանին, 2011 թվականի հունիսի 21-ին Արփինե Նիկոլյանի անվանը Հայաստանի Հանրապետություն է ներմուծել «Մերսեդես Բենց Զ 180» մակնիշի, 1997 թվականի արտադրության ավտոմեքենա՝ 1.832.558 ՀՀ դրամ մաքսային արժեքով, որը 2011 թվականի օգոստոս ամսին 2.555.000 ՀՀ դրամին համարժեք 7000 ԱՄՆ դոլարով իրացրել է Ավետիք Գինեցյանին:

Նշված ապօրինի ձեռնարկարհրական գործունեության արդյունքում սրացված համախառն եկամուտը հարկային հաշվառումից դուրս է մնացել, ինչի հետևանքով պետությանը պարճատվել է զգալի՝ 768.194 ՀՀ դրամի վնաս, որից եկամտահարկ՝ 471.904 ՀՀ դրամ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճար՝ 296.290 ՀՀ դրամ:

(...) [Ն]ախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցները համադրելով և գնահատելով դատարանը հանգեց հետևյալ եզրակացության.

Այն, որ ամբաստանյալ Հարություն Սամվելի Սարգսյանը վրեժխնդիր լինելու նպատակով հետևել է րուժող Կարեն Եսայանին, հիմնավորվել է Գյումրի Շիրակացի 109 հասցեի ավտովագման և ավտովերանորոգման կետերի աշխատակիցների ցուցմունքներով և 2012թ. ապրիլի 11-ի և 12-ի նույն կետից առգրավված DVR տեսաերիզներով:

Այն, որ ամբաստանյալ Հարություն Սամվելի Սարգսյանի քայլվածքը տարբերվում է ուրիշների քայլվածքից, որը նաև արտացոլված է եղել տեսաերիզում, հիմնավորվել է վկա Օհանյան Մախատյանի ցուցմունքով և ՀՀ ՊՆ թիվ 378-06 հրամանի 42ր կետով, ըստ որի քայլքի զգալի խանգարում ունենալու պարճատով Հարություն Սարգսյանը ճանաչվել է ոչ պիտանի զինճատայությանը:

Այն, որ ամբաստանյալ Հարություն Սամվելի Սարգսյանն իր արճաթագույն ավտոմեքենայով հետևել է Կարեն Եսայանին, հիմնավորվել է DVR տեսաերիզներով և ականատես վկաներով:

Այն, որ ամբաստանյալ Հարություն Սարգսյանն Ալ.Սանուկյան փողոցում ազդանշանի միջոցով կանգնեցրել է Կարեն Եսայանի ավտոմեքենան

և իջել է իր ավտոմեքենայից ու նստել Կարեն Եսայանի ավտոմեքենան և մեկ րոպեից շարժվել են, հիմնավորվել է տեսաերիզներով:

Այն, որ ամբաստանյալ Հարություն Սարգսյանի ավտոմեքենան մնացել է կանգնած Ալ.Մանուկյան փողոցում, իսկ իրենք հեռացել են Կարեն Եսայանի ավտոմեքենայով և 24 րոպե անց փաքսի ավտոմեքենայով եկել է ամբաստանյալ Հարություն Սարգսյանը, նստել է իր ավտոմեքենան, շրջանցել է իր ավտոմեքենայի առջևի մասում կանգնած փաքսի ավտոմեքենան և թեքվել աջ, մտել է իրենց փան կողմը՝ Զիվանու փողոց, հիմնավորվել է տեսաերիզով, ինչպես նաև ականսարես վկաներով:

Այն, որ ամբաստանյալ Հարություն Սարգսյանը եղել է Կարեն Եսայանի ավտոմեքենայի մեջ և եղել է դեպքի վայրում հիմնավորվել է նաև դատաբանական փորձաքննության թիվ 121308 եզրակացությամբ:

Այն, որ ամբաստանյալ Հարություն Սարգսյանը, լինելով դեպքի վայրում, ողորկափող հրագնի մեկ գնդակով սպանել է Կարեն Եսայանին, հիմնավորվել է դատաձգաբանական փորձաքննության թիվ 739 եզրակացությամբ, ինչպես նաև խուզարկությամբ հայրնաբերված Հարություն Սարգսյանի շորերի՝ սվիրի և անդրավարիքի վրա հայրնաբերված կրակոցի արգասիքներով, որը հիմնավորվել է համապատասխան փորձագիտական եզրակացություններով: Այդ հագուստները, որ դեպքի օրը եղել է Հարություն Սարգսյանի հագին և պարկանում է նրան, հիմնավորվել է դատազենետիկական փորձաքննության թիվ 49 եզրակացությունով: Դեպքից հետո նա փոխել է իր ավտոմեքենայի վրա տեղադրված արտասահմանյան համարանիշները և շրապ նույն ավտոմեքենայով շարժվել է դեպի Աշոցք: Նշված հանգամանքը հիմնավորվել է վկաների ցուցմունքներով, ինչպես նաև հեռախոսագանգերը սպասարկող բջջային օպերատորի ալեհավաքներով, որ նա տեղեկություն սրանալու համար պարբերաբար զանգել է հարազարներին՝ ասելով, որ ինքը գնում է Վրաստան:

Այն, որ նա ցանկացել է ամուսնանալ Մանյա Ղուկասյանի հետ և մի քանի անգամ նրա հայրը՝ Սամվել Սարգսյանը, Վարդան և Գևորգ Ղուկասյանների կողմից մերժում սրանալուց հետո դարձյալ դիմել է նույն հարցով և Հարությունը չի հասել իր նպատակին, իր մեջ վիրավորանք զգալով և նշանադրությունը խափանելու նպատակով, պլանավորել և իրականացրել է Կարեն Եսայանի սպանությունը: Նշված հանգամանքը հիմնավորվել է հարցաքննված վկաներով:

(...) Դատարանը, համադրելով և գնահատելով առկա ապացույցների վերաբերելիությունը ու թույլատրելիությունը, գրնում է, որ ամբաստանյալ Հարություն Սամվելի Սարգսյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված է, այն համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի և 188 հոդվածի 1-ին մասի հատկանիշներին, այն, որ նա խանդի հողի վրա, վրեժխնդիր լինելու նպատակով պլանավորել է սպանել Կարեն Եսայանին: Իր մոտ պահվող 16 [մմ] փրամաչափի ողորկափող

հրազենից՝ գլխի աջ քունքի հարվածին արձակած մեկ կրակոցով դիրսավորյալ կյանքից զրկել՝ սպանել է Կարեն Եսայանին (...» (տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթ 86-100):

6. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) Առաջին արյանի դատարանը, պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-127-րդ հոդվածների դրույթները, դատավճռում շարադրված ապացույցները ենթարկելով բազմակողմանի և օբյեկտիվ սրուգման՝ հանգել է ճիշտ հետևության, որ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ բավարար են ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը գնահատելու և այն հիմնավորված համարելու համար: (...)

Անդրադառնալով վերաքննիչ բողոքի պատճառարանություններին այն մասին, որ վկա Մանյա Ղուկասյանի նախաքննական ցուցմունքը որպես ապացույց անթույլատրելի է, քանի որ պաշտպանության կողմն էլ հնարավորություն չի ունեցել վկային հարցաքննել, վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին արյանի դատարանը, հրապարակելով Մանյա Ղուկասյանի նախաքննական ցուցմունքը, չի խախտել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերը, քանի որ քրեական գործի նյութերում առկա ՀՀ «Ճեռմակ հիվանդանոց» ՍՊԸ-ի 19.06.2013թ. գրության համաձայն՝ Մանյա Ղուկասյանը, առողջական վիճակից ելնելով, չի կարող ներկայանալ դատական նիստին, ինչպես նաև Գյումրու քաղաքապետարանի 23.07.2013թ. տեղեկանքի համաձայն՝ Մանյա Ղուկասյանը բացակայում է քաղաքից, ուստի նրան դատական նիստին ապահովելու հնարավորություն չի ունեցել:

(...)

Ինչ վերաբերում է վկա Վարդան Ղուկասյանի նախաքննական ցուցմունքները որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը հասարակելու մասին վերաքննիչ բողոքի պատճառարանությանը, ապա վերաքննիչ դատարանը գրնում է, որ նշված ապացույցը թույլատրելի է քրեադատավարական օրենքի նորմերի պահպանմամբ ձեռք բերված:

(...)

Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեադատավարական օրենսդրության խնդիրների, ապացույցների ուժի, ապացույցների սրուգումը, գնահատումը կանոնակարգող ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջների համարեքսպում քննության առնելով քրեական գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ, հանգում է համոզման, որ ապացուցված է ամբաստանյալ Հարություն Սարգսյանին առաջադրված մեղադրանքը և կարարած հանցավոր արարքների համար ամբաստանյալը ենթակա է քրեական պարասխանարվության ու պարծի:

Այս առումով պաշտպանության կողմի պարճատարանությունները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ սույն գործի շրջանակներում դատական ակտերը բեկանելու և քրեական գործի վարույթը կարճելու համար (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթ 272-292):

7. «Ճերմակ հիվանդանոց» ՍՊԸ-ի 2013 թվականի հունիսի 19-ի N 91, N 92 գրության համաձայն. «(...) Մանյա Վարդանի Ղուկասյանը ներկա պահին ելնելով առողջական վիճակից դատական նիստի [չի] կարող ներկայանալ, իսկ որքան ժամանակ է պահանջվում ապաքինման համար, ցույց կտա բուժման ընթացքը» (տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթ 18):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Պաշտպան Լ.Սահակյանը փաստարկել է, որ սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք կայացված դատական ակտերը բեկանելու և իր պաշտպանյալ Հ.Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք են: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները կայացրել են չպատճառաբանված դատական ակտեր՝ չպահպանելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և նույն հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի, 104-րդ հոդվածի 3-րդ մասի, 115-րդ հոդվածի 3-րդ մասի, 117-րդ հոդվածի 1-ին մասի, 358-րդ հոդվածի պահանջները և չկիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի դրույթները:

Մինևույն ժամանակ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարաններն անտեսել են Վճարելի դատարանի թիվ ԵԿԴ/0225/01/11, թիվ ԵԱԲԴ/0189/01/12, թիվ ԵԿԴ/0058/11/09 և թիվ ՍԴ3/0045/01/13, թիվ ԵԲԸԴ/0297/01/08 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ համապատասխանաբար պաշտպանական կողմի ներկայացրած միջնորդություններն անհիմն մերժելու, հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման, դատական ակտի պատճառաբանված լինելու և քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների վերաբերյալ:

9. Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոք բերած անձը նշել է, որ վկաներ Մ.Ղուկասյանի, Վ.Ղուկասյանի, Ս.Սարգսյանի, Մ.Սարգսյանի, Ա.Նիկոլյանի, Ս.Նիկոլյանի, Գ.Պապոյանի, Օ.Սախաթյանի, Լ.Ռուբենյանի, Ռ.Կարապետյանի ցուցմունքները համապատասխան կոնվենցիոն և քրեադատավարական դրույթների ուժով չէին կարող օգտագործվել

որպես թույլատրելի ապացույցներ: Մասնավորապես, վկաներ Ս.Սարգսյանի, Մ.Սարգսյանի, Ա.Նիկոլյանի, Ս.Նիկոլյանի և Գ.Պապոյանի ցուցմունքները ձեռք են բերվել նրանց՝ Գյումրու բաժնում ապօրինի պահելու և իրավունքները սահմանափակելու արդյունքում, իսկ Մ.Ղուկասյանի, Վ.Ղուկասյանի ցուցմունքների կապակցությամբ չի ապահովվել ամբաստանյալի՝ հակընդդեմ հարցում իրականացնելու (կոնֆրոնտացիայի) իրավունքը:

Բացի այդ, պաշտպան Լ.Սահակյանը, հիմք ընդունելով Վճռարեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 և թիվ ՀՅԲԴԴ2/0153/01/08 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, կարծիք է հայտնել, որ վկայի կարգավիճակում Հ.Սարգսյանի հարցաքննության արձանագրությունը ևս անթույլատրելի ապացույց է:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանում պաշտպանական կողմին իր վկաներին հրավիրելու և հարցաքննելու, ինչպես նաև ամբաստանյալ Հ.Սարգսյանին արդարացնող ապացույցներ ներկայացնելու հնարավորություն չի տրվել, որպիսի խախտումներին Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել: Միննույն ժամանակ բողոքաբերը վկայակոչել է Հ.Սարգսյանի մեղադրանքի հիմքում դրված մի շարք ապացույցներ և եկել այն եզրահանգման, որ դրանք հիմնականում ոչ թե հաստատում, այլ հերքում են ամբաստանյալի մասնակցությունը կատարված հանցագործությանը:

10. Բացի այդ, բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանը չի բավարարել պաշտպանության կողմի միջնորդությունն ինքնաբացարկ հայտնելու մասին, որով ամբաստանյալ Հ.Սարգսյանին գրկել է անկախ և անաչառ դատարանի կողմից արդարացի դատաքննության իրավունքից:

Բողոք բերած անձի կարծիքով՝ ստորադաս դատարաններն առանց պատշաճ հիմնավորումների մերժել են պաշտպանության կողմի գրեթե բոլոր միջնորդությունները, ամբաստանյալի նկատմամբ նշանակել են խիստ պատիժ՝ այդպիսով և որոշ այլ գործողություններով ողջամիտ կասկած հարուցելով իրենց անկողմնակալության վերաբերյալ:

11. Վերոգրյալի հետ մեկտեղ պաշտպան Լ.Սահակյանը վերլուծել է անձին վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու քրեաիրավական դրույթները, համադրել դրանք գործի փաստերի հետ և գտել, որ անցել են ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալ Հ.Սարգսյանին մեղսագրվող արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:

12. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշումը և կարճել քրեական գործի վարույթը կամ բեկանել

հիշյալ դատական ակտը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալ Հ.Սարգսյանին քրեական պատասխանատվության ենթարկելու իրավաչափությունը.

13. Վճարելի դատարանը նպատակահարմար է համարում նախևառաջ անդրադառնալ բողոքաբերի բարձրացրած հետևյալ իրավական հարցին. ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով (ապօրինի ձեռնարկատիրություն) ամբաստանյալ Հ.Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդումը սույն գործով ենթակա է արդյոք դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առանց պերական գրանցման, հաշվառման (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) կամ առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի) լիցենզավորման ենթակա կամ օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը, որը զուգորդվել է անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանը զգալի վնաս պատճառելով պարժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապարիկից հազարապարիկի չափով, կամ կալանքով մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով մեկ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկությանը կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պարիժ (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...):

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...)

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից:

(...):

Վերոնշյալ քրեաիրավական նորմերի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքը դիտավորյալ հանցագործություն է, որի համար որպես հիմնական պատժատեսակներ նախատեսված են մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկում, ինչպես նաև տուգանք կամ կալանք, ուստի այն ոչ մեծ ծանրության հանցագործություն է: Հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է երկու տարի:

ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նորմի վերլուծությունից հետևում է, որ դրանով նախատեսված հանցակազմը նյութական է. այդ հանցագործությունը համարվում է ավարտված, երբ առաջանում են հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված հանրորեն վտանգավոր հետևանքները: Մասնավորապես, ապօրինի ձեռնարկատիրությունը համարվում է ավարտված, երբ զգալի վնաս է պատճառվում անձանց, կազմակերպություններին կամ պետությանը:

Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցագործությունն ավարտված համարելու պահից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Միևնույն ժամանակ օրենքով նախատեսված են վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման դեպքերը: Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն առ այն, որ «(...) նոր կատարված հանցագործությունն ընդհատվում է նախկին հանցագործության վաղեմության ժամկետի ընթացքը հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

1. նախկին հանցագործությունն ավարտվել է և օրենքով դրա համար սահմանված վաղեմության ժամկետը դեռևս չի անցել,

2. նոր կատարվածը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն է:

Վաղեմության ժամկետի ընդհատվելու դեպքում նախորդ հանցանքի համար ընթացող ժամկետը չեղյալ է համարվում, և հաշվարկը վերսկսվում է նոր հանցագործության ավարտման պահից: Այլ կերպ ասած՝ նոր հանցանքի կատարմամբ նախկին հանցագործության համար նախատեսված վաղեմության ժամկետը չի վերանում, իսկ ինչպես նոր հանցանքի,

այնպես էլ նախկին հանցանքի համար օրենքով սահմանված վաղեմության ժամկետները սկսվում են հաշվարկվել նոր հանցանքի ավարտման պահից՝ **յուրաքանչյուր հանցագործության համար ինքնուրույն:**

(...) Եթե անձը միաժամանակ կատարում է երկու կամ ավելի հանցագործություն, դրանցից յուրաքանչյուրի համար վաղեմության ժամկետը պետք է հաշվարկվի առանձին: Հետևաբար, հանցագործություններից մեկի համար վաղեմության ժամկետի ավարտի դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից այդ հանցագործության համար, սակայն մյուսների համար, որոնց վաղեմության ժամկետները չեն անցել, անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ընդհանուր կարգով» (տես Սիրաժ Ղամբարյանի և այլոց գործով Վճարելի դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշման 21-րդ կետը):

14.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից երևում է, որ քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Մինչույն ժամանակ քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի մանրամասն վերլուծությունը *mutatis mutandis* տես Անահիտ Հայկի Սաղաթեյանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը, Սիրաժ Ղամբարյանի և այլոց գործով Վճարելի դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշումը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Հ.Սարգսյանը 2010-2011 թվականների ընթացքում (մինչև 2011

թվականի օգոստոս ամիսը) տարբեր անձանց անուններով ավտոմեքենաներ է ներմուծել ՀՀ տարածք, դրանք իրացրել տարբեր անձանց, որի արդյունքում ստացված համախառն եկամուտը հարկային հաշվառումից դուրս է մնացել, այսինքն՝ առանց պետական գրանցման իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն, որի հետևանքով պետությանը պատճառվել է զգալի վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստերի համաձայն՝ Հ.Սարգսյանն իրեն մեղսագրված ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարումից հետո՝ 2012 թվականի ապրիլի 12-ին, կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը), որն առանձնապես ծանր հանցագործություն է (ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 5-րդ մաս):

Առաջին ատյանի դատարանը դատավճիռ է կայացրել 2014 թվականի մարտի 12-ին, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան (տե՛ս սույն որոշման 2-3-րդ կետերը), իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել 2014 թվականի օգոստոսի 4-ին (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 14-14.1-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

ա) ամբաստանյալ Հ.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքն ավարտվել է 2011 թվականի օգոստոսին: Այնուհետև՝ 2012 թվականի ապրիլի 12-ին՝ նախորդ հանցագործությունն ավարտվելու պահից երկու տարի չանցած, Հ.Սարգսյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առանձնապես ծանր նոր հանցանք: Այսինքն՝ նախկին հանցագործության (ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված) վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվել է նոր հանցագործության կատարմամբ: Հետևաբար նախորդ հանցագործության վաղեմության ժամկետի ընթացքի հաշվարկը սկսվել է նոր հանցագործության ավարտման պահից՝ 2012 թվականի ապրիլի 12-ից,

բ) ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված հանցագործություն կատարելու մեջ Հ.Սարգսյանի մեղքը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է 2014 թվականի մարտի 12-ին, որը սակայն օրինական ուժի մեջ չի մտել վերաքննիչ բողոքարկման արդյունքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է 2014 թվականի օգոստոսի 4-ին:

Վերագրյալից հետևում է, որ Հ.Սարգսյանին մեղսագրված ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության

համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն ավարտվել է 2014 թվականի ապրիլի 12-ին, այսինքն՝ այն ժամանակ, երբ գործը գտնվել է Վերաքննիչ դատարանում, և դրա կապակցությամբ որոշում կայացված չի եղել: Այս առումով ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալ Հ.Սարգսյանին մեղսագրվող արարքի վաղեմության ժամկետներն անցած լինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավորված են:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի պահանջները և չկիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը, քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու պայմաններում ընդհանուր կարգով շարունակել է սույն գործի դատական քննությունը և 2014 թվականի օգոստոսի 4-ին դատական ակտ է կայացրել՝ առանց վերը նշված հիմքով ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը քննարկելու:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ամբաստանյալ Հ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

II. Բողոքաբերի բարձրացրած մյուս հարցերը.

17. Անդրադառնալով բողոքի հեղինակի այն փաստարկներին, որ վկաներ Ս.Սարգսյանի, Մ.Սարգսյանի, Ա.Նիկոլյանի, Ս.Նիկոլյանի, Գ.Պապոյանի, Օ.Մախսոյանի, Լ.Ռուբենյանի, Ռ.Կարապետյանի ցուցմունքները չէին կարող օգտագործվել որպես թույլատրելի ապացույցներ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված պնդումները հիմնագուրկ են և չեն բխում սույն գործի նյութերից:

Մասնավորապես, վկաներ Ս.Սարգսյանին, Մ.Սարգսյանին, Ա.Նիկոլյանին, Ս.Նիկոլյանին և Գ.Պապոյանին ոստիկանության Գյումրիի բաժնում ապօրինի պահելու և նրանց իրավունքները սահմանափակելու վերաբերյալ բողոքաբերի եզրահանգումները հերքվում են ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Ռ.Գևորգյանի՝ «Քրեական հետապնդում չիրականացնելու մասին» և «Քրեական գործով վարույթը կարճելու մասին» համապատասխանաբար 2014 թվականի մարտի 25-ի և մարտի 27-ի որոշումներով:

Իսկ ինչ վերաբերում է Օ.Մախսոյանի, Լ.Ռուբենյանի, Ռ.Կարապետյանի ցուցմունքներին, ապա գործի նյութերի համակողմանի ուսումնասիրությունից հետևում է, որ նշված ապացույցների հավաքման, ստուգման և գնահատման ընթացքում թույլ չեն տրվել կոնվենցիոն և քրեադատավարական նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք կարող էին ազդել գործի ելքի վրա:

18. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ Առաջին ատյանի դատարանն անհիմն մերժել է պաշտպանության կողմի՝ դատարան մի շարք վկաներ հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունները, որոնց ցուցմունքներն էական նշանակություն կունենային առաջադրված մեղադրանքը հերքելու և Հ.Սարգսյանի անմեղությունը հաստատելու համար՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի իմաստով, որպես ընդհանուր կանոն, ներպետական դատարանների հայեցողությանն է թողնվում այն հարցի գնահատումը, թե արդյոք անհրաժեշտ է հրավիրել վկաներ, թե՛ ոչ, և չի պահանջվում ամբաստանյալի կողմից հանդես եկող յուրաքանչյուր վկայի հրավիրումը և հարցաքննությունը (տե՛ս Բրիկմոնտոն ընդդեմ Բելգիայի (Bricmont v Belgium) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, կետ 89):

Ուստի Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պաշտպանության կողմի՝ իր վկաներին կանչելու և հարցաքննելու իրավունքի խախտման մասին բողոքի հեղինակի փաստարկներն անհիմն են:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Հ.Սարգսյանին արդարացնող ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից զրկված լինելու վերաբերյալ բողոքաբերի պնդումները, մասնավորապես այն, որ Առաջին ատյանի դատարանը, առանց հիմնավորումների մերժելով պաշտպանների գրեթե բոլոր միջնորդությունները, դրսևորել է կամայականություն: Քրեական գործի նյութերի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը քննարկել և օրենքով սահմանված կարգով դրական կամ բացասական լուծում է տվել այդ միջնորդություններին: Հետևաբար առկա չէ հակասություն նաև համապատասխան դատական ակտի և Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0225/01/11 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների միջև:

19. Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկներին, որ Մ.Ղուկասյանի և Վ.Ղուկասյանի ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու արդյունքում խախտվել է Հ.Սարգսյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված՝ դատապարտման հիմքում դրված ապացույցների կապակցությամբ պաշտպանության կողմի հակընդդեմ հարցում իրականացնելու (կոնֆրոնտացիայի) իրավունքը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ա) արդար դատաքննության իրավունքը ոտնահարվում է այն դեպքերում, երբ դատավարության որևէ փուլում անձին հնարավորություն չի

տրվում հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված վկային: Վճարելի դատարանը, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան (*Կրենս, օրինակ, AL-Khawaja and Tahery v. the United Kingdom գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգալթ թիվ 26766/05, 22228/06, կետեր 118-119*), ընդգծում է, որ հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված ապացույցը չի կարող դրվել անձի մեղադրական դատավճի հիմքում: Մինևույն ժամանակ այս արգելքը բացարձակ բնույթ չի կրում, մասնավորապես՝ հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված վկայի ցուցմունքը մեղադրական դատավճի հիմքում դնելն արդար դատաքննության իրավունքի խախտման չի հանգեցնի, եթե վկայի բացակայությունը եղել է արդարացված, և եթե այդ ապացույցը վճռական կշիռ չի ունեցել անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում (*Կրենս mutatis mutandis Արտակ Գաբրիելյանի գործով Վճարելի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՎԲ-04/13 որոշումը*):

Վերաքննիչ դատարանը, իր որոշման մեջ անդրադառնալով Մ.Ղուկասյանի նախաքննական ցուցմունքն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկներին, պատճառաբանել է, որ Առաջին ատյանի դատարանը, հրապարակելով Մանյա Ղուկասյանի նախաքննական ցուցմունքը, չի խախտել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերը, քանի որ քրեական գործի նյութերում առկա ՀՀ «Ճերմակ հիվանդանոց» ՍՊԸ-ի 19.06.2013թ. գրության համաձայն՝ Մանյա Ղուկասյանը, առողջական վիճակից ելնելով, չի կարող ներկայանալ դատական նիստին, ինչպես նաև Գյումրու քաղաքապետարանի 23.07.2013թ. տեղեկանքի համաձայն՝ Մանյա Ղուկասյանը բացակայում է քաղաքից, ուստի նրան դատական նիստին ապահովելու հնարավորություն չի ունեցել (տես սույն որոշման 6-րդ կետը):

Վճարելի դատարանն արձանագրում է, որ Մ.Ղուկասյանի վատառողջ լինելու վերաբերյալ բժշկական հաստատության գրությունը թվագրված է «**19.06.2013թ.**», մինչդեռ սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից դատավճիռը կայացվել է **2014 թվականի մարտի 12-ին**, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ **2014 թվականի օգոստոսի 4-ին**: Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դրանում առկա չէ առողջական վիճակի պատճառով շուրջ մեկ տարի (ինչպես Առաջին ատյանի, այնպես էլ Վերաքննիչ դատարաններում վարույթի ընթացքում) դատարան ներկայանալու անհնարինության մասին վկայող համապատասխան տվյալ: Ինչ վերաբերում է «Ճերմակ հիվանդանոց» ՍՊԸ-ի 19.06.2013թ. գրությանը, ապա դրանում բացակայում է Մ.Ղուկասյանի ապաքինման համար անհրաժեշտ հստակ ժամանակահատվածը, սակայն դա չի կարող

արդարացված հիմք համարվել շուրջ մեկ տարի ժամանակահատվածի համար Մ.Ղուկասյանի առողջական վիճակի մասին եզրահանգումներ անելու և համապատասխան միջոցներ չձեռնարկելու համար, ավելին՝ գործի նյութերում առկա է և Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչվել է «23.07.2013թ.» թվագրված (բժշկական հաստատության գրության թվագրումից շուրջ մեկ ամիս հետո) տեղեկանք Մ.Ղուկասյանի՝ քաղաքից բացակայելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է քաղաքից բացակայելու հիմքով Մ.Ղուկասյանի ներկայությունը դատական նիստին ապահովելու անհնարինության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը, ապա Վճարելի դատարանն արձանագրում է, որ այդ հանգամանքը վկայի՝ դատական նիստին չներկայանալու հարգելի պատճառ չի կարող գնահատվել այն պայմաններում, երբ դատարանների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել նրա գտնվելու վայրը պարզելու և ներկայությունն ապահովելու ուղղությամբ (որպես համեմատություն՝ տե՛ս Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգառ թիվ 8088/05, կետեր 83-84-րդ և 87-րդ, որով Եվրոպական դատարանը գրել է, որ խախտվել է դիմումարուի՝ իր դեմ ցուցմունք տրված վկային հարցաքննելու իրավունքը, այն պայմաններում, երբ վկաները բացակայել են երկրից, իսկ պետությունը բավարար միջացներ չի ձեռնարկել (այդ թվում՝ միջազգային օգնությանը դիմելու միջոցը) նրանց գտնվելու վայրը պարզելու և նրանց բացակայության արդարացվածությունը ճշտելու համար):

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով, որ գործի նյութերում առկա է Մ.Ղուկասյանի կողմից դատարան չներկայանալու պատճառների վերաբերյալ այլ տեղեկություններ՝ Վճարելի դատարանը հիմնավորված է համարում բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ վկա Մ.Ղուկասյանի նախաքննական ցուցմունքը որպես ապացույց օգտագործելու արդյունքում չի ապահովվել ամբաստանյալի՝ հակընդդեմ հարցման իրավունքը, հետևաբար այն չի կարող դրվել Հ.Սարգսյանի մեղադրական դատավճռի հիմքում:

բ) Վ.Ղուկասյանի ցուցմունքի անթույլատրելիության վերաբերյալ բողոքաբերի ներկայացրած փաստարկի կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով դրան, պատճառաբանել է, որ այն թույլատրելի է և ձեռք է բերվել քրեադատավարական օրենքի նորմերի պահպանմամբ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Մինչդեռ գործի նյութերի ուսումնասիրության հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ պաշտպանության կողմը գործի քննության ողջ ընթացքում զրկված է եղել Վ.Ղուկասյանին հարցաքննելու իրավունքից: Հետևաբար նշված ապացույցը նույնպես չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը բողոքաբերի քննարկվող փաստարկները հիմնավորված է համարում և գտնում, որ ստորադաս դատարանները, Մ.Ղուկասյանի և Վ.Ղուկասյանի ցուցմունքները որպես ապացույց օգտագործելով, թույլ են տվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում: Ուստի, Վճռաբեկ դատարանը նշված ցուցմունքները հանում է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով Հ.Սարգսյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցների շարքից:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված դատական սխալը գործի ելքի վրա չի ազդել, քանի որ գործի նյութերում առկա են Մ.Ղուկասյանի և Վ.Ղուկասյանի ցուցմունքներում պարունակվող տվյալները հաստատող այլ ապացույցներ (մասնավորապես՝ վկաներ Գուրգեն Վարդիկյանի, Գևորգ Ղուկասյանի, Սամվել Սարգսյանի, Անահիտ Նիկոլյանի և քրոջ՝ Մելանյա Սարգսյանի ցուցմունքները):

19.1. Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում նաև պաշտպանի այն փաստարկներին, որ Հ.Սարգսյանի՝ վկայի կարգավիճակում տրված ցուցմունքները չէին կարող դրվել մեղադրանքի հիմքում և որպես ապացույց օգտագործվել, քանի որ հարցաքննության ժամանակ վերջինս փաստացի գտնվել է կասկածյալի կարգավիճակում: Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ ստորադաս դատարանները այդ ցուցմունքը գնահատման առարկա են դարձրել արժանահավատության տեսանկյունից՝ դրանով իսկ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածը և անտեսելով Վճռաբեկ դատարանի՝ Գագիկ Միքայելյանի գործով թիվ ԵԱԴԴ/0085/06/09 և Նորիկ Պողոսյանի գործով թիվ ՀՅԲԴԴ/2/0153/01/08 որոշումներում ձևավորած իրավական դիրքորոշումները:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Հ.Սարգսյանի՝ վկայի կարգավիճակում տրված ցուցմունքները թե՛ մեղադրական եզրակացության, թե՛ Առաջին ատյանի դատարանի դատավճռի և թե՛ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ գնահատվել են որպես մտացածին, ապա հերքվել գործով ձեռք բերված մյուս ապացույցներով: Հետևաբար քննարկվող ապացույցն անթույլատրելի չճանաչելու արդյունքում ստորադաս դատարանների կողմից թույլ տրված դատական սխալը չի ազդել գործի ելքի վրա:

20. Վճռաբեկ դատարանը, պատճառաբանվածության տեսանկյունից վերլուծելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գալիս է այն եզրահանգման, որ նշված դատական ակտը համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 393-րդ հոդվածների պահանջներին, ինչպես նաև չի հակասում Վճռաբեկ դատարանի՝ Ֆրունզիկ Գալստյանի գործով թիվ ԵԿԴ/0058/11/09 և Էրիկ Մարգարյանի գործով թիվ

ՄԴ3/0045/01/13 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին: Ոստի Վերաքննիչ դատարանի կողմից չպատճառաբանված դատական ակտ կայացնելու վերաբերյալ բողոքի հեղինակի փաստարկները հիմնավորված չեն:

Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճարելի դատարանը հանգում է այն հետևության, որ ստորադաս դատարանները Կ.Եսայանի սպանության մեջ ամբաստանյալ Հ.Սարգսյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության (տես սույն որոշման 5-6-րդ կետերը):

Մասնավորապես, Վճարելի դատարանն արձանագրում է, որ Հ.Սարգսյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքում հաստատված է, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են վկաներ Ս.Սարգսյանի, Ա.Նիկոլյանի, Մ.Սարգսյանի, Գ.Վարդիկյանի, Գ.Ղուկասյանի, Ռ.Կարապետյանի, Օ.Մախոյանի, Լ.Ռուբենյանի, Ա.Սահակյանի, Ա.Մուրադյանի, Վ.Ղազարյանի, Ա.Զաքյանի, Ա.Մուղդուսյանի, Ռ.Քոչարյանի, Գ.Վարդանյանի, Ա.Չարխիֆալակյանի, Ա.Գինոսյանի, Մ.Թորոսյանի, Է.Խաչատրյանի, Գ.Խաչատրյանի, Ռ.Եսայանի, Ռ.Ղարաքեշիշյանի, Ա.Գրիգորյանի, Կ.Գևորգյանի, Ա.Եղիկյանի, Վ.Ղարիբյանի, Գ.Պապոյանի, Ժ.Աղայանի, Ս.Գալստյանի, ինչպես նաև տուժողի իրավահաջորդ Ա.Իսկանդարյանի և փորձագետ Ս.Գրիգորյանի ցուցմունքներով, Գյումրի քաղաքի Շիրակացի 125 հասցեում գտնվող «Ցածր գներ» խանութում, Խրիմյան Հայրիկ 46-2 հասցեում գտնվող «ԶԱԿ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում, Ալեք Մանուկյան 21 հասցեում գտնվող «Զեմնա Գալստյան» ԱԶ-ի բենզալցակայանում, Շիրակացի 109 հասցեում գտնվող «Գարոյան Մարատ» ԱԶ-ում, 26 Կոմիսարների 76ա հասցեում գտնվող «Արա Իգիթյան» ԱԶ-ի ղեղատանը տեղադրված տեսանկարահանող սարքերի ձայնագրություններով, համակարգչատեխնիկական և տեսաձայնագրային համալիր փորձաքննության թիվ 12-1315 եզրակացությամբ, ՀՀ Աշոցքի զինվորական կոմիսարի կողմից 2012 թվականի ապրիլի 27-ին տրված թիվ 4/130 գրությամբ, քննչական փորձարարություն կատարելու մասին արձանագրությամբ, իրեղեն ապացույց ճանաչված՝ Կ.Եսայանին պատկանող ավտոմեքենայի ոտնատակերի 4 գորգերի և Հ.Սարգսյանի կոշիկների դատահողագիտական փորձաքննության թիվ 12-1308 եզրակացությամբ, իրեղեն ապացույց ճանաչված՝ Հ.Սարգսյանին պատկանող «Պոլո» գրառմամբ սվիտրի և «STESSO» պիտակով անդրավարտիքի դատաքիմիական փորձաքննությունների թիվ 152 Ք և 154 Ք եզրակացություններով, դատաձգաբանական փորձագետի

թիվ 739 եզրակացությամբ, դատակենսաբանական փորձաքննության թիվ 219 եզրակացությամբ, դատագենետիկական փորձաքննության թիվ 49 եզրակացությամբ, դեպքի վայրի գնության արձանագրությամբ, դատաբժշկական փորձագետի թիվ 93 եզրակացությամբ, Հ.Սարգսյանի և Կ.Եսայանի հեռախոսագանգերի վերծանումներով, տրանսպորտային միջոցի գնության արձանագրությամբ, չհաշվառված արտասահմանյան պետհամարանիշի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատնից ստացված 2012 թվականի հուլիսի 25-ի թիվ 615 գրությամբ և ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Գյումրիի հաշվառման քննական բաժանմունքից ստացված 2012թ. հուլիսի 26-ի թիվ 17/27-1984 գրությամբ:

21. Անդրադառնալով ստորադաս դատարանների անկողմնակալության, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի որոշման անօրինական և չպատճառաբանված լինելու վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկների (տե՛ս սույն որոշման 8-րդ և 10-րդ կետերը)՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դրանք, ըստ էության, վերաբերում են դատարանների կողմից քրեական դատավարության շրջանակներում կայացված մի շարք որոշումներին, ինչպես նաև նշանակված պատժին: Այս առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ դատարանի կողմից կայացված որոշումների, ինչպես նաև նշանակված պատժի հետ բողոք բերած անձի անհամաձայնությունը սույն որոշման 17-20-րդ կետերում շարադրված դիրքորոշումների պայմաններում չի կարող բավարար հիմք հանդիսանալ **դատարանի անկողմնակալության հարցում ողջամիտ կասկած** առաջանալու համար: Հետևաբար Վճարելի դատարանը բողոքաբերի քննարկվող փաստարկները նույնպես հիմնավորված չի համարում:

22. Հիմք ընդունելով սույն որոշման 14-16-րդ կետերում շարադրված վերլուծությունը և եզրահանգումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի պահանջները և չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր: Հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը ամբաստանյալ Հ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելու և պատիժ նշանակելու մասով պետք է բեկանել և փոփոխել. ամբաստանյալ Հ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Սույն որոշման 17-21-րդ կետերում շարադրված վերլուծության և եզրահանգումների հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով Հ.Սարգսյանի մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, իսկ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված դատական սխալներն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն ազդել գործի ելքի վրա (տե՛ս սույն որոշման 19-19.1-րդ կետերը), ուստի Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի որոշումը մնացած մասով պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Հարություն Սամվելի Սարգսյանի վերաբերյալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 12-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով, բեկանել և փոփոխել:

2. Հարություն Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

3. Հարություն Սարգսյանին թողնել կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված 14 (տասնչորս) տարի ժամկետով ազատազրկումը:

4. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 12-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշումը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

9.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԴ/0014/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ պաշտպան ամբաստանյալ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
Ա.ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆԻ

2015 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արամայիս Դերենիկի Հովհաննեսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Վարդենիսի քննչական բաժանմունքում 2014 թվականի հունվարի 3-ին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 31100114 քրեական գործը:

2014 թվականի հունիսի 12-ին Արամայիս Հովհաննեսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով:

2014 թվականի հունիսի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2014 թվականի սեպտեմբերի 10-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Հովհաննեսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 2 (երկու) տարի ժամկետով, նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 4 (չորս) տարի ժամկետով:

3. Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ Ս.Շեռյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 10-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման դեմ Վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանը, որը Վճարելի դատարանի 2015 թվականի հունվարի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացրել Ա.Հովհաննեսյանի շահերի պաշտպան Ս.Կարապետյանը՝ խնդրելով ներկայացված վճարելի բողոքը վերադարձնել կամ մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ թողնել օրինական ուժի մեջ:

Վճարելի բողոքի պատասխաններ են ներկայացրել նաև տուժողների իրավահաջորդներ Լիլիթ Ասատրյանը և Էլլա Գուլակյանը՝ խնդրելով մերժել ներկայացված բողոքը և դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Հովհաննեսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) 2014 թվականի հունվարի 2-ին՝ ժամը 23:55-ի սահմաններում, վարելով համազրուդացի Արթուր Միխթարի Ասատրյանին պարկանոց Գագ 31-10 մակնիշի 09 ՕՕ 843 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, երթևեկել է Վարդենիս-Մարտունի ավտոճանապարհով Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր

գյուղ գնալու նպատակով: Ավտոմեքենայի մեջ են եղել ուղևորներ, համագյուղացիներ Արթուր Մխիթարի Ասատրյանը, Կարեն Մարտիրոսի Գևորգյանը և Արտաշես Աշուրի Ավետիսյանը: Ավտոճանապարհի 13-րդ կմ հատվածում Ա.Հովհաննեսյանը իրականացնելով իր վարած ավտոմեքենայի ոչ պատշաճ ու վրանգավոր կառավարում նախապես հաշվի չառնելով առկա ճանապարհային պայմանները, մասնավորապես՝ շրջադարձի առկայությունը և չընդունելով երթևեկության համապատասխան անվտանգ ու սահուն ռեժիմ, սրեղծել է վթարային իրադրություն և թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի ու ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 65-րդ և 66-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, որի արդյունքում ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից և բախվել ծառին: Վթարի հետևանքով ուղևորներ Արթուր Մխիթարի Ասատրյանը և Կարեն Մարտիրոսի Գևորգյանը ստացած մարմնական վնասվածքներից տեղում մահացել են:(...)» (տես քրեական գործ, հատոր 1, թերթ 85):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. «(...) Դատարանն ամբաստանյալ Արամայիս Հովհաննեսյանի նկատմամբ պարիժ նշանակելիս հաշվի է առնում ինչպես նրա կատարած հանցագործության բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը, այնպես էլ նրա պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող այն հանգամանքները, որ նա դեպքից հետո ցուցաբերել է կայուն վարքագիծ՝ չի լքել դեպքի վայրը, տուժողներին ցուցաբերել է օգնություն, տուժողների իրավահաջորդների հետ հաշտվել է, նրանք քաղաքացիական հայց չեն ներկայացրել, որևէ պահանջ չունեն: Տուժողների իրավահաջորդներ Լիլիթ Ասատրյանը և Էլլա Գուլակյանը խնդրել են Արամայիս Հովհաննեսյանի նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և պարիժը պայմանականորեն չկիրառել, սահմանել երկարաբաժնի փորձաշրջան, որը կապահովի պարժի նպատակները: Ինչպես նաև, համայնքի ղեկավարի կողմից բնութագրվում է դրական (հիմք՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի ղեկավարի 16.06.2014 թվականին տված բնութագիրը), նախկինում որևէ կերպ չի արատավորվել, համայնքի ավագանին ուղերձով դիմել է դատարանին և խնդրել նրա նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և սահմանել փորձաշրջան՝ հաշվի առնելով նրա հասարակական վարքագիծը (հիմք՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի ավագանու 22.06.2014 թվականի ուղերձը): Խնամքին են գրնվում վեց անձ, այդ թվում՝ մինչև տասնչորս տարեկան չորս երեխաները, գործազուրկ կինը և ծեր տատը (հիմք՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուրի գյուղապետարանի 16.06.2014 թվականի թիվ 234 տեղեկանքը), ընտանիքը գրնվում է սոցիալապես անապահով վիճակում, հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը (հիմք ՀՀ

Ֆեդարքունիքի մարզի Վարդենիսի սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի 13.06.2014 թվականի թիվ 719 տեղեկանքը): Բացի այդ, Արամայիս Հովհաննեսյանը զին.ծառայության ընթացքում, դարձել է երրորդ խմբի հաշմանդամ (...) (հիմք՝ ՀՀ ՊՆ սոցիալական պաշտպանության վարչության պետի 17.06.2004 թվականի տեղեկանքը):

Ամբաստանյալ Արամայիս Հովհաննեսյանի պատասխանատվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրում:

(...)

Հաշվի առնելով Արամայիս Հովհաննեսյանի անձը, նրան բնութագրող տվյալները, նրա պատասխանատվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում, դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Արամայիս Հովհաննեսյանի ուղղումը հնարավոր է առանց վերջինիս կողմից ազատագրվման ձևով պարիժը կրելու՝ նրան պայմանական դատապարտության ենթարկելով (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 98-99):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման պարձառարանական մասում արձանագրել է, որ «(...) Դատարանը (...) հիմնավորված հետևության է հանգել այն մասին, որ առանց հասարակությունից մեկուսացնելու հնարավոր է ապահովել պարիժի նպատակները և ազատագրվման ձևով նշանակված պարիժն ամբաստանյալը չպետք է կրի, որի արդյունքում կիրառել է քրեական օրենքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման:

(...)

Վերաքննիչ դատարանը նման հետևության է հանգում հաշվի առնելով ինչպես ամբաստանյալ Արամայիս Հովհաննեսյանին վերագրվող հանցագործության կատարման, այնպես էլ ամբաստանյալի անձին վերաբերող հանգամանքները, հաշվի առնելով ամբաստանյալ Արամայիս Հովհաննեսյանի պատասխանատվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև ամբաստանյալի պատասխանատվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունն ու այդպիսիք գնահատելով իրենց համակցության մեջ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ օբյեկտիվորեն գոյություն ունեցող վերը թվարկված տվյալները, որոնք բնութագրում են ամբաստանյալի անձն ու հանդիսանում նրա պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքներ, վկայում են նրա նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության ու դրա համար բավարար հիմքերի առկայության մասին (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 49-50):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձի պնդմամբ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Հովհաննեսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, թույլ է տվել դատական սխալ՝ նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը հիմք է դատական ակտը բեկանելու համար:

Ի հիմնավորումն իր փաստարկի մեջբերելով Վճարելի դատարանի մի շարք գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Ա.Հովհաննեսյանի կողմից պատիժը կրելու անհրաժեշտության հարցը քննարկելիս պատշաճ գնահատականի չի արժանացրել կատարված արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, արարքի և դրա հետևանքների նկատմամբ ամբաստանյալի հոգեբանական վերաբերմունքը: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ա.Հովհաննեսյանը մեքենան վարելիս թույլ է տվել ոչ պատշաճ և վտանգավոր կառավարում, հաշվի չի առել ճանապարհային պայմանները, շրջադարձի առկայությունը, չի ընտրել երթևեկության անվտանգ և սահուն ռեժիմ՝ տեխնիկական տեսանկյունից ստեղծելով վթարային իրավիճակ: Ամբաստանյալը նախատեսել է իր գործողությունների հետևանքով հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, սակայն առանց բավարար հիմքերի, ինքնավստահությամբ հույս է ունեցել խուսափել դրանից, որի արդյունքում երկու անձի մահ է պատճառվել: Այսինքն՝ ամբաստանյալի արարքը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է հանցավոր ինքնավստահությամբ, որն անզգույշ մեղքի ձևի առավել վտանգավոր տեսակն է:

9. Բողոք բերած անձը նշել է նաև, որ ստորադաս դատարանները որպես ամբաստանյալ Ա.Հովհաննեսյանի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, ի թիվս այլոց, անհիմն նշել են վերջինիս կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը չլքելը՝ անտեսելով այն հանգամանքը, որ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցի շահագործման կանոնները խախտած անձի կողմից պարունակում է մեկ այլ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի որևէ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձի (տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մաս) պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք չի կարող դիտվել նրա գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի մեկ այլ հոդվածով (տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով) նախատեսված հանցագործության հատկանիշների բացակայությունը:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է՝ «(...) վճարելի բողոքն ընդունել վարույթ: Մասնակիորեն՝ պատժի մասով բեկանել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014թ. սեպտեմբերի 10-ի դատավճիռն, ըստ մեղադրանքի

Արամայիս Հովհաննիսյանի ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 3-րդ մասով անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014թ. հոկտեմբերի 31-ի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ ազատագրման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը ճանաչել անթույլատրելի և քրեական գործը վերադարձնել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ բեկանված մասով նոր քննության»:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, մասնավորապես՝ իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված) նպատակահարմարության հարցը լուծելիս հանցագործությամբ պատճառված վնասը հաշվի առնելու, ինչպես նաև օրենքով չնախատեսված հանգամանքը որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող (ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մաս) գնահատելու չափանիշների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի սույն գործով անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

1. Պարիժը պայմանականորեն չկիրառելու (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված) նպատակահարմարության հարցը լուծելիս հանցագործությամբ պատճառված վնասը հաշվի առնելը.

12. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյոք ամբաստանյալ Ա.Հովհաննեսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված) ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատման են ենթարկել նրան մեղսագրվող հանցագործության (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մաս) հանրային վտանգավորության աստիճանը:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարակում պահելու ձևով պարիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատարարայի ուղղվելը հնարավոր է առանց պարիժ կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պարիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պարասխանատվությունը և պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...):»:

Մեջբերված քրեաիրավական դրույթը Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-139/07, ՎԲ-195/07, ՎԲ-01/08, ԵԿԴ/0034/01/08, ԱՎԴ2/0059/01/08, ԵԱԲԴ/0078/01/09, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Վերոնշյալ որոշումներում Վճարելի դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճարելի դատարանը փաստել է, որ չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքին ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակներն իրագործելու հնարավորությունը, անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պարտավոր է, ի թիվս այլնի, հաշվի առնել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը (*հանցագործության՝ հանրային վրանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ մանրամասն տեսն Գարուշ Մադաթյանի գործով Վճարելի դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը*):

Հանցագործության հանրային վտանգավորության տիպային բնութագիրն արտացոլվում է օրենսդրի կողմից սահմանված սանկցիայում, իսկ յուրաքանչյուր կոնկրետ գործով արարքի հանրային վտանգավորության գնահատականը դատարանի կողմից կարող է որոշվել կոնկրետ հանցագործության տարրերի առանձնահատկությունների, դրա կատարման հանգամանքների, պատճառված վնասի չափի, մեղքի ձևի և տեսակի, հանցավորի անձնավորության, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հիման վրա: Վերջիններս վկայում են հանցագործության նվազ կամ բարձր հանրային վտանգավորության աստիճանի մասին՝ դատարանի կողմից պատիժ նշանակելիս և այն կրելու անհրաժեշտության հարցը որոշելիս ապահովելով արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի կենսագործումը:

14. Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար, որի

արդյունքում մարդու (մարդկանց) կյանքին կամ առողջությանն անգգուշությամբ հասցվել է վնաս:

Հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության բնույթն ու առանձնահատկությունները՝ Վճարելի դատարանն իր մի շարք որոշումներում կայուն դիրքորոշում է ձևավորել նշված հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս, ինչպես նաև նրանց կողմից պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս հաշվի առնվող հանգամանքների վերաբերյալ:

Մասնավորապես, Վճարելի դատարանը փաստել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի վերաբերյալ գործերով պատժի տեսակ և չափ ընտրելիս, պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանները պետք է հաշվի առնեն հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները, ինչպես նաև հանցանքի կատարումից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը: Դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն.

ա. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին (մանրամասն տե՛ս Արամ Սերյոժայի Մահակյանի գործով Վճարելի դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10 որոշման 20-րդ կետը),

բ. վերոնշյալ կանոնների խախտման և դրա արդյունքում առաջացող հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքին (մանրամասն տե՛ս Էդմոն Գարսիսի Ասատրյանի գործով Վճարելի դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 15-18-րդ կետերը),

գ. հանցագործության կատարումից հետո անձի դրսևորած վարքագծին (մանրամասն տե՛ս Արթուր Սերգեյի Առաքելյանի գործով Վճարելի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԵԴ/0122/01/12 որոշման 17-19-րդ կետերը):

15. Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քննարկվող հոդվածով նախատեսված հանցանքի կատարման դեպքում պատիժ նշանակելիս և այն կրելու անհրաժեշտության հարցը որոշելիս հատկապես կարևոր է գնահատել նաև հանցագործությամբ պատճառված վնասը: Վերջինս ցանկացած հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը բնութագրող հիմնական ցուցանիշներից է, այդ թվում՝ այն հանցակազմերի, որոնցով սահմանված չէ որպես հանցակազմի տարր: Այն իր համարժեք գնահատականը պետք է ստանա նաև ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու վերաբերյալ հանցագործություններով պատիժ նշանակելիս, քանի

որ այդպիսի հանցագործությունների հետևանքով կարող են պատճառվել հանցակազմով նախատեսված, ինչպես նաև դրանից դուրս գտնվող ամենատարբեր բնույթի հետևանքներ, այդ թվում՝ մարդու առողջության միջին ծանրության կամ ծանր վնաս, մարդու մահ (այդ թվում՝ երկու կամ ավելի մարդու), գույքային վնաս:

Մասնավորապես հանրորեն վտանգավոր հետևանքներով պայմանավորված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք է նախատեսված անզգուշությամբ մարդու մահ առաջանալը, իսկ 3-րդ մասով՝ հանցակազմի առավել ծանրացնող հանգամանք՝ անզգուշությամբ երկու կամ ավելի մարդու մահ առաջանալը: Վերոնշյալից հետևում է, որ կախված օրենքով պահպանվող հարաբերության (հանցակազմի ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ օբյեկտ) իրավական արժեքից, դրան պատճառված վնասը պայմանավորում է տվյալ հանցագործության հանրային վտանգավորության, հետևաբար նաև պատժելիության աստիճանը: Սույն դեպքում պաշտպանվող հարաբերությունը մարդու կյանքն է (լրացուցիչ օբյեկտ), որը հիմնարար սոցիալական արժեք է և այդպիսով օժտված է քրեաիրավական պաշտպանության բարձր աստիճանով:

Ակնհայտ է՝ որքան ծանր է վրա հասած հետևանքը, մեծ՝ վնասի չափը, այնքան բարձր է հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը: Վերջինս հակադարձ համեմատական է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հնարավորությանը: Այլ խոսքով՝ որքան բարձր է հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, այնքան ցածր է դրա համար նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հավանականությունը:

16. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Հովհաննեսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2014 թվականի հունվարի 14-ին՝ ժամը 23:55-ի սահմաններում, իրականացնելով ավտոմեքենայի ոչ պատշաճ ու վտանգավոր կառավարում, ստեղծել է վթարային իրադրություն՝ թույլ տալով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների (այսուհետ նաև՝ ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններ) 65-րդ և 66-րդ կետերի պահանջների խախտում, ինչի արդյունքում երկու ուղևորները տեղում մահացել են (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա.Հովհաննեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի է առել հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող մի

շարք հանգամանքների առկայությունը և ծանրացնող հանգամանքների բացակայությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Ա.Հովհաննեսյանի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արձանագրել է, որ դրանք վկայում են ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության մասին: Արդյունքում Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ՝ մերժելով ներկայացված բողոքը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով 13-15-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ա.Հովհաննեսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատման չեն ենթարկել նրան մեղսագրվող հանցագործության (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մաս) հանրային վտանգավորության աստիճանը:

Մասնավորապես, ստորադաս դատարանները

ա) վերլուծության չեն ենթարկել և որևէ գնահատական չեն տվել թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին (ամբաստանյալը թույլ է տվել ոչ պատշաճ և վտանգավոր կառավարում՝ խախտելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 65-րդ և 66-րդ կետերի պահանջները),

բ) որևէ միջոց չեն ձեռնարկել՝ բացահայտելու թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը,

գ) չեն գնահատել ճանապարհային երթևեկության կանոնների խախտման արդյունքում վրա հասած վնասի բնույթն ու չափը՝ երկու մարդու մահ պատճառելը:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի սխալ կիրառում:

II. Օրենքով չնախատեսված հանգամանքը որպես պարասխանարկությունը և պարիժը մեղմացնող հանգամանք (ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մաս) գնահատելու չափանիշները.

18. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. արդյոք Ա.Հովհաննեսյանի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը չլքելը կարող է գնահատվել որպես նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք (ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մաս):

19. Պատիժ նշանակելիս, ինչպես նաև պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան հետևության հանգելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի հանցավորի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն սույն հոդվածի առաջին մասում»:

Դատարանների կողմից պատիժ նշանակելիս հաշվի առնվող օրենքով չնախատեսված մեղմացնող հանգամանքների չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել Պ.Բայրամյանի գործով որոշման մեջ, որի համաձայն՝ «(...) Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պարասիանարվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պարիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վրանգավորությունը,

գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատարարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետագոյված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների սրուզման և գնահատման օրենսդրական պահանջները» (տես Պարույր Բայրամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշումը):

20. Վերահաստատելով և զարգացնելով Պ.Բայրամյանի գործով ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը ողջամտորեն նվազեցնող չի կարող գնահատվել այնպիսի հանգամանք, որը բնութագրական է անձանց լայն շրջանակին և բխում է

անձի կողմից քաղաքացիական հասարակությունում հաստատված կարգը պահպանելու պարտականությունից: Մասնավորապես, իրավահպատակ վարքագիծը բնորոշ է հասարակության լայն շրջանակներին և յուրաքանչ-յուր քաղաքացու հասարակական պարտքն է: Հետևապես անձի կողմից նախկինում հանցանք կատարած կամ դատապարտված չլինելը, ինչպես նաև նոր հանցանք չկատարելը չեն կարող դիտարկվել որպես անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ:

21. Սույն գործի փաստերից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը Ա.Հովհաննեսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես մեղմացնող հանգամանք է հաշվի առել, ի թիվս այնի, նրա կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը չլքելը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսված տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու համար՝ նույն օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման դեպքում: Այսինքն՝ տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը արգելված է օրենքով, հետևաբար այդպիսի վարքագիծ չդրսևորելը անձի պարտականությունն է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Հովհաննեսյանի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը չլքելը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված հանցանք չկատարելը, ինքնին չի կարող գնահատվել որպես նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Հետևաբար Առաջին ատյանի դատարանը, Ա.Հովհաննեսյանի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը չլքելը գնահատելով որպես մեղմացնող հանգամանք, իսկ Վերաքննիչ դատարանը, հիմնավորված համարելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասը:

22. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ և 62-րդ հոդվածների սխալ կիրառում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է: Նշված հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի

որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 397-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արամայիս Դերենիկի Հովհաննեսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0030/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ Տիգրան Ռուբենի Կոստանդյանի պաշտպան Կրոմվել Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2011 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 90278811 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումներով Հարություն Կառլենի Պետրոսյանը, Վահե Վարուժանի Պարանյանը, Նարեկ Արկադիի Սահակյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և

նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2011 թվականի հոկտեմբերի 24-ի որոշումներով Տիգրան Ռուբենի Կոստանդյանը, Գևորգ Սերոբի Խնուսյանը և Սերգո Արմենի Մելիքբեկյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2012 թվականի մարտի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով Տ.Կոստանդյանը, Գ.Խնուսյանը, Հ.Պետրոսյանը, Վ.Պարանյանը, Ն.Սահակյանը և Ս.Մելիքբեկյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են բերել Ն.Սահակյանի, Վ.Պարանյանի պաշտպան Ժ.Վարոսյանը, Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանը և Վ.Բաբայանը:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ Վ.Պարանյանի մասով պաշտպան Ժ.Վարոսյանի վերաքննիչ բողոքով և 2012 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանի և Վ.Բաբայանի վերաքննիչ բողոքով վերաքննիչ վարույթները կարճվել են՝ իրենց դիմումների հիման վրա, իսկ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ Ն.Սահակյանի մասով պաշտպան Ժ.Վարոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, բեկանվել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, գործի վարույթը կարճվել է, իսկ քրեական հետապնդումը դադարեցվել:

4. Տ.Կոստանդյանի պաշտպան Գ.Մադոյանի, Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանի և Վ.Բաբայանի, Վ.Պարանյանի պաշտպան Ժ.Վարոսյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի մարտի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, գործի վարույթը Տ.Կոստանդյանի, Գ.Խնուսյանի, Վ.Պարանյանի մասով կարճել, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցրել:

Հ.Պետրոսյանի պաշտպան Ղ.Պապոյանի, Ս.Մելիքբեկյանի պաշտպան Ա.Քալաշյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով բերված վերաքննիչ

բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, Հ.Պետրոսյանին, Ս.Մելիքբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացրել, և նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել՝ կարճելով քրեական գործի վարույթը:

Դատավարության մասնակիցները Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի, 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումները վճարելության կարգով չեն բողոքարկել, և դրանք մտել են օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշման դեմ Տ.Կոստանդյանի, Գ.Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի, իսկ նույն դատարանի 2013 թվականի ապրիլի 29-ի որոշման դեմ՝ մեղադրող Տ.Հարությունյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի հիմքով բերվել են վճարելի բողոքներ:

Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ վճարելի բողոքները մասնակիորեն բավարարվել են, ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշումը Գ.Խնուսյանի և Տ.Կոստանդյանի մասով, նույն դատարանի Հ.Պետրոսյանի և Ս.Մելիքբեկյանի վերաբերյալ՝ 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումը բեկանվել են, գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

6. Նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մայիսի 6-ի որոշմամբ պաշտպաններ Ա.Քալաշյանի, Ղ.Պապոյանի, Գ.Մադոյանի վերաքննիչ բողոքները բավարարել է ամբողջությամբ, իսկ պաշտպաններ Կ.Գրիգորյանի, Վ.Բաբայանի բողոքները՝ մասնակիորեն, այն է՝ Տ.Կոստանդյանի, Գ.Խնուսյանի, Հ.Պետրոսյանի և Ս.Մելիքբեկյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը բեկանել է և նրանց նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել ու քրեական հետապնդումը դադարեցրել:

7. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել Գ.Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանը: Տ.Կոստանդյանի կողմից վճարելի բողոք չի ներկայացվել և նրա մասով դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ:

Վճարելի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ վճարելի բողոքը բավարարվել է մասնակիորեն, Գ.Խնուսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանվել, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

8. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի հիմքով վճարելի բողոք է բերել Տ.Կոստանդյանի պաշտպան Կ.Գրիգորյանը: Վճարելի

դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ Տ.Կոստանդյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

9. Տ.Կոստանդյանին, Գ.Խնուսյանին, Հ.Պետրոսյանին, Վ.Պարանյանին և Ս.Մելիքբեկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, հանդիսանալով ՀՀ ՊՆ 54574 գորամասի ժամկետային զինծառայողներ, կոչումով կրտսեր սերժանտներ, 2011 թվականի հոկտեմբերի 14-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում, խախտելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ հոդվածով սահմանված զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները, գորամասի հրետանային դիվիզիոնի գորանոցում, առանց որևէ պատճառի շուրջ 7-ից 10 թույն տևողությամբ ծաղրուծանակի են ենթարկել, ստորացրել պատիվն ու արժանապատվությունը և բռնություն են գործադրել նույն գորամասի ժամկետային զինծառայող՝ կրտսեր սերժանտ Սամվել Արսենի Պապիկյանի նկատմամբ, այն է՝ ձեռքերով և ոտքերով անկանոն հարվածներ են հասցրել նրա գլխին ու մարմնի տարբեր մասերին, ինչպես նաև սեռական բնույթի հայիոյանքներ հնչեցրել նրա հասցեին (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 14):

10. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշման համաձայն՝ «(...) գործի նյութերով հաստատված է, որ սույն գործով մեղադրանքի փաստական կողմը կազմող գործողությունները կատարելու համար Գևորգ Խնուսյանի, Վահե Պարանյանի և Տիգրան Կոստանդյանի նկատմամբ ՀՀ ՊՆ 54574 գորամասի հրամանադատի 15.10.2011թ. թիվ 237 հրամանով նշանակվել է կարգապահական փուլով 10-ական օր ժամանակով:

Նույն օրը Գևորգ Խնուսյանը, Վահե Պարանյանը և Տիգրան Կոստանդյանը փեղափոխվել են ՀՀ ՊՆ Երևանի կայսզորի Ռազմական Ոստիկանության կարգապահական մեկուսարան: Գևորգ Խնուսյանը և Տիգրան Կոստանդյանը կարգապահական մեկուսարանում գտնվել են 15.10.2011թ.-ից մինչև 25.10.2011թ., երբ 15.10.2011թ. հարուցված սույն քրեական գործի շրջանակներում նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը և մեղադրյալները փեղափոխվել են կալանավորվածներին պահելու վայր:

(...) Այսինքն՝ ամբաստանյալներ Գևորգ Խնուսյանը և Տիգրան Կոստանդյանը կարգապահական մեկուսարանում անազատության մեջ պահվել են 10 (տասը) օր (...): Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) Գևորգ

Խնուայանի և Տիգրան Կոստանդյանի նկատմամբ կիրառված 10 (տասը) օր (...) կարգապահական կալանքն իր քնույթով և տևողությամբ հանդիսացել է քրեական պատիժ:

(...)

Վերոգրյալի հիման վրա՝ վերաքննիչ դատարանը գտնում է, որ Գևորգ Խնուայանի (...) և Տիգրան Կոստանդյանի կողմից կարգապահական կալանքը կրելուց հետո նույն արարքի համար նրանց դատապարտումը խախտել է կրկին դառնալու անթույլատրելիության սկզբունքը: Այսինքն՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արջանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով Գևորգ Խնուայանը (...) և Տիգրան Կոստանդյանը կրկին անգամ դառնալու են նույն արարքի համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 141-142):

11. Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման համաձայն՝ «(...) քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի և 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումներն օրինական, հիմնավորված և պարճառաբանված չեն, քանի որ դրանցում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք:

Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք չմատչանալով՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Գ.Խնուայանի, Տ.Կոստանդյանի, Հ.Պետրոսյանի և Ս.Մելիքբեկյանի իրավունքները՝ թույլ տալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտում:

(...)

[Վերոհիշյալ] դատավարական իրավունքի խախտումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի և 2013 թվականի ապրիլի 29-ի դատական ակտերը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի 2013 թվականի մարտի 19-ի և 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումներում առկա հակասությունը և իր որոշման մեջ հստակեցնի, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված որ հիմքով է կարճում քրեական գործի վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը» (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 133-135):

12. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշման համաձայն՝ «(...) գործի քննության արդյունքում թույլ են փրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են դատական սխալի, հետևաբար Դատարանի 23.08.2012թ. դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի՝ Գևորգ Սերոբի Խնուսյանի, Հարություն Կառլենի Պետրոսյանի, Տիգրան Ռուբենի Կոստանդյանի և Սերգո Արմենի Մելիքբեկյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, պետք է բեկանել և նրանց նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով կրկին դատապարտվելու անթույլատրելիության պարճատարանությամբ»:

Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշման եզրափակիչ մասը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «Պաշտպաններ Կ.Գրիգորյանի և Վ.Բարսյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն: Պաշտպաններ Ա.Քալաշյանի, Ղ.Պապոյանի և Գ.Մադոյանի վերաքննիչ բողոքները բավարարել: Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.08.2012թ. դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Գևորգ Սերոբի Խնուսյանի, Հարություն Կառլենի Պետրոսյանի, Տիգրան Ռուբենի Կոստանդյանի և Սերգո Արմենի Մելիքբեկյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, բեկանել ու նրանց նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել: (...)» (յրեն քրեական գործ, հատոր 10-րդ, թերթ 137-138):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

13. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ մասի, ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջների խախտում:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը շարադրել է վկայակոչված իրավանդությունները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճարելի դատարանի մի շարք դատական ակտեր, որից հետո եզրահանգել, որ թեև Տ.Կոստանդյանին կարգապահական մեկուսարանում պահելը հանդիսացել է կարգապահական տույժ, սակայն հաշվի առնելով արարքի ու դրա համար կիրառված պատժի բնույթը,

Եվրոպական կոնվենցիայի իմաստով այն հավասարագոր է անձին քրեական մեղադրանքի համար դատապարտելուն: Հետևաբար սույն գործով Տ.Կոստանդյանի նկատմամբ կիրառված 10 օր կարգապահական կալանքն իր բնույթով և տևողությամբ հանդիսացել է քրեական պատիժ:

Բողոք բերած անձը գտել է, որ այս պայմաններում Տ.Կոստանդյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելով և քրեական հետապնդումը դադարեցնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում:

14. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածը, խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը և Տ.Կոստանդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնել:

Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Սույն գործով Վճռարեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ իրավական հարցին. Վճռարեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման առկայության պայմաններում օրինական և հիմնավորված է արդյոք Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը՝ քրեական գործի վարույթը կարճելու և Տ.Կոստանդյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասով:

16. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական արյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռարեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միարեսակ կիրառությունը: Վճռարեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի համաձայն՝ *«Վճռարեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռարեկ դատարանը՝*

(...)

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռարեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է

համապարասիան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ: Չբեկանված մասով դատարանն ակտիվ մնում է օրինական ուժի մեջ:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի (...) դատարանն ակտիվ հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարզադիր են դատարանի համար նույնանուն փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատչանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն արվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

16.1. Մեջբերված իրավական նորմերը վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Գ.Խնուսյանի վերաբերյալ որոշմամբ, որով դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) ստորադաս դատարանում գործի նոր քննության սահմանները կանխորոշվում են վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով և դրանով սահմանված նոր քննության ծավալով, ինչը բխում է արդարադատության արդյունավետության ապահովման խնդրից, մասնավորապես դատարանն ակտիվ բողոքարկման և կրկին բեկանման շրջապարույրից խուսափելու անհրաժեշտությունից: Բացի այդ, նման կարգավորումն անհրաժեշտ նախապայման է վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միարեսակ կիրառության ապահովման գործառույթի արդյունավետ իրականացման համար: Միասնական դատարանն արակտիվայի ձևավորումը հնարավոր է միայն ստորադաս դատարանի համար պարզադիր և ուղղորդող նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումների մշակմամբ:

(...)

[Ը]նդհանուր կանոնի համաձայն ստորադաս դատարանն իրավասու չէ դուրս գալ վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված գործի նոր քննության ծավալներից և, միևնույն ժամանակ, պարզավոր է կատարել գործի նոր քննության ծավալով սահմանված անհրաժեշտ դատավարական գործողությունները: Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և դրանով սահմանված նոր քննության ծավալը պարզադիր են ստորադաս դատարանի համար, ուղղորդում են գործի նոր քննությունը, սակայն չեն կանխորոշում դրա արդյունքը:

[Օ]րենսդիրը նախատեսել է վճռաբեկ դատարանի որոշման պարզադիրության ընդհանուր կանոնից բացառություն: Դատարանն ակտիվ կայացնելիս ստորադաս դատարանը կարող է չկատարել վճռաբեկ դատարանի որոշման պահանջները, որի դեպքում սակայն ծանրակշիռ փաստարկների մատչանշմամբ պետք է հիմնավորի այնպիսի բացառիկ

հանգամանքի առկայությունը, որի պայմաններում Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտած դիրքորոշումը կիրառելի չէ տվյալ գործով կամ նոր քննությունը չի կարող կատարվել սահմանված ծավալով: (...)» (տե՛ս Գևորգ Մերոբի Խնուսյանի գործով Վճարելի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 16-րդ և 18-րդ կետերը):

16.2. Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Գ.Խնուսյանի մասով գնահատելով սույն գործի փաստերը՝ Վճարելի դատարանն արձանագրել է. «(...) նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և դրանով սահմանված նոր քննության ծավալն իր համար պարտադիր բնույթ ունեն: Վերաքննիչ դատարանը, չկատարելով Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման պահանջը, ղեկավարվելով ընդհանրական բնույթ ունեցող ու քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք չհանդիսացող իրավական նորմով, իր դատական ակտում չի մատնանշել քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք, ինչպես նաև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չի հիմնավորել այնպիսի բացառիկ հանգամանքի առկայությունը, որի պայմաններում Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ արտահայտած դիրքորոշումը կիրառելի չէ տվյալ գործով կամ նոր քննությունը չի կարող կատարվել սահմանված ծավալով:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը ոչ միայն խախտել է (...) մեջբերված իրավանորմերի պահանջները, այլև սահմանափակել է Գ.Խնուսյանի իրավունքները՝ թույլ տալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտում» (տե՛ս Գևորգ Մերոբի Խնուսյանի գործով Վճարելի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 20-րդ կետը):

16.3. Այսպիսով, Վճարելի դատարանը դեռևս 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ անդրադարձել է Գ.Խնուսյանի մասով Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշման օրինականությանն ու հիմնավորվածությանը և արձանագրել, որ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում չի մատնանշել քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք՝ դրանով իսկ չկատարելով Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման պահանջը, ինչպես նաև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չի հիմնավորել այնպիսի բացառիկ հանգամանքի առկայությունը, որի պայմաններում Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ

արտահայտած դիրքորոշումը կիրառելի չէ տվյալ գործով կամ նոր քննությունը չի կարող կատարվել սահմանված ծավալով:

17. Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ օրենքով սահմանված ժամկետում վճարել բողոք է բերվել միայն Գ.Խնուսյանի մասով, իսկ Ս.Կոստանդյանի մասով վճարել բողոք չի ներկայացվել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), հետևաբար Վճարելի դատարանն իրավասու չի եղել գործը ստուգման ենթարկել նաև նրա մասով:

Արդյունքում Վճարելի դատարանը 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության միայն Գ.Խնուսյանի մասով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), իսկ Ս.Կոստանդյանի մասով Վերաքննիչ դատարանի դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ:

18. Հիմք ընդունելով *Գ.Խնուսյանի* վերաբերյալ գործով Վճարելի դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վճարելի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը՝ քրեական գործի վարույթը կարճելու և Ս.Կոստանդյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասով, օրինական և հիմնավորված չէ:

19. Վերոգրյալը Վճարելի դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը Ս.Կոստանդյանի մասով բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Ընդ որում, Վճարելի դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է հիմք ընդունի նաև նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված համապատասխան հիմքը գործադրելու կապակցությամբ *Գ.Խնուսյանի* վերաբերյալ Վճարելի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 22-29-րդ կետերում արտահայտած իրավական դիրքորոշումները:

20. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բեկանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերաքննիչ դատարանում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Տիգրան Ռուբենի Կոստանոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

11.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ2/0004/01/14

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
ամբաստանյալ պաշտպան	Կ.ԺԱԺՈՅԱՆԻ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ

2015 թվականի փետրվարի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Կարինե Հայկազի Ժաժոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 3111-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի օգոստոսի 5-ի որոշման դեմ ամբաստանյալ Կ.Ժաժոյանի պաշտպան Ա.Հայրապետյանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի ապրիլի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 3111-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 23101513 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի մայիսի 2-ի որոշմամբ Կարինե Հայկազի Ժաժոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի օգոստոսի 2-ի, 2014 թվականի մարտի 1-ի որոշումներով Կ.Ժաժոյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2014 թվականի մարտի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 30-ի դատավճռով Կ.Ժաժոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Կ.Ժաժոյանի պաշտպան Ա.Հայրապետյանի վերաբնիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 30-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 5-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Կ.Ժաժոյանի պաշտպան Ա.Հայրապետյանը:

Վճարելի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Կ.Ժաժոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [նա], հանդիսանալով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող, նպաստառու Սեդա Մամոյանից 2009 թվականի փետրվար ամսից մինչև 2013 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում մեկ միասնական դիրավորությամբ շորթմամբ պահանջել և սրացել է ընդհանուր 125.000 դրամ ապօրինի վարձատրություն, ինչպես նաև նույն եղանակով որպես ապօրինի վարձատրություն պահանջել է նաև 2013 թվականի 2 ամսվա նպաստի գումարը՝ 43.000 դրամ (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 223-224):

6. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 29-ի «Կաշառք

տալու կամ կաշառք ստանալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու մասին որոշման համաձայն. «Նկատի ունենալով, որ Կ.Ժաժոյանի նկատմամբ «կաշառք տալու կամ կաշառք ստանալու նմանակում» ՕՀՄ-ների անցկացմամբ հնարավոր է սրանալ վերջինիս հակաօրինական գործողությունները փաստող արույզ տվյալներ, որոնց օգտագործումը կնպաստի հանցագործության բացահայտմանն ու ապացույցների ձեռք բերմանը, քանզի վերջինիս գործողություններում հնարավոր է առկա լինեն հանցագործության հատկանիշներ, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդ. 2-րդ մասով և, ղեկավարվելով (...) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներով որոշեց (...) Կ.Ժաժոյանի նկատմամբ մեկ ամսյա ժամկետով իրականացնել «կաշառք տալու կամ կաշառք ստանալու նմանակում» ՕՀՄ (...)» (տես քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 10):

7. Առաջին ատյանի դատարանն իր՝ 2014 թվականի մայիսի 30-ի դատավճռում արձանագրել է. «Կարինե Ժաժոյանին առաջադրված մեղադրանքը հաստատված է համարվում նաև հետևյալ ապացույցներով՝

Փաստաթղթաբանական և նյութագիրական համալիր փորձաքննության թիվ 13-1469 եզրակացությամբ, (...)

Որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված Սեդա Մամոյանի ՀՀ ոստիկանության 6-րդ վարչության պետին 26.04.2013թ.-ին հասցեագրված դիմումով, (...)

30.04.2013թ. ոստիկանության Անիի բաժնում կազմված հաղորդում ընդունելու մասին արձանագրությամբ, (...)

Փողերի մշակման վերաբերյալ արձանագրությամբ, (...)

Դեպքի վայրը զննելու մասին արձանագրությամբ, (...)

Որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.04.2013թ. որոշման հիման վրա 30.04.2013թ. կատարված տեսաձայնագրության սկավառակով և դրա բովանդակությանը ծանոթանալու, դրանց վերաբերյալ գրառումներ կատարելու մասին արձանագրությամբ, (...)

Որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված «Հայփոստ» ՓԲԸ-ի Անիի մասնաճյուղ փոստային բաժանմունքից առգրավված քրեական գործով րուժող՝ Սեդա Մամոյանի նպաստի վճարման ցուցակներով, (...)

2013 թվականի ապրիլի 30-ին 22.000 ՀՀ դրամ կաշառքի առարկա հանդիսացող գումարը ներկայացնելու մասին արձանագրությամբ (...)

Քրեական գործով իրեն նաև ապացույց ճանաչված որպես ապօրինի վարձարություն տված 22.000 ՀՀ դրամով, ոստիկանության աշխատակիցներին Սեդա Մամոյանին վերադարձված 22.000 ՀՀ դրամով, Կարինե

Ժածոյանի «Սամսունգ» րեսակի «093-75-61-68» հեռախոսահամարի քջջային հեռախոսով, դեպքի վայրից առգրավված երկու ծրարներով: (...)

Դատարանը ձեռք բերված ապացույցները գնահատելով վերաբերելիության թույլատրելիության րեսանկյունից, դրանց համակցությամբ, հասարակված է համարում, որ ամբաստանյալ՝ Կարինե Հայկազի Ժածոյանը կարարել է ՀՀ քր. օր-ի 311¹ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախարեակված արարք, որով էլ նա պետք է քրեական պարասիանարվություն կրի» (տես քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 161-162):

8. Վերաքննիչ դատարանն իր՝ 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշման շրջանակներում արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանը հիմնարվոր չի համարում վերաքննիչ բողոքի փաստարկներն առ այն, որ մեղարանքի հիմքում դրված ապացույցները՝ փողերի մշակման վերաբերյալ արձանագրությունը, րեսաձայնագրության սկավառակը, որոնք հիմք են հանդիսացել փաստաթղթարանական և նյութագիրական համալիր փորձարնություն թիվ 13-1469 եզրակացության, րեսաձայնագրության սկավառակի բովանդակությանը ծանոթանալու, դրանց վերաբերյալ գրառումներ կարարելու մասին արձանագրության համար, (...) պետք է ճանաչվեն անթույլատրելի ապացույցներ, և գրնում է, որ նշված ապացույցները թույլատրելի են, քանի որ համարարասիան քննչական գործողությունների կարարման կարգի էական խախտումներ թույլ չեն րրվել:

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի փաստարկին առ այն, որ Կարինե Ժածոյանի նկարմամբ «Կաշառք րալու կամ կաշառք սրանալու նմանակում» օպերարիվ-հետախուզական միջացառումն անցկացնելու իրավունք և հնարավորություն «Օպերարիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը թույլ չի րալիս, քանի որ նշված օպերարիվ-հետախուզական միջացառումը կարող է իրականացվել միայն ՀՀ քրեական օրենագրքի 311-րդ և 312-րդ հոդվածներով նախարեակված հանցագործությունների բացահայրման համար, ապա վերաքննիչ դատարանը հիմնարվոր է համարում վերաքննիչ բողոքի պարասիանում այդ կապակցությամբ բերված հիմնարվորումները և արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենագրքի 311-րդ և 311.1-րդ հոդվածներով նախարեակված հանցակազմերը միմյանցից րարբերվում են հանցագործության սուբյեկտի առումով, իսկ օրենարքի կողմից օգրագործվող «կաշառք սրանալը» և «ապօրինի վարձարրություն սրանալը» հասկացությունները բիում են րվյալ իրավական սկրի էությունից, իսկ ՀՀ իրավական սկրերի մասին օրենքի ուժով հիշյալ հոդվածների վերնագրերը չեն կարող օգրագործվել հոդվածի մեկնարանման համար:

Բացի այդ, «Օպերարիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2007 թվականի հոկրեմբերի 22-ին, իսկ ՀՀ քրեական օրենագրքում փոփոխություններ և լրացումներ կարարելու մասին օրենքը, որով նախարեակվել է պաշրոնարար անձ չհանդիսացող հանրային

ծառայողի կողմից ապօրինի վարձարարություն սրանալը, ընդունվել է 2008 թվականի մայիսի 24-ին, այսինքն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունման ժամանակ քրեական օրենսգրքում վերոհիշյալ հոդվածը նախատեսված չի եղել:

Վերաքննիչ դատարանը նաև արձանագրում է, որ պաշտպանի կողմից վիճարկվող ապացույցները ձեռք են բերվել նաև «արտաքին և ներքին դիրում» օպերատիվ-հետախուզական միջացողումների արդյունքում:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին ասրյանի դատարանը պահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-127-րդ հոդվածների դրույթները, դատավճռում շարադրված ապացույցները ենթարկելով բազմակողմանի և օբյեկտիվ սրուզման, գրնելով, որ ապացույցները ձեռք են բերվել օրենքով սահմանված կարգով և դրանք անթույլարելի ճանաչելու հիմքեր չկան, հանգել է ճիշտ հետլության, որ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ բավարար են ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը գնահատելու և այն հիմնավորված համարելու համար: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 231-232):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատավարական իրավունքի խախտումներ, այն է՝ Առաջին ատյանի դատարանը, Կ.Ժաժոյանի նկատմամբ կայացնելով մեղադրական դատավճիռ, դրա հիմքում դրել է այնպիսի ապացույցներ, որոնք չէին կարող համարվել թույլատրելի, իսկ Վերաքննիչ դատարանն իր հերթին պատշաճ գնահատման չի ենթարկել նշված հանգամանքները:

Ըստ բողոք բերած անձի՝ Կ.Ժաժոյանի նկատմամբ չէր կարող իրականացվել «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, քանի որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը այդպիսի միջոցառման իրականացման հնարավորություն ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված հանցագործության բացահայտման նպատակով չի ընձեռում: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ հիշյալ օրենքի 30-րդ հոդվածը՝ որպես խնդրո առարկա օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման պարտադիր պայման, նախատեսել է, որ այդ միջոցառումը կարող է իրականացվել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման նպատակով, իսկ «կաշառք ստանալ» կամ «կաշառք տալ» հասկացությունները պետք է համապատասխանեն ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված իմաստներին: Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը եզրահանգել է, որ «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը չէր կարող

իրականացվել ՀՀ քրեական օրենսգրքի 311¹-րդ հոդվածով նախատեսված հանցագործության բացահայտման նպատակով, քանի որ նշված հանցակազմում գոյություն չունի «կաշառք» հասկացությունը, իսկ փոխանցվող գումարը հանդիսանում է ոչ թե «կաշառք», այլ «ապօրինի վարձատրություն»:

Սույն պատճառաբանությունների արդյունքում բողոք բերած անձը անընդունելի է համարել Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, որ «կաշառք ստանալ» և «ապօրինի վարձատրություն ստանալ» հասկացությունները բխում են տվյալ իրավական ակտի էությունից, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժով հոդվածների վերնագրերը չեն կարող օգտագործվել հոդվածի մեկնաբանման համար (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Անդրադառնալով քննարկվող խնդրի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի մյուս փաստարկին՝ կապված «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ ավելի վաղ ընդունված լինելու հետ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը)՝ բողոքաբերը կարծիք է ձևավորել առ այն, որ նման պատճառաբանությունը անընդունելի է, քանի որ եթե օրենսդիրը նպատակահարմար գտներ «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՀՄ-ի օգտագործումը նաև այլ հանցագործությունների բացահայտման համար, ապա համապատասխան փոփոխություններով այն կներառեր օրենսդրական ակտի մեջ:

9.1. Բողոքաբերը նշել է նաև, որ Կ.Ժաժոյանի նկատմամբ իրականացված «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում հավաքվել, պահպանվել և օգտագործվել են տեղեկություններ, որոնք նախատեսված չեն եղել օրենքով, ուստիև հանգեցրել են Կ.Ժաժոյանի՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտմանը: Հետևաբար փողերի մշակման վերաբերյալ արձանագրությունը և տեսաձայնագրության սկավառակը, որոնք էլ հիմք են հանդիսացել այլ տվյալների ձեռքբերման համար, մասնավորապես՝ փաստաթղթաբանական և նյութագիտական համալիր փորձաքննության թիվ 13-1469 եզրակացության, տեսաձայնագրության սկավառակի բովանդակությանը ծանոթանալու, դրանց վերաբերյալ գրառումներ կատարելու մասին արձանագրության համար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով պետք է ճանաչվեն անթույլատրելի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց:

10. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ դեպքի վայրի զննության արձանագրությունը անթույլատրելի ապացույց է, քանի որ այն իրականացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի խախտմամբ: Բացի այդ, դեպքի վայրի զննության անվան տակ իրականացվել է առգրավում, ինչպես նաև քննում, ինչը որևէ

գնահատման չի արժանացել դատարանի կողմից: Բողոքաբերը կարծում է նաև, որ առանց պաշտպանի մասնակցության կատարված քննչական գործողությունների ընթացքում ձեռք բերված ապացույցները չեն կարող թույլատրելի համարվել:

Անդրադառնալով արարքի քրեաիրավական որակման հետ կապված հարցերին՝ բողոքաբերը նշել է, որ դրանց առնչությամբ ստորադաս դատարանների հետևությունները իրավաչափ չեն: Ներկայացնելով նաև մի շարք այլ փաստարկներ՝ արդյունքում եզրահանգել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 365-րդ հոդվածների խախտումներ:

11. Բողոքաբերը փաստել է նաև, որ Կ.Ժաժոյանի նկատմամբ պետք է կիրառվեին ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ կամ 64-րդ հոդվածների պահանջները, քանի որ ստորադաս դատարանները գնահատման չեն արժանացրել կատարված արարքի և ամբաստանյալի անձի հանրային վտանգավորությունն էապես նվազեցնող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են նախկինում դատված, արատավորված չլինելը, դրակաՆորեն բնութագրվելը, թոռներ ունենալը, իր կողմից կատարած արարքի համար գոչալը, հանցանքը կյանքի ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով կատարելը, «թունավոր գոր» ախտորոշմամբ հիվանդություն և խնամքի ու բուժման կարիք ունենալը, ինչպես նաև 58-ամյա Կ.Ժաժոյանի առողջության վրա պատժի ռեալ կրման հետևանքները:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2014 թվականի մայիսի 30-ի դատավճիռը, ՀՀ վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 5-ի որոշումը և Կ.Ժաժոյանի նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ կամ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի հիման վրա Կ.Ժաժոյանի նկատմամբ նշանակել օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նրա նկատմամբ նշանակված պատիժը պայանականորեն չկիրառել:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառնություն իրացումն է: Վճարելի դատարանը գտնում է, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի (կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը) իմաստով «կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործություն»

հասկացության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդիր: Այս առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը կարող էր արդյոք իրականացվել պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Կ.Ժաժոյանի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու (ՀՀ քրեական օրենսգրքի 311¹-րդ հոդված) հանցագործությունը բացահայտելու նպատակով:

15. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կարող են իրականացվել օպերատիվ-հետախուզական հետևյալ միջոցառումներ՝

(...)

16) կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում: (...):»

Նույն օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում, կարող է իրականացվել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման համար բացառապես կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ արացած անձի գրավոր հայտարարության հիման վրա:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված իմաստով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները հավաստվում են բացառապես տեսանկարահանման կամ ձայնագրման միջոցով: Ընդ որում, տեսանկարահանումը կամ ձայնագրումը անձի բնակարանում իրականացվում է բացառապես դատարանի որոշմամբ»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանվում են այն դեպքերը, թե երբ կարող է իրականացվել «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը (այսուհետ՝ նաև ՕՀՄ): Մասնավորապես, Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը վկայում են, որ այն կարող է իրականացվել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման նպատակով: Ընդ որում, Օրենքում օգտագործվող «կաշառք ստանալ»

և «կաշառք տալ» հասկացությունները պետք է ընկալել բացառապես այն իմաստով, ինչպիսին սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքում:

Վերոշարադրյալից բխում է, որ «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՏՄ-ն չի կարող իրականացվել այնպիսի ենթադրյալ հանցավոր արարքների բացահայտման նպատակով, որոնք չեն հանդիսանում կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործություն: Այլ կերպ՝ համապատասխան դեպքերում քննարկման առարկա օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելը չի կարող համարվել իրավաչափ:

Վճռարեկ դատարանի վերջին դիրքորոշումը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) ձևավորած կայուն նախադեպային պրակտիկայից առ այն, որ գաղտնի բնույթի վերահսկողական միջոցառումներ իրականացնելիս իշխանության չարաշահումը բացառելու համար որպես նվազագույն երաշխիք պետք է ապահովվի, ի թիվս այլնի, օրենքում այն հանցագործությունների բնույթը հստակ սահմանելը, որոնք կարող են հիմք ծառայել միջամտության թույլտվություն ստանալու համար (*Կենն, օրինակ, Sefilyan v. Armenia, հունվարի 2-ի վճիռ, գանգապ թիվ 22491/08, կեր 125, Association for European Integration and Human Rights and Ekimdzhev v. Bulgaria, 2007 թվականի հունիսի 28-ի վճիռ, գանգապ թիվ 62540/00, կեր 76, Liberty and Others v. the United Kingdom, 2008 թվականի հուլիսի 1-ի վճիռ, գանգապ թիվ 58243/00, կեր 95 և այլն*): Հետևաբար հանցագործությունների շրջանակի տարածական մեկնաբանումը կհանգեցնի նաև Կոնվենցիայով երաշխավորված անձի իրավունքների և օրինական շահերի խախտման:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 311¹-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն սրանալը, այսինքն՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն սրանալը կամ պահանջելը կամ սրանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ վարձատրություն փոխողի կամ նրա ներկայացրած անձի օգտին հանրային ծառայողի կողմից իր լիազորությունների շրջանակներում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր ծառայողական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպատակով կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողություն համար պատժվում է [համապատասխան պատժով]»:

Մեջբերված նորմի բովանդակությունից հետևում է, որ այն պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու համար:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմում է ապօրինի վարձատրություն ստանալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը չի կարող իրականացվել ՀՀ քրեական օրենսգրքի 311¹-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայությունը բացահայտելու նպատակով: Վերջինս հիմնավորվում է ոչ միայն սույն որոշման 15-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումներով, այլև նրանով, որ հակառակ պարագայում «ապօրինի վարձատրություն ստանալ» և «կաշառք ստանալ» եզրույթները կնույնանան, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է:

Ավելին, այն, որ «ապօրինի վարձատրություն ստանալ» և «կաշառք ստանալ» եզրույթները չեն կարող ընկալվել միևնույն իմաստով, վկայում է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ինչպես 36-րդ հոդվածի 4-րդ մասը, ըստ որի՝ *«Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում փարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով»*, այնպես էլ 86-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ *«Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների փառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»*:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Կ.Ժաժոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311¹-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող, նպաստառու Ս.Մանոյանից 2009 թվականի փետրվար ամսից մինչև 2013 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում մեկ միասնական դիտավորությամբ շորթամբ պահանջել և ստացել է ընդհանուր 125.000 դրամ ապօրինի վարձատրություն, ինչպես նաև նույն եղանակով որպես ապօրինի վարձատրություն պահանջել է նաև 2013 թվականի 2 ամսվա նպաստի գումարը՝ 43.000 ՀՀ դրամ (տես սույն որոշման 5-րդ կետը):

Կ.Ժաժոյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայությունը բացահայտելու ու ապացույցներ ձեռք բերելու համար Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ բավարարվել է «կաշառք տալու կամ կաշառք ստանալու

նմանակում» ՕՀՄ անցկացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ստյանի դատարանը, Կ.Ժաժոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով կայացնելով մեղադրական դատավճիռ, որպես Կ.Ժաժոյանի մեղավորությունը հիմնավորող ապացույցներ, ի թիվս այլնի, նշել է փաստաթղթաբանական և նյութագիտական համալիր փորձաքննության թիվ 13-1469 եզրակացությունը, որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված Ս.Մամոյանի ՀՀ ոստիկանության 6-րդ վարչության պետին 26.04.2013թ.-ին հասցեագրված դիմումը, փողերի մշակման վերաբերյալ արձանագրությունը, դեպքի վայրի գնտության արձանագրությունը, որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 29-ի որոշման հիման վրա 2013 թվականի ապրիլի 30-ին կատարված տեսաձայնագրության սկավառակը և դրա բովանդակությանը ծանոթանալու, դրանց վերաբերյալ գրառումներ կատարելու մասին արձանագրությունը, 2013 թվականի ապրիլի 30-ին 22.000 ՀՀ դրամ կաշառքի առարկա հանդիսացող գումարը ներկայացնելու մասին արձանագրությունը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին անդրադառնալով վերաքննիչ բողոքի փաստարկին առ այն, որ Կ. Ժաժոյանի նկատմամբ «կաշառք տալու կամ կաշառք ստանալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջացառումն անցկացնելու իրավունք և հնարավորություն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը թույլ չի տալիս, արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ և 311.1-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը միմյանցից տարբերվում են հանցագործության սուբյեկտի առումով, իսկ օրենսդրի կողմից օգտագործվող «կաշառք ստանալ» և «ապօրինի վարձատրություն ստանալ» հասկացությունները բխում են տվյալ իրավական ակտի էությունից, միաժամանակ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժով հիշյալ հոդվածների վերնագրերը չեն կարող օգտագործվել հոդվածի մեկնաբանման համար:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2007 թվականի հոկտեմբերի 22-ին, իսկ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվել է պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը, ընդունվել է 2008 թվականի մայիսի 24-ին, այսինքն՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունման ժամանակ քրեական օրենսգրքում վերոհիշյալ հոդվածը նախատեսված չի եղել:

Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ վիճարկվող ապացույցները ձեռք են բերվել նաև «արտաքին և ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում:

Վերագրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը, դատավճռում շարադրված ապացույցները ենթարկելով բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման, գտնելով, որ ապացույցները ձեռք են բերվել օրենքով սահմանված կարգով և դրանք անթույլատրելի ճանաչելու հիմքեր չկան, հանգել է ճիշտ հետևության (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից հետևում է, որ «կաշառք տալու կամ կաշառք ստանալու նմանակում» ՕՀՄ իրականացնելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությունը դատարանի կողմից բավարարվել է Կ.Ժաժոյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի ոչ թե 311-րդ, այլ 311-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները բացահայտելու համար, մինչդեռ Կ.Ժաժոյանին մեղադրանք է առաջադրվել, և նա դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու համար:

18. Սույն որոշման 15-16-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը չէր կարող իրականացվել պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող Կ.Ժաժոյանի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու (ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդված) հանցագործությունը բացահայտելու նպատակով:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ օրենսդրի կողմից օգտագործվող «կաշառք ստանալ» և «ապօրինի վարձատրություն ստանալ» հասկացությունները բխում են տվյալ իրավական ակտի էությունից, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժով հիշյալ հոդվածների վերնագրերը չեն կարող օգտագործվել հոդվածի մեկնաբանման համար, ապա Վճարելի դատարանը դա անհիմն է համարում՝ հաշվի առնելով սույն որոշման 15-16-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունման պահին ՀՀ քրեական օրենսգրքի՝ ներկայիս 311-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը նախատեսված չի եղել, այն ՀՀ քրեական օրենսգրքում լրացվել է ավելի ուշ՝ Վճարելի դատարանն իր համաձայնությունն է հայտնում այդ կապակցությամբ բողոքաբերի արտահայտած այն կարծիքին, որ եթե օրենսդիրը նպատակահարմար գտներ «կաշառք

ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՀՄ-ի օգտագործումը նաև այլ, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված հանցագործության բացահայտման համար, ապա այդ նպատակով կկատարվեին համապատասխան օրենսդրական փոփոխություններ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, ոչ իրավաչափ չհամարելով «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված հանցագործության բացահայտման նպատակով, թույլ են տվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի խախտում, ինչն էլ իր հերթին հանգեցրել է ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված օրինականության սկզբունքի, այլև ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքնության իրավունքի խախտման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...)»:

Վերոգրյալ հանգամանքը Վճարելի դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկելու Առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 9.1-րդ կետում բարձրացրած փաստարկներին, ապա Վճարելի դատարանը, հիմք ընդունելով նաև Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ վիճարկվող ապացույցները ձեռք են բերվել նաև «արտաքին և ներքին դիտում» ՕՀՄ-ների արդյունքում, արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին աստիճանի դատարանը գործի հանգամանքների բազմակողմանի վերլուծության և գնահատման, ինչպես նաև ապացույցների թույլատրելիության վերաբերյալ Վճարելի դատարանի նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումների (*մասնրամասն, տե՛ս, Արմեն Սարգսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵԱԲԴ/0295/01/08 որոշումը, Ժիրայր Սեֆիլյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշումը*) հիման

վրա պետք է համապատասխան եզրահանգումներ կատարի բողոքաբերի վերոնշյալ փաստարկների առնչությամբ:

Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 10-րդ կետում նշված փաստարկներին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դրանց կապակցությամբ նույնպես Առաջին ատյանի դատարանը, գործում առկա ապացույցները գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից, պետք է հանգի համապատասխան եզրահանգման գործի նոր քննության ընթացքում:

Վճարելի դատարանը փաստում է նաև, որ ամբաստանյալ Կ.Ժաժոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ կամ 64-րդ հոդվածների պահանջների չկիրառման հետ կապված բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը) հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Կարինե Հայկազի Ժաժոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 30-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի օգոստոսի 5-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դափնիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

արորագրություն

Դատավորներ՝

արորագրություններ

12.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0121/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի մարտի 27-ին

ք.Երևանում

դոնրաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Բադալյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայություն (այսուհետ՝ ԱԱԾ) քննչական վարչության ավագ քննիչ Ա.Սիրականյանի՝ 2007 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ հարուցվել է թիվ 58211007 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2007 թվականի դեկտեմբերի 25-ին նշված գործով որպես մեղադրյալ է ներգրավվել Կարեն Քյուփեյլյանը, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասով:

2007 թվականի դեկտեմբերի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Նույն դատարանի՝ 2008 թվականի հունվարի 22-ի դատավճռով Կ.Քյուփեյյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Դատավճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

2. 2013 թվականի հուլիսի 16-ին Կ.Քյուփեյյանի կողմից «Iragir.am» համացանցային կայքի թղթակցին տված հարցազրույցի վերաբերյալ նախապատրաստված նյութերով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62207213 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով, 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, 308-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության ընթացքում Կ.Քյուփեյյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2007 թվականի նոյեմբերի 1-ին իրեն ՀՀ ԱԱԾ բերման ենթարկելուց հետո պահել են այնտեղ՝ ինչ-որ մի աշխատասենյակում, մինչև հաջորդ օրը, և որ գիշերն իր հետ աշխատասենյակում մնացել է ԱԱԾ աշխատակից Հրանտ Մազմանյանը:

2014 թվականի մայիսի 13-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Թամրազյանի (այսուհետ՝ նաև Քննիչ) որոշմամբ թիվ 62207213 քրեական գործով Հ. Մազմանյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել նրան քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

3. Վերոհիշյալ որոշման դեմ Հ.Մազմանյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին, ինչը ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազ Ա.Շահբազյանի (այսուհետ՝ նաև Դատախազ)՝ 2014 թվականի մայիսի 30-ի որոշմամբ մերժվել է:

4. 2014 թվականի հուլիսի 2-ին Հ.Մազմանյանը դիմել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել Քննիչի՝ 2014 թվականի մայիսի 13-ի և Դատախազի՝ 2014 թվականի մայիսի 30-ի որոշումները:

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ Հ.Մազմանյանի բողոքը մերժվել է:

5. Հ.Մազմանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 26-ի որոշումը րեկանել է և վերացրել Քննիչի՝ 2014 թվականի մայիսի 13-ի որոշումը:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Բադալյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հունվարի 30-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Հ.Մազմանյանի կողմից որպես վճարելի բողոքի պատասխան ներկայացվել է միջնորդություն, որով վերջինս խնդրել է քննության չառնել բողոքը:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2014 թվականի մայիսի 13-ի որոշման համաձայն՝ «*Թրեական գործի նախաքննությամբ հիմնավորվել է, որ Հ.Մազմանյանը, բերման ենթարկված Կ.Քյուփեյլյանին երեք ժամից ավել պահելու իրավունք չունենալով և պարտավոր լինելով նրան բաց թողնել, դիտարկությանը կատարել է այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իր լիազորությունների շրջանակից, 2007 թվականի նոյեմբերի 1-ին՝ ժամը 23.00-ից հետո՝ գիշերը, Կ.Քյուփեյլյանին պահել է իր աշխատասենյակում, որով էական վնաս է պարճատել Կ.Քյուփեյլյանի օրինական շահերին:*

Այսպիսով, Հ.Մազմանյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հանցակազմի հարկանիշներ:

(...)»:

Նախաքննության մարմինը, հիմնավորված համարելով, որ Հ.Մազմանյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջին ծանրության հանցագործություն և նկատի ունենալով նշված հանցանքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, 2014 թվականի մայիսի 13-ին որոշում է կայացրել Հ.Մազմանյանի նկատմամբ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին (տե՛ս քրեական գործի նյութեր, 7-9 թերթեր):

8. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի համաձայն՝ «*(...) [Հ]ատարարված է այն հանգամանքը, որ Կ.Քյուփեյլյանը իրոք ապօրինի պահվել է ՀՀ ԿԱ ԱԱԾ վարչական շենքում և 2-րդ հարկում գրավող թիվ 452 սենյակում, նրան պահել է Հ.Մազմանյանը, իսկ Հ.Մազմանյանին՝ Կ.Քյուփեյլյանին նշված շենքում պահելու մասին վերադասների կողմից ցուցում փախու հանգամանքը հերքվում է, քանի որ նախ առկա չէ նման ցուցում փախու արձանագրություն, իսկ կատարված հնարավոր բոլոր քննչական գործողությունների արդյունքում բանավոր ցուցում փախու վերաբերյալ բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել, և սպառվել են նոր ապացույցներ*

ձեռք բերելու բոլոր հնարավորությունները, որպիսի պայմաններում հնարավոր չէ հաստատել Է.Նանյանի և Տ.Աղաջանյանի կողմից Հ.Մազմանյանին նման ցուցում փայտ փաստը: Հեղինակարար, դատարանը գրնում է, որ ՀՀ հարուկ քննչական ծառայության ՀԿԳ ալվազ քննիչ Ա.Թամրազյանի՝ 2014 թվականի մայիսի 13-ի քրեական հետապնդում չիրականացնելու մասին և ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազ Ա.Շահրազյանի՝ 2014 թվականի մայիսի 30-ի բողոքը մերժելու մասին որոշումներն օրինական են ու հիմնավորված, և դրանց արդյունքում Հ.Մազմանյանի որևէ իրավունք չի խախտվել» (տե՛ս քրեական գործի նյութեր, 48-55 թերթեր):

9. Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Վճռարեկ դատարանի՝ Թ.Գևորգյանի վերաբերյալ գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԼԴ/0203/01/11 և Ա.Բաղդասարյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0009/11/13 որոշումները, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) համաներման ակտի կիրառմամբ կամ քրեական պարասխանարվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումների կայացման դեպքում անձի համաձայնության պարտադիր լինելու առումով, ըստ էության, հավասարազոր են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 13-րդ կետերով ամրագրված հիմքերը, և եթե համաներման ակտի կիրառման համար պարտադիր է անձի համաձայնությունը, ապա այն պարտադիր է նաև քրեական պարասխանարվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և անձի նկամամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ժամանակ:

(...) Ընդհանուր իրավասության դատարանը (...) կայացրել է դատական ակտ, որը խախտում է անձի, տվյալ դեպքում Հր.Մազմանյանի իրավունքները և օրինական շահերը, մասնավորապես, նկատի առնելով, որ վերջինս հանդիսացել է ՀՀ ԱԱԾ աշխատակից, քրեական պարասխանարվությունից ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ կետի՝ քրեական պարասխանարվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով, որը էությանմբ ոչ արդարացնող /ոչ ռեաբիլիտացիոն/ հիմք է, և Հ.Մազմանյանը համաձայնություն չի տվել նշված հիմքով քրեական պարասխանարվությունից ազատվելու համար:

Այսպիսով, վերլուծելով (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի պահանջները, դատարանը հանգում է այն հետևության, որ համաներման ակտ ընդունվելու և վաղեմության ժամկետներն անցնելու հիմքերով քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման հիմքերը դասվում են «ոչ արդարացնող» հիմքերի շարքին: Հեղինակարար, նման հիմքերով քրեական հետապնդման դադարեցման

պարագայում նախապես անձի համաձայնությունն սրանաչու օրենսդրական պահանջը նպարակ է հերապնդում պարզելու իր նկարմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 13-րդ կերերում նշված հիմքերով քրեական հերապնդում կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ անձի դիրքորոշումը: Տվյալ դեպքում սույն գործով Հ.Մազմանյանը չի րվել իր համաձայնությունը վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով իր նկարմամբ քրեական հերապնդում չիրականացնելու համար, ուստի դատարանը գրնում է, որ նախաքննական մարմնի՝ 13.05.2014թ. և ՀՀ գլխավոր դատախազությանը հասցեագրված միջնորդությունը մերժելու մասին 30.05.2014թ. որոշումներով խախրվել է Հրանսր Մազմանյանի իրավունքները և ազատությունները» (տե՛ս քրեական գործի նյութեր, 101-113 թերթեր):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական և հիմնավորված չէ, քանի որ դատական ակտ կայացնելիս թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Այսպես՝ բողոք բերած անձն անհիմն է համարել Վերաքննիչ դատարանի կողմից իր դատական ակտը Վճարելի դատարանի՝ Թ.Գևորգյանի վերաբերյալ գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԼԴ/0203/01/11 և Ա.Բաղդասարյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0009/11/13 որոշումներով հիմնավորելը՝ փաստարկելով, որ Վճարելի դատարանը վերոհիշյալ որոշումներով իրավական դիրքորոշում է արտահայտել համաներման ակտի կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի վերաբերյալ, իսկ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու խնդրին Վճարելի դատարանն անդրադարձել է Ա.Սաղաթելյանի գործով որոշման շրջանակներում և ձևավորել իրավական դիրքորոշում այն մասին, որ բոլոր այն դեպքերում, երբ քրեական գործը դեռ հարուցված չէ, կամ քրեական գործը հարուցվել է, սակայն որևէ անձի մեղադրանք չի առաջադրվել, և անցել են վաղեմության ժամկետները, ապա ենթադրյալ իրավախախտում կատարած անձի համաձայնությունն անհրաժեշտ չէ, և մինչդատական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է իր նախաձեռնությամբ հրաժարվել քրեական գործ հարուցելուց կամ որոշում կայացնել հարուցված քրեական գործի վարույթը կարճելու մասին:

Բողոքաբերի պնդմամբ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերում Վճարելի դատարանի՝ Ա.Սաղաթելյանի

գործով արտահայտված իրավական դիրքորոշման հակասական մեկնաբանությունը վկայում է այն մասին, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին քրեադատավարական նորմի միատեսակ կիրառության համար:

Բողոքում բարձրացված հարցը դիտարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով սահմանված անմեղության կանխավարկածի լույսի ներքո՝ բողոք բերած անձը կարծիք է հայտնել այն մասին, որ դրա վերաբերյալ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

11. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշումը և գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկվող դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճարելի դատարանը գտնում է, որ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելիս անձի դիրքորոշումը պարզելու իրավական պահանջի մեկնաբանման և կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այս առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

13. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ առանց Հ.Մազմանյանի համաձայնության վերջինիս նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելը խախտել է նրա իրավունքներն ու ազատությունները:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է. «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

Վերոհիշյալ իրավական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ա.Սաղաթելյանի* գործով որոշման մեջ՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Բ]րեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պարասխանաբլուրությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակումը ներհանուր կարգով: Ինչպես երևում է նշված արգելքը սահմանող իրավանորմի վերլուծությունից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կիրառման համար ենթադրյալ իրավահասարակում կարարած անձի համաձայնությունն անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ քրեական գործն արդեն իսկ հարուցված է, և անձը ներգրավվել է որպես մեղադրյալ, այսինքն՝ նրա նկատմամբ սկսվել է քրեական հետապնդումը:

Բոլոր այն դեպքերում, երբ քրեական գործը դեռ հարուցված չէ, կամ քրեական գործը հարուցվել է, սակայն որևէ անձի մեղադրանք չի առաջադրվել, և անցել են վաղեմության ժամկետները, սպա ենթադրյալ իրավահասարակում կարարած անձի համաձայնությունն անհրաժեշտ չէ, և մինչդարական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է իր նախաձեռնությամբ հրաժարվել քրեական գործ հարուցելուց կամ որոշում կայացնել հարուցված քրեական գործի վարույթը կարճելու մասին: Այլ կերպ՝ քրեական պարասխանաբլուրության ենթարկելու ժամկետներն անցած լինելն ինքնին բացառում է քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը՝ անկախ ենթադրյալ իրավահասարակում կարարած անձի համաձայնությունից կամ առարկությունից. համաձայնության հարցն առաջ է գալիս միայն կոնկրետ անձի նկատմամբ քրեական հետապնդում սկսելուց՝ նրան մեղադրանք առաջադրելուց հետո» (տե՛ս Ա.Սաղաթելյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշման 24-րդ կետը):

Վերահաստատելով Ա.Սաղաթելյանի գործով կայացված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը Միրաժ Ղամբարյանի և այլոց գործով որոշման շրջանակներում արձանագրել է. «(...) [Վ]աղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար մեղադրյալի համաձայնության առկայությունը բխում է անմեղության կանխավարկածի սկզբունքից և անձի արդար դատաքնության, մասնավորապես օրենքով սահմանված կարգով իր մեղավորության հարցը

համապատասխան դատական արյաններում վիճարկելու իրավունքից: Հերևարար, այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատական քննության միջոցով հասնել իր անմեղության ապացուցման (...)» (տե՛ս Սիրաժ Ղամբարյանի և այլոց գործով Վճռարեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշման 24-րդ կետը, տե՛ս նաև mutatis mutandis Հարություն Սարգսյանի գործով Վճռարեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԵԴ/0172/01/12 որոշման 14.1-րդ կետը):

15. Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումներն առ այն, որ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու համար պարտադիր նախապայման է մեղադրյալի համաձայնության առկայությունը, բխում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 18-20-րդ կետերի, ինչպես նաև 64-րդ և 203-րդ հոդվածների 1-ին մասերի բովանդակությունից, և դրանց համադրված վերլուծության արդյունք են: Սակայն գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ մինչդատական վարույթի որոշակի փուլում հայտնի լինի ենթադրյալ հանցանք կատարած անձը, բայց նախքան վերջինիս որպես մեղադրյալ ներգրավելը և նրան մեղադրանք առաջադրելն ի հայտ գան քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, մասնավորապես՝ պարզվի, որ անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները: Հաշվի առնելով, որ նման դեպքերում պետք է որոշում կայացվի ոչ թե անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու, այլ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ այդպիսի իրավիճակներում ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը պարզելու իրավական խնդրի առնչությամբ իր նախկինում արտահայտած դիրքորոշումները զարգացման անհրաժեշտություն ունեն:

16. Այսպես՝ Վճռարեկ դատարանը փաստում է, որ ոչ միայն քրեական հետապնդումը դադարեցնելու, այլ նաև քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կայացվում է ոչ թե դեպքի առթիվ, այլ անձի նկատմամբ, և վերջինիս համար առաջացնում է որոշակի իրավական հետևանքներ՝ կախված քրեական հետապնդումը բացառող կոնկրետ հիմքից:

Վերոգրյալի համատեքստում Դատարանը կրկնում է, որ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները լրացած լինելը քրեական գործով վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող ոչ արդարացնող (ոչ ռեաբիլիտացիոն) հիմք է (տե՛ս Ա.Բաղդասարյանի գործով Վճռարեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի

13-ի թիվ ԵԱԲԴ/0009/11/13 որոշման 16-րդ կետը): Իսկ ոչ ռեաբիլիտացիոն այս հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելու դեպքում ոչ թե փաստվում է նրա անմեղությունը, այլ վերջինիս մեղավորության հարցը մնում է չլուծված, այսինքն՝ անձը ձեռք չի բերում արդարացվածի կարգավիճակ՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով (անձը չի օգտվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով երաշխավորված արդարացվածի բոլոր իրավունքներից), ուստիև չեն բացառվում բացասական բնույթ ունեցող որոշ սոցիալ-իրավական հետևանքների առաջացումը (վնասի հատուցման պարտականություն, հետագայում աշխատանքի անցնելու խոչընդոտներ և այլն): Հետևաբար նշված հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելն առանց վերջինիս դիրքորոշումը (համաձայնությունը կամ առարկությունը) պարզելու գրկում է նրան իր անմեղության ապացուցման, իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի կարևորագույն իրավունքներից:

17. Նախորդ կետում կատարված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի տառացի օրենսդրական ձևակերպումից բխող այն կարգավորումը, որ համապատասխան ոչ արդարացնող հիմքով քրեական գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա) տեղ գտած «քրեական մեղադրանք» հասկացության ձևական մեկնաբանության արդյունք է:

Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ դիրքորոշման համար հիմք է ծառայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից «քրեական մեղադրանք» եզրույթին տրված մեկնաբանությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արձանագրել է, որ «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է ընկալվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ *բովանդակային* (գործնական) իմաստով: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «մեղադրանք» հասկացությունը կարող է ընդհանուր ձևով բնորոշվել որպես իրավասու մարմնի կողմից անձին տրված պաշտոնական ծանուցում վերջինիս կողմից հանցանք կատարած լինելու կասկածի առկայության մասին: Դա կարող է տեղի ունենալ նախքան գործը դատարան ուղարկելը, օրինակ՝ անձին ձերբակալելու, վերջինիս պաշտոնապես մեղադրանք առաջադրելու կամ **մինչդատական վարույթը սկսելու ժամանակ**: Առանձին դեպքերում անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ

ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (տե՛ս Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (*G.K. v. Poland*) գործով վճիռ, 2004թ., հունվարի 20, կետ 98, Սալովն ընդդեմ Ուկրաինայի (*Salov v. Ukraine*) գործով վճիռ, 2005թ., սեպտեմբերի 6, կետ 65, Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (*Subinski v. Slovenia*) գործով վճիռ, 2007թ., հունվարի 18, կետ 62):

Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս փաստելու, որ բոլոր այն դեպքերում, երբ քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելիս հայտնի է ենթադրյալ հանցանք կատարած անձը և վերջինիս անունը հիշատակվում է վերոհիշյալ դատավարական փաստաթղթերում, այլ կերպ՝ փաստվում է համապատասխան անձի կողմից հանրորեն վտանգավոր արարքի կատարումը, ապա կարելի է արձանագրել մեղադրանքի՝ փաստացի քրեական հետապնդման առկայության մասին: Հետևաբար փաստացի քրեական հետապնդման ենթարկված անձի դատավարական իրավունքների, մասնավորապես՝ պաշտպանության իրավունքի անհամաչափ սահմանափակում թույլ չտալու համար վերջինս պետք է օգտվի օրենքով չարգելված բոլոր միջոցներով իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանի այս հետևությունը հիմնված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ պարբերության այն պահանջի վրա, որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Իսկ անմիջականորեն գործող իրավունքը չի կարող լինել վերացական:

Այս հարցում Եվրոպական դատարանը ևս արտահայտել է համանման դիրքորոշում: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական և պատրանքային, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքներ: Դա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքին (տե՛ս *Արտիկոն ընդդեմ Իտալիայի* (*Artico v. Italy*) գործով վճիռ, 1980թ., մայիսի 13, կետ 33, Հերմին ընդդեմ Իտալիայի (*Hermi v. Italy*) գործով վճիռ, 2006թ., հոկտեմբեր 18, կետ 95):

18. Ելնելով վերոնշարադրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վաղեմության ժամկետները անցած լինելու հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդում չիրականացնելու, հարուցված քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելիս յուրաքանչյուր դեպքում, երբ հայտնի է ենթադրյալ հանցանք կատարած անձը, և փաստվում է համապատասխան անձի կողմից հանրորեն վտանգավոր արարքի կատարումը,

վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է պարզել այդ անձի դիրքորոշումը, քանի որ այն վարույթի հետագա ընթացքը կանխորոշելու հարցում էական դերակատարում ունի:

Ընդ որում, հարկ է ընդգծել, որ Վճարելի դատարանը համանման մտտեցում է դրսևորել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված մյուս՝ համաներման ակտի ընդունման հիմքի առնչությամբ՝ արձանագրելով. «(...)/Հ/ամաներման ակտի ընդունման հիմքով քրեական գործ չհարուցելու, քրեական հետապնդում չիրականացնելու և հարուցված քրեական գործը կարճելու՝ վարույթն իրականացնող մարմնի լիազորության իրականացման համար անհրաժեշտ իմպերատիվ պահանջ է հանդիսանում անձի համաձայնությունը» (տե՛ս Թադևոս Գևորգյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԼԴ/0203/01/11 որոշման 18-րդ կետը):

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ նախաքննության մարմինը, պարզելով, որ Հ.Մազմանյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջին ծանրության հանցագործություն, սակայն նկատի ունենալով, որ նշված հանցանքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցել են, առանց Հ.Մազմանյանի դիրքորոշումը պարզելու 2014 թվականի մայիսի 13-ին որոշում է կայացրել Հ.Մազմանյանի նկատմամբ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Քննիչի՝ 2014 թվականի մայիսի 13-ի, ինչպես նաև դրա դեմ բերված բողոքը մերժելու մասին Դատախազի՝ 2014 թվականի մայիսի 30-ի որոշումները Հ.Մազմանյանի կողմից բողոքարկվել են Առաջին ատյանի դատարան, որը համապատասխան բողոքը մերժել է՝ փաստելով, որ հիշյալ որոշումներն օրինական են ու հիմնավորված, և դրանց արդյունքում Հ.Մազմանյանի որևէ իրավունք չի խախտվել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, արձանագրել է, որ Քննիչի՝ 2014 թվականի մայիսի 13-ի և դրա դեմ բերված բողոքը մերժելու մասին Դատախազի՝ 2014 թվականի մայիսի 30-ի որոշումներով խախտվել են Հ.Մազմանյանի իրավունքներն ու ազատությունները, քանի որ Հ.Մազմանյանը չի տվել իր համաձայնությունը վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու համար (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

20. Սույն որոշման 14-18-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով սույն որոշման նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ առանց Հ.Մազմանյանի համաձայնության վերջինիս նկատմամբ քրեական

պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելը խախտել է նրա իրավունքներն ու ազատությունները, հիմնավոր է:

21. Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, հետևաբար բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը մերժել: Հրանտ Մկրտիչի Մազմանյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Թամրազյանի՝ 2014 թվականի մայիսի 13-ի որոշումը վերացնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

13.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ/0031/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ մասնակցությամբ պաշտպան ամբաստանյալ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ Ա.ԳԱՐՈՅԱՆԻ Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆԻ

2015 թվականի մարտի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Սարգիս Վաղարշակի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության վեցերորդ կայագորա-
յին քննչական բաժնում 2014 թվականի հունվարի 16-ին ՀՀ քրեական

օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 90750614 քրեական գործը:

2014 թվականի հունվարի 18-ին Սարգիս Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

2014 թվականի մարտի 6-ին Ս.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով:

2014 թվականի ապրիլի 15-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի հունիսի 24-ի դատավճռով ամբաստանյալ Ս.Խաչատրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և դատապարտել ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով: Նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան 4 (չորս) տարի ժամկետով:

3. Լոռու կայագործի զինվորական դատախազության դատախազ Ա.Անտոնյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունիսի 24-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշման դեմ Վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հունվարի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ս.Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն]ա, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ 51191 զորամասի 4-րդ հրաձգային զումարտակի ուսումնական վաշտի 1-ին դասակի 1-ին ջոկի հրամանատար, կոչումով կրպսեր սերժանտ, 2014 թվականի հունվարի 13-ից 14-ն ընդգրկված լինելով զորամասի օրվա վերակարգում, որպես ուսումնական վաշտի հերթապահ, ծառայողական դիրքով և կոչումով հանդիսանալով պետ, 2014 թվականի հունվարի 13-ին, ժամը 21:00-ի սահմաններում, 4-րդ զումարտակի զորանոցի լսարանում զինվորական ծառայության

պարտականությունների հետ չկապված՝ շարքային Գագիկ Հովհաննեսի Մարդոյանի հետ կապակելուն իր ստորադրյալ, նույն վաշտի ժամկետային զինծառայող, շարքային Վարդան Լադիկի Վարդանյանի կողմից միջամրելու պարճատով, վրդովվել և բնություն է գործադրել վերջինիս նկարմամբ՝ գրպանում եղած, որպես զենք օգտագործվող կենցաղային դանակով հարվածել է շարքային Վ.Լ. Վարդանյանի որովայնի շրջանին՝ վերջինիս առողջությանը պարճատելով թեթև վնաս (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 228):

6. Առաջին առյանի դատարանն իր դատական ակտում արճանագրել է. «(...) [Դ]արարանը գրնում է, որ (...) ապացույցների համադրված վերլուծության ու գնահատման արդյունքում ամբաստանյալին մեղսագրված մեղադրանքի ծավալը ենթակա է փոփոխման այն առումով, որ ամբաստանյալը և տուժողը իրոք կապակել և միմյանց քաշքշել են, և որ ամբաստանյալը, բռնելով գորամասի խոհանոցային դանակի շեղքի ծայրամասից, թեկուզ կապակով փորճել է տուժողին ցավ պարճատել ու երբ վերջինս բացականչել է «վախ», նա դադարել է ինչ-որ գործողություն կարարել, նկարել է տուժողի որովայնի հարվածում արյան առկայությունը և ուշագնաց եղել, ապա ոչ միայն օգնել է վիրակապել, այլև պարբերարար հեղնելով տուժողի ինքնագագողությանը անհանգստացել ու կարարվածի մասին հայրնել է հրամանարարությանը:

Պարիժ նշանակելիս դարարանը հաշվի է առնում ոչ միայն կարարված հանցագործության բնույթը և հասարակական վրանգավորության ասրիճանը, այլև ամբաստանյալի անճր բնութագրող հանգամանքները՝ այն, որ երիտասարդ է, նախկինում դարարարված կամ այլ կերպ արարավորված չի եղել, բնութագրվում է դրականորեն, միակողմանի ճողագուրկ է, ճողայության ընթացքում արճանացել է բազմաթիվ իրախուսանքների, ճողայական որևէ իսխարում թույլ չի տվել, տուժողի հետ եղել և մնում է հաշր փոխհարարբրության մեջ, վերջինս բողոք կամ պահանջ չունի, ինչպես նաև դեպքից հետո ամբաստանյալի դրսևորած օրինակելի վարքագիճը:

Գործով ամբաստանյալի պարասխանարվությունը և պարիճը մեղմացնող ու ճանրացնող հանգամանքներ ճեռք չեն բերվել:

Նշված հանգամանքներն իրենց համակցությամբ հիմք են տալիս դարարանին հանգելու այն հեղնության, որ ուղղման առումով ամբաստանյալին հասարակությունից մեղուսացնելու կարիք չկա, ուարի, ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հողվածի 3-րդ մասի 3-րդ, 4-րդ կերերով նախարեկված ազարագրկման ճնով պարիճը նշանակելիս այն պերք է պայմանականորեն չկիրառել և սահմանել որոշակի ժամկետով փորճաշրջան (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 78-79):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճողարանական մասում արճանագրել է. «(...) Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին

արյանի դատարանը ամբաստանյալ Մարգիս Խաչատրյանի նկատմամբ պարիժ նշանակելիս հաշվի է առել ոչ միայն կատարված հանցագործության բնույթը և հասարակական վրանգավորության աստիճանը, այլև ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքները (...) և նպատակահարմար է գրել ամբաստանյալի նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

(...)

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ սույն գործով Առաջին արյանի դատարանն ամբաստանյալի նկատմամբ նշանակված պարժարեաակի, պարժաչափի և պարիժը կրելու նպատակահարմարության հարցում հանգել է ճիշտ հետևության, դատավճիռն օրինական է, հիմնավորված և պարժատարանված, այն կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահանջների պահպանմամբ, հետևաբար պետք է թողնել օրինական ուժի մեջ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 169, 171):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձի պնդմամբ ստորադաս դատարանները, ամբաստանյալ Ս.Խաչատրյանի նկատմամբ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, թույլ են տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի հիմնարար խախտում, ինչը դատական ակտը բեկանելու հիմք է:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ մեջբերելով Վճարելի դատարանի մի շարք գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքի հեղինակը փաստարկել է, որ Ս.Խաչատրյանին վերագրվող արարքի հանրային վտանգավորությունը գնահատելիս ստորադաս դատարանները հաշվի չեն առել մի շարք հանգամանքներ, մասնավորապես այն, որ Ս.Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով, այսինքն՝ նրա արարքում առկա է հանցակազմը որակյալ դարձնող երկու հանգամանք, ինչը բարձրացնում է վերջինիս արարքի հանրային վտանգավորության աստիճանը, բացի այդ, արարքը կատարվել է դիտավորությամբ, չնչին առիթով, այն դասվում է ծանր հանցագործությունների շարքին:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է մասնակիորեն բեկանել և փոփոխել Առաջին արյանի դատարանի՝ 2014 թվականի հունիսի 24-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշումը՝ վերացնելով ամբաստանյալ Ս.Խաչատրյանի նկատմամբ կիրառված ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննարկելիս արարքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի գնահատման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք ամբաստանյալ Ս.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը, կայանքի, ազատագրվման կամ կարգապահական գումարակրում պահելու ձևով պարիժ նշանակելով, հանգում է հերևության, որ դատարարության ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պարիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պարասիանավորությունը և պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Սույն քրեաիրավական նորմերը Վճարելի դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված որոշումներում (ԵԱԴԴ/0034/01/12, ԼԴ/0093/01/12, ՏԴ/0018/01/13, ԵԷԴ/0132/01/13, ԵԱՆԴ/0060/01/13, ԵԿԴ/0096/01/13, ԵԿԴ/0252/01/13, ԵՄԴ/0027/01/14, ԳԴ/0014/01/14, ՍԴ/0204/01/13 և այլն), և կայուն նախադեպային իրավունք է ձևավորվել այն մասին, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճարելի դատարանը փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքի ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական

հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (*հանցագործության հանրային վրանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տեսնելու Գարուշ Մադաթյանի՝ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 գործով, Արմեն Շահբազյանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 գործով, Արարայր Ավագյանի և Վահան Սահակյանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 գործով Վճարելի դատարանի որոշումները*):

Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վրա ազդող վերը նշված գործոններից մեղքի ձևի հետ կապված՝ Վճարելի դատարանն իր նախադեպային իրավունքում նաև արձանագրել է. «(...) [Մ]եղքի դիրավորյալ ձևով կատարվող հանցագործությունների ժամանակ առավել բարձր հանրային վրանգավորություն ունեն ուղղակի դիրավորյալ կատարվող արարքները, որոնք ենթադրում են հանցավորի կողմից հանրորեն վրանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիության կամ իրական հնարավորության նախադեպում: Ընդ որում, արարքի վրանգավոր հետևանքների առաջացումը նախադեպում ընդգրկում է ոչ միայն սպազայում սպասվելիք փոփոխությունների փաստական բովանդակության գիրակցումը, այլև այդ փոփոխությունների սոցիալական նշանակության (հանրային վրանգավորության) գիրակցումը: Բոլոր այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձի կողմից հարակ գիրակցվում է արարքի և վրանգավոր հետևանքների միջև առկա միանշանակ պարճատական կապը և դրա զարգացումը, այսինքն՝ առկա է վրանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիության նախադեպում, օբյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վրանգավորության աստիճանը: Այս դեպքում հանցագործության սուբյեկտի պատրաստվածությունը, հանցանքի կատարման եղանակը, իրադրությունը, օգրագործվող գործիքները, միջոցներն իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վրանգավոր հետևանքների առաջացումը՝ հանցավորի մոտ միանշանակ վարահություն առաջացնելով իր նպատակների անխուսափելի իրագործման մեջ (...)» (տես Արմեն Շահբազյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թշվ ԵՇԴ/0143/01/13 որոշման 14-րդ կետը):

13. ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում գորամատում կամ գինվորական ծառայություն կրելու այլ վայրում ստորադասին (ենթակային) ծեծելու կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելու կամ ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպանալիքի

համար, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ:

Իսկ սույն հոդվածի 3-րդ մասը որպես վերոգրյալ հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք, ի թիվս այլնի, նախատեսում է համապատասխան արարքի կատարումը՝ զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկա գործադրելով կամ առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելով:

Վճարելի դատարանը, հաշվի առնելով զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների բնույթն ու առանձնահատկությունները, իր մի շարք որոշումներում փաստարկել է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս դատարանը արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում այլ տվյալների հետ մեկտեղ պետք է պատշաճ գնահատման ենթարկի նաև հանցանքի կատարմանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, հանցավոր վարքագծի դրսևորման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, տուժողի վարքագիծը (տես Հրանտ Գարսնյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԷԴ/0132/01/13 որոշման 15-րդ կետը, Նիկոլայ Չարմազյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՆԴ/0060/01/13 որոշման 17-րդ կետը):

14. Վերահաստատելով և սույն որոշման 12-րդ կետում տեղ գտած դատողությունների լույսի ներքո զարգացնելով նախորդ կետում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելու դեպքում պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս հատկապես կարևոր է հաշվի առնել նաև հանցանքի կատարման գործիքներն ու միջոցները, պատճառված վնասի չափը, անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ: Մասնավորապես կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում վնաս պատճառելու համար օգտագործված տարատեսակ գործիքները, առարկաները կամ սարքավորումները, վնասվածքի տեղակայումը, հանցավորի պատրաստվածությունը, մեղքի դիտավորյալ ձևը (հատկապես՝ ուղղակի դիտավորությունը) իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, մեծացնում հանցագործությունը հաջողությամբ ավարտին հասցնելու կամ ավելի մեծ վնաս պատճառելու հավանականությունը: Հետևաբար նման դեպքերում օրյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վտանգավորության աստիճանը:

Միաժամանակ Վճարելի դատարանը կրկնում է, որ ինչպես հանցագործության, այնպես էլ հանցավորի անձի հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին ակնհայտորեն վկայում է նաև անձի արարքում մեկից ավելի ծանրացնող հանգամանքների առկայությունը, հետևաբար

այդ հանգամանքը նույնպես պետք է համաչափ գնահատականի արժանանա դատարանի կողմից և հաշվի առնվի պատիժ նշանակելիս և այն պայմանականորեն չկիրառելիս (մանրամասն տես Գարսևան Ոսկանյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԼԴ/0119/01/13 որոշումը):

15. Վճարելի դատարանը հարկ է համարում նշել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձը ոչ միայն ոտնձգում է անձի կյանքի և առողջության դեմ, այլև խախտում զինվորական կանոնադրքերով սահմանված ենթակայության կարգը, ինչը վկայում է վերջինիս կողմից զինվորական ծառայության նկատմամբ ունեցած անբարեխիղճ վերաբերմունքի մասին, որն էլ վերջին հաշվով բացասական ազդեցություն է գործում զինվորական կարգապահության, ՀՀ զինված ուժերի մարտական պատրաստվածության վրա:

«ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Կանոնագիրք) 76-րդ հոդվածի համաձայն՝ «Հրամանատարը (պետը) պարտավոր է պետության մեջ և զինված ուժերում լուծվող խնդիրների հիման վրա մշտապես դաստիարակել ենթականերին՝

(...)

- նրբազգացություն և ուշադրություն ցուցաբերել ենթակաների նկատմամբ, փոխհարաբերությունների մեջ թույլ չտալ անտակտություն և կոպտություն, բարձր պահանջկոտությունն ու սկզբունքայնությունը համատեղել նրանց անձնական արժանապատվության հարգման հետ (...):»:

Նույն օրենքի 77-րդ հոդվածի համաձայն՝ «Հրամանատարը (պետը) պարտավոր է մշտապես պահպանել զինվորական ամուր կարգապահություն և անձնակազմի բարոյահոգեբանական բարձր մակարդակ՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագրքի դրույթներով (...):»:

Վերլուծելով վերը մեջբերված նորմերը, ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերը, 4-րդ հոդվածի 2-րդ մասը, 3-րդ մասի 6-րդ կետը՝ Վճարելի դատարանը կրկնում է, որ զինվորական ծառայության կարգի պահպանումը, որի միջոցով ապահովվում է ՀՀ զինված ուժերի մշտական մարտական պատրաստականությունը, բոլոր զինծառայողների, հատկապես պետերի (հրամանատարների) պարտականությունն է: Զինծառայողները, զինվորական պետերը (հրամանատարները) պարտավոր են միմյանց և ենթակաների նկատմամբ հարգանք դրսևորել, պահպանել նրանց անձնական արժանապատվությունը և զինվորական քաղաքավարության կանոնները (տես Նիկոլայ Չաքմազյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՆԴ/0060/01/13 որոշման 17-րդ կետը):

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ ամբաստանյալ Ս.Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զինվորական ծառայության պարտականությունների հետ չկապված, բռնություն է գործադրել իր ստորադրյալ, շարքային Վ.Վարդանյանի նկատմամբ՝ գրպանում եղած որպես զենք օգտագործվող կենցաղային դանակով հարվածելով վերջինիս որովայնի շրջանին, ինչի արդյունքում Վ.Վարդանյանի առողջությանը պատճառվել է թեթև վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, փաստելով, որ հաշվի է առնում նաև կատարված հանցագործության բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը, հանգել է այն հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված ազատազրկման ձևով պատիժը նշանակելիս այն պետք է պայմանականորեն չկիրառել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Իր հերթին Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, այն թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ս.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պատշաճ գնահատականի չեն արժանացրել կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, մասնավորապես՝

ա) վերլուծության չեն ենթարկել այն հանգամանքը, որ Ս.Խաչատրյանը տուժողի որովայնի շրջանում հարված է հասցրել որպես զենք օգտագործվող կենցաղային դանակով, ինչն օբյեկտիվորեն բարձրացնում է կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը,

բ) չեն գնահատել հանցավորի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ, մասնավորապես այն, որ ամբաստանյալը գործել է ուղղակի դիտավորությամբ՝ գիտակցել է իր արարքի հանրային վտանգավորությունը, նախատեսել առողջությանը վնաս պատճառելու անխուսափելիությունը և ցանկացել դրան վնաս հասնելը: Վերոնշյալի մասին է վկայում գործում առկա այն տվյալները, որ ամբաստանյալը բռնել է դանակի շեղքի ծայրից, այնուհետև՝ հարված հասցրել, այսինքն՝ Ս.Խաչատրյանի դիտավորությունն ուղղված է եղել տուժողի առողջությանը հենց նման վնաս պատճառելուն,

գ) գնահատման չեն ենթարկել ամբաստանյալի արարքում հանցագործությունը որակյալ դարձնող երկու հանգամանքների առկայությունը՝ արարքի կատարումը որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ և առողջությանը թեթև վնաս պատճառելով,

դ) հաշվի չեն առել խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ ամբաստանյալը, լինելով ջուրի հրամանատար, կոչումով և ծառայողական դիրքով պետ, ընդգրկված լինելով զորամասի օրվա վերակարգում որպես ուսումնական վաշտի հերթապահ, բռնություն է գործադրել իր ենթակայի նկատմամբ:

Հետևաբար ամբաստանյալ Ս.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն իրավաչափ է:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված դատական սխալներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 397-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Սարգիս Վաղարշակի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

14.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴՆ/0006/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի մարտի 27-ին

ք.Երևանում

դոնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի նոյեմբերի 6-ի որոշման դեմ ամբաստանյալ Արայիկ Օնիկի Խաչատրյանի պաշտպան Գ.Մադոյանի վճռաբեկ բողոքը»

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի հուլիսի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասի և 34-138-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 20116413 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2013 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ Արայիկ Օնիկի Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով և 34-138-րդ հոդվածի 1-ին մասով:

2013 թվականի դեկտեմբերի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 6-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-138-րդ հոդվածի 1-ին մասով և 147-րդ հոդվածի 2-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 34-138-րդ հոդվածի 1-ին մասով նա դատապարտվել է ազատազրկման՝ 3 տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման՝ 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով պատիժները լրիվ գումարելու միջոցով ամբաստանյալ Ա.Խաչատրյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 տարի 6 ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Խաչատրյանի և նրա պաշտպան Գ.Մադոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է և Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 6-ի դատավճիռը թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի նոյեմբերի 6-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Ա.Խաչատրյանի պաշտպան Գ.Մադոյանը:

Վճարելի դատարանի 2015 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Խաչատրյանի պաշտպան Գ.Մադոյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Ամբաստանյալ Ա.Խաչատրյանը դատապարտվել է այն բանի համար, որ «նա 2013թ-ի հուլիսի 28-ին ժամը 23:30-ի սահմաններում, ոգելից խմիչք օգտագործած և հարբած վիճակում պահանջել է Աննա Ավակիմյանից, որ վերջինս իր՝ Կոտայքի մարզի Արզնի գյուղի 5-րդ փողոցի 43-րդ տան մուտքի դուռը բացի և իրեն ներս թողնի, հակառակ դեպքում կկորրի տան պատուհանի ապակիները և վերջինիս հետ սեռական հարաբերություն ունենալու նպատակով այնտեղից տուն մուտք կգործի, որից հետո կորրելով նշված տան պատուհանի ապակիները, կորրված ապակու տեղով Աննա Ավակիմյանի կամքին հակառակ ապօրինի մուտք է գործել նրա տուն, որից հետո նրա կամքին հակառակ փորձել է սեռական հարաբերություն ունենալ նրա հետ, սակայն Աննա Ավակիմյանը դիմադրել է, մահակով հարվածել է և փախել տանից, ինչի հետևանքով Արայիկ

Իտաշարրյանն իր հանցավոր մտադրությունը՝ Աննա Ավակիմյանի կամքին հակառակ նրա հետ սեռական հարաբերություն ունենալն ավարտին չի հասցրել» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 161):

6. 2013 թվականի նոյեմբերի 14-ի դատահոգեբանական-դատահոգեբուժական համալիր փորձաքննության թիվ 12-2928 եզրակացության (այսուհետ նաև՝ Փորձագիտական եզրակացություն) «հետևություններ» մասի համաձայն՝ «(...) Աննա Ավակիմյանը տառապել և տառապում է «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև» հոգեկան հիվանդությամբ: Վերը նշված ախտորոշմանը բնորոշ փոփոխությունները /գառանցական մտքերի առկայությունը, մտածողության անկապությունը, դատողությունների թեթևակշռությունը, անհեթեթությունը/ արտահայտված են այն աստիճան, որ զրկում են երևոյթները ճիշտ գիտակցելու, ընկալելու, ինչպես նաև վերարտադրելու ունակությունից: (...) Իր ներկա հոգեկան վիճակով Աննա Ավակիմյանը կարող է աղավաղել իր հետ կատարված և կատարվող գործողությունները:

(...)

Աննա Ավակիմյանին բնորոշ է գառանցական մտքերի առկայությունը (...):

(...) Աննա Ավակիմյանը բավարար տեղեկացված է սեռերի միջև փոխհարաբերությունների, սեռական հարաբերությունների վերաբերյալ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 166):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն. «(...) Թեև փորձագետի եզրակացության համաձայն՝ տուժող Աննա Ավակիմյանը տառապել և տառապում է «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև» հոգեկան հիվանդությամբ, ինչի բնորոշ փոփոխություններն (գառանցական մտքերի առկայությունը, մտածողության անկապակցվածությունը, դատողությունների թեթևակշռությունը, անհեթեթությունը) արտահայտված են այն աստիճան, որ զրկում են երևոյթները ճիշտ գիտակցելու, ընկալելու, ինչպես նաև վերարտադրելու ունակությունից, նա կարող է աղավաղել իր հետ կատարված և կատարվող գործողությունները, նրան բնորոշ է գառանցական մտքերի առկայությունը, սակայն Դատարանը գտնում է, որ սույն դեպքի կապակցությամբ Աննա Ավակիմյանի ցուցմունքն արժանահավատ է և այն պետք է դնել սույն դատավճռի հիմքում, քանի որ սույն գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների տեսանկյունից նշված ցուցմունքում դեպքի կապակցությամբ նրա կողմից հայտնված տվյալների մի մասը, ինչպես միմյանց, այնպես էլ սույն քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցներով արացված տվյալների հետ համընկնում ու փոխկապակցվում են (...):

(...) Դատարանը գտնում է, որ եթե տուժող Աննա Ավակիմյանն ունակ է ճիշտ ընկալելու և վերարտադրելու վերը թվարկված փաստական

հանգամանքները, հերևապես ողջամերոբեն չի կարող կասկածի րակ առնվել նրա ցուցմունքում նշված այն րվյալները, որ Արայիկ Խաչատրյանը նրա կամքին հակառակ ապօրինի մուրք է գործել նրա բնակարան, ինչպես նաև նրա կամքին հակառակ փորձել սեռական հարաբերություն ունենալ նրա հետ: Ավելին՝ փորձագերի եզրակացության համաձայն՝ Աննա Ավակիմյանը բավարար րեղեկացված է սեռերի միջև փոխհարաբերությունների, սեռական հարաբերությունների վերաբերյալ» (րեն քրեական գործ, հարոր 2, թերթ 166):

8. Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաձայն. «Գործի փաստական րվյալներով չի արձանագրվել որևէ հանգամանք, որը կարող էր հիմք հանդիսանալ րուժող Աննա Ավակիմյանի կողմից րված ցուցմունքներն անարժանահավար համարելու համար, առավել ևս, որ դրանցում որևէ էական հակասություն չկա և դրանք հասարարվում են նաև գործով ձեռք բերված մյուս ապացույցներով վկաներ Լուսիկ Մարտիրոսյանի, Շուշանիկ Գրիգորյանի, Տիգրան Մամվելյանի, Արա Բաղդասարյանի (...) ցուցմունքներով, որոնք իրենց համակցությամբ թույլարելի և բավարար են ամբասարանյալ Խաչատրյանին մեղսագրված հանցանքը հիմնարարված համարելու համար (...)» (տեն քրեական գործ, հատոր 3, թերթ 121):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքարերը գտնում է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ հոդվածների, 86-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 105-րդ և 210-րդ հոդվածների պահանջները:

Մասնավորապես բողոքարերը նշել է, որ Ա.Խաչատրյանի վերաբերյալ մեղադրական դատավճռի հիմքում դրվել են տուժող Ա.Ավակիմյանի ցուցմունքներն ու նրա մասնակցությամբ կատարված առերես հարցաքննության արձանագրությունը: Մինչդեռ Փորձագիտական եզրակացության համաձայն Ա.Ավակիմյանը տառապում է «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև» հոգեկան հիվանդությամբ, որը նրան գրկում է երևույթները ճիշտ գիտակցելու, ընկալելու, ինչպես նաև վերարտադրելու ունակությունից: Հետևաբար տուժող Ա.Ավակիմյանի ցուցմունքներն ու նրա մասնակցությամբ կատարված առերես հարցաքննության արձանագրությունը անթույլարելի ապացույցներ են և չեն կարող դրվել ամբաստանյալի դատապարտման հիմքով:

10. Բողոքարերը նշել է նաև, որ քրեական գործով վկաներ Լ.Մարտիրոսյանի, Շ.Գրիգորյանի, ոստիկանության աշխատակիցներ Ա.Բաղդասարյանի և Ա.Մամվելյանի ցուցմունքները գնահատելիս ստորադաս դատարանները պետք է հաշվի առնեին, որ վկաների իրագեկվածության

աղբյուրը եղել է տուժող Ա.Ավակիմյանը: Ինչ վերաբերում է նրան, որ ոստիկանության աշխատակիցներ Ա.Բաղդասարյանը և Ա.Սամվելյանը, համաձայն իրենց ցուցմունքների, ականատես են եղել դեպքի վայր ժամանելուց հետո կատարված իրադարձություններին, ապա դա չի կարող բավարար համարվել Ա.Խաչատրյանի կողմից իրեն մեղսագրված արարքը կատարելը ապացուցելու համար:

11. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ նախաքննության ընթացքում չեն առգրավվել տուժողի և ամբաստանյալի հագուստները, դրանք չեն զննվել, չեն նշանակվել անհրաժեշտ միկրոմասնիկային և դատակենսաբանական փորձաքննություններ, որոնց արդյունքում կպարզվեր տուժողի և Ա.Խաչատրյանի հագուստների վրա մյուս կողմի հագուստների միկրոմասնիկների առկայությունը կամ բացակայությունը, դրանց տեղակայումը, բացի այդ, տուժողի հագուստների վրա սերմնահեղուկի հետքերի առկայությունը կամ բացակայությունը, առկայության դեպքում՝ դրանց տեղակայումը և Ա.Խաչատրյանի կողմից թողնված լինելու հնարավորությունը: Արդյունքում ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ նախաքննության մարմինը պատշաճ չի իրականացրել գործի հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտման համար օրենքով նախատեսված բոլոր միջոցները ձեռնարկելու իր պարտականությունը:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ ճանաչելով ու հռչակելով Ա.Խաչատրյանի անմեղությունը նրան առաջադրված մեղադրանքում կամ գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

13. Վճարելի դատարանը գտնում է, որ հոգեկան կամ ֆիզիկական պակասություններ ունեցող տուժողի կողմից ցուցմունք տալու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ոստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավասու էին արդյո՞ք ստորադաս դատարանները տուժող Աննա Ավակիմյանի ցուցմունքները և ամբաստանյալի հետ առերես հարցաքննության արձանագրությունը դնել ամբաստանյալի դատապարտման հիմքում այն դեպքում, երբ տուժողը տառապում է հոգեկան հիվանդությամբ:

15. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի (...) իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար (...) արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի (...) քննության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի համաձայն՝

«Տուժողի հարցաքննությունը կատարվում է վկայի հարցաքննության համար՝ սույն օրենսգրքով սահմանված կանոններով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել՝

1) անձինք, որոնք ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները (...)»:

15.1. Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ տուժողն այն անձն է, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է կամ այդ արարքը կատարելն ավարտվելու դեպքում կարող էր պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մաս): Նա քրեական դատավարությանը մասնակցում է որպես մեղադրանքի կողմի սուրյեկտ և գործով օժտված է սեփական շահերով, որոնց ապահովման համար սահմանված են տուժողի մի շարք դատավարական իրավունքներ և պարտականություններ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդված), որոնցից է նաև ցուցմունք տալու իրավունքը և պարտականությունը: Հետևաբար տուժողի ցուցմունքն իր բնույթով ոչ միայն ապացույցի ինքնուրույն տեսակ է, այլև վերջինիս իրավունքների և շահերի պաշտպանության միջոց (յո՛ւն Տիգրան Վրեժի Մարտիրոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵՇԴ/0121/01/12 որոշման 25-րդ կետը):

Զարգացնելով վերոնշյալ դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած տուժողի ցուցմունք տալու իրավական առանձնահատկություններին՝ նրա հարցաքննության նկատմամբ օրենսդիրը տարածել է վկայի հարցաքննության կանոնները: Մասնավորապես տուժողը չի կարող կանչվել և հարցաքննվել այն դեպքում, երբ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է տուժողի՝ ցուցմունք տալու պարտականությունից բացառություն, ինչպես նաև նրա ցուցմունք տալու իրավունքի սահմանափակման հիմք: Նշված

սահմանափակումը նպատակ է հետապնդում ապահովել ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքը, համաչափ է հետապնդվող նպատակին և չի իմաստագրկում տուժողի՝ իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու բուն իրավունքը, քանի որ վերջինս օժտված է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության այլ իրավական միջոցներով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդված): Միննույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հստակ սահմանված են տուժողին հարցաքննելու սահմանափակման հիմքերը: Մասնավորապես որպես տուժող չի կարող կանչվել և հարցաքննվել այն անձը, ով.

1. ունի ֆիզիկական կամ հոգեկան պակասություններ»

2. (1) կետում նշված հանգամանքի հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:

Ընդ որում վերոնշյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը պարտադիր է քննարկվող սահմանափակումը կիրառելու համար: Օրենսդրական նման կարգավորումը պայմանավորված է նրանով, որ անձի մոտ ֆիզիկական կամ հոգեկան բնույթի առանձին շեղումների առկայությունը դեռևս չի նշանակում, որ տվյալ անձն առհասարակ չի կարող ճիշտ ընկալել և վերարտադրել օբյեկտիվ իրականության փաստերը: Մասնավորապես հնարավոր են դեպքեր, երբ հոգեկան հիվանդությամբ տառապող անձի մոտ ժամանակավորապես վերականգնվի օբյեկտիվ իրականության փաստերը ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը, կամ տվյալ հիվանդությունն իր բնույթով այնպիսին լինի, որ անձին չզրկի երևույթների նշանակությունը հասկանալու և դրանք վերարտադրելու ունակությունից և այլն: Հետևաբար անձը չի կարող հարցաքննվել, եթե ֆիզիկական կամ հոգեկան պակասությունը գրկում է նրան քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունից:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն. «Տուժողը պարտավոր է (...) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել արքայազան-դանտցային փորձաքննության՝ սրուզելու համար քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու նրա ունակությունը, եթե հիմքեր կան կասկածի տակ դնելու նրա մոտ այդպիսի ունակության առկայությունը.»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝

«Քրեական գործով վարույթում սրորև նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես սրանալով և հետազոտելով՝

(...)

3)(...) արուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները՝ դատահոգեբուժական փորձագետի եզրակացությունը.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Փորձագետի եզրակացության մեջ պետք է նշված լինի՝ (...) առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք պարզվել են փորձագետի նախաձեռնությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն.

«1. Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:

2. Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն փուն մինչև դրանց հետազոտումը պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու տուժողի ունակությունը կասկածի տակ դնելու հիմքերի առկայության դեպքում վարույթն իրավականացնող մարմինը պետք է նշանակի փորձաքննություն: Իսկ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները կարող է հաստատվել միայն դատահոգեբուժական փորձագետի եզրակացությամբ:

Ընդ որում փորձագետի եզրակացությունը ապացույցների տեսակներից մեկն է և որպես այդպիսին չունի նախապես հաստատված ապացույցի ուժ, իսկ դրա գնահատման նկատմամբ կիրառելի են ապացույցների գնահատման ընդհանուր կանոնները (ապացույցների գնահատման կանոնների վերաբերյալ մանրամասն փուն օրինակ Արարարյր Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 31-31.3-րդ կետերը)՝ հաշվի առնելով ապացույցի այդ տեսակի առանձնահատկությունները:

17. Այսպես՝ փորձագետի եզրակացությունը արժանահավատության տեսանկյունից գնահատելիս վարույթ իրականացնող մարմինը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի օրենքով փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջների պահպանվածությունը: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-252-րդ հոդվածների համադրված

վերլուծությունից հետևում է, որ փորձագետի եզրակացությունը պետք է լինի հիմնավորված, բավարար չափով հստակ և լրիվ: Այլ խոսքով փորձագետի եզրակացությունում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, կատարված հետազոտությունների և հետևությունների միջև պետք է առկա լինի տրամաբանական կապ, բացառվեն իմաստային հակասությունները: Միայն այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա հասկանալ հետազոտության էությունը և պատշաճ գնահատել դրա արդյունքները: Միևնույն ժամանակ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում նշված պահանջներին, օրենսդիրը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմինն օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը, փորձագետին հարցաքննելը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում հիմնավորվածության, բավարար չափով հստակության կամ լրիվության պահանջներին, այն չի կարող գնահատվել որպես արժանահավատ ապացույց, քանի դեռ օրենքով սահմանված միջոցներով չեն վերացվել այդ խախտումները:

18. Սույն որոշման 15-17-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան կամ ֆիզիկական պակասություններ ունեցող անձանց ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և դրանք մեղադրական դատավճռի հիմքում դնելու հարցը պարզելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է որոշել, թե տվյալ անձը արդյոք ունակ է ճիշտ ընկալել գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը և վերարտադրել դրանք: Այս հանգամանքները կարող են հաստատվել միայն հիմնավորվածության, լրիվության և հստակության պահանջներին համապատասխանող դատահոգեբուժական փորձաքննությամբ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ամբաստանյալի և տուժողի մրցակցող իրավունքները (համապատասխանաբար՝ արդար դատաքննության և իր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության), ինչպես նաև տուժողի վերոնշյալ ունակությունների հանգամանքը հաստատելու համար փորձագետի եզրակացության անփոխարինելիությունը՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները փորձագետի եզրակացության արժանահավատությունն ապահովելու համար:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Խաչատրյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2013 թվականի հուլիսի 28-ին ժամը 23:30-ի սահմաններում, ոգելից խմիչք օգտագործած և հարբած վիճակում պահանջել է Աննա Ավակիմյանից, որ վերջինս իր՝ Կոտայքի մարզի Արզնի գյուղի 5-րդ փողոցի 43-րդ տան մուտքի դուռը բացի և իրեն ներս թողնի, հակառակ դեպքում կկոտորի տան պատուհանի ապակիները և վերջինիս հետ սեռական հարաբերություն ունենալու նպատակով այնտեղից տուն մուտք կգործի, որից հետո կոտրելով նշված տան պատուհանի ապակիները, կոտրված ապակու տեղով Աննա Ավակիմյանի կամքին հակառակ ապօրինի մուտք է գործել նրա տուն, որից հետո նրա կամքին հակառակ փորձել է սեռական հարաբերություն ունենալ նրա հետ, սակայն Աննա Ավակիմյանը դիմադրել է, մահակով հարվածել և փախել տանից, ինչի հետևանքով Արայիկ Խաչատրյանն իր հանցավոր մտադրությունը՝ Աննա Ավակիմյանի կամքին հակառակ նրա հետ սեռական հարաբերություն ունենալը, ավարտին չի հասցրել (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Գործի նյութերում առկա դատահոգեբանական-դատահոգեբուժական համալիր փորձաքննության 2013 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 12-2928 եզրակացության համաձայն՝ *«(...) Աննա Ավակիմյանը տատապել և տատապում է «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև» հոգեկան հիվանդությամբ: Վերը նշված ախտորոշմանը բնորոշ փոփոխությունները /գառանցական մտքերի առկայությունը, մրաժողության անկապությունը, դալորությունների թեթևակշռությունը, անհեթեթությունը/ արտահայտված են այն աստիճան, որ զրկում են երևույթները ճիշտ գիտակցելու, ընկալելու, ինչպես նաև վերարտադրելու ունակությունից: (...) Իր ներկա հոգեկան վիճակով Աննա Ավակիմյանը կարող է աղավաղել իր հետ կատարված և կատարվող գործողությունները:*

(...)

Աննա Ավակիմյանին բնորոշ է գառանցական մտքերի առկայությունը (...):

(...) Աննա Ավակիմյանը բավարար տեղեկացված է սեռերի միջև փոխհարաբերությունների, սեռական հարաբերությունների վերաբերյալ» (տե՛ս սույն որոշման 6-րդ կետ):

Առաջին ատյանի դատարանը անդրադառնալով տուժող Ա.Ավակիմյանի ցուցմունքների գնահատմանը, գտել է, որ թեև փորձագետի եզրակացության համաձայն՝ տուժող Աննա Ավակիմյանը տատապել և տատապում է «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև» հոգեկան հիվանդությամբ, սակայն սույն դեպքի կապակցությամբ Աննա Ավակիմյանի ցուցմունքն արժանահավատ է և այն պետք է դնել դատավճռի հիմքում, քանի որ նշված ցուցմունքում դեպքի կապակցությամբ հայտնված տվյալների մի մասը, ինչպես միմյանց, այնպես էլ գործով ձեռք բերված այլ ապացույցներով ստացված

տվյալների հետ համընկնում ու փոխկապակցվում են: Բացի այդ դատարանը գտել է, որ եթե տուժող Աննա Ավակիմյանն ունակ է ճիշտ ընկալելու և վերարտադրելու թվարկված փաստական հանգամանքները, հետևապես ողջամտորեն չեն կարող կասկածի տակ առնվել նրա ցուցմունքում նշված այն տվյալները, որ Արայիկ Խաչատրյանը նրա կամքին հակառակ ապօրինի մուտք է գործել նրա բնակարան, ինչպես նաև նրա կամքին հակառակ փորձել սեռական հարաբերություն ունենալ նրա հետ: Ավելին՝ փորձագետի եզրակացության համաձայն՝ Աննա Ավակիմյանը բավարար տեղեկացված է սեռերի միջև փոխհարաբերությունների, սեռական հարաբերությունների վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետ):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը, եզրահանգել է, որ գործի փաստական տվյալներով չի արձանագրվել որևէ հանգամանք, որը կարող էր հիմք հանդիսանալ տուժող Աննա Ավակիմյանի կողմից տված ցուցմունքներն անարժանահավատ համարելու համար, առավել ևս, որ դրանցում որևէ էական հակասություն չկա և դրանք հաստատվում են նաև գործով ձեռք բերված մյուս ապացույցներով՝ վկաներ Լուսիկ Մարտիրոսյանի, Շուշանիկ Գրիգորյանի, Տիգրան Սամվելյանի, Արա Բաղդասարյանի ցուցմունքներով, որոնք իրենց համակցությամբ թույլատրելի և բավարար են ամբաստանյալ Խաչատրյանին մեղսագրված հանցանքը հիմնավորված համարելու համար (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

20. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով 15-18-րդ կետերում մեջբերված նորմերի և իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Փորձագիտական եզրակացության հետևություններում առկա են հակասություններ: Մասնավորապես, դրանում նշված է *«սխարորոշմանը բնորոշ փոփոխությունները /զառանցական միջբերի առկայությունը, միաստորության անկայությունը, դարձողությունների թեթևակշռությունը, անհետթեթությունը/ արտահայտված են այն սարիճան, որ գրկում են երևույթները ճիշտ գիտակցելու, ընկալելու, ինչպես նաև վերարտադրելու ունակությունից»*, մինչև սույն ժամանակ նշված է, որ *«իր ներկա հոգեկան վիճակով Աննա Ավակիմյանը կարող է աղավաղել իր հետ կատարված և կատարվող գործողությունները»*, ավելին՝ *«Աննա Ավակիմյանը բավարար տեղեկացված է սեռերի միջև փոխհարաբերությունների, սեռական հարաբերությունների վերաբերյալ»*: Մեջբերված հետևություններից բավարար չափով պարզ չէ՝ Ա.Ավակիմյանը կարող է աղավաղել օբյեկտիվ իրականության փաստերը, թե աղավաղում է դրանք, և արդյոք *«սեռերի միջև փոխհարաբերությունների, սեռական հարաբերությունների վերաբերյալ»* հանգամանքների մասին *«բավարար տեղեկացված լինելու»* պայմաններում նա զրկված է այդպիսի բնույթի փաստերը ճիշտ ընկալելու, գիտակցելու

և վերաբարտադրելու ունակությունից: Բացի այդ Փորձագիտական եզրակացությունը թերի է, քանի որ դրանում առկա չեն Ա.Ավակիմյանի հիվանդության զարգացման ընթացքի և փուլի, դրանց դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկություններ:

Մինչդեռ Առաջին սույանի դատարանը, չձեռնարկելով Փորձագիտական եզրակացությունում առկա վերը նշված անհստակությունները, հակասությունները և բացը վերացնելուն ուղղված որևէ միջոց, գտել է, որ «*թեև փորձագետի եզրակացության համաձայն՝ տուժող Աննա Ավակիմյանը տառապել և տառապում է «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև» հոգեկան հիվանդությամբ, ինչի բնորոշ փոփոխություններն (զառանցական մերքերի առկայությունը, մերածողության անկապակցվածությունը, դատողությունների թեթևակշռությունը, անհեթեթությունը) արտահայտված են այն աստիճան, որ գրկում են երևույթները ճիշտ գիտակցելու, ընկալելու, ինչպես նաև վերաբարտադրելու ունակությունից, նա կարող է աղավաղել իր հետ կատարված և կատարվող գործողությունները, նրան բնորոշ է զառանցական մերքերի առկայությունը, սակայն Դատարանը գտնում է, որ սույն դեպքի կապակցությամբ Աննա Ավակիմյանի ցուցմունքն արժանահավատ է և այն պետք է դնել սույն դատավճռի հիմքում, քանի որ սույն գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների տեսանկյունից նշված ցուցմունքում դեպքի կապակցությամբ նրա կողմից հայտնված տվյալների մի մասը, ինչպես միևյանց, այնպես էլ սույն քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցներով սրացված տվյալների հետ համընկնում ու փոխկապակցվում են»:* Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ «*գործի փաստական տվյալներով չի արձանագրվել որևէ հանգամանք, որը կարող էր հիմք հանդիսանալ տուժող Աննա Ավակիմյանի կողմից տված ցուցմունքներն անարժանահավատ համարելու համար»:*

Վճարելի դատարանն արձանագրում է, որ Փորձագիտական եզրակացության վերոնշյալ անհստակությունների, հակասությունների և բացի, ինչպես նաև ստորադաս դատարանների կողմից դրանք վերացնելուն ուղղված միջոցներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-252-րդ հոդվածներով նախատեսված) չձեռնարկելու, իսկ վճարելի վարույթում այդպիսիք ձեռնարկելու իրավական անհնարիության պայմաններում հնարավոր չէ պատասխանել բողոքաբերի կողմից Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցին:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, տուժող Աննա Ավակիմյանի կողմից քրեական գործով պարզման ենթակա հանգամանքները ընկալելու և վերաբարտադրելու ունակությունը արժանահավատ ապացույցներով չպարզելով, չեն իրականացրել սույն գործի բազմակողմանի և լրիվ քննություն՝ թույլ տալով ՀՀ Սահմանադրության 19-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

86-րդ, 210-րդ հոդվածների խախտում, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Արդյունքում թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված՝ դատավարական իրավունքի խախտում:

Վերոնշյալը Վճարելի դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Ընդ որում Վճարելի դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է ձեռնարկի օրենքով նախատեսված համապատասխան միջոցներ (հարցաքննի փորձագետին կամ նշանակի լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն) սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելու համար:

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ բողոքարերի մնացած փաստարկները (տե՛ս սույն որոշման 10-11-րդ կետերը), կարող են քննության առարկա դարձվել սույն որոշմամբ արձանագրված խախտումները գործի նոր քննության ընթացքում վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արայիկ Օսիկի հաշատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով և 34-138-րդ հոդվածի 1-ին մասով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 6-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

15.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ/0204/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի մարտի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արամայիս Արտավազդի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի նոյեմբերի 27-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի նոյեմբերի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 41109912 քրեական գործը Արամայիս Հարությունյանի կողմից Անժելա և Անուշ Սագիյանների ծեծելու փաստի առթիվ:

2012 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 19122412 քրեական

գործը Ա.Հարությունյանի կողմից 18 տարին չլրացած Անուշ Սագիյանին շահագործելու փաստի առթիվ:

2012 թվականի դեկտեմբերի 25-ին թիվ 41109912 և թիվ 19122412 քրեական գործերը միացվել են, և գործի քննությունը շարունակվել է թիվ 19122412 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ Ա.Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 6-րդ կետերով, այնուհետև Ա.Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով:

2013 թվականի հոկտեմբերի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ Ա.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցվել է տուժողի հետ հաշտվելու հիմքով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռով Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Ա.Սագիյանը և Ս.Քոչինյանը:

3. Ամբաստանյալ Ա.Հարությունյանի, ամբաստանյալ Ա.Սագիյանի և նրա պաշտպան Ռ.Ղազարյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մարտի 31-ի որոշմամբ Ա.Սագիյանի և նրա պաշտպանի վերաքննիչ բողոքները մերժել է, իսկ Ա.Հարությունյանի վերաքննիչ բողոքը՝ բավարարել, պատժի մասով բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճիռը: Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված

պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի մարտի 31-ի որոշման դեմ մեղադրող Ա.Մարուխյանի կողմից բերվել է վճարելի բողոք:

Վճարելի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ վճարելի բողոքը բավարարվել է մասնակիորեն, ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի մարտի 31-ի որոշումը Ա.Հարությունյանի մասով բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

5. Նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ բողոքը բավարարել է, պատժի մասով փոփոխել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճիռը, ամբաստանյալ Ա.Հարությունյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և նրան կատարմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 27-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մարտի 16-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Ամբաստանյալ Ա.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրանք է առաջադրվել, և նա դատապարտվել է այն բանի համար, որ «(...) *հանդիսանալով Սյունիքի մարզի Կապան քաղաքում գտնվող «Կապանի ավերոդարոց» ՄՊ ընկերության տնօրեն, երկու և ավելի անձանց պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու դիտարկությամբ, ավերոդարոցի տարածքում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող, քնակության համար անհրաժեշտ կահավորանքով ասպահովված ավերտնակը, 2008 թվականից մինչև 2012 թվականի հոկտեմբերի 13-ը որպես կացարան պարբերաբար տրամադրել է Լոռու մարզի Վանաձոր քաղաքի քնակիչներ՝ Անժելա Արմենակի Սագիյանին, Սիրուն Էդիկի Քոչինյանին, Հեղինե Սերյոժայի Օդաբաշյանին և*

Մարիամ Ալեքսու ծափուրյանին, ովքեր վարձարության դիմաց պարբերաբար սեռական հարաբերություն են ունեցել նույն ավտոդպրոցի ավտոկայանարեղիում հանգրվանած՝ ԻԻՀ-ից ժամանած ազգությամբ պարսիկ բեռնատար ավտոմեքենաների վարորդների հետ:(...)» (տես քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 89):

8. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2012 թվականի փետրվարի 15-ի թիվ ԼԴ/0297/01/11 դատավճռով Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով և դատապարտվել տուգանքի՝ 250.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ նա, հանդիսանալով 18 տարին լրացած անձ, հաստատապես տեղյակ լինելով Անուշ Սագիյանի 16 տարին լրացած չլինելու հանգամանքի մասին, 2009 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2011 թվականի օգոստոսի 12-ն ընկած ժամանակահատվածում Կապան քաղաքի ավտոդպրոցի տարածքում տեղադրված տնակում, «Վանատուր» կոչվող հյուրանոցում և Վանաձոր քաղաքի Տարոն 2, ՔՇՀ 3, 12/15 բնակարանում պարբերաբար, փոխադարձ համաձայնությամբ սեռական հարաբերություններ է ունեցել 1995 թվականի հոկտեմբերի 14-ին ծնված Անուշ Սագիյանի հետ (տես քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 107-109):

9. Առաջին աստիճանի դատարանի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռի համաձայն՝ «Ամբաստանյալ Արամայիս Հարությունյանի պարասիսանարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանք է հանցանքը կատարելու ռեցիդիվը:

Պարասիսանարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանք է կատարած հանցագործությունների համար իրեն լիովին մեղավոր ճանաչելն ու անկեղծորեն զղջալը:

Արամայիս Հարությունյանը բնութագրվում է դրականորեն, վարառողջ է՝ 2-րդ խմբի հաշմանդամ: Մասնակցել է ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության համար մղված մարտական գործողություններին, ՀՀ և ԼՂՀ նախագահների ու պաշտպանության նախարարների հրամաններով պարգևատրվել է մի շարք մեդալներով, կրծքանշանով: Պարգևատրվել է բազմաթիվ պարվոգրերով և շնորհակալագրերով:

Վերյուծելով և գնահատելով գործի վերը նշված փյույակները, հաշվի առնելով (...) Արամայիս Հարությունյանի կատարած հանցագործության/վրանգավորության աստիճանն ու բնույթը, ինչպես նաև ելնելով քրեական օրենսդրության սկզբունքներից, պարժի նպատակների իրականացման անհրաժեշտությունից, դատարանը գտնում է, որ [նրա] ուղղվելը հնարավոր է նշանակված պարիժը կրելու պայմաններում» (տես քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 102-103):

10. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 27-ի որոշման համաձայն՝ «(...) Ամբաստանյալ Ա.Հարությունյանը իր բնակության վայրի՝ Կապանի համայնքի ղեկավարի կողմից 26.11.2014թ-ին փրկված բնութագրի

համաձայն հանցանքը կատարելուց հետո /երկու տարվա ընթացքում/ իրեն դրսևորել է դրական, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, ներկայումս զբաղվում է հանրօգուտ աշխատանքով, իր կողմից դրսևորած վարքագծով ու պահվածքով հավար է ներշնչել համայնքում, որ ուղղվել և ցանկանում է սպրել որպես օրինավոր բնակիչ և քաղաքացի:

Կասյանի զինվորական կոմիսարի կողմից տրված 26.11.2014թ.-ի տեղեկանքի համաձայն Արամայիս Արտավազդի Հարությունյանը 1993-1997թթ. ծառայել է ՀՀ ՊՆ թիվ 84029 /54122/ զորամասում, որպես 3-րդ հրաձգային գումարտակի հրամանատար, որի ընթացքում մասնակցել է ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության համար մղված մարտական գործողություններին:

Ա.Հարությունյանը 1997թ.-ի մարտի 10-ին զորացրվել է պահեստագործ վարստող լինելու պարճատարանությամբ:

Ընդունում է մեղքը, անկեղծորեն զղջում է կատարածի համար, պատերազմի 2-րդ խմբի հաշմանդամ է /զրկված է աջ աչքի տեսողությունից/ հիմք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության N 818440 տեղեկանքը՝ տրված 15.07.2010թ. անժամկետ /1-ին հատոր, գ.թ. 90/, բացի այդ, դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննության թիվ 93/13 եզրակացության համաձայն՝ րատապում է «Անձի օրգանական խանգարում դեպրեսիվ էպիզոդներով անամնեզում» գլխուղեղի օրգանական հիվանդությանը /հատոր 2 գ.թ 224-228/, ինչպես է գրնվում չաշխատող կինը, իսկ ինքը ընտանիքի միակ կերակրողն է, պարզևարրվել է կառավարական և գերատեսչական մի շարք մեղայններով, շնորհակալագրերով ու պարվոգրերով, այդ թվում՝ ՀՀ նախագահի 27.01.2006թ.-ի N 2947 և ԼՂՀ նախագահի 2011թ.-ի N 6287 հրամանագրերով «Մարտական Ծառայություն» մեղայններով, ՀՀ պաշտպանության նախարարության «Ծովակալ Հ.Ս.Իսակով» N0542 /10.01.2008թ./, «Մարշալ Հ.Ք.Բաղրամյան» /11.01.2005թ./, «Գարեգին Նժդեհ» N0245 /30.09.2004թ./ մեղայններով և «ՀՀ զինված ուժերի 20 տարի» /24.12.2011թ./ հոբելյանական մեղալով:

(...)

Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Ա.Հարությունյանի պարասխանավորությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրում:

Ամբաստանյալ Ա.Հարությունյանի նկատմամբ պարիժ նշանակելիս Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում նաև գործի կոնկրետ տվյալները, այն, որ Ա.Հարությունյանը դատապարտված լինելով ազատագրվման հետ չկապված պարժի շարունակել է իր հանցավոր գործունեությունը:

Վերոգրյալի պայմաններում Վերաքննիչ դատարանը, պահպանելով ապացույցների ստուգման ու գնահատման օրենսդրական դրույթների

պահանջները, ինչպես նաև ապացուցման ընդհանուր քրեադատարարական կանոնները, այդ թվում՝ ամբաստանյալի պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը հաստատող ապացույցները, հանգում է այն հետևության, որ դրանք սույն գործով վերաբերելի և թույլատրելի են:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դատարանական քննության այս փուլում սույն քրեական գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ են՝ մասնավորապես ամբաստանյալի քրեական պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքները հաստատող և ապացուցողական նշանակություն ունեցող վերոշարադրյալ ապացույցները ՀՀ քրեական դատարարության օրենսգրքով այդպիսի հրավույնքով օժտված դատարարության մասնակցի՝ ամբաստանյալի կողմից Վերաքննիչ դատարան ներկայացնելը և Վերաքննիչ դատարանի հրապարակային դատաքննությանը, կողմերի մասնակցության ապահովմամբ, դրանք հետագուրելը:

(...) քննության առնելով ամբաստանյալ Ա.Հարությունյանի անձը բնութագրող օբյեկտիվ, գոյություն ունեցող վերոգրյալ առանձին հատկանիշներն իրենց համակցության մեջ, Վերաքննիչ դատարանը դրանք դիտարկում է որպես ամբաստանյալ Արամյանի Հարությունյանի պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքներ, դրանք իրական են և ողջամրորեն նվազեցնում են ամբաստանյալի անձի հասարակական վրանգավորության աստիճանը (...)) (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 100-101):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոքաբերը գտել է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել գործի բոլոր փաստական հանգամանքները և անհիմն կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածը, որի հետևանքով չհիմնավորված որոշում է կայացրել Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Նշվածի արդյունքում, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում:

Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոքի հեղինակը նշել է, որ Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս Վերաքննիչ դատարանը որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող է համարել այնպիսի հանգամանքներ, որոնք չեն կարող գնահատվել որպես այդպիսին:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը հաշվի է առել Կապանի գինվորական կոմիսարի, Կապանի համայնքի ղեկավարի գրությունները, ինչպես նաև Ա.Հարությունյանի կատավարական և գերատեսչական մեղալներով պարզևատրված լինելու հանգամանքը, որոնք չեն կարող ողջամտորեն նվազեցնել նրա կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը՝ Ա.Հարությունյանին վերագրվող արարքի բնույթով պայմանավորված:

12. Բողոքաբերը նշել է նաև, որ Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս Վերաքննիչ դատարանը, հաշվի չառնելով սույն գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի որոշումը, պատշաճ գնահատականի չի արժանացրել այն, որ Ա.Հարությունյանը, դատված լինելով ազատագրվման հետ չկապված պատժի, չի ուղղվել և շարունակել է իր հանցավոր գործունեությունը:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է Ա.Հարությունյանի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ստյանի դատարանի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճի:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնության իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ տևող կամ շարունակվող հանցագործություն կատարած անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվի (ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդված) առկայության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

1. Հանցագործությունների ռեցիդիվը.

15. Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ բացակայում են ամբաստանյալ Ա.Հարությունյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներն այն պայմաններում, երբ Ա.Հարությունյանը սույն գործով իրեն մեղսագրվող արարքը կատարելու ժամանակահատվածում՝ մինչև այն ավարտելը, կատարել է այլ դիտավորյալ հանցագործություն և դատապարտվել դրա համար:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է՝ հանցանքը կատարելու ռեցիդիվը (...):»*

Նույն օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտարկությանը հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտարկությանը կատարված հանցանքի համար»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հանցագործությունների ռեցիդիվը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է: Վերջինս պայմանավորված է նրանով, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում անձը, իր նախկին հակաօրինական գործունեությանը պետության կողմից տրված բացասական գնահատականի պայմաններում նոր հանցանք կատարելով, արտահայտում է իր արհամարհական վերաբերմունքը հասարակության և պետության շահերի նկատմամբ, որով և դրսևորվում է նրա՝ հանրային բարձր վտանգավորությունը:

Հանցագործությունների ռեցիդիվն առկա է այն դեպքում, երբ անձը.

ա) դատարանի կողմից դատապարտվել է դիտավորությանը հանցանք կատարելու համար,

բ) (ա) կետում նշված հանցանքի համար դատապարտվելուց հետո մինչև դատվածությունը հանվելը կամ մարվելը կատարել է դիտավորյալ հանցագործություն:

Վերոգրյալ չափանիշներից առաջինը ենթադրում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայություն, որով անձը մեղավոր է ճանաչվել դիտավորյալ հանցանք կատարելու համար:

Երկրորդ չափանիշը ենթադրում է, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անձը կատարել է դիտավորյալ հանցագործություն, և նախորդ հանցագործության համար անձի դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ (ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդված): Այլ խոսքով՝ ռեցիդիվի առկայության դեպքում անձը կատարում է դիտավորյալ հանցագործություն այլ դիտավորյալ հանցագործության համար դատապարտվելուց հետո, սակայն մինչև վերջինի հետևանքով առաջացած դատվածությունը հանվելը կամ մարվելն ընկած ժամանակահատվածում:

17. Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե որն է համարվում հանցանքը կատարելու ժամանակը:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վրանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից»:*

Մեջբերված նորմի բովանդակությունից հետևում է, որ հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանցագործության օբյեկտիվ կողմը

կազմող արարքը (գործողությունը կամ անգործությունը) իրականացնելու ժամանակը: Վերջինից հետևում է, որ «հանցագործությունը կատարելու ժամանակ» հասկացությունը չի նույնանում դրա ավարտի հետ (ՀՀ քրեական օրենսգրքի 33-րդ հոդված), չնայած որոշ դեպքերում ժամանակային առումով դրանք կարող են համընկնել (օրինակ՝ որոշ ձևական հացակազմերի դեպքում):

18. Վճռաբեկ դատարանը, Սիրաժ Ղամբարյանի և մյուսների գործով կայացված որոշման շրջանակներում անդրադառնալով տևող և շարունակվող հանցագործությունների առանձնահատկություններին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [S]ևող հանցագործությունները դրսևորվում են հանրորեն վրանգավոր գործողության կամ անգործության՝ տևական ժամանակահատվածում անընդմեջ իրականացմամբ, զուգորդվում են օրենքով հանցավորի վրա դրված պարտականությունների տևականորեն չկատարմամբ և ավարտված են համարվում արարքի դադարման պահից, որը կարող է պայմանավորված լինել ինչպես հանցավորի գործողություններով (օրինակ՝ մեղայականով ներկայանալով), այնպես էլ նրանից անկախ հանգամանքներով (օրինակ՝ իրավապահ մարմինների միջամտությամբ և այլն):

Շարունակվող հանցագործությունները բաղկացած են մեկից ավելի նույնական արարքներից, որոնցից յուրաքանչյուրը թեկուզև ինքնուրույն հանցակազմ է պարունակում, բայց ընդգրկված են միասնական դիրավորության մեջ, հետապնդում են մեկ ընդհանուր նպատակ, հետևաբար դիրվում են իբրև մեկ հանցագործություն, որն ավարտված է համարվում հանցավորի դիրավորությամբ ընդգրկված վերջին արարքի կատարման պահից: (...)» (տես Սիրաժ Գաբրիելի Ղամբարյանի և մյուսների գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշման 21-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը վերահաստատում է վերը մեջբերված դիրքորոշումն առ այն, որ տևող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքը կրում է ոչ թե մեկանգամյա բնույթ, այլ դրա իրականացումը բնութագրվում է տևական ժամանակահատվածում անընդհատ իրականացվող գործընթացով: Հետևաբար տևող հանցագործությունների դեպքում հանցանքը կատարելու ժամանակ պետք է դիտել հանցավոր արարքը իրականացնելու ամբողջ ժամանակահատվածը՝ սկսելու պահից մինչև դրա դադարման պահը: Այլ խոսքով՝ տևող հանցագործության կատարման ժամանակ պետք է հասկանալ դրա իրականացման ժամանակահատվածի ցանկացած միավորը մինչև դրա դադարումը:

Ինչ վերաբերում է շարունակվող հանցագործություններին, ապա դրանց օբյեկտիվ կողմը բաղկացած է մեկից ավելի նույնական հանցավոր արարքներից, հետևաբար շարունակվող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքը իրականացնելու ժամանակ կհամարվի դրա

բաղկացուցիչ արարքներից յուրաքանչյուրի իրականացման ժամանակը: Այլ խոսքով՝ շարունակվող հանցագործության կատարման ժամանակի տակ պետք է հասկանալ դրա բաղկացուցիչ մասը կազմող արարքների իրականացման ժամանակը:

19. Հաշվի առնելով տևող և շարունակվող հանցագործությունների վերոնշյալ առանձնահատկությունները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ անձը տևող կամ շարունակվող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքի (առաջին արարքի) կատարումը սկսելուց հետո, սակայն մինչև դրա դադարելը կատարում է դիտավորյալ հանցագործություն և օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվում դրա համար, ապա անձի արարքում առկա է հանցագործությունների ռեցիդիվ:

Վերջին դիրքորոշման համար Վճարելի դատարանը հիմք է ընդունում նաև այն, որ տևող կամ շարունակվող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքի կատարումը (շարունակումը) ցանկացած պահի կարող է դադարեցվել հանցավորի կամահայտնությամբ:

Մինչդեռ դիտավորյալ հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դատապարտված անձը, շարունակելով իրականացնել մինչ այդ սկսած տևող կամ շարունակվող հանցագործությունը, արտահայտում է իր արհամարհական վերաբերմունքը հասարակության և պետության շահերի նկատմամբ:

20. Սույն գործի փաստերից հետևում է, որ Ա.Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով Սյունիքի մարզի Կապան քաղաքում գտնվող «Կապանի ավտոդպրոց» ՄՊ ընկերության տնօրեն, երկու և ավելի անձանց պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու դիտավորությամբ ավտոդպրոցի տարածքում գտնվող և սեփականության իրավունքով իրեն պատկանող, բնակության համար անհրաժեշտ կահավորանքով ապահովված ավտոտնակը՝ որպես կացարան, **2008 թվականից մինչև 2012 թվականի հոկտեմբերի 13-ը** պարբերաբար տրամադրել է Լոռու մարզի Վանաձոր քաղաքի բնակիչներ՝ Անժելա Արմենակի Մագիյանին, Սիրուն Էդիկի Քոչինյանին, Հեղինե Սերյոժայի Օդաբաշյանին և Մարիամ Ալեքսու Ծատուրյանին, ովքեր վարձատրության դիմաց պարբերաբար սեռական հարաբերություն են ունեցել նույն ավտոդպրոցի ավտոկայանատեղիում հանգրվանած, Իրանի Իսլամական Հանրապետությունից ժամանած, ազգությամբ պարսիկ՝ բեռնատար ավտոմեքենաների վարորդների հետ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Թիվ ԼԴ/0297/01/11 քրեական գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ **2012 թվականի փետրվարի 15-ի դատավճռով** Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով և դատապարտվել տուգանքի՝ 250.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ նա, հանդիսանալով 18 տարին

լրացած անձ, հաստատապես տեղյակ լինելով Անուշ Սազիյանի 16 տարին լրացած չլինելու հանգամանքի մասին, **2009 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2011 թվականի օգոստոսի 12-ն ընկած ժամանակահատվածում** Կապան քաղաքի ավտոդպրոցի տարածքում տեղադրված տնակում, «Վանատուր» կոչվող հյուրանոցում և Վանաձոր քաղաքի Տարոն 2, ՔՇՀ 3, 12/15 բնակարանում պարբերաբար, փոխադարձ համաձայնությամբ սեռական հարաբերություններ է ունեցել 1995 թվականի հոկտեմբերի 14-ին ծնված, ակնհայտ 16 տարին չլրացած Անուշ Սազիյանի հետ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա.Հարությունյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է գնահատել հանցանքը կատարելու ռեցիդիվը և գտել, որ նրա ուղղվելը հնարավոր է նշանակված պատիժը կրելու պայմաններում (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, 2014 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ նշելով, որ Ա.Հարությունյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում նաև այն, որ Ա.Հարությունյանը, դատապարտված լինելով ազատագրվման հետ չկապված պատժի, շարունակել է իր հանցավոր գործունեությունը, արձանագրել է, որ Ա.Հարությունյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Շարադրված փաստերի վերլուծությունից հետևում է, որ ամբաստանյալ Ա.Հարությունյանը սույն գործով իրեն մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, բնակության համար անհրաժեշտ կահավորանքով ապահովված ավտոտնակը պոռնկությամբ զբաղվելու համար որպես կացարան պարբերաբար տրամադրելը, սկսել է իրականացնել **2008 թվականից և ավարտել 2012 թվականի հոկտեմբերի 13-ին**: Նշված հանցագործության իրականացման ընթացքում՝ **2009 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2011 թվականի օգոստոսի 12-ն ընկած ժամանակահատվածում**, Ա.Հարությունյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված դիտավորյալ հանցագործություն և Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ **2012 թվականի փետրվարի 15-ի դատավճռով** դատապարտվել դրա համար (դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ): Նրա նկատմամբ քրեական վարույթ սկսվելու, դատավճիռ կայացվելու, այն ուժի մեջ մտնելու ժամանակահատվածում, ինչպես նաև պատիժը փաստացի կատարելուց հետո Ա.Հարությունյանը շարունակել է իրականացնել մինչ այդ սկսված հանցավոր գործունեությունը, և այն ավարտել **2012 թվականի հոկտեմբերի 13-ին**:

21. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստերը գնահատելով 16-19-րդ կետերում կատարված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ա.Հարությունյանի արարքում առկա է հանցագործությունների ռեցիդիվ, հետևաբար Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Ա.Հարությունյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք գնահատելով հանցանքը կատարելու ռեցիդիվը, եկել է հիմնավորված եզրահանգման:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ բացակայում են ամբաստանյալ Ա.Հարությունյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներն այն պայմաններում, երբ Ա. Հարությունյանը սույն գործով իրեն մեղսագրվող արարքը կատարելու ժամանակահատվածում՝ մինչև այն ավարտելը, կատարել է այլ դիտավորյալ հանցագործություն և դատապարտվել դրա համար: Արդյունքում Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ և 63-րդ հոդվածները, որոնք ենթակա էին կիրառման:

II. Պատիժը պայմանականորեն չկիրառելը.

22. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված է արդյոք Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

23. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեափրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատիժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատիժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարույլ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատիժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի

անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատրասխանաարվությունը և պատրիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

3. Հանցագործության համար նախատեսված պատրիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ րեասկը չի կարող ապահովել պատրիժ նպատակները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատրիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատրիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատրիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատրիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատրասխանաարվությունը և պատրիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...)»:

Մեջբերված քրեաիրավական դրույթները վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-139/07, ՎԲ-195/07, ՎԲ-01/08, ԵԿԴ/0034/01/08, ԱՎԴ2/0059/01/08, ԵԱԲԴ/0078/01/09, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Վերոնշյալ որոշումներում վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ վճռաբեկ դատարանը փաստել է, որ չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքին ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը, դեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակներն իրագործելու հնարավորությունը, անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պարտավոր է հաշվի առնել՝

ա) հանցավորի անձը բնութագրող տվյալները,

բ) պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և (կամ) ծանրացնող հանգամանքները,

գ) հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը,

դ) հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները,

ե) հանցանք կատարած անձի մեղքի ձևը,

զ) հանցանք կատարած անձի կողմից հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը,

է) հանցակցության դեպքում հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը և այլն:

24. Այսպիսով, նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջներից է այն, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության հանրային վտանգավորության աստիճանին և բնույթին (*հանցագործության՝ հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ մանրամասն տեսն Գարուշ Մադաթյանի գործով Վճռարեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը*):

Հանցագործության հանրային վտանգավորության տիպային բնութագիրն արտացոլվում է օրենսդրի կողմից սահմանված սանկցիայում, իսկ յուրաքանչյուր կոնկրետ գործով արարքի հանրային վտանգավորության գնահատականը դատարանի կողմից կարող է որոշվել կոնկրետ հանցագործության տարրերի առանձնահատկությունների, դրա կատարման հանգամանքների, պատճառված վնասի չափի, մեղքի ձևի և տեսակի, հանցավորի անձնավորության, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հիման վրա (*տես Արարայր Ավագի Ավագյանի և Վահան Սերյոժայի Մահակյանի գործով Վճռարեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 39-րդ կետը*):

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելու, դեկավարելու կամ պահելու կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելու կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելու կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելու համար, եթե բացակայում են նույն օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները: Նույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, նույն արարքը կատարելը երկու կամ ավելի անձանց օգտագործելով նախատեսված է որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք:

Նշված նորմերի վերլուծության հիման վրա Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով հանրային վտանգավորությունը որոշելիս դատարանը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի.

- արարքի կատարման եղանակը (հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքներից որն է առկա),

- արարքների քանակը (հանցանքը դրսևորվել է հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված արարքներից մեկով, թե մի քանիսով),

- արարքի կատարման տևականությունը կամ պարբերականությունը,

- պոռնկությանը զբաղվող անձանց քանակը:

25. Սույն գործի փաստերից հետևում է, որ 2014 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանը որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող է գնահատել հետևյալ հանգամանքները.

ա) ամբաստանյալ Ա.Հարությունյանն իր բնակության վայրի՝ Կապանի համայնքի ղեկավարի կողմից 26.11.2014 թվականին տրված բնութագրի համաձայն՝ հանցանքը կատարելուց հետո (երկու տարվա ընթացքում) իրեն դրսևորել է դրական, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, ներկայումս զբաղվում է հանրօգուտ աշխատանքով, իր կողմից դրսևորած վարքագծով ու պահվածքով հավատ է ներշնչել համայնքում, որ ուղղվել և ցանկանում է ապրել որպես օրինավոր բնակիչ և քաղաքացի,

բ) Կապանի զինվորական կոմիսարի կողմից տրված 26.11.2014 թվականի տեղեկանքի համաձայն՝ Արամայիս Արտավազդի Հարությունյանը 1993-1997թթ. ծառայել է ՀՀ ՊՆ թիվ 84029 (54122) զորամասում որպես 3-րդ հրաձգային գումարտակի հրամանատար, որի ընթացքում մասնակցել է ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության համար մղված մարտական գործողություններին,

գ) Ա.Հարությունյանը 1997 թվականի մարտի 10-ին զորացրվել է պահեստագոր վատառողջ լինելու պատճառաբանությամբ,

դ) ընդունում է մեղքը, անկեղծորեն զղջում է կատարածի համար, պատերազմի 2-րդ խմբի հաշմանդամ է, տառապում է «Անձի օրգանական խանգարում դեպրեսիվ էպիզոդներով անամնեզում» գլխուղեղի օրգանական հիվանդությամբ, խնամքին է գտնվում չաշխատող կինը, իսկ ինքը ընտանիքի միակ կերակրողն է, պարգևատրվել է կառավարական և գերատեսչական մի շարք մեդալներով, շնորհակալագրերով ու պատվոգրերով (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

26. Սույն որոշման նախորդ, ինչպես նաև 20-21-րդ կետերում շարադրված փաստերը և վերլուծությունները գնահատելով 23-24-րդ կետերում մեջբերված նորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, որպես մեղմացնող հանգամանքներ հաշվի առնելով ամբաստանյալի մարտական գործունեության, առողջական վիճակի, ընտանեկան դրության, ինչպես նաև հանցանքը կատարելուց հետո դրսևորված վարքագծի վերաբերյալ տվյալները, պատշաճ գնահատման չի ենթարկել.

- Ա.Հարությունյանին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության բնույթը և աստիճանը: Մասնավորապես Ա.Հարությունյանի

արարքը դրսևորվել է ավտոդպրոցի տարածքում գտնվող և սեփականության իրավունքով իրեն պատկանող, բնակության համար անհրաժեշտ կահավորանքով ապահովված ավտոտնակը՝ որպես կացարան, չորս անձանց պոռնկությամբ զբաղվելու համար շուրջ չորս տարի շարունակ (2008 թվականից մինչև 2012 թվականի հոկտեմբերի 13-ը) պարբերաբար տրամադրելով:

- Ա.Հարությունյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքի՝ ռեցիդիվի առկայությունը (տե՛ս սույն որոշման 21-րդ կետը):

Վճարելի դատարանը գտնում է, որ վերը նշված հանգամանքների պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից որպես մեղմացնող հաշվի առնված հանգամանքները բավարար չեն եզրահանգելու, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը օրինական և հիմնավորված չէ: Արդյունքում Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջները:

27. Ամփոփելով սույն որոշման 21-րդ և 26-րդ կետերում շարադրված վերլուծությունները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխելով և ամբաստանյալ Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ, 63-րդ, հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածներով սահմանված՝ օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման սկզբունքների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը:

Վճարելի դատարանը գտնում է, որ վերը նշված խախտումները, որոնք ազդել են պատիժը կրելու նպատակահարմարության մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են:

Միաժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով կատարված հանցագործության բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, ինչպես նաև այն, որ Ա.Հարությունյանն իրեն մեղավոր է ճանաչել և զղջացել է կատարածի համար, բնութագրվում է դրականորեն, 2-րդ խմբի հաշմանդամ է,

մասնակցել է ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության համար մղված մարտական գործողություններին, պարգևատրվել է մի շարք մեդալներով, կրծքանշանով, որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք գնահատելով հանցանք կատարելու ռեցիդիվը, նրա նկատմամբ իրավացիորեն նշանակել է ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ՝ 3 տարի ժամկետով ազատազրկում (տե՛ս սույն որոշման 2-րդ և 9-րդ կետերը):

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված որոշումն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արամայիս Արտավազդի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

16.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ1/0078/01/13

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

նախազահությանը	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությանը դատավորներ	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Հ.ԱՍՏՐՅԱՆԻ
	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությանը	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի մարտի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սարգիս Գոռի Գալստյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Գալստյանի պաշտպան Բ.Ռուբենյանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հուլիսի 31-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 49108213 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ Սարգիս Գալստյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին

մասով: Մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2013 թվականի սեպտեմբերի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2014 թվականի մարտի 18-ի դատավճռով Ս.Գալստյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման՝ 3 ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալի և պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հուլիսի 31-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 18-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել պաշտպան Ք.Ռուբենյանը:

Վճարելի դատարանի 2015 թվականի հունվարի 29-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ս.Գալստյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) 2013 թ. հուլիսի 22-ին իրենց թաղամասի վերևում գրնվող աղբանոցի մոտ վայրի աճած կանեփի ցեղաբուսակի խորարույսերից քաղել, չորացրել և ապօրինի, անձամբ օգտագործելու նպատակով հագուարի գրպանում պահել է 0.81 գրամ հասարարուն քաշով չորացված «մարիխուանա» փրեսակի թմրամիջոց, որը 2013 թվականի հուլիսի 23-ին ընկերոջ՝ Նորայր Մարտիրոսյանի «ԳԱԶ 31105» մակնիշի մեքենայով Երևան գնալու ճանապարհին, վերջինից գաղտնի դրել է նշված մեքենայի առջևի աջ նստավայրի հետևի գրպանում» (փրես քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 111-114):

6. ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պահանջագրի համաձայն՝ Ս.Գալստյանը երկու անգամ դատապարտվել է, մասնավորապես՝ 2007 թվականի հուլիսի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է ազատազրկման՝ 2 տարի ժամկետով՝ 2008 թվականի մարտի 3-ին պայմանական վաղաժամկետ ազատվելով պատժի կրումից և 2009 թվականի սեպտեմբերի 16-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով դատապարտվել է ազատազրկման՝ 3 տարի ժամկետով, ապա

ազատվել նշանակված պատժից՝ ՀՀ Ազգային Ժողովի «Համաներում հայտարարելու մասին» 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 21-22):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի ներածական մասում արձանագրված է, որ Ս.Գալստյանը նախկինում դատված անձ է, ում դատվածությունը մարված է: Նույն դատավճռի պատճառաբանական մասում նշված է. «(...) Պատրիժ նշանակելիս [Առաջին արյանի դատարանը] հաշվի է առնում ինչպես ամբաստանյալի կողմից կատարված հանցագործության ընդհանուր հանրության համար վրանգավորության մակարդակը, այնպես էլ՝ նրա անձը բնութագրող, պարասիսանարվությունը և պատրիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

(...) որպես Սարգիս Գալստյանի անձը բնութագրող հանգամանք [Առաջին արյանի դատարանը] հաշվի է առնում նրա՝ նախկինում երկու անգամ դատապարտված լինելը (...):

(...)

[Առաջին արյանի դատարանը], հաշվի առնելով ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքերը, ինչպես նաև արարքի հանրության համար վրանգավորության աստիճանը, գտնում է, որ ամբաստանյալ Սարգիս Գալստյանի կողմից կատարված արարքի համար նրա նկատմամբ պետք է նշանակվի պատրիժ ազատազրկման ձևով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 143-146):

8. Վերաքննիչ դատարանը իր որոշմամբ արձանագրել է. «(...) ամբաստանյալ Ս.Գալստյանի նկատմամբ պատրիժ տեսակն ու չափը որոշելիս Առաջին արյանի դատարանը ղեկավարվել է (...) պատրիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ըստ էության բազմակողմանի ստուգման ու օբյեկտիվ գնահատության է ենթարկել (...) Ս.Գալստյանի կատարած հանցանքի՝ հանրության համար վրանգավորության աստիճանն ու ընդհանուր, նրա անձը բնութագրող (...) հանգամանքները, Ս.Գալստյանի անձը բնութագրող [հանգամանք] է դիտել (...) [նրա՝] նախկինում երկու անգամ դատապարտված լինելը (...):

(...)

Առաջին արյանի դատարանը հենց ամբաստանյալ Ս.Գալստյանի կատարած արարքի հասարակական վրանգավորության աստիճանը և նրա անձը բնութագրող՝ նաև վերաքննիչ բողոքում բերած և պարասիսանարվությունն ու պատրիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը հաշվի առնելով նշանակել է համաչափ՝ օրենքով նախատեսված նվազագույն պատրիժ և հիմնավոր հետևության հանգեղ, որ նշանակված պատրիժը նա պետք է կրի և աննպարակահարմար է համարել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ պատրիժը պայմանականորեն չկիրառելը» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 83-90):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Պաշտպան Ք.Ռուբենյանի համոզմամբ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական նորմերի խախտումներ, որպիսի պայմաններում կայացված դատական ակտն անհիմն է և չպատճառարանված, իսկ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ խիստ է և չի համապատասխանում նրա կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանին: Մասնավորապես, ըստ բողոքարերի Վերաքննիչ դատարանի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ, 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-64-րդ, 70-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 360-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև անտեսվել են Վճարելի դատարանի թիվ ԵԿԴ/0034/01/08, թիվ ԱՐԱԴ/0050/01/08, թիվ ՍԴ/0226/01/09, թիվ ԵՔՐԴ/0571/01/08, թիվ ՎԲ-01/08, թիվ ՎԲ-192/07, թիվ ՎԲ-124/07, թիվ ԵԱԲԴ/0078/01/09, թիվ ԵՇԴ/0029/01/08, թիվ ԼԴ/0019/01/09, թիվ ԵԿԴ/0042/01/11 և թիվ ՎԲ-50/07 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկների՝ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել Ս.Գալստյանի անձը բնութագրող, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները: Բացի այդ, ըստ բողոքարերի՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ ամբաստանյալն աջակցել է հանցագործության բացահայտմանը, զղջացել կատարած արարքի համար, չի թաքնվել քննությունից, նախաքննական մարմնի համար խոչընդոտներ չի առաջացրել, ունի մշտական բնակության վայր, խնամքին են գտնվում երկու անչափահաս երեխաները, կինը և հորեղբայրը, անապահով ընտանիքի միակ կերակրողն է, բնութագրվում դրական և վատառողջ է (մասնավորապես, ըստ բողոքարերի վկայակոչած բժշկական փաստաթղթերի՝ Ս.Գալստյանը տառապում է 1-ին աստիճանի շնչական անբավարարությամբ, ոչ սպեցիֆիկ թոքային հիվանդությամբ՝ ուղղորդված արյունահոսություններով, ունի սուր թրոմբոզ, սուր իշեմիա 3-րդ «Ա» աստիճանի, հեպատիտ «Ց», արյան շրջանառության 3-րդ աստիճանի խանգարում, «Արմենիա» բժշկական կենտրոնում ենթարկվել է ձախ վերին վերջույթի՝ նախաբազկի և ֆալանգների վիրահատության, ինչից հետո ձախ ձեռքի 3-րդ, 4-րդ մատերն անշարժացել են, իսկ 4-րդ մատում հայտնաբերվել է գանգրենա՝ մատի սևացման նախանշմամբ): Արդյունքում թե՛ Առաջին ատյանի և թե՛ Վերաքննիչ դատարաններն ամբաստանյալ Ս.Գալստյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում հանգել են սխալ հետևության՝ կայացնելով չհիմնավորված դատական ակտեր:

Բողոքաբերը կարծիք է հայտնել, որ Ս.Գալստյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան նշանակելով հնարավոր է հասնել պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և նոր հանցագործությունների կանխմանը, ինչպես նաև ապահովել արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պաշտպան Ք.Ռուբենյանը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով Ս.Գալստյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան կամ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք ստորադաս դատարանների կողմից պատիժ նշանակելիս մարված դատվածությունները որպես Ս.Գալստյանի անձը բնութագրող հանգամանք հաշվի առնելը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեահրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պարասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:*

Նույն օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը:

2. Գատվածությունը, սույն օրենսգրքին համապատասխան, հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս:

(...)

8. Գատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: (...):»:

Պատժի անհատականացման հանրաճանաչ քրեաիրավական սկզբունքը նախատեսում է հանցանք կատարած անձի նկատմամբ կոնկրետ հանցակազմի սանկցիայի սահմաններում կոնկրետ պատժի նշանակում: Ընդ որում, որպես պատժի անհատականացման ընդհանուր չափանիշներ են սահմանվում՝

ա) հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, ընդհանրապես, կոնկրետ հանցագործության կատարման հանգամանքների տեսանկյունից՝ մասնավորապես,

բ) հանցավորի անձը,

գ) պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (*ipso mutatis mutandis* Նարեկ Գևորգի Սարգսյանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 17-րդ կետը):

13. Վճարելի դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն առ այն, որ պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված հանցագործության բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող տվյալների՝ նրա սոցիալ-հոգեբանական, քրեաիրավական և մի շարք այլ հատկանիշների համակցության ճիշտ գնահատումը: Պատասխանատվության անհատականացման համար անհրաժեշտ է իմանալ ոչ միայն այն պայմանները, որոնցում ձևավորվել է հանցավորի անձը, այլև նրա բարոյաևհոգեբանական և քրեաիրավական բնութագրերը, որոնք իրենց արտացոլումն են գտել արարքի՝ մասնավորապես հանցագործության կատարման մեջ: Այս առումով նախկինում հանցանք կատարած լինելն անշուշտ հանցավորի անձը բացասաբար բնութագրող հանգամանք է, ինչը, սակայն, չի նշանակում, որ անձի նախկին հանցավոր գործունեությունը յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի նրա նկատմամբ նոր հանցագործության համար պատիժ սահմանելիս (*ipso Urpuz Իլյայի Շաքարյանի գործով Վճարելի դատարանի 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0163/01/13 որոշման 13-րդ կետը*):

Քրեական օրենսդրությունը նախատեսում է որոշակի պայմաններում անձի դատվածությունը հանելու կամ մարելու ընթացակարգ, որից հետո անթույլատրելի են դառնում դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները (տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մասը):

Վերոգրյալի հետ կապված՝ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշումներ է հայտնել այն մասին, որ մարված կամ հանված դատվածության պայմաններում անձի կողմից նախկինում հանցանք կատարած լինելը որպես նրա անձը բացասաբար բնութագրող հանգամանք հաշվի առնելն անթույլատրելի է: Նախկինում հանցանք կատարած լինելը դիտելով որպես հանցավորի բարոյաևհոգեբանական և քրեաիրավական

բնութագիր՝ դատարանը պարտավոր է այն ուղղակիորեն արտացոլել պատժի և պատասխանատվության անհատականացման ժամանակ: Մինչդեռ մարված կամ հանված դատվածության պայմաններում անձը քրեական օրենքի իմաստով համարվում է հանցագործություն չկատարած, և նրա նախկին դատվածությունը քրեաիրավական հետևանք առաջացնել չի կարող, այդ թվում՝ չի կարող անդրադառնալ նոր հանցագործության համար նշանակվելիք պատժի վրա:

Ուստի մարված կամ հանված դատվածության պայմաններում նախկինում հանցանք կատարած լինելը դիտելով որպես հանցավորի անձնավորությունը բացասաբար բնութագրող հանգամանք՝ դատարանը ոչ միայն կհմաստագրվի դատվածությունը հանելու, մարելու քրեաիրավական կառուցակարգերը, այլև կարող է խախտել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (*տե՛ս Արտաշ Իլյայի Շաքարյանի գործով Վճարելի դատարանի 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0163/01/13 որոշման 15-րդ կետը*):

14. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ս.Գալստյանը 2007 թվականի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածի 2-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 2 տարի ժամկետով, իսկ 2009 թվականի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման՝ 3 տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է, որ Ս.Գալստյանը նախկինում դատված է, իսկ նրա դատվածությունները մարված են: Մինևսույն ժամանակ որպես ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանք դատարանը հաշվի է առել այն, որ նա նախկինում երկու անգամ դատապարտվել է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը բավարար չափով ստուգման և գնահատման է ենթարկել կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը, ինչպես նաև ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես այն, որ նա նախկինում երկու անգամ դատապարտված է եղել, ինչի արդյունքում Ս.Գալստյանի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերոգրյալ փաստական տվյալներից հետևում է, որ Ս.Գալստյանը նախկինում երկու անգամ դատապարտված է եղել, և նրա դատվածություններն օրենքով սահմանված կարգով մարվել են: Չնայած այդ հանգամանքին՝ ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս, որպես նրա անձը բնութագրող տվյալ, Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել այն, որ

նա նախկինում երկու անգամ դատապարտված է եղել, իսկ Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել դա:

15. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից պատիժ նշանակելիս մարված դատվածությունները որպես Ս.Գալստյանի անձը բնութագրող հանգամանք հաշվի առնելն իրավաչափ չէ:

Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ս.Գալստյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին աստիճանի դատարանը որպես հանցավորի անձը բնութագրող հանգամանք է դիտել այնպիսի փաստական տվյալ, որը որպես այդպիսին չէր կարող գնահատվել: Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել վերոգրյալը՝ դրանով իսկ խախտելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 61-րդ և 84-րդ հոդվածների պահանջները, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը:

Վերը նշված նյութական իրավունքի խախտումները, որոնք կարող էին ազդել պատժի մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

16. Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ս.Գալստյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա Վճարելի դատարանը գտնում է, որ նշված հարցին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված խախտումը վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սարգիս Գոռի Գալստյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին

մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

17.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԴՆ/0006/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան	Ե.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

2015 թվականի մարտի 27-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Վահագն Վարդանի Պարոնիկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի ապրիլի 22-ի որոշման դեմ ամբաստանյալ Վ.Պարոնիկյանի պաշտպան Ե.Մարգարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնում հարուցվել է թիվ 40106712 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի հունվարի 11-ի որոշմամբ Վահագն Վարդանի Պարոնիկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և

նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

2013 թվականի փետրվարի 1-ին Վ.Պարոնիկյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի մարտի 4-ի դատավճռով Վ.Պարոնիկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Վ.Պարոնիկյանի պաշտպաններ Աննա Մարտիրոսյանի և Շեյն Հիթ Բրեյդիի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ բողոքը մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ ամբաստանյալ Վ.Պարոնիկյանի պաշտպաններ Աննա Մարտիրոսյանի և Շեյն Հիթ Բրեյդիի վճարելի բողոքը Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ վերադարձվել է, և վճարելի բողոքը կրկին ներկայացնելու ժամկետ է սահմանվել:

Ամբաստանյալ Վ.Պարոնիկյանի պաշտպան Ե.Մարգարյանը կրկին վճարելի բողոք է ներկայացրել, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մարտի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վ.Պարոնիկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) ՀՀ ՊՆ ԿԲՀ-ի որոշմամբ ՀՀ ՊՆ թիվ 175-10թ. հրամանի 7 հոդվածի «Գ» կետով ճանաչվել է պիստոլի ոչ շարային ծառայության և անձնական սրարագրությամբ Գավառի ՏԶԿ-ից սրացել է ծանուցագիր՝ 17.12.2012թ. ՀՀ ԶՈՒ գորակոչվելու համար, սակայն 14.12.2012թ. ներկայացել է Գավառի զորակոչային բաժանմունք և ներկայացրել է գրավոր դիմում՝ զինվորական ծառայությունից հրաժարվելու մասին՝ պայրճառաբանելով, որ ունի լուրջ առողջական խնդիրներ և միաժամանակ հանդիսանում է «Եռուկայի վկա», ելնելով իր անձնական համոզմունքներից՝ հրաժարվել է ժամկետային զինվորական և այլընտրանքային ծառայություններից՝ դրանով իսկ խուսափելով ժամկետային զինվորական և այլընտրանքային ծառայությունների գորակոչից՝ այդ ծառայություններից ազատվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայությամբ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 60):

6. 2013 թվականի մայիսի 2-ին ընդունված ՀՕ-31-Ն և ՀՕ-32-Ն ՀՀ օրենքներով փոփոխություններ և լրացումներ են կատարվել համապատասխանաբար «Այլընտրանքային ծառայության մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքներում:

7. 2013 թվականի հուլիսի 23-ին Վ.Պարոնիկյանն այլընտրանքային ծառայության անցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել Մարտունու տարածքային զինվորական կոմիսարիատ (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 28):

8. Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի՝ 2014 թվականի դեկտեմբերի 2-ի՝ «Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին» թիվ 3-Ա որոշմամբ Վ.Պարոնիկյանի դիմումը բավարարվել է, նա այլընտրանքային աշխատանքային ծառայության է նշանակվել «Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ում որպես բանվոր (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 55):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով ամբաստանյալ Վ.Պարոնիկյանը Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի մարտի 4-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով: 2013 թվականի հունիսի 8-ին ուժի մեջ է մտել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2013 թվականի մայիսի 2-ին ընդունված օրենքը: Վերջինիս հիման վրա ստեղծվել է այլընտրանքային աշխատանքային ծառայություն, որի նկատմամբ, նույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, չի կարող սահմանվել զինվորական վերահսկողություն:

Բողոքի հեղինակը նշել է, որ Վ.Պարոնիկյանը 2013 թվականի հուլիսի 23-ին այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել, որն այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի՝ 2014 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ բավարարվել է:

Բողոքի հեղինակը, վկայակոչելով «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ մասը, գտել է, որ Վ.Պարոնիկյանի վերաբերյալ դատավճիռը ենթակա է վերանայման, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճման:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու

մասին Վերաքննիչ դատարանի որոշումը, քրեական գործի վարույթը կարճել և Վ.Պարոնիկյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. «Այլընտրանքային ծառայության մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքներում 2013 թվականի մայիսի 2-ին ընդունված ՀՕ-31-Ն և ՀՕ-32-Ն ՀՀ օրենքներով կատարված փոփոխությունների և լրացումների պայմաններում Վ.Պարոնիկյանի նկատմամբ կիրառելի է արդյո՞ք «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 13-րդ մասը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական գորակոչից, վարժական հավաքից կամ գորավարժանքից խուսափելու համար՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝

«1. (...) այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում:

2. Այլընտրանքային ծառայության տեսակներն են՝

(...)

բ) այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

(...):»:

2013 թվականի մայիսի 2-ին ընդունված և նույն թվականի հունիսի 8-ին ուժի մեջ մտած ««Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածով փոփոխության է ենթարկվել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը և շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«(...)

Այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական

դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը:

(...)»:

Օրենքի 3-րդ հոդվածով փոփոխության է ենթարկվել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ի մասը և շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, որը մինչև հերթական գորակոչին նախորդող փետրվարի 1-ը կամ օգոստոսի 1-ը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմել է այն տարածքային զինվորական կոմիսարիատ, որտեղ նա հաշվառված է, և որի այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովը (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով) որոշել է ուղարկել այլընտրանքային ծառայության: (...)»:

Օրենքի 13-րդ հոդվածով փոփոխության է ենթարկվել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը և շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«(...) 2. Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացումը կազմակերպում և վերահսկում է (են) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (մարմինները):

3. Այլընտրանքային աշխատանքային ծառայության նկատմամբ չի կարող սահմանվել զինվորական վերահսկողություն:

4. Այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայությունն անցնում են այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպություններում:

(...)»:

12.1. Մեջբերված նորմերի համադրված վերլուծությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Սամվել Աբրահամյանի գործով որոշմամբ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ. «(...) «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-31-Ն օրենքով կատարված փոփոխությունների (...) և ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված բլանկետային դիսպոզիցիայի առանձնահատկությունների (...) համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2013 թվականի մայիսի 2-ին ընդունված և նույն թվականի հունիսի 8-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն օրենքով «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարվել են բովանդակային բնույթի այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցրել են քրեակիրավական նորմի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակության և դրանով արգելված արարքների ծավալի

ու շրջանակի փոփոխության: Արդյունքում Կրեյտի է ունեցել արարքի մասնակի ապարքեականացում այն անձանց մասով, ովքեր մինչ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելը մեղադրվել կամ դատապարտվել են կրոնական համոզմունքների հիմքով զինվորական և այլընտրանքային ծառայությունից հրաժարվելու համար» (տե՛ս Սամվել Սամվելի Աբրահամյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԿԳ1/0053/01/12 որոշման 15-րդ կետը):

13. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-32-Ն ՀՀ օրենքով լրացումներ են կատարվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-529-Ն ՀՀ օրենքում: Նշված փոփոխությունների արդյունքում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-529-Ն օրենքի 3-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 13-րդ մասով. «Կարճել դատարանների, նախաքննության և հետաքննության մարմինների վարույթում գտնվող քրեական գործերը և դադարեցնել քրեական հետապնդումն այն անձանց նկատմամբ, որոնք կասկածվում կամ մեղադրվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ, 327.1-րդ, 327.2-րդ, 327.3-րդ և 327.4-րդ հոդվածներով նախատեսված արարքների կատարման համար, եթե այդ անձինք մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ը դիմում են ներկայացրել այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ, և «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիազորված մարմինը որոշում է կայացրել նրանց այլընտրանքային ծառայության ուղարկելու մասին»:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-32-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի («Անցումային դրույթներ») համաձայն՝ «1. Սույն օրենքի 1-ին հոդվածով «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածում լրացվող 12-րդ և 13-րդ մասերը տարածվում են այն անձանց վրա, որոնք մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կատարել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ, 327.1-ին, 327.2-րդ, 327.3-րդ և 327.4-րդ հոդվածներով նախատեսված արարքները կամ դրանց կատարման համար դատապարտվել են»:

13.1. Նախորդ կետում մեջբերված իրավադրույթների համակարգային վերլուծության հիման վրա Վճարելի դատարանը Սամվել Աբրահամյանի գործով որոշմամբ դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 327-327.4-րդ հոդվածներով քրեական գործի

վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն օրենսդիրը կապել է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության հետ, այն է՝

ա) ՀՀ քրեական օրենսգրքի 327-327.4-րդ հոդվածներով արգելված արարքները կատարվել են մինչև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-32-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը:

բ) ՀՀ քրեական օրենսգրքի 327-327.4-րդ հոդվածներով արգելված արարքների կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձինք մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ը դիմում են ներկայացրել այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ:

գ) լիազոր մարմինը որոշում է կայացրել վերոնշյալ անձանց այլընտրանքային ծառայության ուղարկելու մասին» (տե՛ս Սամվել Սամվելի Աբրահամյանի գործով Վճարելի դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԿԴ1/0053/01/12 որոշման 16-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի մարտի 4-ի դատավճռով Վ.Պարոնիկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-31-Ն և ՀՕ-32-Ն ՀՀ օրենքներով համապատասխանաբար «Այլընտրանքային ծառայության մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարվելուց հետո՝ 2013 թվականի հուլիսի 23-ին, Վ.Պարոնիկյանն այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել Մարտունու տարածքային զինվորական կոմիսարիատ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի՝ 2014 թվականի դեկտեմբերի 2-ի՝ «Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին» թիվ 3-Ա որոշմամբ Վ.Պարոնիկյանի դիմումը բավարարվել է, նա այլընտրանքային աշխատանքային ծառայության է նշանակվել «Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ում որպես բանվոր (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

15. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 12-13.1-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և դիրքորոշումների

լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Պարոնիկյանը ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվել է կրոնական համոզմունքների պատճառով և՛ զինվորական, և՛ այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար: Նշված արարքը կատարվել է մինչև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-32-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը: Վ.Պարոնիկյանն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ը դիմում է ներկայացրել այլընտրանքային ծառայության անցնելու վերաբերյալ, որը բավարարվել է, և լիազոր մարմինը որոշում է կայացրել նրան այլընտրանքային ծառայության ուղարկելու մասին: Այսինքն՝ սույն գործով պահպանված են «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված պայմանները (տե՛ս սույն որոշման 13.1-րդ կետը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Այլընտրանքային ծառայության մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքներում 2013 թվականի մայիսի 2-ին ընդունված ՀՕ-31-Ն և ՀՕ-32-Ն ՀՀ օրենքներով կատարված փոփոխությունների և լրացումների պայմաններում Վ.Պարոնիկյանի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 13-րդ մասը կիրառելի է:

16. Հիմք ընդունելով սույն որոշման 12-15-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Վ.Պարոնիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի մարտի 4-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 22-ի որոշումը պետք է բեկանել, քրեական գործի վարույթը կարճել և Վ.Պարոնիկյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Վահագն Վարդանի Պարոնիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 4-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի ապրիլի 22-ի որոշումը բեկանել, քրեական գործի վարույթը կարճել և Վահագն Վարդանի Պարոնիկյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

18.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՄԴ/0020/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Մկրտիչ Համլետի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի փետրվարի 27-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիրեռհանցագործությունների գործերով վարչությունում կեղծ անձնագրի օգտագործմամբ ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի և 329-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2013 թվականի մարտի 20-ի որոշմամբ Մկրտիչ Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 20-ի որոշմամբ Մ.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 15-ի, 2013 թվականի հուլիսի 15-ի, 2013 թվականի սեպտեմբերի 19-ի, 2013 թվականի նոյեմբերի 14-ի և 2014 թվականի հունվարի 14-ի որոշումներով Մ.Սարգսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է:

2013 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ գլխավոր դատախազությունից ստացված՝ Ք.Ալոյանի սպանության փաստի առթիվ ՌԴ քննչական կոմիտեի Նովոսիբիրսկի մարզի քննչական վարչության հատկապես կարևոր գործերի քննության բաժնում 2011 թվականի փետրվարի 9-ին հարուցված թիվ 141011 քրեական գործն ընդունվել է վարույթ, շնորհիվ 58207413 հերթական համարը և նույն օրվա մեկ այլ որոշմամբ միացվել թիվ 61200313 քրեական գործին՝ նախաքննությունը շարունակելով 61200613 համարով:

2013 թվականի հուլիսի 27-ին Մ.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, 325-րդ հոդվածի 1-ին մասով, 329-րդ հոդվածի 1-ին մասով և 326-րդ հոդվածով:

2014 թվականի հունվարի 21-ի որոշմամբ Մ.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով առաջադրված մեղադրանքի մասը վերացվել է:

Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Մ.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 326-րդ հոդվածով և 329-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիրքեռհանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի 2014 թվականի հունվարի 21-ի որոշմամբ մեղադրյալ Մ.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացվել է, և որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

2014 թվականի հունվարի 22-ի որոշմամբ սույն քրեական գործից անջատվել է ՌԴ Նովոսիբիրսկ քաղաքում 2011 թվականի փետրվարի 8-ին Ք.Ալոյանի սպանության վերաբերյալ մասը:

2014 թվականի փետրվարի 11-ին Մ.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին, 324-րդ հոդվածի 2-րդ և 329-րդ հոդվածի 1-ին մասերով:

2014 թվականի մարտի 6-ին Մ.Սարգսյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ Մ.Սարգսյանն ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քրեական պատասխանատվությունից, քրեական գործի վարույթի մասը կարճվել է, և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել:

Նույն դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի դատավճռով Մ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ ու 329-րդ հոդվածների 1-ին մասերով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: Նշանակված պատժին հաշվակցվել է նախնական կալանքի տակ պահելու ժամկետը, և Մ.Սարգսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 2 (երկու) տարի 1 (մեկ) ամիս ժամկետով:

Մ.Սարգսյանի նկատմամբ կիրառվել է ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 1-ին կետի 3-րդ ենթակետը, և Մ.Սարգսյանն ազատվել է նշանակված պատժից:

3. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազ Հ.Ենոքյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի մայիսի 22-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի դատական ակտերը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մայիսի 22-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բադալյանը, որը ՀՀ վճարելի դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ վերադարձվել է:

5. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի որոշման և նույն դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի դատավճռի դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը այլ հիմքով վերաքննիչ բողոք է բերել՝ խնդրելով բեկանել նշված ակտերը և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Վերաքննիչ բողոքում որպես

օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու հիմք բողոքները վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասը, իսկ բողոքը ներկայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված վեցամսյա ժամկետում՝ 2014 թվականի սեպտեմբերի 8-ին:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

6. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանը:

Վճարելի դատարանի 2015 թվականի հունվարի 30-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ստացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Մ.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ, 325-րդ ու 329-րդ հոդվածների 1-ին մասերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա, Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից հետախուզման մեջ գրնվելու պարճառով հնարավորություն չունենալով իր օրինական փաստաթղթերով փրկաշարժվել արտասահմանյան երկրների սահմանային կետերով, իբրև թե բջջային հեռախոսի քարտ գնելու պարբերակով, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով հաիշրակել է համադասարանցու՝ Խաչատուր Ֆերոյանի պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացու AG սերիայի 05226786 համարի անձնագիրը, իր կողմից անձամբ օգրագործելու նպատակով կեղծել այն՝ փակցնելով իր լուսանկարը և առանց սահմանված փաստաթղթերի ՀՀ պահպանվող պետական սահմանն ապօրինի հարելով, 2013 թվականի փետրվարի 23-ին «Զվարթնոց» օդանավակայանից Երևան-Մոսկվա 1863 չվերթով մեկնել է «Շերեմետևո-3» օդանավակայան, որտեղ ՌԴ սահմանապահ ծառայության աշխատակիցները բացահայրել են անձնագրի կեղծված լինելու հանգամանքը և հաջորդ օրը՝ 2013 թվականի փետրվարի 24-ին, Մոսկվա-Երևան 1862 համարի չվերթով արտաքսել են ՀՀ, որտեղ էլ նրան անմիջապես ՀՀ ոսրիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի աշխատակիցները հայրնաբերել են» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, 203-212 թերթեր):

8. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի որոշման համաձայն՝ «Դարական վիճարանությունների փուլում պաշտպան

Գ.Հակոբյանը և ամբաստանյալ Մ.Սարգսյանը հայրնեցին, որ վերջինս և Կոմիտեի Խ.Ֆերոյանը հաշտվել են, միաժամանակ միջնորդեցին սույն քրեական գործի վարույթի մասը կարճել և այդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ ամբաստանյալին ազատելով քրեական պատասխանատվությունից:

Տուժող Խաչատուր Պարզևի Ֆերոյանը հայրնեց, որ ամբաստանյալ Մկրտիչ Սարգսյանը հաշտվել է իր հետ և հարթել է իրեն պարճատած վնասը:

(...)

Եկարի ունենալով, որ ամբաստանյալ Մկրտիչ Համլեյրի Սարգսյանի ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով կատարած արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվին, իսկ նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է Կոմիտեի հետ և հարթել է նրան պարճատած վնասը, ուստի դատարանը գտնում է, որ Մկրտիչ Համլեյրի Սարգսյանի վերաբերյալ հարուցված քրեական գործի վարույթի մասը պետք է կարճել և նրան ազատել քրեական պատասխանատվությունից» (տես քրեական գործ, հատոր 4, 39-41 թերթեր):

9. Վերաքննիչ դատարանը, իր 2014 թվականի մայիսի 22-ի որոշման մեջ վերլուծելով Ա.Բարսյանի վերաբերյալ գործով Վճարելի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱԲԴ/0157/01/10 որոշման մեջ տուժողի հետ հաշտվելու ինստիտուտի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումը, եզրահանգել է, որ. «[Առաջին արյանի] դատարանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ԵՄԴ/0020/01/14 քրեական գործի վարույթի մասը կարճելու և ամբաստանյալ Մկրտիչ Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդումն այդ մասով դադարեցնելու մասին որոշումն օրինական է և հիմնավորված, և այն բեկանելու կամ փոփոխելու հիմքեր չկան» (տես քրեական գործ, հատոր 4, 91-103 թերթեր):

10. 2014 թվականի սեպտեմբերի 8-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ և 376.1-րդ հոդվածներով, վերաքննիչ բողոք է բերել Առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 2014 թվականի ապրիլի 2-ի որոշման և նույն օրվա դատավճռի դեմ:

11. Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հոկտեմբերի 3-ին որոշում է կայացրել վերոհիշյալ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին՝ նշելով, որ. «(...) վերաքննիչ բողոքի հիմքերը, ինչպես նաև բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմնավորումները բավարար չեն վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու համար»: Վերաքննիչ դատարանն իր որոշումը

պատճառաբանել է հետևյալ կերպ՝ «(...) սույն գործով առկա է հանրային և մասնավոր շահերի որոշակի մրցակցություն, սակայն միևնույն ժամանակ վերաքննիչ դատարանը գտնում է, որ անթույլատրելի է ցանկացած գնով և ցանկացած միջոցով դրանցից որևէ մեկին նախապատվություն տալը՝ ի հաշիվ մյուսի՝ առանց դրա համար օրենքով սահմանված հիմքերի առկայության:

Բողոքարեւրը, գրնելով, որ Մկրտիչ Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված հանցանքում ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով քրեական պարասխանարվությունից ազատելով Ընդհանուր իրավասության դատարանը թույլ է տվել դատական սխալ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում սահմանադրորեն պահպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը, վերաքննիչ բողոքում չի պարճառաբանել, թե պետությունը ինչ անդառնալի կամ անվերականգնելի կորուստ է կրել նշված հանցանքով, սահմանադրորեն պաշտպանվող որ շահն է ապօրինի խախտվել» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, 171-177 թերթեր):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքարեւրը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, հիմնարար խախտման հիմքով ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ չընդունելով, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում: Բողոք բերած անձը նաև փաստարկել է, որ սույն գործով առկա է իրավունքի զարգացման խնդիր երկօբյեկտ հանցագործությունների դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի կիրառման հնարավորության, ինչպես նաև «արդարադատության բուն էությունը խաթարող, սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը խախտող դատական սխալ» հասկացության մեկնաբանության կապակցությամբ:

13. Մասնավորապես, վկայակոչելով Ա.Բաբայանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱԲԴ/0157/01/10 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ բողոքարեւրը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, ընդունելով պետական կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործության կապակցությամբ տուժող Խ.Ֆերոյանի և մեղադրյալ Մ.Սարգսյանի հաշտությունը և վերջինիս կողմից պատճառված վնասը հարթված լինելու փաստը, հաշվի չի առել, որ տուժողը պետական կառավարման կարգի դեմ ուղղված ամբողջ հանցավոր ոտնձգության հասցեատերը չէ և, հետևաբար, չի կարող ներել հանցանք կատարած անձին այդ ոտնձգության համար: Տուժող Խ.Ֆերոյանը կարող էր հաշտվել

մեղադրյալի հետ ոտնձգության իրեն վերաբերելի մասով ու ընդունել վնասի միայն իրեն պատճառված մասի հարթումը: Ավելին՝ մեղսագրվող հանցագործության օբյեկտի և առարկայի առանձնահատկություններով պայմանավորված՝ դատապարտյալ Մ.Մարգարյանը չէր կարող հատուցել կամ այլ կերպ հարթել անձնագրի հափշտակմամբ պատճառված վնասը այնքանով, որքանով չէր կարող վերադարձնել, վերականգնել կամ փոխարինել այն, կամ որևէ այլ գործողությամբ վերականգնել դրա արդյունքում խախտված նրա իրավունքը:

14. Անդրադառնալով հիմնարար խախտման հիմքով ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանություններին՝ բողոքաբերը փաստարկել է, որ ներկայացված բողոքում չի նսեմացվել մասնավոր շահն ի համեմատ հանրային շահի և փորձ չի արվել հիմնավորելու վերջինիս առավել կարևոր նշանակությունն առհասարակ: Վերաքննիչ բողոքում, հաշվի առնելով երկօբյեկտ հանցագործությունների դեպքում հանրային և մասնավոր շահերի՝ ի սկզբանե օրենսդրորեն հաշվի առնված փոխադարձ գերակայությունը, արձանագրվել է այդ գերակայության մեջ առավել նշանակություն ստացած օբյեկտի կարևորությունը պատշաճ գնահատելու անհրաժեշտությունը:

Քննարկելով Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման մեջ առկա այն հիմնավորումը, որ վերաքննիչ բողոքի հեղինակը չի հիմնավորել *«թե պերությունը ինչ անդառնալի կամ անվերականգնելի կորուստ է կրել նշված հանցանքով, սահմանադրորեն պաշտպանվող որ շահն է սպորինի խախտվել»*, բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել դատական ակտի վերանայման բացառիկ հիմքը՝ *«արդարադատության բուն էությունը խաթարող դատական սխալ»* հասկացությունը: Բողոքաբերը, մասնավորապես, նշել է, որ սահմանադրորեն պաշտպանվող շահերի խախտումը օրենսդիրը վերագրել է ոչ թե հանցագործությանը, այլ դրա վերաբերյալ վարույթում թույլ տրված դատական սխալին: Այսպիսով, անհրաժեշտ է, որ սահմանադրորեն պաշտպանվող շահերի խախտումը հանդիսանա ոչ թե հանցագործության, այլ դրա վերաբերյալ քննության ընթացքում թույլ տրված դատական սխալի հետևանք:

15. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը բեկանել և քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման՝ որպես օրինական ուժի մեջ մտած

դատական ակտերի բողոքարկման հիմքի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մաս, 376.1-րդ հոդվածի 2-րդ կետ) մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի սույն գործով անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

17. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորված է արդյոք ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

18. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա) կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը րվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա:

(...)»:

Քսերաժն ընդդեմ Ալբանիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո իրավունքի գերակայությունը պայմանավորվող պետությունների ընդհանուր նվաճումն է, որի հիմնարար կողմերից է իրավական որոշակիության սկզբունքը, որը պահանջում է, ի թիվս այլնի, որ եթե դատարանները վերջնականապես որոշել են որևէ հարց, նրանց որոշումը չպետք է կասկածի տակ դրվի (տե՛ս *Brumărescu v. Romania* [ՄՊ], թիվ 28342/95, §61, ՄԻԵԴ 1999-VII):

(...) [Ի]րավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով (տե՛ս *Ryabykh v. Russia*, թիվ 52854/99, § 52, ՄԻԵԿ 2003-IX) կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ (տե՛ս *Bratyakin v. Russia* (որոշում),

թիվ 72776/01, 9 մարտի 2006)» (տե՛ս Xheraj v. Albania գործով 2008թ. հուլիսի 29-ի վճռի 51-52-րդ կետեր):

Ռադչիկովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով իրավական որոշակիության սկզբունքի կարևորությունը, նշել է, որ քրեական գործերի վերանայման առանձնահատուկ համատեքստում իրավական որոշակիության սկզբունքի պահանջը բացարձակ չէ, և այս սկզբունքից շեղվող ցանկացած որոշում պետք է գնահատվի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետի լույսի ներքո, որն ուղղակիորեն թույլատրում է պետությանը նոր փաստերի կամ նախորդ վարույթում տեղ գտած՝ **գործի ելքի վրա ազդող հիմնարար թերության** հիմքով նորոգել գործի վարույթը (*տե՛ս Radchikov v. Russia գործով 2007 թվականի մայիսի 24-ի վճռի 42-րդ կետ*):

Մեջբերված իրավական նորմերի և դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ իրավական որոշակիության (*res judicata*) և կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (*non bis in idem*) սկզբունքները մարդու իրավունքները երաշխավորող հիմնարար դրույթներ են: Մինևույն ժամանակ այնպիսի բացառիկ դեպքերում, երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա, իրավական որոշակիության և կրկին անգամ դատվելու անթույլատրելիության հիմնարար պահանջներից շեղումը թույլատրելի է (*Կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետ*):

19. Կոնվենցիայի վերոհիշյալ դրույթներին, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում մշակված չափանիշներին համապատասխան ամրագրելով իրավական որոշակիության և կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքները՝ ՀՀ օրենսդիրը միաժամանակ նախատեսել է այդ սկզբունքներից շեղվելու իրավական հնարավորությունը և դատավարական ընթացակարգը:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

Նույն օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված է, որ. «[Ն]ույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

«(...)

2) առաջին ասրյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել **նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ**, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

(...)»:

Վերոշարադրյալ քրեադատավարական նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը տարբերակել է օրինական ուժի մեջ չմտած (սովորական վերանայում) և օրինական ուժի մեջ մտած (բացառիկ վերանայում) դատական ակտերի վերանայման հիմքերը: Մասնավորապես, ի տարբերություն օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի **հիմնարար** խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «**հիմնարար խախտումը**» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրվում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին:

20. Անձի վիճակի վատթարացմանն ուղղված օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հիմք նախատեսելով նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտումը՝ օրենսդիրը սահմանել է նաև այդ խախտման բնույթին առաջադրվող երկու պարտադիր չափանիշներ: Այսպես՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վատթարացման առումով կարող են վերանայվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտման դեպքում, որը՝

- խաթարում է արդարադատության բուն էությունը,

- խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Անդրադառնալով վերոհիշյալ չափանիշներին՝ անհրաժեշտ է փաստել, որ բովանդակային-իրավական տեսանկյունից արդարադատությունը հանդես է գալիս որպես դատական իշխանության իրականացման միջոց, ինչպես նաև անձի իրավունքների ու ազատությունների անմիջական գործողությունը և պաշտպանությունն ապահովելու երաշխիք: Քրեական գործերով արդարադատությունն իր հերթին՝ որպես դատական իշխանության բացառիկ իրավագործություն, ուղղված է քրեադատավարական օրենքով սահմանված ընթացակարգով քրեական գործի ըստ էության քննությանը և լուծմանը, անձի մեղավորության կամ անմեղության մասին որոշում կայացնելուն, հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ արդարացի պատիժ նշանակելուն, ինչպես նաև օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում անձին պատասխանատվությունից կամ պատժից ազատելուն: Դրա իրականացումը վերջին հաշվով ուղղված է հանցագործությունից տուժած անձանց իրավունքները և օրինական շահերը պաշտպանելուն, նրանց պատճառված վնասը վերականգնելուն, հանցանք կատարած անձանց դատապարտելուն, անմեղ անձանց արդարացնելուն: Իսկ քրեադատավարական մնացած բոլոր գործառնություններն ուղղված են արդարադատության արդյունավետ իրականացումն ապահովելուն:

Ինչ վերաբերում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի հավասարակշռությանը, ապա այն ենթադրում է քրեական դատավարության ոլորտում հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ և արդարացի հավասարակշռության ապահովում, մասնավորապես՝ մի կողմից՝ քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանության, մյուս կողմից՝ վարույթն իրականացնող մարմինների գործառնությունների արդյունավետ իրականացման հավասարակշռում, ինչպես նաև քրեական դատավարության առանձին մասնակիցների, մասնավորապես՝ մեղադրյալի (ամբաստանյալի, դատապարտվածի, արդարացվածի) և տուժողի՝ սահմանադրորեն պաշտպանվող իրավունքների և օրինական շահերի հավասարակշռումը:

21. Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում անձի վիճակը վատթարացնելուն ուղղված՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հիմքերը և հիմնավորումները գնահատելիս իրավասու դատական ատյանը պետք է որոշի, թե արդյոք դրանք բավարար են եզրահանգելու, որ

ա) առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա,

բ) դրա արդյունքում իրականացված արդարադատությունը չէր կարող ծառայել իր նպատակներին,

գ) այդ դատական սխալի հետևանքով խախտվում է հանրային և մասնավոր շահերի Սահմանադրությամբ երաշխավորված հավասարակշռությունը:

Այլ խոսքով՝ դատարանը պետք է որոշի, թե արդյոք առերևույթ թույլ տրված դատական սխալը կարող է արժեզրկել տվյալ գործով իրականացված արդարադատությունը, դրա արդյունքում կայացված դատական ակտի՝ որպես արդարադատության ակտի դերն ու նշանակությունը, քրեական դատավարության համար ելակետային նշանակություն ունեցող սկզբունքները: Այդպիսի դատական սխալն առկա է, օրինակ, երբ անձը քրեական պատասխանատվությունից կամ պատժից ակնհայտ անհիմն ազատվել է կամ նրա նկատմամբ կայացվել է արդարացման դատական ակտ, անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը ստացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական և այլն:

22. Սույն գործի նյութերի համաձայն՝ Մ.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից հետախուզման մեջ գտնվելու պատճառով հնարավորություն չունենալով իր օրինական փաստաթղթերով տեղաշարժվելու արտասահմանյան երկրների սահմանային կետերով, իբրև թե բջջային հեռախոսի քարտ գնելու պատրվակով, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, հափշտակել է համադասարանցու՝ Խ.Ֆերոյանի պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը, իր կողմից անձամբ օգտագործելու նպատակով կեղծել այն՝ փակցնելով իր լուսանկարը և առանց սահմանված փաստաթղթերի ՀՀ պահպանվող պետական սահմանն ապօրինի հատելով, 2013 թվականի փետրվարի 23-ին «Զվարթնոց» օդանավակայանից Երևան-Մոսկվա 1863 համարի չվերթով մեկնել է «Շերեմետևովո-3» օդանավակայան (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով, որ տուժող Խ.Ֆերոյանը և ամբաստանյալը հաշտվել են, վերջինս հատուցել է տուժողին պատճառված վնասը, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով, 2014 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքի մասով Մ.Սարգսյանին ազատել է քրեական պատասխանատվությունից, վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել և քրեական գործի վարույթը՝ կարճել՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով: Առաջին ատյանի դատարանի նույն օրվա դատավճռով Մ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ

հողվածի 1-ին մասով նախատեսված արարքների կատարման մեջ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետերը):

Վերոհիշյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանը մերժել է՝ ստորադաս դատարանի դատական ակտերը թողնելով անփոփոխ, իսկ Վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված բողոքը Վճարելի դատարանի կողմից վերադարձվել է (տե՛ս համապատասխանաբար սույն որոշման 9-րդ և 4-րդ կետերը): Արդյունքում Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ դատական ակտերը մտել են օրինական ուժի մեջ:

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը հիմնարար խախտման հիմքով բերել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ դատարանն իր հերթին մերժել է բողոքը վարույթ ընդունելը՝ փաստարկելով, որ վերաքննիչ բողոքի հիմքերը, ինչպես նաև բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմնավորումները բավարար չեն վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու համար: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է, որ անթույլատրելի է ցանկացած գնով և ցանկացած միջոցով հանրային և մասնավոր շահերից որևէ մեկին նախապատվություն տալը՝ ի հաշիվ մյուսի՝ առանց դրա համար օրենքով սահմանված հիմքերի առկայության: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ բողոքաբերը վերաքննիչ բողոքում չի պատճառաբանել, թե «*պետությունը ինչ անդառնալի կամ անվերականգնելի կորուստ է կրել նշված հանցանքով, սահմանադրորեն պաշտպանվող որ շահն է ապօրինի խախտվել*» (տե՛ս սույն որոշման 5-րդ և 11-րդ կետերը):

23. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 18-21-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ «*(...) սույն գործով առկա է հանրային և մասնավոր շահերի որոշակի մրցակցություն, սակայն միևնույն ժամանակ (...) անթույլատրելի է ցանկացած գնով և ցանկացած միջոցով դրանցից որևէ մեկին նախապատվություն տալը՝ ի հաշիվ մյուսի՝ առանց դրա համար օրենքով սահմանված հիմքերի առկայության*», միաժամանակ չի պատճառաբանել, թե սույն գործով հանրային և մասնավոր շահերի մրցակցության առկայության պարագայում իրավաչափ էր արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի կիրառմամբ հանրային շահի հետ համեմատությամբ մասնավոր շահին նախապատվություն տալը:

Վճարելի դատարանը հիմնավորված չի համարում նաև Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ «*Բողոքաբերը (...) վերաքննիչ բողոքում չի պարճառաբանել, թե պետությունը ինչ անդառնալի կամ անվերականգնելի կորուստ է կրել նշված հանցանքով, սահմանադրորեն*

պաշտպանվող որ շահն է ապօրինի խախտվել» (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), քանի որ հիմնարար խախտումը բնորոշող տարրերը՝ արդարադատության բուն էության խաթարումը, սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռության խախտումը, օրենսդիրը կապում է ոչ թե հանցագործության բնույթի կամ դրա հետևանքների, այլ դրա վերաբերյալ վարույթում թույլ տրված դատական սխալի հետ (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

24. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը եզրահանգում է, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված չէ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, մերժելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը վարույթ ընդունելը, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, այն է՝ սխալ մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասը՝ չի պահպանել այն, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող որոշման կայացմանը: Թույլ տրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի որոշման և նույն օրվա մեղադրական դատավճռի դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 13-րդ կետում բարձրացրած փաստարկներին, ապա դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Մկրտիչ Համլետի Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական

հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթի մասը կարճելու մասին Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի որոշման, ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին և 329-րդ հոդվածի 1-ին մասերով 2014 թվականի ապրիլի 2-ի մեղադրական դատավճռի դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վերաքննիչ բողոքը վարույթը ընդունելը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

19.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0083/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Իլլարիոն Ստեփանի Նունուշյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշման դեմ պաշտպան Ռ.Սիրեկանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Շենգավիթի քննչական բաժնում 2014 թվականի մարտի 3-ին հարուցվել է թիվ 11117714 քրեական գործը:

2014 թվականի մարտի 14-ին Իլլարիոն Նունուշյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2014 թվականի մայիսի 13-ին Ի.Նունուշյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2014 թվականի օգոստոսի 12-ին գործը մեղադրական եզրակացությանը ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին աստիճանի դատարան):

2. Առաջին աստիճանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով Ի.Նունուշյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել տուգանքի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կարգով նշանակված պատժին լրիվ՝ 3 (երեք) տարի 3 (երեք) ամիս ժամկետով, գումարվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 17-ի դատավճռով նշանակված պատիժը, և Ի.Նունուշյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 3 (երեք) ամիս ժամկետով և տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Դատախազ Ա.Սմբատյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին աստիճանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռը՝ բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել պաշտպան Ռ.Միրեկանյանը, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մարտի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ի.Նունուշյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն/ս ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտարկություններ 2014 թվականի մարտի 2-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում, ապակին կոտրելու միջոցով ապօրինի մուտք է գործել շինություն հանդիսացող Երևանի Արին-Բերդի 2-րդ նրբանցքի 116/3 հասցեում գրավող խորհանոց և այնտեղից գողացել 1 հար ջահ իր տուփով, սպիրակեղենի հավաքածու և կանաչի կոշիկներ՝ Վարդուհի Հարությունյանին պարճատելով զգալի չափերի՝ 35.000

(երեսունհինգ հազար) ՀՀ դրամի գույքային վնաս (...)» (տես քրեական գործ, հատոր 1, թերթեր 175-176):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) [Ա]մբաստանյալ Իլլարիոն Նունուշյանի նկատմամբ որպես պատժարեալ պետք է նշանակվի փուլային: Դատարանը գրնում է, որ այդ պարժարեալը նշանակելու միջոցով կարելի է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պարժի նպատակներին (...):

Նկարի ունենալով, որ սույն գործով վերագրվող արարքն ամբաստանյալ Իլլարիոն Նունուշյանը կարարել է 2014թ. մարտի 2-ին, այսինքն՝ նախքան Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. ապրիլի 17-ի դատավճիռը կայացնելը, ուստի ամբաստանյալի նկատմամբ վերջնական պարժ պետք է նշանակվի ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով նախարեալված կարգով նշանակվող պարժին լրիվ գումարելով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. ապրիլի 17-ի դատավճով նշանակված պարժը» (տես քրեական գործ, հատոր 1, թերթեր 203-204):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում արձանագրել է. «(...) Ամբաստանյալ Իլ. Նունուշյանին 2014թ. սեպտեմբերի 9-ի դատավճով մեղսագրված արարքը կարարվել է 2012 թվականի օգոստոս ամսին:

ԵՇԴ/0070/01/13 գործը Դատարանի վարույթ է ընդունվել 2013 թվականի հունիսի 7-ին, իսկ դատավճիռը կայացվել է 2014 թվականի սեպտեմբերի 9-ին:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանում ԵՇԴ/0083/01/14 քրեական գործը քննելու ընթացքում, Դատարանի կողմից բողոքարկվող 05.09.2014թ. դատավճիռը կայացնելուց հետո, նույն անձի նկատմամբ 09.09.2014թ.-ին ԵՇԴ/0070/01/13 գործով կայացվել է ևս մեկ դատավճիռ:

Դատարանը Իլլարիոն Նունուշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով պարժ է նշանակել փուլային՝ 500.000 դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի 6-րդ մասի կանոններով գումարել է Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 17.04.2014թ. դատավճով նշանակված պարժը՝ 3 փարի 3 ամիս ժամկետով ազատագրելու:

Փաստորեն, ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի 6-րդ մասի կանոններով, 4 օր հետո նույն անձի վերաբերյալ կայացրած 09.09.2014թ. դատավճով նշանակված պարժը չէր կարող համակցվել:

Մեղադրող Կ.Ադամյանը վերաքննիչ բողոք է բերել մեկ այլ՝ 09.09.2014թ. դատավճի դեմ, որը Վերաքննիչ դատարանի 26.11.2014թ. որոշմամբ մերժվել է, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր

իրավասության առաջին արյանի դադարանի՝ 2014թ. սեպտեմբերի 09-ի դադարանի որոշումը՝ Իլլարիոն Սրեփանի Նունուշյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, բեկանվել և գործն ուղարկվել է Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին արյանի դադարան՝ այլ կազմով նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

Նոր քննության ընթացքում Դադարանը պետք է պարզաճ ընթացակարգի սահմաններում հետազոտի Իլլարիոն Նունուշյանի նկարմամբ կայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին արյանի դադարանի 2014թ. ապրիլի 17-ի /Գործ՝ թիվ ԵՇԴ/0139/01/13/ և 2014թ. սեպտեմբերի 5-ի դադարանի որոշումը /Գործ՝ թիվ ԵՇԴ/0083/01/14/, այնուհետև ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոններով սույն գործով նշանակված վերջնական պարզի ժամկետին պետք է հաշվակցի հիշյալ երեք դադարանի որոշումներով նշանակված պարզի կրած մասը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դադարանը գտնում է, որ Դադարանի դադարանի ակտը պետք է բեկանվել և գործն ուղարկվել առաջին արյանի դադարան՝ այլ կազմով նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

Նոր քննության ընթացքում Դադարանը պետք է պարզաճ ընթացակարգի սահմաններում հետազոտի Իլլարիոն Նունուշյանի նկարմամբ կայացված Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դադարանի 2014թ. ապրիլի 17-ի, 2014թ. սեպտեմբերի 5-ի և 2014թ. սեպտեմբերի 9-ի դադարանի որոշումները, այնուհետև ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի 6-րդ մասի կանոններով նշանակվի վերջնական պարզի:

Վերաքննիչ դադարանը Շենգավիթ վարչական շրջանի դադարանի իրավասության դադարանի՝ Ա.Սմբարյանի վերաքննիչ բողոքը քննության առարկա չի դարձնում, քանի որ Դադարանի կողմից թույլ տրված դադարանի սխալը Վերաքննիչ դադարանին հնարավորություն չի ընձեռում բերված բողոքի կապակցությամբ կայացնել համապատասխան որոշում, հետևաբար գտնում է, որ նման պայմաններում վերաքննիչ բողոքը պետք է մերժել» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 44-45):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձի պնդմամբ Վերաքննիչ դատարանի դատական ակտը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, որոնք ազդել են գործի ելքի վրա, մասնավորապես՝ հանգեցրել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճի անհիմն բեկանմանը:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոքաբերը, մեջբերելով Գ.Ղազարյանի գործով Վճարելի դատարանի արտահայտած դիրքորոշումները, նշել է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված հետևությունները որևէ առնչություն չունեն սույն գործի փաստական հանգամանքների հետ, վերաբերում են լրիվ այլ քրեական գործին և չեն առնչվում Ի.Նունուշյանին առաջադրված մեղադրանքին: Այսպես՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճռով նշանակված պատիժը 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով նշանակված պատժին ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոններով չէր կարող համակցվել, քանի որ Առաջին ատյանի դատարանը չէր կարող անդրադառնալ չորս օր հետո կայացվելիք դատական ակտով նշանակվող պատժին: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, այդպիսի հիմքով բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, խախտել է նաև Ի.Նունուշյանի պաշտպանության իրավունքը, քանի որ պաշտպանական կողմը զրկված է եղել վերաքննիչ բողոքի պատասխանում ներկայացված առարկություններում այդ հարցին անդրադառնալու և իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

9. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Մասնավորապես, բողոք բերած անձը նշել է, որ մեղադրողն իր վերաքննիչ բողոքում խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռը, Ի.Նունուշյանի նկատմամբ նշանակված պատիժը խստացման առումով փոփոխել և նշանակել հոդվածի սանկցիայով նախատեսված ազատագրկման ձևով համաչափ պատիժ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանել է այլ հիմքով և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ:

Մեջբերելով Ա.Խուրշուդյանի գործով Վճարելի դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները՝ բողոքի հեղինակը նշել է, որ հանցավորի նկատմամբ նշանակված պատժի անհամաչափությունը ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատական ակտի անվերապահ բեկանմանը հանգեցնող դատավարական իրավունքի խախտում է և ոչ էլ նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված քրեական գործի կարճման հիմք: Հետևաբար Վերաքննիչ դատարանն իրավասու չէր սեփական նախաձեռնությամբ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս անդրադառնալ Ի.Նունուշյանի նկատմամբ նշանակված պատժի

հարցին և այդ հիմքով բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճարել բողոքն ընդունել վարույթ, բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված է արդյոք ամբաստանյալ Ի.Նունուշյանի նկատմամբ 2014 թվականի սեպտեմբերի 5-ին կայացված դատավճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված

2. Դատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են փյույթ քրեական գործը լուծելիս:

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝ դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

(...)

դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց է տրվում՝

(...)

2) գործի հանգամանքների, մեղադրանքի ապացուցված լինելու և ամբաստանյալի մեղավորության մասին դատարանի հետևությունները.

3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները.

4) օրենքի այն նորմերը, որոնցով դատարանը ղեկավարվել է որոշումը ընդունելիս:

(...):»:

Նույն օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Դատարավճռի եզրափակիչ մասում նշվում են դատարանի որոշումները»:

Մեջբերված նորմերը Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել Գ.Ղազարյանի գործով որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Ա]ռաջին արյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտի՝ դատարավճռի կառուցվածքին և բովանդակությանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ներկայացվող պահանջները վերաբերելի են նաև վերադաս դատական արյանի՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտին: Այլ կերպ՝ վերաքննիչ դատարանի դատական ակտերը ևս պետք է կազմված լինեն ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից, որոնց ներկայացվում են նույն բովանդակային պահանջները, ինչ դատարավճռին:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դատական ակտի կառուցվածքին և բովանդակությանը որոշակի պահանջներ ներկայացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական ակտը պետք է ամբողջական տեղեկություն պարունակի քննված գործի վերաբերյալ, ինչպես նաև ներառի դատարանի կողմից լուծման ենթակա բոլոր հարցերի պարասխանները: Բացի այդ, դատական ակտի տարբեր կառուցվածքային մասերում (ներածական, նկարագրական-պատճառաբանական, եզրափակիչ) արտացոլված տեղեկությունը պետք է ներքին միասնություն և տրամաբանական կապ ունենա, այդ թվում՝ վերաբերի միևնույն քրեական գործին, հսկառակ պարագայում, դատարանի դատական ակտն անօրինական է» (տե՛ս Գեղամ Ղազարյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԿ/0121/01/11 որոշման 19-20-րդ կետերը):

Վերահաստատելով Գ.Ղազարյանի գործով ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Ա.Հարությունյանի գործով որոշման շրջանակներում Վճարելի դատարանն արձանագրել է. «(...) [Դ]ատական ակտի եզրափակիչ մասում առկա եզրահանգումները պետք է թիսն նույն դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված հետևություններից և համապարասխանն դրանց: Հետևաբար, վերաքննիչ դատարանի կողմից կայացվող՝ վերաքննիչ բողոքը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշման եզրափակիչ մասում առկա եզրահանգումը նույնպես պետք է համապարասխանի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված վերլուծությանը» (տե՛ս Աննա Հարությունյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵՇԿ/0110/01/11 որոշման 14-րդ կետը):

13. Վերահաստատելով և զարգացնելով Գ.Ղազարյանի ու Ա.Հարությունյանի գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատական

ակտը պետք է պարունակի այնպիսի տվյալներ, որոնք վերաբերում են միևնույն քրեական գործին: Մասնավորապես, որոշման պատճառաբանական հատվածում շարադրված դատարանի հետևությունները պետք է տրամաբանորեն կապված լինեն և բխեն գործի փաստական հանգամանքներից, դրանում պետք է առկա լինեն ինչպես բողոքարկվող դատական ակտի օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության վերաբերյալ դատողություններ, այնպես էլ վերջնական եզրահանգումներ ներկայացված բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Դատական ստուգման արդյունքում բողոքարկվող դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու դեպքում Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում պետք է հստակ շարադրի, թե տվյալ գործի շրջանակներում համապատասխան ստորադաս դատարանի կողմից ինչպիսի դատական սխալ է թույլ տրվել:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի համաձայն՝ *«Վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն ստուգում է գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեական դատավարական օրենքի նորմերի պահպանումը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի համաձայն՝ *«Բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ (...)»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Վերաքննիչ դատարանն օժտված է ստորադաս դատարանի դատական ակտերի օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության ստուգման բացառիկ լիազորությամբ: Իր նշված գործառույթն իրականացնելիս Վերաքննիչ դատարանն իրավասու է դատական ակտը բեկանել կամ փոփոխել, եթե թույլ է տրվել դատական սխալ: Ընդ որում, բողոքարկվող ակտի բեկանումը կամ փոփոխումը կարող է պայմանավորված լինել միայն տվյալ գործի քննության ընթացքում առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալով: Մեկ այլ գործով արձանագրված դատական սխալը որևէ դեպքում չի կարող մեխանիկորեն հանգեցնել վերանայվող ակտի բեկանմանը կամ փոփոխմանը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճռով Ի.Նունուշյանի նկատմամբ պատիժ է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կարգով՝ լրիվ գումարելով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 17-ի դատավճռով նշանակված պատիժը (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը դատախազ Ա.Սմբատյանի վերաքննիչ բողոքը քննության առարկա չի դարձրել՝ պատճառաբանելով, որ Առաջին

ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը Վերաքննիչ դատարանին հնարավորություն չի ընձեռում բերված բողոքի կապակցությամբ կայացնելու համապատասխան որոշում: Արդյունքում դատախազի վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռը՝ բեկանել և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ: Մասնավորապես, նշել է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է պատշաճ ընթացակարգի սահմաններում հետազոտի Ի.Նունուշյանի նկատմամբ Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 2014 թվականի ապրիլի 17-ին, 2014 թվականի սեպտեմբերի 5-ին և 2014 թվականի սեպտեմբերի 9-ին կայացված դատավճիռները, այնուհետև ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոններով նշանակվի վերջնական պատիժ (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

15.1. Վերոգրյալ փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատական ակտը բեկանելիս և գործը նոր քննության ուղարկելիս Վերաքննիչ դատարանը հաշվի է առել հետևյալ հանգամանքները.

ա) Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից մեկ այլ՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատական ակտը կայացնելիս թույլ տրված դատական սխալը, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները չպահպանելը,

բ) 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատական ակտի վերանայման արդյունքում Վերաքննիչ դատարանի կողմից 2014 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ սահմանված գործի նոր քննության ծավալը՝ այն, որ ստորադաս դատարանը պետք է պատշաճ ընթացակարգի սահմաններում հետազոտի Ի.Նունուշյանի նկատմամբ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 2014 թվականի ապրիլի 17-ին (Գործ՝ թիվ ԵՇԴ/0139/01/13) և 2014 թվականի սեպտեմբերի 5-ին կայացված դատավճիռները (Գործ՝ թիվ ԵՇԴ/0083/01/14), այնուհետև ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոններով այդ գործով նշանակված վերջնական պատժի ժամկետին հաշվակցի հիշյալ երեք դատավճիռներով նշանակված պատժի կրած մասը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Ընդ որում, սույն հանգամանքի հետ կապված՝ հարկ է նշել նաև, որ Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 26-ի որոշման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տվյալ դատական ակտով վերջինս պարտավորեցրել է առաջին ատյանի դատարանին նոր քննության ընթացքում հետազոտել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ միայն 2014 թվականի ապրիլի 17-ի

դատավճիռը, այլ ոչ թե նաև 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատական ակտը:

16. Սույն որոշման 15-15.1-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառաբանական հատվածում շարադրված հետևությունները կապված չեն և չեն բխում սույն գործի փաստական հանգամանքներից, վերաբերում են Ի.Նունուշյանի նկատմամբ մեկ այլ գործով կայացված դատական ակտի հիմքում ընկած տվյալներին: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը չի պարունակում բողոքարկվող դատական ակտի՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռի օրինականության և հիմնավորվածության, տվյալ գործով թույլ տրված դատական սխալի վերաբերյալ որևէ տվյալ, ինչը կարող էր հիմք ծառայել դատավճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար: Ընդհակառակը, Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճռով առաջին ատյանի դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ, այն է՝ չի կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասը, միաժամանակ բեկանել է նաև Ի.Նունուշյանի վերաբերյալ 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատավճիռը:

Արդյունքում ստացվում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշման պատճառաբանական հատվածում շարադրվել են ոչ թե բողոքարկվող, այլ մեկ ուրիշ դատական ակտին վերաբերող տվյալներ, որով արձանագրած դատական սխալը Վերաքննիչ դատարանը մեխանիկորեն տարածել է 2014 թվականի սեպտեմբերի 5-ի դատական ակտի նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ի.Նունուշյանի նկատմամբ 2014 թվականի սեպտեմբերի 5-ին կայացված դատավճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը օրինական և հիմնավորված չէ:

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը չի պահպանել դատական ակտին քրեադատավարական օրենքով ներկայացվող պահանջները՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ և 371-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով հանդիսանում է քրեադատավարական օրենքի էական խախտում:

Վերոգրյալ հանգամանքը Վճարելի դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ

կետի հիման վրա բեկանելու Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը և գործն ուղարկելու նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները և գործի հանգամանքների բազմակողմանի վերլուծության ու գնահատման հիման վրա հանգի համապատասխան հետևության:

18. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 9-րդ կետում բարձրացրած փաստարկին, ապա Վճարելի դատարանը փաստում է, որ սույն որոշմամբ արձանագրված խախտումներն իրենց բնույթով այնպիսին են, որ հնարավորություն չեն ընձեռում անդրադառնալու դրան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Իլլարիոն Ստեփանի Նունուշյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

20.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0033/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Ը.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սերգեյ Մարտիկի Ափոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հոկտեմբերի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 313-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 61204412 քրեական գործը: Նույն օրը ձերբակալվել է Սերգեյ Մարտիկի Ափոյանը:

Նախաքննության մարմնի՝ 2012 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ Ս.Ափոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ Ս.Ափոյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի մարտի 5-ի որոշմամբ Ս.Ափոյանի նկատմամբ առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երեք դրվագ), 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 1-ին մասով (երեք դրվագ):

2013 թվականի մարտի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 23-ի դատավճռով Ս.Ափոյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երեք դրվագ), 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նույն դատավճռով Ս.Ափոյանը մեղավոր է ճանաչվել երեք դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և յուրաքանչյուր դրվագով դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ս.Ափոյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Մեղադրող Ա.Գևորգյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 23-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանը:

Վճարելի դատարանը 2015 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է.Բաբայանի վճարելի բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Ամբաստանյալ Ս.Ափոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա, 2010 թվականի հուլիս ամսվա ընթացքում չարաչափելիորեն իր աներ Գագիկ Հովհաննեսի Փարոյանի վստահությունը, կուրակած պարտքերը մարելու և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նպատակով խնդրել է Գ.Փարոյանին նրան պարկանող՝ Երևանի Եղբայրության փողոցի 11-րդ շենքի թիվ 17 հասցեում գրավող բնակարանը գրավադնել: Վերջինս Գագիկ Հովհաննեսի փողոցի 11-րդ շենքի թիվ 17 հասցեում գրավող զինվորական զորքի 09-ին Երևանի «Շենգավիթ» նուրարական գրասենյակում Ս.Ափոյանին հիշյալ բնակարանը փոխհանելու, փրկապետելու, իր նախընտրած պայմաններով վաճառելու, իր հայեցողությամբ գրավադնելու և մի շարք այլ գործողություններ կատարելու լիազորություն է տրվել:

2010 թվականի հուլիսի 17-ին Ս.Ափոյանը Երևանի «Շենգավիթ» նուրարական գրասենյակում իրեն լիազորող Գ.Փարոյանի ամուսնացած լինելու հանգամանքը թաքցնելով, իրականությանը չհամապատասխանող հայտարարություն է արել այն մասին, թե Գ.Փարոյանն ամուսնացած չէ, սպա Երևանի Եղբայրության փողոցի 11-րդ շենքի թիվ 17 հասցեում գրավող բնակարանը՝ գրավադնելու փոխարեն, Գ.Փարոյանից գաղտնի, ձևական առուվաճառքի պայմանագրով 18 մլն ՀՀ դրամով վաճառել է Սամվել Շարթոյանին և խարդախությամբ հափշտակել նշված գումարը:

Բացի այդ, Ս.Ափոյանը 2012 թվականի մայիսին «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպության առանձնապես խոշոր չափերով գույքը խաբեությամբ հափշտակելու դիտարկությամբ, կեղծել է Կուրաքի մարզի Արգել գյուղի 2-րդ փողոցի 2-րդ փակուղու թիվ 4/1 տան նկարմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, նույն տան նկարմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքը, դրանցում գույքի իրական սեփականատիրոջ փոխարեն նշել է իր տվյալները, ներկայացրել վարկային կազմակերպություն, որի հիման վրա իր ծանոթ Վաչագան Գրիգորյանի անվամբ 2012 թվականի մայիսի 8-ին արացել է 4.400.000 ՀՀ դրամ վարկ և հափշտակել այն:

Այնուհետև, Սերգեյ Ափոյանը դարձյալ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպության առանձնապես խոշոր չափերով գույքը հափշտակելու դիտարկությամբ, կեղծել է Երևանի Վ.Համբարձումյան փողոցի 41-րդ տան նկարմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, անշարժ գույքի և դրա նկարմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքը, բնակելի տան շուկայական և լիկվիդացիոն արժեքների վերաբերյալ արձանագրությունը, դրանցում գույքի իրական սեփականատիրոջ փոխարեն նշել իր ծանոթ Արմեն Բադալյանի տվյալները, սպա

ներկայացրել վարկային կազմակերպություն և դրանց հիման վրա 2012 թվականի մայիսի 31-ին վերջինիս անվանք ստացել 17.446.820 ՀՀ դրամին համարժեք 43.000 ԱՄՆ դոլար և կրկին համաչափել:

Բացի այդ, նույն դիրավորությամբ ու նկարագրված եղանակով կեղծել է Երևանի Կորյունի 1-ին նրբանցքի 10-րդ շենքի 8-րդ բնակարանի նկարմամբ իրավունքների պեղական գրանցման վկայականը, դրա նկարմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքը, որոնց մեջ գույքի իրական սեփականատիրոջ փոխարեն նշել՝ իր ծանոթ Մարինե Մելիքյանի տվյալները, ներկայացրել հիշյալ վարկային կազմակերպություն, և համաչափելու նպատակով փորձել է ստանալ 16.343.600 ՀՀ դրամին համարժեք 40.000 ԱՄՆ դոլար վարկ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցանքն ավարտին չի հասցվել, քանի որ 2012 թվականի օգոստոսի 31-ին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի Արարկիրի սպասարկման գրասենյակում բացահայտվել է ներկայացված փաստաթղթերի կեղծ լինելու հանգամանքը, որի կապակցությամբ նույն օրը հաղորդում է ուղարկվել Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն» (տես քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 271-272):

6. Առաջին ատյանի դատարանը դատաքննության արդյունքներով հաստատված է համարել, որ. «(...) 2010թ. հուլիսին ամբաստանյալ Ս.Ա. փոխարեն դիմել է աներոջը՝ տուժող Գ. Փարոյանին, ու խնդրել է իր ունեցած պարտքերը մարելու և ձեռնարկարհրական գործունեություն ծավալելու համար օգնել իրեն՝ նրա՝ ք. Երևանի Եղբայրության փողոցի 11-րդ շենքի հ. 17 բնակարանի գրավադրմամբ ստանալ վարկ ու թույլատրել տնօրինել այն: Ամբաստանյալը նաև պարտավորվել է անձամբ մարել վարկը: Տուժողը համաձայնվել է և 2010թ. հուլիսի 9-ին ք. Երևանի «Շենգավիթ» նոտարական գրասենյակի նոտար Սվետլանա Բադիրյանի կողմից հաստատված լիազորագիր է տվել ամբաստանյալին, որով նրան լիազորել է իր անունից կատարելու որոշակի գործողություններ, մասնավորապես՝ տնօրինել, տիրապետել, իր նախընտրած պայմաններով վաճառել, իր հայեցողությամբ փոխանակել, գրավ դնել և գրավից հանել իր բնակարանը:

Ամբաստանյալը, ցանկանալով արագ ստանալ իրեն անհրաժեշտ գումարը և համոզված լինելով, որ բանկից վարկ ստանալու համար՝ գրավի ու վարկի պայմանագրերի կնքման դեպքում, երկար ժամանակ կպահանջվի, ք. Երևանի «Շենգավիթ» նոտարական գրասենյակում գրավոր հայտարարելով, որ տուժողն ամուսնացած չէ, տուժողից ստացած լիազորագրով 2010թ. հուլիսի 17-ին վկա Ս. Շարբայանի հետ կնքել է շինծու գործարք՝ փոխառության և գրավադրման գործարքները քողարկելու նպատակով վերջինիս հետ կնքել է տուժողի՝ ք. Երևանի Եղբայրության փողոցի 11-րդ շենքի հ. 17 բնակարանն իրական շուկայական արժեքից ակնհայտ ցածր

գնով՝ 18 մլն դրամով, նրան վաճառելու մասին առուվաճառքի պայմանագիր, որը վավերացվել է նույն Անահիտ Մինասյանի կողմից: Այսինքն՝ ամբաստանյալն իրականում բուժողի բնակարանը ոչ թե վաճառել է վկա Ս.Շարբաթյանին, այլ նրանից փոխառությամբ վերցրել է 18 մլն դրամ, ինչի վերադարձնելիությունն ապահովելու համար բուժողի բնակարանը՝ գրավադնելու փո-խարեն, ձևականորեն վաճառել է Ս.Շարբաթյանին, ով բուժողի ներկայությամբ հայտարարել է, որ իրեն իր տված գումարն է հետաքրքրում և այն սրանալուց հետո կվերադարձնի բնակարանը:

(...)

2010թ. վերջին բուժողը, տեղեկանալով, որ իր բնակարանը վաճառվել է, և այլևս ինքը չէ դրա սեփականատերը, դիմել է ամբաստանյալին, ով նրան հանգուցացրել է՝ ասելով, որ որևէ մեկը նրա ընտանիքին չի անհանգուցացնի, քանի որ ինքը լուծելու է բոլոր հարցերը և վերադարձնելու է նրա բնակարանը: Տուժողը հանդիպել է նաև վկա Ս.Շարբաթյանի հետ, ով ասել է, որ նրա բնակարանն իրեն պետք չի, քանի որ դրա դիմաց ինքը գումար է տվել, որը վերադարձնելու դեպքում բնակարանը նորից կլինի բուժողի անվամբ:

(...)

Երբ բուժողը, տեղեկանալով, որ իր բնակարանը Ս.Շարբաթյանի կողմից վաճառվել է վկա Գ.Միքայելյանին, ամբաստանյալից պահանջել է անմիջապես վերադարձնել իր բնակարանը, վերջինս բուժողին տեղեկացնելով, որ այն աճուրդով վաճառվել է մեկ այլ անձի, նրան առաջարկել է իր օժանդակությամբ դիմել դատարան, որպեսզի բնակարանի վրա արգելանք դրվի և այն աճուրդով գնած անձը չկարողանա դրա նկատմամբ ձևակերպել իր սեփականության իրավունքը, և խոստացել է կարճ ժամանակում լուծել բնակարանի հետ կապված հարցերը: Այդ նպատակով՝ բուժողի կողմից տրված լիազորագիրն ու առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով, բուժողի կինը հայցադիմում է ներկայացրել դատարան, և որպես հայցի ապահովման միջոց՝ դատարանի որոշմամբ արգելանք է դրվել բուժողի բնակարանի վրա:

Այնուհետև, **բուժողին տված խոստումը կատարելու՝ սրացած վարկի գումարը վճարելու և բնակարանը բուժողին վերադարձնելու նպատակով**, ամբաստանյալը, կեղծել է Կոտայքի մարզի Արգել գյուղի 2-րդ փողոցի 2-րդ փակուղու հ. 4/1 տան նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականն ու նույն տան նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքը, դրանցում գույքի իրական սեփականատիրոջ փոխարեն նշել է իր տվյալները, դրանք ներկայացրել է «Ֆաթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲ ընկերություն, ու 08.05.2012թ. նշված ընկերության և ամբաստանյալի ծանոթ՝ վկա, Վաչագան Գրիգորյանի

միջև կնքված հ. 00000269 վարկային պայմանագրով ամբաստանյալն սրացել է 4.400.000 դրամ վարկ: (...)

Այնուհետև, նույն նպատակով ամբաստանյալը կեղծել է ք.Երևանի Վ.Համբարձումյան փողոցի հ. 41 տան նկարմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, նույն տան նկարմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքն ու բնակելի տան շուկայական և լիկվիդացիոն արժեքների վերաբերյալ արձանագրությունը, դրանցում գույքի իրական սեփականարիքոջ փոխարեն նշել իր ծանոթ՝ վկա, Արմեն Բաղայանի փյույուները, ապա նշված փաստաթղթերը ներկայացրել է «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲ ընկերություն, ու 31.05.2012թ. նշված ընկերության և վկա Արմեն Բաղայանի միջև կնքված հ. 00000299 վարկային ու գրավի պայմանագրերով ամբաստանյալն սրացել է 17.446.820 ՀՀ դրամին համարժեք 43.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ:

Նշված երկու դեպքում էլ ամբաստանյալը վկաներ Վ. Գրիգորյանին և Ա.Բաղայանին նախապես ասել է, որ վարկն ինքն է սրանալու և մարելու:

Դրանից հետո, ամբաստանյալը, փուժողին բացաբելով, որ իր մոտ եղած գումարով՝ 12.000.000 դրամով, չի կարող նրա բնակարանն անմիջապես ազարել գրավից, նրան առաջարկել է կնքել հաշտության համաձայնություն՝ իր, նրա, նրա կնոջ, նրա բնակարանը աճուրդով գնած անձի, «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲ ընկերության, վկաներ Ս.Շարբաթյանի, Գ.Միքայելյանի ու համավարկատուներ Գ.Դավթյանի և Բ.Միքայելյանի միջև, խոստանալով անմիջապես վճարել իր մոտ եղած գումարը, այնուհետև՝ կարճ ժամկետում, նաև մնացած գումարն ու փուժողի բնակարանը վերագրանցել նրա անվամբ: Այդ նպատակով ամբաստանյալի հայրը, փուժողի կինը՝ վկա Է.Սարգսյանը և նրա ներկայացուցիչը հանդիպել են «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲ ընկերության տնօրենի տեղակալ Ա.Ծարուրյանի աշխատասենյակում, սակայն հաշտության պայմանների շուրջ համաձայնության չեն եկել, քանի որ ամբաստանյալի հոր մոտ այդ պահին եղած գումարը չի բավարարել վարկն ամբողջությամբ մարելու համար և այդ պարճառով հաշտություն չի կնքվել:

Դրանից հետո, կրկին նույն նպատակով ամբաստանյալը կեղծել է ք.Երևանի Կորյունի փողոցի 1-ին նրբանցքի 10-րդ շենքի հ. 8 բնակարանի նկարմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, նույն բնակարանի նկարմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքը, դրանցում գույքի իրական սեփականարիքոջ փոխարեն նշել իր ծանոթ՝ վկա, Մարինե Մելիքյանի փյույուները, և դրանք ներկայացնելով «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲ ընկերություն՝ ցանկացել է սրանալ 16.343600 դրամին համարժեք 40.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ, սակայն

13.08.2012թ-ին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի Արարկիրի սպասարկման գրասենյակում բացահայտվել է ներկայացված փաստաթղթերի կեղծ լինելու հանգամանքը, որի կապակցությամբ նույն օրը հաղորդում է ուղարկվել Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն» (տես քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 91-92):

6.1. Առաջին ատյանի դատարանը իր դատական ակտի՝ «Ս.Ափոյանին վերագրվող արարքներում խարդախության հանցակազմի առկայությունը» մասում արձանագրել է. «(...) Քաղաքացիաիրավական պայմանագրով սրանձնած վարկային պարտավորությունները ժամանակավոր անհնարինության պարճառով չկատարելը կամ մասամբ կատարելը չի կարող գնահատվել՝ որպես խարդախություն կամ խարդախության փորձ:

Փաստորեն, ամբաստանյալի և տուժողների միջև առկա է եղել քաղաքացիաիրավական բնույթի վեճ, որը ենթակա է եղել լուծման քաղաքացիական իրավունքի նորմերին համապատասխան և քաղաքացիական դատավարության կարգով: Հերևաբար, դատարանը գտնում է, որ նախաքննական մարմինն ամբաստանյալ Ս.Ափոյանին վերագրած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին ու 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով որակած, արարքներին տրվել է ոչ ճիշտ քրեաիրավական գնահատական՝ հանգելով սխալ հետևության այն մասին, որ նրա արարքներում առկա է խարդախության հանցակազմ:

Այսպիսով, դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի հիմքում դրված և մեղադրական եզրակացությունում շարադրված ապացույցների շարքում առկա չէ ոչ մի փաստական տվյալ այն մասին, որ ամբաստանյալն ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակելու տուժողների գույքը: Այսինքն՝ գործի նյութերով հիմնավորված չէ Ս.Ափոյանի կողմից այնպիսի արարքի կատարում, որը կգնահատվեր որպես խարդախություն:

Հերևաբար, բացակայում է խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմը՝ վստահությունը չարաշահելու կամ խաբեության միջոցով ուրիշի գույքին տիրանալը:

Ինչ վերաբերում է խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմին, ապա գործի նյութերից երևում է, որ մեղադրանքի կողմը չի ներկայացրել որևէ պաշտոնական վարկած Ս.Ափոյանի արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայության մասին: Այսինքն՝ չի հիմնավորվել, որ մինչև տուժողների գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը նա դրսևորել է գույքի հափշտակման ուղղակի դիտարկություն և ունեցել է դրանք հափշտակելու նպատակ, որի դեպքում (...) խարդախությունը բացակայում է (...)» (տես քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 96-97):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) Առաջին ատյանի դատարանը կատարելով ապացույցների բազմակողմանի, լրիվ և

օբյեկտիվ հետազոտություն ու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն գործով ձեռք բերված յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ հանգել է ճիշտ հետևության, որ ամբաստանյալ Ս.Ափոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ /երեք դրվագով/ և 34-178-րդ հոդվածների 3-րդ մասերի 1-ին կետերով առաջադրված մեղադրանքները նախաքննությամբ և դատաքննությամբ չի հիմնավորվել, նրա գործողություններում բացակայում է հանցակազմը (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 96-97):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը գտնում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական նորմերի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

8.1. Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկների՝ բողոքաբերը, վերլուծելով Լ.Ավետիսյանի, ինչպես նաև Վ.Մաթևոսյանի գործերով Վճարելի դատարանի արտահայտած դիրքորոշումները, ինչպես նաև մատնանշելով ստորադաս դատարանների կողմից հաստատված ճանաչված փաստական հանգամանքները, փաստել է, որ վարկային կազմակերպությունից խարդախությամբ գումարներ հափշտակելու (2 դրվագ) և խարդախության փորձ կատարելու համար Ս.Ափոյանին առաջադրված մեղադրանքների կապակցությամբ ստորադաս դատարանների արտահայտած դիրքորոշումներն իրավաչափ չեն, չեն բխում գործով ձեռք բերված ապացույցներից և չեն համապատասխանում ՀՀ վճարելի դատարանի իրավական դիրքորոշումներին:

Մասնավորապես, բողոքաբերը կարծում է, որ ստորադաս դատարանների իրավական վերլուծություններն ու պատճառաբանություններն ամբողջությամբ վերաբերում են մեղադրանքի՝ Գ.Փարոյանի բնակարանի հափշտակության դրվագին և որևէ կերպ բովանդակային չեն շոշափում խարդախության մնացած դրվագներով մեղադրանքը: Եթե համապատասխան վերլուծությամբ այն մասին, որ, ըստ էության, գրավի երաշխիք հանդիսացող բնակարանի ձևական առուվաճառքից հետո Ս.Ափոյանը համապատասխան գործողություններով փորձել է կանխել իր աներոջ բնակարանը այլ անձանց կողմից ձեռք բերելու գործընթացը, դատարանները պատճառաբանել են այդ մասով Ս.Ափոյանի արարքում հանցակազմի բացակայության մասին իրենց դիրքորոշումը, ապա մեղադրանքի մնացած դրվագների կապակցությամբ սահմանափակվել են միայն նշումով այն մասին, որ Ս.Ափոյանը վարկային կազմակերպությունից կեղծ

փաստաթղթերի օգտագործմամբ գումար է ստացել իր աներոջ տան հետ կապված խնդիրը լուծելու համար:

8.2. Բողոքաբերը փաստել է նաև, որ ստորադաս դատարանները, հաստատված համարելով համապատասխան գործարքների կնքման նպատակը, հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Ս.Ափոյանը այդ գործարքներից երկուսն ավարտելուց և Կոտայքի մարզի Արգել գյուղի 2-րդ փողոցի 2-րդ փակուղու 4/1 տան գրավադրմամբ 4.400.000 ՀՀ դրամ, իսկ Երևան քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի 41-րդ տան գրավադրմամբ 17.446.820 ՀՀ դրամ ստանալուց հետո այդ գումարներից որևէ մաս չի ուղղել Գ.Փարոյանի տան խնդրի լուծմանը: Ավելի պարզ՝ Ս.Ափոյանն ունեցել է հնարավորություն լուծելու այն խնդիրը, որը լուծելու համար իբր կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ ստացել էր վարկ: Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարաններն անտեսել են, որ նշված տների գրավադրմամբ Ս.Ափոյանի ստացած գումարը գերազանցում էր Գ.Փարոյանի տան հետ կապված նրա պարտավորության չափը՝ 18 մլն ՀՀ դրամը, և բավարար էր այն կատարելու համար: Ավելին՝ Ս.Ափոյանին մեղսագրվող բոլոր արարքները միմյանց կապելով՝ դատարաններն ուշադրություն չեն դարձրել այն հանգամանքին, որ Ս.Ափոյանը դատարանների կողմից հաստատված ճանաչված նպատակն ամբողջությամբ իրագործելու համար բավարար գումար ձեռք բերելուց հետո փորձել է դարձյալ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ 16.343.600 ՀՀ դրամ ստանալ Կորյունի 1-ին նրբանցքի 10-րդ շենքի 8-րդ բնակարանի գրավադրումից:

8.3. Բողոք բերած անձը նշել է, որ ստորադաս դատարանները, ըստ էության, հաստատված համարելով, որ Ս.Ափոյանը վարկային կազմակերպությանը տարբեր տների վերաբերյալ կեղծ փաստաթղթեր ներկայացնելով, դրանց գրավադրմամբ խաբեությանը գումարներ է ստացել, ընդամենը վկայակոչել են դրանց ստացման՝ ամբաստանյալի մատնանշած, բայց գործի օբյեկտիվ փաստական տվյալներին չհամապատասխանող նպատակը և գտել, որ այդ արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի հանցակազմն առկա չէ: Ստորադաս դատարանները որևէ կերպ չեն պատճառաբանել, թե ինչ նշանակություն ունի ապօրինի եղանակով գումար ձեռք բերելու նպատակը դրա ապօրինության գնահատման հետ՝ գործում առկա սույն փաստական հանգամանքների համատեքստում: Դատարաններն այդպիսով բացառել են թեկուզ այլ անձանց նկատմամբ ունեցած իրավաչափ քաղաքացիաիրավական պարտավորության կատարման նպատակով երրորդ անձից գումար հափշտակելու նույնիսկ տեսական հնարավորությունը, ինչն անընդունելի է և չի բխում խարդախության հանցակազմի ո՛չ օրենսդրական սահմանումից և ո՛չ էլ այդ կապակցությամբ ՀՀ վճարելի դատարանի ձևավորած նախադեպային իրավունքից:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր

իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հուլիսի 23-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպությունից գումար հափշտակելու (2 դրվագ) և այդպիսի փորձ կատարելու համար ամբաստանյալ Ս.Ա.փոյանին առաջադրված մեղադրանքներում բացակայում են խարդախության հանցակազմի հատկանիշները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում խարդախության, այն է՝ խաբեության կամ վատահոությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելու համար:

Խարդախության հանցակազմի իրավական վերլուծությանը Վճարելի դատարանն անդրադարձել է Լ.Ավետիսյանի և Վ.Մաթևոսյանի գործերով կայացրած որոշումներում:

Մասնավորապես, Լ.Ավետիսյանի գործով որոշման շրջանակներում Վճարելի դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«(...) Թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ, սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի իմաստով վերոնշյալ հանցավոր ներգործությունն իրականացվում է խաբեությանը կամ վարահոությունը չարաշահելով: (...)

(...) [Օ]բյեկտիվ կողմից խարդախությունը կատարվում է խաբեության կամ վարահոությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն:

(...) Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությանը և շահադիտական նպատակով:

(...) Խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով. հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վարա-
հությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես
նաև պետք է նախատեսի և ցանկանա դա:

(...) Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահա-
դիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը
կամ գույքին փրկանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում
հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ
պայմանագրային պարտավորությունները:

Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու, խոստումը կամ
պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է
գույքը վերցնելուց հետո (անկախ շարժառիթից), խարդախության հանցա-
կազմը բացակայում է:

(...) Խարդախության միջոցով ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի
դիտավորության և գույքը հափշտակելու շահադիտական նպատակի
առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները
պետք է հիմնված լինեն գործով ձեռք բերված ապացույցների համակցու-
թյան վրա:

Եշված ապացույցների գնահատման արդյունքում դատարանը յուրա-
քանչյուր դեպքում պետք է հաստատված համարի, որ անձն ի սկզբանե
նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակել ուրիշի գույքը,
և եթե ապացույցվի, որ ունեցել է, ապա խարդախության հանցակազմն
առկա է:

(...) Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմ-
նավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հիմնավորվում,
որ շահադիտական նպատակը ծագել է համապատասխան գործարքի
կնքումից առաջ, ապա նման դեպքերում խարդախության հանցակազմ
առկա չէ:» (տես Լ.Ավետիսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվա-
կանի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 22-րդ, 25-26.4-րդ
կետերը):

Վ.Մաթևոսյանի վերաբերյալ գործով կայացված որոշմամբ Վճարելի
դատարանն արձանագրել է. «(...) [Խարդախությունը և քաղաքացիաիրա-
վական պարտավորությունների խախտումն օբյեկտիվ կողմի հատկանիշ-
ներով հաճախ համընկնում են: Հերևարար, այսպես պետք է նկատի ունե-
նայ, որ խարդախությունը՝ որպես հանցագործություն, քաղաքացիաիրա-
վական պարտավորությունների խախտման դեպքերից տարբերվում է
սուբյեկտիվ կողմով]:

(...) [Խարդախության մեղադրանքով անձին քրեական պարտասիս-
նավորության ենթարկելու համար անհրաժեշտ է ապացույցների բավա-
րար ամբողջությամբ հիմնավորել, որ հանցավորը դիտավորություն

է ունեցել խաբեության կամ վարսահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պարկանող գույքը:

Այն դեպքում, երբ առկա է մասնավոր-իրավական պայմանագրի կամ այլ տեսակի քաղաքացիաիրավական պարտավորության խախտում, ապա նշվածը որպես խարդախություն որակելու համար անհրաժեշտ է հաստատված համարել, որ անձն ի սկզբանե նպատակ չի ունեցել իրականացնելու գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի փոխանցման հետ կապված իր վրա վերցրած պարտավորությունները:

(...) Անձի կողմից խարդախություն կատարելու դիտարկության առկայության մասին, մասնավորապես, կարող են վկայել պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կամ տեխնիկական միջոցների, համապատասխան արտոնագրերի բացակայությունը, հանցավորի կողմից կեղծ փաստաթղթերի, երաշխավորագրերի օգտագործումը, ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը, կեղծ ձեռնարկություն արեղծելը, որը հանդես է եկել որպես պայմանագրի կողմ և այլն:» (տե՛ս Վ.Մաթևոսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշման 25-27-րդ կետերը):

12. Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում կրկնել իր նախադեպային իրավունքում ձևավորած և վերը մեջբերված այն դիրքորոշումը, որ խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր է ոչ միայն ուղղակի դիտավորությունը, այլև շահադիտական նպատակը: Ընդ որում, շահադիտական նպատակը հանցավորի ձգտումն է հարստանալ հափշտակված գույքի հաշվին՝ այն վերցնելով, իրենը դարձնելով կամ իր «հաշվին» հանձնելով այլ անձանց:

Վերոգրյալի համատեքստում Վճարելի դատարանն հարկ է համարում ընդգծել, որ արարքը որպես խարդախություն որակելու և խարդախության մեղադրանքով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար որևէ նշանակություն չունի շահադիտական նպատակի ուղղվածությունը: Այլ խոսքով՝ խարդախության հանցակազմն առկա է, եթե հանցավորը մինչև ուրիշի գույքին տիրանալը այն ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով վերցնելու և չվերադարձնելու ուղղակի դիտավորություն է ունենում, իսկ այն, թե գույքը հափշտակելուց (վերցնելուց և չվերադարձնելուց) հետո հանցավորը հետագայում այդ գույքը ինչպիսի եղանակով կամ ուղղությամբ օգտագործելու նախնական դիտավորություն է ունենում, որևէ կերպ չի կարող հիմք ծառայել արարքում խարդախության հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը գնահատելու համար:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:
(...)

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

1) դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

2) այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.

3) դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պարճառաբանված: Պարճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Ֆ.Գայարյանի գործով որոշման մեջ՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Դատական ակտի պարճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է սրեղծում վերահաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

(...) Պարճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերահաս դատական արյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպարճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

(...) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպարճառաբանվածությունը կամ ոչ բավարար պարճառաբանվածությունը դիտել [է] «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված անձի արդար դատական քննության իրավունքի խախտում (տե՛ս Սալովն ընդդեմ Ռեկրասիայի (Salov v. Ukraine) 06.09.2005 թվականի որոշումը, գանգապ թիվ 65518/01, Բոլդեան ընդդեմ Ռումինիայի (Boldea v. Romania) 15.02.2007 թվականի որոշումը, գանգապ թիվ 19997/02, Գրադինարն ընդդեմ Մոլդովայի (Gradinar v. Moldova) 08.04.2008 թվականի որոշումը, գանգապ թիվ 7170/02)» (տե՛ս

Ֆ.Գալստյանի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

Վերահաստատելով Ֆ.Գալստյանի գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը Գ.Խնուսյանի գործով որոշման շրջանակներում արձանագրել է. «(...) [Հ]աշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպարճառաբանված (կամ ոչ պարզաձև պարճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: (...)» (տե՛ս Գ.Խնուսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

1) ամբաստանյալ Ս.Ափոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ՝

ա) նա, չարաշահելով իր աներ Գ.Փարոյանի վստահությունը, կուտակած պարտքերը մարելու և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նպատակով խնդրել է Գ.Փարոյանին նրան պատկանող բնակարանը գրավադնել: Վերջինս տվել է իր համաձայնությունը, ապա Ս.Ափոյանին հիշյալ բնակարանը տնօրինելու, տիրապետելու, իր նախընտրած պայմաններով վաճառելու, իր հայեցողությամբ գրավադնելու և մի շարք այլ գործողություններ կատարելու լիազորություն է տվել: Այնուհետև Ս.Ափոյանը նշյալ բնակարանը գրավադնելու փոխարեն գաղտնի, ձևական առուվաճառքի պայմանագրով՝ 18 մլն ՀՀ դրամով, վաճառել է Ս.Շարբաթյանին և խարդախությամբ հափշտակել նշված գումարը:

բ) Ս.Ափոյանը «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպության առանձնապես խոշոր չափերով գույքը խաբեությամբ հափշտակելու դիտավորությամբ կեղծել է Կոտայքի մարզի Արգել գյուղի 2-րդ փողոցի 2-րդ փակուղու թիվ 4/1 տան նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, նույն տան նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքը, դրանցում գույքի իրական սեփականատիրոջ փոխարեն նշել իր տվյալները, ներկայացրել վարկային կազմակերպություն, որի հիման վրա իր ծանոթ Վ.Գրիգորյանի անվամբ ստացել է 4.400.000 ՀՀ դրամ վարկ և հափշտակել այն:

գ) «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպության առանձնապես խոշոր չափերով գույքը հափշտակելու դիտավորությամբ Ս.Ափոյանը դարձյալ կեղծել է Երևանի Վ.Համբարձումյան փողոցի 41-րդ տան նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների

և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքը, բնակելի տան շուկայական և լիկվիդացիոն արժեքների վերաբերյալ արձանագրությունը, դրանցում գույքի իրական սեփականատիրոջ փոխարեն նշել իր ծանոթ Ա.Բաղայանի տվյալները, ապա ներկայացրել վարկային կազմակերպություն և դրանց հիման վրա վերջինիս անվամբ ստացել 17.446.820 ՀՀ դրամին համարժեք 43.000 ԱՄՆ դոլար և կրկին հափշտակել:

դ) «բ») և «գ») կետերում նշված նույն դիտավորությամբ ու նկարագրված եղանակով կեղծել է Երևանի Կորյունի 1-ին նրբանցքի 10-րդ շենքի 8-րդ բնակարանի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքը, որոնց մեջ գույքի իրական սեփականատիրոջ փոխարեն նշել է իր ծանոթ Մ.Մելիքյանի տվյալները, ներկայացրել հիշյալ վարկային կազմակերպություն և հափշտակելու նպատակով փորձել է ստանալ 16.343.600 ՀՀ դրամին համարժեք 40.000 ԱՄՆ դոլար վարկ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցանքն ավարտին չի հասցվել, քանի որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի Արարկիրի սպասարկման գրասենյակում բացահայտվել է ներկայացված փաստաթղթերի կեղծ լինելու հանգամանքը, որի կապակցությամբ հաղորդում է ուղարկվել Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

2) Առաջին ատյանի դատարանը դատաքննության արդյունքներով հաստատված է համարել, որ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպությունից վարկեր ստանալով կամ այն ստանալու փորձ կատարելով՝ ամբաստանյալ Ս.Ափոյանը հետապնդել է տուժող *Գ.Փարոյանին տված խոսքումը կատարելու՝ սրացած վարկի գումարը վճարելու և բնակարանը տուժողին վերադարձնելու նպատակ* (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

3) Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտի՝ «Ս.Ափոյանին վերագրվող արարքներում խարդախության հանցակազմի առկայությունը» մասում արձանագրել է, որ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած վարկային պարտավորությունները ժամանակավոր անհնարինության պատճառով չկատարելը կամ մասամբ կատարելը չի կարող գնահատվել որպես խարդախություն կամ խարդախության փորձ: Այնուհետև փաստել է, որ մեղադրանքի հիմքում դրված և մեղադրական եզրակացությունում շարադրված ապացույցների շարքում առկա չէ ոչ մի փաստական տվյալ այն մասին, որ ամբաստանյալն ի սկզբանե նպատակ է ունեցել խարդախության միջոցով հափշտակելու տուժողների գույքը: Այսինքն՝ գործի նյութերով հիմնավորված չէ Ս.Ափոյանի կողմից այնպիսի արարքի կատարում, որը կգնահատվեր որպես խարդախություն: Ուստի բացակայում է խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմը՝ վստահությունը չարաշահելու կամ խաբեության միջոցով ուրիշի գույքին տիրանալը:

Խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայության վերաբերյալ արձանագրել է, որ գործի նյութերից հետևում է, որ մեղադրանքի կողմը չի ներկայացրել որևէ պաշտոնական վարկած Ս.Ափոյանի արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայության մասին: Այսինքն՝ չի հիմնավորվել, որ մինչև տուժողների գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը նա դրսևորել է գույքի հափշտակման ուղղակի դիտավորություն և ունեցել է դրանք հափշտակելու նպատակ, որի դեպքում, վերը նշված իրավական դիրքորոշումների հիման վրա, խարդախությունը բացակայում է (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը):

4) Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության առ այն, որ ամբաստանյալ Ս.Ափոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ (երեք դրվագ) և 34-178-րդ հոդվածների 3-րդ մասերի 1-ին կետերով առաջադրված մեղադրանքները նախաքննությամբ և դատաքննությամբ չեն հիմնավորվել, նրա գործողություններում բացակայում է հանցակազմը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

1) ստորադաս դատարանները, հաստատված համարելով կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ վարկային կազմակերպությունից վարկեր ստանալու կամ այն ստանալու փորձ կատարելու ամբաստանյալ Ս.Ափոյանի նպատակը, *այն է՝ կատարել փուժող Գ.Փարոյանին փված խոսքումը՝ սրբացած վարկի գումարը վճարել և բնակարանը վերադարձնել փուժողին*, քննարկման առարկա չեն դարձրել այն, որ Գ.Փարոյանի բնակարանի հետ կապված Ս.Ափոյանի պարտավորության չափը կազմում էր 18 մլն ՀՀ դրամ, իսկ վարկային կազմակերպությունից ընդհանուր առմամբ ստացված շուրջ 22 մլն ՀՀ դրամից (4.400.000 ՀՀ դրամ և 17.446.820 ՀՀ դրամին համարժեք 43.000 ԱՄՆ դոլար) որևէ մաս չի ուղղվել այդ պարտավորության կատարմանը: Ավելին՝ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում մեղադրող կողմի բողոքում մատնանշված նաև այն հանգամանքին, որ Ս.Ափոյանին մեղսագրվող բոլոր արարքները միմյանց կապելով՝ ստորադաս դատարանների կողմից հաստատված նպատակն ամբողջությամբ իրագործելու համար բավարար գումար ստանալուց հետո Ս.Ափոյանը փորձել է դարձյալ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ 16.343.600 ՀՀ դրամին համարժեք 40.000 ԱՄՆ դոլար վարկ ստանալ վարկային կազմակերպությունից (տե՛ս սույն որոշման 8.2-րդ կետը):

Ստորադաս դատարանների կողմից հաստատված վերոնշյալ փաստի համատեքստում Վճռաբեկ դատարանը սույն որոշման 12-րդ կետում ձևավորած իրավական դիրքորոշումների լույսի ներքո հարկ է համարում ընդգծել, որ նույնիսկ եթե ստորադաս դատարանների կողմից

հաստատված ճանաչված Ս.Ափոյանի վերը նշյալ նպատակը բխեր գործի փաստական հանգամանքներից, այնուամենայնիվ, այն չէր կարող որևէ հիմք ծառայել Ս.Ափոյանի արարքում խարդախության հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը գնահատելու համար:

2) կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպությունից խարդախությամբ գումար հափշտակելու (2 դրվագ) և այդպիսի փորձ կատարելու համար Ս.Ափոյանին առաջադրված մեղադրանքների կապակցությամբ միայն հաստատված համարելով ինչպես գործի փաստական տվյալներից չբխող, այնպես էլ Ս.Ափոյանի արարքում խարդախության հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը գնահատելու համար որևէ նշանակություն չունեցող իրավաբանական փաստը՝ Ս.Ափոյանի վերոնշյալ նպատակը՝ ստորադաս դատարանները վերջինիս առաջադրված համապատասխան մեղադրանքներում խարդախության հանցակազմի հատկանիշների բացակայության մասին վկայող որևէ բովանդակային պատճառաբանություն չեն ներկայացրել:

Իսկ ինչ վերաբերում է ստորադաս դատարանների կողմից մատնանշված այն հանգամանքին, ըստ որի՝ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած վարկային պարտավորությունները ժամանակավոր անհնարինության պատճառով չկատարելը կամ մասամբ կատարելը չի կարող գնահատվել որպես խարդախություն կամ խարդախության փորձ, ապա Վճարելի դատարանը փաստում է, որ այդպիսի եզրահանգմանը բացարձակ բնույթ հաղորդելը հիմնավոր չէ, քանի որ կախված գործի կոնկրետ փաստական տվյալներից՝ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորության խախտումը կարող է որակվել որպես խարդախություն կամ խարդախության փորձ:

16. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները, անտեսել են Վճարելի դատարանի ձևավորած նախադեպային իրավունքը, ինչի արդյունքում կայացրել են անհիմն և չպատճառաբանված դատական ակտեր:

Ուստի Վճարելի դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպությունից գումար հափշտակելու (2 դրվագ) և այդպիսի փորձ կատարելու համար ամբաստանյալ Ս.Ափոյանին առաջադրված մեղադրանքներում բացակայում են խարդախության հանցակազմի հատկանիշները, հիմնավորված և պատճառաբանված չեն:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին

չհամապատասխանող չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտեր, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ քրեադատավարական օրենքի էական խախտում է:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արդարացման դատավճիռը (...) չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման շարժառիթով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի հարուցում»:

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա փաստական հանգամանքների պայմաններում ստորադաս դատարանների կողմից թույլ տրված քրեադատավարական իրավունքի էական խախտումները կասկածի տակ են առնում ամբաստանյալ Ս.Ափոյանի անմեղությունը «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպությունից գումար հափշտակելու (2 դրվագ) և այդպիսի փորձ կատարելու համար առաջադրված մեղադրանքներում, ուստի հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկելու Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռարեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սերգեյ Մարտիկի Ափոյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հուլիսի 23-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

21.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0144/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Մարատ Սարգսի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի մայիսի 27-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Վաղարշապատի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է

թիվ 57108512 քրեական գործը՝ Մարատ Սարգսյանի կողմից Մայիս Խաչիկ-յանին դիտավորությամբ ապօրինաբար կյանքից զրկելու՝ սպանելու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի՝ 2012 թվականի մայիսի 30-ի որոշմամբ Մ.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2012 թվականի մայիսի 30-ի որոշմամբ Մ.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2012 թվականի հոկտեմբերի 31-ին վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ Մ.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի նոյեմբերի 9-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան:

2. 2013 թվականի նոյեմբերի 20-ին մեղադրողի որոշմամբ Մ.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մարտի 26-ի դատավճռով Մ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով և դատապարտվել ազատազրկման 14 տարի ժամկետով: Նույն դատավճռով տուժողի իրավահաջորդ Ա.Դավթյանի քաղաքացիական հայցը բավարարվել է մասնակիորեն, ամբաստանյալ Մ.Սարգսյանից հօգուտ Ա.Դավթյանի բռնագանձվել է 1.500.000 դրամ՝ որպես տուժող Մ.Խաչիկյանի հուղարկավորության գումար և 9.920 ԱՄՆ դոլարի համարժեք ՀՀ դրամ՝ որպես հանցագործության կատարման ընթացքում հափշտակված գումարի փոխհատուցում:

3. Ամբաստանյալի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի օգոստոսի 14-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի մարտի 26-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել տուժողի իրավահաջորդ Ա.Դավթյանի ներկայացուցչի Կ.Գրիգորյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի Կ.Գրիգորյանի վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Մ.Սարգսյանը դարապարտվել է այն քանի համար, որ նա «իր ծանոթ, համաքաղաքացի, փարադրամի փոխանակումով զբաղվող Մայիս Խաչիկյանին շահադիպական դրդումներով սպանելու, այն է՝ վերջինիս մոտ առկա դրամական միջոցները համախառնելու ակնկալիքով նրան ապօրինաբար դիտարկությանը կյանքից զրկելու հանցավոր մտադրությամբ, 2012թ. մայիսի 27-ին՝ ժամը 15-ի սահմաններում, Էջմիածին քաղաքի շուկայի փարածքից խարեությանը՝ իր փանը գրնվող 1000 ԱՄՆ դոլարը ՀՀ դրամով փոխանակելու պատրվակով, նարեցրել է իր անձնական օգրագործման «Նիսան-Մարչ» մակնիշի ավտոմեքենան, ու գնացել են Էջմիածին քաղաքի Մաշտոց փողոցի առաջին փակուղու թիվ 2 հասցեում գրնվող փան դիմաց, քանի որ դիրքի և տեղակայման առումով տեղանքը նպաստավոր է եղել հանցավոր մտադրությունն իրականացնելու համար: Ամբաստանյալ Մարտի Սարգսյանը նախապես իր մոտ գրնվող խոհանոցային դանակով ավտոմեքենայի խցիկում բազմաթիվ հարվածներ է հասցրել Մ.Խաչիկյանի մարմնի փորքեր մասերին, որից չորսը՝ կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսին, մեկը՝ պարանոցի առաջային մակերեսի սրորին հարվածին և վեցը՝ աջ ձեռքի փորքեր հարվածներին ու սպանել նրան: Ամբաստանյալ Մարտի Սարգսյանը բուժող Մ.Խաչիկյանի աջ գոլկային հարվածից՝ վերնաշապիկի փակից, համախառնել է վերջինիս մոտ գրնվող, առանձնապես խոշոր չափերի՝ 5.693.520 ՀՀ դրամին համարժեք 14000 ԱՄՆ դոլար գումարը, իսկ վերջինիս դին իր ավտոմեքենայով տեղափոխել և գցել է Արմավիրի մարզի Գայ և Չոբանքարա համայնքների փարածքով անցնող, չգործող ջրաբերի մեջ, ավտոմեքենան թողել Չոբանքարա համայնքի գերեզմանատանը և պարահական փաքսի ավտոմեքենայով գնացել Էջմիածին քաղաք: Բաղրամյան փողոցի վրա գրնվող խանութներից մեկում ամբաստանյալ Մարտի Սարգսյանը գնել է ջինսե փաքս ու վերնաշապիկ, անմիջապես գնացել է իրենց շենքի մոտ, փոխել իր հագուստն ու գնացել «Զվարթնոց» օդանավակայան: Ճանապարհին ամբաստանյալ Սարգսյանը ներել է հանցագործության կատարման պահին իր հագին եղած հագուստը, օդանավակայանում Մ.Խաչիկյանից համախառնել գումարներից 300 ԱՄՆ դոլարը փոխանակել է ՀՀ դրամով, որից 110.000 ՀՀ դրամով գնել է նույն օրը՝ ժամը 22:00-ի համար նախատեսված Երևան-Մոսկվա չվերթի տոմս: Այնուհետև ամբաստանյալ Մարտի Սարգսյանն ինքնաթիռի տոմսը գնելուց հետո մնացած դրամը և 500 ԱՄՆ դոլարը փոխանակել է 15.100 ՌԴ ռուբլիով և պարտապարտվել մեկնել Մոսկվա քաղաք: Ժամը 20:50-ին օպերատիվ փոխակներն իրացնելիս, ոստիկանության աշխատակիցները «Զվարթնոց»

օղանավակայանում հայրնաբերել են ամբաստանյալ Մարտիր Սարգսյանին և բերման ենթարկել ուտիկանության Էջմիածնի բաժին» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 387-392):

6. Դատաբժշկական փորձագետի թիվ 28 եզրակացության համաձայն՝ «(...) Մ.Խաչիկյանի մահը վրա է հասել ներքին սուր արյունահոսությունից՝ արրի փամպունադայից, կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսի հարկրծոսկրային գծով 3-րդ կողի մակարդակի կտրված-ծակված թափանցող [մեկ վերք] սրանալու հետևանքով: (...) Դիակի ուսումնասիրության ժամանակ հայրնաբերվել [են] նաև պարանոցի առաջային մակերեսի արորին երրորդականի կտրված-ծակված [մեկ վերք], (...) կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսի կրծոսկրի կոթյունի շրջանի կտրված-ծակված թափանցող [երկու վերք], կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսի հարկրծոսկրային գծով 3-4-րդ միջկողային փարածության կտրված-ծակված թափանցող [մեկ վերք], (...) [ձ]ախ բազկի միջին երրորդականի առաջային մակերեսի [մեկ վերք], ձախ նախաբազկի վերին-միջին-արորին երրորդականների հետին-առաջային մակերեսների [հինգ կտրված-ծակված վերք] (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 168-172):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) Պատրիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ամբաստանյալ Մարտիր Սարգսի Սարգսյանի կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 387-392):

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) [Զ]նության առնելով Մ.Սարգսյանի նկատմամբ (...) ցմահ ազատազրկում նշանակելու հարցերը, ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի իրացվելիության հարցերը, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, (...) հանցագործության բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը [Վերաքննիչ դատարանը] հանգում է այն հետևության, որ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով ՀՀ քրեական օրենսգրքի պատրիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները /ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ հոդվածներ/, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի սանկցիայի սահմաններում Մ. Սարգսյանին դատապարտել է ազատազրկման 14 /փասնչորս/ փարի ժամկետով, որը համապատասխանում է հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, և որով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին (...):

(...) Անդրադառնալով Կրիստոֆի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ. Գրիգորյանի վերաքննիչ բողոքում նշված այն պահանջին, որ սույն գործով ներկայացված քաղաքացիական հայցը պետք է բավարարել ամբողջությամբ՝ բռնագանձումը փարածելով ամբաստանյալի սեփականությունը

հանդիսացող գույքի վրա, այդ թվում՝ «Nissan March» մակնիշի 30LS778 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա, ապա Վերաքննիչ դատարանը գործում է, որ այն անհիմն է (...) (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 66-85):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքո-հիշյալ հիմնավորումներով.

9. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը նշել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերն անհիմն են, դրանցով թույլ են տրվել նյութական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ անտեսվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, 48-րդ հոդվածի 2-րդ մասի, 61-րդ, 63-րդ հոդվածների պահանջները:

Վերոգրյալ օրենսդրական դրույթների վերլուծության արդյունքում բողոքի հեղինակը եզրահանգել է, որ Մ.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանները հաշվի չեն առել ամբաստանյալի կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը, բնույթը և սոցիալական նշանակությունը:

Բողոք բերած անձի պնդմամբ հանցավորի նկատմամբ նշանակված պատիժն արդարացի չէ ակնհայտ մեղմ լինելու պատճառաբանությամբ, այն չի համապատասխանում հանցագործության ծանրությանը, դրա կատարման հանգամանքներին, ինչպես նաև անհրաժեշտ և բավարար չէ ամբաստանյալին ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

10. Բացի այդ, բողոքի հեղինակի կարծիքով՝ անհիմն են Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ ամբաստանյալի կողմից «Nissan March» մակնիշի 30LS778 պետհամարանիշի ավտոմեքենան գնելու, սակայն իր եղբոր անունով գրանցելու վերաբերյալ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Գրիգորյանը պատշաճ ապացույցներ չի ներկայացրել: Բողոքաբերը վկայակոչել է Մ.Սարգսյանի՝ որպես կասկածյալի կողմից տրված ցուցմունքները և արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը բավարար չափով չի ծանոթացել գործի նյութերին:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշումը, ամբաստանյալ Մ.Սարգսյանին դատապարտել ցմահ ազատազրկման, տուժողի իրավահաջորդ Ա.Դավթյանի քաղաքացիական հայցը բավարարել ամբողջությամբ՝ բռնագանձումը տարածելով ամբաստանյալի սեփականությունը հանդիսացող գույքի՝ «Nissan March» մակնիշի 30LS778 պետհամարանիշի, «Lexus RX 300» մակնիշի 210U181

պետհամարանիշի ավտոմեքենաների վրա կամ բեկանել վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված հանցագործության (շահադիտական դրդումներով կատարված սպանություն) համար պատիժ նշանակելիս արարքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի գնահատման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այս առումով Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով Մ.Մարգարյանի նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեակրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապարասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պարժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարույկ մասի համապարասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պարժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի

անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատրաստանաբովությունը և պատրիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

(...)»:

Մեջբերված իրավական նորմերը Վճարելի դատարանը վերլուծել և դրանց վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է հայտնել թիվ ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ԵԿԴ/0042/01/11, ԵՇԴ/0143/01/13, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Նշյալ դատական ակտերում Վճարելի դատարանի ձևավորած կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ պատժի արդարությունը դրսևորվում է կատարված հանցագործության և կիրառվող պատժի համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար՝ պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: Պատժի արդարության պահանջներից նահանջելը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման: Քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Հետևաբար կոնկրետ գործով պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների գնահատման ժամանակ դատարանը պետք է ելնի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից:

Անդրադառնալով պատժի անհատականացման ընդհանուր չափանիշներից հանցագործությունների հանրային վտանգավորությանը՝ Վճարելի դատարանը արձանագրել է.

ա) արարքի հանրային վտանգավորության բնույթը որոշվում է այնպիսի փաստական տվյալների ամբողջությամբ, որոնք բնութագրում են մեղքի ձևը և տեսակը, հանցագործության նպատակը և շարժառիթը, քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակությունը,

բ) արարքի հանրային վտանգավորության աստիճանը որոշվում է այնպիսի փաստական տվյալների ամբողջությամբ, որոնք բնութագրում են հանցագործությամբ պատճառված վնասի չափը և բնույթը (հանրորեն վտանգավոր հետևանքներ), հանցագործության կատարման եղանակը, գործիքներն ու միջոցները, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը (տե՛ս *mutatis mutandis* Գարուշ Մադաթյանի գործով Վճարելի դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Վճարելի դատարանը փաստել է նաև, որ հանցագործության հանրային վտանգավորության տիպային բնութագիրն արտացոլվում է օրենսդրի կողմից սահմանված սանկցիայում, իսկ յուրաքանչյուր կոնկրետ գործով

արարքի հանրային վտանգավորության գնահատականը դատարանի կողմից կարող է որոշվել կոնկրետ հանցագործության տարրերի առանձնահատկությունների, դրա կատարման հանգամանքների, հանցավորի անձնավորության, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հիման վրա (*տես Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 39-րդ կետը*):

15. Սույն գործով բարձրացված իրավական հարցի շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ծանրացնող հանգամանքներով սպանության, մասնավորապես՝ շահադիտական դրդումներով ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելու հանցագործության հանրային վտանգավորությանը:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝

«Սպանությունը՝ [ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը] շահադիտական դրդումներով (...) պատժվում է (...) ազատազրկմամբ՝ փաստերկուսից քսան փարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ»:

Մեջբերված նորմի վերլուծությունից հետևում է, որ վերոգրյալ հանցակազմի համար պարտադիր հատկանիշ է շահադիտական շարժառիթի առկայությունը: Ընդ որում, շահադիտական շարժառիթը դրսևորվում է հանցավորի կամ այլ անձանց համար նյութական որևէ օգուտ ստանալու կամ նյութական որոշակի ծախսերից ազատվելու ձգտումով:

Հանցագործության անմիջական օբյեկտը, ինչպես սպանության մյուս տեսակների դեպքում, յուրաքանչյուր մարդու կյանքն է, որը ենթակա է քրեաիրավական պաշտպանության նրա ծնվելու պահից մինչև մահ: Մինևույն ժամանակ որպես շահադիտական դրդումներով սպանության հանրային բարձր վտանգավորությունը բնութագրող հատուկ հանգամանք՝ հանցավորի կողմից նյութական շահը տուժողի կյանքից գերադասելու վճռականությունն է: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված արարք կատարող անձի համար մարդու կյանքը՝ որպես բարձրագույն սոցիալական արժեք, ունի չնչին նշանակություն:

Ինչ վերաբերում է շահադիտական դրդումներով սպանության սուբյեկտիվ կողմին, ապա այն բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի: Ընդ որում, փաստ է, որ մեղքի դիտավորյալ ձևով կատարվող հանցանքի ժամանակ առավել բարձր հանրային վտանգավորություն ունի **ուղղակի դիտավորությամբ** կատարվող արարքը, ինչը ենթադրում է հանցավորի կողմից հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիության կամ իրական հնարավորության նախատեսում: Այս դեպքում հանցագործության

սուբյեկտի պատրաստվածությունը, հանցանքի կատարման եղանակը, իրադրությունը, օգտագործվող գործիքները, միջոցներն իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը՝ հանցավորի մոտ միանշանակ վստահություն առաջացնելով իր նպատակների անխուսափելի իրագործման մեջ (տե՛ս *mutatis mutandis Արմեն Շահբազյանի* գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշումը):

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարված հանցավոր արարքի հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ համաչափ պատիժ նշանակելու համար դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն հանցավորի դիտավորության ուղղվածությանը, որի բացահայտումը սերտորեն կապված է արարքի կատարման եղանակի, օգտագործվող գործիքների ու միջոցների առանձնահատկությունների, հասցված վնասվածքների քանակի ու տեղակայվածության, հանցագործության իրադրության, հանցավորի և տուժողի փոխհարաբերությունների բնույթի և օբյեկտիվ այլ հանգամանքների հետ:

Ուստի Վճարելի դատարանը գտնում է, որ առանց նշված հանգամանքների պատշաճ գնահատման շահադիտական դրդումներով սպանությունների վերաբերյալ գործերով հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին: Հետևաբար նշանակված պատժով չի ապահովվի նաև կատարված արարքի և կիրառված պատժի համաչափությունը, ինչի արդյունքում կխաթարվեն պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Մ.Մարգարյանը տարադրամի փոխանակումով զբաղվող Մ.Խաչիկյանին շահադիտական դրդումներով սպանելու հանցավոր մտադրությամբ 2012թ. մայիսի 27-ին՝ ժամը 15-ի սահմաններում, Էջմիածին քաղաքի շուկայի տարածքից խաբեությամբ՝ իր տանը գտնվող 1000 ԱՄՆ դոլարը ՀՀ դրամով փոխանակելու պատրվակով, տուժողին նստեցրել է իր անձնական օգտագործման «Nissan March» մակնիշի ավտոմեքենան ու տարել Էջմիածին քաղաքի Մաշտոց փողոցի առաջին փակուղու թիվ 2 հասցեում գտնվող տան դիմացի հատված: Այնուհետև ավտոմեքենայի խցիկում իր մոտ գտնվող խոհանոցային դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել Մ.Խաչիկյանի մարմնի տարբեր մասերին, որից չորսը՝ կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսին, մեկը՝ պարանոցի առաջային մակերեսի ստորին հատվածին և վեցը՝ աջ ձեռքի տարբեր հատվածներին ու սպանել նրան: Ամբաստանյալը տուժողի աջ գոտկային հատվածից, վերնաշապիկի

տակից հափշտակել է վերջինիս մոտ գտնվող առանձնապես խոշոր չափերի՝ 5.693.520 ՀՀ դրամին համարժեք 14000 ԱՄՆ դոլար գումարը, իսկ վերջինիս դին իր ավտոմեքենայով տեղափոխել և գցել է Արմավիրի մարզի Գայ և Չոբանքարա համայնքների տարածքով անցնող, չգործող ջրատարի մեջ: Այնուհետև ամբաստանյալը գնացել է «Զվարթնոց» օդանավակայան՝ պատրաստվելով մեկնել Մոսկվա (տե՛ս սույն որոշման 5-րդ և 6-րդ կետերը):

Պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ հաշվի է առնում Մ.Սարգսյանի կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Իր հերթին Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից պահպանվել են պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, իսկ Մ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նշանակված պատիժը համապատասխանում է կատարված հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

18. Սույն որոշման 14-16-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները համապատասխանաբար՝ Մ.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս և դրա իրավաչափությունը ստուգելիս պատշաճ գնահատականի չեն արժանացրել կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը, ինչի հետևանքով ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ: Մասնավորապես՝ ստորադաս դատարանները պատշաճ կերպով հաշվի չեն առել, որ՝

ա) Մ.Սարգսյանը, չնչին նշանակություն տալով Մ.Խաչիկյանի կյանքին, նյութական շահը գերադասելով վերջինիս կյանքից, շահադիտական դրդումներով՝ նյութական օգուտ ստանալու ակնկալիքով, սպանել է նրան,

բ) Մ.Սարգսյանը դանակով տասնմեկ հարված է հասցրել Մ.Խաչիկյանի մարմնի տարբեր մասերին, այդ թվում՝ կենսականորեն կարևոր օրգանների շրջանում,

գ) Մ.Սարգսյանը գործել է ուղղակի դիտավորությամբ՝ գիտակցել է իր արարքի հանրային վտանգավորությունը, նախատեսել տուժողին մահ պատճառելու անխուսափելիությունը և ցանկացել դրա վնաս հասնելը, ինչի մասին է վկայում նախորդ կետում վկայակոչված հանգամանքը,

դ) Մ.Խաչիկյանին կյանքից զրկելուց և վերջինիս մոտ առկա առանձնապես խոշոր չափերի գումարը հափշտակելուց հետո Մ.Սարգսյանը վերջինիս դին տեղափոխել և գցել է ջրատարի մեջ, իսկ ինքը գնացել օդանավակայան՝ պատրաստվելով մեկնել Մոսկվա:

Վերոգրյալից հետևում է, որ սույն գործով հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ համաչափ պատիժ նշանակելու համար ստորադաս դատարանները պատշաճ ուշադրություն չեն դարձրել խախտված հասարակական հարաբերության բնույթին ու կարևորությանը, արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքին, մարմնական վնասվածքների քանակին, տեղակայմանը, հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքին, ինչպես նաև հանցագործության կատարման հանգամանքներին:

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված չեն ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով Մ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

20. Անդրադառնալով «Nissan March» մակնիշի ավտոմեքենայի վրա բռնագանձում տարածելու պահանջի կապակցությամբ բողոքաբերի՝ սույն որոշման 10-րդ կետում բարձրացրած փաստարկին՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է *Արամ Մկրտչյանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներն այն մասին, որ քրեական դատավարության շրջանակներում քաղաքացիական հայցի քննության արդյունքում դատավճիռ կայացնելիս դատարանը պետք է սահմանափակվի միայն քաղաքացիական հայցի լրիվ կամ մասնակի բավարարման, դրա չափի սահմանման, ինչպես նաև այն անձի մատնանշմամբ, ումից ենթակա է գույքի բռնագանձումը: Ինչ վերաբերում է բռնագանձման ենթակա գույքի տեսակի, հերթականության, բռնագանձման կարգի սահմանմանը վերաբերող հարցերին, ապա դրանց լուծումը դուրս է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորման առարկայից (*ipso mutatis mutandis* Արամ Մկրտչյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0326/01/09 որոշումը):

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հեղինակի կողմից բարձրացված վերոգրյալ փաստարկը հիմնազուրկ է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Մարատ Սարգսի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

22.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0019/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դոնրաց դատական նիստում, քննության առնելով Իշխան Ռոդիկի Միքայելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 3-ի որոշման դեմ ամբաստանյալ Ի.Միքայելյանի պաշտպան Մելսիկ Ղարազյոզյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 19125913 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի փետրվարի 5-ի որոշումներով Իշխան Ռոդիկի Միքայելյանը, Գարիկ Կարենի Դանիելյանը և Մաղաթել Շահենի Սարգսյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) ստացվել է 2014 թվականի փետրվարի 18-ին:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 31-ի դատավճռով Իշխան Միքայելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 4 (չորս) ամիս ժամկետով:

Նույն դատավճռով Գարիկ Դանիելյանը և Սաղաթել Սարգսյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Ի.Միքայելյանի, Գ.Դանիելյանի և Ս.Սարգսյանի նկատմամբ կիրառված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Վերոհիշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալներ Ի.Միքայելյանը, Գ.Դանիելյանը և Ս.Սարգսյանը:

ՀՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2014 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ փաստաբաններ Վահան Ավագյանի և Մելսիկ Ղարաբյոզյանի վճարելի բողոքները Վճարելի դատարանը 2015 թվականի հունվարի 19-ի որոշմամբ վերադարձրել է՝ տրամադրելով 10-օրյա ժամկետ՝ բողոքների ձևական սխալները շտկելու և դրանք կրկին ներկայացնելու համար:

Ամբաստանյալ Ի.Միքայելյանի պաշտպան Մ.Ղարաբյոզյանը, շտկելով ձևական սխալները, կրկին վճարելի բողոք է ներկայացրել, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Իշխան Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, առանց հաիշխարակելու նպատակի, ապօրինաբար տիրացել՝ փախցրել են ուրիշի ավիրումներնան:*

Այսպես՝ Իշխան Միքայելյանը 2013 թվականի դեկտեմբերի 21-ին՝ ժամը 19:30-ի սահմաններում, Մաղաթել Սարգսյանի առաջարկությամբ, վերջինիս և Գարիկ Դանիելյանի հետ գալով նախնական համաձայնության, առանց հաիշտակելու նպատակի, ապօրինաբար տիրացել՝ փախցրել են Հովիկ Բաղրամյանին պարկանոց, Վանաձոր քաղաքի Գարեգին Նժդեհի 1 շենքի բակում կայանված ՎԱԶ 21063 մակնիշի, 160Լ425 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, սակայն չեն կարողացել գործարկել ավտոմեքենայի շարժիչը, որի պատճառով Իշխան Միքայելյանը նստել է դեկին, իսկ Գարիկ Դանիելյանը և Մաղաթել Սարգսյանը հրելով ավտոմեքենան տարել են Վանաձոր քաղաքի Մոսկովյան 54 շենքի մոտ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 213):

6. Մեղադրական եզրակացության բովանդակությունից հետևում է, որ մեղադրողն արագացված դատաքննության դեմ առարկել է՝ չնշելով որևէ փաստարկ (տե՛ս Քրեական գործ, հատոր 1, թերթ 206):

7. Պաշտպան Մ.Ղարագոյոյանը 2014 թվականի հուլիսի 4-ի դատական նիստի ժամանակ հայտնել է, որ իր պաշտպանյալները նախաքննության ավարտին միջնորդել էին կիրառել գործի քննության արագացված կարգ: Դատական նիստի ժամանակ ամբաստանյալները նույնպես միջնորդել են կիրառել դատաքննության արագացված կարգ: Իսկ մեղադրողը դատարանի հարցին պատասխանել է, որ չի փոխում իր դիրքորոշումը և առարկում է արագացված կարգ կիրառելու դեմ: Այնուհետև դատարանը հայտարարել է դատաքննությանն անցնելու մասին (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 184-185):

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 31-ի դատավճռի համաձայն՝ «Ամբաստանյալ Իշխան Ռոդիկի Միքայելյանը մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, առանց հաիշտակելու նպատակի, ապօրինաբար տիրացել՝ փախցրել է ուրիշի ավտոմեքենան:

(...) Այսինքն, Իշխան Ռոդիկի Միքայելյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 183 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարք ու նա քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի նշված հանցագործությունը կատարելու համար:

(...)

ՀՀ քրեական օրենսգրքի 63 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամբաստանյալ Իշխան Ռոդիկի Միքայելյանի պատասխանատվությունը և պարիժը ծանրացնող հանգամանք է համարում հանցանքը կատարելու վրանգավոր ռեցիդիվը:

(...)»: (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 255-260):

9. Վերաքննիչ դատարանը 2014 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը՝ «(...) Դատարանն (...) Իշխան Միքայելյանի (...) նկատմամբ պարիժ նշանակելիս, պահպանելով պարիժ նշանակելու

ընդհանուր սկզբունքները, բավարար չստի՞նք հաշվի առնելով վերջին[իս] կողմից կատարված հանցագործության բնույթն ու վրանգավորության աստիճանը, [նրա] պատասխանատվությունն ու պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի կիրառելիության հարցում հանգելով ճիշտ եզրահանգման (...) նշանակել է արդարացի և համաչափ պարիժ նշանակված պարիժ[ը] մեղմացնելու հիմքեր չկան, ուստի դատական ակտը պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանը միևնույն ժամանակ արձանագրում է, որ գործը քննելիս և լուծելիս Դատարանի կողմից քրեադատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել կամ կարող էին ազդել սույն գործով ճիշտ որոշում կայացնելու վրա՝ թույլ չեն տրվել:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ սույն քրեական գործի շրջանակներում Դատարանի կողմից կայացվել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, այն օրինական է, հիմնավորված և պարզառարանված, ուստի պետք է թողնել օրինական ուժի մեջ (...)» (տես քրեական գործ, հատոր 3, թերթ 68-75):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

10. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճարելի բողոք բերած անձը գտնում է, որ իր պաշտպանյալ Իշխան Միքայելյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 31-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 3-ի որոշումն օրինական չեն, ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի էական խախտումներ, որոնք հիմք են դատական ակտերը բեկանելու համար: Մասնավորապես վճարելի բողոքի հեղինակը եզրահանգել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 62-րդ հոդվածների խախտումներ: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը չի կիրառել դատական քննության արագացված կարգ, ինչի արդյունքում ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է անհամեմատ խիստ պատիժ:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ արագացված կարգ կիրառելու մասին ամբաստանյալների միջնորդությունները դատարանների կողմից հաճախ մերժվում են մեղադրողի չփաստարկված առարկության հիման վրա, ուստի սույն հարցի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

11. Ի հիմնավորումն իր փաստարկների՝ վճարելի բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել Իշխան Միքայելյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող այնպիսի

հանգամանքներ, ինչպիսիք են մեղայականով ներկայանալը և հանցագործությունը բացահայտելուն աջակցելը: Մինչդեռ գործում առկա են ինչպես մեղայականով ներկայանալու մասին արձանագրությունը, այնպես էլ Իշխան Միքայելյանի խոստովանական ցուցմունքները:

12. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ չնայած օրենքով նախատեսված բոլոր պահանջների առկայությանը, Առաջին ատյանի դատարանը մերժել է արագացված կարգ կիրառելու մասին ամբաստանյալների միջնորդությունը՝ հիմք ընդունելով մեղադրողի չփաստարկված, չպատճառաբանված առարկությունը: Այս առումով բողոքաբերը գտել է, որ արագացված կարգ չկիրառելու մասին դատարանի որոշումը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-931 որոշմանը: Մինևույն ժամանակ նշել է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում Իշխան Միքայելյանի նկատմամբ կնշանակվեի ավելի մեղմ պատժաչափ, քան 3 տարի 4 ամիս ժամկետով ազատազրկումը: Այսինքն՝ մերժելով պաշտպանական կողմի միջնորդությունը և կիրառելով դատական քննության ընդհանուր կարգ՝ դատարանն ամբաստանյալին զրկել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ ավելի մեղմ պատիժ ստանալու իրավունքից և հնարավորությունից:

13. Ելնելով վերոշարադրյալից՝ բողոքաբերը խնդրել է պատժի մասով բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 31-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը, այն է՝ Իշխան Միքայելյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնել:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճարելի դատարանը գտնում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ առարկելու մեղադրողի իրավունքի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.¹-րդ հոդվածի 1-ին մաս) իրացման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքաբերն ըստ էության երկու իրավական հարց է բարձրացրել, որոնցից առաջինն առնչվում է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի արդարացիությանը, երկրորդը՝ ամբաստանյալի նկատմամբ դատական քննության արագացված կարգ չկիրառելու իրավաչափությանը: Այլ կերպ՝ բողոքաբերների առաջին հարցն առնչվում է նյութական իրավունքի ենթադրյալ խախտմանը, որը դրսևորվել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 62-րդ հոդվածների պահանջների խախտմամբ, իսկ երկրորդը՝ դատավարական

իրավունքի ենթադրյալ խախտմանը, որը դրսևորվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3751-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավարական իրավունքի խախտման առկայությունը հաստատված ճանաչելու պարագայում այն կարող է ազդեցություն ունենալ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել սույն գործով թույլ տրված դատավարական իրավունքի ենթադրյալ խախտման հարցը:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Առաջին ատյանի դատարանն իրավասու էր մեղադրողի չփաստարկված առարկության հիման վրա մերժել դատաքննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ ամբաստանյալ Իշխան Միքայելյանի միջնորդությունը:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պարիժը չի գերազանցում 10 փարի ժամկետով ազատազրկումը:

Մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությանը կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքում դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե

1) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, և

2) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և

3) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, եթե ամբաստանյալն ունի այդպիսին:

3. Դատարանը, գտնելով, որ ամբաստանյալի կողմից միջնորդություն ներկայացնելիս չեն պահպանվել սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված պայմանները, որոշում է ընդունում ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին:

Դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է նաև, եթե պարզում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ: (...) Ամբաստանյալի կամ մեղադրյալի անմեղսունակության առնչությամբ հիմնավոր կասկածների առկայության դեպքում

դատարանը մերժում է արագացված կարգ կիրառելու միջնորդությունը՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

4. Հարցերի արդյունքում դատարանը, համոզվելով, որ առկա են սույն օրենսգրքի 375.1 հոդվածով նախատեսված պայմանները, որոշում է կայացնում արագացված կարգով դատական քննությունն անցկացնելու մասին: Հակառակ դեպքում դատական քննությունն իրականացվում է ընդհանուր կարգով:

5. Դատարանը արագացված կարգով դատական քննությունն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտությունն չի կատարում: Սակայն ուսումնասիրում է ամբաստանյալի անձը քննությանը տրված փոխադրվածությունը և պարիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:

6. Դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պարիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պարժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պարժի երկու երրորդը փոքր է փոխյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պարժից՝ ապա առավել մեղմ պարիժը:

(...)

8. Սույն օրենսգրքի 168 հոդվածի առաջին մասի 2-8-րդ կետերով նախատեսված դատական ծախսերն ամբաստանյալից ենթակա չեն բռնագանձման»:

Արագացված դատաքննության ինստիտուտի էությանն ու բովանդակությանն անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանը՝ արձանագրելով, որ. «(...) Արագացված կարգով դատական քննությունը քրեական դատավարության ձև է, որն օրենքով սահմանված կարգով միտված է գործն առավել սեղմ ժամկետում և պարզեցված կանոններով լուծելուն: Այս ինստիտուտի առանցքում «գործարքն» է քրեական դատավարության երկու կողմերի՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև, որի շրջանակներում մեղադրյալը համաձայնում է առաջադրված մեղադրանքին, ինչի դիմաց նրա համար երաշխավորվում է պարժի այնպիսի չափ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պարժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պարժի երկու երրորդը փոքր է փոխյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պարժից՝ ապա առավել մեղմ պարիժ, ինչպես նաև ամբաստանյալն ազատվում է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-8-րդ կետերով նախատեսված

դատարանի ծախսերից: Համաձայնելով արագացված դատաքննությանը՝ ամբաստանյալը նաև կամուփին հրաժարվում է մի շարք սահմանադրահրավական երաշխիքներից, այն է՝ անմեղության կանխավարկածի սկզբունք, գործի հրապարակային քննության և այլ իրավունքներ: Մյուս կողմից՝ մեղադրողը հրաժարվում է մեղադրանքը պաշտպանելու իր գործառույթը լրիվ ծավալով իրականացնելուց՝ դրանով հնարավորություն ստանալով փոփոխել իր միջոցները, ինչպես նաև մեղադրյալին (ամբաստանյալին) խրախուսել համագործակցելու քրեական հետապնդման մարմինների հետ» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով թիվ ՍԴՈ-931 որոշման 6-րդ, 8-րդ և 11-րդ կետերը):

17. Մեջբերված քրեադատավարական նորմերով նախատեսված է արագացված դատաքննության ինստիտուտը՝ որպես քրեական դատավարության տարբերակված վարույթի տեսակ, որի կարևորությունն ընգծված է դեռևս 1987 թվականին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության պարզեցման վերաբերյալ» թիվ R (87) 18 հանձնարարականում: Արագացված դատաքննության ինստիտուտն ուղղված է քրեական արդարադատության համակարգի գործունեությունն արագացնելուն և պարզեցնելուն, մասնավորապես՝ ողջամիտ ժամկետում քրեական գործի լուծման վերաբերյալ միջազգային չափանիշները և պահանջներն ապահովելու պետության պարտավորությունն արդյունավետ իրականացնելուն, հանցագործությունների քննությունն իրականացնելիս հապաղումները վերացնելուն, որոնք կասկածի տակ են դնում քրեական օրենքի հեղինակությունը և ազդում արդարադատության պատշաճ իրականացման վրա, ինչպես նաև պետության քրեական քաղաքականության գերակա խնդիրներն արդյունավետ լուծելուն: Քննարկվող ինստիտուտի նպատակներն են, ի թիվս այլնի.

ա) դատավարական տնտեսումը, այսինքն՝ առանձին քրեական գործերով ժամանակի, միջոցների և ջանքերի կրճատումը՝ դրանք ավելի բարդ գործերի վարույթի համար օգտագործելու նպատակով,

բ) հանցագործության կատարման և պատժի նշանակման միջև ընկած ժամանակահատվածի կրճատումը, նպատակ ունենալով ուժեղացնել դատավարության և քրեական պատժի նախազգուշական ազդեցությունը,

գ) կողմերին հաշտեցնելը և այլն (քննարկվող ինստիտուտի նպատակների վերաբերյալ նույնաբովանդակ դիրքորոշում է արտահայտել նաև Սահմանադրական դատարանը վերը վկայակոչված թիվ ՍԴՈ-931 որոշման 6-րդ կետում):

18. Դատական քննության արագացված կարգը գործող օրենսդրական կարգավորման պայմաններում կարող է կիրառվել օրենսդրորեն սահմանված և դատական պրակտիկայում մշակված հստակ պայմանների և հիմքերի առկայության պարագայում (*դատական քննության արագացված կարգ կիրառելու հիմքերն ու պայմանները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Շողակաթ Ժուլվերնի Ամիրխանյանի և Գառնիկ Մարտիրոսի Ֆարմանյանի գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0209/01/10 և Անդրանիկ Գարիկի Առուսարամյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՏԴ/0145/01/11 որոշումներում*): Այդ պայմանների վերլուծությունը ցույց է տալիս, որ դատավարական այս կառուցակարգի նախադրյալներից մեկը մեղադրողի կամարտահայտությունն է: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ մեղադրողը, հանդիսանալով քրեական դատավարությունում մեղադրանքը տնօրինող սուբյեկտ, օժտված է մի շարք դիսպոզիտիվ (տնօրինչական) իրավունքներով, որոնցից է նաև արագացված կարգ կիրառելու դեմ առարկելու միջոցով դատավարության ձևի ընտրությունը կանխորոշելը: Մասնավորապես, մեղադրողի կողմից արագացված կարգի դեմ առարկելը բացառում է դատարանի կողմից դրա կիրառումը, իսկ չառարկելը՝ ենթադրում է այն կիրառելու մեղադրողի «լռելյայն» համաձայնություն:

Մինևույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով որևէ կարգավորում նախատեսված չէ մեղադրողի կողմից արագացված կարգի դեմ առարկելուն ներկայացվող պահանջների վերաբերյալ: Այս առումով հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանը, հիմնվելով ՀՀ Սահմանադրության և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային չափանիշների վրա, իր թիվ ՄԴՈ-931 որոշմամբ գտել է, որ արագացված կարգի դեմ **դատախազության (մեղադրող կողմի) առարկությունը չի կարող դիտվել որպես «բացարձակ վետոյի» իրավունք, այդ առարկությունը պետք է լինի փաստարկված** (*տես վերը վկայակոչված՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ՄԴՈ-931 որոշման 8-րդ կետը*): Վճռաբեկ դատարանը, հիմնվելով Սահմանադրական դատարանի՝ վկայակոչված դիրքորոշման վրա, նույնպես գտնում է, որ արագացված դատաքննության դեմ առարկելիս մեղադրողի կողմից պետք է ներկայացվեն համապատասխան փաստարկներ, հակառակ դեպքում մեղադրողին այդպիսի իրավունքով օժտելը կարող է հանգեցնել կամայականությունների, խախտել օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սկզբունքը, ինչպես նաև իմաստագրկել արագացված դատաքննության ինստիտուտի վերը հիշատակված նպատակները, ինչն անթույլատրելի է և չի բխում այդ ինստիտուտի տրամաբանությունից:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չեն այն հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնվեն մեղադրողի կողմից

արագացված կարգ կիրառելու հարցի վերաբերյալ դիրքորոշում ձևավորելիս: Այլ խոսքով՝ Օրենսդիրը այդ հարցի գնահատումը թողել է մեղադրողի հայեցողությանը՝ պայմանավորված գործերի և դրանց հանգամանքների բազմազանությամբ և օրենքով համապարփակ կարգավորում նախատեսելու անհնարինությամբ: Մասնավորապես, որպես այդպիսի հանգամանքներ կարող են հանդես գալ արագացված կարգ կիրառելու իրավական պայմանների կամ հիմքերի առկայությունը կամ բացակայությունը, մեղադրյալի կողմից հանցագործության բացահայտմանը և քննությանը աջակցելը, կատարած արարքի համար զոջալը, հանցագործության հետևանքով պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը, հանցագործության կամ այն կատարած անձի հանրային վտանգավորությունը բնութագրող այլ հանգամանքները, ինչպես նաև մեղադրյալի տարիքը (*անչափահասի նկատմամբ դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ մանրամասն տես Անդրանիկ Առուստամյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՏԴ/0145/01/11 որոշումը*), *տուժողի դիրքորոշումը (արագացված կարգ կիրառելիս տուժողի դիրքորոշումը հաշվի առնելու վերաբերյալ մանրամասն տես Տիգրան Քամալյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵՇԴ/0097/01/09 որոշումը)*:

19. Միաժամանակ, արագացված կարգի դեմ առարկելիս փաստարկներ ներկայացնելու մեղադրողի պարտականության չկատարումը պետք է առաջացնի համապատասխան իրավական հետևանքներ, այլապես այն կկրի դեկլարատիվ (հոչակագրային) բնույթ և չի ապահովի այդպիսի պահանջ նախատեսելու նպատակը: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրողի կողմից արագացված կարգի դեմ առարկելը փաստարկելու պահանջի պատշաճ չկատարումը հավասարազոր է նրա կողմից արագացված դատաքննության դեմ չառարկելուն, հետևաբար պետք է առաջացնի նույն իրավական հետևանքները, որոնք նախատեսված են վերջինիս դեպքում: Այլ խոսքով՝ քննարկվող իրավիճակը պետք է գնահատվի որպես արագացված կարգի կիրառման՝ «*եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ*» նախադրյալի առկայություն:

20. Այսպիսով, մեղադրողի կողմից արագացված կարգի դեմ առարկելիս փաստարկներ ներկայացնելու պահանջի կատարումը պետք է քննարկման առարկա դարձվի և գնահատվի դատարանի կողմից՝ արագացված կարգ կիրառելու ամբաստանյալի միջնորդության քննարկման շրջանակներում: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերջին դիրքորոշումը բխում է Սահմանադրական դատարանի վերը վկայակոչված թիվ ՄԴՈ-931 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից և ուղղված է այդ որոշման կատարմանը: Հակառակ մոտեցման դեպքում Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումը կդառնա վերացական

և պատրանքային, արդյունքում չի ապահովվի նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի կատարումը, համաձայն որի՝ *«Սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում»:*

21. Միևնույն ժամանակ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ մեղադրողի համար արագացված կարգ կիրառելու դեմ առարկելը փաստարկելու բարձր չափանիշներ առաջադրելը, իսկ դատարանի կողմից դրանք գնահատելիս լայն հայեցողություն դրսևորելն անթույլատրելի է, քանի որ կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակների, երբ մեղադրողի կամահայտնությունը՝ որպես արագացված կարգ կիրառելու նախապայման, ձևական բնույթ ստանա: Այդպիսի մոտեցումը կհանգեցնի մեղադրողի՝ քննարկվող իրավունքի տնօրինչական բնույթի իմաստագրկման, ինչպես նաև կարող է բովանդակագրկել արագացված դատաքննության՝ որպես դատական քննության ընդհանուր կարգից բացառության էությունը: Ավելին՝ նման մոտեցումը կարող է վտանգել նաև կողմերի մրցակցության սկզբունքը, քանի որ արագացված կարգի կիրառումը միայն դատավարության երկու կողմերի միաժամանակյա համաձայնության պայմաններում է ապահովում իրավաչափ հավասարակշռություն մեղադրանքի և պաշտպանության կողմերի իրավունքների և օրինական շահերի միջև:

Հետևաբար Վճարելի դատարանն արձանագրում է, որ արագացված կարգ կիրառելու դեմ մեղադրողի առարկությունը որպես *«մեղադրողի կողմից չառարկել»* գնահատելու և դրան համապատասխան իրավական հետևանքներ կիրառելու դատարանի լիազորությունը պետք լինի սահմանափակ և իրացվի այն դեպքերում, երբ.

ա) առարկությունն ընդհանրապես փաստարկված չէ կամ

բ) ներկայացված փաստարկումները խախտում են անձի հիմնական իրավունքները (վերջինիս հրամայականը բխում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներից, այն է. *«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:*

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն վերագրյալ չափանիշների պահպանման դեպքում է հնարավոր ապահովել հանրային և մասնավոր շահերի արդարացի հավասարակշռումը՝ երաշխավորելով մի կողմից արագացված դատաքննության ինստիտուտի նպատակների իրագործումը և մեղադրողի՝ որպես մեղադրանքը տնօրինող սուբյեկտի դերը, մյուս կողմից՝ անձանց հիմնական իրավունքների պաշտպանությունը:

22. Սույն գործի փաստերից հետևում է, որ Իշխան Միքայելյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարք կատարելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Մեղադրական եզրակացությունում մեղադրողն առարկել է դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ՝ չնշելով որևէ փաստարկ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Ամբաստանյալները, այդ թվում՝ Ի.Միքայելյանը, մինչև դատաքննությունը սկսվելը դատարանին միջնորդություններ են ներկայացրել դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին: Մեղադրողը դատական նիստի ժամանակ նշել է, որ արագացված կարգ կիրառելու վերաբերյալ իր դիրքորոշում չի փոխում և առարկում է դրա դեմ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Վերջինիս հիման վրա Առաջին ատյանի դատարանը մերժել է դատաքննության արագացված կարգ կիրառելու դեմ Ի.Միքայելյանի ներկայացրած միջնորդությունը և գործի քննությունն իրականացրել ընդհանուր կարգով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Արդյունքում Առաջին ատյանի դատարանն Իշխան Միքայելյանին մեղավոր է ճանաչել առաջադրված մեղադրանքում և ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնների (ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդված) կիրառմամբ դատապարտել երեք տարի չորս ամիս ժամկետով ազատազրկման (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից կայացվել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, այն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի պետք է թողնել օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

23. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով 16-21-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր մեղադրողի չփաստարկված առարկության հիման վրա մերժել դատաքննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ ամբաստանյալ Իշխան Միքայելյանի միջնորդությունը:

Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին չի անդրադարձել քննարկվող հարցին՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը օրինական է, հիմնավորված և պատճառաբանված:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ արագացված կարգ կիրառելու դեպքում Ի.Միքայելյանի համար

կառաջանային բարենպաստ հետևանքներ, մասնավորապես՝ նրա նկատմամբ պատիժը չէր կարող նշանակվել հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոններով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը) (արագացված դատաքննության և ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնների հարաբերակցության վերաբերյալ մանրամասն տե՛ս Ալեք Պողոսյանի գործով Վճարելի դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՏԳ/0071/01/13 որոշման 14-21-րդ կետերը): Հետևաբար Առաջին ատյանի դատարանը, ինչպես նաև Վերաքննիչ դատարանը թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի խախտում, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Դատավարական իրավունքի նշված խախտումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով էական է և հիմք է ստորադաս դատարանների կողմից կայացված դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բարձրացված՝ նյութական իրավունքի ենթադրյալ խախտման հարցին (տե՛ս սույն որոշման 10-11-րդ կետերը), ապա Վճարելի դատարանը գտնում է, որ նշված հարցին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված դատավարական իրավունքի խախտումը վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Իշխան Ռոդիկի Միքայելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հուլիսի 31-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

23.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0051/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հեղինե Մերուժանի Գալստյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում հարուցվել է թիվ 53104013 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ Հ.Գալստյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2014 մարտի 26-ի որոշմամբ Հ.Գալստյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2014 թվականի ապրիլի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճռով Հ.Գալստյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ պատիժ նշանակել՝ ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով: Նույն դատավճռով Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում Հ.Գալստյանին ճանաչել և հոչակել է անմեղ՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

3. Մեղադրող Պ.Մարտիրոսյանի, ամբաստանյալ Հ.Գալստյանի և նրա պաշտպան Լ.Գոգինյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ բողոքները մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճարելի դատարանի 2015 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Հ.Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*նա 2013 թվականի հուլիս ամսին, ծանոթացել է Սրբեփանսավան քաղաքի Միլիոնի փողոցի 94 րան բնակչուհի Սյուզաննա Հովհաննիսյանի հետ և աշխատանք ու բնակության վայր չունենալու պարճառով խնդրել է նրան թույլատրել որոշակի ժամանակ բնակվել իր րանը: Ս.Հովհաննիսյանը խնդրել է ամուսնուն՝ Ա.Կլիմովին, թույլատրել նրան բնակվել իրենց հետ, որից հետո Հ.Գալստյանը րեղափոխվել է նշված րուն և բնակվել Ա.Կլիմովի, Ս.Հովհաննիսյանի և վերջինիս անչափահաս դստեր՝ Ա.Լազարբիճեի հետ: 2013 թվականի հուլիսի վերջերին*

Ս.Հովհաննիսյանը մեկնել է Լոռու մարզի Դսեղ գյուղ և որպես կթվորուհի աշխատանքի անցել նույն գյուղի Տուլնի ուրթ կոչվող հանդամասում, իսկ Հ.Գալստյանը շարունակել է բնակվել Ա.Կլիմովի և Ա.Լազարբիձեի հետ համարեղ: 2013 թվականի օգոստոսի 27-ի լույս 28-ի գիշերը՝ ժամը 00-ի սահմաններում, Հ.Գալստյանն Ա.Կլիմովին սպորիսաբար կյանքից զրկելու դիտարկությանը, Սյրեհանավան քաղաքի Միլիոնի փողոցի թիվ 94 հասցեում գրնվող տան հյուրասենյակում, հենց Ա.Կլիմովի անկողնու մեջ դանակով և լինգով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ա.Կլիմովի մարմնի տարբեր մասերին ու սպանել նրան, որից հետո անչափահաս Ա.Լազարբիձեին առաջարկել է օգնել իրեն և Ա.Կլիմովի դիակը թաքցնել, ապա միասին դիակը տեղափոխել են նույն տան հետնամասում գրնվող նկուղ և պահել այնտեղ:

2013 թվականի սեպտեմբերի 1-ին Հ.Գալստյանը ձերբակալվել է և որպես կասկածյալ հարցաքննվելիս գիրակցելով, որ իր տրամադրած տեղեկությունը կեղծ է և նախազգուշացված լինելով հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձին հանցանք կատարելու մեջ մեղադրելու դեպքում նախադրված պարասխանաարվության մասին, Ա.Կլիմովին մեղադրելով առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ՝ նրա վերաբերյալ կատարել է սուր մարտություն, իբրև թե նա 2013 թվականի հունիսի 3-ից 4-ն ընկած ժամանակահատվածում Լոռու մարզի Ղզղալ գյուղի գերեզմանատանը դանակով հարվածներ է հասցրել Սյուզաննա Հովհաննիսյանի մարմնի տարբեր մասերին և սպանել նրան, որից հետո երկուսով դիակը թաքցրել են նույն գյուղի գերեզմանատանը (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 127-135):

6. 2013 թվականի սեպտեմբերի 1-ի՝ կասկածյալի հարցաքննության արձանագրության համաձայն՝ Հ.Գալստյանը որպես կասկածյալ հարցաքննվելիս ցուցմունք է տվել, որ մինչև Ա.Կլիմովին սպանելը, վերջինս իրեն պատմել է, որ 2 ամիս առաջ ձորում սպանել է Սյուզաննային և ցույց է տվել նրա դիակի տեղը (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 19-20):

7. 2013 թվականի սեպտեմբերի 1-ին Հ.Գալստյանի ցուցմունքները ստուգելու նպատակով կատարվել է քննչական փորձարարություն, որի արձանագրության համաձայն՝ Հ.Գալստյանը մանրամասն նկարագրել է իր ներկայությանը Ա.Կլիմովի կողմից Սյուզաննա Հովհաննիսյանին սպանելու հանգամանքները և մատնացույց է արել այն տարածքը, որտեղ թողել են դիակը, սակայն կատարված որոնողական աշխատանքների արդյունքում թե՛ Ս.Հովհաննիսյանի դիակը և թե՛ սպանության այլ հետքեր չեն հայտնաբերվել (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 37-48):

8. 2013 թվականի սեպտեմբերի 2-ին որպես կասկածյալ լրացուցիչ հարցաքննվելու ժամանակ Հ.Գալստյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2013 թվականի հունիսի 3-ին կամ 4-ին, երեկոյան Սաշայի առաջարկով Սյուզի, Սաշայի հետ գնացել են քայլելու դեպի Ստեփանավան քաղաքի Ղզղալ

գյուղը: Ճանապարհին Սյուզիի հեռախոսին զանգեր է եկել: Սաշան, հասկանալով, որ նա ինչ-որ տղայի հետ պայմանավորվում է փախչել, սկսել է ձեռքերով ապտակներ հասցնել Սյուզիի դեմքին: Սաշայի հարվածներից Սյուզին թուլացել և վայր է ընկել, որից հետո Սաշան իր սև գույնի երկաթյա դանակով, աջ ձեռքով երկու անգամ հարվածել է Սյուզիի ձախ կողքին: Սյուզին վայր է ընկել և մահացել: Սաշան գնացել է տուն, բահ և լոմ բերել ու հենց այդտեղ մի փոս փորել, որից հետո Սաշայի հետ Սյուզիի դիակը դրել են այդ փոսի մեջ և թաղել: Նաև հայտնել է, որ Սյուզիի դիակի գտնվելու վայրը ճիշտ չի ցույց տվել, սակայն պատրաստ է ճիշտ տեղն ասել (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 68-79):

9. 2013 թվականի սեպտեմբերի 2-ի՝ քննչական փորձարարություն կատարելու մասին արձանագրության համաձայն՝ Հ.Գալստյանը մատնացույց է արել Լոռու մարզի Ղզղալա գյուղի գերեզմանատունը և հայտարարել, որ Սյուզաննա Հովհաննիսյանի դիակը ինքը և Ա.Կլիմովը թաքցրել են նշված գերեզմանատանը (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 79-80):

10. 2013 թվականի սեպտեմբերի 2-ի՝ արտաշիրմում կատարելու վերաբերյալ արձանագրության համաձայն՝ Հ.Գալստյանի մատնացույց արված վայրից հայտնաբերվել են մանկահասակ երեխայի ոսկրերի մնացորդներ (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 81-83), իսկ այդ կապակցությամբ Հ.Գալստյանը լրացուցիչ ցուցմունք է տվել՝ նշելով, որ հայտնաբերված ոսկրերը իր դատեր՝ 2012 թվականի ապրիլի 2-ին ծնված Պայծառ Մողմունի Գրիգորյանի ոսկրերի մնացորդներն են: Բացի այդ, Հ.Գալստյանը նշել է, որ. *«(...) Ինչ վերաբերում է Սյուզիին Սաշայի կողմից սպանելուն, դա սուտ է, Սյուզին ողջ է, Սաշան նրան չի սպանել, ուղղակի ես նույնիսկ Սաշային սպանելուց հետո այնքան զայրացած էի, որ ասում էի, թե իբր սպանել է Սյուզիին (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 84-85):

11. 2013 թվականի սեպտեմբերի 2-ին՝ ժամը 19-ին, Ս.Հովհաննիսյանը Լոռու մարզի Դսեղ գյուղի «Տուլի ուրթ» կոչվող վայրում հայտնաբերվել և ցուցմունք է տվել, որ բնակության վայրից բացակայել է աշխատանքի բերումով: Հայտնել է նաև, որ իրեն ոչ ոք չի առևանգել, իր նկատմամբ Ա.Կլիմովը և որևէ այլ անձ բռնություն չի գործադրել (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 88, 91-95):

12. Որպես մեղադրյալ հարցաքննվելու ժամանակ Հ.Գալստյանը ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել, որ Ա.Կլիմովի կողմից Ս.Հովհաննիսյանին սպանելու վերաբերյալ հայտարարություն է արել, քանի որ ցանկացել է նրան բնութագրել որպես վատ անձնավորություն (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 89-91, 120-121):

13. Առաջին ատյանի դատարանի դատական նիստի արձանագրության համաձայն՝ Հ.Գալստյանը ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքի կապակցությամբ ցուցմունք

է տվել, որ նախաքննության ընթացքում հարցաքննության ժամանակ լարված վիճակում է եղել, և երբ քննիչները պնդել են, որ Սյուզաննան չկա ու ասել են, որ տեղն ասի, ինքը հարցերի ճնշման ներքո ասել է, որ նրան Ա.Կլիմովը սպանել է, իսկ դիակը պահել Ստեփանավան քաղաքի ձորի մոտակայքում և ոստիկաններին ուղեկցել է այնտեղ, առանց հասկանալու, թե ինչ է ասում: Սակայն ոստիկանները պարզել են, որ այնտեղ կնոջ դիակ չկա, հետո այլ վայր է ցույց տվել, որտեղ թաղված է եղել իր դուստրը: Հ.Գալստյանը հայտարարել է, որ հոգեկան ծանր վիճակում լինելով՝ սուտ ցուցմունք է տվել և սուտ ցուցմունք տալով՝ ինքը փորձել է վատաբանել Ա.Կլիմովին, ապացուցել որ նա վատ մարդ էր (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 311):

14. Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով նախաքննական մարմնի կողմից ամբաստանյալ Հեղինե Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքին, նշել է. «*[Մեղադրյալը] կարող է սուր մայրնության համար քրեական պարասխանարվության ենթարկվել միայն այն դեպքում, եթե սուր մայրնությունը իրեն պաշտպանելու միջոց չի հանդիսացել: Եթե մեղադրյալը սուր մայրնություն է կարարում իրեն մեղադրանքից պաշտպանելու նպատակով, ապա ենթակա չէ պարասխանարվության:*

Դատարանությունը պարզվեց, որ ամբաստանյալ Հեղինե Գալստյանը օրենքով սահմանված կարգով չի նախազգուշացվել սուր մայրնության համար նախարեակված քրեական պարասխանարվության մասին: Բացի այդ, նա կարարել է սուր մայրնություն առաջադրված մեղադրանքից իրեն պաշտպանելու համար, իր կարարած արարքը արդարացնելու համար այդ ընթացքում ամբաստանելով նաև ինքն իրեն, իրրև թե ինքն օգնել է Ալեքսանդր Կլիմովին թաղելու Սյուզաննայի դիակը:

(...)

Վերը շարադրվածի հիման վրա դատարանը եկավ այն եզրահանգման, որ Հեղինե Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում պետք է ճանաչել և հոչակել անմեղ արարքում հանցակազմի բացակայության հիմքով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 309-322):

15. Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ամբաստանյալ Հ.Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքին, արձանագրել է հետևյալը. «*(...) սույն գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապարասխան հաստատված համարելու, որ Հ.Գալստյանը կարարել է ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով իրեն մեղադրվող հանցավոր արարքը: Մեղադրանքի հիմքում դրված ապացույցների համակցությունը բավարար չէ Հ.Գալստյանին մեղադրվող հանցավոր արարքի փաստական հանգամանքները հաստատված համարելու այն*

ծավալով, որը կրացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած:

Հերևաբար, համաձայնվելով առաջին արյանի դատարանի իրավական վերլուծությունների և հետևությունների հետ՝ Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ ամբաստանյալ Հ.Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքների կատարման մեջ անմեղ ճանաչելիս առաջին արյանի դատարանը պահպանել է անմեղության կանխավարկածի, ինչպես նաև ապացույցները գնահատելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 127-րդ հոդվածների պահանջները» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 54-85):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

16. Բողոքարեթի պնդմամբ՝ սույն գործով ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Այսպես՝ վերլուծելով ակնհայտ սուտ մատնության հանցակազմի տարրերը և համադրելով դրանք գործի փաստական հանգամանքների հետ՝ բողոքարեթը փաստարկել է, որ հիմնավոր չէ ստորադաս դատարանների հետևությունը Հ.Գալստյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի բացակայության մասին: Բողոքարեթը, մասնավորապես, նշել է, որ Հ.Գալստյանը, գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկությունները Ա.Կոխովի կողմից կնոջը սպանելու մասին կեղծ են, քրեական գործ հարուցելու իրավունք ունեցող մարմին հայտնել է անմեղ անձի կողմից քրեական օրենքով նախատեսված, սակայն տեղի չունեցած հանցագործություն՝ սպանություն կատարելու մասին: Իսկ իբրև ենթադրյալ դեպքի վայր Հ.Գալստյանը մատնանշել է իր երեխայի գերեզմանը՝ անհարկի վատնելով վարույթն իրականացնող մարմինների նյութական և մարդկային ռեսուրսները:

17. Բողոքարեթն իր անհամաձայնությունն է արտահայտել նաև ստորադաս դատարանների՝ Հ.Գալստյանի արարքում ակնհայտ սուտ մատնության հանցակազմի բացակայության վերաբերյալ այն հիմնավորմանը, որ վերջինս նախագոռուշացված չի եղել ակնհայտ սուտ մատնություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին: Մասնավորապես, բողոքարեթը փաստարկել է, որ Հ.Գալստյանը ձերբակալվել է 2013 թվականի սեպտեմբերի 13-ին, և վերջինիս անմիջապես բացատրվել են իր՝ որպես կասկածյալի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ որ կասկածյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել

իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին:

Բողոքաբերը նաև փաստարկել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ հոդվածում նշում չկա այն մասին, որ հիշյալ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ պայման է անձի նախազգուշացված լինելը սուտ մատնության համար նախատեսված պատասխանատվության մասին: Սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին անձը նախազգուշացվում է միայն իրավասու մարմին հանցագործության վերաբերյալ հաղորդում ներկայացնելիս և նախազգուշացնելը որպես ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով քրեական պատասխանատվության ենթարկելու պարտադիր պայման դիտարկելու դեպքում կատարվի, որ սուտ մատնություն հնարավոր է կատարել միայն հանցագործության մասին այդ կերպ հաղորդում ներկայացնելով, մինչդեռ քննարկվող հոդվածում սուտ մատնություն կատարելու եղանակ չի հիշատակվում:

18. Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն եզրահանգմանը, թե Ա.Կլիմովին մեղադրելով չկատարված սպանության մեջ ամբաստանյալը կատարել է սուտ մատնություն առաջադրված մեղադրանքից իրեն պաշտպանելու համար՝ բողոքաբերը նշել է, որ Հ.Գալստյանն իր նախաքննական և դատաքննական ցուցմունքներում հայտարարել է, որ Ա.Կլիմովին մեղադրելով չկատարված սպանության մեջ, ցանկացել է նրան իբրև վատ, բացասական անձնավորություն ներկայացնել վարույթն իրականացնող մարմնի առջև: Մինչդեռ բողոքաբերի պնդմամբ՝ անձի միայն վատ անձնավորություն լինելն ամենևին էլ չի կարող պատճառ հանդիսանալ վերջինիս կյանքից զրկելու և այդ հանգամանքով պաշտպանվելով՝ արդարանալու համար:

19. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

20. Վճարելի դատարանը գտնում է, որ կասկածյալի (մեղադրյալի) դատավարական կարգավիճակ ունեցող անձին սուտ մատնություն կատարելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդված) քրեական պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են

ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

1. Սույր մայրնության համար քրեական պատասխանատվության առկայության մասին նախազգուշացնելու իրավական ազդեցությունը ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով անձին պատասխանատվության ենթարկելիս.

21. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է՝ նախաքննության մարմնի կողմից Հ.Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացրած չլինելու հանգամանքն արդյոք կարող է սուտ մատնության համար առաջադրված մեղադրանքում նրան արդարացնելու հիմք հանդիսանալ:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների մասին ֆիզիկական անձանց հաղորդումները կարող են լինել գրավոր կամ բանավոր:

2. Քննչական գործողություն կատարելիս կամ դատական քննության ընթացքում հանցագործության մասին արված բանավոր հաղորդումը միջովում է համապատասխանաբար՝ քննչական գործողության կամ դատական նիստի արձանագրության մեջ: (...)

3. Եթե լրացել է դիմողի 16 տարին, նա նախազգուշացվում է սույր մայրնության համար պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ:

(...):»:

Վերոշարադրյալ քրեադատավարական նորմի վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը նախատեսել է հանցագործության մասին հաղորդում տվող ֆիզիկական անձանց սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու պարտադիր պահանջ: Վերջինս դասվում է քրեական դատավարություն իրականացնող անձանց կողմից ձեռնարկվող այն միջոցառումների շարքին, որոնք ուղղված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված՝ քրեական դատավարության խնդիրների իրացման արդյունավետությունը բարձրացնելուն: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ. «Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում

(...)

2) ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի.

3) ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման»:

23. ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության մասին սուր մարտությունը, եթե անձը գործել է գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկարկությունը կեղծ է [պատժվում է համապատասխան պատժով]»:

Նույն հոդվածի 2-րդ մասը քրեական պատասխանատվություն է սահմանում նույն արարքի համար, որը

«1) զուգորդվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով,

(...)»:

Մեջբերված հոդվածը ներառված է ՀՀ քրեական օրենսգրքի «Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրված գլուխ 21-ում: Քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործությունը արդարադատության դեմ ուղղված հանցագործություն է, որը խաթարում է իրավապահ մարմինների բնականոն գործունեությունը, որոնք հարկադրված են լինում ուժեր ու միջոցներ վատնել չկատարված հանցագործության բացահայտման համար կամ կատարված հանցագործությունը քննելիս ընթանալ սխալ ուղիով: Վերջինս կարող է հանգեցնել անմեղ անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուն, նրանց իրավունքների անհիմն սահմանափակումների: Այսպիսով, սուտ մատնության հիմնական անմիջական օբյեկտը արդարադատության բնականոն իրականացմանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ լրացուցիչ անմիջական օբյեկտը՝ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Հանցագործության օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել երկու ձևով: Առաջին դեպքում հանցավորը հայտնում է տեղի չունեցած հանցագործության մասին: Այս դեպքում արարքը քննարկվող հոդվածով որակելու համար էական չէ հանցանքի կատարման մեջ որոշակի անձի մատնանշելու հանգամանքը: Երկրորդ դեպքում հանցավորը հայտնում է իրականում տեղի ունեցած հանցագործության մասին՝ մատնանշելով այնպիսի անձի, ով չի կատարել այն:

Սուտ մատնությունը կարող է իրականացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Քննարկվող հանցակազմն առկա է այն դեպքում, երբ երևակայական հանցագործության կամ հանցագործի մասին տեղեկությունները հաղորդվում են այն պետական մարմիններին, որոնք քրեական գործ հարուցելու իրավունք ունեն: Այլ մարմիններին նույնաբովանդակ տեղեկություններ հաղորդելը քննարկվող հանցակազմը չի առաջացնում:

Քննարկվող հանցակազմը ձևական է. հանցագործությունը համարվում է ավարտված այն պահից, երբ հասցեատերը ստանում է հանցագործության կամ հանցավորի մասին կեղծ տեղեկությունները:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը գիտակցում է, որ իր տրամադրած տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, կեղծ է: Հանցագործության շարժառիթները կարող են ամենաբազմազանը լինել՝ վրեժ, խանդ և այլն: Բազմազան կարող են լինել նաև հետապնդվող նպատակները, օրինակ՝ անմեղին քրեական պատասխանատվության ենթարկելուն հասնելը, անձին վատաբանելը և այլն:

24. ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածում նկարագրված հանցակազմի վերլուծությունից հետևում է, որ սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելը այս հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ չէ: Քրեական օրենսդրության որևէ այլ դրույթ նույնպես չի սահմանում սուտ մատնության համար քրեական պատասխանատվության առկայության մասին անձին նախազգուշացնելը՝ իբրև պատասխանատվության ենթարկելու պարտադիր պայման:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու վերաբերյալ կանոնին, ապա այն քրեադատավարական պահանջ է, որը տարածվում է հանցագործությունների մասին հաղորդումների գրանցման դատավարական կարգի նկատմամբ: Այն չի սահմանում և չի էլ կարող սահմանել (ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ և 7-րդ հոդվածներ), որ քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու դատավարական պահանջի խախտումը բացառում է սուտ մատնության համար անձի քրեական պատասխանատվությունը:

Քննարկվող քրեադատավարական կանոնը կիրառելի է այն դեպքում, երբ անձը հանցագործության մասին հաղորդումն անմիջականորեն ներկայացնում է իրավասու մարմիններին: Մինչդեռ հաղորդումները կամ հայտարարությունները կարող են ի սկզբանե ներկայացված չլինել վարույթն իրականացնող մարմիններին, ինչպես նաև ուղարկվել փոստի միջոցով: Նման դեպքերում օբյեկտիվորեն հնարավոր չէ անձին նախազգուշացնել սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Բացի այդ, վերոշարադրյալ քրեադատավարական պահանջը նաև սուտ մատնության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայությունը կամ բացակայությունը որոշելու չափանիշ ծառայել չի կարող: Հետևաբար, ինքնին այդ պահանջի խախտումը չի կարող բացառել սուտ մատնություն կատարելու դիտավորության առկայությունը: Ուստի սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը որոշամտորեն չի կարող պայմանավորվել դրա առկայության մասին անձին նախազգուշացնելու հանգամանքով:

Վերոշարադրյալը, իհարկե, չի ենթադրում, որ քննարկվող դատավարական պահանջի նախատեսումն ինքնանպատակ է. մասնավորապես, այն

ուղղված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված՝ քրեական դատավարության խնդիրների իրացման արդյունավետությունը բարձրացնելուն (տե՛ս սույն որոշման 22-րդ կետը): Որպես պարտադիր պահանջ՝ քննարկվող քրեադատավարական կանոնը պետք է պահպանվի իրավասու մարմնի կողմից, իսկ այն չպահպանելը՝ որպես օրինականության սկզբունքի խախտում, կարող է համապատասխան իրավական հետևանքներ առաջացնել խախտում թույլ տված պաշտոնատար անձի համար (օրինակ՝ կարգապահական պատասխանատվություն): Մինևույն ժամանակ անձին սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկելը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով պայմանավորելը վերացական և պատրանքային կդարձնի քրեական դատավարության համասոցիալական այնպիսի խնդրի նախատեսումը, ինչպիսին է անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից, ինչպես նաև այդ պաշտպանությունն ապահովելու պետության պարտականությունը, ինչն անթույլատրելի է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված չլինելու հանգամանքը չի կարող հանդիսանալ այդ հանցագործության համար անձի քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք: Այս դեպքում գործում է նաև «օրենքի չինացությունը չի ազատում պատասխանատվությունից (ignorantia non est argumentum)» հանրահայտ սկզբունքը:

25. Սույն գործի նյութերի համաձայն՝ Հ.Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ վերջինս, Ա.Կլիմովի սպանության փաստի առթիվ հարուցված քրեական գործով 2013 թվականի սեպտեմբերի 1-ին որպես կասկածյալ հարցաքննվելիս, գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկությունը կեղծ է և նախազգուշացված լինելով հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձին հանցանք կատարելու մեջ մեղադրելու դեպքում նախատեսված պատասխանատվության մասին, Ա.Կլիմովին մեղադրելով առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, նրա վերաբերյալ կատարել է սուտ մատնություն, իբրև թե՛ նա 2013 թվականի հունիսի 3-ից 4-ն ընկած ժամանակահատվածում Լոռու մարզի Ղզղալա գյուղի գերեզմանատանը դանակով հարվածներ է հասցրել Ս.Հովհաննիսյանի մարմնի տարբեր մասերին և սպանել նրան, որից հետո երկուսով դիակը թաքցրել են նույն գյուղի գերեզմանատանը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը Հ.Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչել է անմեղ և արդարացրել՝ ի թիվս այլնի պատճառաբանելով, որ

«(...) Դատաքննությանը պարզվեց, որ ամբաստանյալ Հեղինե Գալստյանը օրենքով սահմանված կարգով չի նախազգուշացվել սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: (...)» (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, ստուգելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, իրավաչափ է համարել Առաջին ատյանի դատարանի իրավական վերլուծությունները և հետևությունները (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

26. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 22-24-րդ կետերում շարադրված նորմերի և իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմնի կողմից Հ.Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված չլինելու հանգամանքը չի կարող սուտ մատնության համար առաջադրված մեղադրանքում նրան արդարացնելու հիմք հանդիսանալ:

Արդյունքում՝ Վճարելի դատարանը հիմնավորված չի համարում ստորադաս դատարանների դիրքորոշումն այն մասին, որ սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելն այդ հանցագործության համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու պարտադիր պայման է, և գտնում է, որ այդպիսով ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 7-րդ և 333-րդ հոդվածները՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում:

II. Սուտ մատնության համար քրեական պատասխանատվության (ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդված) և կասկածյալի (մեղադրյալի) պաշտպանության իրավունքի հարաբերակցության վերաբերյալ.

27. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է արդյոք ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ Հ.Գալստյանի արարքում սուտ մատնության հանցակազմը բացակայում է՝ այն մեղադրանքից պաշտպանվելու միջոց հանդիսանալու պատճառաբանությամբ:

28. ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ. «Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն. «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

(...)

գ) պաշտպանելու իրեն անձամբ (...),

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն.

«1. Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածը սահմանում է, որ.

«1. Մեղադրյալն ունի պաշտպանության իրավունք: Քրեական վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնել պաշտպանության իր իրավունքը:

(...)

3. Մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգրվելը կամ դրանցից օգրվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք: Մեղադրյալի վրա չի կարող որևէ պարասխանարվություն դրվել իր տված ցուցմունքների և բացարժեռությունների համար, բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին:

(...)»:

Նույնարվանդակ կարգավորում է նախատեսված նաև կասկածյալի պաշտպանության իրավունքը սահմանող նորմերով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասեր):

Մեջբերված նորմերն ամրագրում են մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը, որին Վճարելի դատարանն անդրադարձել է Ն.Պողոսյանի վերաբերյալ որոշման մեջ՝ արտահայտելով հետևյալ դիրքորոշումը. «(...) Կասկածյալի պաշտպանության իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունքների ամբողջությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալ որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքել իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: (...) ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի իմաստով կասկածյալի պաշտպանության իրավունքի իրականացման փաստացի հնարավորության ապահովման պարտականությունը կրում է վարույթն իրականացնող մարմինը:

Պաշտպանության իրավունքը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է: Բացի այդ, այն հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք» (տե՛ս Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի Նորիկ Սեդրակի Պողոսյանի վերաբերյալ թիվ ՀՅԲԲԴ-2/0153/01/08 որոշման 25-րդ կետը):

29. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում մեջբերված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ինստիտուտի մասը հանդիսանալով՝ մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքի առանձնահատուկ կարևորությունը պայմանավորված է այդ սուբյեկտի դատավարական կարգավիճակով: Մասնավորապես՝ մեղադրյալը (կասկածյալը) այն անձն է, ով պետության անունից մեղադրվում (կասկածվում) է հանցանք կատարելու մեջ: Պաշտպանության իրավունքն անձի համար գործուն «զենք» է դիմակայելու իշխանական լիազորություններով օժտված պետական մարմինների գործողություններին: Այս առումով պաշտպանության իրավունքը քրեական դատավարության խնդիրների, մասնավորապես, հանցավոր արարքի հետ կապված պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից անձի պաշտպանության, ինչպես նաև անօրինական կամ առանց անհրաժեշտության դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման չենթարկվելու (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 2-րդ մասի 3-րդ կետ) իրացման միջոցներից է:

Այդուհանդերձ, իրեն առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու անձի իրավունքը բացարձակ չէ: Դրա շրջանակները սահմանված են «օրենքով չարգելված բոլոր միջոցներով» (ՀՀ Սահմանադրության 18-րդ, 42-րդ, ՀՀ քրեական դատավարության 19-րդ, 63-րդ, 65-րդ հոդվածներ) և «չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները» (ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված) չափորոշիչներով: Հետևաբար մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը չի կարող ենթադրել անօրինական, այլոց իրավունքներն ու ազատությունները խախտող, այդ թվում՝ հանցավոր միջոցներով պաշտպանություն իրականացնելու իրավունք: Հակառակ մեկնաբանումը կհակասի օրինականության սկզբունքին, ինչպես նաև վերացական կդարձնի անձի իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու պետության պարտականության կատարումը (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված):

Մեղադրյալի պաշտպանության իրավունքի սահմանների հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Բրանդշտեյտերն ընդդեմ Ավստրիայի գործով* իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի գ) ենթակետը չի նահաարեւում պաշտպանության նպատակով ցանկացած փաստարկ օգրագործելու անսահմանափակ իրավունք: Հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձանց պաշտպանության իրավունքի գաղափարը կծանրաբեռնվեր, եթե ենթադրեր, որ նրանք չեն կարող ենթարկվել պատասխանատվության, երբ նշված իրավունքն իրացնելիս դիրավորյալ կեղծ կասկած հարուցեն վկաների կամ քրեական դատավարությանը ներգրավված այլ անձանց կողմից պարժելի վարքագիծ դրստորելու մասին: Մեղադրյալին իր պաշտպանության նպատակով արված հայրարարությունների համար պատասխանատվության ենթարկելու հնարավորությունն ինքնին չի ենթադրում 6-րդ հոդվածի 3-րդ կետի գ) ենթակետով երաշխավորված իրավունքների խախտում (տե՛ս Brandstetter v. Austria, 1991 թվականի օգոստոսի 28-ի վճիռ, գանգատներ թիվ 11170/84, 12876/87, 13468/87, 52-53-րդ կետեր):

30. ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածը (տե՛ս սույն որոշման 23-րդ կետը) քրեական պատասխանատվություն է նախատեսում սուտ մատնություն կատարելու համար, հետևաբար վերջինս օրենքով արգելված արարք է: Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ դրանով նախատեսված հանցագործության սուբյեկտն ընդհանուր է, այն է՝ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը: Հետևաբար ակնհայտ սուտ մատնության սուբյեկտ կարող է հանդիսանալ նշված պահանջներին բավարարող ցանկացած անձ՝ անկախ իր դատավարական կարգավիճակից:

Ավելին՝ մեղադրյալի (կասկածյալի) կողմից քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակով սուտ մատնություն կատարելու արդյունքում կխախտվեն այլ անձանց՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված մի շարք իրավունքներ (անձի պատվի, արժանապատվության, բարի համբավի, ազատության և անձնական անձեռնմխելիության, արդար դատաքնության և այլն), ինչն անթույլատրելի է իրավական պետությունում: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում իր ամրագրումը ստացած այն նորմը, ըստ որի՝ մեղադրյալի (կասկածյալի) վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 4-րդ, 65-րդ հոդվածի 3-րդ մասեր), չի կարող բացառել սուտ մատնություն կատարելու համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

31. Սույն գործի փաստերից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը հանցակազմի բացակայության հիմքով Հ.Գալստյանին ՀՀ քրեական

օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչել է անմեղ և արդարացրել՝ ի թիվս այլնի պատճառաբանելով, որ «[Հ. Գալստյանը] կատարել է սուր մարտություն առաջադրված մեղադրանքից իրեն պաշտպանելու համար, իր կատարած արարքը արդարացնելու համար այդ ընթացքում ամբաստանելով նաև ինքն իրեն, իբրև թե ինքն օգնել է Ալեքսանդր Կլիմովին թաղելու Սյուզաննայի դիակը» (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, ստուգելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, համաձայնել է Առաջին ատյանի դատարանի իրավական վերլուծություններին և հետևություններին (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

32. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 28-30-րդ կետերում շարադրված նորմերի և իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը հիմնավորված չի համարում ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ Հ.Գալստյանի արարքում սուտ մատնության հանցակազմը բացակայում է՝ մեղադրանքից պաշտպանվելու միջոց հանդիսանալու պատճառաբանությամբ:

Արդյունքում ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 18-րդ, 42-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ, 63-րդ, 65-րդ հոդվածների պահանջները՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված դատավարական իրավունքի խախտում:

33. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «սույն գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Հ.Գալստյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով իրեն մեղաագրվող հանցավոր արարքը», իր այդ դիրքորոշումը չի հիմնավորել: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը Հ.Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ապացույցները թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության տեսանկյունից չի վերլուծել, չի գնահատել և չի պատճառաբանել, թե Հ.Գալստյանին մեղաագրվող հանցավոր արարքի փաստական որ հանգամանքները չեն հիմնավորվել, հանցակազմի որ տարրը չի հաստատվել: Այդպիսով, Վերաքննիչ դատարանի քննարկվող դիրքորոշումը պատճառաբանված չէ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի խախտում է (դատական ակտերի պարճառաբանվածության պահանջի մեկնաբանման վերաբերյալ րենս, *mutatis mutandis*, Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի՝ թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը, ապացույցների գնահատման

պահանջների վերաբերյալ՝ Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԿ/0252/01/13 որոշման 32-րդ կետը):

34. Անփոփոխվելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 18-րդ, 42-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 7-րդ և 333-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ, 63-րդ, 65-րդ, 358-րդ հոդվածների խախտումներ, որոնք կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք են:

Նոր քննության ընթացքում անհրաժեշտ է գործի հանգամանքների բազմակողմանի վերլուծության և գնահատման արդյունքում վերացնել սույն որոշմամբ արձանագրված խախտումները և դրանց արդյունքներով օրենքով սահմանված կարգով հանգել համապատասխան հետևության:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Հեղինե Մերուժանի Գալստյանին ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելու մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

24.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴՅ/0174/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դատախազ պաշտպան

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Է.ԱՂԱԲԱԼՅԱՆԻ

Մ.ԶԻԼՖՈՒՂԱՐՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դոճաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Մհեր Սևակի Ախնոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 17-ի որոշման դեմ պաշտպան Մ.Զիլֆուղարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 2-րդ կայագորային քննչական բաժնում 2014 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասի և 358-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 91259914 քրեական գործը:

2014 թվականի օգոստոսի 28-ին Միեր Ախնոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

Նույն թվականի օգոստոսի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել Արցախի Հակոբյանի նկատմամբ:

2014 թվականի օգոստոսի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը դատական քննության արագացված կարգի կիրառմամբ 2014 թվականի հոկտեմբերի 14-ի դատավճռով Մ.Ախնոյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և դատապարտել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Մ.Ախնոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 4 (չորս) տարի ժամկետով:

Նույն դատավճռով Ա.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ նշանակվել է կալանքի ձևով պատիժ՝ 1 (մեկ) ամիս ժամկետով:

3. Մեղադրող Է.Աղաբալյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 14-ի դատավճիռը՝ բեկանել և պատժի մասով փոփոխել. Մ.Ախնոյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և դատապարտել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով, Ա.Հակոբյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտել զինվորական ծառայության մեջ սահմանափակման՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ դրամական բավարարման գումարի 10 (տասը) տոկոս պահումով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 17-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել պաշտպան Մ.Զիլֆուղարյանը, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 19-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Մեղադրական եզրակացության համաձայն՝ «(...) [Շ]ուրջ 10 բույե շարային վարժություններ կատարելուց հետո Արցախի Հակոբյանն

անձնակազմին զգասար հրաման է րվել, որի ժամանակ տեսել է, որ շարքային Մհեր Ախնոյանը չի կատարել իր հրամանը: Մի քանի անգամ կրկնել է հրամանը, որոնք Մ.Ախնոյանը կրկին չի կատարել, փոխարենը ձեռքը բարձրացրած կանգնել է: Այդ կապակցությամբ մտրեցել է նրան և հարցրել, թե արդյոք նա չի լսել, որ զգասար հրաման է րվել: Մ.Ախնոյանը պատասխանել է, որ որովայնի շրջանում ցավեր ունենալու պարճատով չի կարողանում զգասար կանգնել: Ապա Ա.Հակոբյանը մեկ ձեռքով բռնել է Մ.Ախնոյանի զինվորական գուրիկից և սսել, որ զգասար կանգնի: Վերջինս դրանից նյարդայնացած, կոպիտ րոնով պահանջել է, որ Ա.Հակոբյանը բաց թողնի գուրին և հետ է քաշել նրա ձեռքը: Ապա Ա.Հակոբյանը ձեռքով բռնել է Մ.Ախնոյանի համազգեստի օձիքից և թափահարելով սսել. «Ասում եմ զգասար կանգնի, ուրեմն զգասար կանգնի»: Վերջինս ձեռքով բռնել է Ա.Հակոբյանի ձեռքը և կրկին հետ քաշելով սսել, որ իր համազգեստից չքաշի: Դրանից հետո Ա.Հակոբյանը մեկ ձեռքով հրել է Մ.Ախնոյանի կրծքավանդակի շրջանից, ինչից վերջինս հետ-հետ է գնացել, իսկ երբ ուղղվել է, ձախ ձեռքով հրել է Ա.Հակոբյանին կրծքավանդակի շրջանից: Այնուհետև Ա.Հակոբյանն աջ ձեռքով հարվածել է Մ.Ախնոյանի դեմքի շրջանին և վերջինիս ձախ աչքի ենթասկնակապճային շրջանում քերծվածքների ձևով պարճատել առողջության թեթև վնասի հարկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք: Վերջինիս հարվածից հետո Մ.Ախնոյանն աջ բռունցքով հարվածել է Ա.Հակոբյանի դեմքի շրջանին, ինչից Ա.Հակոբյանը հետ-հետ է գնացել, իսկ երբ կրկին ցանկացել է մտրենալ, Մ.Ախնոյանը կրկին աջ բռունցքով հարվածել է նրա կրծքավանդակի ձախ հարվածին և ձախ ձեռքով բռնելով պարանոցից՝ կզակի հարվածում, ուժեղ սեղմել: Ա.Հակոբյանը նույնպես բռնել է Մ.Ախնոյանի համազգեստի կրծքավանդակի շրջանից և քաշքշել, որի ժամանակ վերջինս շարունակել է նրա պարանոցից սեղմած պահել (...)
(տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 109-110):

6. Մ.Ախնոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ես] հանդիսանալով ՊԲ թիվ 38401 զորամասի 5-րդ գումարակի 13-րդ վաշտի պարտադիր ժամկետային զինճառայող, կոչումով շարքային, արորադաս, 2014 թվականի հուլիսի 24-ին՝ ժամը 09:10-ի սահմաններում (...) զինվորական ճառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ շարքում զգասար չկանգնելու պարճատով, վիճարանել է իր նկատմամբ պետ հանդիսացող, նույն վաշտի սպա, լեյտենանտ Արցախի Արթուրի Հակոբյանի հետ, որի ընթացքում բռնություն գորճադրելով բռունցքով հարվածներ է հասցրել վերջինիս դեմքին և կրծքավանդակին, սպա ձեռքով բռնել է Ա.Հակոբյանի պարանոցից և սեղմել: Արդյունքում վերջինիս առողջությանը՝ ձախ ակնակապճային շրջանի քերծվածքների, կապրուկի, ձախ ակնագնդի արյունազեղման, պարանոցի ձախ և

աջ հարվածների քերծվածքների ձևով պարճատել է թեթև վնաս՝ առողջության կարճալի քայքայումով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 114-115):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Մհեր Սևակի Աինոյանի անձը դրականորեն բնութագրող հանգամանքներ են 3 պարվոգրերով, 16 դիպլոմներով, 3 վկայագրերով և 2 վկայականներով պարզևարված լինելը, առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր ճանաչելը և կարարածի համար զղջալը:

Դատարանը գրնում է, որ Մհեր Աինոյանի պարասխանատվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքներ պետք է դիտել նախկինում արարավորված դարասպարված չլինելը և դրականորեն բնութագրվելը:

Դատարանը միաժամանակ արձանագրում է, որ Մհեր Աինոյանի պարասխանատվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

(...)

Դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Մհեր Աինոյանի կարարած արարքի՝ հանրության համար վրանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ հանցագործության կարարման հանգամանքները ու նրա գործողությունների վրանգավորության աստիճանը, նրա անձը դրականորեն բնութագրող և պարասխանատվությունն ու պարիժը մեղմացնող վերը նշված հանգամանքները, պարասխանատվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ նա, չլինելով կալանավորված, չի խուսափել քննությունից ու դարից և չի կարարել այլ հանցավոր արարքներ, հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Մհեր Աինոյանի ուղղվելը հնարավոր է առանց նրա կողմից ազարագրկման ձևով նշանակված պարիժը կրելու, այսինքն՝ կիրարկելի է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Դատարանի նման հետևությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Արցախ Հակոբյանը հայրնել է, որ հանցագործությամբ իրեն անմիջականորեն պարճատված ու չվերականգնված վնաս առկա չէ և ամբաստանյալ Մհեր Աինոյանից որևէ պահանջ չունի, որպիսի պայմաններում պարժի նպարակներից մեկը՝ սոցիալական արդարության վերականգնումը, այդ մասով իրացված է (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 65-66, 68):

8. Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառարանական մասում նշել է. «(...) Մհեր Աինոյանի նկարմամբ պարիժ նշանակելիս թեև ընդհանուր իրավասության դատարանը փաստել է, որ հաշվի է առնում ամբաստանյալ Մ.Աինոյանի կողմից կարարած հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանն ու բնույթը, սակայն այն իր արարացումը չի գրել դատարանի կողմից նշանակված պարժարտասակում և պարժաչարիում:

Մասնավորապես, ընդհանուր իրավասության դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Կրկյալ հանցագործության կատարմամբ կուպիդ կերպով խախտվել է զինվորական ենթակայության կարգը և կասկածի փակ է դրվել զինվորական ծառայության խնդիրների պարզաձև իրականացումը, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ զինված ուժերի կարգապահության, բարոյահոգեբանական մթնոլորտի վրա:

(...)

Վերոգրյալից հետևում է, որ ընդհանուր իրավասության դատարանը, ամբաստանյալ Մ.Ախնոյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պարիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելով, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը (...):

Այսպիսով, Վերաքննիչ քրեական դատարանը հանգում է այն հետևության, որ (...) ամբաստանյալ Մ.Ախնոյանի (...) նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պարիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելը նպատակահարմար չէ, հետևաբար (...) ամբաստանյալ Միեր Ախնոյանն իր նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պարիժը պետք է ռեալ կրի (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 79-80):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն ակնհայտ խիստ լինելու պատճառաբանությամբ արդարացի չէ, չի համապատասխանում հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող այնպիսի հանգամանքի առկայությունը, ինչպիսին է տուժողի հակաօրինական կամ հակաբարոյական վարքագիծը (ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ): Մասնավորապես, Ա.Հակոբյանը, լինելով դասակի հրամանատար, սպա, Մ.Ախնոյանի առողջության բարելավման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու փոխարեն վիրավորել, սպառնացել, սպա բռնի գործողություններ է կատարել՝ հարվածելով և մարմնական վնաս պատճառելով վերջինիս: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը մեղադրողի բողոքի քննության արդյունքում ենթակայի նկատմամբ բռնություն գործադրելու համար կալանքի դատապարտված Ա.Հակոբյանի պատիժը փոփոխել է ազատազրկման հետ չկապված պատժատեսակով, իսկ Մ.Ախնոյանը, ով պաշտպանվել

է պետի կողմից գործադրված բռնությունից, դատապարտվել է 4 տարի ժամկետով ազատազրկման՝ առանց ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման, ինչը չի կարող արդարացի համարվել:

10. Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի դատական ակտին՝ բողոքաբերը փաստել է, որ Մ.Ախնոյանի նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս Առաջին ատյանի դատարանն արդեն իսկ գնահատել է վերջինիս կատարած հանցագործության հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը և հանգել հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց նրա կողմից ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, խստացնելով պատիժը, չի ղեկավարվել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով և ընդհանուր մասի՝ պատժին վերաբերող նորմերով:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է վճարել բողոքն ընդունել վարույթ, Մ.Ախնոյանի մասով ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 17-ի որոշումը և այդ մասով օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 14-ի դատական ակտին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Մ.Ախնոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 17-ի որոշումը:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումար-տակում պահելու ձևով պարիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պարիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Սույն քրեաիրավական նորմը Վճարելի դատարանի նախադեպային իրավունքում բազմիցս վերլուծության է ենթարկվել, և մշտապես վերահաստատվել դիրքորոշումն առ այն, որ առանց պատիժը փաստացի կրելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ միայն հանցավորի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու

ծանրացնող հանգամանքների, այլև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի համակողմանի ու ամբողջական գնահատման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (ԵԱԴԴ/0034/01/12, ԼԴ/0093/01/12, ՏԴ/0018/01/13, ԵԿԴ/0096/01/13, ԵԿԴ/0252/01/13, ԵՄԴ/0027/01/14, ԳԴ/0014/01/14, ՍԴ/0204/01/13 և այլն):

14. ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ «Պատրասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք/ը/ [է/

(...)

տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը (...)»:

Վճարելի դատարանն ընդգծում է, որ օրենքով նախատեսված մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում դրանք հաշվի առնելու պահանջն օրինականության սկզբունքի կարևորագույն բաղադրիչներից է: Հետևաբար պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների առկայության պարագայում դրանք հաշվի չառնելը կամ, ընդհակառակը, նշված հանգամանքների բացակայության դեպքում դրանք հաշվի առնելը օրինականության սկզբունքի կոպիտ խախտում է: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն պատժի կոնկրետ տեսակ և չափ ընտրելուն, այլև պատիժը պայմանականորեն չկիրառելուն, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասում նույնպես ամրագրված է մեղմացնող և ծանրացնող հանգամանքները պատշաճ գնահատման ենթարկելու իրավական պահանջ (օրինականության սկզբունքի վերաբերյալ մանրամասն տես Նարեկ Սարգսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 15-րդ կետը):

14.1. Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներից տուժողի վարքագծի հակաօրինականության կամ հակաբարոյականության վերաբերյալ Վճարելի դատարանն իր նախադեպային իրավունքում արձանագրել է. «(...) [Տ]ուժողի վարքագծի հակաօրինականությունը չի սահմանափակվում միայն հանցագործության կարարումով: Այն իր մեջ ներառում է նաև այլ գործողություններ, որոնք արգելվում են իրավունքի այլ ճյուղերով, օրինակ՝ վարչական, աշխարանքային,

քաղաքացիաիրավական օրենսդրությամբ: Հակաօրինական վարքագիծը կարող է արտահայտվել ծեծի, խոշտանգման, ծանր վիրավորանքի, մարդկային արժանապատվության նվաստացման ձևով: Այն կարող է դրսևորվել նաև պաշտոնեական դիրքը չարաշահելու, շանտաժի և այլ գործողությունների ձևով, որոնք չեն հանդիսանում բնություն, ծաղրանք, ծանր վիրավորանք, սակայն կրում են հակաօրինական բնույթ:

Ինչ վերաբերում է տուժողի վարքագծի հակաբարոյականությանը, ապա այն գնահատելու համար անհրաժեշտ է ելնել հասարակության մեջ համընդհանուր ճանաչում գրած բարոյական և էթիկական կանոնների դիրքերից, այնպիսի կարեգորիաների մասին պատկերացումներից, ինչպիսիք են արդարությունը, պարիվը, բարին ու չարը և այլն: Հակաբարոյական վարքագծի դրսևորումներից է խաբեությունը, դավաճանությունը, խարդավանքը, պահպանության վարահված փողերը վարկելը, բանբասանքներ տարածելը, ամուսնական դավաճանությունը և այլն (...):» (տե՛ս Խաչիկ Ղազարյանի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԵԴ/0138/01/09 որոշման 16-րդ կետը):

Իսկ Ն. Չաքմազյանի գործով որոշման շրջանակներում Վճարելի դատարանը փաստել է. «(...) [Ա]նձի նկատմամբ պարիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը անձին մեղսագրվող հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանի ու բնույթի, ինչպես նաև պարասխանաբարության ու պարիժը մեղմացնող հանգամանքների համարեքստում պետք է պարշաճ գնահատման ենթարկի նաև հանցանքի կատարումից առաջ և դրա ընթացքում տուժողի դրսևորած վարքագիծը: Նշված հանգամանքի գնահատումը կարևոր է հանցավորի և տուժողի վարքագծի հնարավոր փոխպայմանավորվածությունը և հանցավոր վարքագծի մեխանիզմում տուժողի դերակատարությունը պարզելու համար (...):» (տե՛ս Նիկոլայ Չաքմազյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՆԴ/0060/01/13 որոշման 16-րդ կետը):

15. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ցանկացած հանցագործություն հանցավորի և որոշակի իրադրության փոխներգործության արդյունք է, հետևաբար հանցավոր վարքագծի մեխանիզմում վճռորոշ դերը պատկանում է ոչ միայն հանցավորին, այլև կոնկրետ իրադրությանը, որի բաղկացուցիչ մաս է կազմում նաև տուժողի վարքագիծը: Այլ կերպ ասած՝ հանցավորի գործողությունները հաճախ պայմանավորված են լինում ոչ թե նրա անձնական առանձնահատկություններով, հակումներով կամ ձգտումներով, այլ տուժողի վարքագծով: Մասնավորապես, տուժողն իր սադրիչ՝ հակաօրինական կամ հակաբարոյական վարքագծով որոշ դեպքերում նպաստում է հանցավոր իրադրության ստեղծմանը՝ «դրդելով» այլ անձի կամ անձանց կողմից հանցագործություն

կատարելուն: Նման դեպքերում վերջինս հանրորեն վտանգավոր արարքի և հետևանքների առաջացման հարցում բավականին ակտիվ դերակատարություն է ցուցաբերում և հանցավոր վարքագծի մեխանիզմում «մեղքի» համեմատաբար մեծ չափաբաժին ունի, ինչը պետք է համարժեք գնահատականի արժանանա դատարանի կողմից պատիժ նշանակելիս և այն պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս:

Բացի այդ, կոնկրետ իրադրության վերլուծության ընթացքում տուժողի վարքագծի համակողմանի և օբյեկտիվ գնահատումը թույլ է տալիս բացահայտել հանցագործության շարժառիթները, հանցավորի դիտավորության ուղղվածությունը և պատիժ նշանակելիս որոշել հանցավորի անձի և նրա արարքի հանրային վտանգավորության իրական աստիճանը:

Այսպիսով, քննարկվող մեղմացնող հանգամանքի առկայությունը որոշելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել հետևյալ երկու հանգամանքները՝

1) արդյոք տուժողի վարքագիծը կրել է հակաօրինական կամ հակաբարոյական բնույթ, և

2) արդյոք տուժողի հակաօրինական կամ հակաբարոյական բնույթով է պայմանավորված եղել հանցավոր արարքի կատարումը:

16. Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման առանձնահատկություններին Վճարելի դատարանն անդրադարձել է մի շարք գործերով որոշումներում՝ նշելով, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս դատարանն արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում այլ տվյալների հետ մեկտեղ պետք է պատշաճ գնահատման ենթարկի նաև հանցանքի կատարմանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, հանցավոր վարքագծի դրսևորման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, խախտված իրավահարաբերության բնույթը, ինչպես նաև տուժողի վարքագիծը (ԵԷԴ/0132/01/13, ԵԱՆԴ/0060/01/13, ՏԴ/0031/01/14):

«ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 1-ին, 13-րդ, 32-րդ, 76-րդ, 329-րդ, 337-րդ, 350-րդ հոդվածների, ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը հարգելու, օրենքների և զինվորական կանոնագրքերի պահանջները պահպանելու, զինծառայողների միջև կանոնադրային փոխհարաբերություններն ամրապնդելու պարտականություն հավասարապես կրում են թե՛ զինծառայողները, թե՛ հրամանատարները (պետերը): Այսպես՝ պետն իր հայեցողական լիազորություններն իրականացնելիս պետք է առաջնորդվի մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների

պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, արդարացիության, կարգապահական իրավունքի իրականացման համա-
չափության և կամայականության արգելքի սկզբունքներով:

Պետք, իրավունք ունենալով հրամաններ տալու և պահանջելու դրանց կատարում, մինևույն ժամանակ պետք է ձեռնպահ մնա զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող, ֆիզիկական ան-
ձեռնմխելիությունը խախտող ցանկացած վարքագիծ դրսևորելուց: Նրա կողմից զինվորական բարձր կարգապահության ապահովմանն ուղղված գործունեությունը պետք է իրականացվի ենթականերին, այդ թվում՝ իրա-
վախախտում թույլ տված զինծառայողներին համոզելու և հարկադրելու միջոցների խելամիտ և ճիշտ համադրությամբ (*մանրամասն տես Նիկոլայ Չարմազյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՆԴ/0060/01/13 որոշման 17-րդ կետը*):

Հրամանատարների (պետերի) հիմնական պարտականություններից մեկն էլ ենթակաների առողջության նկատմամբ հոգածության դրսևորումն է, քանի որ զինծառայողների առողջության պահպանումն ու ամրա-
պնդումը, ֆիզիկական զարգացումը նրանց զինվորական պարտքի կա-
տարման կարևոր և անբաժան մասն է: Դրան համապատասխան՝ զինծա-
ռայողը չպետք է թաքցնի իր հիվանդությունը, իսկ հիվանդանալու դեպքում պարտավոր է այդ մասին անմիջապես զեկուցել իր անմիջական պետին և նրա թույլտվությամբ դիմել գնդի բուժկետ՝ բժշկական օգնություն ստա-
նալու համար:

16.1. «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաս-
տատելու մասին», ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքների մեջբերված դրույթների վերլուծությունը համադրելով սույն որոշման 14-16-րդ կետերում կատարված իրավական վերլուծության հետ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ենթա-
կայի նկատմամբ բռնության կիրառումն օժտված է հասարակական բարձր վտանգավորությամբ, բացասական է ազդում զինվորական կար-
գապահության, ՀՀ զինված ուժերի մշտական մարտական պատրաստա-
կանության վրա, ինչի ապահովումը բոլոր զինծառայողների՝ հատկապես պետերի (հրամանատարների) պարտականությունն է: Հետևաբար բոլոր դեպքերում, երբ զինծառայողի կողմից հանցավոր արարքի կատարումը պայմանավորված է լինում մեկ այլ զինծառայողի, այդ թվում՝ պետի (հրամանատարի)՝ իր դեմ ուղղված հանրորեն վտանգավոր արարքով, այդ հանգամանքը պետք է պատշաճ քրեաիրավական գնահատականի արժանանա հանցավորի նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս, ինչպես նաև պատիժը պայմանականորեն չկիրառելիս:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ դասակի հրամանատար, կոչումով լեյտենանտ Ա.Հակոբյանը, հաշվի չառնելով շարքային Մ.Ախնոյանի վատառողջ լինելու հանգամանքը, «զգաստ»

հրամանը չկատարելու պատճառով բռնել է վերջինիս զինվորական գոտիից, համազգեստի օձիքից, հրել կրծքավանդակից, այնուհետև հարվածել Մ.Ախնոյանի դեմքի շրջանին՝ առողջությանը պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք: Այդ հարվածից հետո Մ.Ախնոյանը բռունցքով հարվածներ է հասցրել Ա.Հակոբյանի դեմքին և կրծքավանդակին, ապա բռնել է պարանոցից և սեղմել՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով (տե՛ս սույն որոշման 5-6-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով Մ.Ախնոյանի անձը դրական բնութագրող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև պատժի նպատակների իրացված լինելու վերաբերյալ առկա տվյալները, հանգել է հետևության, որ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չպետք է կիրառել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը վերացրել է Մ.Ախնոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ նշելով, որ Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել կատարված հանցանքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, մասնավորապես այն, որ դրանով կոպիտ կերպով խախտվել է զինվորական ենթակայության կարգը, և կասկածի տակ է դրվել զինվորական ծառայության խնդիրների պատշաճ իրականացումը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-17.1-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների համատեքստում պատշաճ վերլուծության չի ենթարկել տուժողի վարքագիծը:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը որևէ գնահատականի չի արժանացրել այն, որ Մ.Ախնոյանի կողմից հանցանքի կատարումը պայմանավորված է եղել տուժողի դրսևորած հակաօրինական վարքագծով: Մասնավորապես, տուժող Ա.Հակոբյանը, ով շարքային Մ.Ախնոյանի պետն է, անտեսելով վերջինիս վատառողջ լինելու հանգամանքը, զինվորական կանոնագրքերով սահմանված կարգով նրան օգնություն ցույց տալու փոխարեն՝ բռնություն է գործադրել նրա նկատմամբ, և իր սաղրիչ՝ հակաօրինական վարքագծով «դրդել» նրան հանցանք կատարելուն: Վերոնշյալ վարքագծով Ա.Հակոբյանը ոչ միայն կոպիտ կերպով խախտել է «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքների՝ սույն որոշման 17-րդ կետում թվարկված դրույթները, այլև

կատարել հանցավոր արարք, ինչի կապակցությամբ նրան մեղադրանք է առաջադրվել, և նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով (տե՛ս սույն որոշման 1-ին և 2-րդ կետերը):

Այսպիսով, Վճարելի դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, վերացնելով Մ.Ախնոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը, հաշվի չի առել, որ տուժող Ա.Հակոբյանի վարքագիծը կրել է հակաօրինական բնույթ, և դրանով է պայմանավորված եղել Մ.Ախնոյանի կողմից հանցանքի կատարումը, ինչը, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է, վկայում է ինչպես հանցավորի, այնպես էլ նրա կատարած արարքի նվազ հանրային վտանգավորության մասին:

19. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Մ.Ախնոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 17-ի որոշումը իրավաչափ չէ:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը, պատժի մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխելով և ամբաստանյալ Մ.Ախնոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելով, պատշաճ գնահատման չի ենթարկել սույն գործում առկա Մ.Ախնոյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող բոլոր հանգամանքները՝ թույլ տալով ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք է:

Մինևույն ժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը թեև Մ.Ախնոյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող այլ հանգամանքների հետ մեկտեղ չի դիտել նաև այն, որ Մ.Ախնոյանի կողմից հանցանքի կատարումը պայմանավորված է եղել տուժողի հակաօրինական վարքագծով, սակայն պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում հանգել է ճիշտ հետևություն: Այլ խոսքով՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, սակայն թերի է պատճառաբանել այն: Այս պայմաններում Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 14-ի դատական ակտը

պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռարեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

20. Բացի այդ, Վճռարեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում բողոք բերած անձի այն պնդման կապակցությամբ, թե Վերաքննիչ դատարանը, վերացնելով պատիժը պայմանականորեն չկիրառելը, խստացրել է պատիժը, նշանակել անարդարացի՝ ակնհայտ խիստ պատիժ (տե՛ս սույն որոշման 9-րդ և 11-րդ կետերը): Այս առումով Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ պատիժը խստացնելը և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը չկիրառելը երկու առանձին, ինքնուրույն քրեաիրավական ինստիտուտներ են, որոնց կիրառումը տարբեր իրավական հետևանքներ են առաջացնում: Մասնավորապես, պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու դեպքում անձի նկատմամբ նշանակված պատիժն ի կատար է ածվում, իսկ պատժի խստացման դեպքում փոփոխվում են ի կատար ածվող պատժի ժամկետները կամ պատժատեսակը (*տե՛ս mutatis mutandis Սերոբ Սարգսյանի գործով Վճռարեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՄԴ/0109/01/12 որոշման 46-րդ կետը*):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռարեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Միեր Սևակի Ախնոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 17-ի որոշումը Մ.Ախնոյանի մասով բեկանել և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 14-ի դատական ակտին՝ հիմք ընդունելով Վճռարեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

25.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0046/01/14

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռարեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան	Ռ. ՍԱՖԱՐՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Լևոն Վանիկի Խոստիկյանի և Արտյոմ Գագիկի Ալեքսանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի նոյեմբերի 13-ի որոշման դեմ ամբաստանյալներ Լ.Խոստիկյանի և Ա.Ալեքսանյանի պաշտպան Ռ.Սաֆարյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի հուլիսի 28-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 15136913 քրեական գործը:

2013 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 13812413 քրեական գործը:

2013 թվականի հոկտեմբերի 28-ին թիվ 15136913 քրեական գործի վարույթը կասեցվել է, իսկ նույն թվականի դեկտեմբերի 12-ին վերսկսվել, միացվել թիվ 13812413 քրեական գործին:

Նախաքննության մարմնի 2013 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումներով Լևոն Վանիկի Խոստիկյանը և Արտյոմ Գագիկի Ալեքսանյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2014 թվականի մարտի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2014 թվականի հուլիսի 14-ի դատավճռով Լ.Խոստիկյանին և Ա.Ալեքսանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով Լ.Խոստիկյանի և Ա.Ալեքսանյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով՝ ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով՝ նրանց նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Ամբաստանյալներ Լ.Խոստիկյանի և Ա.Ալեքսանյանի պաշտպան Ռ.Սաֆարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հուլիսի 14-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի նոյեմբերի 13-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալներ Լ.Խոստիկյանի և Ա.Ալեքսանյանի պաշտպան Ռ.Սաֆարյանը:

Վճարելի դատարանի 2015 թվականի մարտի 23-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալներ Լ.Խոստիկյանին և Ա.Ալեքսանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «[նրանք], ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով (...) Գեղամ Վարդանի Գասպարյանի հետ, 2013 թվականի հոկտեմբերի 02-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, միասին գնացել են Երևան քաղաքի Նորքի 1-ին նրբանցք 15/6 տան բակ, որտեղ Գ.Գասպարյանը մարդկանց անցուղարձը հսկելու նպատակով մնացել է բակում, իսկ [Ա.Ալեքսանյանը], ավտոբուսակի հետնամասի մեքուսի դռան փականք կոտրելու միջոցով Լ.Խոստիկյանի հետ ապօրինի մուտք գործելով Ալբերտ Դազարյանին պարկանող՝ Նորքի 1-ին նրբանցքի 15/6 հասցեում գրնվող տան հողափարածքում գրնվող շինություն հանդիսացող ավտոբուսակ, այնտեղից գաղտնի հափշտակել է զգալի չափերի հասնող՝ 195.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ՝ 50 մետր երկարությամբ բազմալարային մալուխ, երկու պղնձե կաթսա, ալյումինե կաթսա, էլեկտրական շաղափ, 15 մետր երկարությամբ պղնձյա առանց մեկուսիչ պատյանի բազմալարային մալուխ, 3 կիլոգրամանոց՝ թվով 2 հար պղնձե գլանակ:

Բացի այդ, Ա.Ալեքսանյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով Լ.Խոստիկյանի հետ, 2013 թվականի հուլիսի 27-ին՝ ժամը 24:00-ի սահմաններում, միասին գնացել են Երևան քաղաքի Նորք փողոցի 163 տան բակ, որտեղ նա մնացել է դրսում մարդկանց անցուղարձը հսկելու նպատակով, իսկ Լ.Խոստիկյանը դարպասի վերևի հարվածից մուտք է գործել տան հողափարածք և, պատուհանից ապօրինի մուտք գործելով Երևան քաղաքի Նորք փողոցի 163 տուն, այնտեղից գաղտնի հափշտակել է զգալի չափի՝ 37.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ հավաքածու կազմող արծաթյա մատանի և օղեր, արծաթյա մատանի, արծաթյա ականջող, բիծուրերիս հանդիսացող մատանի» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 91):

6. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հուլիսի 14-ի դատավճռի համաձայն. «(...) Դատարանը, անդրադառնալով ամբաստանյալներ Ա.Ալեքսանյանի և Լ.Խոստիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման [այսուհետ նաև՝ Համաներման ակտ] կիրառման սահմանափակումներն առկա չլինելու վերաբերյալ պաշտպան Ռ.Սաֆարյանի պարճառաբանություններին, հիմնավորումներին և նշված որոշումը նրանց նկատմամբ կիրառելու մասին միջնորդությանը, գրնում է, որ պաշտպանի պարճառաբանություններն անհիմն են և նրա միջնորդությունը չի կարող բավարարվել՝ հետևյալ պարճառաբանություններով.

(...) պաշտպան Ռ.Սաֆարյանը «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման նկատմամբ կիրառում է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման դրույթների վերաբերյալ ՀՀ վճարելի դատարանի իրավական վերլուծությունն ու դիրքորոշումը, մինչդեռ՝ նշված որոշումներում հանցագործությունների համակցության դեպքում համաներման կիրառման սահմանափակումները նույնը չեն. ի տարբերություն «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման, որով հանցագործությունների համակցության դեպքում նախատեսված է համաներման կիրառման սահմանափակում միայն մեկ դեպքում կապված ոչ թե հանցանքների քանակական, այլ որակական կողմի հետ, «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշմամբ նշված դեպքում նախատեսված է նաև հանցանքների քանակական կողմի հետ կապված սահմանափակում: Նշված որոշման 20-րդ կետի համաձայն՝ հանցագործությունների և դատավճիռների համակցության դեպքերում համաներումը կիրառվում է վերջնական պատժի նկատմամբ՝ հանցագործությունների կամ դատավճիռների համակցության կանոններով այն սահմանելուց հետո՝ ասկայն հաշվի առնելով սույն որոշման 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված կանոնները, իսկ 6-րդ կետի համաձայն՝ սույն որոշման 5-րդ կետով նախատեսված կանոնները հանցագործությունների համակցության նկատմամբ կիրառվում են սույն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև, երբ մեղսագրվող արարքների համար նախատեսված առավելագույն պատիժների հանրագումարը սույն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատազրկումը, իսկ սույն որոշման 5-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ ՀՀ վճարելի դատարանի վերը նշված վերլուծությունն ու դիրքորոշումը կիրառելի չեն «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման նկատմամբ, հետևաբար՝ վերը նշված հիմնավորումներով պաշտպանի միջնորդությունն անհիմն է: (...)» (տես քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 92-93):

7. Վերաքննիչ դատարանը 2014 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ արձանագրել է. «*Համաներման ակտի 20-րդ, 5-րդ, 6-րդ կետերի/ պահանջները առաջին արյանի դափարանը համադրելով սույն գործի շրջանակներում, իրավացիորեն հանգել է այն հերևության, որ այն սույն գործի շրջանակներում կիրառելի չէ:*

Ինչ վերաբերում է պաշտպանի կողմից վկայակոչված ՀՀ Վճռաբեկ դատարանի 01.11.2012թ. թիվ ԵԿԴ/0067/01/12 նախադեպային որոշմամբ արտահայտված դիրքորոշմանը, ապա այն վերաբերում է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ փարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման դրույթներին և, ըստ էության սույն գործի շրջանակներում կիրառելի չէ: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 182):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալներ Ա.Ալեքսանյանի և Լ.Խոստիկյանի նկատմամբ Համաներման ակտը չկիրառելով, խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի և Համաներման ակտի պահանջները, ինչը հանգեցրել է ամբաստանյալների անհիմն դատապարտման և պատժի նշանակման:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Համաներման ակտը կիրառելի է ամբաստանյալների կողմից 2013 թվականի հուլիսի 27-ին կատարված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված արարքի նկատմամբ, քանի որ Համաներման ակտի 9-րդ կետով նախատեսված սահմանափակումները բացակայում են: Իսկ 2013 թվականի հոկտեմբերի 2-ին կատարված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործության նկատմամբ Համաներման ակտը կիրառելի չէ, քանի որ Համաներման ակտով սահմանված ժամկետից դուրս է:

Այս առումով դատարանները սխալ են մեկնաբանել Համաներման ակտը՝ եզրահանգելով, որ համակցության կանոնները կիրառելուց հետո միայն կարող են կիրառվել համաներման ակտի դրույթները, մինչդեռ տվյալ դեպքում Համաներման ակտն ընդհանրապես կիրառելի չէ դրա ընդունումից հետո կատարված արարքների նկատմամբ: Ըստ բողոքաբերի՝ սույն գործով կիրառելի են Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Ավետիսյանի գործով թիվ ՄԴՅ/0013/01/11 և Հակոբ Ամիրխանյանի գործով թիվ ԵԿԴ/0067/01/12 գործով կայացված որոշումները:

9. Բացի այդ, ստորադաս դատարանները անհիմն մերժել են ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն

չկիրառելու միջնորդությունը և հաշվի չեն առել նրանց անձը դրական բնութագրող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ նախկինում դատված չլինելը, ծանր հիվանդությամբ տառապելը, խնամքին երկու անձ ունենալը և սոցիալական ծանր վիճակում լինելը:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հուլիսի 14-ի, Վերաքննիչ դատարանի 2014 թվականի նոյեմբերի 13-ի դատական ակտերը,

ա) ամբաստանյալ Լ.Խոստիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով կիրառել ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետը և նրան ազատել 4 տարի ժամկետով պատժի կրումից, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով նշանակված պատիժը՝ 6 ամիս ժամկետով ազատազրկումը համարել կրած և նրան ազատել կալանքից կամ գործն ուղարկել նույն դատարան նոր քննության: Նշված պահանջները մերժելու դեպքում Լ.Խոստիկյանի նկատմամբ սահմանված վերջնական պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառել, սահմանել փորձաշրջան՝ նրան ազատելով կալանքից,

բ) ամբաստանյալ Ա.Ալեքսանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով կիրառել ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշումը և նրա նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը կրճատել մեկ երրորդով, դրան գումարել 2-րդ դրվագով սահմանված 6 ամիս ժամկետով ազատազրկումը և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ վերջնական պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան, կամ գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանը գտնում է, որ հանցանքների համակցության դեպքում Համաներման ակտի կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է արդյոք ստորադաս դատարանների

հետևությունն այն մասին, որ ամբաստանյալների նկատմամբ համաներումը կիրառելի չէ Համաներման ակտի 20-րդ և 6-րդ կետերի (համաներման կիրառումը հանցագործությունների համակցության դեպքում) հիման վրա:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազարվել քրեական պարասխանաարվությունից, իսկ դարասարսրայլը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազարվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պարծից, կամ պարծի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պարծարեսակով, կամ կարող է վերացվել դարվածությունը»:

Վճարելի դատարանը վերահաստատում է Վ.Ավետիսյանի գործով կայացված որոշման մեջ ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ «(...) համաներման կիրառման սահմանափակումները նախարեսված են համաներման ակտով և պերք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պերք է պահպանվեն համաներման ակտում նախարեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկարմամբ համաներումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պերք է օգրվեն համաներումից՝ պերք է ազարվեն քրեական պարասխանաարվությունից կամ պարծից, կամ կարող է մեղմացվել պարծիք, կամ վերացվել դարվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախարեսված համաներման չկիրառումը կամ նախարեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախրման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միարեսակ կիրառություն» (տեն Վարուժան Գագիկի Ավետիսյանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՄԴ3/0013/01/11 որոշման 16-րդ կետը):

14. Համաներման ակտի 20-րդ կետը նախատեսում է, որ «Հանցագործությունների (...) համակցության դեպքերում համաներումը կիրառվում է վերջնական պարծի նկարմամբ հանցագործությունների (...) համակցության կանոններով այն սահմանելուց հերո՝ սակայն հաշվի առնելով սույն որոշման 5-րդ և 6-րդ կետերով նախարեսված կանոնները»:

Համաներման ակտի 9-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ համաներումը չի կիրառվում «մի քանի հանցագործություն կատարած անձանց նկարմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն որոշմամբ համաներում չի կիրառվում»: Իսկ 7-րդ ենթակետը սահմանում է, որ համաներումը չի կիրառվում. «Հայասրանի Հանրապերություն քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով, 138-րդ հոդվածով, 139-րդ հոդվածով, 141-րդ հոդվածով, 142-րդ հոդվածով, 217-224-րդ հոդվածներով, 263-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 266-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 272-րդ

հողվածի 2-րդ և 3-րդ մասերով, 299-րդ հողվածով, 300-300.2-րդ հողվածներով, 301.1-ին հողվածով, 302-305-րդ հողվածներով, 329-րդ հողվածի 2-րդ մասով, 336-րդ հողվածով, 379-397.1-ին հողվածներով նախատեսված հանցագործությունները կատարելու մեջ մեղադրվող կամ այդ հանցագործությունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ»:

Համաներման ակտի 15-րդ կետի համաձայն՝ «Սույն որոշումը կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնք հանցագործություն են կատարել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ»:

Սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ վերլուծելով Համաներման ակտի վերը մեջբերված կարգավորումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ համաներման կիրառելիության համար օրենսդիրը նախատեսել է որոշակի ժամանակային սահմանափակումներ: Ընդ որում, այդ առումով կարևորվում է ոչ թե գործի քննության կամ Համաներման ակտի կիրառման, այլ հանցագործության կատարման պահը: Մասնավորապես, Համաներման ակտի 15-րդ կետից երևում է, որ օրենսդրի կամքն է Համաներման ակտը կիրառել այն անձանց նկատմամբ, ովքեր հանցագործություն են կատարել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ: Այլ խոսքով՝ Համաներման ակտը կիրառելի է միայն այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են մինչև նշված օրը հանցանք կատարելու հետևանքով:

Վերոնշյալից հետևում է, որ Համաներման ակտի, դրա առանձին դրույթների վկայակոչումը սահմանափակված է մինչ այդ օրը կատարված հանցագործությունների շրջանակով: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ հանցագործությունը կատարվել է Համաներման ակտով սահմանված ժամանակահատվածից հետո, այդ հանցագործության համար Համաներման ակտի կիրառելիության հարցի քննարկումն առարկայազուրկ է, քանի որ բացակայում է Համաներման ակտի կիրառման համար անհրաժեշտ իրավահարաբերությունը:

Այսպես, հանցագործությունների համակցության նկատմամբ Համաներման ակտի 20-րդ կետով նախատեսված կարգավորման կիրառելիության հարցը քննարկման առարկա կարող է դառնալ այն դեպքում, երբ համակցությունը կազմող հանցագործությունները կատարվել են մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ, քանի որ այդ ժամանակահատվածից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ քննարկվող կարգավորումը չի կարող վկայակոչվել և կիրառվել:

15. Համաներման ակտով որպես հանցագործությունների համակցության դեպքում համաներում կիրառելու սահմանափակում նախատեսված է, որ այն չի կիրառվում մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար համաներումը կիրառելի չէ (Համաներման ակտի 9-րդ կետի 10-րդ

ենթակետ): Վճարելի դատարանն արձանագրում է, որ վկայակոչված սահմանափակումը՝ որպես Համաներման ակտի բաղկացուցիչ մաս, պետք է գործի ժամանակային սահմանափակման կանոնի հաշվառմամբ: Այլ խոսքով՝ Համաներման ակտի 9-րդ կետի 10-րդ ենթակետով նախատեսված սահմանափակման «մի քանի հանցագործություն» արտահայտությունը վերաբերում է մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ կատարված հանցագործություններին: Հետևաբար քննարկվող կանոնը չի կարող վկայակոչվել և դրա հիմքով Համաներման ակտի կիրառումը բացառվել այն դեպքում, երբ հանցագործություններից մեկը կամ մի քանիսը կատարվել են Համաներման ակտով սահմանված ժամկետից հետո:

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ տվյալ սահմանափակմանը պետք է տալ բացառապես այն բովանդակային նշանակությունը, որն օրենսդիրն ի նկատի է ունեցել Համաներման ակտի 9-րդ կետի 7-րդ ենթակետում որոշակի հանցատեսակներ թվարկելով: Այսպիսով՝ Համաներման ակտի 9-րդ կետի 10-րդ ենթակետով նախատեսված սահմանափակման «երե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն որոշմամբ համաներում չի կիրառվում» ձևակերպումը անհրաժեշտ է դիտարկել նույն կետի 7-րդ ենթակետի համատեքստում՝ Համաներման ակտի կիրառման անհնարինությունը կապելով հանցագործության բնույթի, այլ ոչ թե դրա կատարման ժամանակահատվածի հետ:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հանցագործությունների համակցության դեպքում համաներումը հանցագործությունների համակցության կանոններով սահմանված վերջնական պատժի նկատմամբ կիրառելու վերաբերյալ Համաներման ակտի 20-րդ կետով նախատեսված կարգավորումը կիրառելու պայմաններն են՝

ա) հանցագործությունների համակցությունը կազմող հանցանքները կատարվել են մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ,

բ) (ա) կետում նշված հանցագործություններից ոչ մեկը ընդգրկված չէ Համաներման ակտի 9-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված հանցագործությունների շրջանակում:

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նաև արձանագրել, որ բոլոր այն դեպքերում, երբ հանցագործությունների համակցությունը կազմող հանցանքներից մեկը կամ մի քանիսը կատարվել են 2013 թվականի սեպտեմբերի 1-ից հետո, ապա Համաներման ակտի կիրառելիության հարցը պետք է քննարկվի միայն մինչև այդ ժամանակահատվածը կատարված հանցագործության (հանցագործությունների) մասով:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալներ Լ.Խոստիկյանին և Ա.Ալեքսանյանին մեղսագրվել է երկու դրվագ գողություն, որոնցից առաջինը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով որակված արարքը կատարվել է 2013 թվականի հուլիսի 27-ին, երկրորդը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ

հողվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով որակված արարքը՝ 2013 թվականի հոկտեմբերի 2-ին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի դատավճռով Լ.Խոստիկյանը և Ա.Ալեքսանյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով նրանց նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատագրելու 4 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Առաջին ատյանի դատարանը, վկայակոչելով Համաներման ակտի 20-րդ և 6-րդ կետերը, ամբաստանյալների նկատմամբ Համաներման ակտը չի կիրառել (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, այն թողել է օրինական ուժի մեջ՝ վկայակոչելով Համաներման ակտի 20-րդ, 5-րդ, 6-րդ կետերը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ ամբաստանյալներին վերագրվում են հանցագործություններ, որոնցից ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսվածը կատարվել է մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը (2013 թվականի հուլիսի 27-ին), իսկ մյուսը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսվածը՝ նշված ժամանակահատվածից հետո (2013 թվականի հոկտեմբերի 2-ին): Մինչդեռ ստորադաս դատարանները Համաներման ակտի 5-րդ, 6-րդ և 20-րդ կետերի վկայակոչմամբ Համաներման ակտը կիրառելի չեն համարել ամբաստանյալների նկատմամբ: Արդյունքում ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ երկու հանցագործություններից մեկը կատարվել է Համաներման ակտով սահմանված ժամանակահատվածից հետո, որի հետևանքով հանցագործությունների համակցության դեպքում համաներման կիրառման պայմանների առկայությունը (Համաներման ակտի 5-րդ, 6-րդ, 20-րդ կետեր) չէր կարող քննարկման առարկա դարձվել և բացառել ամբաստանյալների նկատմամբ համաներման կիրառելիությունը: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված և մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը կատարած հանցագործության համար Համաներման ակտի դրույթների կիրառելիության հարցը ստորադաս դատարանների կողմից ընդհանրապես չի քննարկվել:

18. Սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով 17-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստերը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ ամբաստանյալների նկատմամբ

համաներումը կիրառելի չէ Համաներման ակտի 20-րդ և 6-րդ կետերի հիման վրա, հիմնավորված չէ:

Հետևաբար, հիմնավոր է բողոքաբերի փաստարկն այն մասին, որ Համաներման ակտի 20-րդ կետի սխալ մեկնաբանման հետևանքով Վերաքննիչ դատարանը ճիշտ չի կիրառել քրեական օրենսքը, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման պահանջները (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերը նշված նյութական իրավունքի խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում են և հանգեցրել են նույն օրենսգրքի 395-րդ հոդվածով նախատեսված դատական սխալի, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Լ.Խոստիկյանի և Ա.Ալեքսանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի նոյեմբերի 13-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

19. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ սույն գործով կիրառելի են Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Ավետիսյանի գործով թիվ ՍԴ3/0013/01/11 և Հակոբ Ամիրխանյանի գործով թիվ ԵԿԴ/0067/01/12 գործով կայացված որոշումները, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք կայացվել են «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ին ընդունված համաներման ակտի կապակցությամբ, հետևաբար վերջինիս դրույթների մեկնաբանման մասերով այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները սույն գործով կիրառելի չեն:

20. Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ ամբաստանյալներ Լ.Խոստիկյանի և Ա.Ալեքսանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջների չկիրառման հետ կապված բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը) հնարավոր է անդրադառնալ սույն որոշման մեջ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Արտյոն Գագիկի Ալեքսանյանի և Լևոն Վանիկի Խոստիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի նոյեմբերի 13-ի որոշումը բեկանել և այդ մասով գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

26.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0011/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ԵՂԻԿՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև վերաքննիչ դատարան)՝ 2014 թվականի նոյեմբերի 19-ի որոշման դեմ «Մարսերալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Ա.Եղիկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի ապրիլի 23-ին «Մարսերալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ՍՊԸ) տնօրենի օգնական Կ.Նազարյանը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժին հաղորդում է ներկայացրել այն մասին, որ «Մարսերալ»

ՄՊԸ-ի նախկին առաքիչ Արման Սերգեյի Ներսեսյանը 2013 թվականի հունիսի 27-ից մինչև 2013 թվականի հոկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում «Մարսերալ» ՄՊԸ-ից ստացել է 30.568.127 ՀՀ դրամի տարբեր տեսակի ապրանքներ՝ Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղում գտնվող «Վիկտորյա Գրիգորյան» Ա/Ձ առաքելու նպատակով, սակայն մինչև 2014 թվականի ապրիլի 15-ը Ա.Ներսեսյանը նշված գումարից վերադարձրել է 21.898.030 ՀՀ դրամ՝ խաբեությանը տիրանալով մնացած 8.670.097 ՀՀ դրամին: Կ.Նազարյանը հայտնել է նաև, որ «Վիկտորյա Գրիգորյան» Ա/Ձ գոյություն չի ունեցել, իսկ Մայակովսկի գյուղում նման խանութ չի գործել:

2. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի հետաքննիչ Ա.Ղազարյանի (այսուհետ՝ նաև Հետաքննիչ)՝ 2014 թվականի մայիսի 2-ի որոշմամբ «Մարսերալ» ՄՊԸ-ի ներկայացուցիչ Կ.Նազարյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է Ա.Ներսեսյանի և Ա.Հովհաննիսյանի գործողություններում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոնշյալ որոշման դեմ Կ.Նազարյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի դատախազին:

Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի (այսուհետ՝ նաև Դատախազ)՝ 2014 թվականի մայիսի 20-ի որոշմամբ Կ.Նազարյանի բողոքը մերժվել է, և հաստատվել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը:

3. 2014 թվականի հունիսի 17-ին «Մարսերալ» ՄՊԸ-ի ներկայացուցիչ Կ.Նազարյանը բողոք է ներկայացրել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին Հետաքննիչի՝ 2014 թվականի մայիսի 2-ի և բողոքը մերժելու մասին Դատախազի՝ 2014 թվականի մայիսի 20-ի որոշումները:

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ «Մարսերալ» ՄՊԸ-ի ներկայացուցչի բողոքը բավարարվել է, վարույթն իրականացնող մարմնի համար պարտավորություն է սահմանվել վերացնելու դիմողի իրավունքների խախտմամբ կայացված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի հետաքննիչ Ա.Ղազարյանի՝ 2014 թվականի մայիսի 2-ի և բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի՝ 2014 թվականի մայիսի 20-ի որոշումները:

4. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի նոյեմբերի 19-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումը վերացնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 19-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել «Մարտերալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա.Եղիկյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մարտի 23-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի եզրափակիչ մասը շարադրել է հետևյալ կերպ.

«Վերաքննիչ բողոքը բավարարել:

Վերացնել «Մարտերալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Կ. Նազարյանի բողոքը բավարարելու մասին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. սեպտեմբերի 03-ի որոշումը:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճարելի դատարան՝ այն սրանալու օրվանից փասնհինգօրյա ժամկետում» (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 2, էջ 66):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն առերևույթ թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: Մասնավորապես, խախտվել են ՀՀ Սահմանադրության 5-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 8-րդ, 23-րդ, 25-րդ, 126-127-րդ, 394-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով որոշում կայացնելիս դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից և կայացրել է անորոշ դատական ակտ, անտեսել է Վճարելի դատարանի՝ սախկինում կայացված որոշումները:

Բողոքաբերը կարծում է սան, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ առկա է հակասություն Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 19-ի և «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 որոշումների միջև:

Մասնավորապես, բողոք բերած անձը նշել է, որ ստորադաս դատարանն անտեսել է սույն գործի փաստական հանգամանքների հետ նույնական փաստական հանգամանքներ ունեցող թիվ ԿԴ/0003/11/10 գործով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

8. Բողոքաբերը փաստել է նաև, որ ստորադաս դատարանը քննության չի առել այն, թե արդյոք հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար են հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են, և արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից նյութական և դատավարական օրենսդրության պահանջները չպահպանելու հետևանքով խախտվել են «Մարտերալ» ՍՊԸ-ի իրավունքները և ազատությունները: Իսկ այդպիսի մոտեցումը, ըստ բողոքաբերի, չի համապատասխանում Գ.Ղևոնդյանի գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը և վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին Հետաքննիչի՝ 2014 թվականի մայիսի 2-ի և բողոքը մերժելու մասին Դատախազի՝ 2014 թվականի մայիսի 20-ի որոշումները:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 19-ի դատական ակտը հակասու՞մ է արդյոք «Արցախբանակ» ՓԲԸ-ի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 որոշմանը:

11. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական արյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճարելի դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միարեսակ կիրառությունը: Վճարելի դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճարելի դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները)

պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Մեջբերված նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված որոշումների շրջանակներում (թիվ ՎԲ-17/08, թիվ ԵԿԴ/0093/11/11, թիվ ԵԿԴ/0055/11/13 և այլն), և կայուն նախադեպային իրավունք է ձևավորվել առ այն, որ նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ Վճռաբեկ դատարանի որոշումները պարտադիր են ստորադաս դատարանների համար: Այս ընդհանուր կանոնից բացառություն են միայն այն դեպքերը, երբ ստորադաս դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ տվյալ դատական ակտի հիմնավորումները կիրառելի չեն քննվող գործի փաստական հանգամանքների նկատմամբ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշումը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա ոչ կիրառելի:

Դրա հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը, եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա

կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքերի առավել մեծ ընդհանրություն (տե՛ս Դավիթ Վարոսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՇԴ/0005/11/14 որոշման 14-րդ կետը, Բարկեն Միսակյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՇԴ2/0007/15/13 որոշման 13-րդ կետը):

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածը սահմանում է.

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի պարճատարանված, սխալ պարճատարանված կամ չպարճատարանված է, սպա վերաքննիչ դատարանը պարճատարանում է անփոփոխ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապատասխան արորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մերժում է օրինական ուժի մեջ.

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և այդ մասով հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը.

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է արորադաս դատարանի ակտը, եթե արորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա թիտում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում քաղաքացիական հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

2. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մերժում կայացման պահից»:

Մեջբերված քրեադատավարական նորմերը Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել «Արցախյան» ՓԲԸ-ի գործով որոշման

շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումները մանրամասն օրենսդրական կարգավորում են սրացել: Մինչդեռ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող նոր դատական ակտերի կայացմանը վերաբերող օրենսդրական ձևակերպումն անորոշ է, քրեադատավարական օրենքը չի հստակեցնում «նոր դատական ակտ» հասկացությունը և չի սահմանում, թե վերաքննիչ դատարանի որ որոշումներն են համարվում «նոր դատական ակտ»:

(...) նշված օրենսդրական անորոշությունից խուսափելու նպատակով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասում շարադրված վերաքննիչ դատարանի լիազորությունները պետք է կիրառելի լինեն գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող նոր դատական ակտերի նկատմամբ: Այլ կերպ՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված լիազորություններով»

(...)

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անորոշ դատական ակտ կայացնելու պարագայում դատարանը խախտում է իրավունքի շահը արտահայտելու իրավական պահանջը: (տե՛ս «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 որոշման 10-11-րդ և 14-րդ կետերը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու արդյունքում Վերաքննիչ դատարանը կայացրել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերացնելու մասին որոշում (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

14. Սույն որոշման 13-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքը գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 19-ի դատական ակտը հակասում է «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 որոշմանը:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով կայացված դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող և սույն

որոշման 12-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով առավել ընդհանրական են, և դրանց կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Այս կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն և «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործերի փաստական հանգամանքների ընդհանրությունն այն է, որ երկու դեպքում էլ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կայացրել է անորոշ դատական ակտ: Նշված փաստական հանգամանքների համընկնումը Վճարելի դատարանին հիմք է տալիս պնդելու, որ «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով որոշման հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանի համար պարտադիր են եղել:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով որոշման մեջ Վճարելի դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները, կայացրել է իր լիազորությունների շրջանակից դուրս գտնվող դատական ակտ՝ որևէ կերպ չանդրադառնալով ստորադաս դատարանի դատական ակտը վերացնելու պայմաններում գործի հետագա ընթացքին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորություններով ղեկավարվելու փոխարեն՝ Վերաքննիչ դատարանը կայացրել է ոչ իրավաչափ դատական ակտ:

15. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանի որ սույն գործի քննության ժամանակ անտեսել է «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի մայիսի 11-ի որոշման հիմնավորումները, որոնք վերջինիս համար պարտադիր են եղել: Վերաքննիչ դատարանը ոչ միայն չի կիրառել կիրառման ենթակա Վճարելի դատարանի՝ նախկինում կայացված որոշումը, այլև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չի հիմնավորել, որ այն կիրառելի չէ տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

16. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

17. Ինչ վերաբերում է բողոքի հեղինակի՝ սույն որոշման 8-րդ կետում բարձրացրած փաստարկին, ապա հաշվի առնելով դրա բնույթը և նկատի

ունենալով այն, որ Վերաքննիչ դատարանի կայացրած որոշումից պարզ չէ, թե գործի հետագա ընթացքը ինչպիսի լուծում է ստացել՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ փաստարկին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմող «Մարսերալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա.Եղիկյանի վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դաիլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

27.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՔԴ/0051/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ՝ դիմողի ներկայացուցիչ
դատախազ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ս.ՍԱՖԱՐՅԱՆԻ

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման դեմ դիմող Աշոտ Մալխասյանի և նրա ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ժամկետային զինծառայող Արեգ Աշոտի Մալխասյանի մահվան կապակցությամբ 2009 թվականի հուլիսի 4-ին ՀՀ պաշտպանության նախարարության Քննչական ծառայության (այսուհետ նաև՝ ՀՀ ՊՆ ՔԾ) թիվ 2 կայագորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ

հողվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 91254109 քրեական գործը:

ՀՀ ՊՆ ՔԾ ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Ա.Խաչատրյանը (այսուհետ նաև՝ Քննիչ) 2009 թվականի հուլիսի 11-ին որոշում է կայացրել թիվ 91254109 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

2010 թվականի հունիսի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել 2009 թվականի գարնանային զորակոչի ժամանակ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի անդամ հանդիսացած թերապևտ Տաթևիկ Գյոզանային, որի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2010 թվականի հուլիսի 16-ին ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել 2009 թվականի գարնանային զորակոչի ժամանակ Կենտրոնական հավաքակայանի բժշկական հանձնաժողովի նախագահ հանդիսացած Արտաշես Խաչատրյանին, որի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2010 թվականի օգոստոսի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել 2009 թվականի գարնանային զորակոչի ժամանակ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի անդամ հանդիսացած նյարդաբան Գուրգեն Հովհաննիսյանին, որի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2014 թվականի հուլիսի 17-ին Քննիչը որոշումներ է կայացրել քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, որոնցով մեղադրյալներ Տ.Գյոզանայի, Ա.Խաչատրյանի և Գ.Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նույն օրը՝ 2014 թվականի հուլիսի 17-ին, Քննիչը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու և գործի վարույթը կարճելու մասին:

Քննիչի վերոհիշյալ որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Աշոտ Մալխասյանի և նրա ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի բողոքը ՀՀ զինվորական դատախազ Ա.Հարությունյանի (այսուհետ նաև՝ Դատախազ) 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ մերժվել է:

2. 2014 թվականի օգոստոսի 13-ին դիմող Ա.Մալխասյանը և վերջինիս ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը բողոք են ներկայացրել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել ՀՀ ՊՆ ՔԾ ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Ա.Խաչատրյանի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և գործի վարույթը կարճելու մասին 2014 թվականի հուլիսի 17-ի որոշումը:

և ՀՀ զինվորական դատախազ Ա.Հարությունյանի՝ 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ դիմող Ա.Մալխասյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի բողոքը մերժվել է:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 11-ի որոշման դեմ դիմող Ա.Մալխասյանի ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ մերժվել է:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման դեմ դիմող Ա.Մալխասյանը և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը ներկայացրել են վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. 2009 թվականի հուլիսի 4-ի՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման համաձայն՝ «2009թ. հուլիսի 4-ին ժամը 1355-ի սահմաններում թիվ 25918 գորամասի ժամկետային զինծառայող, շարքային Արեգ Աշուրի Մալխասյանը, որը Արաբկիրի զինվորական կոմիսարիատից ժամկետային զինվորական ծառայության է զորակոչվել 2009թ. հունիսի 26-ին, տեղափոխվել է Մեխակավանի զինհոսպիտալ, որտեղ վերջինիս մուրախորոշվել է կլինիկական մահ: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 5):

6. ՊԲ թիվ 25918 գորամասի զինծառայողներ՝ կապիտան Արամայիս Խաչատրյանը, կրտսեր սերժանտ Անդրանիկ Գալստյանը, կրտսեր սերժանտ Գևորգ Գրիգորյանը, շարքային Հովհաննես Սարգսյանը, որպես վկա ցուցմունքներ են տվել այն մասին, որ նորակոչիկ Արեգ Մալխասյանն ունեցել է հիվանդոտ տեսք, եղել է գունատ և շատ նիհար (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 63, 64, 65, 66-67):

7. ՀՀ պաշտպանության նախարարի 2009 թվականի օգոստոսի 26-ի թիվ 921 հրամանի համաձայն՝ «(...) Ծառայողական քննության ընթացքում պարզվել է, որ (...) Կենտրոնական բժշկական հանձնաժողովը, ունենալով շարքային Ա.Մալխասյանի հիվանդությունների մասին բոլոր փաստաթղթերը, պարտավոր էր այլ վերաբերմունք ցուցաբերել. ուղարկելով մանրակրկիտ հետազոտությունների՝ զորակոչի վերաբերյալ պետք է ճիշտ որոշում կայացնել:

(...)

- Արաբկիրի զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովը, առանց արագիտար հետազոտության, շարքային Ա.Մալխասյանին ճանաչել է «պիտանի շարքային ծառայության համար» այն դեպքում, երբ զինկոմիսարիատի պայմաններում բժշկական հանձնաժողովը դժվարությամբ էր որոշել նրա արամոքսի վիճակը և սրտձանու ճողվածքը, որոնց մասին գրված էր բժշկական փաստաթղթերում,

- Արաբկիրի զինվորական կոմիսարը շարքային Ա.Մալխասյանին հետազոտման համար ուղեգիր է Կրկել միայն վերադասի կարգադրությունից հետո,

- զինկոմիսարիատը, «Էրեբունի» բժշկական կենտրոնը, Կենտրոնական բժշկական հանձնաժողովը, շարքային Ա.Մալխասյանի ներկայացրած հիվանդության էպիկրիզին և «Դիագնոստիկ» կենտրոնի ու այլ բժշկական փաստաթղթերին բավարար ուշադրություն չեն դարձրել,

- «Էրեբունի» բժշկական կենտրոնում ս.թ. հունիսի 15-19-ը կատարված հետազոտությունների արդյունքներն օբյեկտիվ և լիարժեք չեն եղել, ինչի հիման վրա զինկոմիսարիատը և կենտրոնական բժշկական հանձնաժողովը Ա.Մալխասյանին ճանաչել են «պիտանի շարքային ծառայության համար»,

- շարքային Ա.Մալխասյանի անձնական գործում չեն կարվել ծնողի՝ դիմումին կից ներկայացված բժշկական փաստաթղթերը, առաջին անգամ Կրկելում ուղեգիրը, վերադարձված ակտի բլանկը,

- անձնական գործում փաստաթղթերի հերթական համարները (16-22) նշված են ուղղումներով և փոփոխումներով,

- գորակոչիկի քարտում 2009թ. առաջին անգամ կատարված բուժհետազոտման ամիսն ու ամսաթիվը և բժիշկների ազգանունները նշված չեն,

- Արաբկիրի զինկոմիսարիատի ոչ գաղտնի գործավարության գործավար Հռիփսիմե Սանթրոյանը չի ցանկացել վերցնել շարքային Ա.Մալխասյանի հոր դիմումը, իսկ վերցնելուց հետո սահմանված կարգով չի գրանցել,

- Արաբկիրի զինվորական կոմիսար, գնդապետ Ա.Ուլիսանյանը, ըստ Ա.Մալխասյանի եղբոր հայտարարության, անհարկի վիճարանել է Ա.Մալխասյանի հարազատների հետ՝ նրանց նկատմամբ ցուցաբերելով անհարգալից վերաբերմունք, ինչպես նաև կասկած է հայտնել ծնողի ներկայացրած փաստաթղթերի իսկության վերաբերյալ: (...» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 65-66):

8. ՀՀ ՊՆ Կենտրոնական հավաքակալայանի ռազմաբժշկական հանձնաժողովի նախագահ Արտաշես Խաչատրյանը 2009 թվականի հուլիսի 29-ին որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 2009 թվականի հուլիսի 5-ին հոսպիտալի պետից իմանալով, որ Ա.Մալխասյանը անգիտակից և շատ ծանր վիճակում տեղափոխվել է կենտրոնական զինվորական հոսպիտալ, գնացել է այնտեղ, ուր տեսել է բժշկական փաստաթղթեր, որոնք

արդեն իսկ կասկածի տակ էին դնում «Էրեբունի» ԲԿ-ի կողմից Ա.Մալխասյանի վերաբերյալ կազմած առողջական վիճակի ակտը: Արտաշես Խաչատրյանը մասնավորապես հայտնել է հետևյալը. «Մենք բժիշկներով, և խորհրդակցելով ՌԲՎ-յան պետի հետ եկանք այն համոզման, որ այս իրավիճակում եղել է միտում, որ իրական հետազոտման փվյալները չարտացոլվեն Էրեբունի ԲԿ-ի ակտում, այսինքն միտումնավոր դրանք չեն նշվել, որպեսզի գինսակոչիկը ճանաչվի պիտանի: (...) Այժմ, քանի որ ինձ ներկայացվեց Ա.Մալխասյանի՝ Էրեբունի ԲԿ-ում նրա հիվանդության պարմագիրը, նրանում առկա այլ հետազոտության արդյունքները, որոնք համեմարելով ակտում արձանագրվածի հետ, գալիս եմ այն հետևության, որ դրանք միտումնավոր չեն արտացոլվել ակտում, ինչն էլ հանգեցրել է նրան, որ հետազոտվող նորակոչիկը ճանաչվել է պիտանի շարային ծառայության, իսկ եթե դրանք արտացոլվեին, ապա գինսակոչիկ-հետազոտվողը դեռևս ԿԲՀ-ում կճանաչվեր ոչ պիտանի ծառայությանը: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 18-23):

9. ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետ Արտաշես Փարսադանյանը 2009 թվականի հուլիսի 29-ին որպես վկա տված իր ցուցմունքով հայտնել է, որ եթե Ա.Մալխասյանի առողջական վիճակին վերաբերող բոլոր բժշկական փաստաթղթերը մանրակրկիտ ուսումնասիրվեին զինկոմիսարիատի և Կենտրոնական բժշկական հանձնաժողովի բժիշկների կողմից, ապա Ա.Մալխասյանը չպետք է զորակոչվեր և պետք է ճանաչվեր զինծառայության համար ոչ պիտանի (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 242-244):

10. 2009 թվականի օգոստոսի 12-ի թիվ 609/29 դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ «(...) Ա.Մալխասյանի մահը վրա է հասել սրտի պսակաձև անոթներում արյան շրջանառության սուր խանգարումից (...): Միաժամանակ Ա.Մալխասյանը կենդանության օրոք փստապել է նաև Մելլորի-Վեյսի համախարանիչով, քրոնիկական էոզոֆագիտով, կերակրափողի մակերեսային էոզոֆաներով և քրոնիկական գաստրիտով, որոնք նրա մահվան հետ պարձառական կապի մեջ չեն գրնվում: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 50-58):

11. Դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության՝ 2010 թվականի ապրիլի 28-ի թիվ 20/հձ եզրակացության համաձայն՝ «(...) Զինսակոչիկ Ա.Մալխասյանի մոտ դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված որպես մահվան պարձառ հանդիսացած «սրտի պսակաձև անոթներում արյան շրջանառության սուր խանգարում» հիվանդությունը, համաձայն դիակի օրգանների կազմաբանական և ձևաբանական փոփոխությունների՝ /սրտի և մայր անոթի փականների ունևարիկ, սկլերոտիկ փոփոխություններ/ և փորձաքննությանն ներկայացված բժշկական փաստաթղթերի (...) փվյալների, առաջացել են 2008թ.-ից առաջ, որոնք հիմնավորվում են ինչպես դիակի օրգանների մորֆոլոգիական

փոփոխություններով, այնպես էլ 2008թ. Միքայելյանի անվան հիվանդանոցում կատարված էլեկտրասրտագրի վրա առկա բնորոշ փոփոխությունների/սրտի հեպին-կողմնային պարի սնուցման իջեցում/ մնասին վկայող րվյալներով: (...) Զինվորական ծառայության ռեժիմը, ֆիզիկական և փսիխո-էմոցիոնալ ծանրաբեռնվածությունը կարող էին ունենալ բացասական ազդեցություն Ա.Մալխասյանի մոտ սիրտ-անոթային առկա հիվանդության վրա, այդպիսով վարթարացնելով նրա առողջական վիճակը: (...) Փորձաքննությանը ներկայացված բժշկական փաստաթղթերում եղել են հուշող րվյալներ Ա.Մալխասյանի մոտ սրտային հիվանդության մասին: Եման րվյալներ եղել են 2008թ. Միքայելյանի անվ. վիրաբուժության ինստիտուտի հիվանդության պատմագրում (...) և Էրեբունի ԲԿ թիվ 4443/432 հիվանդության պատմագրում փակցված էլեկտրասրտագրերի ժապավեններում, ինչպես նաև Էրեբունի ԲԿ-ում՝ 17.06.09թ. ժամը 11.20-ին, երբ նյարդաբանի կողմից արձանագրվել է զարկերակային ճնշումը՝ 80/30մմ: Եման դեպքում Էրեբունի ԲԿ-ում անհրաժեշտ էր սրտային օրգանական պաթոլոգիան հաստատելու կամ ժխտելու համար կատարել սրտաբանական մանրակրկիտ հետազոտություններ /օրինակ կրկնակի էլեկտրասրտագիր, քանի որ կատարված էլեկտրասրտագրի ժապավենը եղել է անորակ և քիչ ինֆորմատիվ/: Սակայն հարկ է նշել, որ չնայած Էրեբունի ԲԿ-ի էլեկտրասրտագրի ժապավենը ցածր որակի է և քիչ ինֆորմատիվ, այնուամենայնիվ նրա վրա որոշվում է փոփոխություններ՝ սրտի հեպին-կողմնային պարի սնուցման իջեցում, նման պարագայում հարկավոր էր էլեկտրասրտագիրը պարբերաբար կարգով կրկնել և հիվանդի նկատմամբ սահմանել սրտաբանի հսկողություն, նաև կատարել լրացուցիչ հետազոտություն՝ վելոտրոմետրիա /ծանրաբեռնվածության թեստ/, ինչը հնարավորություն կդարձնի հայտնաբերելու սրտի օջախային բնույթի փոփոխությունների առկայությունը: (...):

(...) Ըստ 16.06.09թ. գաստրոդոդենոսկոպիայի հայտնաբերվել է դուոդենիտ, մակերեսային էրոզիվ անբարակ գաստրիտ, իսկ 2008թ. հիվանդության պատմագրի րվյալներով հայտնաբերվել է Մելորի-Վեյսի համախտանիշ, կայացած սրամոքս-աղիքային արյունահոսություն, որոնց առկայության դեպքում անհրաժեշտ էր Ա.Մալխասյանի նկատմամբ բժշկական րեսանկյունից սահմանել հստակ սննդակարգ, ֆիզիկական և փսիխոէմոցիոնալ ծանրաբեռնվածության սահմանափակում: Եվ, չնայած այն հանգամանքին, որ րվյալ դեպքում սրամոքս-աղիքային հիվանդությունները մահվան պարճառի հետ չեն գրնվել ուղղակի պարճառական կապի մեջ, սակայն նրանք կարող էին պարճառ հանդիսանալ սրտի պակասանոթների ռեֆլեկտոր սպասարիկ /սպազմ/ երևույթների, հանդիսանալով որպես նպաստող գործոն մահվան պարճառի առումով:

(...) նշված չկատարված հետազոտությունները Էրեբունի ԲԿ-ում պետք է կազմակերպեր անմիջապես բուժող բժիշկը, սրտաբանական

խորհրդարվությունը պետք է իրականացնել սրտաբանը, նաև 2009թ. 17 հունիսին զարկերակային ճնշումը 80/30մմ, վեգետանոթային դիստոնիա ախտորոշվելուց հետո բուժող բժշկի և նյարդաբանի կողմից անհրաժեշտ էր իրականացնել սրտաբանի և նյարդաբանի դինամիկ հսկողություն:

(...) Էրեբունի ԲԿ-ի հիվանդության պարամագրի հետազոտությունների փյուջաներով Ա.Մալխասյանի մոտ հայտնաբերվել է էրոզիվ անտրալ գաստրիտ, մակերեսային դուոդենիտ, որոնք չեն արձանագրվել առողջական վիճակի ակտի մեջ, բացի այդ Էրեբունի ԲԿ-ն ընդունվելու պահին զարկերակային ճնշումը արձանագրված է 120/80մմ, իսկ 17.06.09թ. նյարդաբանի կողմից գրանցվել է 80/30մմ, ինչը պահանջում էր համապատասխան քննություններով ախտորոշման ճշրում և վերջնական ախտորոշման մեջ արձանագրում, ինչը նույնպես չի կատարվել: (...) Ինչ վերաբերում է ախտորոշված «արամոքսի մոտոր-էվակուատոր ֆունկցիայի արագացում» ախտորոշմանը և նրա ֆունկցիայի խանգարման աստիճանին, ապա ըստ Էրեբունի ԲԿ-ի հիվանդության պարամագրի հետազոտությունների արդյունքների, հնարավոր չի ճշգրիտ որոշել ֆունկցիայի արագացման աստիճանը, քանի որ այդ աստիճանը պետք է որոշվեր ռենդգենոլոգի կողմից, ինչը չի կատարվել:

(...) Եթե Էրեբունի ԲԿ-ում ճիշտ գնահատվել էլեկտրասրտագրի վրա արտացոլված փյուջաները /հետին կողմնային պարի անուցման իջեցում/, նյարդաբանի, սրտաբանի և բուժող բժշկի կողմից կազմակերպվելին նյարդաբանի, սրտաբանի դինամիկ հսկողություններ, կատարվել լրացուցիչ էլեկտրասրտագիր /քանի որ էլեկտրասրտագրի ժապավենը անորակ լինելու պարճառով եղել է ոչ լիարժեք ինֆորմատիվ և նշված ժապավենով վերջնականապես կատարել որևէ ախտորոշում հնարավոր չէ/, ապա հնարավոր կլինել հայտնաբերելու սրտային պաթոլոգիան և ըստ այդմ էլ դրանց համապատասխան կրթվել համապատասխան գնահատական:

(...) Էրեբունի ԲԿ-ում նյարդաբանի կողմից գրառումը ընդգրկում է միայն ախտորոշում առանց նյարդաբանական կարգավիճակի նկատարման: (...) «Կրիզ» անվանված վիճակը (...) պահանջում էր բացառել սրտային համապատասխան կափույրային ապարատի կողմից պաթոլոգիկ վիճակները: Եթե առողջական վիճակի ակտում ճիշտ ձևակերպվել նյարդաբանական ախտորոշումը՝ «վեգետանոթային դիստոնիա կրիզներով», ապա Ա.Մալխասյանը պետք է ենթարկվել լրացուցիչ հետազոտության նյարդաբանական արացիոնարում /բաժանմունքում/ ախտորոշման ճշրման, կրիզների հաճախականության և ծանրության աստիճանի որոշման համար և բնականաբար այն կարժանանար համապատասխան գնահատականի զինվորական հանձնաժողովների բժիշկների կողմից:

(...) Եթե Ա.Մալխասյանը ենթարկվել էր համապարասխան հեղափոխությունների (...), ապա հնարավոր է, որ նրա մոտ հայտնաբերվեին ինչպես մահվան պարճառ հանդիսացող հիվանդությունը՝ սրտային պաթոլոգիան, այնպես էլ մյուս հիվանդությունները /կամ ժխտել վերջիններս/: Եվ բնականաբար եթե հայտնաբերվեին այդպիսիք, կազմակերպվել համապարասխան բուժումներ, խորհրդարվություններ, ապա հնարավոր էր խուսափել առողջական վիճակի հեղափոխ վարացումից, նաև մահվան ելքից: Հանձնաժողովը հարկ է համարում նշելու նաև, որ գորակոչային հանձնաժողովի կողմից պետք է ուշադրության արժանանար նաև Ա.Մալխասյանի մոտ 2008թ. ախտորոշված «Մելորի-Վեյսի սինդրոմ, կայացած սրամոքս-աղիքային արյունահոսություն» հիվանդությունը և այդ ախտորոշումը պետք է ենթարկվել համապարասխան հրահանգներով հիմնավորված գնահատականի: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 15-28):

12. Որպես վկա հարցաքննված հանրապետական զինկոմիսարիատի ավագ բժիշկ, փոխգնդապետ Ռուբեն Մարգարյանը, ինչպես նաև սույն գործով դատաբժշկական փորձագիտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Հարությունյանն իրենց ցուցմունքներով պնդել են, որ «Էրեբունի» ԲԿ-ի կողմից Ա.Մալխասյանի վերաբերյալ կազմված առողջական վիճակի հետազոտության ակտի՝ ախտորոշման վերաբերյալ հատվածում նշված՝ «Ստամոքսի և կերակրափողի մոտոր-էվակուատոր ֆունկցիայի աննշան արագացում նյարդային բնույթի» ձևակերպումն իրենից որպես ախտորոշում չի ներկայացնում, այլ հանդիսանում է որպես նախանշան, հետևաբար բոլոր բժշկական հանձնաժողովները պարտավոր էին այդ ուղղությամբ Ա.Մալխասյանի նկատմամբ իրականացնել լրացուցիչ և ստացիոնար հետազոտություններ, մասնավորապես ուղարկելով նրան աղիքաստամոքսային և նյարդաբանական ստացիոնարներ՝ համապատասխան հետազոտություններ անցնելու համար, և դրանից հետո միայն անդրադառնալ նրա՝ զինվորական ծառայության անցնելու պիտանիության հարցին, ինչը չի կատարվել այդ հանձնաժողովների համապատասխան բժիշկ-մասնագետների կողմից (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 30-32, 34-35):

13. Դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացության առնչությամբ 2010 թվականի հունիսի 24-ին որպես վկա հարցաքննվել է «Էրեբունի» ԲԿ-ի անհետաձգելի սրտաբանության բաժանմունքի վարիչ Համլետ Հայրապետյանը, որն իր անհամաձայնությունն է հայտնել փորձաքննության եզրակացության հետ, այն անվանել է անհեթեթ, իսկ քննիչին հետաքրքրող հարցերի պարզաբանման համար վերջինիս առաջարկել է հարցաքննության հրավիրել Երևան քաղաքի գլխավոր սրտաբան Պարունակ Զելվեյանին, նաև հարկ եղած դեպքում նշանակել փորձաքննություն և դրանից հետո միայն անդրադառնալ իր՝

մեղք ունենալ-չունենալու հարցին (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 96):

14. 2010 թվականի օգոստոսի 24-ին որպես վկա հարցաքննվել է Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտի բժիշկ Լիլիանա Թելյանը, որը հայտնել է, որ մասնագիտությամբ սրտաբան-ֆունկցիոնալիստ է և ունի 30 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ: Բժիշկ Լ.Թելյանը, ծանոթանալով քննիչի կողմից իրեն ներկայացված բժշկական փաստաթղթերի, ինչպես նաև գորակոչիկ Ա.Մալխասյանի անձնական գործի հետ՝ ցուցմունք է տվել, որ հիվանդության պատմագրից երևում է, որ 2008 թվականին ինքը հետազոտել է Արեգ Մալխասյանին և հետազոտության արձանագրված արդյունքները հուշում են, որ *«կան սրտի հետ կապված խնդիրներ»*: Նաև պարզաբանել է, թե ինչ տվյալներ են հուշում Արեգ Մալխասյանի մոտ դեռևս 2008 թվականին եղած՝ սրտի հետ կապված խնդիրների առկայության մասին: Այնուհետև անդրադարձել է քննիչի կողմից իրեն ներկայացված՝ 2009 թվականի հունիսի 17-ին «Էրեբունի» ԲԿ-ում Արեգ Մալխասյանի վերաբերյալ կազմված էլեկտրասրտագրին (ԷՍԳ) և հայտնել, որ այն լավ որակով չէ կատարված, սակայն ինքը տեսնում է սինուսային տախիկարդիա, վոլտաժի իջեցում, գագաթնային և կողային սրտի պատի սնուցման իջեցում, և բացի այդ՝ նյարդաբանի կողմից արձանագրվել է 80/30 զարկերակային ճնշում՝ *«ինչը բնականաբար նորմալի սահմաններում չէր և մրահոգելու խնդիր պետք է առաջացներ»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 129-130):

15. 2010 թվականի օգոստոսի 26-ին որպես վկա հարցաքննվել է «Քաւաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնի սրտաբան, ԷՍԳ-ի բժիշկ Արմինե Աղաջանյանը, որն ուսումնասիրելով քննիչի կողմից իրեն ներկայացված՝ 2009 թվականի հունիսի 17-ին «Էրեբունի» ԲԿ-ում Արեգ Մալխասյանի վերաբերյալ կազմված ԷՍԳ-ի ժապավենը՝ հայտնել է, որ եթե ինքը վերծաներ, ապա կգրառեր, որ առկա է սինուսային տախիկարդիա, արյան շրջանառության խանգարում ձախ փորոքի ստորին պատին: Բժիշկ Ա.Աղաջանյանը նշել է, որ ինքը որպես մասնագետ այդպես է տեսնում, իսկ թե ինչու է Արեգ Մալխասյանին հետազոտած սրտաբանը նշել, որ նրա մոտ սիրտ-անոթային համակարգի պաթոլոգիա չի հայտնաբերվել՝ ինքը չի կարող պատասխանել նրա փոխարեն (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 132-133):

16. 2010 թվականի սեպտեմբերի 6-ին որպես վկա հարցաքննվել է Հայկ Հովսեփյանը, որը հայտնել է, որ մասնագիտությամբ թերապևտ-սրտաբան է, ունի 16 տարվա ծառայողական մասնագիտական ստաժ և 2002 թվականի աշնանային գորակոչից ի վեր մասնակցել է գորակոչերին՝ որպես Կենտրոնական հավաքակայանի բժշկական հանձնաժողովի ավագ սպա: Անդրադառնալով Ա.Մալխասյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործին՝ վկա Հայկ Հովսեփյանը զարմանք է հայտնել, թե ինչու

նախաքննությունն այդ գործով դեռ չի ավարտվել: Այնուհետև ուսումնասիրելով քննիչի կողմից իրեն ներկայացված՝ 2009 թվականի հունիսի 17-ին «Էրեբունի» ԲԿ-ում Արեգ Մալխասյանի վերաբերյալ կազմված ԷՍԳ-ի ժապավենը՝ հայտնել է, որ այն կատարված է տեխնիկապես անորակ, սակայն, չնայած դրան, ինքը նկատում է շեղում և եթե վերծաներ այդ ԷՍԳ-ի ժապավենը, ապա եզրակացություն կտար, որ առկա է սինուսային առիթմիա, ռեպալյարիզացիայի խանգարում ձախ փորոքի ստորին պատի հատվածում: Վկա Հայկ Հովսեփյանը նշել է նաև, որ համեմատելով Ա.Մալխասյանի առողջական վիճակի հետազոտության արդյունքները նրա առողջական վիճակի վերաբերյալ կազմված ակտի հետ՝ ակնհայտ երևում է, որ գաստրոէնտերոլոգի, նյարդաբանի ախտորոշումները օբյեկտիվորեն չեն արտացոլվել այդ ակտի մեջ: Վկան նաև հայտնել է, որ ուսումնասիրելով հիվանդության նկարագրում առկա բոլոր հետազոտությունների արդյունքները, ինքը գտնում է, որ կազմված ակտը չի համապատասխանում հետազոտության արդյունքներին, և եթե այդ արդյունքները, որոնք պարտադիր պետք է նշվեին ակտում, առկա լինեին, ապա Ա.Մալխասյանը Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից չէր ճանաչվի պիտանի ծառայության համար, այլ կնշանակվեին հետազոտություններ՝ մասնավորապես գաստրոէնտերոլոգիական և նյարդաբանական ստացիոնարների տեսքով (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 168-170):

17. 2010 թվականի օգոստոսի 30-ին որպես մեղադրյալ տված իր ցուցմունքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի անդամ, բժիշկ-նյարդաբան Գուրգեն Հովհաննիսյանը նշել է. *«[Ե]թե Էրեբունի ԲԿ-ի բժշկական հանձնաժողովի կողմից օբյեկտիվ կատարված հետազոտության արդյունքները լրիվ ծավալով և ճիշտ արտացոլվեին Ա.Մալխասյանի վերաբերյալ կազմված և ԿԲՀ-ին ներկայացված առողջական վիճակի հետազոտման ակտի մեջ, ապա չէր բացառվում, որ իմ հետազոտության ժամանակ ես միջնորդեի ԿԲՀ-ին, որ Ա.Մալխասյանին ուղարկեին, կոնկրետ իմ գծով, նյարդաբանական սրացիոնար հետազոտման»*: Անդրադառնալով ստամոքսի հիվանդության վերաբերյալ Արեգ Մալխասյանի կողմից ներկայացված գանգատներին՝ մեղադրյալ Գ.Հովհաննիսյանն իր ցուցմունքում նշել է. *«[Բ]անի որ նրա անձնական գործում կային նման հուշող տվյալներ՝ օրինակ Մելորի-Վեյսի սինդրոմ, սրամոքս-առիքային արյունահոսությամբ, հետազայում նաև սրոժանու կերակրափողի հարվածի աքսիլյար ճողվածք, ես ուղեգրել եմ, որ նրան հետազոտի նաև վիրաբույժը, որը, եթե տեսել էք ԿԲՀ-ի որոշումը, նշել է, թե վիրաբուժական պատրոզիա հայտնաբերված չէ»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 148-149):

18. Որպես մեղադրյալ տված իր ցուցմունքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նախագահ Արտաշես Խաչատրյանն անդրադարձել է Արեգ Մալխասյանի վերաբերյալ Կենտրոնական բժշկական

հանձնաժողովի որոշման մեջ՝ վիրաբուժական պաթոլոգիա հայտնաբերված չլինելու մասին նույն հանձնաժողովի վիրաբույժ Ա.Ուզանկիչյանի կատարած գրառմանը և նշել, որ այդ գրառման առկայության պայմաններում ինքը չէր կարող այլ որոշում կայացնել (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 163-166):

19. Վկա Ալեքսանդր Ուզանկիչյանը ցուցմունք է տվել, որ «Էրեբունի» ԲԿ-ում աշխատում է 1988 թվականից, իսկ 2001 թվականից մինչև 2009 թվականի գարնանային զորակոչը ներառյալ ընդգրկված է եղել ՀՀ զինվորամիասարիատի Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կազմի մեջ որպես մասնագետ-վիրաբույժ: Վկա Ա.Ուզանկիչյանը ցուցմունքում նշել է, որ երբ այժմ ինքը կրկին ուսումնասիրեց Ա.Մալխասյանի անձնական գործը, կարող է ասել, որ մի շարք բժշկական փաստաթղթեր, որոնք ինքը նախկինում տեսել է անձնական գործի մեջ՝ այնտեղից բացակայում են: Վկա Ա.Ուզանկիչյանը նշել է նաև, որ չի կարողանում մտաբերել, թե «ԿԲՀ-ի անցկացման օրը, այսինքն՝ 25.06.09թ. դրանք եղել են անձնական գործի մեջ, թե ոչ»: Քննիչի հարցին պատասխանել է, որ իրեն այժմ ներկայացված բժշկական փաստաթղթերը, որոնք վերաբերում են Մելլորի-Վեյսի համախտանիշին և ստոծանու ճողվածքին, ինքը տեսել է դեռևս 2009 թվականի հունիսի 12-ին՝ զինվորամիասարիատում, դրա համար էլ խորհուրդ է տվել Ա.Մալխասյանին ուղեգրել հետազոտման: Անդրադառնալով այդ հետազոտման արդյունքներին՝ վկա Ա.Ուզանկիչյանը մասնավորապես նշել է հետևյալը. «Քանի որ հետազոտման ժամանակ նախկին ախտորոշումները ժխտվել են և փրվել է ակտ, հետևաբար, եթե անգամ այդ փաստաթղթերը լինեյին ԿԲՀ-ի հանձնաժողովի զննության ժամանակ, միևնույն է այն հիմք չէր տալու կրկին նրան ուղարկելու հետազոտության, իսկ թե Էրեբունի ԲԿ-ի կողմից փրված ակտը որքանով է համապատասխանում հետազոտություններին՝ ևս չեմ կարող պատասխանել»: Քննիչի հարցին պատասխանել է, որ իսկապես հետախուսազրույց ունեցել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նախագահ Արտաշես Խաչատրյանի հետ և նրան պատասխանել է, որ «առկա ակտում կատարված հետազոտություններով նախկին ախտորոշումները չեն հաստատվել»: Ցուցմունքում Ա.Ուզանկիչյանը պնդել է նաև հետևյալը. «հետազոտվող անձն ինձ որևէ գանգապներ, համենայնդեպս սրուզման ժամանակ, այսինքն ԿԲՀ-ի օրը, չի ներկայացրել: Ամեն դեպքում Ա.Խաչատրյանը կաշկանդված չէր նրան լրացուցիչ հետազոտության ուղարկելու հարցում, եթե իհարկե, հետազոտվողը ցույց է տվել բժշկական փաստաթղթերը, նաև ներկայացրել է գանգապներ» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 135-138):

20. 2010 թվականի նոյեմբերի 2-ին Քննիչը որոշում է կայացրել «Համալիր հանձնաժողովային դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին»՝ պատճառաբանելով, որ «քննությանը ի հայտ եկած առկա բազմաթիվ հակասությունների պարզաբանումը

հնարավոր կլինի միայն պարզել նշանակելով համալիր դատաբժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն, որի համար առկա են բավարար հիմքեր» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 266-278):

Վերոնշյալ փորձաքննությունը կատարելու համար 2010 թվականի նոյեմբերի 12-ին ՀՀ առողջապահության նախարար Հ.Քուշկյանի թիվ 1830-Ա հրամանով ստեղծվել է հանձնաժողով՝ բժշկական գիտությունների թեկնածու Պարունակ Զելվեյանի նախագահությամբ, որին հանձնարարվել է փորձաքննությունը կատարել հնարավոր սեղմ ժամկետում (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 281):

21. Համալիր հանձնաժողովային դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննության եզրակացությունը (այսուհետ նաև՝ Համալիր փորձաքննության եզրակացություն) նախաքննության մարմնին է ուղարկվել 2011 թվականի սեպտեմբերի 17-ին (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 65):

Ըստ այդ եզրակացության.

- Արեգ Մալխասյանը մինչև գորակոչվելը տառապել է «Մելլորի-Վեյսի համախտանիշ, կայացած ստամոքս-աղիքային արյունահոսություն» հիվանդությամբ, նրա մոտ արձանագրվել են՝ «Կատարյալ էզոֆագիտ: Մակերեասային գաստրիտ, բուլբիտ: Ստամոքսի անտրալ հատվածի եզակի էրոզիաներ: Ստոծանու կերակրափողային անցքի ոչ մեծ սահող ակտիվ ճողվածք», ինչպես նաև «առկա է եղել կարդիոսկլերոզ, կորոնարոսկլերոզ, սակայն նա եղել է ծածկրնթաց և առանց ֆունկցիոնալ փոփոխությունների»:

- «Էրեբունի» ԲԿ-ում 2009 թվականի հունիսի 15-ից 19-ը կատարված հետազոտության արդյունքներով կազմված առողջության վիճակի հետազոտման ակտում չի արտացոլվել գաստրոէնտերոլոգի ախտորոշումը՝ «էրոզիվ գաստրիտ, մակերեասային դուոդենիտ, կերակրափողի և սրամոքսի հիպերմոտոր դիսկինեզիա, ստոծանու կերակրափողային անցքի ճողվածք»:

- նյարդաբանի ենթադրյալ ախտորոշումը՝ «վեգետո-անոթային դիստոնիա, կրիզներով», ճշգրտելու նպատակով հետագա հետազոտություններ չեն իրականացվել:

- «Պարմագրում առկա էՄԳ ժապավենը վար որակի է, ուսրի դժվար է գնահատել Ա.Մալխասյանի մոտ «սրբի հերին-կողմնային պարի անուցման իջեցման» առկայության, կամ բացակայության փաստը, ինչը հնարավոր կլինե՛ր հայտնաբերել կամ բացառել որակյալ ԷՄԳ առկայության պարագայում»:

- ««սրամոքսի և կերակրափողի մոտոր-էվակուատոր ֆունկցիայի աննշան արագացում նյարդային բնույթի» բառակապակցությունը որպես կլինիկական ախտորոշում ընդունելի չէ:

(...) սրամոքսի և կերակրափողի մոտոր-էվակուատոր ֆունկցիայի գնահատումը իրականացվում է դինամիկ ռենտգենաքանակական հետազոտության ընթացքում, սակայն Արեգ Մալխասյանի հիվանդության պատմության (...) նկարագրում նման գրառումներ առկա չեն»:

- «(...) առկա է եղել **կարդիոսկլերոզ, կորոնարոսկլերոզ, սակայն նա եղել է ծածկընթաց և առանց ֆունկցիոնալ փոփոխությունների, քանի որ կենդանության օրոք Արեգ Մալխասյանը երբևէ գանգատներ չի ներկայացրել այդ կապակցությամբ**»:

- «2009թ. հուլիսի 4-ին Արեգ Մալխասյանի առողջության վարթարացման և դրանից հետո՝ մահվան առաջացման գործում հավանական է՝ նշանակություն է ունեցել սրտի ծածկընթաց ախտաբանական փոփոխությունների (կորոնարոսկլերոզ, կարդիոսկլերոզ) առկայության ֆոնի վրա կայացած սրամոքս-աղիքային տրակտի սուր արյունահոսությունը («Մելլորի-Վեյս համախարանիշ»), նրա արդյունքում առաջացած սրտի կանգը (...): Արեգ Մալխասյանի սրտի կանգի պատճառն է սրտի պսակաձև անոթների արյան շրջանառության սուր խանգարումը, որը պայմանավորված է եղել կենդանության օրոք տառապած, սույն հետևությունների «ե» կետում նշված ախտաբանական փոփոխություններով և սակավարյունության ֆոնը՝ կերակրափողի կարդիալ հարվածի պատճառներից տեղի ունեցած արյունահոսությունը, ինչն էլ հասարարվել է հերձման ժամանակ և հյուսվածքաբանական հետազոտությամբ հայտնաբերված (...) ախտաբանական փոփոխություններով. (...):»:

Համալիր հանձնաժողովային դատարժշկական-ռազմարժշկական փորձաքննություն կատարած փորձագիտական հանձնաժողովն իր հետևությունների «ե» կետում նշել է հետևյալը՝

«Ա.Մալխասյանի դիակի դատարժշկական փորձաքննությամբ և հյուսվածքաբանական ուսումնասիրությամբ հայտնաբերված, նշված հիվանդություններից և ախտաբանական փոփոխություններից՝ «պակարդիոզ, սրտամկանի ծանր դիստրոֆիան նեկրոբիոտիկ օջախներով, կորոնարիոզ, դիֆուզ կարդիոսկլերոզը, կիսալուսնաձև փականների շարակցական հյուսվածքի դեստրուկտիվ դեգորգանիզացիոն փոփոխությունները, առրայի կիսալուսնաձև փականների շարակցական հյուսվածքի դեստրուկտիվ դեգորգանիզացիոն փոփոխությունները», որոնց հետևանքով առաջացել է՝ «սրտի պսակաձև անոթներում արյան շրջանառության սուր խանգարում», և որին նպաստել է՝ «Մելլորի-Վեյս համախարանիշ, կայացած սրամոքս աղիքային արյունահոսություն»-ը, կարող են լինել կենդանության օրոք տարած որևէ ինֆեկցիայի հետևանք, որը միաժամանակ ախտահարել է նաև սիրտը՝ վաղեմությունը վեց ամիս և ավելի, իսկ «սրտամկանի անհավասարաչափ արյունալեցությունը, կարդիոմիոցիտների ֆրագմենտացիան, գուղձային քայքայումը և սարկոպլազմայի միջաձիգ զոլավորման տեղ-տեղ ջնջվածությունը» հետևանք

են սրտի պսկածն անոթների արյան շրջանառության սուր խանգարման, ինչպես նաև վերակենդանացման որոշ միջոցառումների (սրտի արհեստական մերսում, դեֆիբրիլյացիա) և կարող էին զարգանալ մահվանից ոչ շար առաջ, փասնյակ բույեների, ժամերի ընթացքում»:

Համալիր հանձնաժողովային դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննություն կատարած հանձնաժողովը հանգել է նաև հետևության, որ «Ա.Մալխասյանի հավելյալ բուժման կազմակերպման և զորակոչման հետաձգման կամ բացառման պարագայում, միգուցե հնարավոր կլիներ խուսափել հանգամանքների ճակարագրական համադրումից և մահվան ելքից: Չի բացառվում նաև, որ նման ախտաբանական վիճակների համադրումը հանգեցներ նման ելքի նաև քաղաքացիական կյանքում» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 66-76):

22. Դատաբժշկական փորձագետ, սույն գործով դատաբժշկական փորձագիտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Հարությունյանն իր՝ 2013 թվականի օգոստոսի 6-ի ցուցմունքում ևս մեկ անգամ կրկնել է, որ Ա.Մալխասյանի մահը պայմանավորված է եղել նրա ունեցած սրտային խնդիրներով, մասնավորապես սրտի պսակածն անոթներում արյան շրջանառության սուր խանգարմամբ, և այդ սրտային խնդիրները նրա մոտ առկա են եղել դեռևս 2008 թվականից առաջ (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 193):

23. ՀՀ ՊՆ Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի բժիշկ Արսեն Մելքոնյանը 2009 թվականի օգոստոսի 8-ին որպես վկա տված ցուցմունքով հայտնել է, որ Արեգ Մալխասյանին անգիտակից վիճակում կենտրոնական հոսպիտալ տեղափոխելուց հետո՝ այնտեղ են եկել նաև Արեգի հարազատները, որոնք հոսպիտալի բժիշկներին են տրամադրել փաստաթղթեր, որոնք վկայում էին այն մասին, որ Արեգ Մալխասյանը ունեցել է հիվանդություններ: Այդ հիվանդությունների մասին վկայող ոչ մի փաստաթուղթ չկար կցված անձնական գործին, ինչը շատ զարմացրեց Արեգ Մալխասյանի ծնողներին և պատճառ դարձավ, որ աչքի ընկնեն անձնական գործի համարակալման ուղղումները: Բժիշկ Արսեն Մելքոնյանն իր ցուցմունքում նաև համոզմունք է հայտնել, որ եթե զորակոչիկ Ա.Մալխասյանի անձնական գործում առկա լինեին նրա առողջական վիճակի վերաբերյալ վերոհիշյալ բժշկական փաստաթղթերը, ապա նա չէր զորակոչվի և կվերադարձվեր վերափորձաքննության (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 31-33):

24. Արեգ Մալխասյանի հայրը՝ Աշոտ Մալխասյանը, որպես վկա ցուցմունքներ է տվել այն մասին, որ իր հիվանդ որդուն անօրինական կերպով են զորակոչել բանակ, այդ ապօրինությունը կանխելուն ուղղված իր ջանքերը անտեսվել են Արաբկիրի զինվորական կոմիսար Ա.Ուլիխանյանի ու զինկոմիսարիատի բժիշկների կողմից, և իր նկատմամբ դրսևորվել է արհամարական վերաբերմունք: Աշոտ Մալխասյանը հայտնել է նաև, որ

երբ որդուն 2009 թվականի հունիսի 26-ին զինկոմիսարիատից տեղափոխել են կենտրոնական հավաքակայան՝ իրենց միակ հույսն այն է եղել, որ այնտեղ տեսնելով բոլոր բժշկական փաստաթղթերը՝ նրան չէին զորակոչի, սակայն, ինչպես հետո է իմացել, իրենց ներկայացրած բոլոր բժշկական փաստաթղթերն Արեգ Մալխասյանի անձնական գործից բացակայել են, և այդպես էլ որդուն զորակոչել են (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 73-80):

2009 թվականի օգոստոսի 20-ին Աշոտ Մալխասյանը լրացուցիչ ցուցմունք է տվել այն մասին, որ իրենք չեն իմացել, որ որդին սրտի հետ կապված խնդիրներ ունի, սակայն իմացել են, որ ունի ստամոքսի հետ կապված՝ բժիշկների կողմից ախտորոշված հիվանդություններ, ինչն անտեսվել է Արաբկիրի զինկոմիսարիատի բժիշկների և հատկապես՝ Արաբկիրի զինկոմ Ա.Ուլիխանյանի կողմից, ով չէր ցանկանում ուղեգիր տալ հետազոտություններ անցնելու համար: Մինչդեռ Մելլորի-Վեյսի համալստանիչը և դրա հետ կապված հիվանդություններն ախտորոշած բժիշկներն իրեն և որդուն պարզաբանել էին, որ նման հիվանդները պետք է պահպանեն խիստ դիետա և ընդունեն համապատասխան դեղորայք, ընդ որում՝ դա կարող է մարդուն ուղեկցել ողջ կյանքի ընթացքում: Տուժողի իրավահաջորդ Աշոտ Մալխասյանը նաև համոզմունք է հայտնել, որ Արաբկիրի զինկոմը և զինկոմիսարիատի բժիշկները միջամտել են «Էրեբունի» ԲԿ-ում կատարված հետազոտություններին, այդ իսկ պատճառով «Էրեբունի» ԲԿ-ում կազմված հիվանդության նկարագրում ստամոքսի հիվանդության վերաբերյալ արձանագրված ախտորոշումները չեն արտացոլվել առողջական վիճակի մասին ակտում, ինչն էլ պատճառ է հանդիսացել, որ իր ակնհայտ հիվանդ որդուն զորակոչեն (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 62-64):

25. Դևոնդ Մալխասյանը 2009 թվականի օգոստոսի 8-ին որպես վկա ցուցմունք է տվել՝ ակնհայտ հիվանդ իր եղբորը՝ Արեգ Մալխասյանին ապօրինի կերպով զորակոչելու, իրենց նկատմամբ Արաբկիրի զինկոմիսարիատում արհամարական վերաբերմունք դրսևորելու և եղբոր հիվանդությունների մասին վկայող բժշկական փաստաթղթերն անտեսելու մասին: Ցուցմունքի վերջում վկան խնդրել է օբյեկտիվ քննություն կատարելով՝ պատժել մեղավորներին, «գոնե որպեսզի հեղափոխում նման դեպքեր այլ անձանց հետ չկատարվեն» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 34-43):

26. 2009 թվականի սեպտեմբերի 15-ին Արաբկիրի զինվորական կոմիսար Արմեն Ուլիխանյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ ինքն է հանձնարարել Արեգ Մալխասյանի անձնական գործից հանել թվով տասը փաստաթղթեր և կցել զինկոմիսարիատի գործավարության կարգագրերին: Ա.Ուլիխանյանը ցուցմունքում նշել է նաև, որ զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի և իր մոտ խորը կասկածներ են եղել

Արեգ Մալխասյանի՝ իսկապես վատառողջ լինելու վերաբերյալ, այդ իսկ պատճառով ինքը կարգադրել է զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի անդամ, վիրաբույժ Մարինե Մանոյանին ներկա գտնվել «Էրեբունի» ԲԿ-ում Արեգ Մալխասյանին հետազոտելու ժամանակ: Ա.Ուլիխանյանը մասնավորապես հայտնել է, որ. «Ելնելով արեղծված իրավիճակից և օբյեկտիվությունը ապահովելու նպատակով իմ կարգադրությամբ վիրաբույժ Մ.Մանոյանը 2009թ. հունիսի 15-ից մինչև 19-ը մշտապես ներկա է գտնվել Էրեբունի ԲԿ-ում»: Նշել է նաև, որ Ա.Մալխասյանն ուներ բարձրագույն կրթություն, տիրապետում էր չորս լեզուների, և ինքը ցավում է այն բանի համար, որ ստեղծված իրավիճակը նման ավարտ ունեցավ նրա համար: Մինևույն ժամանակ նշել է, որ. «Ես այդ հարցում կարծում եմ որևէ մեղք չունեմ, իմ մեղքը գտնում եմ որ կայանում է նրանում, որ քիչ թե շատ կոպիտ Կոնով եմ արտահայտվել մինչ գորակոչը նրա հարազարների նկատմամբ, որում նաև իրենք ունեն իրենց մեղքը, որը կարծում եմ կայանում է նրանում, որ ցուցաբերելով անարարբերություն իրենց հարազարի նկատմամբ, նաև լինելով անհետևողական, ոչ ճիշտ մտրեցում ցուցաբերեցին ու նրանց վարքագիծը համոզիչ չէր, որ իրականում նորակոչիկը ունեցել է կամ ուներ առողջական վիճակի հետ կապված այնպիսի խնդիրներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ վերջինիս ճանաչելու ոչ պիտանի շարային ծառայության և Կրվեր Կարկերում բուժման նպատակով»: Քննիչի հարցերին Ա.Ուլիխանյանը պատասխանել է, որ հարցին լուծում տալու նպատակով իրեն ոչ ոք գումար չի առաջարկել, որևէ բժշկի եզրահանգման վրա ինքը չի ազդել, իր միջամտությունը միայն կայացել է նրանում, որ կարգադրել է վիրաբույժ Մ.Մանոյանին «օբյեկտիվությունը ապահովելու և վերահսկելու նպատակով ներկա գտնվել Էրեբունի ԲԿ-ում կատարվող հետազոտություններին» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 74-79):

27. 2014 թվականի հուլիսի 17-ին քննիչ Ա.Խաչատրյանը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին, որի համաձայն. «Արեգ Աշոտի Մալխասյանը (...) 2009թ. հունիսի 26-ին Արաբկիրի զինկոմիսարիատի կողմից զորակոչվել է ՀՀ ԶՈՒ և ծառայության ուղարկվել ԼՂՀ ՊԲ թիվ 25918 զորամաս, որպես ժամկետային զինծառայող, կոչումը՝ շարքային: 2009թ. հուլիսի 4-ին՝ ժամը 1355-ի սահմաններում շարքային Ա.Մալխասյանը զորամասի Կարածքում իրեն վար է զգացել, կորցրել է գիտակցությունը, որի պարճառով Կրեդաիտիվել է Մեխակավանի զինվորական հոսպիտալ, որտեղ նրա մոտ ախտորոշվել է կլինիկական մահ: (...) 2009թ. հուլիսի 5-ին (...) էվակուացվել է ք.Երևան և (...) հոսպիտալացվել ՀՀ ՊԵ թիվ 14203 զորամասի /ԿԿԶՀ/ վերակենդանացման բաժանմունքում, որտեղ կատարված շրապ դիագնոստիկ հետազոտությունների արդյունքում նրա մոտ ախտորոշվել է «վիճակ սիրտ-թոքային վերակենդանացումից հետո, գլխուղեղի այրուց,

կումս, երկկողմանի սասպիւրացիոն թոքաբորբ, կայացած սրամոքս-աղիք-ային արյունահոսություն»։ Հիվանդի վիճակը գնահատվել է կրիտիկական և այդ ուղղությամբ ձեռնարկվել են բոլոր հնարավոր վերակենդանացման միջոցառումներ, որոնք սակայն արդյունք չեն տվել և ժամը 2025-ին գրանցվել է նրա կենսաբանական մահը։

(...)

Նկատելի ունենալով այն հանգամանքը, որ Արեգ Մալխասյանը կենդանության օրոք փառապել էր՝ «Պանկարդիս, սրտամկանի ծանր դիսարրոֆիա նեկրոթիոտիկ օջախներով, կորոնարիտ, դիֆուզ կարդիոսկլերոզ, կիսալուսնաձև փականների դեսրոուկտիվ-դեգորգանիզացիոն փոփոխություններ, ստրուայի կիսալուսնաձև փականների նույնանման փոփոխություններ» հիվանդությամբ, որոնք ունեցել են ծածկընթաց ընթացք և դրանք կարող էին նաև արտահայտված գանգալներ չառաջացնել, նրա մոտ լինել կարծեցյալ բավարար վիճակ, սակայն հետագայում կենսակերպի, կենցաղի կորուկ փոփոխություններով պայմանավորված բերել են ծածկընթաց ախտաբանական փոփոխությունների սրացմանը, առաջացնելով վիճակի կորուկ վատացում, սրտի կանգ, որոնք չեն հայտնաբերվել և չէին կարող հայտնաբերվել անգամ գորակոչվելուց առաջ ՀՀ ԱԵ ախտորոշիչ կենտրոնում և այլ կլինիկաներում կատարված հետազոտությունների ժամանակ կամ հետագայում գորակոչի ժամանակ նրա առողջական վիճակն հետազոտած և ուսումնասիրած համապարասիան բժիշկ-մասնագետներ, գործով մեղադրյալներ ներգրավված՝ Տ.Բ.Գյոզալանյի, Ա.Վ.Խաչատրյանի և Գ.Ա.Հովհաննիսյանի կողմից, այսինքն՝ նրանց, որպես պաշտոնավար անձ հանդես գալու և իրենց կողմից ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անփույթ և անբարեխիղճ վերաբերմունք չդրսևորելու հերևանքով չի եղել պայմանավորված Ա.Մալխասյանի մահը, այլ այն ունեցել է ծածկընթաց ընթացք, այդ իսկ պարճատով 17.07.2014թ. որոշումներ են կայացվել և նրանց նկատմամբ քրեական հետապնդումները դադարեցվել են՝ արարքներում հանցակազմ չլինելու պարճատարանությամբ։

Նախաքննությամբ ի հայտ չեն եկել հանգամանքներ, որոնք կփաստելին այն մասին, որ որևէ բժիշկ մասնագետի, պաշտոնավար անձի կողմից թույլ տված անփութության, պաշտոնեական անգործության, պաշտոնեական դիրքի չարաշահման հերևանքով է պայմանավորված եղել Ա.Մալխասյանի մահը կամ նրանց գործողությունները պարճատական կապի մեջ են գրնվել մահվան հետ, ուստի որևէ անձի կամ անձանց նկատմամբ չի կարող իրականացվել քրեական հետապնդում և քրեական գործով վարույթը ենթակա է կարճման՝ արարքներում հանցակազմ չլինելու պարճատարանությամբ» (տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթ 219-229)։

28. ՀՀ զինվորական դատախազ Ա.Հարությունյանի՝ 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշման համաձայն՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 265 հոդվածի համաձայն՝ քննիչը քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ըստ էության քննելու համար ուղարկում է դատարան, երբ գտնում է, որ մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար են: (...): Տվյալ դեպքում քննիչը գնահատելով քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը նման եզրահանգման չի եկել» (տե՛ս թիվ ԵԱԲԴ/0051/11/14 գործով Նյութեր, թերթ 22-28):

29. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 11-ի որոշման համաձայն՝ «(...) Քննիչը նման եզրահանգման եկել է քրեական գործի բազմակողմանի և օբյեկտիվ քննություն կատարելով և համադրելով ձեռք բերված ապացույցները, որի արդյունքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ այն է հանցակազմի բացակայության հիմքով որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին:

(...) [Դ]ատարանը գտնում է, որ ՀՀ ՊՆ ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Ա.Խաչատրյանի՝ «քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին» 17.07.2014թ. և ՀՀ զինվորական դատախազ Ա.Հարությունյանի (...) 04.08.2014թ. որոշումներն օրինական են և հիմնավոր, և վերացնելու հիմքեր չկան» (տե՛ս թիվ ԵԱԲԴ/0051/11/14 գործով Նյութեր, թերթ 105-114):

30. Վերաքննիչ դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ գտել է՝ «(...) դիմողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ հետևյալ պարճատարանությամբ»: Այնուհետև Վերաքննիչ դատարանը շարադրել է Առաջին ատյանի դատարանի որոշման պատճառաբանություններն ու եզրահանգումը, և հավելել, որ «Վերաքննիչ դատարանը եկավ հետևության, որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. նոյեմբերի 11-ի որոշումն օրինական և հիմնավորված է, ուստի այն բեկանելու հիմքեր չկան» (տե՛ս թիվ ԵԱԲԴ/0051/11/14 գործով Նյութեր, թերթ 157-165):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

31. Վճարելի բողոքի հեղինակները գտնում են, որ բողոքարկվող դատական ակտն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 126-127-րդ, 202-րդ հոդվածների և «Մարդու իրավունքների

և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի պահանջները:

Մասնավորապես, բողոքաբերները գտնում են, որ պետությունը չի կատարել իր պարտականությունները՝ նախ՝ գորակոչիկի առողջական վիճակի հետազոտումը պատշաճ կատարելու, և հետո էլ՝ զինվորի մահվան փաստով արդյունավետ քննություն ապահովելու, մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու առումով խախտվել են նաև գործի քննության ողջամիտ ժամկետները:

32. Ի հիմնավորումն իրենց փաստարկների՝ բողոքի հեղինակները մատնանշել են զինվորական կոմիսար Ա.Ուլիխանյանի կողմից Արեգ Մալխասյանի նկատմամբ ի սկզբանե նախաձեռնած անօրինական հետապնդումները, հիվանդ երեխային անպայմանորեն գորակոչելու հետևողականությունը, իր ստորադասին ցուցումներ տալու եղանակով Արեգ Մալխասյանի անձնական գործից փաստաթղթերը հանելու անօրինականությունը, վրա հասած հետևանքի և Ա.Ուլիխանյանի գործողությունների կապը:

Բողոքի հեղինակները նշել են, որ բացահայտորեն անտեսվել են այն ջանքերը, որոնք Ա.Մալխասյանի հարազատները դրսևորել են երեխայի առողջական վիճակը ճիշտ ներկայացնելու և արձանագրելու հարցում: Քրեական գործում կան բազմաթիվ բողոքներ և ցուցմունքներ, որոնք վկայում են հիվանդ երեխային զինձառայության տանելու հարցում զինկոմ Ուլիխանյանի՝ քայլ առ քայլ դրսևորած անօրինականությունների մասին: Ուսումնասիրելով և համադրելով բոլոր ապացույցները՝ կարելի է հստակ եզրակացնել, որ հանձնաժողովի բժիշկների կողմից անգործություն չի դրսևորվել, նրանց գործողությունների վրա ազդել է զինկոմ Ուլիխանյանի անձնական շահագրգռվածությունը:

Բողոքաբերները շեշտել են, որ Արեգ Մալխասյանն ակնհայտ հիվանդ է եղել, ունեցել է անբնական նիհարություն, եղել է հյուծված: Ընդգծել են նաև, որ բազմաթիվ բժիշկների ցուցմունքներ վկայում են, որ եթե հիվանդության փաստաթղթերը Ա.Մալխասյանի անձնական գործում առկա լինեին, ապա վերջինս չէր գորակոչվի զինձառայության, կամ առնվազն՝ կօգտվեր տարկետման իրավունքից: Գործով հարցաքննված բժիշկները վկայում են նաև, որ Ա.Մալխասյանը երկրորդ անգամ պետք է գործիքային հետազոտման ենթարկվեր: Սրանից հետևություն, որ հիվանդին կրկնակի հետազոտման չենթարկելը ինքնին խոսում է հանցավոր արարքի առկայության մասին:

33. Բողոք բերած անձինք նշել են, որ վարույթն իրականացնող մարմինների կողմից փորձաքննությունների եզրակացություններին և գործում առկա փաստերին չի տրվել համապատասխան գնահատական, դատարանները պաշտպանության տակ են առել ուժային կառույցի աշխատակիցների հանցավոր արարքները և փորձել մեղավոր անձանց քրեական

պատասխանատվության ենթարկելու հարցը գնահատել պատահարի տիրույթում:

Նշել են, որ մահացած զինվորի հորը չի հաջողվել ներպետական դատարաններում հասնել իր որդու մահվան հանգամանքների բացահայտմանը և պետության պոզիտիվ պարտականությունների չկատարման փաստի արձանագրմանը: Արեգ Մալխասյանի առողջական վիճակի ոչ պատշաճ հետազոտման հարցում ՀՀ ՊՆ բժշկական հանձնաժողովի և զինկոմիսարիատի աշխատողների մեղքը հիմնավորող ապացույցների առկայության պարագայում հանցագործություն կատարած անձինք ակնհայտորեն խուսափել են պատասխանատվությունից:

34. Բողոքաբերները նշել են նաև, որ քննության ողջամիտ ժամկետների խախտման փաստի կապակցությամբ քրեական վարույթ իրականացնող մարմնին ներկայացվել էր առանձին միջնորդություն՝ գործի նախաքննության ժամկետն անհարկի և անհիմն 30 անգամ երկարացնելու վերաբերյալ, ինչպես նաև բարձրացվել էին քննիչի գործողությունների և կայացրած որոշումների անօրինականության վերաբերյալ հարցեր, որոնք որևէ լուծում չեն ստացել: Բողոքաբերները նշել են, որ գործի քննության ժամկետի այդպիսի երկարաձգումը կանխատեսելի էր դարձնում գործի նման ելքը:

35. Ելնելով վերոնշարադրյալից՝ վճարելի բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

1. Պետության իրավասության ներքո գտնվող անձի մահվան փաստի առթիվ արդյունավետ քննություն կատարելու պարտականությունը.

36. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Ա.Մալխասյանի մահվան փաստի առթիվ իրականացվել է արդյոք արդյունավետ քրեադատավարական քննություն:

37. ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...):»:

38. Մեջբերված սահմանադրական և կոնվենցիոն նորմերով ամրագրված է կյանքի իրավունքը՝ որպես անձի հիմնարար իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով Կոնվենցիայի 2-րդ հոդվածով

նախատեսված նորմին, այն մեկնաբանել է որպես այդ դրույթի նյութաիրավական կողմի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմ՝ հաշվի առնելով այս իրավունքի հիմնարար բնույթը (*իրեն McCann and Others v. The United Kingdom* գործով 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, k կետեր 157-164, *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23818/94, կետ 82 և *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետեր 101-106):

Վճռարեկ դատարանը նույնպես անդրադարձել է կյանքի իրավունքի վերլուծությանը մի շարք գործերով կայացված որոշումներում (տես, *mutatis mutandis*, Վճռարեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի՝ Սեյրան Այվազյանի վերաբերյալ թիվ ՎԲ-17/08, 2010 թվականի օգոստոսի 27-ի՝ Լևոն Գույյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0051/11/09, 2010 թվականի դեկտեմբերի 23-ի՝ Կարեն Փափազյանի վերաբերյալ թիվ ԵԷԴ/0002/11/10, 2013 թվականի փետրվարի 15-ի՝ Սուսաննա Աստոնյանի գործով թիվ ԵԿԴ/0077/11/12, 2014 թվականի մայիսի 31-ի՝ Ռուզաննա Նիսազյանի գործով թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշումները): Մասնավորապես Եվրոպական դատարանի կողմից ձևավորված չափանիշների հիման վրա Վճռարեկ դատարանն իր նախադեպային իրավունքում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության գնահատման հիմնական չափանիշներից են՝

ա) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ,

բ) քննության արդյունքում պետք է հստակեցվեն դեպքի հանգամանքները,

գ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներ ձեռք բերելու համար: Վարույթն իրականացնող մարմինները պետք է ձեռնպահ մնան շտապողական կամ թույլ պատճառաբանված հետևություններից, քանի որ քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում մահվան պատճառները պատասխանատու անձանց կողմից պարզելու կարողությունը, վտանգում է քննության արդյունավետությունը, հետևաբար և Կոնվենցիայի 2-րդ հոդվածով պետության ստանձնած պարտավորությունների իրագործումը:

Այն դեպքում, երբ պետության վերահսկողության ներքո (ոստիկանությունում, քրեակատարողական հիմնարկում և այլն) գտնվող անձը մահանում է, և պետությունը Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ուժով պարտավորություն է կրում ներկայացնելու մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, ապա իրավասու մարմինները (պաշտոնատար անձինք) կասկածելի մահվան փաստի առթիվ պետք է հարուցեն քրեական

գործ և քրեադատավարական ողջ գործիքակազմի ներգրավմամբ իրականացնեն հնարավոր ողջամիտ քայլերը՝ դեպքի հանգամանքները պարզելու համար (մանրամասն տե՛ս Ռուզաննա Նիսալյանի վերաբերյալ Վճռարեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշման 25-26-րդ կետերը):

39. Նախորդ կետում վկայակոչված (ա) ենթակետում շարադրված չափանիշի կապակցությամբ Եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս ընդգծել է, որ քննության արդյունավետությունը գնահատելիս կարևոր է հատկապես այն հանգամանքը, թե որքան արագ են իշխանություններն արձագանքում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքներին, ինչը նպաստում է հանրության վստահության պահպանմանը օրինականության ամրապնդման և անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողականության բացառման հարցում (տե՛ս Hugh Jordan v. United Kingdom գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, կետ 108, Yaşa v. Turkey գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, զեկույցներ 1998-IV, էջեր 2439-2440, կետեր 102-104):

Կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության (բ) և (գ) ենթակետերում շարադրված չափանիշների վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջն է, որ իրավասու մարմինները գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ և պարտավոր լինեն նախաձեռնել քննություն, որն ի վիճակի է նախ որոշակիացնել այն հանգամանքները, որոնցում դեպքը տեղի է ունեցել և կարգավորող համակարգի գործունեության ցանկացած թերություն, երկրորդ՝ բացահայտել դրանում ներգրավված պետական պաշտոնյաներին և մարմիններին (տե՛ս mutatis mutandis, Kats and Others v. Ukraine, 2008 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ գանգատ թիվ 29971/04, կետ 116):

Քննությունը պետք է լինի մանրամասն: Դա նշանակում է, որ մարմինները միշտ պետք է կատարեն լուրջ քայլեր, որպեսզի պարզեն՝ ինչ է տեղի ունեցել, և չպետք է հիմնվեն շտապողական կամ թույլ պատճառարանված հետևությունների վրա, որպեսզի փակեն քննությունը կամ որպես իրենց որոշումների հիմք ընդունեն: Նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ակնաատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները: **Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը** (տե՛ս, ի թիվս այլոց, Gorelov v. Russia, 2014 թվականի հունվարի 9-ի վճիռ, գանգատ թիվ 49072/11, կետ 52): **Անհրաժեշտ է նաև բացառել հանցավոր համագործակցությունը կամ**

հանցավոր արարքների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելը (տե՛ս *Güleç v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 54/1997/838/1044, կետ 82):

40. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նյութերում առկա են բազմաթիվ տեղեկություններ այն մասին, որ ժամկետային զինծառայող Ա.Մալխասյանը տատապել է մի շարք հիվանդություններով (տե՛ս սույն որոշման 7-12-րդ, 14-16-րդ, 21-րդ կետերը): Մինչդեռ Ա.Մալխասյանը, հետազոտվելով Արաբկիրի զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովում, Էրեբունի բժշկական կենտրոնում, այնուհետև նաև Կենտրոնական ռազմական բժշկական հանձնաժողովում, զինծառայության համար ճանաչվել է պիտանի, 2009 թվականի հունիսի 26-ին գորակոչվել է ՀՀ զինված ուժեր և ծառայության ուղարկվել ԼՂՀ պաշտպանության բանակի թիվ 25918 զորամաս, որպես ժամկետային զինծառայող, կոչումը՝ շարքային: Այնուհետև 2009 թվականի հուլիսի 4-ին՝ ժամը 1355-ի սահմաններում շարքային Ա.Մալխասյանը զորամասի տարածքում իրեն վատ է զգացել, կորցրել գիտակցությունը, որի պատճառով տեղափոխվել է Մելիսկավանի զինվորական հոսպիտալ, որտեղ նրա մոտ ախտորոշվել է կլինիկական մահ: 2009 թվականի հուլիսի 5-ին՝ ժամը 2025-ին, գրանցվել է նրա կենսաբանական մահը (տե՛ս սույն որոշման 5-րդ և 27-րդ կետերը):

Արեգ Աշոտի Մալխասյանի մահվան կապակցությամբ 2009 թվականի հուլիսի 4-ին հարուցվել է քրեական գործ, որը 2009 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ ընդունվել է քննիչ Ա.Խաչատրյանի վարույթ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): 2014 թվականի հուլիսի 17-ին քննիչ Ա.Խաչատրյանը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին, որով արձանագրել է, որ Արեգ Մալխասյանը կենդանության օրոք տատապել էր «Պանկարդիտ, սրտամկանի ծանր դիստրոֆիա նեկրոբիոտիկ օջախներով, կորոնարիտ, դիֆուզ կարդիոսկլերոզ, կիսալուսնաձև փականների դեստրուկտիվ դեգորգանիզացիոն փոփոխություններ, աորտայի կիսալուսնաձև փականների նույնանման փոփոխություններ» հիվանդություններով, որոնք ունեցել են ծածկընթաց ընթացք, և դրանք կարող էին նաև արտահայտված գանգատներ չառաջացնել, նրա մոտ ինքեր կարծեցյալ բավարար վիճակ, սակայն հետագայում կենսակերպի, կենցաղի կտրուկ փոփոխություններով պայմանավորված՝ բերել են ծածկընթաց ախտաբանական փոփոխությունների սրացմանը՝ առաջացնելով վիճակի կտրուկ վատացում, սրտի կանգ, որոնք չեն հայտնաբերվել և չէին կարող հայտնաբերվել անգամ գորակոչվելուց առաջ ՀՀ ԱՆ ախտորոշիչ կենտրոնում և այլ կլինիկաներում կատարված հետազոտությունների ժամանակ կամ հետագայում գորակոչի ժամանակ նրա առողջական վիճակը հետազոտած և ուսումնասիրած համապատասխան

բժիշկ-մասնագետների կողմից: Արդյունքում Քննիչը եզրահանգել է, որ բժիշկների՝ որպես պաշտոնատար անձ հանդես գալու և իրենց կողմից ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անփույթ և անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելու հետևանքով չի եղել պայմանավորված Ա.Մալխասյանի մահը, այլ այն ունեցել է ծածկընթաց ընթացք (տե՛ս սույն որոշման 27-րդ կետը):

ՀՀ զինվորական դատախազ Ա.Հարությունյանի՝ 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշման համաձայն՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 265 հոդվածի համաձայն՝ քննիչը քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ըստ էության քննելու համար ուղարկում է դատարան, երբ գտնում է, որ մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար են: (...): Տվյալ դեպքում քննիչը գնահատելով քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը նման եզրահանգման չի եկել» (տե՛ս սույն որոշման 28-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ գտել է, որ Քննիչի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2014 թվականի հուլիսի 17-ի և Դատախազի՝ 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշումներն օրինական են և հիմնավոր, դրանք վերացնելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 29-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ Առաջին ատյանի դատարանի 2014թ. նոյեմբերի 11-ի որոշումն օրինական և հիմնավորված է, ուստի այն բեկանելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 30-րդ կետը):

Սույն գործով իրականացված քննության համապարասխանությունը կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության՝ սույն որոշման 38-րդ կետում նշված (բ) և (գ) ենթակետերի չափանիշներին.

41. Սույն որոշման 40-րդ կետում մեջբերված փաստերից հետևում է, որ Քննիչն իր որոշման հիմքում դրել է Համալիր փորձաքննության եզրակացությամբ նշված այն հանգամանքը, որ Ա.Մալխասյանի հիվանդությունը կրել է ծածկընթաց բնույթ (տե՛ս սույն որոշման 21-րդ կետը) և դրա հիման վրա եզրահանգում կատարել, որ դրանք **«չեն հայտնաբերվել և չէին կարող հայտնաբերվել»** համապատասխան բժիշկ-մասնագետների կողմից: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Համալիր փորձաքննության եզրակացության բովանդակությունից հետևում է, որ ծածկընթաց բնույթ են կրել միայն կորոնարոսկլերոզ, կարդիոսկլերոզ ախտաբանական հատկանիշները, ընդ որում նման եզրահանգումը հիմնավորվել է այն հանգամանքով, որ կենդանության օրոք Ա.Մալխասյանը երբևէ գանգատներ չի ներկայացրել (տե՛ս սույն որոշման 21-րդ կետը): Նշված եզրահանգումից չի հետևում, որ անձի մոտ գանգատների բացակայությունը բացառում է բժիշկների կողմից համապատասխան հետազոտությունների և մեթոդիկաների կիրառման միջոցով

վկայակոչված սրտային հիվանդությունները բացահայտելու փաստացի հնարավորությունը: Հետևաբար փորձագետների հանձնաժողովի կողմից օգտագործված «ծածկրնթաց» հասկացությունը չի կարող մեկնաբանվել որպես «պատշաճ բժշկական հետազոտությունների միջոցով չբացահայտվող»: Այսպիսով Վճարելի դատարանն արձանագրում է, որ Քննիչի եզրահանգումն այն մասին, որ Ա.Մալխասյանի սրտային հիվանդությունները չէին կարող հայտնաբերվել բժիշկ-մասնագետների կողմից, հիմնավորված չէ և չի համապատասխանում նաև նրա կողմից հիմք ընդունված Համալիր փորձաքննության եզրակացության եզրահանգումներին:

Ավելին՝ թվով երկու՝ դատաբժշկական և դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննությունների եզրակացությունների առկայության պայմաններում համալիր հանձնաժողովային դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ Քննիչի որոշումից պարզ չէ, թե ինչ տեսակի փորձաքննություն է նշանակվել՝ լրացուցիչ, թե կրկնակի: Մինչդեռ փորձաքննության վերոնշյալ տեսակներն ինչպես նշանակման հիմքերի, նպատակի, այնպես էլ բովանդակության և իրականացման կարգի առումով էապես տարբերվում են (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդված): Այսինքն չնայած Քննիչը փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ հղում է կատարել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածին, սակայն չի տարբերակել նշանակվող փորձաքննության տեսակը: Ավելին՝ Քննիչի որոշման մեջ բացակայում է որևէ հիմնավորում այն մասին, թե որ բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության որ մեթոդիկաների միաժամանակյա կիրառման անհրաժեշտությունն է առկա փորձագետներին առաջադրված հարցերը պարզելու համար, որի պայմաններում քննարկվող որոշումը չի համապատասխանում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 246-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Վճարելի դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հանգամանքները կարող են էական կասկածներ հարուցել քննարկվող փորձաքննության և դրա արդյունքի օրինականության և արժանահավատության կապակցությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածին առնչվող քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար Քննիչի չհիմնավորված և գործի նյութերից չբխող պատճառաբանությունները, ինչպես նաև վերջինիս կողմից անհասկանալի տեսակի Համալիր փորձաքննության եզրակացության եզրահանգումները հիմք ընդունելը չեն կարող գնահատվել որպես «մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն ներկայացնելու» պետության պարտականության կատարում:

41.1. Ավելին, վարույթն իրականացնող մարմինները պատշաճ գնահատման չեն արժանացրել գործի նյութերում առկա և հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

1) գործի նյութերում առկա մի շարք ապացույցներ, այդ թվում՝ Քննիչի կողմից հիմք ընդունված Համալիր փորձաքննության եզրակացությունը վկայում են այն մասին, որ Էրեբունի ԲԿ-ի բժշկական հանձնաժողովի կողմից կատարված հետազոտության արդյունքները լրիվ ծավալով և ճիշտ չեն արտացոլվել Ա.Մալխասյանի վերաբերյալ կազմված և Կենտրոնական բժշկական հանձնաժողովին ներկայացված առողջական վիճակի հետազոտման ակտի մեջ (տե՛ս սույն որոշման 7-8-րդ, 11-12-րդ, 14-17-րդ, 21-րդ կետերը): Մասնավորապես.

- առողջության վիճակի հետազոտման ակտում չի արտացոլվել գաստրոէնտերոլոգի ախտորոշումը՝ «Էրոզիվ գաստրիտ, մակերեսային դուոդենիտ, կերակրափողի և ստամոքսի հիպերմոտոր դիսկինեզիա, ստոծանու կերակրափողային անցքի ճողվածք», ճիշտ չի ձևակերպվել նյարդաբանական ախտորոշումը՝ «վեգետոանոթային դիստոնիա կրիզներով»:

Մինչդեռ դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության 2010 թվականի ապրիլի 28-ի թիվ 20/հձ եզրակացության համաձայն՝ դուոդենիտ, մակերեսային էրոզիվ անտրալ գաստրիտի, Մելորի-Վեյսի համախտանիշի, կայացած ստամոքս-աղիքային արյունահոսության առկայության դեպքում անհրաժեշտ էր Ա.Մալխասյանի նկատմամբ բժշկական տեսանկյունից սահմանել հատուկ սննդակարգ, ֆիզիկական և փսիխոէմոցիոնալ ծանրաբեռնվածության սահմանափակում: Եվ, չնայած այն հանգամանքին, որ տվյալ դեպքում ստամոքս-աղիքային հիվանդությունները մահվան պատճառի հետ չեն գտնվել ուղղակի պատճառական կապի մեջ, սակայն նրանք կարող էին պատճառ հանդիսանալ սրտի պսակաձև անոթների ռեֆլեկտոր սպաստիկ (սպազմ) երևույթների, հանդիսանալով որպես նպաստող գործոն մահվան պատճառի առումով (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Նույն եզրակացությամբ նշվել է նաև, որ Էրեբունի ԲԿ ընդունվելու պահին Ա.Մալխասյանի զարկերակային ճնշումը արձանագրվել է 120/80մմ, իսկ 2009 թվականի հունիսի 17-ին նյարդաբանի կողմից գրանցվել է 80/30մմ, ինչը պահանջում էր համապատասխան քննություններով ախտորոշման ճշտում և վերջնական ախտորոշման մեջ արձանագրում, ինչը նույնպես չի կատարվել: Զարկերակային ճնշումը 80/30մմ, վեգետոանոթային դիստոնիա ախտորոշվելուց հետո բուժող բժշկի և նյարդաբանի կողմից անհրաժեշտ էր իրականացնել սրտաբանի և նյարդաբանի դինամիկ հսկողություն (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

- Նյարդաբանի ենթադրյալ ախտորոշումը՝ «վեգետո-անոթային դիստոնիա, կրիզներով», ճշգրտելու նպատակով հետագա հետազոտություններ չեն իրականացվել:

Մինչդեռ դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության՝ 2010 թվականի ապրիլի 28-ի թիվ 20/հձ եզրակացության համաձայն՝ Էրեբունի ԲԿ-ում նյարդաբանի կողմից գրառումը ընդգրկում է միայն ախտորոշում՝

առանց նյարդաբանական կարգավիճակի նկարագրման: «Կրիզ» անվանված վիճակը պահանջում էր բացառել սրտային համապատասխան կափույրային ապարատի կողմից պաթոլոգիկ վիճակները: Եթե առողջական վիճակի ակտում ճիշտ ձևակերպվել նյարդաբանական ախտորոշումը՝ «վեգետոանոթային դիստոնիա կրիզներով», ապա Ա.Մալխասյանը պետք է ենթարկվել լրացուցիչ հետազոտության նյարդաբանական ստացիոնարում (բաժանմունքում) ախտորոշման ճշտման, կրիզների հաճախականության և ծանրության աստիճանի որոշման համար և բնականաբար այն կարժանանար համապատասխան գնահատականի զինվորական հանձնաժողովների բժիշկների կողմից (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

- Բացի այդ, առողջական վիճակի հետազոտության ակտի՝ ախտորոշման վերաբերյալ հատվածում նշված է «ստամոքսի և կերակրափողի մոտոր-էվակուատոր ֆունկցիայի աննշան արագացում նյարդային բնույթի», որի գնահատումը իրականացվում է դինամիկ ռենտգենաբանական հետազոտության ընթացքում, սակայն Արեգ Մալխասյանի հիվանդության պատմության նկարագրում նման գրառումներ առկա չեն, ինչը ենթադրում է, որ այդպիսի հետազոտություն չի իրականացվել (տե՛ս որոշման 11-րդ և 21-րդ կետերը):

2) Գործի նյութերում առկա դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության թիվ 20/հճ եզրակացության համաձայն՝ Ա.Մալխասյանի մոտ դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված՝ որպես մահվան պատճառ հանդիսացած «սրտի պսակաձև անոթներում արյան շրջանառության սուր խանգարում» հիվանդությունն առաջացել է 2008 թվականից առաջ: Դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացության մեջ նշված է, որ փորձաքննության ներկայացված բժշկական փաստաթղթերում եղել են հուշող տվյալներ Ա.Մալխասյանի մոտ սրտային հիվանդության մասին: Այդ հուշող տվյալները կոնկրետ և հստակ մատնանշված են փորձաքննության եզրակացության մեջ: Մասնավորապես նման տվյալներ եղել են 2008 թվականի՝ Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտի հիվանդության պատմագրում և Էրեբունի ԲԿ թիվ 4443/432 հիվանդության պատմագրում փակցված էլեկտրասրտագրերի ժապավեններում, ինչպես նաև Էրեբունի ԲԿ-ում՝ 2009 թվականի հունիսի 17-ին ժամը 11.20-ին, երբ նյարդաբանի կողմից արձանագրվել է զարկերակային ճնշումը՝ 80/30մմ: Նման դեպքում Էրեբունի ԲԿ-ում անհրաժեշտ էր սրտային օրգանական պաթոլոգիան հաստատելու կամ ժխտելու համար կատարել սրտաբանական մանրակրկիտ հետազոտություններ (օրինակ կրկնակի էլեկտրասրտագիր, քանի որ կատարված էլեկտրասրտագրի ժապավենը եղել է անորակ և քիչ ինֆորմատիվ): Դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն կատարած փորձագետները նշել են նաև, որ եթե «Էրեբունի» ԲԿ-ում ճիշտ գնահատվեին էլեկտրասրտագրի վրա արտացոլված տվյալները, նյարդաբանի, սրտաբանի և

բուժող բժշկի կողմից կազմակերպվելի նյարդաբանի, սրտաբանի դինամիկ հսկողություններ, կատարվեր լրացուցիչ էլեկտրասրտագիր, ապա հնարավոր կլիներ հայտնաբերել սրտային պաթոլոգիան (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը): Այն մասին, որ Արեգ Մալխասյանի մոտ եղած սրտային պաթոլոգիան բժշկական առումով ծածկընթաց չի եղել, վկայում է ոչ միայն դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացությունը, այլ նաև Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտի բժիշկ, սրտաբան-ֆունկցիոնալիստ Լիլիանա Թելյանի ցուցմունքը (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը), «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնի սրտաբան Արմինե Աղաջանյանի ցուցմունքը (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը), ՀՀ ՊՆ Կենտրոնական հավաքակայանի բժշկական հանձնաժողովի ավագ սպա, թերապևտ-սրտաբան Հայկ Հովսեփյանի ցուցմունքը (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը): Իսկ դատաբժշկական փորձագետ Գագիկ Հարությունյանը 2013 թվականի օգոստոսի 6-ին իր կողմից տրված ցուցմունքում նշել է, որ ևս մեկ անգամ կրկնում է, որ Ա.Մալխասյանի մահը պայմանավորված է եղել նրա ունեցած սրտային խնդիրներով, մասնավորապես՝ սրտի պսակաձև անոթներում արյան շրջանառության սուր խանգարմամբ, և այդ սրտային խնդիրները նրա մոտ առկա են եղել դեռևս 2008 թվականից առաջ (տե՛ս սույն որոշման 22-րդ կետը):

Փաստորեն, տարբեր բուժհաստատություններում աշխատող սրտաբանները, մասնավորապես՝ Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտի բժիշկ, 30 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող սրտաբան-ֆունկցիոնալիստ Լիլիանա Թելյանը, Կենտրոնական հավաքակայանի բժշկական հանձնաժողովի ավագ սպա, 16 տարվա մասնագիտական ստաժ ունեցող թերապևտ-սրտաբան Հայկ Հովսեփյանը, «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնի սրտաբան, ԷՄԳ-ի բժիշկ Արմինե Աղաջանյանը, Քննիչի հրավերով, տարբեր օրերի, միմյանց հետ չառնչվելով ուսումնասիրել են «Էրեբունի» բժշկական կենտրոնում Արեգ Մալխասյանի վերաբերյալ կազմված ԷՄԳ-ի ժապավենը և սրտային պաթոլոգիայի առկայության մասին հայտնել են նույնաբովանդակ տվյալներ (տե՛ս սույն որոշման 14-րդ, 15-րդ, 16-րդ կետերը):

Ավելին, այն որ Ա.Մալխասյանի հիվանդության պատմագրում առկա՝ Էրեբունի ԲԿ-ում կատարված էլեկտրասրտագրի ժապավենը վատ որակի է և դրա հիման վրա դժվար է գնահատել Ա.Մալխասյանի մոտ «սրտի հետին-կողմնային պատի սնուցման իջեցման» **առկայության կամ բացակայության** փաստը, ինչպես նաև, որ վերջինս հնարավոր կլիներ հայտնաբերել կամ բացառել որակյալ ԷՄԳ առկայության պարագայում, նշված է նաև Համալիր փորձաքննության եզրակացությունում:

41.2. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ գործում առկա են բազմաթիվ տվյալներ, համաձայն որոնց՝ Արեգ Մալխասյանն իր մոտ առկա հիվանդությունների հիմքով ենթակա չէր

գորակոչման և պետք է ճանաչվեր զինվորական ծառայության համար ոչ պիտանի (տե՛ս սույն որոշման 8-12-րդ, 14-16-րդ, 21-րդ կետերը): Մինչդեռ այդ հիվանդությունները օբյեկտիվ և ամբողջական չեն բացահայտվել բժիշկների կողմից և (կամ) արտացոլվել Ա.Մալխասյանի առողջական վիճակի մասին ակտում: Դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացության մեջ մանրակրկիտ և հստակ շարադրված են այն գործողությունները, որոնք «Էրեբունի» բժշկական կենտրոնի համապատասխան բժիշկները պարտավոր էին կատարել, սակայն չեն կատարել: Ըստ հիշյալ եզրակացության՝ եթե Ա.Մալխասյանը ենթարկվել համապատասխան հետազոտությունների, ապա հնարավոր է, որ նրա մոտ հայտնաբերվեին ինչպես մահվան պատճառ հանդիսացող հիվանդությունը՝ սրտային պաթոլոգիան, այնպես էլ մյուս հիվանդությունները: Իսկ հայտնաբերելու դեպքում համապատասխան բուժումներ և խորհրդատվություններ ստանալով հնարավոր էր խուսափել առողջական վիճակի հետագա վատացումից, նաև մահվան ելքից: Բացի այդ, փորձագիտական հանձնաժողովը նշել է, որ գորակոչային հանձնաժողովի կողմից պետք է ուշադրության արժանանար նաև Ա.Մալխասյանի մոտ 2008 թվականին ախտորոշված «Մելորի-Վեյսի սինդրոմ, կայացած ստամոքս-աղիքային արյունահոսություն» հիվանդությունը (տե՛ս սույն 11-րդ կետը): Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել այն փաստը, որ նորակոչիկ Արեգ Մալխասյանի ծառայակից զինվորականներն անգամ ուշադրություն էին դարձրել, որ նա ունի հիվանդոտ տեսք, մշտապես գունատ է, հյուծված (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վճարելի դատարանն արձանագրում է, որ այս փաստական տվյալները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացել նախաքննության մարմնի կողմից, այս ուղղությամբ օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն չի կատարվել: Մասնավորապես Քննիչի կողմից չի պարզվել, թե ինչու չեն կատարվել համապատասխան բժշկական հետազոտությունները և ինչու կատարված հետազոտությունների արդյունքներն օբյեկտիվ և ամբողջական չեն արտացոլվել Ա.Մալխասյանի առողջական վիճակի վերաբերյալ ակտում, ինչպես նաև հապատասխան իրավական գնահատական չի տրվել դրանց համար պատասխանատու բժշկ-մասնագետների գործողություններին: Այդուհանդերձ Քննիչի կողմից կայացվել է քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում, որի օրինականությունը հաստատվել է ինչպես դատախազական հսկողության շրջանակներում, այնպես էլ ստորադաս դատարանների կողմից:

42. Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ Քննիչի կողմից լրիվ և բազմակողմանի քննություն չի իրականացվել և համապատասխան իրավական գնահատական չի տրվել Արաբկիրի զինկոմ Ա.Ուլիխանյանի գործողություններին: Մասնավորապես Ա.Մալխասյանի հայրը՝

տուժողի իրավահաջորդը, ինչպես նաև եղբայրը ցուցմունք են տվել զինկոմ Ա.Ուլիխսանյանի կողմից թույլ տրված օրինախախտումների և Արեգ Մալխասյանի նկատմամբ նրա՝ ընդգծված անբարյացակամ վերաբերմունքի մասին (տե՛ս սույն որոշման 24-25-րդ կետերը): Իհարկե Քննիչը հրավիրել և որպես վկա հարցաքննել է Ա.Ուլիխսանյանին, որը ցուցմունք է տվել, որ ինքն է կարգադրել Արեգ Մալխասյանի անձնական գործից հանել թվով տասը փաստաթղթեր և կցել զինկոմիսարիատի գործավարության կարգագրերին: Մինչդեռ Քննիչը չի պարզել, թե ինչ նպատակով է Ա.Ուլիխսանյանը կարգադրել գորակոչիկ Արեգ Մալխասյանի անձնական գործից փաստաթղթեր հանել, այն էլ այնպիսիք, որոնք որոշիչ նշանակություն կարող էին ունենալ նրա՝ զինծառայության համար պիտանի լինելու հարցը որոշելիս: Բացի այդ, Քննիչը չի պարզել՝ արդյոք Ա.Ուլիխսանյանն իրավասու էր այդպիսի կարգադրություն անել, եթե այո՝ որ իրավական ակտի հիման վրա:

Ավելին, Ա.Ուլիխսանյանը ցուցմունք է տվել, որ «Էրեբունի» ԲԿ-ում Արեգ Մալխասյանին հետազոտելու ժամանակ, «*օբյեկտիվությունը ապահովելու և վերահսկելու նպատակով*», իր կարգադրությամբ այնտեղ ներկա է եղել զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի անդամ, վիրաբույժ Մարինե Սանոյանը (տե՛ս սույն որոշման 26-րդ կետ): Մինչդեռ Քննիչը չի պարզել՝ արդյոք Արաբկիրի զինվորական կոմիսարն իր կողմից ուղարկված անձի միջոցով միջամտել է «Էրեբունի» բժշկական կենտրոնի կամ որևէ այլ բժշկական հաստատության բժիշկների մասնագիտական գործունեությանը, կամ օժտված է արդյոք նրանց աշխատանքը վերահսկելու լիազորությամբ:

43. Սույն որոշման 41-42-րդ կետերում շարադրված փաստական վերլուծությունը գնահատելով 38-39-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, հետևաբար և դատախազական հսկողության և դատական վերահսկողության շրջանակներում դրա կապակցությամբ կայացված որոշումները հիմնված են «թույլ պատճառաբանված» հետևությունների վրա, քանի որ դրանցում անտեսվել են և համապատասխան իրավական գնահատականի չեն արժանացվել սույն որոշման 41-42-րդ կետերում հիշատակված հանգամանքները: Իսկ քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում մահվան պատճառները պատասխանատու անձանց կողմից պարզելու կարողությունը, վտանգում է քննության արդյունավետությունը, հետևաբար և Կոնվենցիայի 2-րդ հոդվածով պետության ստանձնած պարտավորությունների իրագործումը:

Սույն գործով իրականացված քննության համապատասխանությունը կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող

քննության արդյունավետության՝ սույն որոշման 38-րդ կետում նշված (ա) ենթակետի չափանիշին.

44. Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև, որ գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2009 թվականի հուլիսի 4-ին հարուցված քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացվել է 30 անգամ: Վերջին անգամ այն երկարացվել է 2014 թվականի մայիսի 31-ին դատախազ Ա.Մ.Խաչատրյանի կողմից՝ մինչև 2014 թվականի օգոստոսի 4-ը (տե՛ս թիվ 91254109 քրեական գործի նյութեր, հատոր 7, թերթ 160-178): Ընդ որում, եթե նախաքննության սկզբնական շրջանում կատարվել են բազմաթիվ քննչական գործողություններ, ապա դրանից հետո կատարված քննչական գործողությունների քանակն ու որակը վկայում են քննության ընթացքն անհարկի ձգձգելու միտման մասին:

Մասնավորապես, գործի քննության շրջանակներում իրականացված վերջին փորձաքննության եզրակացությունը վարույթն իրականացնող մարմինը ստացել է դեռևս 2011 թվականի սեպտեմբերի 17-ին, իսկ գործի հարուցման պահից առ այդ ժամանակահատվածը Քննչի կողմից իրականացվել են մեծածավալ քննչական գործողություններ: Ինչ վերաբերում է 2011 թվականի հոկտեմբերից հետո ընկած ժամանակաշրջանին, անհրաժեշտ է արձանագրել հետևյալը.

2011 թվականի նոյեմբերի 1-ին քննիչ Ա.Խաչատրյանը որոշում է կայացրել նախաքննության ժամկետը ևս 2 ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, պատճառաբանելով, որ անհրաժեշտ է հարցաքննել Համալիր փորձաքննությունը կատարած մի շարք փորձագետների, և որ առանց դրա «հնարավոր չէ անդրադառնալ քրեական գործի հետագա և վերջնական ընթացքին (...), բացի այդ դեռևս պետք է կատարվեն մեծածավալ այլ դատավարական գործողություններ ևս, որոնց համար կպահանջվի որոշակի ժամանակ» (տե՛ս թիվ 91254109 քրեական գործի նյութեր, հատոր 5, թերթ 88-102): Նույն օրը դատախազ Հ.Հարությունյանի կողմից նախաքննության ժամկետը երկարացվել է 2 ամսով՝ մինչև 2012 թվականի հունվարի 4-ը: Քրեական գործի նյութերից երևում է, որ այդ ժամանակահատվածի ընթացքում քննիչ Ա.Խաչատրյանը հարցաքննել է փորձագետներ Գագիկ Եզանյանին, Գագիկ Հակոբյանին և Զարեհ Տեր-Ավետիքյանին: Այդ հարցաքննությունները, որոնց արձանագրությունները զետեղված են յուրաքանչյուրը՝ 2-ական թերթի վրա, կատարվել են մեկ օրում՝ 2011 թվականի դեկտեմբերի 5-ին, իսկ որևէ այլ դատավարական գործողություն հիշյալ 2 ամսվա ընթացքում չի կատարվել (տե՛ս թիվ 91254109 քրեական գործի նյութեր, հատոր 5, թերթ 104-105, 106-107, 108-109):

2011 թվականի դեկտեմբերի 29-ին քննիչ Ա.Խաչատրյանը դարձյալ որոշում է կայացրել նախաքննության ժամկետը 2 ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, պատճառաբանելով, որ անհրաժեշտ է հարցաքննել Համալիր փորձաքննությունը կատարած այլ փորձագետների

ևս, ինչպես նաև «Էրեբունի» ԲԿ-ի գորակոչային հանձնաժողովի անդամներին և նույն ԲԿ-ի այլ բժիշկ-մասնագետների, և որ առանց դրա «*հնարավոր չէ անդրադարձնել քրեական գործի հետագա և վերջնական ընթացքին (...), բացի այդ դեռևս պետք է կատարվեն մեծածավալ այլ դատավարական գործողություններ ևս, որոնց համար կյանհանջվի որոշակի ժամանակ*» (տե՛ս թիվ 91254109 քրեական գործի նյութեր, հատոր 5, թերթ 110-124): Նույն օրը դատախազ Հ.Հարությունյանի կողմից նախաքննության ժամկետը երկարացվել է 2 ամսով՝ մինչև 2012 թվականի մարտի 4-ը: Քրեական գործի նյութերից երևում է, որ այդ ժամկետի ընթացքում քննիչ Ա.Խաչատրյանը հարցաքննել է փորձագետներ Հակոբ Դավթյանին, Արմեն Վարդանյանին և Հակոբ Հովսեփյանին: Այդ հարցաքննությունները կատարվել են մեկ օրում՝ 2012 թվականի հունվարի 13-ին, և բացի դրանցից, քննիչի վերոհիշյալ որոշման մեջ նշված որևէ այլ դատավարական գործողություն այդ 2 ամսվա ընթացքում չի կատարվել (տե՛ս թիվ 91254109 քրեական գործի նյութեր, հատոր 5, թերթ 126-128, 130-131, 133-135): 2012 թվականի փետրվարի 10-ին քննիչը ստացել է տուժողի իրավահաջորդ Աշոտ Մալխասյանի դիմումը, որով նա խնդրել է որպես *տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ* ներգրավել փաստաբան Սեդա Սաֆարյանին: Նույն օրը քննիչ Ա.Խաչատրյանը որոշում է կայացրել փաստաբան Սեդա Սաֆարյանին տուժողի իրավահաջորդի *օրինական* ներկայացուցիչ ճանաչելու մասին (տե՛ս թիվ 91254109 քրեական գործի նյութեր, հատոր 5, թերթ 138):

2012 թվականի մայիսի 2-ին քննիչ Ա.Խաչատրյանը որոշում է կայացրել նախաքննության ժամկետը ևս 2 ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, դրա անհրաժեշտությունը պայմանավորելով տրամադրված գործի նյութերին տուժողի իրավահաջորդի *օրինական* ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի կողմից ծանոթանալու հանգամանքով, նաև՝ նյութերում դժվար ընթեռնելի փաստաթղթերի առկայությամբ պայմանավորված լրացուցիչ ժամանակի անհրաժեշտության մասին փաստաբանի դիմումի առկայությամբ (տե՛ս թիվ 91254109 քրեական գործի նյութեր, հատոր 5, թերթ 156-170): Քննիչի հիշյալ միջնորդությունը բավարարվել է դատախազի կողմից:

Քրեական գործի քննության ընթացքի ուսումնասիրությունից հետևում է, որ վերը ներկայացված միտումները շարունակվել են նաև 2012 թվականի հուլիսից մինչև քրեական գործի վարույթը կարճելը՝ 2014 թվականի հուլիսի 17-ը (տե՛ս թիվ 91254109 քրեական գործի նյութեր, 5-7-րդ հատորներ):

Հարկ է ընդգծել, որ քննարկվող ժամանակահատվածում քննիչ Ա.Խաչատրյանն այդպես էլ չի կատարել իր նախկին միջնորդություններում հիշատակված «*մեծածավալ այլ դատավարական գործողությունները*»:

45. Նախորդ կետում շարադրված փաստական վերլուծությունը գնահատելով սույն որոշման 38-39-րդ կետերում արտահայտված իրավական

վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով կոպտորեն խախտվել են քննության ողջամիտ ժամկետները, որի արդյունքում իրականացված քննությունը չի համապատասխանում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով արդյունավետ քննության՝ պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ գործելու չափանիշին: Վերջինիս հետևանքով նաև կարող են խախտվել տուժողի իրավահաջորդի իրավունքները, մասնավորապես՝ իր որդու մահվան պատճառների և հանգամանքների մասին համոզիչ բացատրություն ստանալու, ինչպես նաև մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջի իրավունքները:

46. Անփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, իր ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան, կրում է զինձառայող Արեգ Մալխասյանի մահվան փաստի առթիվ պատշաճ, անաչառ և արդյունավետ քննություն կատարելու պարտավորություն՝ մահվան հանգամանքները պարզելու, մեղավոր պաշտոնատար անձանց բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու նպատակով:

Մինչդեռ, արդյունավետ քննություն չկատարելով՝ քրեական հետապնդման մարմինները թույլ են տվել ինչպես Սահմանադրության (15-րդ հոդված), միջազգային իրավունքի (Կոնվենցիայի 2-րդ հոդված), այնպես էլ քրեադատավարական իրավունքի նորմերի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 17-րդ հոդվածներ) էական խախտումներ, որոնք էլ պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացել ստորադաս դատարանների կողմից: Ավելին՝ ինչպես Քննիչի և Դատախազի որոշումները, այնպես էլ դրանց դատական ստուգման արդյունքում կայացված ստորադաս դատարանների դատական ակտերը չեն համապատասխանում Վճարելի դատարանի և Եվրոպական դատարանի նախատեսված իրավունքներում ձևավորված իրավական դիրքորոշումներին (տես սույն որոշման 38-39-րդ կետերը): Արդյունքում խախտվել են անձի՝ օրենքով երաշխավորված իրավունքները:

47. Վերոգրյալը բավարար համարելով ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար՝ Վճարելի դատարանը, հաշվի առնելով Քննիչի բողոքարկվող որոշման իրավական նշանակությունը պետության կողմից Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջների կատարումն ապահովելու հարցում, օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու նպատակով մինևույն ժամանակ անհրաժեշտ է համարում անդրադառնալ Քննիչի բողոքարկվող որոշման եզրափակիչ մասում առկա ձևակերպումների իրավաչափության հարցին:

II. Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչ Ա.Խաչատրյանի որոշման եզրափակիչ մասի իրավաչափությունը.

48. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդումն այն բոլոր դատավարական գործողություններն են, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը՝ նպատակ ունենալով **բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ**, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդման հարուցումը քրեական հետապնդման մարմնի որոշումն է **անձին** որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ **նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին**:

Վերոշարադրյալ նորմերի բովանդակությունից ակնհայտ է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գաղափարախոսության համաձայն՝ քրեական հետապնդումը վերաբերում է և ուղղված է ոչ թե անձանց անորոշ շրջանակի, այլ որոշակի անձի, հետևաբար քրեական հետապնդում հարուցելու հարցի քննարկումը նույնպես հնարավոր է որոշակի անձի առկայության դեպքում, որը կարող է հանգեցնել այդ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ այդպիսին չիրականացնելուն: Այլ խոսքով՝ քրեական հետապնդումը կարող է հարուցվել, կամ քրեական հետապնդում չիրականացվել միայն որոշակի անձի նկատմամբ: Հակառակ մեկնաբանումը ոչ միայն չի համապատասխանի վկայակոչված նորմերի տրամաբանությանը, այլև կհանգեցնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված քրեական հետապնդում չիրականացնելու արդարացնող և ոչ արդարացնող հիմքերի իրավական հետևանքների բովանդակագրկման, ինչն անթույլատրելի է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված արդարացնող և ոչ արդարացնող հիմքերի մեկնաբանությունը մանրամասն տե՛ս mutatis mutandis Արմեն Բաղդասարյանի գործով Վճռարեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0009/11/13 որոշման 16-րդ կետը, ինչպես նաև քաղաքացիներ Արամ Սարգսյանի և Կարապետ Ռուբինյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի և 67-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴՌ-871 որոշման 9-րդ կետը):

49. Սույն գործի փաստերից հետևում է, որ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման եզրափակիչ մասում քննիչ Ա.Խաչատրյանը բառացի նշել է հետևյալը.

«Վարույթիս թիվ 91254109 քրեական գործով, հարուցված ՀՀ քր.օր-ի 376 հոդվածի 1-ին մասով, ԼՂՀ ՊԲ 25918 գորամասի նախկին պարտադիր ժամկետային զին. ծառայող, կոչումով շարքային՝ Արեգ Մալխասյանի զին. ծառայության ընթացքում առողջական վիճակի կորույթ վարթարանալու և հետագայում մահանալու դեպքի առթիվ, որևէ բուժ. ծառայողի կամ բժիշկ-մասնագետի կամ պաշտոնատար զին. ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել և քրեական գործով վարույթը կարճել՝ արարքներում հանցակազմ չլինելու պարճառարանությամբ» (տե՛ս սույն որոշման 27-րդ կետը):

Հիշյալ որոշման մեջ առկա՝ «որևէ բուժ. ծառայողի կամ բժիշկ-մասնագետի կամ պաշտոնատար զին. ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել» ձևակերպումից երևում է, որ վարույթն իրականացնող մարմինը չի որոշակիացրել այն անձանց, ում արարքներում հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդում չի իրականացվում:

50. Նախորդ կետում շարադրված փաստական վերլուծությունը գնահատելով սույն որոշման 48-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արճանագրում է, որ քննիչ Ա.Խաչատրյանի՝ 2014 թվականի հուլիսի 17-ի քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումն օրինական և հիմնավորված չէ՝ նաև այն պատճառարանությամբ, որ չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 17-18-րդ կետերին:

Բացի այդ, քննարկվող որոշման եզրափակիչ մասում առկա նման ձևակերպումը բացառում է սույն քրեական գործի վարույթի շրջանակներում որևէ բուժ. ծառայողի, բժիկ-մասնագետի կամ պաշտոնատար զին. ծառայողի արարքում հանցակազմի հատկանիշների առկայության հարցի քննությունը, ինչը կարող է խոչընդոտներ ստեղծել Ա. Մալխասյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում թույլ տրված՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելու համար:

51. Անփոփելով սույն որոշման իրավական և փաստական վերլուծությունները և եզրահանգումները՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն գործով թույլ են տվել դատական սխալ, այն է՝ ՀՀ Սահմանադրության 15-րդ, Կոնվենցիայի 2-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 17-րդ հոդվածների պահանջների խախտումներ: Դրանք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաճայն՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Ելնելով արդարադատության շահից, սույն գործի քննության ողջամիտ ժամկետներն արդեն իսկ խախտված լինելու փաստի (տե՛ս սույն որոշման 44-45-րդ կետերը) հաշվառմամբ՝ Վճարելի դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է բեկանել Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերը և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Արեգ Մալխասյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում թույլ տրված՝ անձի իրավունքների և ազատությունների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտումները:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Աշոտ Մալխասյանի և նրա ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի որոշումը բեկանել և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Արեգ Մալխասյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում թույլ տրված՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

28.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0048/01/14

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ մասնակցությամբ՝ պաշտպան	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ Ա. ՈՍԿԱՆՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Եղիշե Արիստակեսի Ալոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 8-ի որոշման դեմ ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի դեկտեմբերի 2-ին ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության կայագորային քննչական բաժնում հարուցվել է թիվ 90453813 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2014 թվականի մարտի 25-ի որոշմամբ Ե.Ալոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի մարտի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճռով Ե.Ալոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել կալանք՝ 1 (մեկ) ամիս ժամկետով:

3. Պաշտպան Ա.Ոսկանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճիռը բեկանել և Ե.Ալոյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելու քրեական հետապնդումը դադարեցրել է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված՝ իրադրության փոփոխման հիմքով:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 8-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճարելի դատարանի 2015 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Ե.Ալոյանի պաշտպան Ա.Ոսկանյանի կողմից ներկայացվել է վճարելի բողոքի պատասխան: Պաշտպանը, մասնավորապես, հիմնագուրկ է գնահատել բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածը: Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի սահմաններից դուրս գալու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին՝ պաշտպան Ա.Ոսկանյանը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով Վճարելի դատարանի նախադեպային իրավունքով, պարզելով քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք, իրավաչափորեն դուրս է եկել բողոքի սահմաններից:

Անդրադառնալով բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու պահանջին՝ Ա.Ոսկանյանը փաստարկել է, որ թեև Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել իր կողմից ներկայացված բողոքի հիմնավորումները և մերժել բողոքը, սակայն քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելով՝ կայացրել է բարենպաստ դատական ակտ, որը պաշտպանության կողմը չի բողոքարկել: Այս պայմաններում

Առաջին ատյանի դատարանի դատավճռին օրինական ուժ տալու դեպքում պաշտպանության կողմը կզրկվի իր համար անբարենպաստ դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից, ինչը կհանգեցնի արդար դատաքննության իրավունքի առարկայազրկման: Արդյունքում պաշտպան Ա.Ոսկանյանը եզրահանգել է, որ անգամ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու դեպքում գործը պետք է ուղարկվի ստորադաս դատարան՝ նոր քննության:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ե.Ալոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ 51556 զորամասի 2-րդ դիվիզիոնի 1-ին մեկնարկային մարտկոցի 1-ին մեկնարկային բաժանմունքի ավագ օպերատոր, կոչումով լեյտենանտ, 2013 թվականի նոյեմբերի 29-ին՝ ժամը 19-ի սահմաններում, զորամասի զինավանդի իր բնակարանում, անօրինակ ձախ նախարազկի շրջանում քերծվածքներ կատարելով, ինքն իրեն պարճատել է մարմնական վնասվածքներ, որը հանգեցրել է զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն: Նույն օրը լեյտենանտ Ե.Ալոյանը տեղափոխվել է «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, որտեղից էլ՝ Նորթի հոգեբուժական կլինիկա» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, գ.թ. 115, 134):

6. Գործի քննության ընթացքում Ե.Ալոյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ պարտքերի պատճառով 2013 թվականի նոյեմբերի 29-ին ինքնավնասում է կատարել (տե՛ս քրեական գործ, հատոր 2, դատական նիստի արձանագրություն):

7. Վկա Գ.Կարապետյանը գործի քննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ որդին՝ կոչումով լեյտենանտ Ե.Ալոյանը, 2013 թվականին ծառայության է նշանակվել ՀՀ ՊՆ 51556 զորամասում՝ որպես օպերատոր: Զորամասի զինավանդում որդուն տրամադրվել է ծառայողական բնակարան, որտեղ էլ նա բնակվել է: Որդին ծառայությունից գոհ է եղել և ծառայության հետ կապված խնդիրներ չի ունեցել: Իրեն տրամադրված նոր բնակարանը կահավորելու համար «ՎՏԲ» բանկից 1.160.000 ՀՀ դրամի վարկ է վերցրել, սակայն գումարը չի բավականացրել և կրկին նույն բանկից մոտ 300.000 ՀՀ դրամ վարկ է վերցրել: Բացի նշված գումարներից՝ որդին իրեն ասել է, որ Ստեփանավան քաղաքի երկու խանութներից պարտքով մոտ 180.000 դրամի սննդամթերք է վերցրել: 2013 թվականի նոյեմբերի 29-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, զորամասից իրեն զանգահարել և հայտնել են, որ որդին իր բնակարանում ինքնավնասում է կատարել: Անմիջապես գնացել է Ստեփանավանի հիվանդանոց, որտեղ տղան իրեն ասել է, որ պարտքերի պատճառով նեղվել է և ինքնավնասում

կատարել: Դրանից հետո ինքը վճարել է բոլոր պարտքերը և հիմա իր որդուց ոչ ոք որևէ պահանջ չունի: Վկան հայտնել է նաև, որ որդու կատարածը զինվորական ծառայության հետ կապ չի ունեցել (տե՛ս քրեական գործ, հատոր 2, դատական նիստի արձանագրություն):

8. Վկաներ Արայիկ Նազարեթյանը և Արթուր Ավագիմյանը գործի քննության ընթացքում ցուցմունք են տվել այն մասին, որ դեպքից հետո տեղեկացել են, որ Ե.Ալոյանն ինքնավնասում է կատարել ինչ-որ պարտքով գումարներ վերցնելու պատճառով (տե՛ս քրեական գործ, հատոր 2, դատական նիստի արձանագրություն):

Վկա Արտաշես Հաջաթյանի ցուցմունքի համաձայն՝ ընդհանուր առմամբ Եղիշե Ալոյանը շատ լավ ծառայող է և դասակի հրամանատարների մեջ լավագույնն է (տե՛ս քրեական գործ, հատոր 2, դատական նիստի արձանագրություն):

9. Ամբուլատոր դատահոգեբուժական և ռազմաբժշկական համալիր փորձաքննության 2014 թվականի փետրվարի 18-ի թիվ 51/14 եզրակացության համաձայն՝ Ե.Ալոյանը որևէ հոգեկան հիվանդությամբ չի տառապել և ներկայումս նույնպես չի տառապում, այլ նա հանդիսանում է «Շեշտված անձ, տարել է իրավիճակային ռեակցիա ինքնավնասումներով»: Վերը նշված ախտորոշումը հոգեկան հիվանդություն չի համարվում, այլ իրենից ներկայացնում է հոգեկան նորմայի տարատեսակ, որն արտահայտվում է բնավորության որևէ գծի չափից ավելի արտահայտությամբ, ինչը սթրեսոգեն իրավիճակներում կարող է արտահայտվել հուզական անկայուն ռեակցիաների դրսևորմամբ, որոնք, սակայն կարճատև են, անցողիկ, չունեն շարունակական և կրկնվող բնույթ: Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ ԿՌԲՀ) որոշմամբ Ե.Ալոյանը, ՀՀ ՊՆ թիվ 410- 13 հրամանի 7Գ հոդվածի 3-րդ պունակի համաձայն, ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար, և նրա մոտ ախտորոշվել է՝ «Տարել է իրավիճակային ռեակցիա ինքնավնասումներով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, գ.թ. 110-112):

10. Դատարանում հարցաքննված Տ.Սարգսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ աշխատում է ԿՌԲՀ-ում որպես փորձագետ-հոգեբույժ: Ե.Ալոյանի մոտ փորձաքննությամբ արձանագրվել է «Չեշտված անձնավորություն» վիճակ, որը բնութագրական կատեգորիա է և նորմայի տարատեսակ, միգրացե ծայրահեղ, այնուամենայնիվ, նորմայի տարատեսակ: Դա պաթոլոգիկ վիճակ չէ: Վկայի ցուցմունքների համաձայն՝ փորձագետներին ներկայացված նյութերում, օբյեկտիվ հետազոտության տվյալներում, հիվանդի հետ առանձնագրույցների ժամանակ ձեռք չեն բերվել բավարար տվյալներ, որ փորձաքննվողը նպատակ է ունեցել խուսափելու զինվորական ծառայությունից, սակայն իր էմոցիոնալ վիճակով Ե.Ալոյանը գրկված չի եղել իր գործողությունների հետևանքները կանխատեսելու ունակությունից (տե՛ս քրեական գործ, հատոր 2, դատական նիստի արձանագրություն):

11. Առաջին ատյանի դատարանը, ապացուցված համարելով, որ «Եղիշե Արիարակեսի Ալոյանն իր դիտարկությամբ գործողություններով, այն է՝ ինքնավաստում պարճատելով, հայրնվել է անգիտակցից վիճակում և այդ վիճակում հայրնաբերվելով ծառայակիցների կողմից՝ անցել է այն պարարադիր բուժական և հերագորական միջոցառումները, առանց որոնց հնարավոր չէր լինի նրան թույլատրել վերադառնալ իր պարարականությունների կարարումներ և այդ ընթացքում 2013թ. նոյեմբերի 29-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 25-ը, փաստացի դադարեցրել է զինվորական ծառայության պարարականությունների կարարումը», Ե.Ալոյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման մեջ (տե՛ս քրեական գործ, հատոր 2, գ.թ. 136-140):

12. Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ Ե.Ալոյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության, և որ վերջինիս մեղավորությունը հիմնավորված է դատաքննության ժամանակ հետազոտված և դատավճռում շարադրված՝ ամբաստանյալի հանցանքը հիմնավորող ապացույցներով, այդուհանդերձ, բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Ե.Ալոյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցրել է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի՝ իրադրության փոփոխման հիմքով՝ փաստելով, որ «Ե.Ալոյանի մոր կողմից վերջինիս պարարքի գումարները մարելու փաստով կարարվել է իրադրության այնպիսի փոփոխություն, որի արդյունքում հանցանք կարարած անձը՝ Ե.Ալոյանը, դադարել է հանրության համար վրանգավոր լինել: Տվյալ պարագայում, պարարքի գումարները հարուցվելուց հետո, Ե.Ալոյանի մոր սթրեստգեն, հուզական անկանոն իրավիճակի /րես՝ դարահոգեբուժական փորձաքննության եզրակացությունը/ առաջացման առիթներն այլևս վերացել են: Այսինքն՝ կարարված փոփոխությունները էականորեն նվազեցրել են նոր հանցանք կարարելու՝ Ե.Ալոյանի օբյեկտիվ հնարավորությունը» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, գ.թ. 45-59):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

13. Բողոքաբերի պնդմամբ՝ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես, բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածը: Վկայակոչելով վերոհիշյալ նորմի վերաբերյալ Վճարելի դատարանի՝ Յ.Ղալայանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0009/11/11

որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի գնահատել գործի փաստական հանգամանքները և եկել է սխալ եզրահանգման այն մասին, որ Ե.Ալոյանը իրադրության փոփոխության հետևանքով դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանն իր եզրահանգման համար հիմք է ընդունել այն, որ Ե.Ալոյանի հանցավոր արարքի շարժառիթը եղել է կուտակված պարտքերի առկայությունը, որոնք մարվել են նրա մոր՝ Գ.Կարապետյանի կողմից, որից հետո Ե.Ալոյանի մոտ սթրեստզեն, հուզական անկայուն վիճակի առաջացման առիթները վերացել են, և էականորեն նվազել է նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը: Մինչդեռ ստորադաս դատարանը հաշվի չի առել, որ Ե.Ալոյանի կողմից կատարված հանցագործությունն ուղղված է զինվորական ծառայության կարգի դեմ, իսկ նրա կողմից կատարված հանցագործության շարժառիթի վերացումը՝ կուտակված պարտքերի մարումը, նրան չի զրկում զինվորական կարգի դեմ ուղղված հասարակական հարաբերություններին նույնպիսի վնաս պատճառելու հնարավորությունից: Հետևաբար այդ հանգամանքը էականորեն չի նվազեցրել զինվորական կարգի դեմ ուղղված նոր հանցանք կատարելու օբյեկտիվ հնարավորությունը:

14. Անդրադառնալով ստորադաս դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտումներին՝ բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, մերժել է վերաքննիչ բողոքը, միաժամանակ բեկանել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և կայացրել նոր դատական ակտ, որն էականորեն տարբերվում է Առաջին ատյանի դատարանի դատական ակտից, այնինչ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու պարագայում իրավասու չէր բեկանել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը:

15. Բողոքաբերը նաև նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի պահանջները, քանի որ դուրս է եկել Վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններից: Այսպես՝ բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանը որոշում է կայացրել իրադրության փոփոխման հիմքով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով: Մինչդեռ բողոքաբերի պնդմամբ՝ եթե վարույթն իրականացնող մարմինը գալիս է այն եզրահանգման, որ առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված հիմքը, ապա քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելիս պետք է ղեկավարվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով, որի հատուկ

կարգավորման տիրույթում են գտնվում ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված իրավահարաբերությունները: Արդյունքում, վկայակոչելով Վճարելի դատարանի՝ Մխիթար Էլոյանի և այլոց գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը փաստարկել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանն իրավասու չէր դուրս գալ վերաքննիչ բողոքի սահմաններից:

16. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 8-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճիռին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

17. Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացված իրավական հարցը վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից իրադրության փոփոխության դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի (ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդված) սխալ մեկնաբանությանը և կիրառմանը:

Մինևսույն ժամանակ Վճարելի դատարանը գտնում է, որ զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու) եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մաս) հանցակազմի մեկնաբանության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Հետևաբար անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

18. Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով նախ պետք է քննարկման առարկա դարձվի հետևյալ իրավական հարցը. հիմնավոր է արդյոք Ե.Ալոյանին մեղսագրվող արարքում անդամախեղելու եղանակով զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու հանցակազմի (ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մաս) առկայության մասին ստորադաս դատարանների հետևությունը:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու) համար, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

Վերոշարադրյալ քրեաիրավական նորմը գետեղված է ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ գլխում: Զինվորական ծառայությունը ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում իրականացվող պետական գործունեության հատուկ տեսակ է, որի իրականացման սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունները բնութագրվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ առանձնահատուկ հատկանիշներով: Մասնավորապես, բոլոր զինվորական հանցագործությունների համար ընդհանուր հանդիսացող օբյեկտն օրենքներով, զինվորական կանոնադրություններով, կանոնագրքերով, պետերի հրամաններով սահմանված զինվորական ծառայության կարգն է: Հետևաբար արարքը զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների թվին դասելու համար նախ և առաջ պետք է փաստել, որ այն ոտնձգում է զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ որպես հանցագործության հիմնական օբյեկտի:

Նշված հանցագործության օբյեկտիվ կողմը զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելն է (անդամախեղելը): Ընդ որում, կատարված արարքը պետք է հանգեցնի զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն կամ այդպիսի հետևանքի առաջացման հնարավորություն ստեղծի:

Զինծառայողի կողմից իրեն վնաս պատճառելը (անդամախեղելը) կարող է կատարվել ցանկացած եղանակով, օրինակ՝ որևէ օրգան վնասելով, որը կարող է խոչընդոտել վերջինիս կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելուն: Վնաս հասցնելու միջոցները կարող են տարբեր լինել, օրինակ՝ մեխանիկական (այդ թվում զենքի գործադրմամբ), քիմիական, թերմալ (այրվածքներ պատճառելը) և այլն: Փաստորեն, զինծառայողը, իրեն վնաս հասցնելով, արհեստականորեն ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնք ժամանակավորապես անհնարին են դարձնում նրա հետագա ծառայությունը կամ այդպիսի հետևանքի առաջացման հնարավորություն ստեղծում:

20. ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության սուբյեկտը հատուկ է: Որպես այդպիսին հանդես են գալիս ՀՀ զինված ուժերում, ՀՀ այլ զորքերում օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք և վարժական հավաքներ անցնող զինապարտները (ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 5-րդ մաս):

21. Զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկությունների կապակցությամբ Վճարելի դատարանը Ս.Հովհաննիսյանի գործով որոշման մեջ ընդգծել է, որ «(...) զինվորական ծառայության մեջ ընդգրկված լինելու փաստն ինքնին հիմք չէ արձանագրելու, որ զինծառայողը յուրաքանչյուր պահի զինվորական

ծառայության կոնկրետ պարտականություններ է կատարում: (...) ծառայության մեջ գրնվելու ժամանակաշրջանում զինծառայողները գրնվում են ոչ միայն զինվորական ծառայական հարաբերությունների, այլ զինվորական օրենսդրության նորմերով չկարգավորվող այլ (անձնական, քաղաքացիաիրավական, ընտանեկան և այլն) իրավահարաբերությունների մեջ:

(...) զորամասի տարածքում կատարված ոչ բոլոր արարքներն են համարվում զինվորական հանցագործություն, հետևաբար յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է զինվորական հանցագործությունը հստակ սահմանազարել ՀՀ քրեական օրենսգրքով արգելված այլ արարքներից, ինչպես նաև կարգապահական պարասիսանսարվության հիմք հանդիսացող զանցանքներից: (...)» (տես Սրապիոն Ազատի Հովհաննիսյանի գործով Վճարելի դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՄԴ/0204/01/11 որոշման 19-րդ և 21-րդ կետերը):

Միննույն ժամանակ Վճարելի դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ «(...) Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված անձնական կամ այլ շարժառիթներով իրականացվող հանրորեն վրանգավոր արարքները մինչև օրենքում կատարված փոփոխությունները զինվորական հանցագործություն չեն համարվել: Այդ մասին է վկայում, մասնավորապես, 2013 թվականի ապրիլի 30-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքը, որով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ, 358.1-րդ, 360-րդ հոդվածները), որոնց դիսպոզիցիաներում առկա է «եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ» ձևակերպումը: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքում հստակ ամրագրված է, որ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված արարքները որպես զինվորական հանցագործություն որակելու համար անհրաժեշտ է որպեսզի համապարասիսան հոդվածի դիսպոզիցիայում հստակ նշում արված լինի այն մասին, որ արարքը ենթակա է որակման որպես զինվորական հանցագործություն նաև այն դեպքում, երբ կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ» (տես Մխիթար Ալիկի Սարուխանյանի գործով Վճարելի դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՄԴ/0185/01/13 որոշման 19-րդ կետը):

22. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-34-Ն օրենքի ընդունումից առաջ գործող խմբագրությանը ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն էր նախատեսում իրեն վնասվածք պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբեության միջոցով

կամ ապօրինի այլ եղանակով զինձառայողի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելու համար:

Սույն որոշման նախորդ կետում մեջբերված դիրքորոշումների համատեքստում վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասի նախկին և նոր խմբագրությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես մինչև օրենսդրական փոփոխությունը, այնպես էլ դրանից հետո ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում բացակայում է հստակ նշում այն մասին, որ արարքը ենթակա է որակման որպես զինվորական հանցագործություն նաև այն դեպքում, երբ ուղղված չէ զինվորական ծառայության պարտականությունները ժամանակավորապես դադարեցնելուն:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սուբյեկտիվ կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ անձի դիտավորությունը պետք է ուղղված լինի զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն: Այլ խոսքով՝ հանցավորը պետք է գիտակցի իր առողջությանը վնաս պատճառելու արդյունքում զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու հանրային վտանգավորությունը, հանցավոր հետևանքի առաջացման անխուսափելիությունը և ցանկանա դա:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 4-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն հոդվածի 1-ին կամ 3-րդ մասով նախատեսված արարքները կատարելու համար, որոնք կատարվել են զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելու նպատակով:

Մեջբերված նորմի բովանդակությունից հետևում է, որ դրանով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Հետևաբար, եթե ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվի նաև անուղղակի դիտավորությամբ, ապա կառաջանա այնպիսի ոչ իրավաչափ իրավիճակ, երբ անդամախեղումը, որը հանգեցրել է զինվորական ծառայությունը ժամանակավորապես դադարեցնելուն, կառաջացնի քրեական պատասխանատվություն, իսկ որը հանգեցրել է զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելուն՝ ոչ: Մասնավորապես, այն դեպքում, երբ զինձառայողը, օրինակ՝ ընտանեկան խնդիրների պատճառով, իր առողջությանն այնպիսի վնաս է պատճառում, որի արդյունքում զինվորական ծառայությունը ժամանակավորապես դադարեցվում է (անուղղակի դիտավորություն), նա ենթակա կլինի քրեական

պատասխանատվության: Մինչդեռ նույն շարժառիթով իր առողջությանն այնպիսի վնաս պատճառելը, որը կհանգեցնի զինվորական ծառայությունից վերջնականապես ազատվելուն, քրեական պատասխանատվություն չի առաջացնի, թեև ավելի բարձր հանրային վտանգավորություն է ներկայացնում:

23. Վճարելի դատարանը վերահաստատում է նաև իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշները բացահայտելիս հաշվի են առնվում արարքի և դրա հետևանքների նկատմամբ անձի դրսևորած մեղքի ձևերը, ինչպես նաև արարքի դրդապատճառները, շարժառիթները, նպատակներն ու հույզերը: Այս կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, անհրաժեշտ է ձեռք բերված բավարար փաստական փյուջաներով հիմնավորել անձի մեղավորությունը կամ մեղավորության բացակայությունը փյուջա արարքը կատարելու մեջ:

Այլ խոսքով կոնկրետ հանցակազմի էությունից և բովանդակությունից ելնելով յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է պարզել, թե փաստական ինչպիսի հանգամանքներ պետք է ընդգրկվեն սուբյեկտիվ հոգեբանական վերաբերմունքի մեջ, որպեսզի հնարավոր լինի հանգել ճիշտ հետևության վերագրվող արարքում մեղքի առկայության (բացակայության) վերաբերյալ (...):» (տե՛ս Հայկ Արտավազյի Մովսիսյանի գործով Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՍԴ/0389/01/11 որոշման 22-րդ կետը):

Մեջբերված դիրքորոշումից ելնելով՝ Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ զինծառայողի կողմից կատարված յուրաքանչյուր արարք կարող է ունենալ մեկից ավելի նպատակներ, որոնցից մեկը գերակա է մյուսների նկատմամբ: Ուստի յուրաքանչյուր դեպքում արարքի ճիշտ քրեաիրավական որակման համար կարևոր նշանակություն ունի գերակա նպատակի պարզումը (տե՛ս, mutatis mutandis, Սրապիոն Ազատի Հովհաննիսյանի գործով Վճարելի դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՍԴ/0204/01/11 որոշման 20-րդ կետը): Այլ խոսքով՝ այն դեպքում, երբ գործով ձեռք բերված ապացույցների բավարար ամբողջությամբ կհիմնավորվի, որ զինծառայողի կողմից իրեն անդամախեղելու գերակա նպատակը կապված է զինվորական ծառայություն անցնելու կարգը խախտելու հետ, արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով: Մինչդեռ այն դեպքում, երբ արարքի կատարումը պայմանավորված է անձնական կամ այլ բնույթի մտփվացիայով, և արարքն ուղղված չէ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ, ապա այն չի կարող որակվել որպես զինվորական ծառայության դեմ

ուղղված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն:

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմը գնահատելու համար անհրաժեշտ է պարզել զինծառայողի անձը, այդ թվում՝ նրա հոգեկան առողջությունը բնութագրող տվյալները, նշված արարքի կատարմանը նախորդող և հաջորդող ժամանակահատվածում զինծառայողի վարքագիծը, իրեն վնասելու (անդամախեղման) եղանակն ու մեխանիզմը, գործիքներն ու միջոցները, ինքնախեղման տեղն ու ժամանակը, վնասվածքների քանակը, բնույթը, տեղակայումը, հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի և վկաների ցուցմունքները, կոնկրետ գործի այլ հանգամանքները, որոնք կարող են էական նշանակություն ունենալ զինծառայողի արարքի սուբյեկտիվ կողմի՝ դիտավորության ուղղվածության պարզաբանման համար: Այն դեպքում, երբ զինծառայողի արարքը պայմանավորված լինի այնպիսի հանգամանքներով, որոնք ուղղված չեն զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն, ինչպես նաև նրա մոտ առկա հուզական լարվածության, արտաքին միջավայրի հետ կապված դժվարությունների, անձնային առանձնահատկությունների, բռնկվող, անզուսպ բնավորության և համանման հանգամանքների հետևանք լինի, ապա զինծառայողի արարքը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով:

24. Անփոփելով սույն որոշման 21-23-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելը, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն, ինքնին չի ենթադրում, որ այդ արարքը պետք է որակվի որպես զինվորական հանցագործություն: Քննարկվող հանցակազմի տեսանկյունից զինծառայողի վարքագիծը ոչ իրավաչափ է այնքանով, որքանով իր առողջությանը վնաս պատճառելն ուղղված է զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես անհնարին դարձնելուն: Այլ խոսքով՝ զինծառայողի արարքը կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով այն դեպքում, երբ իր առողջությանը վնաս պատճառելն ուղղված է եղել զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ե.Ալոյասին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ 51556 զորամասի 2-րդ դիվիզիոնի 1-ին մեկնարկային մարտկոցի 1-ին մեկնարկային բաժանմունքի ավագ օպերատոր, կոչումով լեյտենանտ, 2013 թվականի նոյեմբերի 29-ին՝ ժամը 19-ի սահմաններում, զորամասի

զինավանդի իր բնակարանում, ամելիով ձախ նախաքաղկի շրջանում քերտվածքներ կատարելով, ինքն իրեն պատճառել է մարմնական վնասվածքներ, որը հանգեցրել է զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Գործի քննության ընթացքում Ե.Ալոյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ պարտքերի պատճառով է 2013 թվականի նոյեմբերի 29-ին ինքնավնասում կատարել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Ե.Ալոյանի մայրը՝ վկա Գ.Կարապետյանը, ցուցմունք է տվել այն մասին, որ որդին ծառայությունից գոհ է եղել և ծառայության հետ կապված խնդիրներ չի ունեցել: Վկան հայտնել է նաև, որ որդին իրեն հատկացված բնակարանը կահավորելու համար «ՎՏԲ» բանկից սկզբում 1.160.000 ՀՀ դրամ, ապա 300.000 ՀՀ դրամ վարկ է վերցրել, բացի այդ, Ստեփանավան քաղաքի երկու խանութներից պարտքով մոտ 180.000 դրամի սննդամթերք է վերցրել, որդին իրեն ասել է, որ պարտքերի պատճառով է նեղվել և ինքնավնասում կատարել: Վկան նշել է նաև, որ որդու կատարածը զինվորական ծառայության հետ կապ չի ունեցել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վկաներ Արայիկ Նազարեթյանը և Արթուր Ավագիմյանը գործի քննության ընթացքում ցուցմունք են տվել այն մասին, որ դեպքից հետո տեղեկացել են, որ Ե.Ալոյանն ինքնավնասում է կատարել պարտքով գումարներ վերցնելու պատճառով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Իսկ դիվիզիոնի հրամանատար, վկա Արտաշես Հաջաթյանն իր ցուցմունքում հայտնել է, որ ընդհանուր առմամբ Եղիշե Ալոյանը շատ լավ ծառայող է և դասակի հրամանատարների մեջ լավագույնն է:

Ամբուլատոր դատահոգեբուժական և ռազմաբժշկական համալիր փորձաքննության թիվ 51/14 եզրակացության և փորձագետ-հոգեբույժ Տ.Սարգսյանի ցուցմունքի համաձայն՝ Ե.Ալոյանը որևէ հոգեկան հիվանդությամբ չի տառապել, պարզապես նրա մոտ հայտնաբերվել է «շեշտված անձ» հոգեկան նորմայի տարատեսակը, որն արտահայտվում է բնավորության որևէ գծի չափից ավելի արտահայտությամբ, ինչը սթրեստոգեն իրավիճակներում կարող է արտահայտվել հուզական անկայուն ռեակցիաների դրսևորմամբ (տե՛ս սույն որոշման 9-րդ և 10-րդ կետերը): Տ.Սարգսյանն իր ցուցմունքում նաև նշել է, որ փորձագետներին ներկայացված նյութերում, օբյեկտիվ հետազոտության տվյալներում, հիվանդի հետ առանձնագրույցների ժամանակ, ձեռք չեն բերվել բավարար տվյալներ, որ փորձաքննվողը նպատակ է ունեցել խուսափելու զինվորական ծառայությունից (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը Ե.Ալոյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման մեջ այն հիմնավորմամբ, որ ամբաստանյալն իր դիտավորյալ

գործողություններով, այն է՝ ինքնավաստում պատճառելով, հայտնվել է անգիտակից վիճակում և 2013 թվականի նոյեմբերի 29-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 25-ը փաստացի դադարեցրել է զինվորական ծառայության պարտականությունների կատարումը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ Առաջին աստիճանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ Ե.Ալոյանի մեղավորության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության, և որ վերջինիս մեղավորությունը հիմնավորված է դատաքննության ժամանակ հետազոտված և դատավճռում շարադրված՝ ամբաստանյալի հանցանքը հիմնավորող ապացույցներով (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը): Մինևս ժամանակ Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը և Ե.Ալոյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել է և քրեական հետապնդումը դադարեցրել ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի՝ իրադրության փոփոխման հիմքով (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

26. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով 19-24-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործով չի հիմնավորվել, որ Ե.Ալոյանի կողմից իր առողջությանը վնաս պատճառելն ուղղված է եղել զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն: Մասնավորապես գործի նյութերից հետևում է, որ Ե.Ալոյանի կողմից ինքնավաստում կատարելը պայմանավորված է եղել իր ունեցած պարտքերով: Իսկ պարտքեր ունենալու պատճառով նման ծայրահեղ քայլի գնալը, համաձայն ամբուլատոր դատահոգեբուժական և ռազմաբժշկական համալիր փորձաքննության թիվ 51/14 եզրակացության և փորձագետ-հոգեբույժ Ս.Սարգսյանի ցուցմունքների, պայմանավորված է եղել վերջինիս հոգեանձնային առանձնահատկություններով, այն է՝ սթրեսոզեն իրավիճակներում հուզական անկայուն ռեակցիաներ դրսևորելու հավանականությամբ: Ավելին՝ գործում առկա են տվյալներ այն մասին, որ ընդհանուր առմամբ Եղիշե Ալոյանը շատ լավ ծառայող է և դասակի հրամանատարների մեջ լավագույնն է, ծառայությունից գոհ է եղել և ծառայության հետ կապված խնդիրներ չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ե.Ալոյանին մեղաազրվող արարքում անդամախեղելու եղանակով զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու հանցակազմի (ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մաս) առկայության մասին ստորադաս դատարանների հետևությունը հիմնավոր չէ:

27. Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ե.Ալոյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը, մինչդեռ Առաջին ատյանի դատարանը Ե.Ալոյանին դատապարտել է մեկ ամիս ժամկետով կալանքի, իսկ Վերաքննիչ դատարանը՝ գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցրել է ոչ արդարացնող հիմքով:

28. Այս կապակցությամբ Վճարելի դատարանը վերահաստատում է Մ.Էլոյանի և այլոց վերաբերյալ գործով ձևավորված իրավական դիրքորոշումն այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրելով «բոլոր դեպքերում» ձևակերպումը՝ օրենսդիրը արտահայտել է այդ կանոնն իմպերատիվ դարձնելու կամք՝ անկախ վերադաս դատարաններում վարույթի սահմանները որոշող իրավանդներից (ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մաս և 415-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ, եթե վերադաս դատարանը հայրնաբերում է ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա իրավասու է ուղղել այդ դատարանի սխալը՝ կաշկանդված չլինելով դատարանի վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով:

Նույնը վերաբերում է նաև ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված հիմքերին, որոնցով «հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման»։ Նշված ձևակերպումը ևս վկայում է նշված հիմքերն իմպերատիվ դարձնելու օրենսդրի կամքի մասին:

(...) ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 404-րդ և 415-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումները չեն կրում և չեն կարող կրել բացարձակ բնույթ, քանի որ կողմերի իրավական հետևողականության ապահովման իրավական շահին հակակշիռ իրավական շահը՝ դատարանի սխալների ուղղումը, որոշակի պայմաններում կարող է էապես մեծարժեք լինել, որպես գերակա հանրային շահ: Ուստի, հիմնարար բնույթ կրող դատարանի սխալների հայրնաբերման պարագայում Վճարելի դատարանն իրավասու է դուրս գալ բողոքարկման սահմաններից և վերացնել այդ դատարանի սխալները» (տե՛ս Մխիթար Էլոյանի և մյուսների վերաբերյալ գործով Վճարելի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը):

Այսպիսով, ի թիվս այլնի, ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Վճարելի դատարանն իրավասու է դուրս գալ բողոքարկման սահմաններից և քննարկման առարկա դարձնել քրեական գործի վարույթը և (կամ) քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայության հարցը: Վճարելի դատարանն արձանագրում է, որ անձին մեղսագրվող արարքում սուբյեկտիվ

կողմի և ըստ այդմ՝ հանցակազմի բացակայությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով քրեական գործով վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք է:

Այսպիսով, ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ, մասնավորապես՝ սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասը, որը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման: Վերջիններս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված՝ համապատասխանաբար նյութական և դատավարական իրավունքի խախտումներ են և հիմք են դատական ակտը բեկանելու, քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

29. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի կիրառման հիմնավորվածության վերաբերյալ բողոքարեքի բարձրացրած իրավական հարցին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Եղիշե Արիստակեսի Ալոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 8-ի որոշումը բեկանել, Եղիշե Արիստակեսի Ալոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

29.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ/0052/06/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ պաշտպան	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ Ռ.ՀԱԿՈԲՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Գոռ Արշակի Դուրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 10-ի որոշման դեմ պաշտպան Ռ.Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայագորային քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Զաքարյանի որոշմամբ 2014 թվականի նոյեմբերի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 90758314 քրեական գործը:

2014 թվականի նոյեմբերի 29-ին Գոռ Դուրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի

177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

2014 թվականի նոյեմբերի 29-ին նախաքննության մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) Գ.Դուրյանի նկատմամբ 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորում կիրառելու վերաբերյալ:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ Գ.Դուրյանի նկատմամբ որպես խափանման միջոց 2 (երկու) ամիս ժամկետով կալանք ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է:

3. Դատախազ Կ.Նազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2014 թվականի դեկտեմբերի 10-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 29-ի որոշումը բեկանելու մասին: Մեղադրյալ Գ.Դուրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորում՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 10-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել պաշտպան Ռ.Հակոբյանը, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Գ.Դուրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն]ա, հանդիսանալով ՀՀ ՊՆ 21127 զորամասի կապի վաշտի հեռախոսային գծային վերակացու, ժամկետային զինձառայող, կոչումով շարքային, 2014 թվականի հոկտեմբեր ամսին՝ ժամը 03:00-ի սահմաններում, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտարկությամբ մեղադրյալ լինելով դուրը բացելու միջոցով ապօրինաբար մուտք է գործել ՀՀ ՊՆ 21127 զորամասի իրային պահեստ, որտեղից գաղտնի հափշտակել է զգալի չափերի հասնող՝ ընդհանուր 159.830 ՀՀ դրամ արժողությամբ մեկ հար երկրեղանոց վրան, մեկ հար փակարկական մեծ ուսապարկ, փասնմեկ հար զինվորական համազգեստ, երկու հար զինվորական թիկնոց պոնչեա և մեկ հար ձմեռային բաճկոն:

(...)

Բացի այդ, 2014 թվականի նոյեմբերի 24-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտարկությամբ,

նախնական համաձայնության գալով ՀՀ ՊՆ 21127 զորամասի ժամկետային զինձառայողներ, շարքայիներ Իվան Գեննադիի Քոչարյանի և Մկրտիչ Արմենակի Գևորգյանի հետ՝ ՀՀ ՊՆ 21127 զորամասի իրային պահեստի պարուհանի վանդակաճաղը էլեկտրական ստորակահանով բացելու միջոցով ապօրինաբար մուրք են գործել իրային պահեստ, որպեսզի գաղտնի հափշտակել են զգալի չափերի հասնող՝ ընդհանուր 358.800 ՀՀ դրամ արժողությամբ հիսուն հար զինվորական համազգեստ և այն տեղափոխել զորամասի հարակից տարածքում գրավող անտառ» (տե՛ս նյութեր, թերթ 18):

6. Գ. Դուրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի՝ 2014 թվականի նոյեմբերի 29-ի միջնորդության մեջ նշվել է. «(...) Եկարի ունենալով, որ Գոռ Արշակի Դուրյանին մեղսագրված են միջին ծանրության հանցագործություններ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, վերջինիս համար որպես պարիժ նախատեսված է ազատագրելու՝ երկուսից հինգ տարի ժամկետով, վերջինս, մնալով ազատության մեջ, կարող է խուսափել քրեական պարասխանարվությունից և վարույթն իրականացնող մարմին ներկայանալուց, խոչընդոտել նախաքննությանը (...), որոշեցի միջնորդություն հարուցել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարան (...) Գոռ Արշակի Դուրյանի (...) նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին (...)» (տե՛ս նյութեր, թերթեր 2-3):

7. Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ արձանագրել է. «(...) Միջնորդություն ներկայացնող քննիչը դատարանին հայտնեց, որ մեղադրյալը րվել է ինքնախոստովանական ցուցմունք, կամովին ներկայացրել է գողնուր, իսկ նրա կողմից քրեական պարասխանարվությունից խուսափելու և նախաքննությանը խոչընդոտելու որևէ փաստարկ չներկայացվեց:

Վերոգրյալի հիման վրա դատարանը եզրահանգում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին քննիչի հետևությունները հիմնված չեն կոնկրետ փաստական փոխաների և ողջամիտ ենթադրությունների վրա: Ուստի քննիչի հիմնավորումներն ամենևին բավարար չեն մեղադրյալ Գոռ Դուրյանի ազատության կանխավարկածը հաղթահարելու և նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար (...)» (տե՛ս նյութեր, թերթ 29):

8. Դատախազը վերաքննիչ բողոքում նշել է. «(...) Կարճ ժամանակահատվածում Գ. Դուրյանի կողմից պարբերաբար (...) հանցանքներ կատարելը բերում է ողջամիտ եզրահանգման, որ առկա է հիմնավոր կասկած, որ նա կարող է կատարել նոր հանցագործություն:

Բացի այդ, Գոռ Դուրյանը մեղադրվում է միջին ծանրության հանցագործությունների մեջ, որոնց համար նրա նկատմամբ նշանակվող վերջնական պարթի խստությունը կարող է հանդիսանալ փախուստի դիմելու հավանականությունը գնահատելու կարևոր փաստ:

Ավելին Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, մերժելով նախաքննության մարմնի կողմից 29.11.2014 թվականին մեղադրյալ Գոռ Արշակի Դուրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը, հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ մեղադրյալ Գոռ Դուրյանը նախկինում զինվորական ծառայության ընթացքում, կարարել է ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն, սակայն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով, որոշում է կայացրել փոխյալ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Այնուամենայնիվ, այդ ամենից հետո Գոռ Դուրյանը, ունենալով հանցանք կատարելու հակում, կրկին կարարել է հանցագործություններ, որոնք բացահայտվել են իրավապահ մարմինների կողմից, որպիսի պայմաններում Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը հաշվի չի առել մեղադրյալի առանձնահատկությունը և նրա կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը:

Վերոնշյալ հանգամանքներն ուղղակիորեն վկայում են անձի հանցավոր հակվածության մասին և բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ նա, վերադառնալով ծառայության վայր կամ մնալով ազատության մեջ, կունենա բավարար ժամանակ և հնարավորություն կատարելու նոր հանցանք կամ հանցանքներ (...):» (տե՛ս նյութեր, թերթեր 44-45):

9. Դատախազի կողմից Վերաքննիչ դատարան է ներկայացվել 2014 թվականի նոյեմբերի 26-ին կազմված հանցագործության մասին հաղորդում ընդունելու վերաբերյալ արձանագրությունը և վկա Ա.Պողոսյանի՝ 2014 թվականի նոյեմբերի 26-ի հարցաքննության արձանագրությունը՝ որպես Գ.Դուրյանի կալանավորման միջնորդությունը հիմնավորող նյութեր (տե՛ս նյութեր, թերթեր 60-62):

10. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում պատճառաբանել է. «Հարկ է արձանագրել նաև, որ ըստ ներկայացվածի՝ սույն գործով մեղադրյալ Գոռ Արշակի Դուրյանին վերագրվում են արարքներ՝ շինություն, զորամասի իրային պահեստ ապօրինի մուտք գործելու եղանակով, որն էլ իր հերթին ներկայացնում է պահակային ծառայության կողմից հսկվող տարածք, որպիսի պարագայում ոչ միայն չի բացառվում մեղադրանքի ծավալի հնարավոր փոփոխության, այլև այլ անձանց ևս որպես մեղադրյալ ներգրավելու հավանականությունը:

Բացի այդ, վերաքննիչ դատարանում քննիչի կողմից ներկայացվեց, որ նախաքննությանը փոխյալ է ձեռք բերվել նաև այն մասին, որ սույն գործով

մեղադրյալ Գոռ Արշակի Դուրյանի կողմից զորամասում մեկ այլ զինվորի 10.000 ՀՀ դրամով զինվորական համազգեստ վաճառելու վերաբերյալ, այդ կապակցությամբ ներկայացնելով փաստական փյույթ՝ վկա Ա. Պողոսյանի 26.11.2014թ. թվագրմամբ ցուցմունքը:

Բացի այդ, վերաքննիչ դատարանում, քննիչի կողմից ներկայացվել է 26.11.2014թ. թվագրմամբ կազմված արձանագրություն հանցագործության մասին հաղորդում ընդունելու վերաբերյալ, որում առկա է տեղեկություն Գոռ Արշակի Դուրյանի առնչության վերաբերյալ:

Տվյալ դեպքում, ըստ ներկայացվածի /25.11.2014թ. թվագրմամբ Իրային ծառայության պահեստի նյութական միջոցների ստուգման ակտով, Գոռ Արշակի Դուրյանի որպես մեղադրյալ հարցաքննության արձանագրությամբ, Մկրտիչ Գևորգյանի որպես մեղադրյալ հարցաքննության արձանագրությամբ, Իվան Քոչարյանի որպես մեղադրյալ հարցաքննության արձանագրությամբ/ առկա է հիմնավոր կասկած այն մասին, որ մեղադրյալ Գոռ Արշակի Դուրյանն առնչություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված և իրեն վերագրվող արարքներին, որոնց համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, նրան վերագրվող արարքների բնույթն ու վրանգավորության աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքներն ու առանձնահատկությունը, սույն գործով հնարավոր կատարվելիք քննչական գործողությունների ծավալը, մեղադրանքի ծավալը փոփոխելու հնարավոր հավանականությունը, բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալը, մասշտով ազատության մեջ, կարող է խոչընդոտել գործի քննությանը, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք:

Որպիսի պայմաններում, առկա են մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները, իսկ մեղադրյալ Գոռ Արշակի Դուրյանին վերագրվող արարքների բնույթն ու վրանգավորության աստիճանը ունեն էական նշանակություն՝ նրա հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում:

Քննարկվող պարագայում վերաքննիչ դատարանը հաշվի է առնում, սույն որոշմամբ վերը շարադրված հանգամանքներն, այդ թվում նաև սույն գործով հնարավոր կատարվելիք քննչական գործողությունների որոշակի ծավալի իրականացման պայմաններում, գործի քննության ներկա փուլում, մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը բացառելու անհրաժեշտությունը:

Հերևարար ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի կողմից միջնորդությունը մերժելու վերաբերյալ պատճառաբանությունն ըստ էության հիմնավորված չէ և, կոնկրետ դեպքում, վարույթն

իրականացնող մարմնի միջնորդությունը մերժելու հիմք համարվել չի կարող» (տե՛ս նյութեր, թերթեր 83-84):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

11. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերի պնդմամբ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոք բերած անձը նշել է, որ Գ.Դուրյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին միջնորդության մեջ նախաքննության մարմնի կողմից վկայակոչվել են կալանավորման հետևյալ հիմքերը. ազատության մեջ մնալով՝ վերջինս կարող է խուսափել քրեական պատասխանատվությունից, վարույթն իրականացնող մարմին ներկայանալուց և խոչընդոտել նախաքննության իրականացմանը: Նշվածներից բացի՝ որևէ այլ հիմք միջնորդությունը, դրան կից ներկայացված դատավարական փաստաթղթերը չեն պարունակել, ինչպես նաև միջնորդության քննության ընթացքում չի ներկայացվել Առաջին ատյանի դատարան:

Մինչդեռ դատախազի վերաքննիչ բողոքում նշվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կալանավորման նոր հիմք, այն է՝ ազատության մեջ մնալու դեպքում Գ.Դուրյանը կարող է նոր հանցանք կատարել: Վերաքննիչ դատարանը, իր հերթին, դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում պահանջել է նոր նյութեր:

12. Արդյունքում Վերաքննիչ դատարանը, որպես Գ.Դուրյանին կալանավորելու հիմք, իր դատական ակտում վկայակոչել է նաև նրա կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու հավանականությունը՝ նշելով, որ Գ.Դուրյանին առաջադրված մեղադրանքի ծավալը հետազայում կարող է փոփոխվել: Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է եկել՝ հղում կատարելով ներկայացված լրացուցիչ նյութերին, որոնք, սակայն, Առաջին ատյանի դատարան չեն ներկայացվել և չեն քննարկվել:

Նման պայմաններում, ըստ բողոքի հեղինակի, Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից, վիճարկվող դատական ակտի օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումն իրականացրել է ոչ թե Առաջին ատյանի դատարան ներկայացված միջնորդության մեջ նշված հիմքերի և դրանք հիմնավորող փաստաթղթերի սահմաններում, այլ կալանավորման նոր հիմքի և այն հիմնավորող լրացուցիչ նյութերի հիման վրա՝ փաստացի հանդես գալով որպես Առաջին ատյանի դատարան: Ըստ էության, Վերաքննիչ դատարանը նոր հիմքով

կայացրել է անձին կալանավորելու մասին նոր որոշում, հետևաբար չի գործել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

13. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 29-ի որոշմանը և մեղադրյալ Գ.Դուրյանին ազատել կալանքից:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճարելի դատարանը գտնում է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ ընտրելը մերժելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննիչ վերանայման սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

15. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված է արդյոք կալանքը որպես խափանման միջոց ընտրելը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և կալանավորում կիրառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը:

16. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան (...) օրենքով սահմանված կարգով (...):»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ և 285-րդ հոդվածների 1-ին մասերը համապատասխանաբար սահմանում են.

«Կալանավորումն օրենքով նախատեսված տեղերում և պայմաններում անձին կալանքի տակ պահելն է (...):»:

«(...) Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարանի խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը (...):»:

Մեջբերված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը նրա՝ Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված հիմնական և անքակտելի իրավունքներից է, ինչը սահմանափակելիս անհրաժեշտ է ելնել բացառապես նրա իրավունքները հարգելու, նրա հիմնական իրավունքը բովանդազրկելու անթույլատրելիության սկզբունքներից (*mutatis mutandis* տե՛ս Ա.Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 18-րդ կետը): Մարդու ֆիզիկական ազատությունը կարելի է սահմանափակել ոչ այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և դրա կամայական ու անհիմն սահմանափակումները հնարավորինս բացառելու նպատակով գործունե երաշխիքների առկայության անհրաժեշտությունը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, քրեական գործի առկայություն, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով (ՎԲ-132/07, ԱՎԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10 և այլն):

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը սահմանում են. *«1. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը*

երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատարանի որոշման դեմ բողոքները դատարանի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի կողմից բերվում են վերաքննիչ դատարան՝ անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով:

3. Վերաքննիչ դատարանը, սրանալով բողոքը, անհապաղ պահանջում է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը և դատարանի որոշումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ «1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական սրուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:

2. Կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը դատարանն սրուգում է ընտրված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութերն սրանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում:

(...)

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանը հանդես է գալիս որպես առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը վերանայելու իրավասությանը օժտված դատական ատյան: Մասնավորապես, վերաքննիչ դատարանը դատական վերանայման գործառույթի շրջանակներում բացահայտում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ ընտրելը մերժելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու մասին որոշում կայացնելիս առաջին ատյանի դատարանի կողմից օրենքի բոլոր պահանջների պահպանման, ինչպես նաև կալանավորման հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ հետևությունների իրավաչափության հարցերը: Ընդ որում, ստանալով բողոքը՝ անհապաղ պահանջում է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը և դատարանի որոշումը, իսկ դատական ստուգումն իրականացնում է ընտրված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութերն առաջին ատյանի դատարանից ստանալուց հետո երեք օրվա ընթացքում:

18. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական (...) մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրբեղծված անկախ ու անաչտո դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) [Դ]ատարանը (...) պարտավոր (...) [է] պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

Մեջբերված նորմերի շրջանակներում Վճարելի դատարանը հարկ է համարում անդրադառնալ առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս վերաքննիչ դատարանի իրավասությունների սահմաններին:

Խնդրո առարկայի հետ կապված՝ Վճարելի դատարանը Ա.Կարախանյանի գործով որոշման շրջանակներում ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) ՀՀ վերաքննիչ դատարանը հանդես է գալիս որպես առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի օրինականության և հիմնավորվածության սրուգման իրավասությամբ օժտված դատարան, որն առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է, որպես կանոն, վերջինիս կողմից հերազդոված փաստական փոխաների հիման վրա: Այսինքն, ամբողջ ծավալով գործի քննություն, ինչպես նաև գործով ներկայացված բոլոր ապացույցների հերազդություն իրականացնելու լիազորություն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանին վերապահված չէ, հերևաբար, եթե վերաքննիչ դատարանը փորձում է դուրս գալ իր լիազորությունների շրջանակից, այն սկսում է գործել որպես առաջին ատյանի դատարան, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով անթույլատրելի է» (տե՛ս Ա.Կարախանյանի գործով Վճարելի դատարանի՝ 2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԵԲԲԴ/0569/01/08 որոշման 17-րդ կետը):

19. Վերահաստատելով և զարգացնելով Ա.Կարախանյանի գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ կալանք ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայման ծավալը կալանքի ընտրության կամ դրա ժամկետի երկարացման նպատակով առաջին ատյանի դատարան ներկայացված միջնորդության քննության (հիմնական քննության) համեմատությամբ ավելի սահմանափակ է, հետևաբար վերաքննիչ դատարանի իրավասությունը չի կարող ավելի լայն լինել, քան այն քննած առաջին ատյանի դատարանինը: Վերաքննիչ դատարանում դատական վերանայման առարկան սահմանափակվում է միայն առաջին ատյանի դատարանի դատական ակտի

օրինականության և հիմնավորվածության ստուգմամբ, որն էլ պետք է իրականացվի միայն առաջին ատյանի դատարանում քննության ենթարկված կալանավորման հիմքերի, հետազոտված փաստերի կամ ապացույցների շրջանակներում:

Վերոնշյալ դիրքորոշումը բխում է դատարանների միջև գործառության կապն ապահովելու տրամաբանական պահանջից: Մասնավորապես, դատարանակազմական խնդիրներով պայմանավորված՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները իրականացնում են տարբեր դատավարական գործառույթներ և համապատասխանաբար օժտված են դրանց կատարումն ապահովող տարբեր լիազորություններով: Հետևաբար մեկ ատյանի կողմից մյուսի լիազորությունների յուրացումը կամ միմյանց փոխարինումն անթույլատրելի է և հանդիսանում է օրինականության սկզբունքի կոպիտ խախտում: Այսպես՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդության քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից որոշման կայացումը, իսկ վերաքննիչ դատարանի կողմից այդ որոշման վերանայումն իրականացվում է մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության և ստորադաս դատարանի որոշումների ստուգման ու վերանայման գործառույթների շրջանակներում (տե՛ս *mutatis mutandis* Ա.Ղավալյանի գործով Վճարելի դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0225/06/08 որոշման 22-րդ կետը):

20. Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշման դատական վերանայման սահմանները կանխորոշվում են առաջին ատյանի դատարանում քննության առարկա դարձած կալանավորման հիմքերի, դրանք հաստատող փաստական տվյալների շրջանակներով, որոնց հիման վրա էլ վերաքննիչ դատարանը ստուգում է վերանայվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնում օրենքով նախատեսված որոշումներից մեկը՝ կալանքը վերացնելու և անձին ազատելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մաս):

Հակառակ պարագայում, երբ քննարկման է ենթարկվում կալանավորման այնպիսի նոր հիմք և այն հաստատող փաստական նոր տվյալ, որն առաջին ատյանի դատարանում չի հետազոտվել, վերաքննիչ դատարանը դուրս է գալիս իր լիազորությունների շրջանակներից. նման դեպքերում վերաքննիչ դատարանը ոչ թե իրականացնում է առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգում, այլ կալանավորման նոր հիմքի և այն հաստատող նոր նյութի շրջանակներում կայացնում է կալանավորման մասին նոր որոշում՝ փաստացի

հանդես գալով որպես առաջին ատյանի դատարան, ինչն անթույլատրելի է և խախտում է դատարանների միջև առկա գործառնության լայն կապը: Այդպիսի իրավիճակում վերաքննիչ դատարանը չի գործում որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: Վերջին դիրքորոշումը հիմնավորվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված այն դիրքորոշմամբ, որ իր իրավասությունների սահմանազանցում թույլ տված դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի կարող հանդիսանալ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» (տե՛ս *Sokurenko and Strygun v. Ukraine* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2006 թվականի հուլիսի 20-ի վճիռը, գանգատներ թիվ 29458/04 և 29456/04, կետ 28):

20.1. Վճռարեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքներ, վարույթն իրականացնող մարմինը կարող է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով դիմել առաջին ատյանի դատարան, այլ ոչ թե վերաքննիչ բողոք ներկայացնել: Ընդ որում, նշված նորմի իմաստով որպես նոր հանգամանք կարող է հանդիսանալ ոչ միայն կալանավորման սկզբնական միջնորդության մեջ չնշված, առաջին ատյանի դատարանում քննության առարկա չդարձած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված կալանավորման նոր հիմքի առաջացումը, այլև սկզբնական միջնորդությամբ ներկայացված, առաջին ատյանի դատարանում արդեն իսկ հետազոտված հիմքի առկայությունը հավաստող նոր նյութերի ու տվյալների երևան գալը:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Գ.Դուրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմնի միջնորդության մեջ որպես կալանավորման հիմք նշվել է քրեական պատասխանատվությունից և վարույթն իրականացնող մարմին ներկայանալուց խուսափելու, ինչպես նաև նախաքննությանը խոչընդոտելու հավանականությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից որևէ փաստարկ չի ներկայացվել Գ.Դուրյանի կողմից քրեական պատասխանատվությունից խուսափելու և նախաքննությանը խոչընդոտելու վերաբերյալ: Արդյունքում եզրահանգել է, որ քննիչի հետևությունները հիմնված չեն կոնկրետ փաստական տվյալների ու ողջամիտ ենթադրությունների վրա, և մերժել է ներկայացված միջնորդությունը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ դատախազի կողմից բերված վերաքննիչ բողոքում նշվել է, որ գործում առկա տվյալներն ուղղակիորեն վկայում են, որ Գ.Դուրյանը, մնալով ազատության մեջ, կարող է

կատարել նոր հանցանք կամ հանցանքներ: Ի հիմնավորումն վերոնշյալի՝ դատախազի կողմից Վերաքննիչ դատարան է ներկայացվել 2014 թվականի նոյեմբերի 26-ին կազմված հանցագործության մասին հաղորդում ընդունելու վերաբերյալ արձանագրությունը և վկա Ա.Պողոսյանի՝ 2014 թվականի նոյեմբերի 26-ի հարցաքննության արձանագրությունը (տե՛ս սույն որոշման 8-9-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելը մերժելու մասին որոշումը, ի թիվս այլնի, մատնանշել է Վերաքննիչ դատարան ներկայացված՝ 26.11.2014թ. թվագրմամբ կազմված հանցագործության մասին հաղորդում ընդունելու վերաբերյալ արձանագրությունը և 25.11.2014թ. թվագրմամբ վկա Ա.Պողոսյանի հարցաքննության արձանագրությունը, իսկ արդյունքում եզրահանգել, որ Գ.Դուրյանը, մնալով ազատության մեջ, կարող է խոչընդոտել գործի քննությանը, *կատարել քրեական օրենքով չթույլատրված նոր արարք* (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

22. Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքում վարույթն իրականացնող մարմինը մատնանշել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կալանավորման նոր հիմք, որը բացակայել է Գ.Դուրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի կողմից ներկայացված միջնորդության մեջ: Մասնավորապես, դատախազը փաստարկել է, որ Գ.Դուրյանը, մնալով ազատության մեջ, կարող է կատարել նոր հանցանք, մինչդեռ Առաջին ատյանի դատարան ներկայացված միջնորդության մեջ նշվել է քրեական պատասխանատվությունից և վարույթն իրականացնող մարմին ներկայանալուց խուսափելու, ինչպես նաև նախաքննությանը խոչընդոտելու հավանականության մասին: Բացի այդ, Վերաքննիչ դատարան են ներկայացվել նոր հիմքի առկայությունը հիմնավորող նոր նյութեր:

Իր հերթին Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելով և Գ.Դուրյանի նկատմամբ կալանավորում կիրառելով, մատնանշել է նոր հիմք և հիմնվել նոր նյութերի վրա, որոնք Առաջին ատյանի դատարան չեն ներկայացվել և քննության առարկա չեն դարձվել:

23. Նախորդ կետում կատարված վերլուծությունը գնահատելով սույն որոշման 16-20-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ստորադաս դատարանում քննության չենթարկված նոր հիմքով և այն հիմնավորող նոր նյութերով Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելով և մեղադրյալի նկատմամբ կալանավորում կիրառելով, դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից՝ փաստացի գործելով որպես առաջին ատյանի դատարան, ինչն անթույլատրելի է

դատարանների միջև գործառության կապի տրամաբանական բնույթն ապահովելու տեսանկյունից:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու և կալանավորում կիրառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ:

24. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ և 7-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա բեկանելու Վերաքննիչ դատարանի որոշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 398-րդ, 406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Գոռ Արշակի Դուրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 29-ի դատական ակտին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

30.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0867/07/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ
դատախազ ներկայացուցիչ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
Ս.ԶԱՂԻՆՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի դեկտեմբերի 18-ի որոշման դեմ դիմող «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ) ներկայացուցիչ Ս.Զաղինյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում ՀՀ

քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 83113313 քրեական գործը՝ «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի տնօրեն Գագիկ Կարապետյանի կողմից անվճարունակության հատկանիշներ կանխամտածված ստեղծելու դեպքի առթիվ:

2. 2014 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ ֆինանսների նախարարության քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ Ա.Ասատրյանը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով թույլատրել կատարել խուզարկություն Երևան քաղաքի Արելյան 6/1 և 6/9 հասցեներում՝ վարձատու «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի և վերջինիս կողմից «Ակտիվ Ինվեստ», «Վերեքս Թեքնոլոջիս», «Այ-Այ-Ջի», «Քրիստոթամ», «Բումերանգ Սոֆտուեր», «Ջորջայնդեր կարիերայի կենտրոն», «Մարգասոֆտ», «Աստրոնափս», «Մեդիապլան», «Բի Էմ Բի Փարթներս», «Ապաթեոզ», «Գամ Քոնսալթ», «Այ Թի Փեն», «Հայթայանի Աստղ», «Ավա Աուդիո Փարթներս», «ԱՎԳՄ», «Բելենս Շիթ», «Դարմանթեսթ Լաբորատորիս», «Հացի արտադրական լաբորատորիա», «Սի Այ Թի», «Լայֆ Այ Թի», «Քարտելիս», «ԱԵԿՄ Գրուպ», «Գեյմս Արտ», «Կանչ. ԱՄ», «Ֆիդեմ», «Մորբիթ», «Բետանթթ», «Արգալ», «Արմենիան Դեյթաքոմ Քամփնիե, «Էներջայզ Գլոբալ Սերվիսիզե, «Էյջթի Էլեքթրոնիքս», «Լայթ ընդ Մոր», «Ինթեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին և «Օգմա Ափլիքեյշնզ» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ տրված սենյակներում քննությանը հետաքրքրող փաստաթղթեր, իրեր և առարկաներ հայտնաբերելու ու ազդարարելու համար:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը և թույլատրվել է կատարել խուզարկություն «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի և վերը նշված իրավաբանական անձանց վարձակալությամբ տրված սենյակներում:

3. «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ս.Ջաղիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 18-ի որոշման դեմ վճռարեկ բողոք է բերել «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ս.Ջաղիսյանը:

Վճռարեկ դատարանի 2015 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ս.Ջաղիսյանի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Նախաքննության մարմնի 2014 թվականի նոյեմբերի 19-ի՝ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) համաձայն՝ «Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲ ընկերությունը Երևան քաղաքի Արելյան 6/1 և 6/9 հասցեներում գրնվող շինությունների փարածքները վարձակալությամբ փրամադրել է մի քանի փասնյակ կազմակերպությունների, այդ թվում՝ [թվով երեսունհինգ իրավաբանական անձանց], որոնք նշված շինության փարածքում իրականացրել են փնտրական գործունեություն:

(...) Երևան քաղաքի Արելյան 6/1 և 6/9 հասցեներում գրնվող վարչական փարածքում գործունեություն իրականացնող վերը նշված ընկերություններում կարող են լինել քրեական գործի համար նշանակություն ունեցող փաստաթղթեր՝ հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրեր, վճարման հանձնարարագրեր, սկզբնական հաշվապահական փաստաթղթեր, ինչպես նաև այլ առարկաներ՝ էլեկտրոնային կրիչներ, համակարգիչներ, սկավառակներ, կնիքներ, ուարի (...) [որոշեցի] միջնորդություն հարուցել [Առաջին արյանի] դատարանին՝ (...) թույլատրել (...) խուզարկություն կատարել Երևան քաղաքի Արելյան 6/1 և 6/9 հասցեներում՝ վարձարու «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲ ընկերության և վերջինիս կողմից [թվով երեսունհինգ իրավաբանական անձանց] վարձակալությամբ փրված սենյակներում՝ քննությամբ հետաքրքրող փաստաթղթեր, իրեր և առարկաներ հայտնաբերելու և ազդարարելու համար» (տես նյութեր, թերթ 2):

6. Առաջին ատյանի դատարանը, 2014 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ բավարարելով նախաքննության մարմնի միջնորդությունը, պատճառաբանել է. «Ուսումնասիրելով միջնորդությունը, ներկայացված նյութերը և հաշվի առնելով, որ քրեական գործով բավարար հիմքեր կան ենթադրելու, որ Երևան քաղաքի Արելյան 6/1 և 6/9 հասցեներում վարձարու «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲ ընկերության և վերջինիս կողմից [թվով երեսունհինգ իրավաբանական անձանց] վարձակալությամբ փրված սենյակներում կարող են հայտնաբերվել քրեական գործի համար նշանակություն ունեցող առարկաներ՝ դատարանը գրնում է, որ քննիչի միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման: (...)» (տես նյութեր, թերթ 121):

7. Վերաքննիչ դատարանն իր 2014 թվականի դեկտեմբերի 18-ի որոշման մեջ արձանագրել է. «Հարկ է նշել, որ քննարկվող պարագայում, վարույթն իրականացնող մարմնի գործողություններն (կոնկրետ դեպքում՝

ներկայացված միջնորդությամբ համապարասիան գործողություններ կատարելու թույլտվություն արանալու վերաբերյալ) ուղղված են եղել սույն գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելուն, ըստ էության պայմանավորված են եղել գործի քննության օբյեկտիվությունը, բազմակողմանիությունը և լրիվությունն ապահովելու անհրաժեշտությամբ:

(...)Եման պայմաններում (...) վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի կողմից նյութական և դատավարական նորմերի այնպիսի խախտումներ թույլ չեն տրվել, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, կոնկրետ դեպքում, առաջին արյանի դատարանն ըստ էության հանգել է վերջնական ճիշտ հետևության, հետևաբար վիճարկվող դատական ակտը պետք է թողնել օրինական ուժի մեջ, իսկ ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել: (...)» (տե՛ս նյութեր, թերթ 156):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետի, 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 225-րդ և 279-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոնշյալ փաստարկների՝ բողոք բերած անձը նշել է, որ քրեադատավարական օրենքի մի շարք հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր բնակարան խուզարկվում է դատարանի որոշմամբ: Իսկ միմյանց հետ որևէ ձևով կապ չունեցող ընկերություններում խուզարկություն կատարելու անհրաժեշտության դեպքում դատարանը պետք է կայացնի առանձին որոշումներ, որպեսզի չտոնահարի յուրաքանչյուր ընկերության ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված բնակարանի անձեռնմխելիության իրավունքը:

Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը մեկ որոշմամբ տվել է շուրջ 30 միմյանց հետ որևէ կապ չունեցող ընկերություններում խուզարկություն կատարելու թույլտվություն այն պայմաններում, երբ օրենսդրությունը թույլատրում է դատարանին մեկ դատական նիստում միայն մեկ բնակարանի մասով քննարկել խուզարկություն կատարելու թույլտվություն տալու հարց:

Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ մեկ որոշմամբ իրար հետ առնչություն չունեցող կազմակերպություններում խուզարկություն կատարելով՝ խախտվում է այդ իրավաբանական անձանցից յուրաքանչյուրի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները, որը կարող է անբարենպաստ հետևանքներ առաջացնել այդ կազմակերպությունների համբավի, արժանապատվության և հետագա գործունեության համար:

9. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը՝ վերացնելով Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 19-ի դատական ակտը կամ գործն ուղարկել նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանի կողմից մեկ որոշմամբ «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի և թվով երեսունհինգ այլ իրավաբանական անձանց սենյակներում խուզարկություն կատարելը թույլ տալու արդյունքում արդյոք խախտվել են «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի իրավունքները կամ օրինական շահերը:

11. ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ՝ մուտք գործել նրա բնակարանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետի համաձայն՝ «(...) «Բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է (...) ծառայողական անձնական աշխատասենյակը (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար:

(...)

3. Բնակարանի խուզարկությունը կատարվում է միայն դատարանի որոշմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածը սահմանում է՝ «(...) 2. Խուզարկություն (...) կատարելուց առաջ քննիչը պարտավոր

է անձին, որի մոտ կատարվում է խուզարկություն (...), ծանոթացնել որոշմանը: Այդ մասին նրանից վերցվում է ստորագրություն:

(...)

4. Քննիչը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի չհրապարակվեն (...) խուզարկության փաստը, ինչպես նաև [դրա] արդյունքները և խուզարկվողի անձնական կյանքի հանգամանքները:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է՝ «Դատարանում վարույթն սկսելու հիմք է ծառայում հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի պատճառարանված որոշման մեջ պարունակվող միջնորդությունը՝ համապատասխան գործողություններ կատարելու մասին թույլտվություն ստանալու համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի համաձայն՝ «1. Միջնորդությունները քննում է դատավորը միանձնյա, դոնփակ դատական նիստում՝ միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ:

(...)

Բնակարանի խուզարկության միջնորդությունները պետք է քննվեն անհապաղ»:

Մեջբերված սահմանադրաիրավական և քրեադատավարական նորմերն ամրագրում են անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը և նախատեսում դրա ապահովման երաշխիքները: Մասնավորապես՝ որպես այդպիսի երաշխիք է հանդես գալիս բնակարանի խուզարկության կատարումը նախնական դատական վերահսկողության օբյեկտների շարքում նախատեսելը: Այսպես՝ բնակարանի խուզարկությունը կարող է կատարվել բացառապես դատարանի որոշման հիման վրա: Ընդ որում, օրենսդիրը խստիվ կանոնակարգել է ինչպես տվյալ քննչական գործողության իրականացման, այնպես էլ դրա նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության ընթացակարգերը:

12. «Բնակարանի խուզարկություն» քննչական գործողության, ինչպես նաև դրա նկատմամբ դատական վերահսկողությունը կանոնակարգող նորմերի բովանդակությունից հետևում է, որ առկա չէ հստակ կարգավորում մեկ որոշման շրջանակներում դատարանի կողմից թույլատրվող խուզարկությունների քանակի առնչությամբ:

Մինչև նույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ քննարկվող քննչական գործողության բնույթով և նպատակով պայմանավորված՝ օրենսդիրը սահմանել է այն կատարելու թույլտվություն ստանալու մասին նախաքննության մարմնի միջնորդության քննարկման անհապաղության և դոնփակության վերաբերյալ պահանջներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդված),

որոնք երաշխավորում են տվյալ քննչական գործողության կատարման արդյունավետությունը: Մասնավորապես՝ միջնորդությունը քննվում է դռնփակ և միայն վարույթն իրականացնող մարմինների (դատավորի, միջնորդություն ներկայացրած անձի և, ըստ անհրաժեշտության, դատախազի) մասնակցությամբ՝ դրա կատարման գաղտնիությունն ապահովելու նպատակով: Միջնորդությունը բավարարելու մասին դատարանի որոշումը հրապարակային է դառնում քննչական գործողությունը կատարելուց անմիջապես առաջ՝ քննիչի կողմից անձին, որի մոտ կատարվում է խուզարկությունը, որոշմանը ծանոթացնելու արդյունքում: Գռնփակ քննություն իրականացնելու պահանջի նպատակի հետ սերտորեն փոխկապակցված է դրա անհապաղ քննարկման պահանջը: Այդպիսի պահանջների նախատեսումը միտված է խուզարկության կատարման հանկարծակիությունն ապահովելուն, արդյունքում՝ գործի քննության համար նշանակություն ունեցող առարկաները, փաստաթղթերը և այլ նյութերը համապատասխան անձանց կողմից ոչնչացվելու կամ թաքցվելու, ինչպես նաև հետախուզվող, հանցագործության մեջ կասկածվող անձանց թաքնվելու հավանականությունը նվազեցնելուն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած ուղղակի օրենսդրական արգելքի բացակայությանը նպատակահարմար չէ մեկ որոշմամբ տարբեր անձանց պատկանող բնակարաններում խուզարկություններ կատարելու թույլտվություն տալը, քանի որ այդ դեպքում հնարավոր կլինի իրավիճակ, երբ առաջին խուզարկությունը սկսելու ժամանակ հրապարակվեն նաև մնացած անձանց բնակարաններում խուզարկություն կատարելու և դրա նպատակի վերաբերյալ փաստերը, ինչը կնվազեցնի տվյալ քննչական գործողության արդյունավետությունը: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարացված կլինի, եթե վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր անձին պատկանող բնակարանի կապակցությամբ ներկայացնի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու առանձին միջնորդություն, իսկ դատարանը, իր հերթին, յուրաքանչյուր անձի մասով քննարկի խուզարկության թույլատրելիության հարցը և կայացնի առանձին որոշում:

13. Գործի նյութերից երևում է, որ նախաքննության մարմինը 2013 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ է հարուցել «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի տնօրեն Գ.Կարապետյանի կողմից անվճարունակության հատկանիշներ կանխամտածված ստեղծելու դեպքի առթիվ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի և նրա կողմից թվով երեսունհինգ իրավաբանական անձանց

վարձակալությանը տրված տարածքներում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու համար:

Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ բավարարել է ներկայացված միջնորդությունը և թույլատրել խուզարկություն կատարել Երևան քաղաքի Արեւյան 6/1 և 6/9 հասցեներում վարձատու «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲ ընկերության և վերջինիս կողմից «Ակտիվ Ինվեստ», «Վերեքս Թեքնոլոջիս», «Այ-Այ-Ջի», «Քրիստոթամ», «Քուստրանգ Սոֆտուեր», «Ջորջայնդեր կարիերայի կենտրոն», «Մարգաստֆտ», «Աստրոնավիս», «Մեդիապլան», «Բի Էմ Բի Փարթներս», «Ապաթեոզ», «Գամ Քոնսալթ», «Այ Թի Փեն», «Հայթայանի Աստղ», «Ավա Աուդիտ Փարթներս», «ԱՎԳՄ», «Բելենս Շիթ», «Դարմանթեսթ Լաբորատորիս», «Հացի արտադրական լաբորատորիա», «Սի Այ Թի», «Լայֆ Այ Թի», «Քարտեյս», «ԱԵԿՄ Գրուպ», «Գեյմս Արտ», «Կանչ ԱՄ», «Ֆիդեն», «Մոբիթ», «Բետանեթ», «Արգալ», «Արմենիան Դեյթաքոմ Քամինի», «Էներջայզ Գլոբալ Սերվիսիզ», «Էյջթի Էլեքթրոնիքս», «Լայթ ընդ Մոր», «Ինթեք» ՍՊ ընկերություններին և «Օգնա Ավիլիքեյշնզ» ՓԲ ընկերությանը վարձակալությանը տրված սենյակներում քննությանը հետաքրքրող փաստաթղթեր, իրեր և առարկաներ հայտնաբերելու ու ազդավելու համար (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Դիմողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի հիման վրա ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ գտնելով, որ դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանի կողմից նյութական և դատավարական նորմերի այնպիսի խախտումներ թույլ չեն տրվել, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ չնայած Առաջին ատյանի դատարանը կայացրել է մեկից ավելի անձանց բնակարաններում խուզարկություն կատարելը թույլ տալու մասին մեկ որոշում, սակայն դրա արդյունքում ինքնին չի խախտվել բողոքաբերի՝ որպես խուզարկվող անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, քանի որ դատարանի որոշման առկայությունը, անկախ դրանում այլ բնակարանների խուզարկության թույլտվության առկայության փաստից, արդեն իսկ օրենքի՝ բնակարանի խուզարկությունը դատարանի որոշմամբ կատարելու պահանջի պահպանում է, իսկ բողոքաբերի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը խախտված լինելու, ինչպես նաև նրա համբավի և հետագա

գործունեության համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու վերաբերյալ փաստեր սույն գործի նյութերում առկա չեն:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից մեկ որոշմամբ «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի և թվով երեսունհինգ այլ իրավաբանական անձանց սենյակներում խուզարկություն կատարելը թույլ տալու արդյունքում չեն խախտվել «Հաշվողական Տեխնիկայի և Ինֆորմատիկայի ԳՀԻ» ՓԲԸ-ի իրավունքները կամ օրինական շահերը:

15. Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով անձը կարող է վճարել բողոք ներկայացնել բողոքարկվող դատական ակտի՝ **միայն իր համար անբարենպաստ մասի դեմ:**

Վերոնշյալ նորմի բովանդակությունից հետևում է, որ վճարելի բողոքարկման միջոցով դատական պաշտպանությունը գործադրելի է այն դեպքում, երբ խախտվել կամ կարող են խախտվել անձի (ներկայացվողի) իրավունքները կամ օրինական շահերը: Հետևաբար անձը վճարելիության կարգով կարող է բողոքարկել դատական ակտը միայն իրեն (ներկայացվողին) վերաբերելի մասով և պայմանով, որ այդ ակտով խախտվել են կամ կարող են խախտվել նրա (ներկայացվողի) իրավունքները կամ օրինական շահերը:

Վերոշարադրյալի լույսի ներքո Վճարելի դատարանն արձանագրում է, որ մնացած իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման վերաբերյալ բողոքաբերի փաստարկները (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը) քննարկման առարկա չեն կարող դարձվել, քանի որ բողոքաբերն օրենքով սահմանված կարգով լիազորված չէ նրանց անունից բողոք բերել: Հետևաբար Վճարելի դատարանը գտնում է, որ սույն բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներում ստորադաս դատարանները թույլ չեն տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի վճարելի բողոքը պետք է մերժել, իսկ բողոքարկվող դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Խուզարկություն կատարելու թույլտվության վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 19-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

31.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԴՅ/0001/11/14

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ
դիմողի ներկայացուցիչ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ԲԱԴԱԼՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2014 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման դեմ դիմող «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչներ Մ.Ավագյանի և Ա.Բադալյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի հուլիսի 3-ին «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ) ներկայացուցիչ Մ.Ավագյանը բողոք է ներկայացրել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական հետապնդում

չիրականացնելու մասին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Վարդենիսի քննչական բաժանմունքի պետ Գ.Մարգարյանի՝ 2014 թվականի հունիսի 13-ի որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում):

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի բողոքը մերժվել է:

2. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 3-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման դեմ վճարելի բողոք են բերել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ Մ.Ավագյանը և Ա.Բաղայանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Վարդենիսի քննչական բաժանմունքի պետ Գ.Մարգարյանի 2014 թվականի հունիսի 13-ի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման համաձայն՝ *«Որոշման (...) օրինակ/ն/ ուղարկել (...) փուժողի ներկայացուցիչ Միքայել Ավագյանին՝ (...) պարզաբանելով սույն որոշման բողոքարկման կարգը»* (տե՛ս նյութեր, հատոր 1, էջ 25-31):

5. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Վարդենիսի քննչական բաժանմունքի պետ Գ.Մարգարյանի 2014 թվականի հունիսի 13-ի՝ թիվ 7/27-1-973 ուղեկցական գրության համաձայն՝ *«Միքայել Լեոնիդի Ավագյանին (...) ուղարկվում է Վարդենիսի քննչական բաժնում քննվող թիվ 31106713 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման օրինակը: Միաժամանակ պարզաբանվում է, որ որոշման հետ համաձայն չլինելու դեպքում կարող եք բողոքարկել վերադաս դատախազին կամ դատարան»* (տե՛ս նյութեր, հատոր 1, էջ 7):

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 2-ի որոշման համաձայն՝ *«(...) բողոքարկերի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վիճարկելու արտահայտված դատախազին բողոքարկելու կարգը, ուստի [Առաջին ատյանի դատարանն] արձանագրում է, որ առանց անդրադառնալու բողոքի*

հիմքերին պետք է կայացնել այն մերժելու մասին որոշում» (տե՛ս նյութեր, հատոր 1, էջ 61-63):

7. 2014 թվականի հոկտեմբերի 2-ին Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ Ս.Շոյանի՝ Վերաքննիչ դատարանին ուղղված գրության համաձայն՝ «Ուղարկվում է ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված թիվ 31106713 քրեական գործով փուժող /արդշինհնավեսարանկ/ ՓԲԸ-ի ներկայացուցիչ Մ.Ավագյանի միջնորդություն-բողոքը՝ իր կողմից բերված վերաքննիչ բողոքին կցելու և համապետ ընթացքը լուծելու համար» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, էջ 24):

8. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման համաձայն՝ «(...) քրեական գործի նախաքննությանը ձեռք բերված ապացույցները գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցության մեջ գործի լուծման համար քաղաքարության տեսանկյունից, թույլ են տալիս հիմնավոր համարել, որ Ա.Մկրտչյանը տեղյակ չի եղել, ինչպես նաև որևէ առնչություն ու մասնակցություն չի ունեցել Օ.Ավագյանի կողմից կատարված չարաշահումներին, Օ.Ավագյանի ցուցմունքներն այս մասով անարժանահավատ են, պարասխանատվությունը և պարիժը մեղմացնելու, իրեն արդարացնելու նպատակ են հետապնդում, բացի այդ, Ա.Մկրտչյանի մեղավորությունը հիմնավորելու ուղղությամբ կատարվել են անհրաժեշտ հնարավոր բոլոր քննչական և դատավարական գործողությունները, սակայն, բացի Օ.Ավագյանի ցուցմունքից՝ այլ ապացույցներ ձեռք չեն բերվել, հերքվել են Օ.Ավագյանի ցուցմունքում այս մասով նշված փաստերը, ինչպես նաև սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

Ըստ բողոքաբեր կողմի հայտարարության՝ հարցի վերաբերյալ առկա է նաև քաղաքացիական հայց՝ ուղղված վնասի վերականգնմանը: Պատճառված 6 մլն 700 հազ. դրամ վնասը մաս-մաս վերականգնվել է:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ուսումնասիրելով վարույթում առկա նյութերը գալիս է հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռնարկվել են օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, օբյեկտիվորեն գնահատվել են գործով ձեռք բերված, ինչպես նաև բողոքաբերի ներկայացրած ապացույցները» (տե՛ս նյութեր, հատոր 2, էջ 62-71):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքո-հիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձինք գտել են, որ ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Բողոքաբերների պնդմամբ՝ ստորադաս

դատարանների որոշումներն անհիմն են, չպատճառաբանված և հակասում են ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-844, Վճարելի դատարանի թիվ ՄԴ3/0045/01/13, թիվ ԵԲՐԴ/0295/01/08, թիվ ԵԿԴ/0081/01/11, թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշումներին:

Ի հիմնավորումն իրենց վերոշարադրյալ փաստարկների՝ բողոքի հեղինակները փաստել են, որ Առաջին աստիճանի դատարանը դիմողի ներկայացուցչի բողոքը մերժել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ «*եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից*» պահանջի խախտման պատճառաբանությամբ, մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-844 որոշմամբ այդ պահանջը հակասահմանադրական է ճանաչվել: Վերաքննիչ դատարանն իր հերթին իրականացրել է բողոքի՝ ըստ էության քննություն՝ դրանով իսկ դուրս գալով վերաքննության սահմաններից:

10. Բողոքաբերները նշել են նաև, որ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել որոշ փաստական հանգամանքների վերաբերյալ: Մասնավորապես, ըստ բողոք բերած անձանց՝ գործում առկա նյութերով հերքվում են ստորադաս դատարանի դատողություններն առ այն, որ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ին պատճառված վնասը վերականգնվել է:

Բացի այդ, բողոքի հեղինակները գտել են, որ վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկների առկայության պայմաններում հիմնազուրկ են Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն այն մասին, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարվել է բազմակողմանի քննություն և օբյեկտիվորեն գնահատվել են գործով ձեռք բերված ապացույցները:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ դիմողի ներկայացուցիչները խնդրել են կայացնել նոր դատական ակտ:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճարելի դատարանը գտնում է, որ իր գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման կարգն ու ժամկետները պարզաբանելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության, ինչպես նաև վերաքննության սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի սույն գործով անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

1. Վարույթն իրականացնող մարմնի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման կարգն ու ժամկետները պարզաբանելը.

13. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք «Արդշինինվեստբանկ»

ՓԲԸ-ի ներկայացուցչի բողոքը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն այն պարագայում, երբ ստորադաս դատարանը քննարկման առարկա չի դարձրել մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից Որոշման բողոքարկման ընթացակարգը պարզաբանելու իր պարտականությունը պատշաճ կատարելու հարցը:

14. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնական իրավունքների խախտման դեպքում, ունի ներպետական իրավասու արջանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

ա) ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կարարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը, դրանք տրամադրելու դեպքում»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կարարել են ի պաշտոնե գործող անձինք»:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: (...)»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝
«1. Դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի իմանալ իր իրավունքները և պարտականությունները (...):

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձի պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները, ապահովել սույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը»:

Մեջբերված դրույթները Վճռարեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել Ա.Դավթյանի և Ս.Մկրտչյանի գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքը, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքը սուբյեկտիվ իրավունք է, որին ուղիղ համեմատական է այդ իրավունքները և ազատությունները ճանաչելուն և պաշտպանելուն, ինչպես նաև դրանց իրացումն ապահովելու համար անհրաժեշտ կառուցակարգեր ստեղծելուն ուղղված՝ պետության պոզիտիվ պարտականությունը:

(...) [Բ]րեադատարական հարաբերություններում, ելնելով քրեական դատավարության հանրային բնույթից, դատավարության յուրաքանչյուր մասնակցից իրավունք ունի իմանալ իր կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների որոշումների, գործողությունների և անգործության դեմ բողոք ներկայացնելու իրավունքի մասին: Նշված իրավունքին համապատասխանում է քրեական վարույթն իրականացնող մարմինների պարտականությունը դատավարության յուրաքանչյուր մասնակցին պարզաբանելու նրա իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմինների որոշումների, գործողությունների և անգործության դեմ բողոք ներկայացնելու իրավունքը:

(...) [Բ]րեական դատավարության ընթացքում դատավարության մասնակցի վերաբերյալ համապատասխան դատավարական փաստաթղթեր կազմելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է դրանցում պարզաբանի նաև, թե որ մարմին, ինչ ժամկետում և ինչ կարգով կարող են բողոքարկվել այդ փաստաթղթերը: (...) [Վ]արույթն իրականացնող մարմնի կողմից դատավարության մասնակցին վերոնշյալ պարզաբանումները չիրականադրելը հանգեցնում է վերջինիս իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման» (տես Արման Վահանի Դավթյանի և Սոնա Ռուբենի Մկրտչյանի գործով Վճռարեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԲ/0004/11/12 որոշման 14-16-րդ կետերը):

15. Վերահաստատելով և զարգացնելով Ա.Դավթյանի և Ս.Մկրտչյանի գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավասու մարմնի կողմից ինչպես իր կայացրած որոշման բողոքարկման ընթացակարգի մասին պարզաբանումներ ընդհանրապես չտրամադրելը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներին չհամապատասխանող, ոչ ամբողջական, անորոշ և դատավարության մասնակիցներին մոլորության մեջ գցող պարզաբանումներ տրամադրելը հավասարապես հակասում են օրինականության սկզբունքին և հանգեցնում անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման:

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովումը,

դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառնությունների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները (*տե՛ս Կրուժոյի իրավահաջորդ Մերսես Միսակյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲՂ1/0003/11/08 որոշման 12-րդ կետը*):

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումը բողոքարկելու օրենքով նախատեսված ընթացակարգը բողոքաբերի կողմից չի պահպանվում այդ մարմնի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով, յուրաքանչյուրի համար արդյունավետ իրավական պաշտպանություն ապահովելու՝ պետության պարտավորության լույսի ներքո դատարանը պետք է պատշաճ գնահատական տա մինչդատական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրենց պարտականությունները չկատարելու, այն է՝ որոշման բողոքարկման կարգն ու ժամկետը չպարզաբանելու կամ սխալ պարզաբանելու հանգամանքին:

Այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմնի դրսևորած անբարեխղճության հետևանքով համապատասխան որոշումը բողոքարկելու կարգի թույլ տրված խախտումը հնարավոր է վերացնել դատական

վարույթում (օրինակ՝ բաց է թողնվել բողոքարկման ժամկետը), դատարանը պետք է իրավունքի ուժով (ex jure) հարգելի համարի այդ խախտումը և բողոքը քննարկի ըստ էության: Մնացած դեպքերում դատարանը, առանց բողոքն ըստ էության քննարկելու, պետք է ճանաչի վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան որոշումը բողոքարկելու ընթացակարգը պարզաբանելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը և արձանագրի դրա հետևանքով անձի՝ իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը խախտվելու հանգամանքը: Վերջինս իրավական հնարավորություն կտա անձին իրավունքների պաշտպանության այլ եղանակներով վերականգնելու իր խախտված իրավունքներն ու օրինական շահերը: Մասնավորապես, անձի կողմից իրավասու մարմիններին դիմելու դեպքում դատարանի այդպիսի որոշումը պետք է հիմք հանդիսանա, որպեսզի այդ մարմինները ձեռնարկեն ողջամիտ և բավարար միջոցներ՝ թույլ տրված խախտումը վերացնելու համար:

Վճռարեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը պայմանավորված է մի կողմից անձի՝ միջազգային-իրավական և սահմանադրաիրավական նորմերով նախատեսված իրավունքների արդյունավետ պաշտպանության, մյուս կողմից՝ այդ պաշտպանությունն իրականացնելիս օրինականության սկզբունքի պահպանման անհրաժեշտությամբ:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վարդենիսի քննչական բաժանմունքի պետ Գ.Մարգարյանի կողմից 2014 թվականի հունիսի 13-ին կայացվել է քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում, որտեղ պարզաբանված չեն նշված որոշման բողոքարկման կարգն ու ժամկետները: Մինևսույն ժամանակ վարույթն իրականացնող մարմինը կից գրությամբ դատավարության մասնակիցներին պարզաբանել է, որ Որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին **կամ** դատարան (տե՛ս սույն որոշման 4-րդ և 5-րդ կետերը):

Նման պայմաններում տուժողի ներկայացուցիչը Որոշումը բողոքարկել է Առաջին ատյանի դատարան՝ առանց պահպանելու դրա բողոքարկման արտադատական կարգը: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը, գտնելով, որ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված՝ դատախազին բողոքարկելու կարգը, մերժել է դիմողի բողոքը (տե՛ս սույն որոշման 1-ին և 6-րդ կետերը):

Այնուհետև՝ 2014 թվականի սեպտեմբերի 16-ին, դիմող «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Մ.Ավագյանը Որոշման դեմ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին: Նշված բողոքը դատախազության կողմից ուղարկվել է Վերաքննիչ դատարան՝ «*վերաքննիչ բողոքին կցելու և համարել ընթացքը լուծելու համար*» (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին, ստուգելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը, որևէ դատական սխալ չի արձանագրել (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետը):

17. Մեջբերված փաստերից հետևում է, որ առաջին ատյանի դատարանը, առանց անդրադառնալու բողոքի հիմքերին, այն մերժել է բողոքաբերի կողմից որոշումը բողոքարկելու արտադատական կարգը պահպանած չլինելու հիմնավորմամբ:

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ բողոքարկման արտադատական կարգը չպահպանելը (այդպիսին նախատեսված լինելու դեպքում) դատական վարույթում չվերացվող բողոքարկման կարգի խախտում է: Այսպես՝ ընդհանուր կանոնի համաձայն՝ մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումները դատարան բողոքարկելու պայման է այն նախապես դատախազին բողոքարկելը: Այս առումով Վճարելի դատարանը կրկնում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ «(...) Մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականությունը վիճարկելու [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված արտադատական] կարգը՝ որպես ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացման միջոց, հարակ սահմանված է օրենքով, որևէ բացառություն չի նախատեսում և նպարակ է հեղափոխում քրեական դատավարության մասնակիցների և շահագրգիռ այլ անձանց համար առավել արդյունավետ ձևով ապահովելու դատական պաշտպանության իրավունքի անխափան իրականացումը:

(...)

[Մ]ինչդատական վարույթի նկատմամբ հեղափոխ դատական վերահսկողության կառուցակարգի գործադրման նախապայման դատախազական հսկողության սահմանումը պայմանավորված է անձի իրավունքների և ազատությունների անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամանակահատվածում և արդյունավետ վերացնելու օրենսդրի կամքով: Բացի այդ, մինչդատական վարույթի օրինականության երաշխավորմանն ուղղված հսկողական և վերահսկողական փոխադրված միջոցների զուգակցումը հեղափոխում է մեկ այլ իրավաչափ նպարակ. անձանց շահերի քրեաիրավական պաշտպանությունն իրականացնելով արտադատական կառուցակարգի գործադրմամբ՝ հնարավորինս սահմանափակել դատական գործիքակազմի ներգրավումը և զերծ մնալ ավելորդ հանրային-իրավական միջոցների վարմումից» (տե՛ս Արմեն Գրիգորյանի վերաբերյալ Վճարելի դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԿԴ/0125/11/13 որոշման 18-19-րդ կետերը):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճարելի դատարանը վերահաստատում է նաև իր դիրքորոշումն այն մասին, որ մինչդատական վարույթն

իրականացնող մարմնի որոշումը չի կարող հանդիսանալ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա, եթե քրեական դատավարության մասնակցի կամ այլ շահագրգիռ անձի կողմից չի պահպանվել նշված որոշումը վիճարկելու արտադատական կարգը (այդպիսին նախատեսված լինելու դեպքում) (*ipso mutatis mutandis* Հայկ Մելքոնյանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԱԴԴ/0009/11/10 որոշման 12-րդ կետը, Արմեն Գրիգորյանի վերաբերյալ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԿԴ/0125/11/13 որոշման 21-րդ կետը):

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ բողոքաբերի կողմից վարույթն իրականացնող մարմնի որոշման բողոքարկման արտադատական կարգը չի պահպանվում այդ մարմնի անբարեխղճության հետևանքով, դատարանը, ելնելով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներից, առանց բողոքն ըստ էության քննարկելու, պետք է ճանաչի վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան որոշումը բողոքարկելու ընթացակարգը պարզաբանելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը և արձանագրի դրա հետևանքով անձի՝ իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը խախտվելու հանգամանքը: Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ դատարանի այդպիսի որոշումը՝ անձի կողմից դատախազին դիմելու դեպքում հիմք է, որպեսզի դատախազը իրավունքի ուժով (*ex jure*) հարգելի համարի բողոքարկելու բաց թողնված ժամկետը և օրենքով սահմանված կարգով քննարկի բողոքը:

18. Սույն որոշման 16-րդ կետում վերլուծված փաստական հանգամանքները դիտարկելով 14-15-րդ և 17-րդ կետերում շարադրված դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ «Արդշինիսվեստբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի բողոքը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը հիմնավորված չէ այն պարագայում, երբ ստորադաս դատարանը քննարկման առարկա չի դարձրել մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից Որոշման բողոքարկման ընթացակարգը պարզաբանելու իր պարտականությունը պատշաճ կատարելու հարցը:

Արդյունքում՝ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ, ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածներով երաշխավորված՝ անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտում:

18.1. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ Սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-844 որոշմամբ հակասահմանադրական է ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ

հոդվածի 1-ին մասի՝ «*եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից*» պահանջը, Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-844 որոշման եզրափակիչ մասից հետևում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումները կամ գործողությունները դատարան բողոքարկելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատախազին բողոքարկված լինելու պարտադիր պայմանը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական չի ճանաչվել: Հետևաբար բողոք բերած անձանց վերոնշյալ փաստարկը Վճարելի դատարանը հիմնավորված չի համարում:

18.2. Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Մ.Ավագյանի միջնորդություն-բողոքի վերաբերյալ դատախազ Ս.Շեռյանի կողմից Վերաքննիչ դատարան ուղարկված գրությանը: Մասնավորապես, նշված գրությամբ դատախազը Վերաքննիչ դատարան է ուղարկել բողոքարկերի ներկայացուցիչ Մ.Ավագյանի՝ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված միջնորդություն-բողոքը «*իր կողմից բերված վերաքննիչ բողոքին կցելու և համապետելի ընթացքը լուծելու համար*» (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Վճարելի դատարանի համար անհասկանալի է, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որ նորմով է ղեկավարվել և որ լիազորության շրջանակում է գործել դատախազը՝ իրեն հասցեագրված բողոքը քննարկելու փոխարեն այն «վերահասցեագրելով» Վերաքննիչ դատարանին, ավելին՝ վերջինիս «հանձնարարելով» այն «կցել վերաքննիչ բողոքին և լուծել համատեղ ընթացքը»: Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում բացակայում է նորմ, որը դատախազին կօժտեր նման լիազորությամբ, որպիսի պայմաններում դատախազ Ս.Շեռյանի կողմից ներկայացուցիչ Մ.Ավագյանի բողոքը քննության չառնելու, այն Վերաքննիչ դատարան ուղարկելու և գրությամբ տվյալ դատարանին «ցուցումներ» տալու փաստերը վկայում են այն մասին, որ դատախազ Ս.Շեռյանի գործողությունները զուրկ են որևէ իրավական հիմքից, հետևաբար քննարկվող գրությունն իրենից ներկայացնում է իրավական որևէ կարգավիճակ չունեցող և իրավական հետևանքներ չառաջացնող փաստաթուղթ:

II. Վերաքննության սահմանները.

19. Վճարելի դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանի կողմից բողոքն ըստ էության քննարկված չլինելու պայմաններում արդյո՞ք Վերաքննիչ դատարանն իրավասու էր քննարկել բողոքի հիմքերը և դրա արդյունքում կատարել եզրահանգումներ:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Բացառությամբ սույն օրենսգրքի 451 գլխի կանոններով քննված գործերի, վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին արյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները ընդունվում են որպես հիմք բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին արյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք կամ հաստատված չհամարելու սրորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքը, եթե առաջին արյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքի 382-րդ հոդվածի երրորդ մասին համապատասխան լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության:

4. Եթե առաջին արյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստական հանգամանքի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք, եթե առաջին արյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասին համապատասխան լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության»:

Մեջբերված կարգավորումները դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի դրսևորումներ են: Այս սկզբունքից բխում է, ի թիվս այլնի, որ վերաքննիչ դատարանը՝ որպես վերանայող ատյան, գործի էության վերաբերյալ չի կարող ավելի լայն լիազորություններ ունենալ, քան առաջին ատյանի դատարանը (տե՛ս Ռ.Արշալույսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի որոշման 21-րդ կետը):

Ի ապահովումն վերոգրյալ սկզբունքի՝ օրենսդիրը վերաքննիչ դատարանին իրավունք է վերապահել հաստատված համարելու նոր փաստական հանգամանք հետևյալ դեպքերում՝

1. երբ դա հնարավոր է առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա,

2. երբ հետազոտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների պահպանմամբ վերաքննիչ դատարան ներկայացված լրացուցիչ ապացույցներ:

21. Սույն գործի փաստերից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը բողոքի ըստ էության քննություն չի իրականացրել և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի որոշման օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ որևէ հետևության չի հանգել՝ Որոշումը վիճարկելու արտադատական կարգը պահպանված չլինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Նման պայմաններում, առանց անդրադառնալու Առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանությանը, որ բողոքաբերի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վիճարկելու արտադատական կարգը, ինչը բացառում է բողոքի ըստ էության քննությունը, Վերաքննիչ դատարանն անդրադարձել է բողոքի հիմքերին, գնահատման ենթարկել նյութերը և եզրահանգումներ է կատարել վարույթն իրականացնող մարմնի գործողությունների, ինչպես նաև նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունների մասին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

22. Նախորդ կետում վերլուծված փաստերը գնահատելով սույն որոշման 20-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից բողոքն ըստ էության քննարկված չլինելու պայմաններում Վերաքննիչ դատարանն իրավասու չէր քննարկել բողոքի հիմքերը և դրա արդյունքում կատարել եզրահանգումներ:

Անփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր լիազորությունների սահմաններից, այն է՝ առանց օրենքով սահմանված հիմքերի իրականացրել է դիմողի ներկայացուցիչ բողոքի ըստ էության քննություն և կատարել եզրահանգումներ այն դեպքում, երբ Առաջին ատյանի դատարանը չունեի նման լիազորություն (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը): Արդյունքում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի պահանջների խախտում:

23. Հիմք ընդունելով սույն որոշման 14-22-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով ինչպես Առաջին ատյանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել քրեադատավարական օրենքի խախտումներ: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ հանգեցրել են տուժողի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի, գործի արդարացի քննության իրավունքների խախտմանը: Վերջիններս

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են կայացված դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

24. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործի փաստական հանգամանքների և դրանց տրված գնահատականների վերաբերյալ բողոքաբերների բարձրացրած հարցերին (տես սույն որոշման 10-րդ կետը) հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմող «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ Մ.Ավագյանի և Ա.Բադայանի վճռաբեկ բողոքը բավարարել: Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 2-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 3-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

32.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0149/01/14

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Գոռ Մարատի Աթաբեկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ յոթ դրվագով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հունվարի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղդասյանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Նոր Նորքի քննչական բաժնի 2-րդ բաժանմունքում Տիգրան Պողոսյանի հաղորդման հիման վրա 2014 թվականի մայիսի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17123914 քրեական գործը:

2014 թվականի մայիսի 20-ին թիվ 17123914 քրեական գործն ուղարկվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների

դատախազություն՝ քննչական ենթակայության կարգով ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու համար:

ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերով քննիչի 2014 թվականի մայիսի 22-ի որոշումներով Գոռ Աթաբեկյանը և Ռազմիկ Կարապետյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանցից յուրաքանչյուրին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2014 թվականի մայիսի 22-ի որոշումներով մեղադրյալ Գ.Աթաբեկյանի և Ռ.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորում՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

1.1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության (այսուհետ՝ սակ՝ ՀՀ ոստիկանության ՔԳՎ) Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում Վահագն Աղաբալյանի հաղորդման հիման վրա 2014 թվականի մայիսի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 09116214 քրեական գործը, որը 2014 թվականի հունիսի 24-ին ընդունվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթ և միացվել թիվ 17123914 քրեական գործին:

1.2. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում Երվանդ Ստեփանյանի հաղորդման հիման վրա 2014 թվականի մայիսի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 14135514 քրեական գործը, որը 2014 թվականի հունիսի 24-ին ընդունվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթ և միացվել թիվ 17123914 քրեական գործին:

1.3. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Կոտայքի մարզի քննչական բաժնի Չարենցավանի քննչական բաժանմունքում Սաղաթել Մանուկյանի հաղորդման հիման վրա 2014 թվականի մայիսի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 66102714 քրեական գործը, որը 2014 թվականի հունիսի 30-ին ընդունվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթ և միացվել թիվ 17123914 քրեական գործին:

1.4. ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2014 թվականի հուլիսի 9-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 61203514 քրեական գործը, որը 2014 թվականի հուլիսի 11-ին ընդունվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթ և միացվել թիվ 17123914 քրեական գործին:

1.5. Քննիչի՝ 2014 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ Գ.Աթաբեկյանին առաջադրված մեղադրանքը Տիգրան Պետրոսյանին պատճառված վնասի չափի մասով փոփոխվել է և լրացվել ևս վեց դրվագներով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2014 թվականի օգոստոսի 11-ին Գ.Աթաբեկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի

177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ յոթ դրվագով հանցավոր արարքներ կատարելու համար:

2. 2014 թվականի օգոստոսի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 7-ի դատավճռով Գ.Աթաբեկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքներում՝ յոթ դրվագով, և դատապարտվել՝

առաջին դրվագով՝ տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հինգ-հարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով,

երկրորդ դրվագով՝ տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հինգ-հարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով,

երրորդ դրվագով՝ տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկի՝ 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով,

չորրորդ դրվագով՝ տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկի՝ 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով,

հինգերորդ դրվագով՝ տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկի՝ 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով,

վեցերորդ դրվագով՝ տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի իննհարյուրապատիկի՝ 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով,

յոթերորդ դրվագով՝ տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ պատիժները մասնակի գումարելու միջոցով, յոթերորդ դրվագով նշանակված պատժին՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով տուգանքին, մասնակիորեն գումարվել է առաջինից վեցերորդ դրվագներից յուրաքանչյուրի համար նշանակված պատժից տուգանք՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով, և վերջնական պատիժ է նշանակվել տուգանք՝ 2.800.000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Ռազմիկ Կարապետյանը:

3. Մեղադրողի, ամբաստանյալ Ռ.Կարապետյանի պաշտպան Ա.Կարապետյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հունվարի 22-ի որոշմամբ մեղադրողի բողոքը

մերժել է, իսկ պաշտպան Ա.Կարապետյանի բողոքը՝ բավարարել մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 7-ի դատավճիռը Ռ.Կարապետյանի նկատմամբ նշանակված պատժի մասով՝ փոփոխել է, իսկ մնացած մասով թողել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հունվարի 22-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանը, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 11-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի բնության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Գ.Աթաբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ յոթ դրվագով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով ընկերոջ՝ Երևան քաղաքի բնակիչ Ռազմիկ Արայի Կարապետյանի հետ, 2014 թվականի սպրիլ-մայիս ամիսների ընթացքում Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններից և Կուրայքի մարզի Չարենցավան քաղաքից խմբով կատարել են թվով 7 դրվագ ուրիշների գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություններ: Այսպես՝

2014 թվականի սպրիլի 1-ի լույս 2-ի գիշերը, Գոռ Աթաբեկյանը Ռազմիկ Կարապետյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում Երևան քաղաքի Զաքարիա Սարկավազի 119/1 շենքի բակում կայանված՝ նույն շենքի բնակիչ Ալեքսանդր Ռուբենի Շաքարյանին պարկանող «INFINITI QX 4» մակնիշի, 22 ՕՕ 580 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրայից գաղտնի հափշտակել է զգալի չափերով՝ 450.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ՝ հակամատախուղային երկու հար (մեկ զույգ) լապտերները և ձախ լուսարձակը:

Այսինքն՝ Գոռ Աթաբեկյանը կատարել է հանցավոր արարք՝ նախարեսված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2014թ. մայիսի 4-ի լույս 5-ի գիշերը Գոռ Աթաբեկյանը Ռազմիկ Կարապետյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում Երևան քաղաքի Գյուլբենկյան 46 շենքի բակում կայանված՝ նույն շենքի բնակիչ Երվանդ Եփրեմի Սրեպիանյանին պարկանող «INFINITI QX 4» մակնիշի 72 ML 777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրայից գաղտնի հափշտակել է զգալի չափերով 190.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ հակամատախուղային երկու հար (մեկ զույգ) լապտերները:

Այսինքն՝ Գոռ Աթաբեկյանը կատարել է հանցավոր արարք՝ նախարեսված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2014թ. մայիսի 6-ի լույս 7-ի գիշերը Գոռ Աթաբեկյանը Ռազմիկ Կարապետյանի հետ նահանական համաձայնությամբ, իմքի կազմում Երևան քաղաքի Թոթովենցի փողոցի 11/1 շենքի բակում կայանված նույն շենքի բնակիչ Արկադի Խաչատրյուրի Սարգսյանին պարկանող «INFINITI QX 4» մակնիշի 83 AR 008 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրայից գաղտնի հափշտակել է զգալի չափերով 320.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ հակամատահուղային երկու հար (մեկ զույգ) լապտերները և ջերմամոխսանակիչի երեսպարվածքը:

Այսինքն Գոռ Աթաբեկյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք:

2014թ. մայիսի 7-ից մայիսի 9-ն ընկած ժամանակահատվածում գիշերային ժամերի, Գոռ Աթաբեկյանը Ռազմիկ Կարապետյանի հետ նահանական համաձայնությամբ, իմքի կազմում Երևան քաղաքի Թոթովենցի փողոցի 11/1 շենքի բակում կայանված նույն շենքի բնակիչ Դավիթ Մինասի Մինոնյանին պարկանող «INFINITI QX 4» մակնիշի 34 UM 874 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրայից գաղտնի հափշտակել է զգալի չափերով 160.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ հակամատահուղային երկու հար (մեկ զույգ) լապտերները:

Այսինքն Գոռ Աթաբեկյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք:

2014թ. մայիսի 12-ի լույս 13-ի գիշերը Գոռ Աթաբեկյանը Ռազմիկ Կարապետյանի հետ նահանական համաձայնությամբ, իմքի կազմում Երևան քաղաքի Կարապետ Ուլնեցու փողոցի 3-րդ փակուղի 7-րդ շենքի բակում կայանված նույն շենքի բնակիչ Վահագն Ալբերտի Աղաբալյանին պարկանող «Մերսեդես» մակնիշի 34 SM 506 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրայից գաղտնի հափշտակել է զգալի չափերով 170.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 4 անվաղողերն՝ անվահեծերով:

Այսինքն Գոռ Աթաբեկյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք:

2014թ. մայիսի 18-ի լույս 19-ի գիշերը Գոռ Աթաբեկյանը Ռազմիկ Կարապետյանի հետ նահանական համաձայնությամբ, իմքի կազմում Երևան քաղաքի Ավան Սայաթ Նովա թաղամասի 5-րդ շենքի բակում կայանված Տիգրան Ռուդիկի Պետրոսյանին պարկանող «Ինֆինիտի QX 56» մակնիշի 56 OQ 056 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրայից գաղտնի հափշտակել է զգալի չափերով 160.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ հակամատահուղային երկու հար (մեկ զույգ) լապտերները:

Այսինքն Գոռ Աթաբեկյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք:

2014թ. մայիսի 18-ի լույս 19-ի գիշերը Գոռ Աթաբեկյանը Գոռ Ռազմիկ Կարապետյանի հետ նահանական համաձայնությամբ, իմքի կազմում

Կուրայքի մարզի Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի 11-րդ շենքի բակում կայանված նույն շենքի բնակիչ Սաղաթել Բեգլարի Մանուկյանին պատկանող ՎԱԶ 21121 մակնիշի 10 ՕՏ 470 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրայից գաղտնի հափշտակել է զգալի չափերով 144.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության թվով չորս անվադողերն՝ անվաճեցրելով:

Այսինքն Գոռ Աթաբեկյանը կարարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք:

Այսպիսով, Գոռ Մարարի Աթաբեկյանը կարարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարքներ (7 դրվագ)» (տես քրեական գործ, հայտր 2, թերթ 182-183):

6. Առաջին ատյանի դատարանը, արագացված դատական քննության կարգով քննելով գործը, իր դատական ակտում արձանագրել է. «(...) Ամբաստանյալ Գոռ Մարարի Աթաբեկյանի նկատմամբ, նրա կարարած յուրաքանչյուր հանցագործության համար պատիժ նշանակելիս՝ դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը, հանցավորի անձը, այն, որ նա նախկինում դատված չի եղել, իրեն լիովին մեղավոր ճանաչելով և փայլով ինքնախոստովանական ցուցմունքներ՝ անկեղծորեն զղջում է կարարածի համար: Առաջին, երկրորդ, չորրորդ և հինգերորդ դրվագներով որպես ամբաստանյալ Գոռ Աթաբեկյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք դատարանը հաշվի է առնում հանցագործությամբ փութողներին պարճառված գույքային վնասը կամովին հատուցելը: Երրորդից յոթերորդ դրվագներից յուրաքանչյուրով, ամբաստանյալ Գոռ Աթաբեկյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, որպես նրա պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք դատարանը հաշվի է առնում յուրաքանչյուր դրվագով հանցանքը որպես արհեստ կարարելը:

(...)

Ամբաստանյալ Գոռ Աթաբեկյանն իր կարարած՝ առաջինից յոթերորդ դրվագներով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված յուրաքանչյուր հանցագործության համար ենթակա է պատժի փութանքի ձևով, յոթերորդ դրվագով փութանքի ձևով սահմանված պատժի առավելագույն չափով: Գատարանին որևէ հիմնավորում չի ներկայացվել այն մասին, որ պատժի նվազ ինսպ փեսակը փվյալ դեպքում չի կարող ապահովել պատժի նպատակները» (տես քրեական գործ, հայտր 3, թերթ 131-132):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառարանական մասում արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Առաջին ատյանի դատարանի այն եզրահանգման հետ, որ (...)

պարասիանարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանք պետք է համարել հանցանքը որպես արհեսար կարարելը (...):

Վերաքննիչ դարարանի համոզմանը, հանցանքը որպես արհեսար կարարելու հանգամանքը առկա է այն ժամանակ, երբ անձը հանցավոր գործունեությամբ է զբաղվում երկար ժամանակ, և դա հանդիսանում է նրա հիմնական կամ լրացուցիչ եկամտի աղբյուրը:

Սույն գործով դարարանը հասարարված է համարել, որ Ռ. Կարապետյանը և Գ. Աթարեկյանը 2014 թվականի սարիլի 1-ից մինչև մայիսի 18-ը ընկած ժամանակահարվածում կարարել են յոթ դրվագ գողություն: Այդպիսով ակնհայտ է, որ նրանք հանցավոր գործունեությամբ զբաղվել են ոչ թե երկար ժամանակ (օրինակ՝ ամիսներ, տարիներ), այլ ընդամենը մեկ ամիս և 18 օր ժամանակ:

(...)

Վերաքննիչ դարարանը, քննության առնելով ամբարարայալ Գ. Աթարեկյանի նկարմանը նշանակված պարիժը խարացնելու, ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամբարգրված պարժի իրացվելիության հարցերը, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, հանցավորի պարասիանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանցագործության բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը, հանգում է այն հետևության, որ Առաջին առյանի դարարանը (...) Գ. Աթարեկյանին դարարարտել է (...) տուգանքի (...), որը համարարասիանում է հանցագործության ծանրությանը և ամբարարայալի անձին, և որով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախարեակված պարժի նպարակներին (...), և որ վերաքննիչ բողոքում նշված փարարակները նշանակված պարիժը խարացնելու հիմք չեն կարող դառնալ (...):» (տես քրեական գործ, հատոր 4, թերթ 95, 98-99):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձի պնդմամբ՝ Առաջին առյանի և Վերաքննիչ դատարանները պատիժ նշանակելիս թույլ են տվել նյութական իրավունքի խախտումներ, ինչը հիմք է դատական ակտերը պատժի մատով բեկանելու համար:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքի հեղինակը, վկայակոչելով Վճարելի դատարանի՝ Պ. Բայրամյանի և Տ. Մարտիրոսյանի գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնարանել ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և Գ. Աթարեկյանի կողմից հանցանքների կատարումը չի դիտել որպես արհեստ՝ պատճառարանելով,

որ յոթ դրվագ գողությունները կատարվել են ոչ թե երկարատև ժամանակահատվածում, այլ ընդամենը 1 (մեկ) ամիս 18 (տասնութ) օր ժամկետում: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ յոթ դրվագ գողություններն արդեն իսկ վկայում են պարբերաբար հանցանք կատարելու մասին, իսկ Գ.Աթաբեկյանի չաշխատելու պայմաններում գողությունների արդյունքում ստացված գումարները եղել են վերջինիս եկամտի աղբյուրը:

9. Բողոքի հեղինակը նշել է, որ Գ.Աթաբեկյանի նկատմամբ երկու միլիոն ութ հարյուր հազար ՀՀ դրամ տուգանքի ձևով նշանակված պատիժն արդարացի չէ՝ ակնհայտ մեղմ է, չի համապատասխանում վերջինիս կատարած արարքի հանրային վտանգավորության բնույթին և աստիճանին, հանցավորի անձին: Այսպես, ստորադաս դատարանները պատիժ նշանակելիս օբյեկտիվ ստուգման ու գնահատման չեն ենթարկել գործի հանգամանքները՝ այն, որ յոթ քաղաքացու գույքային վնաս է պատճառվել, հաշվի չեն առել օրենքով պաշտպանվող հարաբերությունների սոցիալական բնույթն ու նշանակությունը, որոնք բարձրացնում են ամբաստանյալի արարքի վտանգավորության աստիճանը, ինչպես նաև հանցավորի անձը բնութագրող տվյալները, քանի որ հանցանքը որպես արհեստ կատարելն արդեն իսկ ոչ դրական է բնութագրում Գ.Աթաբեկյանի անձը:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճարել բողոքն ընդունել վարույթ, Գ.Աթաբեկյանի նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 7-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հունվարի 22-ի որոշումը և քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանը գտնում է, որ հանցանքը որպես արհեստ կատարելը անձի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք (ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) գնահատելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյոք Գ.Աթաբեկյանին վերագրվող արարքներում (տես սույն որոշման 5-րդ կետը) հանցանքը որպես արհեստ կատարելու հանգամանքի բացակայության և դրա

արդյունքում ամբաստանյալի նկատմամբ նշանակված տուգանք պատժատեսակը համաչափ լինելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Գողությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
(...)

պարժվում է փուզանքով՝ նվազագույն աշխարավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ փարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պարժի փետակը և չափը որոշվում են հանցագործության հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող փվյալներով, այդ թվում՝ պարասխանարվությունը և պարիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

Մեջբերված դրույթները Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել Էդվարդ Ադամյանի գործով որոշման մեջ՝ արձանագրելով, որ «(...) [Ա]րդարության և պարասխանարվության անհարականացման սկզբունքի փետանկյունից կարևոր նշանակություն ունեն համապարասխան քրեաիրավական սանկցիաները, որոնք կրում են հարաբերականորեն որոշակի (պարիժ են նախարետում որոշակի սահմաններում) կամ այլընտրանքային բնույթ (նախարետում են պարժի մի քանի փետակներ): Ընդ որում, այլընտրանքային սանկցիաները հանցավորի պարասխանարվության անհարականացման ավելի լայն սահմաններ են նախարետում:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան այլընտրանքային է, այսինքն՝ թույլ է փալիս դարարանին իր հայեցողության շրջանակներում երկու հնարավոր պարժարետակներից (փուզանք և ազատազրկում) ընտրել այնպիսին, որը համաչափ է հանցագործության ծանրությանը, հանցավորի անձին, պարասխանարվությունը և պարիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներին՝ ապահովելով պարժի նպարակների իրագործումը:

Հոդվածի սանկցիայի շրջանակներում կոնկրետ պարժարետակ և պարժաչափ ընտրելիս դարարանը թեն օժրված է իր ներքին համոզմունքին և իրավագիրակցությանը համապարասխան որոշակի հայեցողություն դրսևրելու ազարությամբ, սակայն այն չի կարող քացարձակ և կամայական բնույթ կրել:

Պարիժ նշանակելիս դարարանի հայեցողությունը սահմանափակվում է օրենքով կանխորոշված որոշակի շրջանակներով՝ հանցավոր արարքի հանրային վրանգավորության բնույթով և աստիճանով, հանցավորի անձը բնութագրող փվյալներով, պարասխանարվությունը և

պարտիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, որոնք դատարանն անպայման պետք է հաշվի առնի պարտի արդարացիության ասպեկտի մասին համար (...)» (տե՛ս Էդվարդ Ադամյանի գործով Վճարելի դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0048/01/14 որոշման 17-րդ կետը):

13. Վերահաստատելով Էդվարդ Ադամյանի գործով կայացված և նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ անձի նկատմամբ նշանակվող պատժի տեսակը և չափը որոշելիս դատարանը պարտավոր է հաշվի առնել, ի թիվս այլնի, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները, որոնք սպառիչ նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք[է] (...) հանցանքը որպես արհեստ կատարելը (...)»:

Վճարելի դատարանը, Տիգրան Մարտիրոսյանի գործով որոշման մեջ անդրադառնալով վաշխառությունը որպես արհեստ կատարելու հանցակազմին, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ այն առկա է, երբ անձը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով արգելված արարքով զբաղվում է պարբերաբար, և դա հանդիսանում է նրա եկամտի աղբյուրը (տե՛ս Տիգրան Մարտիրոսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի ԵՇԴ/0121/01/12 որոշման 15-րդ կետերը):

13.1. Վերահաստատելով և զարգացնելով Տիգրան Մարտիրոսյանի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հանցանքը որպես արհեստ կատարելը արտահայտվում է եկամտու ստանալու նպատակով պարբերաբար հանցավոր գործունեությանը զբաղվելով:

Հանցավոր վարքագծի կրկնությունը նպաստում է որոշակի արարքներում անձի մասնագիտացմանը, հանցագործության տեխնիկայի և հմտությունների յուրացմանը՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծելով հետագայում հանցավոր գործունեությունն ավելի դյուրին և արդյունավետ շարունակելու համար: Հետևաբար, վերոնշյալ հանգամանքը վկայում է թե՛ հանցանք կատարած անձի և թե՛ հանցագործության (յուրաքանչյուր հաջորդող հանցագործության) հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին, ինչը դատարանի կողմից պատիժ նշանակելիս պետք է համարժեք գնահատականի արժանանա:

14. Մինչույն ժամանակ Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ մեկից ավելի հանցանքների կատարումը ոչ բոլոր դեպքերում է հանգեցնում անձի արարքներում հանցանքը որպես արհեստ կատարելու հանգամանքի առկայության: Մասնավորապես, հանցանքը որպես արհեստ կատարելը ենթադրում է նույն կամ նույնարնությո այնպիսի

հանցանքների պարբերաբար կատարում, որոնց արդյունքում ստացվում է նյութական օգուտ, որն էլ ուղղված է հանցավորի եկամտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուր ձևավորելուն:

Այսպես, հանցավոր վարքագծի պարբերական բնույթն արտահայտվում է երեք կամ ավելի՝ նույն կամ նույնաբնույթ հանցանքների կատարմամբ, քանի որ այդ դեպքում կարելի է խոսել որոշակի հանցագործություններում անձի հետացման, արհեստավարժության, նրա կայուն հակահասարակական կողմնորոշումների մասին: Ինչ վերաբերում է հանցավոր գործունեության արդյունքում եկամտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուր ձևավորելու հանգամանքին, ապա անհրաժեշտ է նշել, որ հանցագործության արդյունքում ստացվող նյութական օգուտը կհամարվի անձի եկամտի հիմնական աղբյուր այն դեպքում, երբ հանդիսանա հանցավորի եկամտի միակ աղբյուրը, ինչպես նաև գերազանցի նրա այլ եկամուտների չափը: Իսկ լրացուցիչ աղբյուր կհամարվի այն դեպքում, երբ հանցագործությունից ստացվող նյութական օգուտը կազմի անձի եկամտի ոչ ամբողջական, սակայն դրա զգալի մասը: Այս առումով անձի դիտավորությունը պետք է ուղղված լինի հանցավոր գործունեությամբ եկամտի աղբյուր ձևավորելուն:

15. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ հանցանքը որպես արհեստ կատարելը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

ա) հանցավոր վարքագծի պարբերականություն (երեք կամ ավելի անգամ կատարելը),

բ) նույն կամ նույնաբնույթ հանցանքների կատարում,

գ) նյութական օգուտի ստացում, որը հանցավորի եկամտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուրն է,

դ) հանցավոր գործունեությամբ եկամտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուր ձևավորելուն ուղղված անձի դիտավորությունը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գ.Աթաբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ 7 դրվագով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա նախնական համաձայնության գալով ընկերոջ՝ Ռ.Կարապետյանի հետ, 2014 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում խմբով կատարել են թվով յոթ դրվագ ուրիշների գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություններ: Ընդ որում նրանք գաղտնի հափշտակել են շենքերի բակերում կայանված ավտոմեքենայի մասեր, մասնավորապես հինգ դրվագներով՝ «Ինֆինիտի QX» մակնիշի ավտոմեքենայի հակամառախողային երկու հատ (մեկ գույգ) լապտերներ, առաջին դրվագով՝ նաև ձախ լուսարձակ, իսկ երրորդ դրվագով՝ նաև ջերմափոխանակիչի երեսպատվածք, ինչպես նաև մեկ դրվագով՝ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի չորս անվադողեր՝

անվահեծերով, մեկ դրվագով՝ «ՎԱԶ 21121» մակնիշի ավտոմեքենայի չորս անվադողեր՝ անվահեծերով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, արագացված դատական քննության կարգով քննելով գործը, Գ.Աթաբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված յոթ դրվագ գողություններից յուրաքանչյուրով դատապարտել է տուգանքի և երրորդից յոթերորդ դրվագներից յուրաքանչյուրով որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի առել հանցանքը որպես արհեստ կատարելը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մինչդեռ մեղադրողի բողոքի քննության շրջանակներում Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով հանցանքը որպես արհեստ կատարելը բացակայում է՝ պատճառաբանելով, որ ամբաստանյալները հանցավոր գործունեությամբ զբաղվել են ոչ թե երկար ժամանակ (օրինակ՝ ամիսներ, տարիներ), այլ ընդամենը 1 ամիս 18 օր: Արդյունքում Վերաքննիչ դատարանը Գ.Աթաբեկյանի նկատմամբ տուգանքի ձևով նշանակված պատիժը թողել է անփոփոխ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ 1 ամիս 18 օրը բավական երկար ժամանակ չէ, որպեսզի ամբաստանյալ Գ.Աթաբեկյանի կատարած արարքներում առկա լինեն հանցանքը որպես արհեստ կատարելու հատկանիշները, իրավաչափ չէ:

Մասնավորապես, ամբաստանյալի հանցավոր գործունեությունը հարաբերականորեն կարճ ժամանակ (մեկ ամիս տասնութ օր) տևելը դեռևս չի կարող չափորոշիչ հանդիսանալ հանցանքը որպես արհեստ կատարելու հանգամանքի բացակայությունը հավաստելու համար, հատկապես այն պայմաններում, երբ այն ընդհատվել է իրավապահ մարմինների կողմից բացահայտվելու հետևանքով:

Ընդհակառակը, հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում յոթ դրվագ հափշտակությունների կատարումն ակնհայտորեն վկայում է հանցավոր վարքագծի պարբերական բնույթի մասին: Իսկ նույն հանցանքը (խմբի կազմում զգալի չափերով ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն) պարբերաբար (յոթ դրվագ) կատարելը, ինչպես նաև հանգամանքներն այն մասին, որ բոլոր գողությունները կատարվել են շենքերի բակերում կայանած ավտոմեքենաներից, որոնք եղել են հիմնականում նույն՝ «Ինֆինիտի QX» մակնիշի (բացառությամբ 5-րդ և 7-րդ դրվագների), գողոնը նույնպես հիմնականում եղել է նույնը՝ հակամատախուղային գույգ լապտերներ (բացառությամբ 5-րդ և 7-րդ դրվագների) (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը), վկայում են հանցավորի պատրաստվածության, այդ հանցագործությունը կատարելու մեջ հմտանալու և հանցավոր գործունեության

միջոցով եկամտի աղբյուր ձևավորելու դիտավորության մասին: Ընդ որում, գործի նյութերից երևում է նաև, որ Գ.Աթաբեկյանը չի աշխատում, իսկ եկամտի այլ աղբյուր ունենալու մասին որևէ տեղեկություն առկա չէ:

18. Վերոշարադրյալի հիման վրա Վճարելի դատարանը փաստում է, որ Գ.Աթաբեկյանին վերագրվող հանցագործությունների քանակը, դրանց բնույթը, կատարման եղանակը, հափշտակված իրերի տեսակը, պատճառված վնասը վկայում են հանցավոր վարքագծի մասնագիտացման, համապատասխան հնտությունների յուրացման և հանցավորի արհեստավարժության մասին:

Հետևաբար, ամբաստանյալ Գ.Աթաբեկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի շրջանակներում Առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված տուգանք պատժատեսակն անփոփոխ թողնելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել հանցագործության հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, ինչպես նաև հանցավորի անձը բնութագրող տվյալները: Մասնավորապես, հաշվի չի առել այն, որ հանցավոր վարքագծի պարբերաբար կրկնությունը էականորեն բարձրացնում է հանցագործության և այն կատարող անձի հանրային վտանգավորությունը, վկայում վերջինիս մոտ առկա հակահասարակական կողմնորոշումների և հանցավոր գործունեությանը զբաղվելու հակվածության մասին:

19. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Գ.Աթաբեկյանին վերագրվող արարքներում հանցանքը որպես արհեստ կատարելու հանգամանքի բացակայության և դրա արդյունքում ամբաստանյալի նկատմամբ նշանակված տուգանք պատժատեսակը համաչափ լինելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

Վերաքննիչ դատարանը, Գ.Աթաբեկյանի նկատմամբ նշանակված պատժի մասով օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ թույլ տալով ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված սկզբունքների խախտումներ: Արդյունքում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը Գ.Աթաբեկյանի մասով բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի

Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գոռ Մարատի Աթաբեկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ յոթ դրվագով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հունվարի 22-ի որոշումը պատժի մասով բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

33.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0070/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի հունիսի 5-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Իլլարիոն Ստեփանի Նունուշյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2014 թվականի նոյեմբերի 26-ի որոշման դեմ ամբաստանյալ Ի.Նունուշյանի պաշտպան Է.Աղաջանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի ապրիլի 13-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի քննչական բաժնում հարուցվել է թիվ 11120213 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ Իլլարիոն Նունուշյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2013 թվականի հունիսի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան (այսուհետ՝ նաև՝ Առաջին ստյանի դատարան):

2. Առաջին ստյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճռով ամբաստանյալ Ի.Նունուշյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել տուգանքի՝ 600.000 ՀՀ դրամի չափով:

ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման (այսուհետ՝ նաև Համաներման ակտ) 1-ին կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Ի.Նունուշյանն ազատվել է պատժի կրումից:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի նոյեմբերի 26-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ստյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռը բեկանելու և գործը նույն դատարան՝ այլ կազմով՝ նոր քննության ուղարկելու մասին՝ սահմանելով նոր քննության ծավալը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 26-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել պաշտպան Է.Աղաջանյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ի.Նունուշյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «2012թ. օգոստոս ամսին, չպարզված օրը՝ ժամը 1-ի սահմաններում, տեխնիկական միջոցների գործադրմամբ բացելով դուռը, ապօրինի մուտք է գործել Ալավերդի Հարությունյանին պարկանող՝ Երևանի Արին-Բերդի 2-րդ նրբանցքի թիվ 116/3 տուն և ննջասենյակից գողացել 100.000 ՀՀ դրամ արժողության փարբեր տեսակի հագուստներ և փոշեկոլ՝ փանտիրոջը՝ Ա.Հարությունյանին, պատճառելով զգալի չափի գույքային վնաս (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, գ.թ. 46-49):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) [Մխաթանության մարմնի կողմից ամբաստանյալի գործողություններին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական, և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով որակված նրա արարքը պետք է վերադասվի ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, քանի որ (...) ապացույցները վկայում են, որ Իլլարիոն Նունուշյանը գողությունը կատարել է ոչ թե բնակարան, այլ՝ շինություն ապօրինի մուտք գործելով:

Հերևապետ ամբաստանյալ Իլլարիոն Նունուշյանը ենթակա է քրեական պարասխանարվության և պարծի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, գ.թ. 165-166):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ մեղադրողի կողմից բերված վերաքննիչ բողոքում նշվել է. «(...) Սույն գործի փաստական փյուջաները վկայում են այն մասին, որ Ի. Նունուշյանը գողություն է կատարել՝ ապօրինի մուտք գործելով բնակարան: Սակայն [Առաջին ատյանի դատարանը] գրել է, որ նախաքննության մարմնի կողմից ամբաստանյալի գործողություններին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական և նրա արարքը պետք է վերադասվի ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, քանի որ Իլլարիոն Նունուշյանը գողությունը կատարել է ոչ թե բնակարան, այլ՝ շինություն ապօրինի մուտք գործելով: [Առաջին ատյանի դատարանի] նշված պարճառարանությունը հիմնավորված չէ և չի բխում դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներից:

(...) [Վերոգրյալի հիման վրա] խնդրում եմ (...) քեկանել Իլլարիոն Սրեփանի Նունուշյանի վերաբերյալ [Առաջին ատյանի դատարանի] կողմից 2014 թվականի սեպտեմբերի 9-ին (...) կայացված դատավճռը՝ Իլլարիոն Նունուշյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախատեսված հանցավոր արարքում, և վերջինիս նկատմամբ հոդվածի սանկցիայի սահմաններում նշանակել համաչափ պարիժ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, գ.թ. 2-6):

8. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) Գործի նյութերից երևում է, [որ] ամբաստանյալ Իլլարիոն Նունուշյանը Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014թ. ապրիլի 17-ի դատավճռով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցանքները կատարելու համար դատապարտվել է ազատազրկման երեք /3/ փարի երեք /3/ ամիս ժամկետով /Գործ՝ թիվ ԵՇԴ/0139/01/13/:

2014թ. սեպտեմբերի 5-ին Իլլարիոն Նունուշյանը Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի

177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և նրա նկատմամբ փուզանք է նշանակվել 500.000 ՀՀ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կարգով նշանակված պարծին լրիվ 3 /երեք/ փարի 3 /երեք/ ամիս ժամկետով գումարվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի 2014թ. ապրիլի 17-ի դատավճռով նշանակված պարիժը, և Բլլարիոն Սյունուշյանի նկատմամբ վերջնական պարիժ է նշանակվել ազատագրելով 3 /երեք/ փարի 3 /երեք/ ամիս ժամկետով և 500.000 ՀՀ դրամի չափով /Գործ թիվ ԵՇԴ/0083/01/14/:

(...) Սույն գործի նյութերից երևում է, որ ամբաստանյալ Բ. Սունուշյանին մեղաազրված արարքը կատարվել է 2012 թվականի օգոստոս ամսին:

Տվյալ գործն Առաջին արյանի դատարանի վարույթ է ընդունվել 2013 թվականի հունիսի 7-ին, իսկ դատավճիռը կայացվել է 2014 թվականի սեպտեմբերի 9-ին:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործն Առաջին արյանի դատարանում քննվելու ընթացքում արդեն կայացվել էր Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի՝ 2014թ. ապրիլի 17-ի դատավճիռը, որով Բ. Սունուշյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցանքները կատարելու համար դատապարտվել է ազատագրվման 3 փարի 3 ամիս ժամկետով:

Մասն պայմաններում Առաջին արյանի դատարանը պարտավոր էր ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոններով սույն գործով նշանակվող պարիժը և Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի՝ 2014թ. ապրիլի 17-ի դատավճռով նշանակված պարիժը լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով սահմանել վերջնական պարիժ, որի ժամկետին պետք է հաշվակցվեր 14.07.2014թ. դատավճռով նշանակված պարիժի կրած մասը:

Մինչդեռ, ինչպես երևում է գործի նյութերից, Առաջին արյանի դատարանը Բ. Սունուշյանի նկատմամբ պարիժ է նշանակել միայն քննարկվող գործով, 2012թ. օգոստոս ամսին կատարած արարքի համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նշանակելով փուզանք 600.000 ՀՀ դրամի չափով, այնուհետև Համաներման ակտի կիրառմամբ նրան ազատել է նշանակված պարիժից, այսինքն՝ թույլ է տվել դատական սխալ, որը հանգեցրել է քրեադատավարական օրենքի էական խախտման:

(...) Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին արյանի դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել արորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

Նոր քննության ընթացքում Առաջին արյանի դատարանը պետք է պարզաճ ընթացակարգի սահմաններում հետազոտի [Ի.Նունուշյանի] նկատմամբ կայացված՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի՝ 2014թ. ապրիլի 17-ի /Գործ՝ թիվ ԵՇԴ/0139/01/13/ դատավճիռը, այնուհետև ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոններով հանցանքների համակցությամբ նշանակված պարիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով նշանակի վերջնական պարիժ և դրան պետք է հաշվակցի առաջին դատավճռով նշանակված պարիժի կրած մասը:

(...) Վերաքննիչ դատարանը Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Կ.Ադամյանի վերաքննիչ բողոքը քննության առարկա չի դարձնում, քանի որ Առաջին արյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը Վերաքննիչ դատարանին հնարավորություն չի ընձեռում բերված բողոքի կապակցությամբ կայացնելու համապատասխան որոշում, հետևաբար գրնում է, որ նման պայմաններում վերաքննիչ բողոքը պետք է մերժել» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, գ.թ. 2-6):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

9. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքարեթի՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներով, որոնք ազդել են գործի ելքի վրա՝ հանգեցնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճռի անհիմն բեկանմանը: Մասնավորապես, ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները և անտեսելով Վճարելի դատարանի՝ Արթուր Խուրշուդյանի վերաբերյալ գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԱԲԴ/0065/01/11 և Գեղամ Ղազարյանի վերաբերյալ գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԴ/0121/01/11 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ փաստարկների՝ պաշտպան Է.Աղաջանյանը փաստարկել է, որ մեղադրողն իր ներկայացրած վերաքննիչ բողոքում խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռը, ամբաստանյալ Ի.Նունուշյանի արարքը վերադարձնել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և այդ արարքի համար նշանակել համաչափ պատիժ: Մինչդեռ բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը, այլ հիմքով բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և գործն ուղարկելով ստորադաս դատարան՝ նոր քննության, դուրս է եկել վերաքննիչ բողոքի

սահմաններից, քանի որ մեղադրողի վերաքննիչ բողոքում նման հիմք մատնանշված չէր:

Վերլուծելով թիվ ԵԱԲԴ/0065/01/11 և թիվ ԱՐԴ/0121/01/11 գործերով որոշումներում Վճռարեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ բողոք բերած անձը եզրակացրել է, որ հանցավորի նկատմամբ նշանակված պատժի անհամաչափությունը ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատական ակտի անվերապահ բեկանմանը հանգեցնող դատավարական իրավունքի խախտում է, ոչ էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված քրեական գործի կարճաման հիմք: Հետևաբար Վերաքննիչ դատարանն իրավասու չէր սեփական նախաձեռնությամբ, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս անդրադառնալ Ի.Նունուշյանի նկատմամբ նշանակված պատժի հարցին և այդ հիմքով բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պաշտպան Է.Աղաջանյանը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 26-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռին:

Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Ի.Նունուշյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կանոնի խախտման հիմքով բեկանելու, գործը նոր քննության ուղարկելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն այն դեպքում, երբ մեղադրողի վերաքննիչ բողոքը վերաբերել է Առաջին ատյանի դատարանի կողմից արարքի քրեաիրավական վերաորակմանը:

12. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Պետական (...) մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կարարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Վերաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք*

պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝

(...)

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները (...)

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, և դրանք չեն կարող փոփոխվել և լրացվել գործի դատական քննության ընթացքում:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

13. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու մասին պահանջ սահմանող նորմի բովանդակությանը՝ Վճարելի դատարանը Ա.Սաքունցի գործով կայացված որոշման շրջանակներում արձանագրել է. «Այս իրավանորմից, *inter alia*, բխում է, որ վերաքննիչ դատարանն իրավունք չունի իր դատական ակտը հիմնավորել այնպիսի էական փաստարկումներով, որոնք ներկայացված չեն վերաքննիչ բողոքում:

Եպպարակային մեկնաբանման ենթարկելով դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ այն պարունակում է դատավարության մասնակցին րրված երաշխիք առ այն, որ իր գործով դատական քննության ընթացքում վերաքննիչ դատարանը չի կարարի րվյալ անձի դատավարական հսկառակորդի գործառույթ» (տե՛ս Ա.Սաքունցի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԴ/0001/11/10 որոշման 11-րդ կետը):

Իսկ Գ.Ղազարյանի գործով կայացված որոշման շրջանակներում Վճարելի դատարանը փաստել է. «(...) [Վ]երաքննիչ դատարանում գործը քննվում է բացառապես վերաքննիչ բողոքի առկայության պարագայում և բացառապես դրա հիմքերի ու հիմնավորումների սահմաններում: Այլ կերպ՝ վերաքննության առարկան ոչ թե գործի ըստ էության քննությունն է, այլ առաջին արյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության արուգումը: Դրանով պայմանավորված՝ վերաքննիչ դատարանում դատարանությունն սկսվում է ոչ թե մեղադրողի կողմից

մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակմամբ, այլ նախագահողի կողմից դատական ակտի բովանդակության, ինչպես նաև վերաքննիչ բողոքի և դրա դեմ առկա պարասխանների էության շարադրմամբ» (տես Գ.Ղազարյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԴ/0121/01/11 որոշման 27-րդ կետը):

Վերը մեջբերված դիրքորոշումները, Մ.Էլոյանի և այլոց գործով որոշմամբ ձևավորած դատողությունները (տես Վճարելի դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը) Վճարելի դատարանը զարգացրել է Ա.Խուրշուդյանի գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածում ամրագրված սահմանափակումները բացարձակ բնույթ չեն կրում, և դրանք պետք է դիտարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ իրավանդումների համադրությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից միայն այն դեպքում, երբ առկա է դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն անվերապահորեն պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մաս) կամ առկա է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Մյուս բոլոր դեպքերում վերաքննիչ դատարանը կաշկանդված է դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով, հերևարար իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ, վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս արձանագրել դատական սխալ և ուղղել այն (տես Ա.Խուրշուդյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԱԲԴ/0065/01/11 որոշման 15-րդ կետը):

14. Վերահաստատելով վկայակոչված որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանում դատական վերանայման սահմանափակ բնույթը ենթադրում է, որ դատարանի՝ գործում թույլ տրված դատական սխալները սեփական նախաձեռնությամբ ուղղելու հնարավորությունը սահմանափակ է, այսինքն՝ հանրային շահի համեմատությամբ կողմերի՝ իրենց իրավունքների պաշտպանության համար պատշաճ ջանասիրություն, հետևողականություն դրսևորելու մասնավոր շահը (տնօրինչականության սկզբունք) ունի առավելություն: Միաժամանակ որպես մասնավոր շահի նկատմամբ հակակշիռ, հանրային և մասնավոր շահերի արդյունավետ հավասարակշռության ապահովման անհրաժեշտություն՝ այն չի բացառում վերաքննիչ դատարանի հնարավորությունը դուրս գալու վերանայման սահմաններից, եթե առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատական ակտի

անվերապահ բեկանման հիմք (կամ անձի նկատմամբ խոշտանգում և վատ վերաբերմունքի այլ ձևեր կիրառելու դեպքերում (այդ մասին մանրամասն տե՛ս Ս.Գրիգորյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵԿԴ/0281/01/10 որոշումը))։ Ընդ որում, ինչպես հետևում է վերոգրյալից, վերաքննիչ դատարանի՝ վերանայման սահմաններից դուրս գալու սույն հնարավորությունը կրում է ոչ թե բացարձակ, այլ սահմանափակ բնույթ, քանի որ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռումը պահանջում է ոչ թե ցանկացած, այլ միայն բացառիկ դեպքերում բողոքի սահմաններից դուրս գալու հնարավորության ընձեռում։

Վերոգրյալ դատողությունների լույսի ներքո Վճարելի դատարանը փաստում է, որ վերը նշված բացառիկ հիմքերի բացակայության պարագայում վերաքննիչ դատարանը գրկվում է վերանայման սահմաններից դուրս գալու իրավական հնարավորությունից, ուստիև պարտավոր է դատական ակտը վերանայել բացառապես վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում։

15. Սույն գործի նյութերից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանն իր՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատական ակտով Ի.Նունուշյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետից վերաորակել է նույն օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և նշանակել այդ հանցագործության սանկցիայով նախատեսված պատիժ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը)։

Առաջին ատյանի դատարանի դատավճի դեմ բերված վերաքննիչ բողոքում մեղադրողն անդրադարձել է Ի.Նունուշյանի կատարած արարքի վերաորակման իրավաչափությանը՝ փաստարկելով, որ դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցների ուժով անհիմն են ամբաստանյալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարք կատարելու մասին Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունները (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը)։

Վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել մեղադրողի բողոքը և մերժել է այն՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը հնարավորություն չի ընձեռում բերված բողոքի կապակցությամբ կայացնելու համապատասխան որոշում։ Մինևույն ժամանակ Վերաքննիչ դատարանը սեփական նախաձեռնությամբ քննարկման առարկա է դարձրել ամբաստանյալ Ի.Նունուշյանի նկատմամբ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 17-ի դատավճով նշանակված պատիժը սույն գործով պատիժ նշանակելիս հաշվի առնելու, կրած մասը հաշվակցելու հարցը։ Արդյունքում Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը, Ի.Նունուշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նշանակելով տուգանք և Համաներման ակտի կիրառմամբ նրան

ազատելով նշանակված պատժից, թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտման հանգեցնող դատական սխալ, ուստի բեկանել է ստորադաս դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնների խախտումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատական ակտի անվերապահ բեկանմանը հանգեցնող դատավարական իրավունքի խախտում չէ: Հետևաբար Վերաքննիչ դատարանն իրավասու չէր դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից և սեփական նախաձեռնությամբ անդրադառնալ ամբաստանյալ Ի.Նունուշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնները կիրառված չլինելու հարցին, ապա այդ հիմքով բեկանել ստորադաս դատարանի դատական ակտը:

17. Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճարելի դատարանը գտնում է, որ իրավաչափ չէ Ի.Նունուշյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կանոնի խախտման հիմքով բեկանելու, գործը նոր քննության ուղարկելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն այն դեպքում, երբ մեղադրողի վերաքննիչ բողոքը վերաբերել է Առաջին ատյանի դատարանի կողմից արարքի քրեաիրավական վերատրակմանը: Այլ կերպ՝ սույն գործով Վերաքննիչ դատարանը, բեկանելով ստորադաս դատարանի դատական ակտը, դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից՝ թույլ տալով վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններն ամրագրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում, ինչն էլ իր հերթին հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքի խախտման:

17.1. Անդրադառնալով մեղադրողի վերաքննիչ բողոքը քննության առարկա չդարձնելու և մերժելու մասին Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը հնարավորություն չի ընձեռում բերված բողոքի կապակցությամբ կայացնելու համապատասխան որոշում (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը)՝ Վճարելի դատարանը արձանագրում է նաև, որ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ հետևությունն անհիմն է, քանի որ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից նույնիսկ իրավաչափ կերպով դուրս գալը տվյալ դեպքում, ըստ էության, չէր ստեղծում

որևէ խոչընդոտ մեղադրողի բողոքը քննության առարկա դարձնելու և այդ կապակցությամբ համապատասխան հետևության հանգելու համար:

18. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ և 7-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերոգրյալ հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանելու Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 26-ի որոշումը և գործն ուղարկելու նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները և գործի հանգամանքների բազմակողմանի վերլուծության ու գնահատման հիման վրա հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Իլլարիոն Ստեփանի Նունուշյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 26-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

34.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0179/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի հունվարի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի հուլիսի 21-ին Վազգեն Խնունը հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթուն բաժին այն մասին, որ ունի Հրաչը, չարաշահելով իր վստահությունը, խաբեությամբ իրենից վերցրել է ընդհանուր առմամբ 490.000 ՀՀ դրամ գումար՝ խոստանալով վերադարձնել հաջորդ օրը, սակայն չի վերադարձրել՝ տիրանալով նշված գումարին: Հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնում նախապատրաստվել են նյութեր:

2014 թվականի հուլիսի 22-ին նյութերն ըստ ենթակայության ուղարկվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին:

2014 թվականի օգոստոսի 4-ին հետաքննիչ Ս.Բաղդասարյանը (այսուհետ՝ նաև Հետաքննիչ) որոշում (այսուհետ նաև՝ Որոշում) է կայացրել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

2. 2014 թվականի օգոստոսի 19-ին Վ.Խնունը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի դատախազին և խնդրել վերացնել Հետաքննիչի 2014 թվականի օգոստոսի 4-ի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

2014 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ Երևան քաղաքի դատախազը (այսուհետ նաև՝ Դատախազ) Վ.Խնունի բողոքը մերժել է և հաստատել Որոշման օրինականությունը:

3. 2014 թվականի սեպտեմբերի 30-ին Վ.Խնունը դիմել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել Հետաքննիչի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշումը և պարտավորեցնել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազին հարուցել քրեական գործ:

Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ Վ.Խնունի բողոքը բավարարել է մասնակիորեն՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել Հետաքննիչի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ թույլ տրված՝ Վ.Խնունի իրավունքների խախտումը:

4. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հունվարի 29-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2015 թվականի հունվարի 29-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանը:

Վճռաբեկ դատարանի 2015 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Հետաքննիչի 2014 թվականի օգոստոսի 4-ի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման համաձայն՝ Վ.Խնունի

հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով պարզվել է, որ. «(...) Վ.Խնուկը աշխատում է «Տոբո գեյմինգ» Ռուբինյանց 12 հասցեում գործող սպասարկման կենտրոնում: 15.06.14թ. մշտական հաճախորդներից ուն Հրաչի ինդրանքով գումարը հեղափոխելու պայմանով ձևակերպել է 170.000 ՀՀ դրամ խաղադրույք: Իսկ արդեն հաջորդ օրը գնացել են «Կավալի» ակումբ, որտեղ Հրաչը նախ առաջարկել է սպասել մինչև ընկերը կրերի գումարը, իսկ հեղափոխում արդեն պարտքով ևս 320.000 ՀՀ դրամ գումար՝ խոստանալով նույն օրը վերադարձնել ամբողջ գումարը, սակայն այդպես էլ չի վերադարձրել:

Ձեռնարկված միջոցառումներով արարքը կատարած անձին հնարավոր չի եղել հայտնաբերել:

Այսպիսով, նյութերի նախապատրաստմամբ հիմնավորվել է, որ ուն Հրաչի արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հարկանիշները, քանի որ տվյալ դեպքում Վ.Խնուկը կամավոր, սեփական ռիսկով և գիտակցաբար կատարել է քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող իրավահարաբերություն, ուստի և քաղաքացու կողմից սրանձնած պարտավորության չկատարումը չի կարող քննարկվել քրեաիրավական հարաբերությունների համարեքստում, այդ հարցերը վերաբերում են մասնավոր իրավունքի տիրույթին, կրում են քաղաքացիաիրավական բնույթ, որը ենթակա է լուծման օրենքով սահմանված դատական կարգով» (տե՛ս նյութեր, էջ 9):

7. Հետաքննիչի Որոշման դեմ Վ.Խնուկի կողմից բերված բողոքը մերժելու մասին Դատախազի 2014 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ արձանագրվել է, որ. «(...) ուն Հրաչը հանդիսանում է Երևան քաղաքի Յան Ռայնիսի փողոցի թիվ 11 շենքի թիվ 24 բնակարանի բնակիչ, 1989թ. ծնված Թադևոս Զոհրաբի Միմոնյանը»:

Նույն որոշման համաձայն՝ «Նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ ձեռք չեն բերվել Թ.Միմոնյանի կողմից Վազգեն Խնուկի գույքը դիտարկությանը համաշրջակելու վերաբերյալ: Վազգեն Խնուկի բացատրությամբ պարզվել է, որ վերջինս նշված գումարը Թ.Միմոնյանին է տվել, նա էլ պարտավորվել է եր վերադարձնել վերցրած գումարը: Նյութերի նախապատրաստմամբ բավարար տվյալներ ձեռք չեն բերվել, որոնք կվկայեն Վազգեն Խնուկից գումարը վերցնելու, այն չվերադարձնելու և համաշրջակելու Թ.Միմոնյանի ունեցած նախնական դիտարկության մասին» (տե՛ս նյութեր, էջեր 11-12):

8. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում եզրահանգել է, որ. «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս հիմք է ընդունվել միայն Վազգեն Խնուկի բացատրությունը:

Դատարանը գրնում է, որ հետաքննիչի 2014թ. օգոստոսի 04-ի՝ «Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշումը հիմնավոր չէ, քանի որ վարույթն իրականացնող մարմինը բավարար ջանասիրություն

չի դրսևորել և չի պարզել ունի Հրաչի ինքնությունը, բացառություն չի վերցրել նրանից և չի պարզել, թե նա իրականում խարդախությամբ Վ.Խնոնից գումար հափշտակելու դիտարկություն ունեցել է, թե՛ ոչ, որի հետևանքով խախտվել են բողոքաբերի իրավունքները: Իրանք ենթակա են վերականգնման թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելով:

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ որոշումը վերացնելու կոնկրետ պահանջին, ապա Դատարանն արձանագրում է, որ մինչդարակյան վարույթի նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության և դատարանի վերահսկողության շրջանակներում քննվող բողոքների արդյունքում խախտված իրավունքների վերականգնման ձևերն ու եղանակները տարբեր են: Համապատասխան բողոքի քննության արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե մինչդարակյան վարույթն իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես առկա է դատախազական հսկողության պարագայում (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը), այլ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելով (...) (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Լ.Զարյանի վերաբերյալ գործով որոշումը, ԵԿԴ/0081/11/09, կայացված 2010 թվականի փետրվարի 12-ին, կետ 13):

Հաշվի առնելով, որ բողոքաբերը բողոքը ներկայացրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի հիման վրա՝ դատարանը գտնում է, որ պետք է սահմանել պարտականություն՝ վերացնելու թույլ տրված օրինախախտումը և վերականգնել Վազգեն Խնոնի խախտված իրավունքները» (տե՛ս նյութեր, էջեր 25-28):

9. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայման արդյունքում Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ստորադաս դատարանի դատական ակտի հիմքում դրված պատճառաբանությունները, եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը բողոքաբեր Վազգեն Խնոնի բողոքը մասնակիորեն բավարարելու հարցում ըստ էության հանգել է ճիշտ եզրակացության, հետևաբար վիճարկվող դատական ակտը բեկանելու հիմքեր չկան (տե՛ս նյութեր, էջեր 83-95):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես՝ չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ, 182-րդ և 185-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, ըստ էության, գտել է, որ քրեական գործի հարուցման հիմքերի առկայության վերաբերյալ եզրահանգումներ անելու համար ունի Հրաչին հայտնաբերելու, վերջինիս հայտնի՝ Վ.Խնտկի կողմից ներկայացված հանգամանքների վերաբերյալ տեղեկությունները պարզելու համար անհրաժեշտ է հարուցել քրեական գործ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ և 176-րդ հոդվածների վերլուծության հիման վրա բողոքաբերը փաստարկել է, որ Վ.Խնտկի բացատրություններում առկա փաստերը ճշտելու համար ունի Հրաչին հայտնաբերելու, նրանից բացատրություն վերցնելու անհրաժեշտությունը քրեական գործ հարուցելու նախապայման, առավել ևս՝ հիմք չէ:

11. Բողոք բերած անձը նաև նշել է, որ վարույթն իրականացնող մարմինը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ և 185-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ Վ.Խնտկի հաղորդման հիման վրա նախապատրաստել է նյութեր քրեական գործի հարուցման հիմքի՝ հանցագործության հատկանիշի առկայությունը ստուգելու ուղղությամբ, սակայն նախապատրաստված նյութերի արդյունքով որևէ հանցագործության հատկանիշ չի հայտնաբերվել, իսկ քրեական գործի հարուցումը՝ միայն ունի Հրաչին հարցաքննելու նպատակով, անթույլատրելի է:

Անդրադառնալով ունի Հրաչի արարքում ենթադրյալ խարդախության հանցակազմի առկայության խնդրին և հիմք ընդունելով այդ հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի վերաբերյալ Վճարելի դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի՝ Լ.Ավետիսյանի գործով թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշմամբ արտահատված իրավական դիրքորոշումը՝ Բողոքաբերը փաստարկել է, որ Վ.Խնտկի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով, այդ թվում՝ վերջինիս բացատրություններով չի հիմնավորվել Վ.Խնտկին մոլորության մեջ գցելու նպատակով՝ իրական, ճշմարիտ փաստերը դիտավորյալ խեղաթյուրելու կամ ճշմարտության մասին լռելու հանգամանքը: Ընդհակառակը, պարզվել է, որ Վ.Խնտկն իր կամքով, սեփական ռիսկով կատարել է նշված ընկերության մշտական հաճախորդներից մեկի՝ իր փոխարեն խաղաղորույք կատարելու խնդրանքը: 320.000 ՀՀ դրամ գումար տալը նույնպես Վ.Խնտկի ազատ կամարտահայտության արդյունք է, քանի որ, կասկածներ ունենալով նախորդ գումարը պարտապանի կողմից չմարելու հանգամանքի վերաբերյալ, Խնտկն ազատ էր ինքնուրույն տնօրինելու իր գումարները և հրաժարվելու դրանք տրամադրելուց, ինչը, սակայն, չի արել: Ինչ վերաբերում է ունի Հրաչի՝ Թ.Սիմոնյանի արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայությանը, ապա

բողոքաբերի պնդմամբ նրա գործողությունները՝ Վ.Խնունին հանդիպելը, գումարը վերցնելու հանգամանքը չժխտելը և այն վերադարձնելու պատրաստակամություն հայտնելը, վկայում են, որ վերջինս ի սկզբանե նպատակ չի ունեցել խարդախությամբ հափշտակելու Վ.Խնունի գումարները:

12. Բողոքաբերի պնդմամբ բողոքարկվող դատական ակտը հակասում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանների վերաբերյալ՝ Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի՝ Գ.Ղևոնդյանի գործով թիվ ԵԿԴ/0044/11/13, 2011 թվականի հուլիսի 13-ի՝ Հ.Հարությունյանի գործով թիվ ԵԿԴ/0004/11/11 և 2014 թվականի օգոստոսի 15-ի՝ Ռ.Ախայանի գործով թիվ ԵԿԴ/0199/11/13 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով, որ քրեական գործ հարուցելու հիմքերի առկայությունը ստուգելու համար անհրաժեշտ է կատարել մի շարք գործողություններ և պարտավորեցնելով վերացնել Հետաքննիչի՝ 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ թույլ տրված՝ Վ.Խնունի իրավունքների խախտումը, իսկ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշումն ուժի մեջ թողնելով, դուրս են եկել իրենց լիազորությունների սահմաններից:

13. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 21-ի և Վերաքննիչ դատարանի 2015 թվականի հունվարի 29-ի որոշումները և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի կողմից փաստարկված՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դատական ստուգման սահմանների կապակցությամբ առկա է առերևույթ հակասություն Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտերի և Վճարելի դատարանի՝ Գագիկ Ղևոնդյանի գործով կայացված որոշման միջև (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը): Ուստի, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր գործառնության շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ վերոնշյալ դատական ակտերի միջև հակասությունների առկայության հարցին:

15. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը հակասում են արդյոք Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի՝ Գ.Ղևոնդյանի գործով որոշմանը:

16. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական

արյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռարեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միարեսակ կիրառությունը: *Վճռարեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռարեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա վճռարեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշումը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, վճռարեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն (*Վճռարեկ դատարանը նույնարժանդակ դիրքորոշում է արտահայտել Անահիտ Միմոնյանի գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0055/11/13 որոշման 14-15-րդ կետերում*):

17. Վճռարեկ դատարանը Գ.Ղևոնդյանի գործով որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում դատարանը վերահսկողություն չի իրականացնում նախնական

քննության ընթացքի նկատմամբ: Դատարանը չի միջամտում քրեական դատավարության ընթացքին, չի անդրադառնում բողոքարկվող որոշման կայացման համար հիմք հանդիսացած քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությանը կամ նպատակահարմարությանը: Այս հարցերը գտնվում են նյութերի նախապարտապրությունն իրականացնող մարմինների բացառիկ լիազորությունների սահմաններում, իսկ քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ տվյալների լրիվությունն ապահովելու նպատակով հետաքննության մարմին կամ քննիչին ղեկավար ցուցումներ և հանձնարարություններ կարող է տալ միայն դատախազը: (...)

Դատարանի ինդիքն այս դեպքում կայանում է նրանում, որպեսզի պարզվի, թե վիճարկվող որոշումը կայացվել է արդյոք նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան և բխում է արդյոք նյութերի նախապարտապրության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներից: (...)» (տե՛ս Գագիկ Ղևոնդյանի գործով Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշման 16-րդ կետը):

Մեջբերված դիրքորոշումը Վճարելի դատարանը վերահաստատել է մի շարք այլ որոշումներում, այդ թվում՝ բողոքաբերի կողմից վկայակոչված 2014 թվականի օգոստոսի 15-ի՝ Ռ.Ալխայանի գործով թիվ ԵԿԴ/0199/11/13 որոշման մեջ:

18. Նույն՝ Գ.Ղևոնդյանի գործով որոշմամբ Վճարելի դատարանն արձանագրել է նաև. «[Զ]րեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման արդյունքում իրականացվող դատական վերահսկողության (...) առանձնահատկություններով է պայմանավորված քրեադատավարական օրենսդրության մեջ առկա այն փարբերակված մոտեցումը, որը վերաբերում է գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման և մինչդարական վարույթի ընթացքում կայացվող այլ որոշումների կամ իրականացվող գործողությունների (անգործության) բողոքարկման արդյունքում կայացվող դատական ակտերին: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը, որը սահմանում է մինչդարական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության ընդհանուր կարգը, ամրագրում է, որ եթե բողոքը ճանաչվում է հիմնավորված, ապա դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (տե՛ս Լաուրա Գարեգինի Զարյանի գործով Վճարելի դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշման 13-րդ կետը):

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հարուկ նորմ, որը հարակ կարգավորում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա

արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հեղուկությունը: Մասնավորապես, հիշարկված իրավանդությունը սահմանում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Ընդ որում, բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատարանի կողմից քրեական գործի հարուցումը: Այսինքն՝ քննարկվող իրավանդությունը սահմանում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ինքնավար ընթացակարգ:

(...)

Գտնելով, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումն օրինական և հիմնավորված չէ՝ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասով, որոշում է կայացնում վիճարկվող որոշումը վերացնելու մասին, որի դեպքում դատարանի կողմից քրեական գործի հարուցումը պարտադիր է: Հակասակ դեպքում դատարանը մերժում է ներկայացված բողոքը՝ հաստատելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը: (...)

» (տես Գագիկ Գևորգի Ղևոնդյանի գործով Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշման 17-18-րդ կետերը):

Մեջբերված դիրքորոշումը ձևավորելիս Վճարելի դատարանը հիմք է ընդունել նաև բողոքարկի կողմից վկայակոչված՝ 2011 թվականի հուլիսի 13-ի՝ Հ.Հարությունյանի գործով թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման իրավական դիրքորոշումները:

19. Սույն գործի փաստերից հետևում է, որ Առաջին աստիճանի դատարանը Հետաքննիչի 2014 թվականի օգոստոսի 4-ի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ դիմող Վ.Խնունի բողոքը ճանաչել է հիմնավորված այն հիմքով, որ վարույթն իրականացնող մարմինը բավարար ջանասիրություն չի դրսևորել և չի պարզել ոմն Հրաչի ինքնությունը, բացատրություն չի վերցրել նրանից և չի պարզել, թե նա իրականում խարդախությամբ Վ.Խնունից գումար հափշտակելու դիտավորություն ունեցել է, թե՛ ոչ, որի հետևանքով խախտվել են բողոքարկի իրավունքները: Արդյունքում Առաջին աստիճանի դատարանը բողոքը բավարարել է մասնակիորեն՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել Հետաքննիչի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ թույլ տրված՝ Վ.Խնունի իրավունքների խախտումը: Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ Առաջին աստիճանի դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված է (տես սույն որոշման 3-րդ, 8-9-րդ կետերը):

20. Նախորդ կետում վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 17-18-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ

ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը հակասում են Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի՝ Գ.Ղևոնդյանի գործով որոշմանը:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ Գ.Ղևոնդյանի գործով կայացված դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող և սույն որոշման 17-18-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով առավել ընդհանրական են, և դրանց կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն և Գ.Ղևոնդյանի գործերի փաստական հանգամանքների ընդհանրությունն այն է, որ երկու դեպքում էլ դատարանները դատական ստուգման են ենթարկել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը և անդրադարձել վարույթն իրականացնող մարմնի կողմից դատավարական գործողություններ կատարելու նպատակահարմարությանը, ինչպես նաև կայացված որոշմամբ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել են վերացնել բողոքաբերի իրավունքների խախտումը: Նշված փաստական հանգամանքների համընկնումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս պնդելու, որ Գ.Ղևոնդյանի գործով որոշման հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) սույն գործով որոշում կայացնելիս ստորադաս դատարանների համար պարտադիր են եղել:

Մինչդեռ ստորադաս դատարանները, անտեսելով Գ.Ղևոնդյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում անդրադարձել են դատավարական գործողություններ կատարելու նպատակահարմարությանը (*«վարույթն իրականացնող մարմինը բավարար ջանասիրություն չի դրսևորել և չի պարզել ունև Հրաչի ինքնությունը, բացատրություն չի վերցրել նրանից»*), ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել են վերացնել Հետաքննիչի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ թույլ տրված՝ Վ.Խնունի իրավունքների խախտումը:

21. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ, Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանի որ սույն գործի քննության ժամանակ անտեսել են Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի՝ Գ.Ղևոնդյանի գործով որոշման հիմնավորումները, որոնք նրանց համար պարտադիր են եղել: Ստորադաս դատարանները ոչ միայն չեն կիրառել կիրառման ենթակա՝ Վճռաբեկ դատարանի նախկինում կայացված որոշումը, այլև որևէ ծանրակշիռ

փաստարկի մատնանշմամբ չեն հիմնավորել, որ այն կիրառելի չէ տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Արդյունքում ստորադաս դատարանները դուրս են եկել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության կապակցությամբ իրականացվող դատական վերահսկողության սահմաններից՝ թույլ տալով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքի խախտում:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով տրաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործով դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, մասնավորապես խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, արդյունքում նաև՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի պահանջները: Խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Մինչույն ժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում, պահպանելով քրեական գործի հարուցումը մերժելու որոշման դատական ստուգման սահմանները, Վերաքննիչ դատարանը պետք է քննության առարկա դարձնի նաև խարդախության հանցակազմի բացակայության վերաբերյալ բողոքաբերի փաստարկները (տես սույն որոշման 11-րդ կետը) և օրենքով սահմանված կարգով գա համապատասխան եզրահանգման:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Դիմող Վազգեն Արսենի Խնոնի իրավունքների խախտումը վերացնելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի հունվարի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

35.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՆԴ/0094/01/13

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ
պաշտպան օրինական ներկայացուցիչ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՔՈՉԱՐՅԱՆԻ
Ա.ՍԵԹՈՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արամայիս Արմենի Նունուշյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 26-ի որոշման դեմ պաշտպան Ա.Քոչարյանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Գրիգորյանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17801813 քրեական գործը:

1.1. 2013 թվականի սեպտեմբերի 23-ին Աղասի Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-38-266-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

1.2. 2013 թվականի սեպտեմբերի 23-ին անչափահաս Արամայիս Նունուշյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 1-ին մասով և 34-38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

1.3. 2013 թվականի սեպտեմբերի 28-ին Արտակ Վարդանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

1.4. 2013 թվականի նոյեմբերի 19-ին Արմեն Նունուշյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով և 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

1.5. 2013 թվականի դեկտեմբերի 23-ին Հրայր Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

1.6. 2013 թվականի դեկտեմբերի 23-ին Ա.Կարապետյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-38-268-րդ հոդվածի 1-ին մասով:

1.7. Արամայիս Նունուշյանի կողմից 2013 թվականի օգոստոսին հոր՝ Արմեն Նունուշյանի բանավոր ցուցումով «Ֆոլկսվագեն» մակնիշի տաքսի ավտոմեքենայի վարորդից 15 հար ձեռք բերելու և դրանք անհայտ անձին իրացնելու նպատակով Սեբաստիա 117 հասցեի հարևանությամբ գտնվող կենտրոնական փողոցի ծառի տակ դնելու վերաբերյալ թիվ 17801813 քրեական գործի մասը 2013 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառմամբ՝ նրա արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, իսկ խոշոր չափի՝ 9.23 գրամ հաստատուն քաշով ափիոն տեսակի թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու և Նոր Նորքի 5-րդ զանգվածի Մառի փողոցի 18/1 շենքի հետնամասի ցանկապատ տարածքում պահելու վերաբերյալ մասը կարճվել է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի հիմքով:

1.8. 2013 թվականի դեկտեմբերի 23-ին Արամայիս Նունուշյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է

առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2. 2013 թվականի դեկտեմբերի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունիսի 9-ի դատավճռով Արամայիս Նունուշյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Նշված դատավճռով դատապարտվել են նաև Արմեն Նունուշյանը, Ա.Կարապետյանը, Հ.Հակոբյանը, Ա.Վարդանյանը:

Արմեն Նունուշյանը ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի 4-րդ մասով՝ երկու դրվագներից յուրաքանչյուրով, դատապարտվել է ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ երկու դրվագներից յուրաքանչյուրով՝ ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ պատիժները մասնակի գումարելու միջոցով, վերջնական դատապարտվել է ազատազրկման՝ 9 (ինը) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կիրառմամբ սույն դատավճռով նշանակված 9 (ինը) տարի ժամկետով ազատազրկմանը մասնակիորեն գումարվել է նախորդ դատավճռով սահմանված ազատազրկման 6 (վեց) տարի 6 (վեց) ամիս ժամկետով պատժի չկրած մասից 4 (չորս) տարին, և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 13 (տասներեք) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով:

Ա.Կարապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-38-268-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 9 (ինը) ամիս ժամկետով:

Հ.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 9 (ինը) ամիս ժամկետով:

Ա.Վարդանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Ա.Վարդանյանին թմրամոլությունից բուժելու

նպատակով նշանակվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում:

3. Մեղադրող Մ.Հակոբյանի, ամբաստանյալներ Հ.Հակոբյանի, Ա.Վարդանյանի և ամբաստանյալ Արմեն Նունուջյանի շահերի պաշտպան Մ.Թովմասյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2014 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ ամբաստանյալներ Հ.Հակոբյանի, Ա.Վարդանյանի և ամբաստանյալ Արմեն Նունուջյանի շահերի պաշտպան Մ.Թովմասյանի վերաքննիչ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունիսի 9-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ, իսկ դատախազ Մ.Հակոբյանի վերաքննիչ բողոքը՝ բավարարել: Ամբաստանյալ Արամայիս Նունուջյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունիսի 9-ի դատավճիռը բեկանել և փոփոխել է՝ վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով դատապարտելով ազատազրկման՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 26-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Արամայիս Նունուջյանի պաշտպան Ա.Քոչարյանը, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Նունուջյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) [Ի]րացման նպատակով թմրամիջոց ապօրինի ձեռք բերելուն և ապօրինի իրացնելուն օժանդակելու դիտարկությամբ, հեռախոսով նախնական համաձայնության է եկել ՀՀ ԱԾ «Արթիկ» քրեակադրապոլիսիան հիմնարկի դատապարտյալ, իր հայր Արմեն Արամայիսի Նունուջյանի հետ և անչափահաս տարիքում՝ 2013թ. սեպտեմբերի 20-ին, Արմեն Նունուջյանի հանձնարարությամբ Երևան քաղաքի Միկոյան 27-րդ շենքի 4-րդ մուտքի դռան մոտ դրված «Մարլբորո» տեսակի ծխախոտի փուփից իրացման նպատակով ապօրինի ձեռք է բերել խոշոր չափի՝ ընդհանուր՝ 0,022 գրամ «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող դեղահաբերի 4 կտորներ, որոնք հոր պահանջով երկուական կտորներով առանձնացնելուց հետո թաքցրել է ծխախոտի փուփերի մեջ և իրացնելու նպատակով թողել նույն մուտքի դռան հետևում: Քիչ անց հիշյալ թմրամիջոցներն Աղասի Կարապետյանի ու Արտակ Վարդանյանի կողմից ձեռք բերելուց և ծխախոտի փուփերի մեջ դրանց արժեքը կազմող 100.000 և 200.000 ՀՀ

դրամ գումարը տեղադրելուց հետո Արամայիս Նունուշյանը վերցրել է գումարը և հեռացել:

Նշված գումարների դիմաց ապօրինի իրացված՝ համապարասիանարար՝ 0,0154 գրամ և 0,0066 գրամ «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող հաբերի երկուսական կտորները նույն օրը հայտնաբերվել և առգրավվել են Ադասի Կարապետյանի անձնական խուզարկությանը և Արուսյակ Վարդանյանին տեղափոխող ավտոմեքենայի զննությանը, իսկ թմրամիջոցի վաճառքից գոյացած 300.000 ՀՀ դրամը հայտնաբերվել և առգրավվել է Արամայիս Նունուշյանի մոտից՝ կատարված անձնական խուզարկությանը (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 315-316):

6. Արմեն Նունուշյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ որդուց պարտքով գումար է պահանջել՝ նշելով, որ «թավանի գումար պետք է փակվի» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 186):

Ամբաստանյալ Արամայիս Նունուշյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ հայրը զանգահարել և խնդրել է 1.000.000 ՀՀ դրամ գումար՝ ասելով, որ պարտվել է, և այն անհապաղ պետք է մարի, իսկ չվճարելու դեպքում իրենց կվնասեն (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 42-43, հատոր 2, թերթեր 308-309, հատոր 3, թերթ 187):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Դատարանն ամբաստանյալ Արամայիս Նունուշյանի պարասիանարարությունը և պարիժը մեղմացնող հանգամանքներ է դիտում այն, որ նախկինում դատարարված չի եղել, հանցանքը կատարելու պահին եղել է անչափահաս, հանցանքը կատարել է իրեն և իր ընտանիքի անդամներին սպառնացող վրանգը կանխելու պարճատով:

Դատարանն անչափահաս ամբաստանյալ Արամայիս Նունուշյանի պարասիանարարությունը և պարիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրում:

(...)

Հաշվի առնելով Արամայիս Արմենի Նունուշյանի կատարած հանցանքի հանրության համար վրանգավորության աստիճանն և բնույթը, ինչպես նաև այն, որ նրան մեղսագրվել է ծանր հանցագործություն, որի համար պարիժ է նախատեսված բացառապես ազատազրկման ձևով, դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ պարիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով, որը նա պետք է կրի:

Միաժամանակ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա. Նունուշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պարիժ նշանակելու միջոցով կապահովվի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջը, որի համաձայն պարժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները հետևյալ պարճատարանությամբ:

(...)

Դատաքննությանը պարզվել է, որ ամբաստանյալ Արամայիս Նունուշյանը նախկինում արատավորված չի եղել, հանցանքը կատարել է անչափահաս փարիքում և որևէ շահադիպական նպատակ չի ունեցել, նրա ծնողներն ամուսնալուծված են, փաստացի դատախարակվել է ամբարենպաստ կենսապայմաններում, հանցանքը կատարել է ազատագրված վայրում պարիժ կրող, սույն քրեական գործով ամբաստանյալ Արմեն Նունուշյանի դրդմամբ՝ նրա կողմից գումարային պարտք ունենալու և այն չվճարելու հետևանքով, ինչպես հորը, այնպես էլ իրեն և ընտանիքի մյուս անդամներին վնասելու սպառնալիքը կանխելու դրդապատճառով:

Դատարանը գրնում է, որ վերը շարադրված բոլոր հանգամանքներն իրենց համակցությամբ էականորեն նվազեցնում են ինչպես ամբաստանյալ Ա. Նունուշյանի կատարած հանցագործության, այնպես էլ նրա վրանգավորության աստիճանը և պարասխանարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում օրյեկտիվ հիմք են հանդիսանում նրա նկատմամբ օրենքով սահմանվածից ավելի մեղմ պարիժ նշանակելու համար (...)

(տես քրեական գործ, հատոր 3, թերթեր 191-192):

8. Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առաջին արյանի դատարանը, հաշվի չառնելով գործի հանգամանքները, Արամայիս Նունուշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակել է պարիժ, որն անարդարացի է ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում նրա կատարած հանցագործությունների ծանրությանը և դատապարտյալի անձին:

Ինչ վերաբերում է Առաջին արյանի դատարանի կողմից բացառիկ ճանաչված ամբաստանյալ Արամայիս Նունուշյանի կողմից հանցանքը հոր պարտքը չվճարելու հետևանքով կատարելու մասին, ինչպես վերջինիս, այնպես էլ իրեն և ընտանիքի մյուս անդամներին վնասելու սպառնալիքը կանխելու դրդապատճառով, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քրեական գործով ձեռք բերված և դատաքննությանը հետազոտված ապացույցներով չի հիմնավորվել և չի հաստատվել Արամայիս Նունուշյանին կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացող որևէ վրանգի առկայության կամ դրա իրական հավանականության հանգամանք:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին արյանի դատարանն ամբաստանյալ Արամայիս Նունուշյանի նկատմամբ պարտաչափ նշանակելիս կիրառել է այն օրենքը (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը), որը ենթակա չէր կիրառման:

(...)

Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Արամյախ Արմենի Նունուշյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում նրա կարարած հանցագործության բնույթն ու վրանգավորության աստիճանը, կարարման հանգամանքները, անձը բնութագրող տվյալները, դատական ակտում շարադրված պարասխանաարվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, պարասխանաարվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ համակցության մեջ, և հանգում հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ պատիժ պետք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիայի սահմաններում, ինչը հիմք է դարձնում ակտի մասով բեկանելու և փոփոխելու համար (...)» (տես քրեական գործ, հատոր 4, թերթեր 128-129):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

9. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական և հիմնավորված չէ, հետևաբար ենթակա է բեկանման:

Մասնավորապես, բողոք բերած անձը նշել է, որ Ա.Նունուշյանը հանցանքը կատարելիս եղել է անչափահաս, նախկինում երբևէ արատավորված չի եղել, շահադիտական նպատակներ չի հետապնդել, նախաքննության և դատաքննության ընթացքում տվել է ճշմարտացի ինքնախոստովանական ցուցմունքներ, ծնողներն ամուսնալուծված են, իսկ հանցանքը կատարել է ազատագրկման վայրում պատիժ կրող հոր՝ Արմեն Նունուշյանի դրդմամբ՝ նրա կողմից գումարային պարտք ունենալու և այն չվճարելու դեպքում ինչպես հորը, այնպես էլ ընտանիքի մյուս անդամներին վնասելու սպառնալիքը կանխելու դրդապատճառով:

Արդյունքում բողոքի հեղինակը եզրահանգել է, որ վերոնշյալ հանգամանքներն իրենց համակցությամբ էականորեն նվազեցնում են ինչպես հանցագործության, այնպես էլ Ա.Նունուշյանի անձի վտանգավորության աստիճանը, ուստի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում հիմք են նրա նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 26-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունիսի 9-ի դատավճիռն:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու առանձնահատկությունների կապակցությամբ առկա

է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ոստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ սման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Ա.Նունուշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառումը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

13. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր երեխա, առանց ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի կամ ծննդի հասրկանիչով որևէ խտրականության, իրավունք ունի իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես մանկահասակի»:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ «Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք»:

«Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների («Պեկինյան կանոններ») 5-րդ կետի համաձայն՝ «Անչափահասների վերաբերյալ արդարադատության համակարգը ուղղված է առաջին հերթին անչափահասի բարեկեցության ապահովմանը, որպեսզի անչափահաս իրավախախտների վրա ազդեցություն գործող ցանկացած միջոց միշտ համաչափ լինի ինչպես իրավախախտի անհատական առանձնահատկություններին, այնպես էլ իրավախախտման հանգամանքներին»:

«Պեկինյան կանոնների» 17.1-րդ կետի համաձայն՝ «Ներգործության միջոցների ընտրության ժամանակ իրավասու մարմինը պետք է ղեկավարվի հետևյալ սկզբունքներով.

ա) ներգործության միջոցները միշտ պետք է համարժեք լինեն ոչ միայն իրավախախտման հանգամանքներին և ծանրությանը, այլև անչափահասի դրությանը և պահանջներին, ինչպես նաև հասարակության պահանջներին.

բ) անչափահասի անձնական ազատության սահմանափակման մասին որոշումը պետք է ընդունվի միայն հարցի մանրագնին քննարկումից հետո, և սահմանափակումը հնարավորության սահմաններում պետք է հասցնել նվազագույնի. (...)»:

«Պեկինյան կանոնների» 19.1-րդ կետի համաձայն՝ «Անչափահասին որևէ ուղղիչ հիմնարկում ներփակելը միշտ պետք է ծայրահեղ միջոց լինի, անհրաժեշտ նվազագույն ժամկետի համար կիրառված»:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 37-րդ հոդվածի համաձայն՝ «Մասնակից պետությունները ապահովում են, որ.

(...)

(բ) ոչ մի երեխա չգրկվի ազատությունից անօրինական կամ կամայական կերպով: Երեխայի ձերբակալությունը, կալանքը կամ ազատազրկումն իրականացվում են համաձայն օրենքի և գործադրվում են միայն որպես ծայրահեղ միջոց և որքան հնարավոր է՝ կարճ ժամանակամիջոցով,

(...):»:

«Ազատազրկված անչափահաս անձանց պաշտպանության վերաբերյալ» ՄԱԿ-ի կանոնների («Հավանայի կանոններ») 2-րդ կետը սահմանում է. «Անչափահասին ազատությունից զրկելը պետք է կիրառվի որպես ներգործության ծայրահեղ միջոց՝ անհրաժեշտ նվազագույն ժամկետով: Այն պետք է սահմանափակվի բացառիկ դեպքերում: Պարզի ժամկետը պետք է որոշվի դատական մարմնի կողմից՝ չբացառելով նրան վաղաժամկետ ազատելու հնարավորությունը»:

Մեջբերված դրույթների վերլուծությունից բխում է, որ անչափահասները, պայմանավորված իրենց տարիքային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով, ունեն հատուկ հոգածության և խնամքի կարիք, ուստի արդարադատություն իրականացնելիս պետք է հաշվի առնել ձեռնարկվող միջոցառումների հնարավոր ազդեցությունը նրանց բարեկեցության վրա: Մասնավորապես, կիրառվող ներգործության միջոցների ընտրությունը պետք է պայմանավորված լինի ոչ միայն կատարված իրավախախտման ծանրությամբ, այլև անձի անհատական առանձնահատկություններով: Հասարակությունից մեկուսացնելու հետ կապված պատժատեսակները անչափահասների նկատմամբ պետք է կիրառվեն որպես ծայրահեղ միջոց՝ հնարավոր նվազագույն ժամկետներով և սահմանափակ ու բացառիկ դեպքերում, քանի որ ի տարբերություն չափահասների՝ ազատազրկման բացասական հետևանքները նրանց վրա ավելի մեծ ազդեցություն են թողնում:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պարզի տեսակը և չափը որոշվում են հանցագործության հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

Նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ են՝

(...)

2) հանցանք կատարելու պահին հանցավորի անչափահաս լինելը.

(...)

8) հանցանքը սպառնալիքի կամ հարկադրանքի կամ նյութական, ծառայողական կամ այլ կախվածության ազդեցության տակ կատարելը.

(...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անչափահասները քրեական պատասխանատվության են ենթարկվում, և նրանց նկատմամբ պարիժ է նշանակվում սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն բաժնում նախատեսված կանոնները»:

Նույն օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անչափահասի նկատմամբ պարիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը»:

ՀՀ քրեական օրենսդրությունում անչափահասների նկատմամբ քրեական պատասխանատվության և պատժի հատուկ կանոնների նախատեսումը մարդասիրության սկզբունքի կարևորագույն դրսևորումներից է: ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ բաժնում նախատեսված են պատժի տեսակների սահմանման և դրանց նշանակման, քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու, վաղեմության ժամկետները հաշվելու և դատվածության մարման հատուկ պայմաններ, որոնք էականորեն բարելավում են անչափահասի վիճակը և լրացուցիչ երաշխիքներ սահմանում նրա իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար: Բացի այդ, անձի տարիքից բխող հոգեկան առանձնահատկություններով պայմանավորված՝ հանցանք կատարելու պահին հանցավորի անչափահաս լինելը (14-18 տարեկան) ինքնին քրեական օրենսգրքում նախատեսված է որպես մեղմացուցիչ հանգամանք:

Անչափահասի նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից (օրինականության, արդարության և պատասխանատվության անհատականացման, մարդասիրության սկզբունքներ) բացի (պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների վերաբերյալ մանրամասն տրեն Նարեկ Սարգսյանի գործով Վճռարեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման 14-21-րդ կետերը), դատարանը պարտավոր է ղեկավարվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածով սահմանված կանոններով: Այսպես՝ հանցագործության՝ հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի (մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու

միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն), հանցավորի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հետ մեկտեղ դատարանը պատիժ նշանակելիս պետք է հատկապես հաշվի առնի՝

1) անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները (ընտանեկան դրությունը, ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ հարաբերությունների բնույթը, նյութական վիճակը, կրթությունը, աշխատանքը և այլն),

2) հոգեկանի զարգացման աստիճանը (հուզական ոլորտը, որոշակի իրադրությունում ճիշտ կողմնորոշվելու և իր գործողությունները ղեկավարելու ունակությունը, ինտելեկտի մակարդակը և այլն),

3) առողջության վիճակը (մտավոր և ֆիզիկական առողջության վերաբերյալ առկա տվյալները),

4) անձի այլ առանձնահատկությունները (հետաքրքրությունների շրջանակը, աշխատանքի, կրթության, իրավական և բարոյական նորմերի նկատմամբ վերաբերմունքը և այլն),

5) նրա վրա այլ անձանց ազդեցությունը (նրանց միջև առկա հարաբերությունների բնույթը, անչափահասին հանցագործության մղելու եղանակներն ու միջոցները՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն, հարկադրանք, համոզում, խաբեություն և այլն):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը թվարկված հանգամանքները ենթակա են բազմակողմանի հետազոտման անչափահասների վերաբերյալ յուրաքանչյուր գործով: Միայն դրանց համակողմանի վերլուծության արդյունքում դատարանը կարող է ամբողջական պատկերացում կազմել անչափահասի անձնային և տարիքային առանձնահատկությունների մասին և ընտրել այնպիսի ներգործության միջոց, որն ուղղված կլինի նրա ուղղմանն ու դաստիարակությանը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը ընդգծում է նաև, որ անչափահասի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցը, ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի ընդհանուր նպատակներից բացի (սոցիալական արդարության վերականգնում, պատժի ենթարկված անձի ուղղում, հանցագործությունների կանխում), պետք է հետապնդի նաև անչափահասի հոգեկան և ֆիզիկական բնականոն զարգացման, նրա բարեկեցությունն ապահովելու հատուկ նպատակ:

14.1. Անչափահասները, գտնվելով զարգացման փուլում և որպես անհատ դեռևս լիարժեք կայացած չլինելով, ավելի են հակված ընկնելու այլ անձանց բացասական ազդեցության տակ: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ անչափահասի կողմից հանցանքի կատարումը պայմանավորվում է նրա վրա այլ անձանց ազդեցությամբ, անհրաժեշտ է մանրամասն վերլուծության ենթարկել նրանց միջև առկա հարաբերությունների

բնույթը, անչափահասի վրա բացասական ներգործության աստիճանը և դրա արդյունքում վրա հասած հետևանքները:

Վճռարեկ դատարանը փաստում է, որ նման ազդեցությունը, գործի հանգամանքներով պայմանավորված, կարող է տարբեր քրեաիրավական նշանակություն ունենալ: Մասնավորապես, եթե հանցանքը կատարվել է սպառնալիքի, հարկադրանքի կամ նյութական, ծառայողական կամ այլ կախվածության ազդեցությամբ, ապա այն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով պետք է գնահատվի որպես մեղմացնող հանգամանք:

Վերոգրյալը վերաբերում է այնպիսի սպառնալիքին կամ հարկադրանքին, որն անձին չի գրկում իր կամքով գործելու հնարավորությունից և չի ստեղծում ծայրահեղ անհրաժեշտության վիճակ: Նյութական, ծառայողական կամ այլ կախվածության դեպքում անհրաժեշտ է փաստել, որ նման կախվածությունն իրական է և պայմանավորել է հանցանքի կատարումը: Այսպես՝ նյութական կախվածության դեպքում հանցավորը ֆինանսական կախվածության մեջ է գտնվում իրեն ազդեցության տակ գցողից (օրինակ՝ նրա խնամքի տակ է, բնակվում է նրա բնակարանում և այլն), ծառայողական կախվածության դեպքում գործում են ղեկավար և ենթակա հարաբերությունները, իսկ այլ կախվածության տակ պետք է հասկանալ այնպիսի իրավիճակ, երբ ձևավորված հանգամանքների ուժով անձն իրեն պարտական է զգում մեկ այլ անձի նկատմամբ, իսկ վերջինս դա օգտագործելով՝ հակում է նրան հանցագործության: Այն կարող է առաջանալ ամուսնական, բարեկամական կամ այլ հարաբերությունների ուժով (կնոջ և ամուսնու, ծնողի և երեխայի, աշակերտի և ուսուցչի, ուսանողի ու դասախոսի միջև և այլն):

Վերոնշյալ հանգամանքների պարզաբանումն էական նշանակություն ունի հանցագործության մեջ անչափահասի իրական դերը և մասնակցության աստիճանը, հանցավորի անձի և նրա արարքի հանրային վտանգավորությունը ճիշտ գնահատելու և դրան համարժեք պատիժ նշանակելու հարցում:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վրանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հարույկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պարժի նվազագույն չափից ավելի ցածր պարժի կամ ավելի մեղմ պարժարեսակ, քան նախատեսված է այդ

հողվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախաբեկված լրացուցիչ պարիծ:

2. Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը»:

Սույն քրեաիրավական նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված որոշումներում (ՎԲ-55/07, ՎԲ-145/07, ՎԲ-185/07, ՎԲ-11/08, ՎԲ-13/08, ՎԲ-25/08, ՎԲ-ԵՔԲԴ/0057/01/08, ՏԴ/0094/01/09, ԱՎԴ2/0057/01/09, ԵԱՔԴ/0164/01/09, ԵԱՔԴ/0195/01/09 և այլն), և կայուն նախադեպային իրավունք է ձևավորվել այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը կարող է կիրառվել առնվազն հետևյալ երկու պայմանների առկայության պարագայում՝ գործի բացառիկ հանգամանքների և խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքի բացահայտմանն ակտիվորեն աջակցելու դեպքում: Օրենքում օգտագործվող «բացառիկ» բառը ենթադրում է, որ նշված հոդվածի կիրառման համար հիմք հանդիսացող մեղմացնող հանգամանքը կամ մեղմացնող հանգամանքների համակցությունը դուրս են սովորականի շրջանակներից և այն աստիճան առանձնահատուկ են, որ վերածվում են բացառության: Մասնավորապես, դրանք կարող են կապված լինել հանցագործության շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի, ինչպես նաև այլ հանգամանքների հետ: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք էականորեն ազդել արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա:

Անչափահասների քրեական պատասխանատվության բնագավառում վերոգրյալ նորմն ունի կիրառման որոշակի առանձնահատկություններ և ձեռք է բերում հատուկ կարևորություն: Այսպես, դատարանը պատիժ նշանակելիս պետք է ոչ միայն ղեկավարվի պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, այլև հաշվի առնի ՀՀ քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածում թվարկված հանգամանքները, որոնց համակցությունը կարող է վկայել գործում «բացառիկ» հանգամանքների առկայության մասին և հիմք հանդիսանալ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար:

15.1. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անչափահասների սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված՝ հասարակությունից նրանց երկարատև ժամկետով մեկուսացնելն արդարացված չէ, քանի որ անչափահաս տարիքում անձը հեշտությամբ է ենթարկվում շրջապատի բացասական ազդեցությանը, մեծանում է հանցավոր ենթամշակույթի տարրերը յուրացնելու հավանականությունը: Մյուս կողմից նրանք, ի տարբերություն չափահասների, ավելի հեշտ են ենթարկվում պատժի ուղղիչ ազդեցությանը: Հետևաբար դատարանը նախ և առաջ

պետք է քննարկի ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակի նշանակման հնարավորությունը: Որոշակի ժամկետով ազատագրելուն՝ որպես անչափահասների նկատմամբ կիրառվող ամենախիստ պատժատեսակ, պետք է նշանակվի միայն բացառիկ դեպքերում, երբ ներգործության որևէ այլ միջոց չի կարող դրական արդյունք ապահովել:

16. Սույն որոշման նախորդ կետում արտահայտված դիրքորոշումը վերլուծելով սույն որոշման 13-15-րդ կետերում մեջբերված միջազգային և ներպետական իրավական կարգավորումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անչափահասին մեղսագրվող արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսվում է միայն ազատագրելու պատժատեսակը, դատարանը պետք է քննարկի ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ ավելի մեղմ պատժամիջոց ընտրելու կամ ավելի ցածր պատժաչափ նշանակելու հնարավորությունը՝ հաշվի առնելով առկա մեղմացնող հանգամանքների համակցությունը, անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, նրա վրա այլոց ազդեցությունը, անձը բնութագրող այլ տվյալները, ինչպես նաև հանցագործության՝ հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Այս մտեցումը համահունչ է անչափահասների պաշտպանությանն ուղղված միջազգային-իրավական փաստաթղթերի բովանդակությանը և հետապնդում է վերջիններիս բնականոն զարգացումն ու բարեկեցությունն ապահովելու իրավաչափ նպատակ:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ ամբաստանյալ Ա.Նունուշյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա անչափահաս տարիքում՝ 2013 թվականի սեպտեմբերի 20-ին, հորը՝ Արմեն Նունուշյանին թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելուն և իրացնելուն օժանդակելու դիտավորությամբ, վերջինիս հանձնարարությամբ ձեռք է բերել և իրացրել խոշոր չափի՝ ընդհանուր 0,022 գրամ «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող դեղահաբերի 4 կտոր (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով կատարված հանցագործության բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը՝ այն, որ Ա.Նունուշյանին մեղսագրվում է ծանր հանցագործություն, հանգել է հետևության, որ նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակել բացառապես ազատագրելու ձևով, որը նա պետք է կրի: Մինևս ժամանակ գնահատելով գործում առկա մեղմացնող հանգամանքների համակցությունը և ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ Ա.Նունուշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ է նշանակել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերացրել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառումը՝ նշելով, որ Առաջին ատյանի դատարանի կողմից բացառիկ ճանաչված՝ ամբաստանյալ Ա.Նունուշյանի կողմից հանցանքը հորը և ընտանիքի մյուս անդամներին սպառնացող վտանգը կանխելու դրդապատճառով կատարելը քրեական գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվել և չի հաստատվել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-16-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Ա.Նունուշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառումը վերացնելիս պատշաճ վերլուծության չի ենթարկել գործում առկա մեղմացնող հանգամանքների համակցությունը, ինչպես նաև չի գնահատել անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները, նրա վրա այլ անձանց ազդեցությունը:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արամայիս Նունուշյանը հանցանքը կատարել է անչափահաս տարիքում, հոր՝ Արմեն Նունուշյանի կողմից նրան հանցանքի կատարմանը ներգրավելու արդյունքում: Այսպես՝ Արմեն Նունուշյանը որդուց գումար է պահանջել՝ նշելով, որ ունի պարտքեր, որոնք չվճարելու դեպքում իրենց կվնասեն: Ծնող և երեխա հարաբերությունների ուժով ամբաստանյալն իրեն պարտավորված է զգացել հոր նկատմամբ, իսկ վերջինս, դա օգտագործելով, հակել է նրան ծանր հանցագործության: Նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ հանցանքը կատարվել է կախվածության ազդեցությամբ, ինչը եղել է իրական և հաստատվել գործում առկա ապացույցներով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Ուստի Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ գործով չի հաստատվել Արամայիս Նունուշյանի կողմից հանցանքը հորը և ընտանիքի մյուս անդամներին սպառնացող վտանգը կանխելու դրդապատճառով կատարելը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), հիմնավորված չէ, չի բխում գործում առկա և դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներից:

19. Վերոշարադրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա մեղմացնող հանգամանքների համակցությունը՝ Արամայիս Նունուշյանի կողմից հանցանքն անչափահաս տարիքում, այլ կախվածության ազդեցությամբ՝ ազատագրկման վայրում պատիժ կրող իր հոր՝ Արմեն Նունուշյանի դրդմամբ կատարելը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև ամբաստանյալի կյանքի և դաստիարակության անբարենպաստ պայմանները՝ այն, որ ծնողները եղել են ամուսնալուծված, հայրը երկար ժամանակ

պատիժ է կրել և կրում քրեակատարողական հիմնարկում, նրա դատախարակությամբ զբաղվել է մայրը միայնակ, իրենց բնույթով բացառիկ են, էականորեն նվազեցնում են հանցավորի անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը և հիմք են օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար:

Հետևաբար Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ հանգել է ճիշտ եզրակացության: Մասնավորապես, հիմնվելով օբյեկտիվորեն գոյություն ունեցող տվյալների վերլուծության վրա և հաշվի առնելով կատարված արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը՝ ամբաստանյալի նկատմամբ նշանակել է ազատագրելու՝ հնարավորինս նվազ ժամկետով, ինչը լիովին համապատասխանում է անչափահասին հասարակությունից մեկուսացնելը որպես ծայրահեղ միջոց դիտելու և այն բացառիկ դեպքերում կիրառելու վերաբերյալ միջազգային-իրավական ակտերով սահմանված պահանջներին և նպատակ է հետապնդում ապահովելու անչափահասի բարեկեցությունը, նրա իրավունքների պաշտպանությունն ու բնականոն զարգացումը:

20. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Նունուշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառումը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը, պատժի մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխելով և ամբաստանյալ Ա.Նունուշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառումը վերացնելով, պատշաճ գնահատման չի ենթարկել սույն գործում առկա Ա.Նունուշյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, անչափահասի անձը բնութագրող բոլոր հանգամանքները՝ թույլ տալով ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ, 90-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝
Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արամայիս Արմենի Նունուշյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 26-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 9-ի դատական ակտին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

36.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0011/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ
ամբաստանյալների պաշտպաններ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
Ռ.ԳՈՒԼԳՈՒԼՅԱՆԻ
Տ.ԱԹԱՆԵՍՅԱՆԻ
Կ.ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արսեն Արմենի Կարապետյանի և Ռուբեն Կիմի Գուլգուլյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի մարտի 3-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի սեպտեմբերի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 10133213 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ Արսեն Արմենի Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն մարմնի՝ 2014 թվականի հունվարի 23-ի որոշմամբ Ռուբեն Կիմի Գուլգույանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի ապրիլի 18-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 10-ի դատավճռով Ա.Կարապետյանը և Ռ.Գուլգույանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, և նրանց նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նրանց նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չեն կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Մեղադրող Մ.Գրիգորյանի և ամբաստանյալ Ռ.Գուլգույանի պաշտպան Կ.Քալանթարյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2015 թվականի մարտի 3-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 10-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մարտի 3-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճարելի դատարանը 2015 թվականի մայիսի 25-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակից՝ ամբաստանյալ Ա.Կարապետյանի պաշտպան Տ.Աթանեսյանը, ներկայացրել է վճարելի բողոքի պատասխան՝ խնդրելով Ա.Կարապետյանի մասով մեղադրողի վճարելի բողոքը մերժել, և այդ մասով Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մարտի 3-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Ա.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա 2013 թվականի սեպտեմբերի 29-ին՝ ժամը 15.50-ի սահմաններում, Երևան քաղաքի Շինարարների փողոցի 16 շենքին հարակից հարվածում, անձնական փոխհարաբերությունների շուրջ ծագած վիճարանության*

ժամանակ, մարմնական վնասվածքներ հասցնելու դիրավորությամբ իր մոտ եղած դանակով երեք անգամ հարվածել է Վահե Սուրենի Կարապետյանի կրծքավանդակի ձախ կեսին, ձախ ազդրին և դիրավորությամբ պարճատել առողջության ծանր վնաս (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 169):

Ամբաստանյալ Ռ.Գուլգուլյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, 2013 թվականի սեպտեմբերի 29-ին՝ ժամը 15.50-ի սահմաններում, Երևան քաղաքի Շինարարների փողոցի 16 շենքին հարակից հարվածում, անձնական փոխհարաբերությունների շուրջ ծագած վիճարանության ժամանակ, մարմնական վնասվածքներ հասցնելու դիրավորությամբ ձեռքով և ուրբերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Գևորգ Հայկի Հայրապետյանի մարմնի տարբեր մասերին և դիրավորությամբ պարճատել առողջության ծանր վնաս (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 169):

6. Դատաբժշկական փորձաքննության թիվ 1685/հ եզրակացության համաձայն՝ «Վ.Կարապետյանի սրացած մարմնական վնասվածքները կրծքավանդակի ձախ կեսի միջին անրակային գծով 6-րդ միջկողային տարածության ծակած-կտրած թափանցող վերքի՝ սրտապարկի վնասումով, կրծքավանդակի ձախ կեսի միջին անտոթային գծով 6-րդ միջկողային տարածության ծակած-կտրած թափանցող վերքի ձախ թոքի վնասումով, ձախ ազդրի շրջանի ծակած-կտրած վերքի մկանների վնասումով, պարճատվել են ծակող-կտրող գործիքով(ներով), այդ թվում դանակով(ներով), հնարավոր է գործի հանգամանքներում նշված ժամանակին և պարճատվել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 133):

Դատաբժշկական փորձաքննության թիվ 1678/հ և լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության թիվ 2099/Լ եզրակացությունների համաձայն՝ «Գ.Հայրապետյանի սրացած մարմնական վնասվածքները՝ ձախ ակնակապիճի ենթամաշկային արյունահավաքի (հեմատոմայի), ձախ ակնագնդի 2-րդ սարիճանի կոնտուզիայի, հիֆեմայի, հեմոֆթալմի, որովայնի բութ վնասվածքի՝ փայծախի պարովածքի ձևով, պարճատված են բութ առարկաների ազդեցությամբ, հնարավոր է գործի հանգամանքներում նշված ժամանակին և պարճատվել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 188-189, հատոր 2-րդ, թերթեր 40-41):

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 10-ի դատավճռի համաձայն՝ «Դատարանը (...) ամբաստանյալ Արսեն Կարապետյանի պարասիանսարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանք է համարում այն, որ նա իրեն մեղավոր է ճանաչել, զղջացել է կարարածի համար, նախկինում դատապարտված չի եղել, հանցանքը կարարել է հանգամանքների պարասիական զուգորդմամբ, հանցագործության

կատարմանը նպաստել է Ռուբեն Գուլգույանի հակաօրինական վարքագիծը, որով պայմանավորվել է հանցագործությունը, տուժող Վահե Կարապետյանի վնասը վերականգնված է, որևէ բողոք կամ պահանջ չունի, ֆիզիկապես վարատող է, 17.06.2013 թվականից հաշվառված է ՀԲԿ Ավանի հոգեբուժական կլինիկայում և փառապում է «Հերփսիտոսիկ ներտրիկ խանգարում» ախտորոշմամբ հիվանդությամբ (...), ՀՀ ՊՆ 410-13 թվականի հրամանի «7Բ» հոդվածի համաձայն տրվել է տարկետում առողջական վիճակի պարճառով՝ 3 տարի ժամկետով, դատաբանական-դատաբանական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն հանդիսանում է ասիմանափակ մեղսունակ անձ, հանցանքը կատարելու պահին գրնվել է հոգեկան լարվածության րագնապայնության, սթրեսային վիճակում (...), բնութագրվում է դրական Երևան քաղաքի թիվ 1 մասնաճյուղ «Արաբկիր-005» համադրիության րնօրեն Ա.Երիցյանի կողմից:

Ամբաստանյալի պարասիանաարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Դատարանը (...) ամբաստանյալ Ռուբեն Գուլգույանի պարասիանաարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանք է համարում այն, որ նա իրեն մասնակի մեղավոր է ճանաչել, նախկինում դատապարտված չի եղել, կամավոր ներկայացել է ոսրիկանության բաժին, ֆիզիկապես վարատող է, փառապում է «Երկկողմանի երկայնակի և լայնակի հարթաթաթություն 3-րդ ասրիճանի, զույգ որնաթաթերի վեգ-նավակաճև և 1-ին մեդաարազալ-ֆալանգային հողերի արթորոգ, քայլքի ֆունկցիայի զգալի խանգարումով» հիվանդությամբ, ինչի հեդրևանքով (...) ճանաչվել է ոչ պիրանի զինվորական ծառայության համար, բնութագրվում է դրական «Միթար Գոշ» հայ-ոուսական միջազգային համալսարանի պրոռեկտոր Ռ.Ղազարյանի կողմից, տուժող Գևորգ Հայրապետյանի վնասը վերականգնված է, որևէ բողոք կամ պահանջ չունի:

Ամբաստանյալի պարասիանաարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

(...)

(...) [Հ]աշվի առնելով Արսեն Կարապետյանի անձը բնութագրող րվյալները, այդ թվում պարասիանաարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքները, պարասիանաարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանցանքը կատարելուց հեդր դրսևորած վարքագիծը՝ մասնավորապես այն, որ մեկ տարուց ավելի գրնվելով ազարության մեջ գիրակցել է կատարած հանցանքի վրանգավորությունը և մինչ օրս գերծ է մնացել այլ հակաօրինական արարքներ կատարելուց, րվել է իսսարվանական ցուցմունքներ, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, տուժողը որևէ բողոք չի ներկայացրել, հանցանքը կատարել է հանգամանքների պարահական զուգորդմամբ, իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Արսեն Կարապետյանը ճանաչվել

է սահմանափակ մեղսունակ և հանցանքը կատարելու պահին գրնվել է հոգեկան լարվածության, տրամադրության, սթրեսային վիճակում, ինչն էսպես ազդել է նրա գիտակցության և վարքի վրա, հանդիսանում է ընդհանրի միակ զավակը և ՀՀ ԱԵ կից դատահոգեբուժական սրացիոնար մինչգերատեսչական հանձնաժողովի նախագահ Սեդրակ Թադևոսյանի ցուցմունքի համաձայն՝ նույնիսկ ամենամեղմ ներաստենիայով, եթե մարդը մտնում է մեկուսարան, ապա նրա մոտ առաջանում է ծանր ձևը, որը անդառնալի հետևանք է առաջացնում անձի համար, դատարանը գրնում է, որ թվարկված հանգամանքներն էականորեն նվազեցնում են հանցագործության հանրության համար վրանգավորության աստիճանն ու իրենց համակցությամբ հնարավորություն են տալիս հանգելու հետևության, որ Արսեն Կարապետյանի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու (...):

(...) [Հ]աշվի առնելով Ռուբեն Գուլգուլյանի անձը բնութագրող տվյալները, այդ թվում պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանցանքը կատարելուց հետո դրսևորած վարքագիծը՝ մասնավորապես այն, որ մեկ տարուց ավելի գրնվելով ազատության մեջ գիտակցել է կատարած հանցանքի վրանգավորությունը և մինչ օրս զերծ է մնացել այլ հակաօրինական արարքներ կատարելուց, կամավոր ներկայացել է ոստիկանության բաժին, տվել է խոստովանական ցուցմունքներ, տուժողը որևէ բողոք չի ներկայացրել, ֆիզիկապես վարատող է, այն որ հանցավորը տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառել է իր ֆիզիկական հնարավորությունները գործադրելով, առանց որևէ գործիք կամ առարկա օգտագործելով, դատարանը գրնում է, որ թվարկված հանգամանքներն էականորեն նվազեցնում են հանցագործության հանրության համար վրանգավորության աստիճանն ու իրենց համակցությամբ հնարավորություն են տալիս հանգելու հետևության, որ Ռուբեն Գուլգուլյանի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 175-177):

8. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մարտի 3-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալներ Ռ. Գուլգուլյանի և Ա. Կարապետյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներն իրական են, գործով ձեռք բերված ապացույցները հաստատում են դրանց առկայությունը, այդպիսիք ողջամտորեն նվազեցնում են վերջիններիս կողմից կատարած հանցանքի հանրային վրանգավորության աստիճանը, որի պայմաններում հանգում է այն հետևության, որ [Առաջին արյանի դ]ատարանի կողմից ամբաստանյալների նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելը՝ բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված

արդարության և պարասիանսարվության անհարականսցման սկզբունքից, համապարասիանում է կարարված հանցանքի ծանրությանը, այն կարարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրանց ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար և կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախարեամբ պարժի նպարակները (...)» (տե՛ս քրեական գործ, հարոր 4-րդ, թերթ 76):

Վճարելի բողորի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողորը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողորարերը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 61-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի, 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ հաշվի չեն առել նրանց կատարած հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները, ինչպես նաև օրենքով պաշտպանվող հարաբերությունների սոցիալական նշանակությունը:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողորարերը մեջբերել է Վճարելի դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները և նշել, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել ամբաստանյալների դիտավորության ուղղվածությունը, տեսակը, արարքի կատարման եղանակը, օգտագործված գործիքը, մարմնական վնասվածքների բնույթն ու տեղակայումը, վերջիններիս հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և մեղքի ձևը:

10. Բողորի հեղինակը փաստել է նաև, որ ստորադաս դատարանները պատշաճ իրավական ընթացակարգերով չեն հետազոտել և գնահատել ամբաստանյալների պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները (ամբաստանյալներ Ա.Կարապետյանի մեղավոր ճանաչելը և Ռ.Գուլգույանի մասնակի մեղավոր ճանաչելը, հանցանքը կատարելուց հետո վերջիններիս դրսևորած վարքագիծը, մեկ տարուց ավելի ազատության մեջ գտնվելով՝ կատարած հանցանքի վտանգավորությունը գիտակցելը և մինչ օրս այլ հակաօրինական արարքներ կատարելուց զերծ մնալը, Ա.Կարապետյանի կողմից հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարելը, դատվածություն չունենալը, դրական բնութագրվելը, Ռ.Գուլգույանի կողմից տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելը՝ իր ֆիզիկական հնարավորությունները գործադրելով): Ավելին՝ ըստ բողորարերի՝ նշյալ հանգամանքները չեն կարող նվազեցնել ամբաստանյալներ Ռ.Գուլգույանի և Ա.Կարապետյանի կատարած արարքների՝ հանրության համար վտանգավորության աստիճանը

և նրանց նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն:

11. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը խնդրել է Ա.Կարապետյանի, Ռ.Գուլգուլյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մարտի 3-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ամբաստանյալներ Ա.Կարապետյանի և Ռ.Գուլգուլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կայանքի, ազատագրվման կամ կարգապահական գումարարկում պահելու ձևով պարիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատարարայալի ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պարիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պարասիսանսարվությունը և պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Սույն քրեաիրավական նորմերը Վճարելի դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճարելի դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (*հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տեսնելու Գարուշ Մադաթյանի՝ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 գործով, Արմեն Շահրազյանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 գործով, Արարար*

Ավագյանի և Վահան Սահակյանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 գործով Վճարելի դատարանի որոշումները՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (ԵԱԴԴ/0034/01/12, ԼԴ/0093/01/12, ՏԴ/0018/01/13, ԵԼԴ/0132/01/13, ԵԱՆԴ/0060/01/13, ԵԿԴ/0096/01/13, ԵԿԴ/0252/01/13, ԵՄԴ/0027/01/14, ԳԴ/0014/01/14, ՍԴ/0204/01/13, ՏԴ/0031/01/14, ՍԴ3/0174/01/14 և այլն):

Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վրա ազդող վերը նշված գործոններից մեղքի ձևի հետ կապված՝ Վճարելի դատարանն իր նախադեպային իրավունքում նաև արձանագրել է. «(...) [Մ]եղքի դիրավորյալ ձևով կատարվող հանցագործությունների ժամանակ առավել բարձր հանրային վրանգավորություն ունեն ուղղակի դիրավորյալ կատարվող արարքները, որոնք ենթադրում են հանցավորի կողմից հանրորեն վրանգավոր հեղևանքների առաջացման անխուսափելիության կամ իրական հնարավորության նախարեսում: Ընդ որում, արարքի վրանգավոր հեղևանքների առաջացումը նախարեսելն ընդգրկում է ոչ միայն սպագայում սպամվելիք փոփոխությունների փաստական բովանդակության գիրակցումը, այլև այդ փոփոխությունների սոցիալական նշանակության (հանրային վրանգավորության) գիրակցումը: Բոլոր այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձի կողմից հարակ գիրակցվում է արարքի և վրանգավոր հեղևանքների միջև առկա միանշանակ պարճատական կապը և դրա զարգացումը, այսինքն՝ առկա է վրանգավոր հեղևանքների առաջացման անխուսափելիության նախարեսումը, օբյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վրանգավորության աստիճանը: Այս դեպքում հանցագործության սուբյեկտի պատրաստվածությունը, հանցանքի կատարման եղանակը, իրարությունը, օգրագործվող գործիքները, միջոցներն իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վրանգավոր հեղևանքների առաջացումը՝ հանցավորի մոր միանշանակ վարահություն առաջացնելով իր նպատակների անխուսափելի իրագործման մեջ (...)» (տե՛ս Ա.Շահբազյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշման 14-րդ կետը):

14. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Դիրավորյալ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճատելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճատելը (...)

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով»:

Մեջբերված հանցակազմը Վճարելի դատարանը վերլուծել է Ա.Շահբազյանի գործով որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ

իրավական դիրքորոշումը. «(...) [ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված] հանրորեն վրանգավոր արարքների դեմ արդյունավետ պայքարը պահանջում է այս ոլորտում համապատասխան քրեական, այդ թվում պարտողական քաղաքականության իրականացում: Իսկ դա իր հերթին ենթադրում է ոչ միայն համապատասխան օրենսդրական հիմքերի առկայություն, այլև դրանց գործնական կիրառման հնարավորության ապահովում:

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը պարասխանավորություն է նախատեսում մարդու առողջության դեմ ուղղված հանցագործություններից ամենավրանգավորի՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պարճատելու համար: Քննարկվող հանցագործության հանրային առավել բարձր վրանգավորությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ համապատասխան հակաիրավական արարքի արդյունքում մարդուն պարճատվում է վնաս, որը խիստ բացասական է անդրադառնում նրա առողջական վիճակի վրա, այլև նրանով, որ կարող է առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև տուժողի մահ: Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի (...):

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վրանգավոր արարքը կարող է կատարվել տարբեր եղանակներով: Մասնավորապես, հանցավորը տուժողի առողջությանը ծանր վնաս կարող է պարճատել՝ իր ֆիզիկական հնարավորությունները գործադրելով (ձեռքով կամ ոտքով հարվածելով, հրել-վայր գցելով, մարմնի որևէ մաս ջարդելով և այլն), տարբեր գործիքներ, իրեր կամ առարկաներ (դանակ, կացին, մորձ, մեքաղյա ձող, քար և այլն) օգտագործելով, զանազան մեխանիզմներ, միջոցներ կամ նյութեր (հրազեն, թույն, թմրանյութ և այլն) կիրառելով, տարերային աղերի իրադրությունը կամ առավել վրանգի աղբյուրն օգտագործելով և այլն: Քննարկվող հանցագործության կատարման նշված եղանակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վրանգավորության աստիճանը: Այսպես՝ տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում դանակով հարված հասցնելիս հանցավորը ոչ միայն նախատեսում է հանրորեն վրանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիությունը, այլև գիտակցում է կամ առնվազն պարտավոր է գիտակցել, որ իր գործողություններով տուժողին պարճատում է առողջության ծանր վնաս, որը վրանգավոր է կյանքի համար և անզամ կարող է հանգեցնել մահվան: Այլ խոսքով՝ հանցավորը գործում է ուղղակի դիտավորությամբ և հստակ նախատեսում է իր արարքի և վրանգավոր հետևանքների միջև առկա միանշանակ պարճատական կապը և դրա զարգացումը, այդ թվում՝ գիտակցում է կամ պարտավոր է գիտակցել, որ տուժողին կարող

է պատճառել մահ, սակայն ինքնավարահությամբ կամ անփութությամբ հույս է ունենում, որ նշված ծանր հեղինակները չի առաջանա: Վերոգրյալն ինքնին վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վրանգավորության առավել բարձր աստիճանի մասին, ուստի օբյեկտիվորեն պետք է գնահատվի և հաշվի առնվի դատարանների կողմից պատիժ նշանակելիս:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցագործության հանրային վրանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքներին, միջոցներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին ու տեղակայմանը: Համապատասխան գնահատականի պետք է արժանացվի նաև կատարված հանրորեն վրանգավոր արարքի և դրա հեղինակների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:

[Ա]ռանց նշված հանգամանքների գնահատման առողջությանը դիտարկողությամբ ծանր վնաս պատճառելու վերաբերյալ գործերով հնարավոր չէ ճիշտ պարկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության հանրության համար վրանգավորության աստիճանի մասին: Հետևաբար, նշանակված պատժով չի ապահովվի կատարված արարքի և կիրառված քրեաիրավական ներգործության միջոցի համաչափությունը, ինչպես նաև կիսաթարվեն պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները» (տե՛ս Ա.Շահբազյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշման 15-17-րդ կետերը):

15. Վերահաստատելով Ա.Շահբազյանի որոշմամբ արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելու դեպքում պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս, ի թիվս այլնի, հատկապես կարևոր է հաշվի առնել հանցանքի կատարման գործիքներն ու միջոցները, մարմնական վնասվածքների քանակը, բնույթը, տեղակայումը, անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ:

Կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում վնաս պատճառելու համար օգտագործված տարատեսակ գործիքները, առարկաները կամ սարքավորումները, վնասվածք(ներ)ի տեղակայումը, հանցավորի պատրաստվածությունը, մեղքի դիտավորյալ ձևը (հատկապես՝ ուղղակի դիտավորությունը) իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, մեծացնում հանցագործությունը հաջողությամբ ավարտին հասցնելու կամ ավելի

մեծ վնաս պատճառելու հավանականությունը: Հետևաբար նման դեպքերում օբյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վտանգավորության աստիճանը: (լրենս, *mutatis mutandis*, *Ս.Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14 որոշման 14-րդ կետը*):

16. Սույն գործի նյութերից հետևում է, որ՝

ա) Ա.Կարապետյանը անձնական փոխհարաբերությունների շուրջ ծագած վիճաբանության ժամանակ մարմնական վնասվածքներ հասցնելու դիտավորությամբ իր մոտ եղած **դանակով երեք անգամ հարվածել է** Վ.Կարապետյանի կրծքավանդակի ձախ կեսին, ձախ ազդրին՝ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, որն արտահայտվել է **սրտապարկի, թոքի**, մկանների վնասումով (տե՛ս սույն որոշման 5-6-րդ կետերը):

բ) Ռ.Գուլգուլյանը անձնական փոխհարաբերությունների շուրջ ծագած վիճաբանության ժամանակ մարմնական վնասվածքներ հասցնելու դիտավորությամբ **ձեռքով և ոտքերով** բազմաթիվ հարվածներ է հասցրել Գ.Հայրապետյանի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, որն արտահայտվել է ակնակապիճի ենթամաշկային արյունահավաքով, ակնագնդի 2-րդ աստիճանի կոնտուզիայով, հիֆեմայով, հեմոֆթալմով, որովայնի բուլթ վնասվածքով՝ փայծախի պատվածքի ձևով (տե՛ս սույն որոշման 5-6-րդ կետերը):

գ) Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալներ Ա.Կարապետյանի և Ռ.Գուլգուլյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, եկել է այն եզրահանգման, որ վերջիններիս ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու: Իսկ Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը անհրաժեշտ ու բավարար է նրանց ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար և կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակները (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ա.Կարապետյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պատշաճ գնահատականի չեն արժանացրել կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, մասնավորապես՝

ա) վերլուծության չեն ենթարկել այն հանգամանքը, որ Ա.Կարապետյանը **դանակով երեք հարված է** հասցրել տուժողի մարմնի **կենսականորեն կարևոր օրգանների շրջանում**՝ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս, ինչն օբյեկտիվորեն բարձրացնում է կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը,

բ) չեն գնահատել հանցավորի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ, մասնավորապես այն, որ ամբաստանյալը գիտակցել է, որ իր գործողություններով տուժողի առողջությանը պատճառում է կյանքի համար վտանգավոր ծանր վնաս, նախատեսել իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը,

գ) հաշվի չեն առել խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ ամբաստանյալը ոտնձգել է այնպիսի հասարակական հարաբերության դեմ, որի խախտումը ոչ միայն խիստ բացասաբար է անդրադարձել տուժողի առողջական վիճակի վրա, այլև կարող էր առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև մահ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերոգրյալի հիման վրա Վճռարեկ դատարանը գտնում է, որ Ա.Կարապետյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս ստորադաս դատարանները ինչպես առանձին վերցրած, այնպես էլ իրենց համակցության մեջ պատշաճ ուշադրություն չեն դարձրել արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին ու տեղակայմանը, հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքին, օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթին:

19. Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ռ.Գուլգույյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններին, ապա Վճռարեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ ամբաստանյալ Ռ.Գուլգույյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված սկզբունքից, համապատասխանում է կատարված հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու ու նոր հանցագործությունները կանխելու համար և կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակները (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

20. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 10-րդ կետում բարձրացրած փաստարկներին՝ Վճռարեկ դատարանը արձանագրում է, որ

ստորադաս դատարանները դրանց կապակցությամբ թույլ չեն տվել այնպիսի դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

21. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Ա.Կարապետյանի և Ռ.Գուլգուլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունները Ա.Կարապետյանի մասով իրավաչափ չեն, սակայն Ռ.Գուլգուլյանի մասով իրավաչափ են:

22. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Ա.Կարապետյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

Վճարելի դատարանը գտնում է նաև, որ Ռ.Գուլգուլյանի մասով ստորադաս դատարանները կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր, թույլ չեն տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, հետևաբար Ռ.Գուլգուլյանի մասով վճարելի բողոքը պետք է մերժել՝ նրա վերաբերյալ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 397-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արսեն Արմենի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 10-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի մարտի 3-ի որոշումը բեկանել և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության, իսկ ամբաստանյալ Ռուբեն Կիմի Գուլգուլյանի մասով վճարելի բողոքը մերժել՝ նրա վերաբերյալ դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:

Ամբաստանյալ Արսեն Արմենի Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

37.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0143/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի նոյեմբերի 20-ի որոշման դեմ դիմող Պյեր Ժան Մուրադյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի օգոստոսի 7-ին դիմող Պյեր Ժան Մուրադյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կենտրոնականի քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ

Ա.Մարտիրոսյանի (այսուհետ նաև՝ Քննիչ) 2014 թվականի մայիսի 29-ի որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում):

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ դիմող Պյեր Ժան Մուրադյանի ներկայացուցչի բողոքը մերժվել է:

2. Դիմողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի նոյեմբերի 20-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 20-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել դիմող Պյեր Ժան Մուրադյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանը:

Վճարելի դատարանը 2015 թվականի հունվարի 23-ի որոշմամբ ներկայացված բողոքը վերադարձրել է՝ տրամադրելով 15-օրյա ժամկետ՝ թերությունները վերացնելու, բողոքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանեցնելու և կրկին ներկայացնելու համար:

Դիմողի ներկայացուցիչ Ա.Ղազարյանը կրկին վճարելի բողոք է ներկայացրել 2015 թվականի փետրվարի 23-ին, որը Վճարելի դատարանի 2015 թվականի մայիսի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 22-ի դատական նիստի արձանագրման համառոտագրումից երևում է, որ հրապարակվել են բողոքի վերաբերյալ դատարան ստացված նյութերը (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, գ.թ. 38):

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 25-ի գրությամբ բողոքի վերաբերյալ դատարան ստացված նյութերը վերադարձվել են վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, գ.թ. 45):

6. Վերաքննիչ բողոքի քննության ընթացքում Վերաքննիչ դատարան չեն ուղարկվել կամ ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերը (տե՛ս նյութեր, 1-ին և 2-րդ հատորներ):

7. Բողոքի կապակցությամբ կազմված նյութերում առկա չեն վարույթն իրականացնող մարմնի կողմից բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը (տե՛ս նյութեր, 1-ին և 2-րդ հատորներ):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Դիմողի ներկայացուցիչը գտել է, որ ստորադաս դատարանները չեն պահպանել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 18-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 175-րդ, 176-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև անտեսել են Վճարելի դատարանի՝ *Լիա Ավետիսյանի* վերաբերյալ 2011 թվականի փետրվարի 24-ի՝ թիվ ԵԿԴ/0176/01/09 և Սուսաննա Ասպունյանի վերաբերյալ 2013 թվականի փետրվարի 15-ի՝ թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ կայացնելով չհիմնավորված դատական ակտեր:

9. Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոքի հեղինակը նշել է, որ գործի փաստական հանգամանքներն առավել քան բավարար են քրեական գործ հարուցելու համար, մինչդեռ վարույթն իրականացնող մարմնի կողմից անհրավաչափորեն կայացվել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

Բողոքաբերի համոզմամբ վերոգրյալ որոշմամբ սահմանափակվել են դիմող Պյեր Ժան Մուրադյանի՝ որպես տուժողի իրավունքներն ու օրինական շահերը, որպիսի հանգամանքը ստորադաս դատարանների կողմից պատշաճ գնահատականի չի արժանացել:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ դիմողի ներկայացուցիչը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 20-ի դատական ակտը, այն է՝ վերացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և սահմանել իր կողմից ներկայացված հաղորդման մեջ մատնանշված խախտումը վերացնելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից բողոքի վերաբերյալ նյութեր ներկայացնելու պահանջի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված են արդյոք Քննիչի Որոշման դատական ստուգման արդյունքում կայացված ստորադաս

դատարանների դատական ակտերն այն պայմաններում, երբ բողոքի կապակցությամբ կազմված նյութերում բացակայում են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը:

13. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:

(...)

4. (...) քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

4. (...) Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր (...):»:

13.1. Վճռաբեկ դատարանը կրկնում է մեջբերված նորմերի վերլուծության հիման վրա իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովումը,

- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալու անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնելու խախտված իրավունքներն ու ազատությունները (*տե՛ս Ներսես Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի կողմից 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴԻ/0003/11/08 որոշման 12-րդ կետը*):

Վերոգրյալի հաշվառմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը դատարանին պարտավորեցնում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու վերաբերյալ յուրաքանչյուր բողոք ենթարկել մանրակրկիտ ստուգման, իսկ, որպեսզի դատարանն իրականացնի իր լիազորությունը, օրենսդիրը սահմանել է վարույթն իրականացնող մարմնի պարտավորությունը՝ դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մաս): Ներկայացված նյութերի հիման վրա դատարանը պետք է ստուգի բողոքարկված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավորված լինելը՝ կապված դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների հնարավոր խախտումների հետ, որի արդյունքում, հիմնվելով հետազոտված նյութերի վրա, բողոք բերած անձանց փաստարկների մանրակրկիտ ստուգմամբ պետք է կայացնի հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ խախտումների առկայության կամ բացակայության մասին, առանց կանխորոշելու այնպիսի հարցեր, որոնք պետք է քննարկման առարկա դառնան քրեական գործի ըստ էության քննության ժամանակ (մեղադրանքի հիմքում դրված ապացույցների գնահատում, արարքի քրեաիրավական որակման ճշտություն և այլն) (*տե՛ս, mutatis mutandis, Ներսես Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի կողմից 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴԻ/0003/11/08 որոշման 15-րդ կետը*):

14. Զարգացնելով նախորդ կետում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքի քննության դատական վարույթի օբյեկտը բողոքի կապակցությամբ

ներկայացված նյութերն են, որոնց հիման վրա դատարանը գնահատում է անձի իրավունքների և ազատությունների խախտման առկայությունը: Հաշվի առնելով, որ վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության հիմքում դրված նյութերը գտնվում են նրա տիրապետության ներքո՝ օրենսդիրն անձի՝ դատական պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով վարույթն իրականացնող մարմնի համար սահմանել է այդ նյութերը դատարան ներկայացնելու պարտականություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մաս): Ընդ որում, վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան պետք է ներկայացվեն բողոքին վերաբերող նյութերը՝ ինչպես բողոքարկվող որոշման կամ գործողության օրինականությունը ենթադրաբար հիմնավորող, այնպես էլ՝ հերքող:

Այսպիսով, վարույթն իրականացնող մարմնի կողմից բողոքի վերաբերյալ նյութերը դատարան ներկայացնելու պահանջը կոչված է ապահովելու մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանին անհրաժեշտ փաստական հիմքը: Նշված նյութերով է պայմանավորված դատարանի կողմից մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության ու հիմնավորվածության պատշաճ ստուգում իրականացնելու և դրա արդյունքում հիմնավորված եզրահանգումներ կատարելու օբյեկտիվ հնարավորությունը:

15. Նույն կերպ վերադաս դատական ատյանը մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության դատական ստուգման արդյունքում կայացված դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս պետք է հիմք ընդունի բողոքը քննելիս ստորադաս ատյանի տրամադրության տակ եղած նյութերը և դրանց համատեքստում համապատասխան գնահատական տա բողոքաբերի փաստարկներին: Միայն այդ պարագայում հնարավոր կլինի պարզել դատարանի հետևությունների համապատասխանությունը գործում առկա նյութերին: Այլ խոսքով՝ վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատական ատյանի որոշման վերանայումը հնարավոր է դատական ակտը կայացրած դատարանի հետազոտած նյութերի հիման վրա, հակառակ դեպքում վերադաս դատական ատյանի որոշումը չի համապատասխանի դատական ակտերին ներկայացվող օրինականության և հիմնավորվածության պահանջներին՝ հանգեցնելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի արդար դատաքննության իրավունքի խախտման (*դատական ակտին ներկայացվող պահանջների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս, mutatis mutandis, Ֆրունզիկ Գալսրյանի գործով Վճարելի դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշումը*):

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հետազոտելով վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան ներկայացված նյութերը, 2014 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ մերժել է ներկայացված բողոքը (տե՛ս սույն որոշման 1-ին կետը), այնուհետև 2014 թվականի սեպտեմբերի 25-ի գրությամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը հետ է վերադարձրել (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վերաքննիչ բողոքի քննության ընթացքում Վերաքննիչ դատարան չեն ուղարկվել կամ ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

17. Նախորդ կետում շարադրված փաստերը վերլուծելով սույն որոշման 13-15-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքի վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած և Առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված նյութերը Վերաքննիչ դատարանի կողմից չեն հետազոտվել, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը չի կարող գնահատվել որպես օրինական և հիմնավորված:

Մինչև սույն ժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Պ.Մուրադյանի ներկայացուցչի բողոքի կապակցությամբ կազմված նյութերում առկա չեն վարույթն իրականացնող մարմնի՝ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Վերջիններս Առաջին ատյանի դատարանի կողմից 2014 թվականի սեպտեմբերի 25-ին վերադարձվել են վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Մինչդեռ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա դատարան ներկայացված և վերջինիս կողմից հետազոտված նյութերը վարույթն իրականացնող մարմնին վերադարձնելու վերաբերյալ պահանջ: Իսկ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության դեմ ներկայացված բողոքի քննության հետ կապված նյութերը կազմվում են առանձին դատական գործի տեսքով, որի բաղկացուցիչ մասն են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը: Այլ խոսքով՝ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը դատարանը պարտավոր է կցել բողոքի կապակցությամբ դատարանում կազմված նյութերին, որպիսի պահանջն ուղղակիորեն հետևում է անձի արդար դատաքննության իրավունքը՝ դատական ակտը բողոքարկելու և վերադաս դատական ատյանների կողմից բողոքարկված դատական ակտը վերանայելու տեսանկյունից, ինչպես նաև պետական մարմինների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունն ապահովելու պահանջներից:

Վերագրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, բողոքի կապակցությամբ կազմված նյութերին չկցելով և վարույթն իրականացնող մարմնին վերադարձնելով վերջինիս կողմից ներկայացված նյութերը, սահմանափակել է իր կողմից կայացված որոշումը վերադաս դատական ատյանների կողմից վերանայելու հնարավորությունը: Նման պայմաններում Վճարելի դատարանը գրկված է վճարելի բողոքում ներկայացված փաստարկները (տե՛ս սույն որոշման 8-10-րդ կետերը) ըստ էության քննարկելու և ստորադաս դատարանների որոշումներին իրավական գնահատական տալու հնարավորությունից:

18. Ամփոփելով վերագրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 19-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 290-րդ հոդվածների խախտումները, որոնք հանգեցրել են անօրինական և չհիմնավորված դատական ակտեր կայացնելուն: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, հիմք են կայացված դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերագրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Պյեր ժան Մուրադյանի ներկայացուցիչ Ա.Ղազարյանի բողոքը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 22-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 20-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

38.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0248/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դիմող Ժորա Զաքարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ժորա Զաքարյանի ներկայացուցիչ, փաստաբան Մ.Բաբայանը 2014 թվականի դեկտեմբերի 16-ին բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության

Կենտրոնականի բաժնի հետաքննիչ Ս.Բաղդասարյանի (այսուհետ նաև՝ Հետաքննիչ) 2014 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 9-ի որոշմամբ բողոքը մասնակիորեն բավարարվել է, այն է՝ վերացվել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին Հետաքննիչի 2014 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 9-ի որոշման դեմ դատախազ Տ.Ենոքյանի (այսուհետ նաև՝ Դատախազ) վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2015 թվականի մայիսի 6-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի 2015 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Ժ.Զաքարյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված թիվ 1190 նյութերը վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվել են Առաջին ատյանի դատարան և դրանց ուսումնասիրության արդյունքում 2015 թվականի մարտի 9-ին կայացվել է դատական ակտ (տե՛ս նյութեր, գ.թ. 34):

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 16-ի գրությամբ՝ բողոքի վերաբերյալ դատարանում ստացված թիվ 1190 նյութերը վերադարձվել են վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս նյութեր, գ.թ. 43):

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 9-ի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի հետ միասին Դատախազի կողմից Վերաքննիչ դատարան են ներկայացվել նաև Ժ.Զաքարյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված թիվ 1190 նյութերը, որոնք նույն տարվա մայիսի 22-ին Վերաքննիչ դատարանի կողմից վերադարձվել են վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս նյութեր, գ.թ. 55, 96):

7. Վճարելի դատարան չեն ներկայացվել, իսկ բողոքի կապակցությամբ ստորադաս դատարաններում կազմված և այնուհետև Վճարելի դատարան ներկայացված նյութերում առկա չեն թիվ 1190 նյութերը: Ընդ որում, ստորադաս դատարաններում կազմված նյութերում բացակայում է անգամ Հետաքննիչի վերոհիշյալ որոշումը:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճարելի բողոք բերած անձը գտնում է, որ սույն գործով դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, այն է՝ սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավադրույթները, որն ազդել է գործի ելքի վրա, և արդյունքում կայացվել է չհիմնավորված դատական ակտ:

Վճարելի բողոքի հեղինակն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ միայն հարուցված քրեական գործի շրջանակում է հնարավոր պարզել Ա.Տաշյանի արարքում հանցակազմ առկա է, թե ոչ:

Ի հիմնավորումն իր պնդման՝ բողոքաբերը նշել է, որ Արմեն Տաշյանը խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողություններից որևէ մեկը չի կատարել: Նյութերի նախապատրաստմամբ ձեռք բերված տվյալները վկայում են այն մասին, որ Ժորա Զաքարյանը կամավոր, սեփական ռիսկով և գիտակցաբար կատարել է քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող գործարք՝ որպես գումարի վերադարձման երաշխիք առևտրային բանկում գրավադրել է Երևան քաղաքի Նիկոլ Դուրման փողոցի 2-րդ հասցեում գտնվող և սեփականության իրավունքով իրեն պատկանող առանձնատունը՝ ի ապահովում 2010 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված 084-10/ԳՎ վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագրի:

Վկայակոչելով Լիա Ավետիսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0176/01/09 գործով Վճարելի դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշումը՝ բողոքաբերը նշել է, որ Ժորա Զաքարյանի հաղորդման ստուգմամբ ձեռք բերված փաստական տվյալներից ակնհայտ է, որ Ժորա Զաքարյանի հաղորդման մեջ նշված հանգամանքները քաղաքացիաիրավական հարաբերությունների տիրույթում են և ներգործության քրեաիրավական ու քրեադատավարական միջոցներ չեն պահանջում: Այսինքն՝ Արմեն Տաշյանի արարքում բացակայում են ինչպես խարդախության, այնպես էլ սեփականության դեմ ուղղված որևէ այլ հանցագործության հանցակազմի պարտադիր հատկանիշները:

9. Վկայակոչելով Գագիկ Ղևոնդյանի վերաբերյալ գործով Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 և Ռուզաննա Ախայանի վերաբերյալ գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0199/11/13 որոշումները՝ բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները չեն հետևել Վճարելի դատարանի՝ վերոհիշյալ

որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ չհիմնավորելով, որ Վճռարեկ դատարանի վերոնշյալ դատական ակտերի հիմնավորումները կիրառելի չեն սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ:

10. Բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումները և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված է արդյոք Վերաքննիչ դատարանի 2015 թվականի մայիսի 6-ի որոշումն այն պայմաններում, երբ բողոքի կապակցությամբ կազմված նյութերում բացակայում են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը:

12. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, *արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...)*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:

(...)

4. (...) քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ սրուցի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հեղաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, րուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

4. (...) Վարույթն իրականացնող մարմինը պարզավոր է դատարանն ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր (...)»:

13. Մեջբերված իրավական նորմերը Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել Պյեր Ժան Մուրադյանի վերաբերյալ որոշմամբ, որով դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքի քննության դատարանն Վարույթի օբյեկտը բողոքի կապակցությամբ ներկայացված նյութերն են, որոնց հիման վրա դատարանը գնահատում է անձի իրավունքների և ազատությունների խախտման առկայությունը: Հաշվի առնելով, որ վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության հիմքում դրված նյութերը գտնվում են նրա փորձաքննության ներքո՝ օրենսդիրն անձի՝ դատարանն պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով վարույթն իրականացնող մարմնի համար սահմանել է այդ նյութերը դատարանն ներկայացնելու պարտականություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մաս): Ընդ որում, վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարանն պետք է ներկայացվեն բողոքին վերաբերող նյութերը՝ ինչպես բողոքարկվող որոշման կամ գործողության օրինականությունը ենթադրաբար հիմնավորող, այնպես էլ՝ հերքող:

Այսպիսով, վարույթն իրականացնող մարմնի կողմից բողոքի վերաբերյալ նյութերը դատարանն ներկայացնելու պահանջը կոչված է ապահովելու մինչդատարանն վարույթի նկատմամբ դատարանն վերահսկողությունն իրականացնելիս դատարանին անհրաժեշտ փաստական հիմքը: Նշված նյութերով է պայմանավորված դատարաննի կողմից մինչդատարանն վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության ու հիմնավորվածության պարզաճ ստուգում իրականացնելու և դրա արդյունքում հիմնավորված եզրահանգումներ կատարելու օբյեկտիվ հնարավորությունը:

(...) Նույն կերպ վերադաս դատարանն արյանը մինչդատարանն վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության դատարանն ստուգման արդյունքում կայացված դատարաննի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս պետք է հիմք ընդունի բողոքը քննելիս ստորադաս արյաննի փրամադրության րակ եղած նյութերը և դրանց համարեքստում համապատասխան գնահատական րա բողոքաբերի փաստարկներին: Միայն այդ պարագայում հնարավոր կլինի պարզել դատարաննի հեղուությունների համապատասխանությունը գործում առկա նյութերին: Այլ խոսքով՝ վերադաս դատարանն արյաննի կողմից ստորադաս դատարանն արյաննի որոշման վերանայումը հնարավոր է դատարանն ակրը կայացրած դատարաննի հեղագրած նյութերի հիման վրա, հակառակ դեպքում վերադաս դատարանն արյաննի որոշումը չի համապատասխանի դատարանն ակրերին ներկայացվող օրինականության

և հիմնավորվածության պահանջներին՝ հանգեցնելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի արդար դատաքննության իրավունքի խախտման (դատական ակտին ներկայացվող պահանջների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս, *mutatis mutandis*, Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշումը):

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա դատարան ներկայացված և վերջինիս կողմից հետազոտված նյութերը վարույթն իրականացնող մարմնին վերադարձնելու վերաբերյալ պահանջ: Իսկ մինչդատարանական վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության դեմ ներկայացված բողոքի քննության հետ կապված նյութերը կազմվում են առանձին դատական գործի տեսքով, որի բաղկացուցիչ մասն են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը: Այլ խոսքով՝ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը դատարանը պարզավոր է կցել բողոքի կապակցությամբ դատարանում կազմված նյութերին, որպիսի պահանջն ուղղակիորեն հետևում է անձի արդար դատաքննության իրավունքը՝ դատական ակտը բողոքարկելու և վերահաս դատական ակտանների կողմից բողոքարկված դատական ակտը վերանայելու տեսանկյունից, ինչպես նաև պետական մարմինների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունն ապահովելու պահանջներից» (տե՛ս Պյեր Ժան Մուրադյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0143/11/14 որոշման 14-15-րդ, 17-րդ կետերը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հետազոտելով վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան ներկայացված՝ Ժ.Զաքարյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված թիվ 1190 նյութերը, 2015 թվականի մարտի 9-ի որոշմամբ մասնակիորեն բավարարել է ներկայացված բողոքը (տե՛ս սույն որոշման 1-ին և 4-րդ կետերը), այնուհետև՝ 2015 թվականի մարտի 16-ի գրությամբ վերոհիշյալ նյութերը հետ է վերադարձրել վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Այդ նյութերը վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվել են Վերաքննիչ դատարան, որը 2015 թվականի մայիսի 6-ի որոշմամբ մերժել է դատախազի բողոքը, իսկ թիվ 1190 նյութերը 2015 թվականի մայիսի 22-ի գրությամբ վերադարձրել է վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Ժ.Զաքարյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված թիվ 1190 նյութերը Վճռաբեկ դատարան չեն ներկայացվել, իսկ բողոքի կապակցությամբ ստորադաս դատարաններում կազմված և այնուհետև Վճռաբեկ դատարան ներկայացված նյութերում առկա չեն վերոհիշյալ՝ թիվ 1190

նյութերը: Ընդ որում, ստորադաս դատարաններում կազմված նյութերում բացակայում է անգամ Հետաքննիչի՝ 2014 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Նախորդ կետում շարադրված փաստերը վերլուծելով սույն որոշման 13-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ժ.Զաքարյանի ներկայացուցչի բողոքի կապակցությամբ ստորադաս դատարաններում կազմված նյութերում առկա չեն վարույթն իրականացնող մարմնի՝ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը: Հիշյալ նյութերը Առաջին ատյանի դատարանի կողմից վերադարձվել են վարույթն իրականացնող մարմնին: Մինչդեռ Վերաքննիչ դատարանի կողմից որևէ գնահատման չի արժանացել Ժ.Զաքարյանի ներկայացուցչի բողոքի կապակցությամբ կազմված նյութերում վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերի բացակայության հանգամանքը:

Առաջին ատյանի դատարանը, բողոքի կապակցությամբ կազմված նյութերին չկցելով և վարույթն իրականացնող մարմնին վերադարձնելով վերջինիս կողմից ներկայացված նյութերը, սահմանափակել է իր կողմից կայացված որոշումը վերադաս դատական ատյանների կողմից վերանայելու հնարավորությունը: Վերոնշյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գրկված է վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկներն ըստ էության քննարկելու և այդ առումով ստորադաս դատարանների որոշումներին իրավական գնահատական տալու հնարավորությունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրինական և հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի 2015 թվականի մայիսի 6-ի որոշումն այն պայմաններում, երբ բողոքի կապակցությամբ կազմված նյութերում բացակայում են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 19-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 290-րդ հոդվածների խախտումներ, որոնք հանգեցրել են անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացնելուն: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, հիմք են Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի

Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Ժորա Զաքարյանի ներկայացուցիչ Մարետա Բաբայանի բողոքը մասնակիորեն բավարարելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 9-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

39.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0041/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վարդան Վոլոդյայի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման դեմ ամբաստանյալ Վ.Հարությունյանի պաշտպան Գ.Մադոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի սեպտեմբերի 26-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 11805113 քրեական գործը:

2013 թվականի դեկտեմբերի 5-ին Վարդան Վոլոդյայի Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ Վ.Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով:

2014 թվականի ապրիլի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճռով Վ.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 3 (երեք) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և որոշակի գործունեությամբ զբաղվելու, այն է՝ մեքենա վարելու իրավունքից զրկելով 1 (մեկ) տարի ժամկետով:

Վ.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Ամբաստանյալ Վ.Հարությունյանի պաշտպան Գ.Մադոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Վ.Հարությունյանի պաշտպան Գ.Մադոյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Մեղադրող Հ.Սեդրակյանը ներկայացրել է վճարելի բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել ամբաստանյալ Վ.Հարությունյանի պաշտպան Գ.Մադոյանի ներկայացրած վճարելի բողոքը և բողոքարկվող դատական ակտը թողնել օրինական ուժի մեջ:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա՝ 2013 թվականի հուլիս ամսից մինչև 2013 թվականի սեպտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում, գույքային օգուտ սրանալով, այն է՝

մարմնավաճառներ Սիրուշ Սիմոնյանից և Լուսինե Բաղալյանից օրեկան յուրաքանչյուրից 5.000 ՀՀ դրամ վարձարրության դիմաց հաճախորդներին սպասելու և պարբերաբար մարմնավաճառությամբ զբաղվելու համար թույլատրել է նսրել իրեն պարկանող «ՎԱԶ 2107» մակնիշի S8977 համարանիշի ավտոմեքենան ու շրջել Երևան քաղաքի Բագրատունյաց պողոտայում գրնվող Երևանյան լճի տարածքում, որի ընթացքում Ս.Սիմոնյանը և Լ.Բաղալյանը պարբերաբար զբաղվել են մարմնավաճառությամբ՝ այդպիսով հարմարավետ պայմաններ սրեղծելով նպասրել է վերջիններիս կողմից պոոնկությանբ զբաղվելուն» (տեն քրեական գործ, հատոր 2, թերթ 118):

6. Առաջին առյանի դատարանը, Վ.Հարությունյանին առաջաղրված մեղաղրանքում ճանաչելով մեղավոր, դատավճոի հիմքում դրել է հետևյալ ապացույցները. «Ամբասրանյալ Վարդան Հարությունյանի նախարննական ցուցմունք[ը] այն մասին, որ առաջաղրված մեղաղրանքում իրեն մեղավոր է ճանաչում, ունի «ՎԱԶ 2107» մակնիշի, S8977 համարանիշի ավտոմեքենա, որը գործածում է որպես տարքսի: Երևանի Բագրատունյաց փողոցում գրնվող Երևանյան լճի մոտ ծանոթացել է նշված վայրում մարմնավաճառությամբ զբաղվող Սիրուշ Սիմոնյանի և Լուսինե Բաղալյանի հետ և 2013թ. հուլիսից մինչև 2013թ. սեպտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում, իր իսկ առաջարկով, գումար վասրակելու նպատակով նրանց հետ պայմանավորվածություն է ձեռք բերել յուրաքանչյուր օրվա համար 5.000 ՀՀ դրամ վարձարրության դիմաց՝ հաճախորդներին սպասելու և պարբերաբար մարմնավաճառությամբ զբաղվելու համար թույլատրել է նսրել իրեն պարկանող «ՎԱԶ 2107» մակնիշի, S8977 համարանիշի ավտոմեքենան և շրջել Երևանի Բագրատունյաց պողոտայում Երևանյան լճի տարածքով, որի ընթացքում Ս.Սիմոնյանը և Լ.Բաղալյանը պարբերաբար զբաղվել են մարմնավաճառությամբ: **Անկախ հաճախորդ ունենալու հանգամանքից, ինքն իր իսկ պայմանի համաճայն, յուրաքանչյուր մարմնավաճառներից սրացել է 5000 ՀՀ դրամ գումար (...):**

(...)

Վկա Լուսինե Գագիկի Բաղալյանի ցուցմունք[ն] այն մասին, որ շուրջ երկու տարի զբաղվում է մարմնավաճառությամբ: Վարդան Հարությունյանի հետ ծանոթացել է Երևանյան լճի տարածքում մարմնավաճառությամբ զբաղվելու ժամանակ: 2013թ. հուլիսից մինչև 2013թ. սեպտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր օրվա համար 5.000 ՀՀ դրամ վարձարրության դիմաց Վ.Հարությունյանը թույլատրել է իրեն նսրել իր «ՎԱԶ 2107» մակնիշի, S8977 համարանիշի ավտոմեքենան ու շրջել Երևանի Բագրատունյաց պողոտայում գրնվող Երևանյան լճի տարածքում, որի ընթացքում ինքը պարբերաբար ձեռք է բերել հաճախորդներ և զբաղվել մարմնավաճառությամբ: 2013թ. հուլիսից մինչև 2013թ. սեպտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում Վ.Հարությունյանի

Կրաքսի ծառայություններից օգտվել է նաև մարմնավաճառ Սիրուշ Միմոնյանը, որն ինչպես և ինքը, յուրաքանչյուր օրվա համար Վ.Հարությունյանին վճարել է 5.000 ՀՀ դրամ գումար (...):

Վկա Սիրուշ Մանվելի Միմոնյանի նախաքննական ցուցմունք[ն] այն մասին, որ շուրջ երեք փարի զբաղվում է մարմնավաճառությամբ: Վարդան Հարությունյանի հետ ծանոթացել է Երևանյան լճի փարածքում մարմնավաճառությամբ զբաղվելու ժամանակ: 2013թ. հուլիսից մինչև 2013թ. սեպտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր օրվա համար 5.000 ՀՀ դրամ վարձարժեքի դիմաց Վ.Հարությունյանը թույլատրել է նստել իրեն պատկանող «ՎԱԶ 2107» մակնիշի, S8977 համարանիշի ավտոմեքենան և շրջել Երևանի Բագրատունյաց պողոտայում գտնվող Երևանյան լճի փարածքում, որի ընթացքում ինքը պարբերաբար ձեռք է բերել հաճախորդներ և զբաղվել մարմնավաճառությամբ: 2013թ. հուլիսից մինչև 2013թ. սեպտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում Վ.Հարությունյանի կրաքսի ծառայություններից օգտվել է նաև մարմնավաճառ Լուսինե Բադայանը, որը նույնպես յուրաքանչյուր օրվա համար Վ.Հարությունյանին վճարել է 5.000 ՀՀ դրամ գումար (...): (տես քրեական գործ, հատոր 2, թերթ 119):

7. Առաջին ատյանի դատարանը, հաստատված համարելով, որ ամբաստանյալն իրեն պատկանող «ՎԱԶ 2107» մակնիշի S8977 համարանիշի ավտոմեքենան վարել է որպես կրաքսի, արձանագրել է. «(...) [Ա] մրաստանյալ Վարդան Վոլոդյայի Հարությունյանի կողմից, նրա մեղավորությամբ, երկու և ավելի անձանց օգտագործելով, գույքային օգուր արանալով պոռնկությամբ զբաղվելուն նպաստելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ[ով] նախատեսված հանցագործության հարկանիշներին» (տես քրեական գործ, հատոր 2, թերթ 118-119):

8. Օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. «(...) [Վ]երաքննիչ դատարանը վերլուծության ու գնահատության ենթարկելով գործով ձեռք բերված ապացույցները, դրանցից յուրաքանչյուրը գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության րեսանկյունից, հանգում է այն հետևության, որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը հիմնավորված և հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված, հավասարի ապացույցների բավարար ամբողջությամբ, քրեական գործի (...) ընթացքում քրեադատավարական օրենքի էական խախտումներ (...) թույլ չեն տրվել և գործի փաստական հանգամանքների մասին դատարանի դատավճռում շարադրված հետևությունները բխում են քրեական գործով ձեռք բերված ապացույցներից,

հերևարար ամբաստանյալին արդարացնելու հիմքեր չկան» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 53):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

9. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերն անօրինական և անհիմն են, քանի որ կայացվել են ինչպես նյութական, այնպես էլ դատավարական նորմերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ սույն գործով դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածում ամրագրված պայմանները և նույն օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված արդարացման հիմքի առկայության պայմաններում Վ.Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը չեն դադարեցրել:

Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վ.Հարությունյանի արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի տարրերը, քանի որ վերջինս, օրենքով սահմանված կարգով գրանցված լինելով որպես անհատ ձեռնարկատեր, ուղևորափոխադրումներ իրականացնելու միջոցով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացրել իր տաքսի ավտոմեքենայով և գործով վկաներ, մարմնավաճառությամբ զբաղվող Ս.Միմոնյանին ու Լ.Բադալյանին նման ծառայություններ մատուցելով, որևէ կերպ չի ուսնձգել հասարակությունում առկա բարոյական նորմերի դեմ:

Բացի այդ, բողոքաբերի պնդմամբ ամբաստանյալ Վ.Հարությունյանի ստացած գույքային օգուտը պայմանավորված է եղել միայն վերջինիս կողմից փոխադրման ծառայություններ մատուցելու փաստով, և նրա համար նշանակություն չի ունեցել, թե ինչ գործունեությամբ են զբաղվում Միմոնյանը և Բադալյանը, իսկ իրեն տրվող վարձավճարը որևէ կապ չի ունեցել վերջինների ունեցած հաճախորդների թվի կամ վաստակած գումարի չափի հետ:

9.1. Բողոքաբերը փաստարկել է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտերում մինևնույն նորմը կիրառվել է իրար հակասող մեկնաբանությամբ: Մասնավորապես, ըստ բողոքի հեղինակի՝ սույն գործի հետ նույնական փաստական հանգամանքների առկայության պայմաններում, նույն գործողությունները կատարելու համար թիվ ԵՇԴ/0125/01/13 գործով Երևանի Շենքավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանն իր՝ 2014 թվականի հունվարի 25-ի դատավճռով ամբաստանյալին արդարացրել է ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում:

9.2. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ դատարանները չեն կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և Վ.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատժի կրման մասով եկել են սխալ եզրահանգման: Մասնավորապես, քրեական գործում առկա փաստական տվյալների համաձայն՝ ամբաստանյալը ամուսնացած է, բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված չի եղել, ունի մշտական բնակության վայր, նրա խնամքին են գտնվում անչափահաս երեխաներն ու վատառողջ հայրը, պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները բացակայում են: Իսկ դրանց համատեքստում, բողոքարեթի կարծիքով, ակնհայտ է, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու:

10. Հինք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը և ճանաչել ու հռչակել Վ.Հարությունյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով ստացադրված մեղադրանքում կամ քրեական գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության կամ Վ.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այդ առումով Վճարելի դատարանը գտնում է, որ պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու հանցակազմի (ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդված) մեկնաբանության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Վ.Հարությունյանի արարքում առկա է երկու կամ ավելի անձանց օգտագործելով պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ):

13. ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում *երկու կամ ավելի անձանց օգտագործելով պոռնկությամբ զբաղվելու համար հասարակություն սրելծելու, ղեկավարելու կամ պահելու կամ որևէ հանրային հասարակություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելու կամ այլ անձի պոռնկությամբ*

զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելու կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպասարելու համար, եթե բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հարկանիշները:

Վերլուծելով մեջբերված հանցակազմը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ այն դասվում է բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների շարքին և բնութագրվում որպես հանցավոր արարք, որը ոտնձգում է հասարակության անդամների բարոյական զարգացման պաշտպանության դեմ: Քննարկվող հանցակազմի օբյեկտ են հասարակության անդամների բարոյական բնականոն զարգացման պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Հասարակության անդամների բարոյական բնականոն զարգացումը պետության հոգատարության տակ գտնվող արժեքներից է, իսկ դրա խախտումը հանգեցնում է հասարակությունում գոյություն ունեցող բարոյական կարգին վնաս պատճառելուն: Բարոյական կարգ ասելով՝ պետք է հասկանալ որոշակի զարգացման փուլում հասարակության մոտ ձևավորված արժեքների, կանոնների, ավանդույթների համակարգ, ինչն արտացոլվում է հասարակության անդամների պատկերացումներում և որոշում վերջիններիս վարագագծի մոդելը:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը խաթարում է սեռերի փոխհարաբերության և սեռական մշակույթի ձևավորման վերաբերյալ հասարակության անդամների բարոյական պատկերացումները:

14. Սուբյեկտիվ կողմից քննարկվող հանցակազմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ անձը գիտակցում է, որ իր գործողություններով նպաստում է այլ անձանց պոռնկությամբ զբաղվելուն, նախատեսում է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկանում դա: Հանցագործության սուբյեկտ կարող է լինել հանցագործության կատարման պահին տասնվեց տարին լրացած ցանկացած մեղսունակ ֆիզիկական անձ:

15. Խնդրո առարկա հանցակազմի օբյեկտիվ կողմի տարր է, ի թիվս այլնի, *գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպասարելը*:

Վճարելի դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող նշյալ գործողությունը կարող է դրսևորվել՝

1) կավատության ձևով, այսինքն՝ վարձատրության կամ այլ գույքային օգուտի դիմաց սեռական հարաբերության համար միջնորդելով, կամ

2) նույն արարքը կատարելով, որը դրսևորվել է նաև բնակարան կամ այլ կացարան մեկ անգամ տրամադրելով, կամ

3) առանց սեռական հարաբերության համար միջնորդություն իրականացնելու, սակայն գույքային օգուտի դիմաց ոչ պարբերաբար բնակարան կամ այլ կացարան տրամադրելով, կամ

4) գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ եղանակներով նպաստելով:

15.1. Նախորդ կետում կատարված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող քննարկվող գործողության համար պարտադիր է գույքային օգուտ ստանալու և պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու ընտրված եղանակի միջև փոխադարձ կապի առկայությունը: Այլ կերպ՝ գույքային օգուտը պետք է հանդիսանա պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու արդյունք: Այդ առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ համապատասխան հանգամանքը հաստատված համարելու համար վարույթն իրականացնող մարմինը պետք է առնվազն պարզի՝

1) ստացված գույքային օգուտի առաջացման աղբյուրը,

2) դրա փոխկապակցվածությունը պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու ընտրված ձևի հետ,

3) արդյոք ստացված գույքային օգուտը հանդիսանում է պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու համար վարձատրություն:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշելու համար, թե անձի արարքում առկա է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող խնդրո առարկա գործողությունը (գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը), ի թիվս այլնի, անհրաժեշտ է պարզել՝ արդյոք այդ անձը գործել է ուղղակի դիտավորությամբ (այսինքն՝ գիտակցել է, որ իր գործողություններով նպաստում է այլ անձանց պոռնկությամբ զբաղվելուն և ցանկացել է դա), և արդյոք ստացված գույքային օգուտը եղել է պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու արդյունք:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Վ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, գույքային օգուտ ստանալով, այն է՝ մարմնավաճառներ Ս.Սիմոնյանից և Լ.Բադալյանից օրական յուրաքանչյուրից 5.000 ՀՀ դրամ վարձատրության դիմաց, հաճախորդներին սպասելու և պարբերաբար մարմնավաճառությամբ զբաղվելու համար թույլատրել է նստել իրեն պատկանող ավտոմեքենան ու շրջել որոշակի տարածքներում, որի ընթացքում Ս.Սիմոնյանը և Լ.Բադալյանը պարբերաբար զբաղվել են մարմնավաճառությամբ. այդպիսով հարմարավետ պայմաններ ստեղծելով՝ նպաստել է վերջիններիս կողմից պոռնկությամբ զբաղվելուն (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, Վ.Հարությունյանին առաջադրված մեղադրանքում ճանաչելով մեղավոր, դատավճի հիմքում դրել է՝

1) ամբաստանյալ Վ.Հարությունյանի ցուցմունքն այն մասին, որ իր իսկ առաջարկով, գումար վաստակելու նպատակով Ս.Սիմոնյանի և Լ.Բադալյանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել յուրաքանչյուր օրվա համար 5.000 ՀՀ դրամ վարձատրության դիմաց հաճախորդներին սպասելու և պարբերաբար մարմնավաճառությամբ զբաղվելու համար թույլատրել է նստել իրեն պատկանող ավտոմեքենան և շրջել Երևանի Բագրատունյաց պողոտայում, որի ընթացքում Ս.Սիմոնյանը և Լ.Բադալյանը պարբերաբար զբաղվել են մարմնավաճառությամբ: **Անկախ հաճախորդ ունենալու հանգամանքից՝ ինքը, իր իսկ պայմանի համաձայն, յուրաքանչյուր մարմնավաճառից ստացել է 5.000 ՀՀ դրամ գումար:**

2) վկա Լ.Բադալյանի ցուցմունքն այն մասին, որ յուրաքանչյուր օրվա համար 5.000 ՀՀ դրամ վարձատրության դիմաց Վ.Հարությունյանը թույլատրել է իրեն նստել իր ավտոմեքենան ու շրջել Երևանի Բագրատունյաց պողոտայում գտնվող Երևանյան լճի տարածքում, որի ընթացքում ինքը պարբերաբար ձեռք է բերել հաճախորդներ և զբաղվել մարմնավաճառությամբ: Վ.Հարությունյանի **տաքսի ծառայություններից** օգտվել է նաև մարմնավաճառ Ս.Սիմոնյանը, որը, ինչպես և ինքը, յուրաքանչյուր օրվա համար Վ.Հարությունյանին վճարել է 5.000 ՀՀ դրամ գումար:

3) վկա Ս.Սիմոնյանի նույնաբովանդակ ցուցմունքը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը հիմնավորված և հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված, հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, Առաջին ատյանի դատարանի դատավճի թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ ստորադաս դատարանները հաստատված են համարել, որ՝

ա) համապատասխան ժամանակահատվածում ամբաստանյալ Վ.Հարությունյանը վկաներ Լ.Բադալյանից և Ս.Սիմոնյանից ստացել է որոշակի վարձատրություն (օրական յուրաքանչյուրից 5.000 ՀՀ դրամ),

բ) Լ.Բադալյանը և Ս.Սիմոնյանը նստել են ամբաստանյալի ավտոմեքենան և շրջել են որոշակի տարածքում,

գ) ավտոմեքենայով շրջելու ընթացքում Լ.Բադալյանը և Ս.Սիմոնյանը պարբերաբար զբաղվել են մարմնավաճառությամբ,

դ) «ա» կետում նշված վարձատրության չափը կախված չի եղել Լ.Բադալյանի ու Ս.Սիմոնյանի կողմից հաճախորդներ ունենալու հանգամանքից:

18. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-16-րդ կետերում արտահայտված

դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասը, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված «մարդատար-տաքսի ավտոմոբիլ» հասկացությունը, նույն օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Հարությունյանը սահմանված որոշակի վարձատրության, այն է՝ օրական 5.000 ՀՀ դրամի դիմաց մատուցել է տաքսի ծառայություններ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը) և տեղափոխել վկաներ Լ.Բադալյանին ու Ս.Սիմոնյանին: Վ.Հարությունյանի համար որևէ նշանակություն չի ունեցել այն, թե վկաներն ինչ ուղղությամբ են գնում, ում են հանդիպում կամ ինչով են զբաղվում. վերջինս ցանկացել է միայն, որ իր մատուցած ծառայությունների համար ստանա համապատասխան հատուցում: Այլ կերպ՝ ամբաստանյալ Վ.Հարությունյանը մատուցել է օրենքով սահմանված հատուցելի ծառայություններ և ստացել համապատասխան վարձատրություն, իսկ վարձատրության չափն էլ կախված չի եղել Լ.Բադալյանի ու Ս.Սիմոնյանի կողմից հաճախորդներ ունենալու հանգամանքից: Հետևաբար Վ.Հարությունյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Վ.Հարությունյանի արարքում բացակայում է նաև համապատասխան հանցակազմի օբյեկտիվ կողմը, քանի որ գործի նյութերից հետևում է, որ Վ.Հարությունյանի ստացած գումարը՝ Լ.Բադալյանից ու Ս.Սիմոնյանից օրական յուրաքանչյուրից 5.000 ՀՀ դրամը, եղել է նրա՝ որպես տաքսու վարորդի մատուցած ծառայությունների համար ստացված վարձատրություն, այլ ոչ թե պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու արդյունք՝ պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու դիմաց ստացած գույքային օգուտ:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պարասխանաարվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կարարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հարկանիշները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կարարված՝ հանրության համար վրանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով»:*

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Վ.Հարությունյանի արարքում առկա է երկու կամ ավելի անձանց օգտագործելով պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ), հիմնավոր չեն: Ամբաստանյալ Վ.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրական դատավճիռ կայացնելիս

Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշում կայացնելիս նաև Վերաքննիչ դատարանը պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները և դրանց չեն տվել համարժեք իրավական գնահատական: Արդյունքում դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

20. Նախորդ կետում նշված խախտումները, որոնք ազդել են ամբաստանյալ Վ.Հարությունյանի մեղավորության հարցը որոշելու վրա, Վճարելի դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների դատական ակտերը, ճանաչելու ու հռչակելու Վարդան Վոլոդյայի Հարությունյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով առաջադրված մեղադրանքում, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և քրեական գործի վարույթը կարճելու:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Վ.Հարությունյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց չհեռանալու մասին ստորագրությունը հարկավոր է վերացնել:

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 9.2-րդ կետում բարձրացրած փաստարկներին, ապա հաշվի առնելով այն, որ ամբաստանյալ Վ.Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ Վճարելի դատարանն առարկայագուրկ է համարում անդրադառնալը դրանց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Վարդան Վոլոդյայի Հարությունյանի վերաբերյալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ

վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը բեկանել, ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Վարդան Վոլոդյայի Հարությունյանին արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ և քրեական գործի վարույթը կարճել:

Ամբաստանյալ Վարդան Վոլոդյայի Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

40.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0184/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բադալյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի ապրիլի 15-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Վայոց ձորի մարզի քննչական բաժնում հարուցվել է թիվ 35100414 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի հուլիսի 3-ին Ա.Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-296-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, իսկ Հ.Մարտիրոսյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Քննիչ Ա.Հարությունյանի (այսուհետ նաև՝ Քննիչ) 2014 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ Ա.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-296-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և Հ.Մարտիրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարքներում հանցակազմի բացակայության հիմքով, և քրեական գործի վարույթը կարճվել է:

Քննիչի 2014 թվականի սեպտեմբերի 3-ի որոշման օրինականության ստուգման արդյունքներով Վայոց ձորի մարզի դատախազ Ն.Ավագյանը (այսուհետ նաև՝ Դատախազ) 2014 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ հիշյալ որոշումը վերացրել է:

2. 2014 թվականի սեպտեմբերի 18-ին Հ.Մարտիրոսյանի և Ա.Սարգսյանի պաշտպան Ս.Ջաղինյանը ՀՀ գլխավոր դատախազին ներկայացրել է միջնորդություն (այսուհետ նաև՝ Միջնորդություն)՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի որոշումը վերացնելու մասին դատախազ Ն.Ավագյանին ցուցում տալու վերաբերյալ:

Վերոնշյալ միջնորդությանը ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանը պատասխանել է 2014 թվականի սեպտեմբերի 24-ի գրությամբ:

3. 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Ս.Ջաղինյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերականգնել պաշտպանական կողմի խախտված իրավունքները, այն է՝ պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազությանն իր կողմից հարուցված միջնորդության կապակցությամբ ընդունել պատճառաբանված որոշում:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ պաշտպան Ս.Ջաղինյանի բողոքը բավարարվել է, արձանագրվել է Հ.Մարտիրոսյանի և Ա.Սարգսյանի իրավունքների խախտումը, և սահմանվել է միջնորդության կապակցությամբ որոշում կայացնելու ՀՀ գլխավոր դատախազության պարտականությունը:

4. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 17-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի նոյեմբերի 24-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բադալյանը:

Վճարելի դատարանի 2015 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Հ.Մարտիրոսյանի և Ա.Սարգսյանի պաշտպան Ս.Ջաղինյանի միջնորդության կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանը 2014 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 15/15/1111-14 գրությամբ (այսուհետ նաև՝ Գրություն) հայտնել է, որ. «(...) դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի որոշումը վերացնելու ցուցում տալու դեպք օրենքով նախատեսված չէ: Միաժամանակ հայտնում եմ նաև, որ դատախազի կողմից իր կայացրած որոշումը իր իսկ կողմից վերացնելու դատավարական կարգ օրենսդրությամբ նախատեսված չէ» (տե՛ս նյութեր, հատոր 1, էջ 5):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում փաստել է, որ. «(...) քրեական գործի նկարմամբ դատավարական հսկողություն իրականացնող անձի՝ դատախազի կողմից դրսևորվել է գործի նախաքննության րվյալ փուլի համար ոչ իրավաչափ գործողություն, այն է՝ պարճառարանված որոշում կայացնելու փոխարեն վերջինս միջնորդություն հարուցած անձին պարասխանել է ընդամենը գրությամբ, որը խախտում է միջնորդություն հարուցած անձի իրավունքները օրենքով սահմանված դատավարական որոշման դեմ բողոք բերելու, ուսրի և արդյունավետ պաշտպանություն իրականացնելու տեսանկյունից:

(...) Դատարանն արձանագրում է, որ ամեն դեպքում, եթե նույնիսկ ներկայացվել է ակնհայտ մերժման ենթակա որևէ միջնորդություն, իրավասու մարմինը պարտավոր է րվյալ որոշման վերաբերյալ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի պահանջներից բխող՝ պարճառարանված, բողոքարկման ենթակա որոշում:

(...) վերը շարադրված դատավարական խախտումները բավարար են ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկարմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանի 24.09.2014թ.-ի թիվ 15/15/1111-14 գրությամբ արձանագրված՝ անձի իրավունքները խախտելու փաստն արձանագրելու համար, ուսրի դատարանը գրնում է, որ ներկայացված բողոքը ենթակա է բավարարման» (տե՛ս նյութեր, հատոր 1, էջեր 42-48):

8. Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-53-րդ և 102-րդ հոդվածների կարգավորումները և մեջբերելով Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը, հանգել է այն հետևության, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է,

հիմնավորված և պատճառաբանված, բողոքը քննության առնելիս Դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի և հիմք կհանդիսանային Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու համար (տե՛ս նյութեր, հատոր 2, էջեր 40-48):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանը, դատական ակտը չպատճառաբանելով, թույլ է տվել դատախաան սխալ, այն է՝ քրեադատավարական օրենքի էական խախտում՝ նախատեսված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով, որն ազդել է գործի ելքի վրա:

Բողոք բերած անձը, մասնավորապես, վկայակոչելով և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին և 6-րդ հոդվածների որոշ դրույթներ, իր բողոքում նշել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից անտեսվել է, որ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված միջնորդությունը՝ ստորադաս դատախազի կողմից իր իսկ կայացրած որոշումը վերացնելու ցուցում տալու վերաբերյալ, ակնհայտ անօրինական է, դուրս է քրեական գործով վարույթի կարգից, հետևաբար միջնորդությունը քննարկելու և դրա վերաբերյալ որոշում կայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

Միջնորդություն հարուցած անձի՝ դատավարական որոշումը բողոքարկելու իրավունքը խախտված լինելու մասին հետևության հանգելիս ստորադաս դատարանների կողմից հաշվի չի առնվել, որ ակնհայտ անօրինական միջնորդության ներկայացմամբ, անձն օբյեկտիվորեն չի կարող օրինական, իրավաչափ և իր համար բարենպաստ դատավարական արդյունքի հասնել: Հետևաբար, տվյալ միջնորդության վերաբերյալ որոշում չկայացնելը անձի իրավունքը խախտող անգործություն չէ, քանի որ այդ իրավունքն ինքնին իրացված է քրեական գործով վարույթի կարգին անհամապատասխան: Ակնհայտ է, որ Ս.Ջաղիյանի կողմից ներկայացված միջնորդությունն ակնհայտ անօրինական է, և միջնորդության վերաբերյալ որոշում չկայացնելը որևէ կերպ անձի իրավունքը խախտել, հետևաբար, ոչ իրավաչափ անգործություն որակվել չի կարող:

Բացի այդ, դատարանի կողմից անտեսվել է, որ Ս.Ջաղիյանի միջնորդությունը քրեական գործով վարույթի կարգից դուրս և ակնհայտ անհիմն է նաև այն պատճառաբանությամբ, որ ՀՀ գլխավոր դատախազը ստորադաս դատախազին նրա իսկ կողմից կայացված որոշումը վերացնելու ցուցում տալու լիազորություն չունի:

10. Բողոքաբերը նաև փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, ըստ էության չանդրադառնալով բողոքի հիմքերին, գտել է, որ պաշտպան

Ս.Ջաղիյանի ներկայացրած միջնորդության վերաբերյալ որոշում չկայացնելու հետևանքով միջնորդություն հարուցած անձի իրավունքը խախտված լինելու մասին Առաջին ատյանի դատարանի եզրահանգումը հիմնավոր է:

11. Վերոնշյալից ելնելով բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 17-ի և Վերաքննիչ դատարանի 2014 թվականի նոյեմբերի 24-ի որոշումները, մերժել պաշտպան Ս.Ջաղիյանի կողմից ներկայացված բողոքը՝ իր միջնորդության կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությանը որոշում ընդունելը պարտավորեցնելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական դատավարության մասնակցի կողմից միջնորդություն ներկայացնելու և վարույթն իրականացնող իրավասու մարմնի կողմից դրա կապակցությամբ որոշում կայացնելու դատավարական կարգի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդված) մեկնաբանության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված է արդյոք ստորադաս դատարանների հետևությունը՝ պաշտպան Ս.Ջաղիյանի Միջնորդության կապակցությամբ որոշում կայացնելու ՀՀ գլխավոր դատախազության պարտականությունը սահմանելու վերաբերյալ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 34-րդ կետի համաձայն՝ *միջնորդությունը կողմի կամ դիմողի խնդրանքն է՝ ուղղված քրեական վարույթն իրականացնող մարմնին, իսկ նույն հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ «կողմ» հասկացությունը ներառում է այն մարմիններին և անձանց, որոնք քրեական դատավարությունում մրցակցային հիմունքներով իրականացնում են քրեական հետապնդում կամ պաշտպանություն:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կողմերի միջնորդությունները (...) պետք է մրցվեն դատական նիստի կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ, իսկ գրավոր միջնորդությունները (...) կցվեն քրեական գործի նյութերին:

2. Միջնորդությունները (...) պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե սույն օրենսգրքի դրույթներով այլ կարգ սահմանված չէ: Միջնորդության լուծումը կարող

է հետաձգվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից մինչև միջնորդության վերաբերյալ որոշում ընդունելու համար էական հանգամանքների պարզումը: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում ոչ ժամանակին հարուցված միջնորդությունը թողնվում է առանց քննության:

3. Միջնորդության (...) վերաբերյալ ընդունված որոշումները պետք է լինեն պարճառաբանված: (...)

4. Միջնորդության (...) մերժումը չի խոչընդոտում դրա կրկին ներկայացնելուն քրեական դատավարության հետագա փուլերում կամ քրեական վարույթն իրականացնող այլ մարմնին: Քրեական դատավարության նույն փուլում կամ քրեական վարույթն իրականացնող նույն մարմնին միջնորդության (...) կրկին ներկայացում հնարավոր է, եթե դրանք հիմնավորելու համար բերվում են նոր փաստարկներ, կամ քրեական դատավարության ընթացքում հասարարվել է դրանց բավարարման անհրաժեշտությունը»:

15. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ միջնորդությունների հարուցումը քրեական դատավարության այն մասնակիցների կողմից, ովքեր քրեական գործի առնչությամբ սեփական կամ ներկայացվող շահ ունեն (օրինակ՝ կասկածյալ, մեղարյալ, տուժող, պաշտպան), հանդես է գալիս որպես անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևորագույն երաշխիք, կառուցակարգ, և ըստ այդմ՝ մասնավոր շահի ապահովման եղանակ: Այս առումով միջնորդությունն անձի իրավունքների առավել լիարժեք իրացման նպատակով քրեական գործով վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող պետական մարմնին կամ պաշտոնատար անձին ուղղված դիմում-խնդրանք է՝ դատավարական գործողություններ իրականացնելու կամ այդպիսիք կատարելուց ձեռնպահ մնալու կամ դատավարական որոշումներ կայացնելու մասին: Անձի իրավունքների պաշտպանության խնդրի իրացման նպատակով էլ օրենսդիրը նախատեսել է միջնորդության կապակցությամբ պատճառաբանված որոշում կայացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականություն:

16. Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության մասնակցի միջնորդությունը գործով վարույթի ընթացակարգի մասը կազմող դատավարական գործողություն է, հետևաբար և՛ բովանդակային, և՛ ձևական առումներով այն պետք է համապատասխանի քրեադատավարական օրենքով սահմանված որոշակի պահանջների: Քրեական դատավարության մասնավոր մասնակիցների կողմից միջնորդություններ ներկայացնելու սուբյեկտիվ իրավունքը՝ որպես անձի մասնավոր շահերի պաշտպանության գործուն կառուցակարգ, կարող է ծառայել իր առջև դրված՝ անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման խնդրին, եթե պահպանվել են այդ իրավունքի իրացման պայմանները: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի՝ համապատասխան միջնորդությունը լուծելու, այսինքն՝ այն ըստ էության քննության առնելու

և մերժելու կամ բավարարելու մասին պատճառաբանված որոշում կայացնելու պարտականությունը ծագում է, եթե միջնորդությունը *վերաբերում է կոնկրետ քրեական գործին, ներկայացվել է քրեադատավարական օրենքով սահմանված կարգի պահպանմամբ, այն ներկայացնելու իրավասություն ունեցող անձի կողմից, այդ միջնորդությունը քննության առնելու լիազորություն ունեցող պետական մարմնին և (կամ) պաշտոնապարանձին:*

Ընդ որում, պահանջն առ այն, որ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մաս), պետք է կանխորոշող նշանակություն ունենա ներկայացվող միջնորդության բովանդակության համար: Այլ կերպ՝ միջնորդությունը պետք է պարունակի *քրեադատավարական օրենքով նախատեսված գործողություններ կատարելու կամ որոշումներ կայացնելու կամ դրանից ձեռնպահ մնալու պահանջ:*

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի համատեքստում՝ դատավարության մասնակիցը պետք է ներկայացնի այնպիսի միջնորդություն (լսողանք), որի բավարարման հնարավորությունը նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ: Վերոնշյալ պահանջի խախտմամբ ակնհայտ անօրինական միջնորդություն ներկայացնելու դեպքում անձը վարույթն իրականացնող մարմնից չի կարող ողջամտորեն ակնկալել այն մերժելու կամ բավարարելու վերաբերյալ պատճառաբանված որոշում:

Վճարելի դատարանի վերոնշյալ դիրքորոշումը հիմնավորվում է նաև նրանով, որ միջնորդությունների ներկայացման կարգին և դրանց բովանդակությանը ներկայացվող դատավարական պահանջները պահպանված լինելուց անկախ՝ վարույթն իրականացնող մարմնի՝ այդ միջնորդությունները քննության առնելու և դրանց կապակցությամբ պատճառաբանված որոշում կայացնելու պարտականություն սահմանելն անձի կողմից միջնորդություն հարուցելու սուբյեկտիվ իրավունքի չարաշահման նախադրյալներ է պարունակում: Միջնորդություններ ներկայացնելու և վարույթն իրականացնող իրավասու մարմնի կողմից դրանք քննության առնելու դատավարական կարգի նման մեկնաբանությունը անհամաչափորեն կծանրաբեռնի վարույթն իրականացնող մարմնին, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել քրեական գործի քննության բնականոն ընթացքի ապահովման իրավաչափ հանրային շահի անտեսման:

17. Սույն գործի փաստերից հետևում է, որ Քննիչի 2014 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ Ա.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-296-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և Հ.Մարտիրոսյանի

Նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարքներում հանցակազմի բացակայության հիմքով, և քրեական գործի վարույթը կարճվել է: Այսպե՛ս՝ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող Դատախազի 2014 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ հիշյալ որոշումը վերացվել է (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Հ.Մարտիրոսյանի և Ա.Սարգսյանի պաշտպան Ս.Ջաղիսյանը ՀՀ գլխավոր դատախազին միջնորդություն է ներկայացրել Դատախազի՝ 2014 թվականի սեպտեմբերի 9-ի որոշումը վերացնելու մասին Դատախազին ցուցում տալու վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը): ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Ա.Հարությունյանը, ի պատասխան վերոհիշյալ միջնորդությանը, 2014 թվականի սեպտեմբերի 29-ի գրությամբ պարզաբանել է, որ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի որոշումը վերացնելու ցուցում տալու և դատախազի կայացրած որոշումն իր իսկ կողմից վերացնելու դատավարական կարգ օրենսդրությամբ նախատեսված չէ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ Ա.Սարգսյանի և Հ.Մարտիրոսյանի շահերի պաշտպան Ս.Ջաղիսյանի բողոքը բավարարվել է, արձանագրվել է Հ.Մարտիրոսյանի և Ա.Սարգսյանի իրավունքների խախտումը, և սահմանվել է նրանց պաշտպան Ս.Ջաղիսյանի միջնորդության կապակցությամբ որոշում կայացնելու ՀՀ գլխավոր դատախազության պարտականությունը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-53-րդ և 102-րդ հոդվածների կարգավորումները և մեջբերելով Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը, գտել է, որ այն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18. Սույն գործերի փաստերի համատեքստում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադանալ նաև այն հարցին՝ արդյոք ՀՀ օրենսդրությամբ վերադաս դատախազը լիազորված է հսկող դատախազին ցուցում տալ վերացնելու իր իսկ կայացրած որոշումը:

18.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *«(…) Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի համաձայն. «Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով դատախազի բացառիկ լիազորությունն է՝ (...) վերացնել հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը քրեական գործով վարույթը կարճելու մասին, ինչպես նաև նրանց այլ որոշումներ՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Վերադաս դատախազն իրավասու է վերացնելու կամ փոփոխելու ստորադաս դատախազի ընդունած ակտերը, բացառությամբ սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազն ինքնուրույն է և գործում է առանց վերադաս դատախազի թույլտվության և համաձայնության: Վերադաս դատախազն իրավասու չէ վերացնելու կամ փոփոխելու հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի ակտերը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

18.2. Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը, ելնելով դատախազության համակարգի կենտրոնացված բնույթից, նախատեսում է հսկող դատախազի գործողությունները (անգործությունը) և որոշումները վերադասության կարգով բողոքարկելու հնարավորություն՝ օրենքով նախատեսված դեպքերում: Միաժամանակ օրենսդիրը չի նախատեսում որևէ նորմ, որը թույլ կտար հսկող դատախազին վերացնելու իր իսկ կայացրած որոշումը: Ըստ այդմ, վերադաս դատախազը չունի և չի կարող ունենալ հսկող դատախազի կայացրած որոշումն իր իսկ կողմից վերացնելու ցուցում տալու լիազորություն:

19. Այսպիսով, նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումը կիրառելով սույն որոշման 17-րդ կետում շարադրված փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ պաշտպան Ս.Ջադիյանը ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված միջնորդությամբ խնդրել է կատարել այնպիսի գործողություն, որը չի բխում ՀՀ գլխավոր դատախազի՝ որպես վերադաս դատախազի լիազորություններից և նախատեսված չէ օրենքով: Հետևաբար վարույթն իրականացնող մարմինը, հաշվի առնելով, որ Ս.Ջադիյանը միջնորդել է կատարել օրենքով չնախատեսված գործողություն, որն ակնհայտորեն դուրս է միջնորդության հասցեատիրոջ լիազորությունների շրջանակից, իրավացիորեն, գրությամբ համապատասխան պարզաբանում է տվել միջնորդություն ներկայացրած անձին:

20. Հաշվի առնելով սույն որոշման 14-16-րդ և 18.2.-19-րդ կետերում արտահայտված դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը եզրահանգում

է, որ ստորադաս դատարանների հետևությունը՝ պաշտպան Ս.Ջադինյանի Միջնորդության կապակցությամբ որոշում կայացնելու ՀՀ գլխավոր դատախազության պարտականությունը սահմանելու վերաբերյալ, օրինական և հիմնավորված չէ:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական օրենքի էական խախտում, այն է՝ խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի պահանջները:

21. Անփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից թույլ տրված, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի պահանջների խախտումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով քրեադատավարական օրենքի էական խախտում է, հետևաբար հիմք է Առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 17-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը բեկանելու և պաշտպան Ս.Ջադինյանի բողոքը մերժելու մասին նոր դատական ակտ կայացնելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Հովհաննես Արշավիրի Մարտիրոսյանի և Արշավիր Օսիկի Մարգարյանի պաշտպան Սամվել Ջադինյանի միջնորդության կապակցությամբ որոշում կայացնելու ՀՀ գլխավոր դատախազության պարտականությունը սահմանելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության

առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 17-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը բեկանել և պաշտպան Սամվել Ջաղինյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

41.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0191/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Նարեկ Լևոնի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Մալաթիայի քննչական բաժնի քննիչ Ա.Կարապետյանի՝ 2014 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 16120514 քրեական գործը:

2014 թվականի ապրիլի 29-ին Նարեկ Խաչատրյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ Ն.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2014 թվականի հունիսի 21-ին քրեական գործով վարույթը կասեցվել է Ն.Խաչատրյանի գտնվելու վայրը պարզված չլինելու պատճառաբանությամբ:

2014 թվականի հունիսի 27-ին քրեական գործի վարույթը վերսկսվել է Ն.Խաչատրյանի հայտնաբերման հիմքով, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի հունիսի 30-ին Ն.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատվել է:

2. 2014 թվականի նոյեմբերի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 25-ի դատավճռով Ն.Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի մայիսի 18-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 25-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճարել բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ն.Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2014 թվականի ապրիլի 20-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, Երևան քաղաքի «Արաբատ» կոնյակի գործարանի մոտ տաքսի ավտոմեքենայով տեղափոխման

նույնվարձի կապակցությամբ ծագած վիճաբանության ժամանակ իր մոտ եղած դանակով մի քանի անգամ հարվածներ է հասցրել Անդրանիկ Լևոնի Առաքելյանին՝ վերջինիս առողջությանը դիտավորությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս՝ կրծքավանդակի ձախ կեսի ծակած-կտրած թափանցող վնասվածք՝ թոքի վնասումով՝ ձախակողմյան լարված պնևմոթորաքսի առաջացմամբ, ձախ բազկի կտրած վերքերի, ձախ բազկի եռագլուխ մկանի փակեղի և մկանաթելերի վնասումով, ինչպես նաև կզակային շրջանի քերծվածք (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 264):

6. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է. «(...) Դատարանը որպես ամբաստանյալ Նարեկ Խաչատրյանի անձը դրականորեն բնութագրող տվյալ է գնահատում նախկինում դատապարտված չլինելը (ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն 2014թ. մայիսի 12-ին կատարված հարցման արդյունքների), վարատող լինելը (ըստ ամբուլատոր դատահոգեբուժական հանձնաժողովային փորձաքննության 2014թ. սեպտեմբերի 9-ի թիվ 359/14 եզրակացության), իսկ պարասիանաարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանք՝ տուժողին պարճատված վնասն ըստ էության հարթելը՝ հաշվի առնելով այն, որ վերջինս Դատարանում նշեց, որ որևէ պահանջ, այդ թվում՝ նյութաիրավական, ամբաստանյալ Ն.Խաչատրյանից չունի, իր համար ցանկալի չէ, որ վերջինս անգամ քրեական պարասիանաարվության ենթարկվի:

(...)

Դատարանն ամբաստանյալ Նարեկ Խաչատրյանի պարասիանաարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքներ չարձանագրեց:

(...)

Ամբաստանյալի անձը դրականորեն բնութագրող տվյալները, նրա պարասիանաարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքները Դատարանը հաշվի է առնում նրա նկատմամբ պարճաչափը սահմանելիս (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 83-84):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Ա]ռաջին արյանի դատարանը գործի հանգամանքների, մասնավորապես՝ կատարված արարքի հանրության համար վրանգավորության աստիճանն ու բնույթը, ինչպես նաև ամբաստանյալի անձը բնութագրող, պարասիանաարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքները, մասնավորապես՝ նախկինում արատավորված դատապարտված, չլինելը, վարատող լինելու հանգամանքը, ինչպես նաև ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ճիշտ գնահատման արդյունքում նշանակել է ազատագրկման ձևով պարիժ 3 տարի ժամկետով:

(...)

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պարճատարանությանը, որ Նարեկ Խաչատրյանը մարմնական վնասվածք հասցնելու համար գործադրել

է դանակ և վնասվածքը հասցրել է փուժողի մարմնի կենսականորեն կարևոր օրգանների շրջանում, իսկ փվյալ հանգամանքը վկայում է նրա անձի հասարակական մեծ վրանգավորության մասին, որպիսի պայմաններում հողվածի սանկցիայով սահմանված պարժի նվազագույն չափի կիրառումը չի կարող ապահովել պարժի նպատակների իրականացումը, ապա Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով Նարեկ Խաչատրյանի կատարած արարքի՝ հանրության համար վրանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ նրա գործողությունների վրանգավորության աստիճանը, մասնավորապես այն, որ վիճաբանությունն առաջացել է բարեկամական հարաբերությունների հիման վրա ձևավորված կենցաղային վեճի արդյունքում, նրա անձը, նրան բնութագրող փվյալները, փուժողի հայտնած դիրքորոշումը, գրնում է, որ բողոքարկի կողմից վերը նշված պարժատարանությունները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմամբ չեն կարող վկայել ակնհայտ մեղմ պարժի նշանակված լինելու մասին: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 26-27):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքարկի կարծիքով ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 61-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի ոչ ճիշտ կիրառում:

Այսպես՝ ամբաստանյալի նկատմամբ նշանակելով կատարված արարքի համար սահմանված նվազագույն պատժաչափը՝ դատարանները հաշվի չեն առել հանցագործության՝ հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, գործի հանգամանքները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող իրական հանգամանքների բացակայությունը, անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների սոցիալական նշանակությունը:

Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը վկայակոչել է բարեկամական հարաբերությունների վրա ձևավորված կենցաղային վեճի արդյունքում կատարված գործողությունների վտանգավորության աստիճանը: Մինչդեռ հաշվի չի առել նույն բարեկամական հարաբերություններն անտեսող հանցավորի կողմից հանցավորմտադրությանը հասնելու համար ընտրված առավել վտանգավոր եղանակը, արհամարհական վերաբերմունքն այդ հարաբերությունների հանդեպ, կիրառված գործիքը և առաջին իսկ հնարավորության դեպքում այն գործի դնելու պատրաստականությունը, ինչն էականորեն բարձրացնում է նրա գործողությունների վտանգավորության աստիճանը:

Մեջբերելով Վճարելի դատարանի՝ *Գ.Մադաթյանի, Ա.Շահբազյանի, Պ.Բայրամյանի* և մի շարք այլ գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը նշել է, որ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չեն հետազոտվել և գնահատվել ամբաստանյալի դիտավորության տեսակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հասցված հարվածների քանակը, հանցագործության գործիքներն ու միջոցները, իսկ շարադրված մեղմացող հանգամանքները զուտ դատարանների սուբյեկտիվ գնահատման արդյունք են և չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը:

Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ գործում առկա չէ մեղմացող հանգամանքների և հանցավորի անձը բնութագրող տվյալների բավարարար համակցություն, որով կհիմնավորվեր ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար նվազագույն պատժաչափ կիրառելու անհրաժեշտությունը:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է վճարել բողոքն ընդունել վարույթ, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 25-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշումը մասնակիորեն՝ պատժի մասով բեկանել և Ն.Խաչատրյանի նկատմամբ նշանակված 3 (երեք) տարի ժամկետով ազատագրվումն ավելի ծանր պատժաչափով փոխարինելու համար գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված են արդյոք Ն.Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դիտավորությանը մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը (...)*

պատժվում է ազատագրվմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա*

կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

Վճռաբեկ դատարանը թիվ ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ԵՇԴ/0029/01/08, ԵԿԴ/0042/01/11, ԵՇԴ/0143/01/13, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում անդրադառնալով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին, կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ հանցավորի անձին և հանցագործության վտանգավորության բնույթին ու աստիճանին համաչափ քրեաիրավական ներգործության միջոց ընտրելու, ինչպես նաև դրա շրջանակներում համաչափ պատժաչափ սահմանելու պահանջն ուղղակիորեն բխում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների, մասնավորապես՝ արդարության և պատասխանատվության անհատականացման հիմնարար սկզբունքների բովանդակությունից: Արդարացի է այն պատիժը, որի ընտրությունը գործի բոլոր հանգամանքների՝ հանցագործության վտանգավորության բնույթի և աստիճանի (հանցագործության մեղքի ձև, շարժառիթ, նպատակ, պատճառված վնասի չափ, եղանակ, գործիքներ ու միջոցներ և այլն), հանցավորի անձը բնութագրող տվյալների, մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ամբողջական ու բազմակողմանի վերլուծության արդյունք է և բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից: Վերոնշյալ պահանջներից նահանջը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով պատիժ նշանակելիս հաշվի առնվող հանգամանքների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված] հանրորեն վրանգավոր արարքների դեմ արդյունավետ պայքարը պահանջում է այս ոլորտում համապատասխան քրեական, այդ թվում՝ պարժողական քաղաքականության իրականացում: Իսկ դա իր հերթին ենթադրում է ոչ միայն համապատասխան օրենսդրական հիմքերի առկայություն, այլև դրանց գործնական կիրառման հնարավորության ապահովում:

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդու առողջության դեմ ուղղված հանցագործություններից ամենավրանգավորի՝ դիտրավորությանը առողջությանը ծանր վնաս

պարճատելու համար: Քննարկվող հանցագործության հանրային առավել բարձր վրանգավորությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ համապարասիան հակաիրավական արարքի արդյունքում մարդուն պարճատվում է վնաս, որը խիստ բացասական է անդրադառնում նրա առողջական վիճակի վրա, այլև նրանով, որ կարող է առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև տուժողի մահ: Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիրավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի (...):

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վրանգավոր արարքը կարող է կատարվել փարբեր եղանակներով: Մասնավորապես, հանցավորը տուժողի առողջությանը ծանր վնաս կարող է պարճատել՝ իր ֆիզիկական հնարավորությունները գործադրելով (ձեռքով կամ ոտքով հարվածելով, հրել-վայր գցելով, մարմնի որևէ մաս ջարդելով և այլն), փարբեր գործիքներ, իրեր կամ առարկաներ (դանակ, կացին, մուրճ, մեքաղյա ձող, քար և այլն) օգտագործելով, զանազան մեխանիզմներ, միջոցներ կամ նյութեր (հրազեն, թույն, թմրանյութ և այլն) կիրառելով, փարբերային աղտրի իրադրությունը կամ առավել վրանգի աղբյուրն օգտագործելով և այլն: Քննարկվող հանցագործության կատարման նշված եղանակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, փարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վրանգավորության աստիճանը: Այսպես՝ տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում դանակով հարված հասցնելիս հանցավորը ոչ միայն նախատեսում է հանրորեն վրանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիությունը, այլև գիրակցում է կամ առնվազն պարտավոր է գիրակցել, որ իր գործողություններով տուժողին պարճատում է առողջության ծանր վնաս, որը վրանգավոր է կյանքի համար և անգամ կարող է հանգեցնել մահվան: Այլ խոսքով՝ հանցավորը գործում է ուղղակի դիրավորությամբ և հարակ նախատեսում է իր արարքի և վրանգավոր հետևանքների միջև առկա միանշանակ պարճատական կապը և դրա զարգացումը, այդ թվում՝ գիրակցում է կամ պարտավոր է գիրակցել, որ տուժողին կարող է պարճատել մահ, սակայն ինքնավարահոությամբ կամ անփութությամբ հույս է ունենում, որ նշված ծանր հետևանքը չի առաջանա: Վերոգրյալն ինքնին վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վրանգավորության առավել բարձր աստիճանի մասին, ուստի օբյեկտիվորեն պետք է գնահատվի և հաշվի առնվի դատարանների կողմից պարիժ նշանակելիս:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցագործության հանրային վրանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ

միջոց կիրառելու համար դատարանները հաջողակ ուշադրություն պետք է դարձնեն արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքներին, միջոցներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին ու տեղակայմանը: Համապատասխան գնահատականի պետք է արժանացվի նաև կատարված հանրորեն վրանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:

[Այդանց նշված հանգամանքների գնահատման առողջությանը դիտարկողությամբ ծանր վնաս պարճատելու վերաբերյալ գործերով հնարավոր չէ ճիշտ պարկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության հանրության համար վրանգավորության աստիճանի մասին: Հետևաբար, նշանակված պարճով չի ապահովվի կատարված արարքի և կիրառված քրեաիրավական ներգործության միջոցի համաշխարհայինը, ինչպես նաև կիսաթարվեն պարճի նշանակման ընդհանուր սկզբունքները» (տե՛ս Արմեն Շահբազյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշման 15-17-րդ կետերը):

13. Վերահաստատելով Ա.Շահբազյանի որոշմամբ արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ առողջությանը դիտարկողությամբ ծանր վնասի պատճառումը առողջության դեմ ուղղված հանցագործությունների շարքում իր վտանգավորության բնույթով առանձնանում է. այն ոչ միայն լուրջ, երբեմն նաև անդառնալի վնաս է պատճառում մարդու առողջությանը, այլև անմիջական սպառնալիքի տակ է դնում մարդկային կյանքը: Դրանով պայմանավորված նշված գործերով պատիժ նշանակելիս դատարանները պետք է հատկապես ուշադրություն դարձնեն դիտարկողության ձևին, հանցագործության գործիքներին ու միջոցներին, հասցված հարվածների քանակին և դրանց տեղակայմանը, փաստացի պատճառված վնասի բնույթին և այլ հանգամանքներին, որոնք ազդում են արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա:

Կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում վնաս պատճառելու համար օգտագործված տարատեսակ գործիքները, առարկաները կամ սարքավորումները, վնասվածքի տեղակայումը, հանցավորի պատրաստվածությունը, մեղքի դիտարկողական ձևը (հատկապես՝ ուղղակի դիտարկողությունը) իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, մեծացնում հանցագործությունը հաջողությամբ ավարտին հասցնելու կամ ավելի մեծ վնաս պատճառելու հավանականությունը: Հետևաբար նման դեպքերում օբյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վտանգավորության աստիճանը (տե՛ս, *mutatis mutandis*, Մարգիս Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14 որոշման 14-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ն.Խաչատրյանը տաքսի ավտոմեքենայով տեղափոխման ուղեվարձի կապակցությամբ ծագած վիճաբանության ժամանակ իր մոտ եղած դանակով մի քանի անգամ հարվածներ է հասցրել Ա.Առաքելյանին՝ վերջինիս առողջությանը դիտավորությամբ պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս՝ կրծքավանդակի ձախ կեսի ծակածկտրած թափանցող վնասվածք՝ թոքի վնասումով՝ ձախակողմյան լարված պնևմոթորաքսի առաջացմամբ, ձախ բազկի կտրած վերքերի, ձախ բազկի եռագլուխ մկանի փակելի և մկանաթելերի վնասումով, ինչպես նաև կզակային շրջանի քերծվածք (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը Ն.Խաչատրյանի նկատմամբ նշանակել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված ազատազրկում պատժատեսակի նվազագույն չափը՝ հաշվի առնելով, որ վերջինս նախկինում դատապարտված չի եղել, վատառողջ է, տուժողին պատճառված վնասն ըստ էության հարթել է, քանի որ տուժող Ա.Առաքելյանն ամբաստանյալի նկատմամբ որևէ պահանջ, այդ թվում՝ նյութական, չունի, բացի այդ բացակայում են պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի ու բնույթի, ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների, մասնավորապես՝ նախկինում դատապարտված չլինելու, վատառողջ լինելու, ինչպես նաև ծանրացնող հանգամանքների բացակայության վերաբերյալ եկել է ճիշտ եզրահանգման և նշանակել ազատազրկման ձևով պատիժ՝ 3 տարի ժամկետով, իսկ բողոքարկերի կողմից բերված պատճառաբանությունները չեն վկայում ակնհայտ մեղմ պատիժ նշանակված լինելու մասին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում վերլուծված փաստական տվյալները համադրելով սույն որոշման 11-13-րդ կետերում մեջբերված և վերահաստատված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ն.Խաչատրյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելիս պատշաճ վերլուծության չեն ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, մասնավորապես՝ հանցագործության եղանակը, գործիքը, հասցված հարվածների քանակն ու տեղակայումը, պատճառված վնասի բնույթը և մեղքի ձևը: Այսպես՝ Ն.Խաչատրյանի արարքի հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին է վկայում տուժողի մարմնի կենսականորեն կարևոր նշանակություն ունեցող հատվածի՝ կրծքավանդակի ձախ շրջանի, ինչպես

նաև ձախ բազկի ու կզակի շրջանում հարվածներ հասցնելը: Կատարվածի հանրորեն վտանգավոր բնույթն արտահայտվում է նաև ուղղակի դիտավորությանը տուժողի առողջությանն այնպիսի ծանր վնաս պատճառելով, որը վտանգավոր է կյանքի համար:

15.1. Վճարելի դատարանն իր համաձայնությունն է հայտնում նաև բողոքարկերի փաստարկներին առ այն, որ Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով վիճաբանության՝ բարեկամական հարաբերությունների վրա ձևավորված կենցաղային վեճի արդյունքում տեղի ունենալու հանգամանքը, հաշվի չի առել այդ նույն հարաբերությունների պայմաններում Ն.Խաչատրյանի կողմից հանցավոր մտադրությանը հասնելու համար ընտրված առավել վտանգավոր եղանակը, կիրառված գործիքը, առաջին իսկ հնարավորության դեպքում այն գործի դնելու պատրաստակամությունը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

16. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից Ն.Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարան

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Նարեկ Լևոնի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 18-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Նարեկ Լևոնի Խաչատրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

42.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՄԴ/0064/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

Երևան քաղաքում

դո՛ւրաց դատական նիստում, քննության առնելով Լուսինե Ռաֆիկի Նավասարդյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի փետրվարի 4-ի որոշման դեմ ամբաստանյալ Լ.Նավասարդյանի պաշտպան Ռ.Սաֆարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի մարտի 22-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիայի քննչական բաժնում հարուցվել է թիվ 16114413 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ Լ.Նավասարդյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Նույն մարմնի՝ 2013 թվականի մայիսի

6-ի որոշմամբ Լ.Նավասարդյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան 2013 թվականի մայիսի 7-ին մեղադրանք է առաջադրվել 20 (քսան) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով:

2013 թվականի հունիսի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2014 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռով ամբաստանյալ Լ.Նավասարդյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 20 (քսան) դրվագ տարբեր հանցագործություններ կատարելու մեջ և հանցանքների համակցությամբ դատապարտել ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամկետով: Վճռվել է նաև ամբաստանյալ Լ.Նավասարդյանից հօգուտ տուժողներ Մ.Գալթյանի, Է.Գևորգյանի, Հ.Չանդիրյանի, Ս.Մեժլումյանի, Մ.Ղազարյանի, Վ.Սիմոնյանի, Ն.Մանուկյանի, Ռ.Սիմոնյանի, Է.Կարապետյանի, Հ.Մելքոնյանի, Վ.Կիտոյանի, Վ.Գևորգյանի, Ս.Մեժլումյանի, Ա.Ղազարյանի, Ս.Ջաքջյանի, Բ.Քարակյուլյանի, Օ.Կազանջյանի, Մ.Բեռթիզյանի, Ա.Նաջարյանի բռնազանձել համապատասխանաբար 70.000, 32.000, 56.000, 60.000, 32.000, 530.000, 328.000, 36.000, 132.000, 72.000, 33.000, 36.000, 190.000, 188.000, 56.000, 32.000, 60.000, 64.000, 44.000 ՀՀ դրամ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2015 թվականի փետրվարի 4-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 4-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել պաշտպան Ռ.Սաֆարյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 10-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Նախաքննության մարմնի կողմից Լ.Նավասարդյանին մեղադրանքներ են առաջադրվել այն բանի համար, որ նա՝

«(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակրոնայրս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Վերսա Ալեքսանի

Միմոնյանի վարահությունը չարաշահելու եղանակով փաստաթղթերի թարգմանության համար վերջինից պահանջել ու մաս-մաս սրացել է 380.000 ՀՀ դրամ և խաբեությանը հափշտակել այն՝ Վ.Միմոնյանին պարճատելով զգալի չափերի հասնող 380.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Շահե Մանուկի Գիրաօղլյանի վարահությունը չարաշահելու եղանակով փաստաթղթերի թարգմանության համար վերջինից պահանջել ու սրացել է 56.000 ՀՀ դրամ և խաբեությանը հափշտակել այն՝ Շ.Գիրաօղլյանին պարճատելով զգալի չափերի հասնող 56.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Եսիրա Մերուժանի Մանուկյանի վարահությունը չարաշահելու եղանակով փաստաթղթերի թարգմանության համար վերջինից պահանջել ու սրացել է 78.000 ՀՀ դրամ և խաբեությանը հափշտակել այն, ինչպես նաև 250.000 դրամ արժողության հագուստ և խաբեությանը հափշտակել՝ Ե.Մանուկյանին պարճատելով զգալի չափերի հասնող ընդհանուր 328.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Մանվել Յուրիկի Դազարյանի վարահությունը չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից առձեռն սրացել է 32.000 ՀՀ դրամ և խաբեությանը հափշտակել այն՝ Մ.Դազարյանին պարճատելով զգալի չափերի հասնող 32.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Աննա Յուրիկի Դազարյանի վարահությունը չարաշահելու եղանակով փաստաթղթերի թարգմանության համար վերջինից առձեռն սրացել է 13.000 դրամ և այլ ծախսերի համար 155.000 ՀՀ դրամ ու խաբեությանը հափշտակել այն՝ Ա.Դազարյանին պարճատելով զգալի չափերի հասնող ընդհանուր 168.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Սուսան Արմայիսի Մեժդումյանի վարահությունը չարաշահելու եղանակով փաստաթղթերի թարգմանության և այլ գործարքներ կատարելու համար վերջինից

մաս-մաս առձեռն սրացել է ընդհանուր 190.000 ՀՀ դրամ և խաբեությանը համապատասխան այն՝ Ս.Մեծյանին պարճատելով զգալի չափերի հասնող 190.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Սեդա Սերգեյի Մեծյանի վարահույժները չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից առձեռն սրացել է ընդհանուր 60.000 ՀՀ դրամ ու խաբեությանը համապատասխան այն՝ Ս.Մեծյանին պարճատելով զգալի չափերի հասնող 60.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Բեռնա Արրահամի Քարակյուլյանի վարահույժները չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից պահանջել ու սրացել է 32.000 ՀՀ դրամ և խաբեությանը համապատասխան այն՝ Բ.Քարակյուլյանին պարճատելով զգալի չափերի հասնող 32.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Օվսաննա Ավեդիսի Կազանջյանի վարահույժները չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից մաս-մաս առձեռն սրացել է ընդհանուր 60.000 ՀՀ դրամ և խաբեությանը համապատասխան այն՝ Օ.Կազանջյանին պարճատելով զգալի չափերի հասնող 60.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Մադլեն Հակոբի Բեթթիզյանի վարահույժները չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից առձեռն սրացել է ընդհանուր 64.000 ՀՀ դրամ և խաբեությանը համապատասխան այն՝ Մ.Բեթթիզյանին պարճատելով զգալի չափերի հասնող 64.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Վազգանուշ Գլավինկայի Գևորգյանի վարահույժները չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից պահանջել ու սրացել է 36.000 ՀՀ դրամ և խաբեությանը համապատասխան այն՝ Վ.Գևորգյանին պարճատելով զգալի չափերի հասնող 36.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնսալդա» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Էդիպա Երվանդի Կարապետյանի վարահությունը չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից մաս-մաս առձեռն ստացել է ընդհանուր 132.000 ՀՀ դրամ և խաբեությամբ հափշտակել այն՝ Է.Կարապետյանին պարձատելով զգալի չափերի հասնող 132.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնսալդա» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Միրա Ժորայի Գավթյանի վարահությունը չարաշահելու եղանակով վերջինիս անձնագրի և այլ փաստաթղթերի թարգմանության համար նրա ամուսնուց՝ Գագիկ Գասպարյանից ստացել է 70.000 ՀՀ դրամ գումար և խաբեությամբ հափշտակել այն՝ Մ.Գավթյանին պարձատելով զգալի չափերի հասնող 70.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնսալդա» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Ռաիսա Ալեքսանի Միմոնյանի վարահությունը չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից առձեռն ստացել է 36.000 ՀՀ դրամ և խաբեությամբ հափշտակել այն՝ Ռ.Միմոնյանին պարձատելով զգալի չափերի հասնող 36.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնսալդա» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Անդրանիկ Հունանի Նաջարյանի վարահությունը չարաշահելու եղանակով անձնագրերի թարգմանության համար վերջինից մաս-մաս առձեռն ստացել է ընդհանուր 44.000 ՀՀ դրամ և խաբեությամբ հափշտակել այն՝ Ա.Նաջարյանին պարձատելով զգալի չափերի հասնող 44.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի փետրվար ամսին «Մակդոնսալդա» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Վիկտորյա Արշալույսի Կիրոյանի վարահությունը չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից ստացել է 28.000 ՀՀ դրամ և խաբեությամբ հափշտակել այն, ինչպես նաև խաբեությամբ հափշտակել է 5.000 ՀՀ դրամ արժողությամբ պայուսակը՝ Վ.Կիրոյանին պարձատելով զգալի չափերի հասնող 33.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի փետրվար ամսին «Մակդոնսալդա» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Էդգար Եղիայի Գևորգյանի վարահությունը չարաշահելու

եղանակով վերջինիս անձնագրի և այլ փաստաթղթերի թարգմանության համար պահանջել ու Հասմիկ Մելքոնյանի միջոցով սրացել է 32.000 ՀՀ դրամ և խաբեությամբ հափշտակել այն՝ Է.Գևորգյանին պատճառելով զգալի չափերի հասնող 32.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Հրաչյա Համիկի Չանդիրյանի վարահությունը չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից սրացել է ընդհանուր 56.000 ՀՀ դրամ և խաբեությամբ հափշտակել այն՝ Հ.Չանդիրյանին պատճառելով զգալի չափերի հասնող 56.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Հասմիկ Սամվելի Մելքոնյանի վարահությունը չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից մաս-մաս սրացել է ընդհանուր 72.000 ՀՀ դրամ և խաբեությամբ հափշտակել այն՝ Հ.Մելքոնյանին պատճառելով զգալի չափերի հասնող 72.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

(...) 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով Սոսիկ Արթինի Ջաքքյանի վարահությունը չարաշահելու եղանակով անձնագրերի և այլ փաստաթղթերի թարգմանության համար վերջինից մաս-մաս սրացել է ընդհանուր 56.000 ՀՀ դրամ գումար և խաբեությամբ հափշտակել այն՝ Ս.Ջաքքյանին պատճառելով զգալի չափերի հասնող 56.000 ՀՀ դրամի նյութական վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 52-55):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը, վերլուծելով անձին վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու քրեաիրավական դրույթները, համադրելով դրանք գործի փաստերի հետ, գտել է, որ անցել են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալ Լ.Նավասարդյանին մեղսագրվող արարքների համար քրեական պատասխանատվության եկթարկելու վաղեմության ժամկետները:

7. Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ամբաստանյալ Լ.Նավասարդյանի վերաբերյալ կայացված դատական ակտերի բեկանման, քրեական գործի վարույթի կարճման և քրեական

հետապնդման դադարեցման համար հիմք է հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցնելու հանգամանքը, քանի որ Լ.Նավասարդյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքները կատարել և ավարտել է 2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին, այսինքն՝ լրացել է երկու տարին, սակայն նրա նկատմամբ կայացված դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2015 թվականի փետրվարի 4-ի որոշումն օրինական ուժի մեջ չեն մտել, հետևաբար անցել է ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը, որը հիմք է Լ.Նավասարդյանին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

8. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, քրեական գործի վարույթը կարճել և ամբաստանյալ Լ.Նավասարդյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

9. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Լ.Նավասարդյանի նկատմամբ 20 (քսան) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է արդյոք դադարեցման քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Խարդախությունը՝ խաբեության կամ վարսհությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը (...)*

պարժվում է փուզանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապարիկից հինգհարյուրապարիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու փարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտարվորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու փարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պարիժ (...)*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձն ազարվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...):

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...):»:

Վերոնշյալ քրեաիրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքը դիտավորյալ հանցագործություն է, իսկ հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում 2 տարին, ուստի քննարկվող հանցավոր արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվին: Հետևաբար այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նորմի վերլուծությունից հետևում է, որ դրանով նախատեսված հանցակազմը նյութական է, այդ հանցագործությունը համարվում է ավարտված, երբ առաջանում են հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված հանրորեն վտանգավոր հետևանքները: Մասնավորապես, խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը, համարվում է ավարտված, երբ հանցավորը գույքը վերցնելուց, իրենք կամ մեկ ուրիշինը դարձնելուց հետո իրական հնարավորություն ունի իր հայեցողությամբ այն տնօրինելու կամ օգտագործելու:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող

իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Միևնույն ժամանակ քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի մանրամասն վերլուծությունը *mutatis mutandis* տե՛ս Անահիտ Հայկի Սաղաթելյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը, Սիրաժ Ղամբարյանի և այլոց գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշումը, Հրանտ Մազմանյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումը):

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ ամբաստանյալ Լ.Նավասարդյանը 2013 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում «Մակդոնալդս» կազմակերպությունում աշխատանքի ընդունելու և բնակարաններ տրամադրելու պատրվակով տարբեր անձանց վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել է որոշակի գումար՝ տուժողներին պատճառելով զգալի չափերի հասնող նյութական վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը դատավճիռ է կայացրել 2014 թվականի նոյեմբերի 11-ին, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան (տե՛ս սույն որոշման 2-3-րդ կետերը), իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել 2015 թվականի փետրվարի 4-ին (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված հանցագործությունները կատարելու մեջ Լ.Նավասարդյանի մեղքը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է 2014 թվականի նոյեմբերի 11-ին, իսկ վերաքննիչ բողոքարկման արդյունքում Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է 2015 թվականի փետրվարի 4-ին, որի դեմ բերվել է վճարելի բողոք, այսինքն՝ Լ.Նավասարդյանի վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

13. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-11-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Լ.Նավասարդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքներն ավարտվել են 2013 թվականի փետրվար ամսին, իսկ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը 2015 թվականի փետրվար ամսվա դրությամբ օրինական ուժի մեջ մտած չի եղել, հետևաբար Լ.Նավասարդյանին քրեական

պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետն անցել է:

14. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով ամբաստանյալ Լ.Նավասարդյանի նկատմամբ 20 (քսան) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Վճարելի դատարանի վերջին դիրքորոշման համար հիմք է ծառայում նաև վճարելի բողոք բերելու միջոցով ամբաստանյալ Լ.Նավասարդյանի հայտնած կամաարտահայտությունը (տե՛ս սույն որոշման 6-8-րդ կետերը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Լուսինե Ռաֆիկի Նավասարդյանի վերաբերյալ Երևանի Մալաթիա-Սերաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի փետրվարի 4-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Լուսինե Նավասարդյանի նկատմամբ 20 մեղադրանքով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել և նրան ազատել քրեական պատասխանատվությունից՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառարանությամբ:

3. Երևանի Մալաթիա-Սերաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի փետրվարի 4-ի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

պրորագրություն

Դատավորներ՝

պրորագրություններ

43.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0011/14/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գրիգոր Գրիշայի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի ապրիլի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2007 թվականի հոկտեմբերի 8-ին ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 14119907 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2007 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ Գրիգոր Գրիշայի Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ

քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը որոշում է կայացվել Գ.Գրիգորյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին:

2007 թվականի հոկտեմբերի 12-ին Գ.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2010 թվականի մայիսի 10-ին Գ.Գրիգորյանը ձերբակալվել է Իսպանիայի իրավապահ մարմինների կողմից և 2010 թվականի դեկտեմբերի 11-ին ներկայացվել է Արաբկիրի քննչական բաժին: 2010 թվականի դեկտեմբերի 13-ին նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը վերահաստատվել է:

Նախաքննության մարմնի 2011 թվականի մայիսի 23-ի որոշմամբ թիվ 14119907 քրեական գործով Գ.Գրիգորյանի նկատմամբ հարուցվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ:

2011 թվականի հուլիսի 26-ին Գ.Գրիգորյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար գործն ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ Գ.Գրիգորյանն ազատվել է քրեական պատասխանատվությունից և պատժից: Նրա նկատմամբ նշանակվել է հարկադիր բուժում հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում:

3. ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջնորդության քննության արդյունքում Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, 2013 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ բավարարելով միջնորդությունը, Գ.Գրիգորյանի նկատմամբ կիրառվող հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը դադարեցրել է և այն փոխարինել հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում՝ հարկադիր բուժմամբ:

ՀՀ առողջապահության նախարարության «Նորք հոգեբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ նաև՝ «Նորք հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ) երեք անգամ (ըստ Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մարտի 6-ի որոշման և բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման միջգերատեսչական հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի թիվ 2 եզրակացության՝ 2013 թվականի հունիսին, 2014 թվականի ապրիլին և 2014 թվականի սեպտեմբերին) միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և

Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) ընդհանուր տիպի հոգեբուժական հաստատությունում Գ.Գրիգորյանի նկատմամբ հարկադիր բուժումը տարածքային հոգեբույժի հսկողության ներքո արտահիվանդանոցային հարկադիր բուժմամբ փոխարինելու մասին, որոնք մերժվել են: Վերջին դեպքում բերվել է վերաքննիչ բողոք, որի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը:

4. «Նորք հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Գ.Սայադյանը 2015 թվականի փետրվարի 20-ին կրկին միջնորդություն է ներկայացրել Գ.Գրիգորյանի նկատմամբ հարկադիր բուժումը տարածքային հոգեբույժի հսկողության ներքո արտահիվանդանոցային հարկադիր բուժմամբ փոխարինելու մասին, որն Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մարտի 6-ի որոշմամբ բավարարվել է, Գ.Գրիգորյանի նկատմամբ կիրառվող հոգեբուժական հիվանդանոցի ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը դադարեցվել և փոխարինվել է արտահիվանդանոցային հսկողության տեղամասային հոգեբույժի մոտ հարկադիր բուժմամբ:

5. Դատախազ Հ.Լուսապոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2015 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մարտի 6-ի որոշումը:

6. Վերոհիշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2015 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

7. Նախաքննության մարմինը Գ.Գրիգորյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ «(...) [Ն]ա 2007 թվականի հոկտեմբերի 07-ին, ժամը 23:00-ի սահմաններում Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի 16-րդ շենքի բակում գործով դեռևս չսպարզված անձի հետ ատրճանակներից կրակել է Ջնդի Ամարյանի և նրա աներորդի Ջամալ Ավդալյանի վրա, փորձելով դիտավորությամբ նրանց կյանքից զրկել և դիմել փախուստի: Կատարվածի արդյունքում Ջ.Ամարյանը սրացել է

աջ սրունքի փոքր ոլոքի կոտորվածք, իսկ Ջ.Ավդալյանը աջ ձեռքի և աջ գորկային շրջանի թափանցող հրազենային վնասվածք» (տե՛ս նյութեր, 27-28 թերթեր):

8. Բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2015 թվականի փետրվարի 20-ի թիվ 2 եզրակացության համաձայն՝ «Գրիգոր Գրիգորյանը՝

1. նախկինում տառապել է և ներկայումս տառապում է իրոնիկական հոգեկան հիվանդությամբ «Հետզհետե սթրեսային խանգարում անձի քրոնիկական փոփոխություններով և աֆեկտիվ անկայունությամբ գլխուղեղի ախտահարման ֆոնի վրա», այս մասին են վկայում ինչպես անամնեստիկ տվյալները, այնպես էլ ներկա հետազոտման արդյունքները:

2. Գ. Գրիգորյանը ներկայումս գտնվում է կայուն լավացման վիճակում չունի ագրեսիվ նկատառումներ շրջապատի նկատմամբ: Ներկայումս հասկանում է իր արարքի հակաօրինականությունը և պատժելիությունը: Ներկայումս վրանգավոր չէ հասարակության և շրջապատի համար: Ունի դրական վերաբերմունք հետագա բուժման վերաբերյալ» (տե՛ս նյութեր, 12 թերթ):

9. Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մարտի 6-ի որոշման համաձայն՝ «(...) քննելով ՀՀ ԱԾ «Նորք» հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Գ.Սայադյանի միջնորդությունը և հետազոտելով ներկայացված նյութերը՝ մասնավորապես, բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման միջգերատեսչական հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի թիվ 2 եզրակացությունը, գտնում է, որ միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ Գրիգոր Գրիգորյանը ներկայումս գտնվում է կայուն լավացման վիճակում, չունի ագրեսիվ նկատառումներ շրջապատի նկատմամբ, ներկայումս հասկանում է իր արարքի հակաօրինականությունը և պատժելիությունը, վրանգավոր չէ հասարակության և շրջապատի համար և ունի դրական վերաբերմունք հետագա բուժման վերաբերյալ, այսինքն՝ նրա առողջական վիճակը բարելավվել է և վերացել կիրառվող բժշկական բնույթի հարկադրական միջոցի տվյալ տեսակի՝ ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժման, հետագա կիրառման անհրաժեշտությունը, ուստի քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձ Գրիգոր Գրիգորյանի նկատմամբ պետք է նշանակել հարկադիր բուժում՝ արտահիվանդանոցային հսկողություն տեղամասային հոգեբույժի մոտ» (տե՛ս նյութեր, թերթ 30):

10. Վերաքննիչ դատարանի 2015 թվականի ապրիլի 9-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարում վերաքննիչ բողոքի պարճառարանությունն առ այս, որ Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման միջգերատեսչական հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի թիվ

2 եզրակացությունը՝ անսխեմային Գրիգոր Գրիգորյանի կողմից կատարված արարքի բնույթն ու հանրային վրանգավորության աստիճանը:

Առաջին արյանի դատարանը, օբյեկտիվորեն գնահատելով գործում առկա փաստական փոխանակները, հանգել է հիմնավոր հետևության և իրավացիորեն բավարարել է ՀՀ ԱՆ «Նորք» հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության միջնորդությունը:

(...) Առաջին արյանի դատարանը, պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները, կայացրել է օրինական, հիմնավորված և պարճատարանված որոշում, իսկ վերաքննիչ բողոքում բերված պարճատարանությունները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ որոշումը բեկանելու համար» (տե՛ս նյութեր, թերթ 59):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Վճռաբեկ բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանների հետևությունները հակասում են Վճռաբեկ դատարանի՝ Արտավազդ Ծատուրյանի վերաբերյալ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0045/14/13 որոշման մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածին տրված մեկնաբանություններին:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Գ.Գրիգորյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված առանձնապես ծանր և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջին ծանրության հանցագործություններ, ինչը վկայում է վերջինիս անձի և կատարած հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին: Անձի վտանգավորության աստիճանը որոշվում է ոչ միայն նրա ներկա հոգեկան վիճակով, այլ նաև նրա կողմից կատարված հանցագործության բնույթով:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել հարկադիր բուժումը փոփոխելու հարցի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, այդ թվում՝ արարքի ծանրության և անձի վտանգավորության աստիճանը:

Ավելին՝ ստորադաս դատարանների կողմից հիմք են ընդունվել ՀՀ առողջապահության նախարարության բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունում արված այնպիսի եզրահանգումները, որպիսի եզրահանգումների առկայության պայմաններում նախկինում ներկայացված երեք միջնորդությունները (2013 թվականի հունիսին, 2014 թվականի ապրիլին և 2014 թվականի սեպտեմբերին) մերժվել են:

Վերոգրյալի հաշվառմամբ բողոքի հեղինակը գտել է, որ ստորադաս դատարանները չեն հիմնավորել, որ Գ.Գրիգորյանի նկատմամբ ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադիր բուժման անհրաժեշտությունը վերացել է, և նրա նկատմամբ անհրաժեշտ է նշանակել տեղամասային հոգեբույժի հսկողության ներքո արտահիվանդանոցային հարկադիր բուժում:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մարտի 6-ի, Վերաքննիչ դատարանի 2015 թվականի ապրիլի 9-ի դատական ակտերը և գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու (ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդված) կառուցակարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյոք Գ.Գրիգորյանի նկատմամբ հոգեբուժական հիվանդանոցի ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը դադարեցնելու և այն արտահիվանդանոցային հսկողության տեղամասային հոգեբույժի մոտ հարկադիր բուժմամբ փոփոխելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝ *«Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ դադարանք կարող է նշանակել այն անձի նկատմամբ՝*

1) ով սույն օրենսգրքի Հարույկ մասի հոդվածով նախատեսված արարքը կատարել է անմեղսունակության վիճակում.

(...)

2. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց նկատմամբ նշանակվում են միայն այն դեպքերում, երբ հոգեկան խանգարումները կապված են այդ անձանց կողմից այլ էական վնաս պատճառելու հնարավորության կամ իր կամ այլ անձանց համար վրանգավորության հետ (...):»

ՀՀ քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ են՝*

1) հոգեբույժի մուր արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը.

2) հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը.

3) հոգեբուժական հիվանդանոցի հարուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն՝ «Հոգեբույժի մուր արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում կարող է նշանակվել, եթե անձն իր հոգեկան վիճակով հոգեբուժական հիվանդանոցում տեղավորման կարիք չունի»:

ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ «1.Բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դատարանը հաշվի է առնում անձի հոգեկան հիվանդությունը, նրա կարարած արարքի բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը:

(...)

3.Բժշկական հաստատության եզրակացության հիման վրա դատարանը կարող է որոշում կայացնել (...) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու մասին»:

16. Անդրադառնալով բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելիս դատարանի կողմից քննության առարկա դարձվող հարցերի շրջանակին՝ Վճռարեկ դատարանն Ա.Ծատուրյանի գործով որոշման շրջանակներում արձանագրել է, որ «(...) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու վերաբերյալ միջնորդություն քննելիս դատարանը կաշկանդված չէ բժշկական հաստատության եզրակացությամբ:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու վերաբերյալ միջնորդության քննարկման յուրաքանչյուր դեպքում դատարանը բժշկական հաստատության կողմից տրված համապատասխան եզրակացության հետ մեկտեղ պետք է քննարկման առարկա դարձնի և հաշվի առնի նաև անձի կարարած արարքի բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը: Մասնավորապես, դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի այն հարցը, թե ինչ օբյեկտի, ինչպիսի հասարակական հարաբերությունների դեմ է ուղղված եղել անձի ուրիշ գործերը: Օրինակ՝ մարդու կյանքի և առողջության դեմ կատարված հանրորեն վրանգավոր արարքը կարող է վկայել այն կատարած անձի ավելի բարձր վրանգավորության մասին:

Դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի նաև հանրորեն վրանգավոր արարք կատարած սուբյեկտի անձը: Մասնավորապես՝ դատարանը պետք է քննարկի նրա նկատմամբ իրականացվող բուժման տևողությունը, պայմանները, նրա ներկա հոգեկան վիճակը, վարքագիծը: Դատարանը պետք է ուշադրություն դարձնի նաև այն հանգամանքների

վրա, թե արդյոք տվյալ անձը նախկինում հանրորեն վրանգավոր արարք կատարել և համապատասխան բուժում արագել է, թե ոչ: Այս հանգամանքների պարզումը ևս կարող է էական նշանակություն ունենալ անձի՝ իր կամ շրջապատի համար վրանգավորության աստիճանը պարզելու հարցում:

[Ե]շված հանգամանքների համարելո գնահատմամբ միայն դատարանը կարող է հիմնավորված որոշում կայացնել անձի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու կամ անփոփոխ թողնելու մասին» (տես Արտավազդ Արտուշի Ծատուրյանի գործով Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0045/14/13 որոշման 15-րդ կետը):

17. Վերահաստատելով նախորդ կետում մեջբերված՝ Ա.Ծատուրյանի վերաբերյալ որոշման մեջ ձևավորած իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները միմյանցից տարբերվում են, նախևառաջ, անձին պահելու ռեժիմի խստությամբ: Դրանցից առավել մեղմ ռեժիմն ունի հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի ենթարկվող անձի նկատմամբ, նրա վիճակի էական բարելավման դեպքում, մարդասիրության սկզբունքից ելնելով, կարող է փոփոխվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը՝ նշանակելով օրենքով նախատեսված՝ ավելի մեղմ ռեժիմ ունեցող հարկադրանքի միջոց: Մինևույն ժամանակ անձի վիճակի համապատասխան վատթարացման դեպքում նրա նկատմամբ կիրառվող բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը կարող է փոփոխվել ավելի խիստ ռեժիմ ունեցող միջոցով:

Անձի վիճակի բարելավման կամ վատթարացման հանգամանքը գնահատելիս դատարանը բժշկական հաստատության կողմից տրված համապատասխան եզրակացության հետ մեկտեղ քննության առարկա պետք է դարձնի հանրորեն վտանգավոր արարք կատարած սուբյեկտի անձը, ինչպես նաև նրա կատարած արարքի բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը:

Մասնավորապես հանրորեն վտանգավոր արարք կատարած սուբյեկտի անձը գնահատելիս դատարանը պետք է քննարկի նրա նկատմամբ իրականացվող բուժման տևողությունը, պայմանները, նրա ներկա հոգեկան վիճակը, վարքագիծը, ուշադրություն դարձնի նաև այն հանգամանքների վրա, թե արդյոք տվյալ անձը նախկինում հանրորեն վտանգավոր արարք կատարել և համապատասխան բուժում ստացել է, թե՛ ոչ: Ընդ որում, հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի ներկա հոգեկան վիճակը և վարքագիծը գնահատելիս պետք է հաշվի առնել ոչ թե կոնկրետ պահի դրությամբ անձի հոգեկան վիճակը, որը կարող է կապված

լինել հիվանդության համապատասխան փուլով պայմանավորված՝ վիճակի ժամանակավոր բարելավման հետ, այլ որոշակի ժամանակահատվածում իրականացված բուժման արդյունքում տեղի ունեցած փոփոխությունները և դրանց կայունությունը: Որպես այդպիսի ժամանակահատվածի մեկնարկման պահ դատարանը պետք է հիմք ընդունի բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու, իսկ այն փոփոխելու հարցը քննարկված լինելու դեպքում՝ այդ հարցը լուծելու պահը:

18. Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելիս դատարանը պետք է քննության առարկա դարձնի նաև այն, թե դատարանի կողմից նախորդ անգամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելուց հետո ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել հանրորեն վտանգավոր արարք կատարած սուբյեկտի անձը (*նրա ներկա հոգեկան վիճակը, վարքագիծը*), ինչպես նաև նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը:

Դատարանն իրավասու է փոփոխել անձի նկատմամբ կիրառվող բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակն ավելի մեղմով, եթե համեմատական վերլուծության արդյունքում, հանրորեն վտանգավոր արարքի բնույթի և վտանգավորության աստիճանի հաշվառմամբ նրա մոտ ձևավորվի համոզվածություն առ այն, որ դատարանի կողմից նախորդ անգամ հարցի քննարկումից հետո անձի հոգեկան վիճակը և վարքագիծն այնպիսի դրական փոփոխությունների են ենթարկվել, որոնց արդյունքում անձը հանրության համար իրական վտանգ չի ներկայացնում, կամ այդպիսի վտանգն էականորեն նվազել է, ինչպես նաև հարկադրանքի միջոցի ավելի մեղմ տեսակի պայմաններում այդ անձի նկատմամբ բուժումը և վերահսկողությունը հնարավոր է արդյունավետ իրականացնել:

Վերոգրյալի համատեքստում Վճարելի դատարանն արձանագրում է, որ վերը նշված հանգամանքները համակցության մեջ գնահատելու արդյունքում միայն դատարանը կարող է հիմնավորված որոշում կայացնել անձի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու կամ անփոփոխ թողնելու մասին:

19. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմինը Գ.Գրիգորյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով: Այնուհետև նախաքննության մարմնի որոշմամբ Գ.Գրիգորյանի նկատմամբ հարուցվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ (տես սույն որոշման 1-ին, 7-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանի 2011 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ Գ.Գրիգորյանն ազատվել է քրեական պատասխանատվությունից ու պատժից, և նրա նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի

միջոց՝ հարկադիր բուժում հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջնորդության հիման վրա Գ.Գրիգորյանի նկատմամբ կիրառվող հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադրական բուժումը փոփոխել է հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժմամբ (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

2013 թվականի օգոստոսին, 2014 թվականի ապրիլ և հոկտեմբեր ամիսներին «Նորք հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Գ.Գրիգորյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելու վերաբերյալ ներկայացված երեք միջնորդությունները մերժվել են Առաջին ատյանի դատարանի՝ համապատասխանաբար 2013 թվականի սեպտեմբերի 27-ի, 2014 թվականի ապրիլի 22-ի, 2014 թվականի նոյեմբերի 18-ի որոշումներով: Վերջին որոշման դեմ դիմող Գ.Գրիգորյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ մերժվել է (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Այնուհետև «Նորք հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Գ.Սայադյանը նույն պահանջով միջնորդություն է ներկայացրել, որը Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի մարտի 6-ի որոշմամբ բավարարել է: Այսպես՝ Առաջին ատյանի դատարանը ներկայացված նյութերի, մասնավորապես՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2015 թվականի փետրվարի 20-ի թիվ 2 եզրակացության հետազոտման արդյունքում գտել է, որ Գ.Գրիգորյանի առողջական վիճակը բարելավվել է, նա ներկայումս գտնվում է կայուն լավացման վիճակում, չունի ագրեսիվ նկատառումներ շրջապատի նկատմամբ, հասկանում է իր արարքի հակաօրինականությունը և պատժելիությունը, վտանգավոր չէ հասարակության և շրջապատի համար և ունի դրական վերաբերմունք հետագա բուժման վերաբերյալ, հետևաբար վերացել է բժշկական բնույթի հարկադրական միջոցի տվյալ տեսակի՝ ընդհանուր հսկողության բաժանմունքում հարկադրական բուժման հետագա անհրաժեշտությունը: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը Գ.Գրիգորյանի նկատմամբ կիրառվող հոգեբուժական հիվանդանոցի ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը դադարեցել և այն փոխարինել է արտահիվանդանոցային հսկողության տեղամասային հոգեբույժի մոտ հարկադիր բուժմամբ (տե՛ս սույն որոշման 4-րդ և 9-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, այն թողել է օրինական ուժի մեջ՝ գտնելով, որ պահպանվել են ՀՀ օրենսդրության պահանջները, կայացվել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում (տե՛ս սույն որոշման 5-րդ, 9-րդ կետերը):

20. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով 15-18-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և վերլուծությունների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, հիմնվելով միայն բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2015 թվականի փետրվարի 20-ի թիվ 2 եզրակացության վրա և, իր դատական ակտում վերաբառադրելով վերջինիս եզրահանգումները, գնահատման առարկա չի դարձրել Գ.Գրիգորյանի կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքի բնույթի և վտանգավորության աստիճանը: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը տեղեկություններ է ունեցել (իր դատական ակտում արձանագրել է) այն մասին, որ Գ.Գրիգորյանի նկատմամբ կիրառվող բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը մեկ անգամ փոփոխվել է մեղմացման առումով, իսկ դրանից հետո այն կրկին մեղմացման առումով փոփոխելու հարցը երեք անգամ քննարկման առարկա է դարձվել և մերժվել (վերջին անգամ՝ Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է թողնվել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 18-ի որոշումը): Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը չի պարզել և վերլուծության չի ենթարկել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը փոփոխելու հարցը վերջին անգամ դատական կարգով քննարկվելուց հետո Գ.Գրիգորյանի հոգեկան վիճակում և վարքագծում տեղի ունեցած փոփոխությունների առկայության հարցը: Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները, կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում:

21. Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոփոխելիս պատշաճ գնահատման չեն ենթարկել Գ.Գրիգորյանի անձը, ինչպես նաև ընդհանրապես քննարկման առարկա չեն դարձրել նրա կատարած հանրորեն վտանգավոր արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանն՝ ինչպես առանձին, այնպես էլ մնացած հանգամանքների հետ համակցության մեջ: Արդյունքում անհիմն եզրահանգել են, որ Գ.Գրիգորյանի նկատմամբ կիրառվող բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը պետք է փոխարինվի բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների շարքում ամենամեղմ ուժի ունեցող տեսակով՝ հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողությամբ և հարկադիր բուժմամբ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Գրիգորյանի նկատմամբ հոգեբուժական հիվանդանոցի ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը դադարեցնելու և այն արտահիվանդանոցային հսկողության տեղամասային հոգեբույժի մոտ հարկադիր բուժմամբ փոփոխելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

22. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասը, որը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող որոշման կայացմանը և կարող էր ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Նշված նյութական և դատավարական իրավունքների խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու հիմք են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գրիգոր Գրիշայի Գրիգորյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցը փոփոխելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 6-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 9-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

44.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0386/06/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի հունիսի 18-ի որոշման դեմ մեղադրյալ Ալինա Հենրիկի Հովսեփյանի պաշտպան Գագիկ Խաչիկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության պետի՝ 2015 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 90050215 քրեական գործը:

2015 թվականի մայիսի 7-ին թիվ 90050215 քրեական գործը ՀՀ ՔԿ ԶԲԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ս.Սարգսյանի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2015 թվականի հունիսի 1-ին Ալինա Հովսեփյանը ձերբակալվել է:

2015 թվականի հունիսի 4-ին Ա.Հովսեփյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով (չորս դրվագով):

2015 թվականի հունիսի 4-ին քննիչ Ս.Սարգսյանը միջնորդություն է հարուցել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Ա.Հովսեփյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում 2 ամիս ժամկետով կիրառելու մասին:

2. Առաջին ատյանի դատարանի նույն օրվա որոշմամբ նախաքննության մարմնի վերոհիշյալ միջնորդությունը մերժվել է:

3. Վերոնշյալ դատական ակտի դեմ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության դատախազ Լ.Պետրոսյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 18-ի որոշմամբ բավարարվել է մասնակիորեն, այն է՝ բողոքարկված դատական ակտը բեկանվել է, և մեղադրյալ Ա.Հովսեփյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել 1 ամիս ժամկետով կալանավորումը:

4. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ մեղադրյալ Ա.Հովսեփյանի պաշտպան Գ.Խաչիկյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Քննիչ Ս.Սարգսյանը Ա.Հովսեփյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարան ներկայացված միջնորդությունը հիմնավորել է հետևյալ կերպ. «(...) [Մ]եղադրյալ Ալինա Հենրիկի Հովսեփյանը մեղադրվում է ՀՀ քր. օր-ի 311 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և ազատության մեջ մնալով, օգտագործելով իր պաշտոնական դիրքը կարող է մինչդարձ վարույթում անօրինական ազդեցություն գործադրել քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա՝ դրանով իսկ խոչընդոտելով քրեական գործի քննությանը, ինչպես նաև (...) [պետք է հաշվի առնել] Ալինա Հովսեփյանի կողմից կատարված հանցագործության բնույթն ու հանրորեն վրանգավորության աստիճանը և

այն, որ Ալինա Հովսեփյանին մեղսագրվող արարքի համար նախատեսված ազատազրկման ձևով պարժաշափը մեկ տարուց ավելի է» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 3-4):

6. Առաջին աստիճանի դատարանն իր որոշման շրջանակներում փաստել է. «(...) Անդրադատնալով միջնորդությանը ներկայացված առաջին հիմքին առ այն, որ Ալինա Հենրիկի Հովսեփյանը ազատության մեջ մնալով և օգրագործելով իր պաշտոնական դիրքը կարող է անօրինական ազդեցություն գործադրել քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա՝ դրանով իսկ խոչընդոտելով քրեական գործի քննությանը, դատարանն արձանագրում է հետևյալը.

(...)

(...) միջնորդություն հարուցած անձի հիմնական փաստարկն այն էր, որ մեղադրյալ Ա.Հովսեփյանն ազդեցություն է գործադրել վկաներից մեկի՝ Գևորգ Նելսոնի Պողոսյանի վրա, որի արդյունքում վերջինս փոփոխել է իր ցուցմունքը:

(...)

Դատարանը գրնում է, որ փաստարկը հիմնավոր չէ և հերքվում է 01.06.2015 թվականի ՀՀ ՊՆ 142023 զորամասի հրամանատար ԲԾ գնդապետ Ա.Ա.Ասատրյանի գրությամբ, որի համաձայն. «(...) 11.05.2015 թվականին թոհչքային բաժանմունք է ընդունվել 1971 թվականին ծնված Ալինա Հենրիկի Հովսեփյանը «զարկերակային հիպերտենզիա, խրոնիկ երկաթդեֆիցիտային անեմիա» ախտորոշմամբ: (...) Ներկա պահին հիվանդը գրնվում է սրացիոնսար բուժման պայմաններում, վիճակը գնահատվում է բավարար»:

Բացի այդ, թե միջնորդության քննարկմանը մասնակցող անձանց հայտարարություններով, և թե 01.06.2015 թվականի բերման ենթարկելու մասին որոշմամբ հիմնավորվել է, որ Ալինա Հենրիկի Հովսեփյանը բերման է ենթարկվել հիշարակված բժշկական հասարարությունից և թե միջնորդություն հարուցած անձի և թե պաշտպանների հավասարմամբ առ այս պահը գրնվում է սրացիոնսար բուժման մեջ:

Դատարանն արձանագրում է, որ վերը հիշարակված Գևորգ Նելսոնի Պողոսյանի դիրքորոշումը փոփոխություն է կրել 11.05.2015 թվականից (որպես վկա հարցաքննելու արձանագրություն) մինչև 13.05.2015 թվական[ը] (...), սակայն այդ ամբողջ ժամանակահատվածում ըստ վերը նշված նյութերի, Ալինա Հենրիկի Հովսեփյանը գրնվել է թոհչքային բաժանմունքում սրացիոնսար բուժման մեջ, որի պայմաններում առարկայագուրկ է միջնորդություն հարուցած անձի փաստարկը, որ մեղադրյալ Ա.Հովսեփյանն ազատության մեջ մնալով ապօրինի ազդեցություն է գործադրել վկայի նկարմամբ և առկա է հիմնավոր կասկած նաև հերազայում նման հասարարության:

Բացի այդ, դատարանն արձանագրում է նաև, որ մինչև 01.06.2015 թվականին նրան բերման ենթարկելու պահը, Ալինա Հովսեփյանը գրնվել է սրացիոնար բուժման մեջ և շարունակում է բուժումն առ այս պահը:

Անդրադառնալով միջնորդությամբ ներկայացված երկրորդ հիմքին, առ այն, որ Ալինա Հովսեփյանի կողմից կատարված հանցագործության բնույթն ու հանրորեն վրանգավորության աստիճանը և այն, որ Ալինա Հովսեփյանին մեղսագրվող արարքի համար նախատեսված է ազատազրկման ձևով պատժաչափ մեկ տարուց ավելի, դատարանն արձանագրում է հետևյալը.

(...)

(...) ՀՀ վճարելի դատարանը մի շարք նախադեպային որոշումներով արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մեղսագրվող հանցանքի ծանրությունը, թեև էական նշանակություն ունի ազատության մեջ գրնվող մեղադրյալի դրսևորվող վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, սակայն այն չի կարող գնահատվել որպես կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելու ինքնուրույն հիմք և պետք է գնահատվի գործում առկա մնացած մատնանշված հանգամանքների համատեքստում, րվյալ դեպքում մեղադրյալի կողմից վարույթով գործին մասնակցող անձանց վրա սպորինի ազդեցություն գործադրելու հնարավորությունը գնահատելիս, որը վերը հիշարակված փաստարկներով չի հիմնավորվել (...):» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 101- 104):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) [Մեղադրյալ Ալինա Հովսեփյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը մերժելիս, [Առաջին աստիճանի դատարանը պարզաձ գնահատման չի ենթարկել՝

1. մեղադրյալին վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքների կատարման եղանակը՝ մասնավորապես այն, որ Ալինա Հովսեփյանը, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ 59559 զորամասի բուժկետի պետ և օժրված լինելով կազմակերպչական-րնօրինչական գործառնություններ իրականացնելու լիազորություններով, (...) 2014 թվականի սեպտեմբերին բուժկետում բուժվող՝ նույն զորամասի կուրսանոր Միքայել Արմենի Մանուշյանից, անձամբ որպես կաշառք պահանջել է 80.000 ՀՀ դրամ գումար՝ վերջինիս նշիկների վիրահատության նպատակով ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ ուղեգրելու համար: Բացի այդ, 2014 թվականի հոկտեմբերի սկզբին, նույն զորամասի կուրսանոր Արթուր Հովհաննեսի Խաչատրյանից (...) Ալինա Հովսեփյանը պահանջել է նրա հոր բջջային հեռախոսահամարը, զանգահարել գրուցել է վերջինիս հոր՝ Հովհաննես Խաչատրյանի հետ և նրան հրավիրել իր մոտ: Բացի այդ, (...) նույն զորամասի կուրսանոր Գուրգեն Դավթի Բարայանի մոր՝ Սվետլանա Հակոբի Պողոսյանի վիրահատությունը «Մեղ-լայն» ԲԿ-ում կազմակերպելու համար անհրաժեշտ փաստաթղթեր ապահովելու

նպատակով, Ալինա Հովսեփյանը կուրսանար Գ.Բարսյանից անձամբ պահանջել է 41.000 ՀՀ դրամ կաշառք:

2. հանցավոր մտադրության իրականացման աստիճանը (...)

(...)

Վերաքննիչ դատարանը հաշվի առնելով մեղադրյալ Ալինա Հովսեփյանին վերագրվող հանցավոր արարքների բնույթն ու վրանգավորության աստիճանը, հանգում է այն հետևության, որ ազատության մեջ գրնվելու պայմաններում բարձր է հավանականությունն առ այն, որ մեղադրյալը կարող է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործի շրջանակներում առկա են մեղադրյալ Ալինա Հովսեփյանին կալանքի տակ պահելու ինչպես պայմանները, այնպես էլ հիմքերը:

(...)

Վերը նշվածից ելնելով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ալինա Հովսեփյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը մերժելու մասին վիճարկվող դատական ակտը հիմնավոր չէ (...):» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 46-62):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճարելի բողոք բերած անձը կարծում է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր պնդման՝ բողոքաբերը նշել է, որ վարույթն իրականացնող մարմինը ձեռք չի բերել, իսկ Վերաքննիչ դատարանն էլ չի նշել ոչ մի տվյալ առ այն, որ Ա.Հովսեփյանը կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով: Ավելին, քննիչի որոշմամբ ժամանակավորապես դադարեցվել է մեղադրյալ Ա.Հովսեփյանի պաշտոնավարությունը, ուստիև վերացել է այն մտավախությունը, թե վերջինս կարող է օգտագործել իր պաշտոնական դիրքը և ազդեցություն ունենալ կուրսանտների վրա:

9. Բողոքաբերը նշել է նաև, որ մեղադրյալ Ա.Հովսեփյանը ունի մշտական բնակության վայր, ամուսնացած է, երկու անչափահաս երեխաների մայր է, դրական է բնութագրվում, բազմիցս ստացել է շնորհակալագրեր, ՀՀ Ազգային ժողովի երկու պատգամավորներ նախաքննական մարմնին

հասցեագրած իրենց միջնորդություններով երաշխավորել են նրա պատշաճ վարքագիծը:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքները խնդրել է կայացնել նոր դատական ակտ և մեղադրյալ Ա.Հովսեփյանին ազատել կալանքից:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված է արդյոք մեղադրյալ Ա.Հովսեփյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

12. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել միայն օրենքով սահմանված կարգով և դեպքերում (...): Մարդուն կարելի է կալանավորել միայն դատարանի որոշմամբ (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.
(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուսարը կանխելու համար.
(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր անձ ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:
(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝

«1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատարանի արտոգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:
(...)

5. Դատարանն ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝ 1) կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին. 2) որպես խափանման միջոց կալանք ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին. 3) բողոքն առանց բավարարման թողնելու մասին

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խափանման միջոց կարող է) կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պարասխանարվությունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պարճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապարասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում»:

13. Մեջբերված նորմերի վերլուծության շրջանակներում վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, քրեական գործի առկայություն, որպես մեղադրյալ ներգրավելու

մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով (ՎԲ-132/07, ԱՎԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14 և այլն):

Ընդ որում, Ա.Ճուղուրյանի գործով որոշման մեջ Վճարելի դատարանը փաստել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պարզաձև վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին **հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա:** Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական փոխանակներ» (տե՛ս Ա.Ճուղուրյանի գործով Վճարելի դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը):

Իսկ Ա.Ավետիսյանի գործով որոշման շրջանակներում Վճարելի դատարանը արձանագրել է, որ. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ (...) դատական ակտը պարճատաբանելու համար ընդամենը բավարար լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերարտադրումը: Հակառակ պարագայում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքը կլինի պարտաքային, իսկ հիմնական իրավունքը փաստացի կրոմանդակագրկլի:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին **հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա**» (տե՛ս Ա.Ավետիսյանի գործով Վճարելի դատարանի՝

2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 19-20-րդ կետերը):

14. Վերստին հաստատելով Ա.Ճուղուրյանի և Ա.Ավետիսյանի գործերով որոշումներում արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը կրկնում է, որ կալանավորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է, հետևաբար մեղադրյալի նկատմամբ **կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելիս դատարանը պետք է ներկայացնի ծանրակշիռ, գործի նյութերից բխող փաստարկներ մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կատարելու բարձր հավանականության վերաբերյալ**: Այլ խոսքով՝ դատարանը պետք է կիրառի դատական ակտի պատճառաբանվածության ավելի բարձր չափանիշ և հիմնավորի, որ տվյալ դեպքում առկա են այնպիսի ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք բացառում են ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովման հնարավորությունը:

Վերոշարադրյալը բխում է անձին ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից: Հակառակ պարագայում կխախտվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը, ինչն իր հերթին կարող է հանգեցնել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի անհարկի սահմանափակման (տե՛ս, *mutatis mutandis*, Վ. Պողոսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ-1/0062/06/12 որոշման 14-րդ կետը, Ա.Զյարլիցևի գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԿԴ/0020/06/13 որոշման 14-րդ կետը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը, եզրահանգելով, որ առկա չեն Ա.Հովսեփյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու բավարար հիմքեր, մերժել է քննիչի միջնորդությունը (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, չհամաձայնվելով ստորադաս դատարանի դիրքորոշման հետ, արձանագրել է, որ տվյալ քրեական գործի շրջանակներում առկա են մեղադրյալ Ա.Հովսեփյանին կալանքի տակ պահելու ինչպես պայմանները, այնպես էլ հիմքերը: Մասնավորապես, հաշվի առնելով մեղադրյալ Ա.Հովսեփյանին վերագրվող հանցավոր արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Ա.Հովսեփյանի՝ ազատության մեջ գտնվելու պայմաններում բարձր է հավանականությունը, որ վերջինս կարող է կատարել

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները չեն հիմնվել գործի նյութերում առկա փաստական տվյալների վրա: Մեղադրյալ Ա.Հովսեփյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշման մեջ Վերաքննիչ դատարանը ծանրակշիռ, գործի նյութերից բխող փաստարկների վկայակոչմամբ չի հիմնավորել մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կատարելու հավանականությունը:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ա.Հովսեփյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չէ: Վերաքննիչ դատարանը չի կիրառել դատական ակտի պատճառաբանվածության ավելի բարձր չափանիշ և հիմնավորել, որ տվյալ դեպքում առկա են այնպիսի ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք բացառում են ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովման հնարավորությունը: Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրված հիմնավորումները չեն բխում կալանավորման թույլատրելի հիմքերը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ա.Հովսեփյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին քննիչի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 136-րդ, 288-րդ հոդվածների խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և հանգեցրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է:

19. Մինևսույն ժամանակ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված որոշումն օրինական է, հիմնավորված

և պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Մեղադրյալ Ալինա Հենրիկի Հովսեփյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հունիսի 18-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 4-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

45.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՆԴ/0110/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի օգոստոսի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Գրիգոր Վոլոդյայի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մարտի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Նոր Նորքի քննչական բաժնի քննիչ Ս.Պողոսյանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17140011 քրեական գործը:

2012 թվականի մայիսի 22-ին քրեական գործով վարույթը կասեցվել է որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը պարզված չլինելու պատճառաբանությամբ, իսկ 2012 թվականի հունիսի 8-ին այն վերսկսվել է, և կատարվել է նախաքննություն:

2012 թվականի հունիսի 14-ին Գրիգոր Վոլոդյայի Մանուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2012 թվականի հունիսի 14-ին Գ.Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորում՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2012 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կասեցվել է Գ.Մանուկյանի գտնվելու վայրը հայտնի չլինելու պատճառաբանությամբ, իսկ 2012 թվականի հոկտեմբերի 23-ին այն կրկին վերսկսվել է, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերահաստատվել է:

2012 թվականի հոկտեմբերի 23-ին Գ.Մանուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2. 2012 թվականի նոյեմբերի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճռով Գ.Մանուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը վերադրակվել է, և նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով՝ դատապարտվելով ազատազրկման՝ 6 (վեց) տարի ժամկետով: Գ.Մանուկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի կիրառմամբ՝ պատիժները մասնակի գումարելու միջոցով, Գ.Մանուկյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Պաշտպան Վ.Արմենակյանի և մեղադրող Հ.Չախոյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի մարտի 18-ի որոշմամբ պաշտպանի բողոքը բավարարվել է մասնակիորեն, իսկ մեղադրողի բողոքը՝ մերժվել, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճիռը բեկանվել է և պատժի մասով փոփոխվել: Գ.Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված 2 (երկու)

տարի ժամկետով ազատազրկումը թողնվել է անփոփոխ: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի կանոններով՝ պատիժները մասնակի գումարելու միջոցով, Գ.Մանուկյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մարտի 18-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Գ.Մանուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն/ա 2011 թվականի դեկտեմբերի 28-ին ժամը 09:00-ի սահմաններում, Նոր Նորքի 5-րդ զանգվածի Միկոյան փողոցի 4 շենքի 18 բնակարանում, գործով չպարզված հանգամանքներում, իր կողմից ապօրինի ձեռք բերած հրազեն հանդիսացող «ԱԿ» տեսակի 7.62մմ փրամնաչափի ինքնաձիգից սպանելու դիրավորությամբ կրակահերթ է արձակել եղբոր՝ Գագիկ Մանուկյանի ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներից էլնելով, չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել:

Այսպես՝ Գրիգոր Մանուկյանը 2011 թվականի դեկտեմբերի 28-ին ժամը 09:00-ի սահմաններում, Արտուշ Սմբարյանին պայրկանող՝ Նոր Նորքի 5-րդ զանգվածի Միկոյան փողոցի 4 շենքի 18 բնակարանում վերջինիս, Կարեն Թալանչյանի և գիշերը՝ ժամը 07:00-ին, նույն բնակարան այցելած իր եղբոր՝ Գագիկ Մանուկյանի հետր ալկոհոլային խմիչք օգտագործելիս են եղել: Նույն օրը՝ ժամը 09:00-ի սահմաններում, Գագիկ Մանուկյանը, գրնվելով ալկոհոլային հարբածության վիճակում, ցանկացել է լքել բնակարանը, որի կապակցությամբ Գրիգոր Մանուկյանն իր անհամաձայնությունն է հայտնել և փորձել է արգելել Գագիկ Մանուկյանին հեռանալ բնակարանից: Այդ առիթով նրանց միջև վիճարանություն է սկսվել, որի ընթացքում Գրիգոր Մանուկյանն իր հետր նախապես հիշյալ բնակարան բերած սպորտային պայուսակից հանել է ապօրինի ձեռք բերած հրազեն հանդիսացող «ԱԿ» տեսակի 7.62մմ փրամնաչափի ինքնաձիգ և Գագիկ Մանուկյանին դիրավորությամբ կյանքից ապօրինաբար զրկելու սպառնալիքներ փայուց անմիջապես հետր կրակահերթ է արձակել վերջինիս կենսական կարևորագույն օրգան հանդիսացող պարանոցի շրջանին նրա առողջությանը պայրճատելով ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներից

ելնելով, հանցագործությունն ավարտին չի հասցրել, քանի որ հիշյալ գործողությունը կատարելուց հետո դեպքի վայրից դիմել է փախուստի, իսկ Գագիկ Մանուկյանի կյանքը փրկվել է անհասպաղ ցուցաբերած բժշկական օգնության շնորհիվ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 71):

6. Դատաբժշկական թիվ 14/հ եզրակացության համաձայն՝ «(...) Գ.Մանուկյանի մարմնական վնասվածքները ըստ բժշկական փաստաթղթերի և անձնական գննության րվյալների՝ պարանոցի ձախ կեսի և կրծքավանդակի համակցված հրազենային, գնդակային, միջանցիկ վիրավորման ձևով, որն ուղեկցվել է հեմիթորաքսով, 1-ին և 4-րդ կողերի, ձախ անրակի, կրծքային 5-րդ ողի փուշ էլունի տեղաշարժված կոտրվածքների, թոքի վերին բլթի միջանցիկ վնասումով, հեմոպնեմոթորաքսով, ենթամաշկային էնֆիզեմայով, սրտրին վերջույթների պարապլեգիայով, կոնքի օրգանների ֆունկցիաների խանգարումով, (...) առաջացրել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 144):

7. Առաջին ատյանի դատարանը դատավճռում, ի թիվս այլ հանգամանքների, հաստատված է համարել նաև հետևյալը. «(...) Մույն օրը՝ ժամը 09:00-ի սահմաններում, Գագիկ Մանուկյանը, գրնվելով ալկոհոլային հարբածության վիճակում, ցանկացել է լքել բնակարանը, որի կապակցությամբ Գրիգոր Մանուկյանը, սպորտային պայուսակից հանելով վերը նշված ինքնաձիգը, ուրքի կանգնելով (կրակոցներն արձակելուց առաջ Գրիգոր Մանուկյանը նստած է եղել մահճակալի վրա, իսկ Գագիկ Մանուկյանը նստած է եղել ննջասենյակի դռնից աջ գրնվող մյուս մահճակալի եզրին), դրա փողն ուղղելով փուժողի վրա, (փողի բարձրությունը գերնից 95 սմ բարձրության վրա) փորձելով արգելել նրան հեռանալ բնակարանից, իր անհամաձայնությունն է հայտնել, նշել է «գնաս՝ կկրակեմ», ինչին ի պարասխան փուժողն ասել է. «կրակում ես, կրակի» (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 174):

8. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Այն պայմաններում, երբ հակառակն ապացուցված չէ ու հաստատված է, որ մասնավորապես ամբաստանյալ Գրիգոր Մանուկյանն ու փուժող Գագիկ Մանուկյանը եղել են հարազատ եղբայրներ, դեպքի ժամանակ, դրանից առաջ և հետո ունեցել են բարեկամական, եղբայրական հարաբերություններ, թշնամական հարաբերություններ չեն ունեցել, փուժողը, գրնվելով ալկոհոլային հարբածության վիճակում, ցանկացել է լքել բնակարանը, իսկ ամբաստանյալը, ևս գրնվելով ալկոհոլի ազդեցության տակ, դեմ է եղել դրան, որի կապակցությամբ էլ առաջացել է կոնֆլիկտը, ու մոտ 1-1.5մ հեռավորությունից արձակված երեք կրակոցները, բացառությամբ առաջինի, ուղղված չեն եղել են նրա մարմնի վրա, առավել ևս կենսական կարևոր օրգանների շրջանում կամ հնարավոր չէ նաև փաստել, որ այդ երկու կրակոցները փուժողին չեն դիպել փուժողի կողմից դրանցից խույս

տալու, փասխնելու արդյունքում կամ գնդակները չեն դիպել տուժողին ոչ դիպուկ կրակելու կամ կրակողին որևէ անձի կողմից խանգարելու արդյունքում, ծանր մարմնական վնասվածք ստացած տուժողին վնասելուց հետո նրա նկատմամբ որևէ այլ ոտնձգություն չի կատարել՝ ունենալով այդպիսի հնարավորություն, ձեռնամուխ է եղել նրան հիվանդանոց տեղափոխելու գործընթացին, անմիջապես տեղում զղջացել է կատարածի համար, սպա հնարավոր չէ փվյալ գործի նյութերով անմեղության կանխավարկածի սկզբունքի առկայության դեպքում արձանագրել, որ կան ամբաստանյալի ուղղակի դիտարկությանը սպանության փորձ կատարելու մասին մեղավորությունը հիմնավորող ապացույցների համակցություն, որի բավարարության շեմը «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշից բարձր է, այսինքն՝ Գրիգոր Մանուկյանի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար, հիմքեր չկան:

(...)

Դատարանը գտնում է, որ միայն այն հանգամանքը, որ Գրիգոր Մանուկյանը կրակահերթն արձակելուց հետո եղբորն ապօրինի կյանքից զրկելու ցանկություն կամ դիտարկություն ունենալու դեպքում կարող էր այն ավարտին հասցնել, և դրան խոչընդոտող որևէ հանգամանք չի եղել, սպա դա ինքնին վկայում է և չեզոքացնում է հիմնավոր դատողությունն առ այն, որ նա ունեցել է կամ գործել է տուժողին կյանքից զրկելու ուղղակի դիտարկություն:

Այսինքն՝ պարանոցի շրջանում արձակված կրակահերթը տուժողին մահ պատճառելու դիտարկություն ունենալու մասին բացակայող այլ հանգամանքների պայմաններում, որը փաստացի վրա չի էլ հասել, չի կարող որակվել որպես սպանության փորձ. կրակելուց հետո Գրիգոր Մանուկյանը տեսել է, որ իր եղբայրը կենդանի է, սակայն նրան կյանքից զրկելուն ուղղված որևէ գործողություն չի նախաձեռնել, թեև ունեցել է դրա իրական հնարավորությունը: Դեռ ավելին ծանր մարմնական վնասվածք հասցնելուց անմիջապես հետո, զղջալով կատարածի համար, Արտուշ Մմբարյանին ուղարկել է եղբոր՝ Անուշավան Մանուկյանի մոտ նրան իրազեկելու ու նրա մեքենայով տուժողին հիվանդանոց տանելու համար:

(...)

Միևնույն ժամանակ Դատարանն արձանագրում է, որ Գրիգոր Մանուկյանը նշված գործողություններով կրակելու պահին գիտակցել է իր արարքի տուժողի կյանքի և առողջության համար վրանգավոր բնույթը, նախատեսել է այդպիսի վրանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել այդ հետևանքների վրա հասնելը, բայց գիտակցաբար թույլ է փվել դրանք, այսինքն՝ ամբաստանյալը գործել է անուղղակի դիտարկությանը: Այսինքն՝ փվյալ դեպքում ամբաստանյալի մոտ առկա է եղել չկոնկրետացված դիտարկության, որպիսի

պայմաններում արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հաշվի առնելով փուժողի առողջությանը պայրճառված վնասի ծանրության աստիճանը:

(...)

Այսպիսով Դատարանը կրկին արձանագրում է, որ մեղադրական եզրակացությունում նշված կամ գործում առկա մյուս ապացույցներով չի հիմնավորվում Գրիգոր Մանուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը. նրա արարքը համապարասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հարկանիշներին, (...) ուստի նրան առաջադրված մեղադրանքը ենթակա է փոփոխության և վերաորակման ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 178-179):

9. Վերաքննիչ դատարանն իր որոշման շրջանակներում փաստել է. «(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գ.Մանուկյանի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի դատավճռում շարադրված պայրճառաբանությունները հիմնավորված են գործով ձեռք բերված և Առաջին աստիճանի դատարանի դատաքննության ընթացքում հետազոտված (...) ապացույցներով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 255):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

10. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքարեթի՝ Առաջին ատյանի դատարանը, Գ.Մանուկյանին մեղաազրված արարքը վերաորակելով, իսկ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը քրեաիրավական որակման մասով օրինական ուժի մեջ թողնելով, ինչպես նաև նշանակված պատիժը փոփոխելով, թույլ են տվել դատական սխալ, ինչը դատական ակտերը բեկանելու հիմք է:

Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի փաստարկներն այն մասին, որ տուժողն ու ամբաստանյալը եղբայրներ են, թշնամական հարաբերություններ չեն ունեցել, նախաքննության ընթացքում հաշտվել են միմյանց հետ, հիմք չեն կարող հանդիսանալ ամբաստանյալի դիտավորության ուղղվածությունը գնահատելու համար: Բացի այդ, գործում առկա ապացույցներով հաստատվել է, որ Գ.Մանուկյանը 1-1.5 մետր հեռավորությունից «ԱԿ» տեսակի ինքնաձիգով երեք կրակոց է արձակել տուժողի ուղղությամբ, որպիսի պայմաններում Առաջին ատյանի դատարանն օբյեկտիվորեն չէր կարող եզրահանգել, որ արձակված երեք կրակոցները, բացառությամբ առաջինի, ուղղված չեն եղել տուժողի մարմնի, առավել ևս նրա կենսական կարևոր օրգանների շրջանին:

Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա այն եզրահանգմանը, որ ծանր մարմնական վնասվածք հասցնելուց հետո հանցավորի կողմից տուժողի նկատմամբ որևէ ոտնձգություն չի իրականացվել՝ փաստացի ունենալով նման հնարավորություն, և հանցավորը ձեռնամուխ է եղել տուժողին հիվանդանոց տեղափոխելուն, ապա ըստ բողոքաբերի՝ այն չի համապատասխանում հանցավորձի վերաբերյալ քրեական իրավունքի տեսության մեջ ձևավորված մոտեցումներին, քանի որ տուժողին կյանքից զրկելուն ուղղված հետագա գործողություններից ձեռնպահ մնալը չի կարող գնահատվել որպես համապատասխան հետևանքների առաջացման ցանկության բացակայություն: Այսպես՝ 1-1,5 մետր հեռավորությունից «ԱԿ» տեսակի ինքնաձիգով տուժողի ուղղությամբ երեք կրակոց արձակելով՝ մեղադրյալը, ըստ էության, արել է իրենից կախված ամեն ինչ հանցագործությունն ավարտին հասցնելու համար, սակայն այն չի ավարտվել հանցավորի կամքից անկախ հանգամանքերով՝ կրակոցից ստացած վնասվածքից տուժողը փրկվել է միայն ցուցաբերված բժշկական օգնության շնորհիվ, իսկ կրակոցներից երկուսը տուժողին չեն դիպել:

11. Բողոքաբերը, անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն փաստարկին, որ Գ.Մանուկյանը գործել է անուղղակի դիտավորությամբ, նրա մոտ առկա է եղել չկոնկրետացված դիտավորություն, փաստարկել է, որ հանցավորի՝ հանցագործությանը նախորդող վարքագիծը, հանցանքի կատարման եղանակը, օգտագործված հրազենի տեսակը, հասցված մարմնական վնասվածքների բնույթը և տեղակայումը վկայում են, որ նույնիսկ եթե հանցանքի կատարման պահին տուժողին կյանքից զրկելը Գ.Մանուկյանի վերջնական նպատակը կամ դրան հասնելու միջոց չի եղել, այնուամենայնիվ, վերջինս գիտակցել է և չէր կարող չգիտակցել նման հետևանքների առաջացման անխուսափելիությունը:

12. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը որպես պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք դիտել է ամբաստանյալի կողմից ինքնախոստովանական ցուցմունք տալը: Մինչդեռ ամբաստանյալն ամբողջ դատաքննության ընթացքում չի ընդունել 1-1,5 մետր հեռավորությունից ինքնաձիգի փողը տուժողի կենսական կարևոր օրգանների ուղղությամբ պահելու և նրա վրա կրակահերթ արձակելու հանգամանքը, այլ պնդել է, որ տուժողը վնասվածք է ստացել պատահականության արդյունքում: Նման պայմաններում, ըստ բողոքաբերի, անհասկանալի է՝ ինչն է Վերաքննիչ դատարանը դիտել որպես խոստովանական ցուցմունք:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը որպես մեղմացնող հանգամանք է գնահատել այն, որ ամբաստանյալը բնութագրվում է դրական, սակայն անհասկանալի է՝ ինչի հիման վրա է դատարանը նման եզրահանգման եկել: Այսպես՝ հանցավորը նախկինում երեք անգամ դատապարտված է

եղել դիտավորյալ հանցագործությունների համար (ներկայումս դատվածությունը մարված է), ոգելից խմիչք օգտագործելու նպատակով պարբերաբար այցելել է վկա Ա.Սմբատյանի բնակարան, ապօրինի ձեռք բերված ինքնաձիգով շրջել է քաղաքում: Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ հանցավոր ոտնձգությունն ամբաստանյալը կատարել է եղբոր նկատմամբ՝ մերձավորին վնաս պատճառելը, ըստ էության, դիտելով որպես մեղմացնող հանգամանք:

13. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճարել բողոքն ընդունել վարույթ, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մարտի 18-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճարելի դատարանը գտնում է, որ սպանության ավարտված հանցավորձի դեպքում հանցակազմի շրջանակներից դուրս գտնվող և հանցագործությունից կամովին հրաժարում չհամարվող անձի հետհանցավոր դրական վարքագծի նշանակության, ինչպես նաև սպանության ավարտված հանցավորձից կամովին հրաժարվելու հնարավորության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

15. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Գ.Մանուկյանի արարքում սպանության փորձի բացակայության և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

1. Հանցափորձի իրավական վերլուծությունը.

16. ՀՀ քրեական օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ավարտված հանցագործություն է համարվում այն արարքը, որը պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցափորձ է համարվում ուղղակի դիրավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով»:

Մեջբերված նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Ա.Բաղդասարյանի գործով որոշման մեջ՝ արձանագրելով. «(...) Օբյեկտիվ կողմից հանցափորձը բնութագրվում է՝

1. գործողությամբ (անգործությամբ), որն անմիջականորեն ուղղված է հանցանքի կատարմանը,

2. հանցագործությունն անձի կամքից անկախ հանգամանքներով ավարտին չհասցնելով:

Հանցափորձն առկա է այն ժամանակ, երբ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում, այլ կերպ՝ հանցակազմի օբյեկտիվ կողմի կատարումն սկսվում է, սակայն չի ավարտվում: Նյութական հանցագործության դեպքում չի առաջանում օրենքով նախատեսված հետևանքը կամ հետևանքն առաջանում է, սակայն ոչ հանցավորի դիրավորությամբ նախատեսվածը (օրինակ՝ սպանության փորձի ժամանակ տուժողը ոչ թե մահանում է, այլ սրանում է ծանր մարմնական վնասվածք): Ուարի, այն դեպքերում, երբ հանցագործության փորձի ժամանակ առաջանում են այնպիսի հետևանքներ, որոնք ոչ թե հանցավորի դիրավորության մեջ ընդգրկված, այլ մեկ ուրիշ ավարտված հանցագործության հարկանիշներ են, ապա դրանք կլանվում են հանցավորի դիրավորությամբ ընդգրկված հանցագործության փորձի մեջ և ինքնուրույն չեն որակվում:

Հանցափորձը բնութագրող հաջորդ հարկանիշն այն է, որ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում հանցավորի կամքից անկախ հանգամանքներում: Սուբյեկտիվ կողմից հանցափորձը հնարավոր է միայն ուղղակի դիրավորությամբ» (տես Ա.Բաղդասարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10 որոշման 16-րդ կետը):

Վերահաստատելով և զարգացնելով վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հանցափորձ են ձևավորում միայն ուղղակի դիտավորությամբ կատարվող այն գործողությունները (անգործությունը), որոնք անմիջականորեն ուղղված են հանցանքի կատարմանը: «Անմիջականությունը» ենթադրում է, որ հանցավորը ձեռնամուխ է լինում հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացմանը, սակայն այն ավարտին չի հասցնում իր կամքից անկախ այնպիսի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքներով, որոնք նա չէր նախատեսել կամ չէր կարողացել հաղթահարել: Այլ կերպ ասած՝ հանցափորձի դեպքում հանցագործությունը չի ավարտվում, քանի որ կան հանցավոր արարքն ամբողջությամբ չի իրականացվում, կան արարքն իրականացվում է, սակայն չի առաջանում հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված և նրա համար ցանկալի հանրորեն վտանգավոր հետևանքը (նյութական հանցակազմերի դեպքում):

Վերոշարադրյալից բխում է, որ նյութական հանցակազմերի դեպքում ավարտված հանցագործության և հանցափորձի տարանջատման

հիմնական չափանիշն անձի դիտավորության ուղղվածությունն է: Մասնավորապես, եթե կատարվածի արդյունքում առաջանում են անձի դիտավորության մեջ չընդգրկված, սակայն ավարտված մեկ այլ հանցագործության հատկանիշներ, ապա արարքը պետք է որակել ոչ թե ըստ փաստացի վրա հասած հետևանքի, այլ ըստ անձի սուբյեկտիվ ընկալման՝ որպես իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձ: Այսինքն՝ արարքը փորձ կամ ավարտված հանցագործություն որակելու հարցում էական նշանակություն ունի անձի դիտավորության ուղղվածության բացահայտումը, ինչը հնարավոր է գործի փաստական հանգամանքների համադրման և ամբողջական վերլուծության արդյունքում:

Հարկ է նշել, որ Վճարելի դատարանն իր նախադեպային իրավունքում դիրքորոշում է ձևավորել առ այն, որ հանցավորի դիտավորության ուղղվածության հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հանցագործության բոլոր հանգամանքների համակցությունից և հաշվի առնել, մասնավորապես, հանցավոր արարքի կատարման եղանակը, վնասվածքներ հասցնելիս օգտագործվող գործիքները, մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների վնասումը), ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները և այլն (տե՛ս, *mutatis mutandis*, Ս.Հունիկյանի գործով Վճարելի դատարանի՝ 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08 որոշումը):

16.1. Հանցափորձը, ըստ կատարվող գործողությունների բնույթի և հանցավոր մտադրության իրականացման աստիճանի, բաժանվում է երկու տեսակի՝ ավարտված և չավարտված: Հանցափորձի դասակարգումն ավարտվածի և չավարտվածի ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն: Մասնավորապես, այն հաշվի է առնվում արարքի հանրային վտանգավորության աստիճանը որոշելիս, քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման հարցերը լուծելիս, ինչպես նաև թույլ է տալիս ճիշտ որոշել հանցագործությունից կամովին հրաժարվելու հետ կապված խնդիրները: Հանցափորձի նշված տեսակներին Վճարելի դատարանն անդրադարձել է Կ.Հովհաննիսյանի և մյուսների գործով որոշմամբ՝ նշելով. «(...) Հանցափորձն ավարտված համարելու համար անհրաժեշտ է, որ հանցավորը կարարի բոլոր այն գործողությունները, որոնք նա անհրաժեշտ է համարում հանցագործությունն ավարտին հասցնելու համար (օրինակ՝ տուժողի վրա հրազենով կրակում է սպանելու նպատակով, բայց մահը վրա չի հասնում բժշկական միջամտության շնորհիվ, կամ գողին բնակարանում բռնում են և այլն): Հանցափորձի այս տեսակի առկայությունը հավասարելու համար վճռորոշ է հանցավորի վարահոսությունն այն բանում, որ իր կողմից որևէ լրացուցիչ գործողություն չի պահանջվում, և որ

արդեն իսկ կատարվածը բավարար է հանցավոր մտադրությունն իրականացնելու համար:

Մինչդեռ, չավարտված հանցափորձի դեպքում հանցավորը չի կատարում բոլոր այն գործողությունները, որոնք նա անհրաժեշտ է համարում հանցագործությունն ավարտելու համար (օրինակ՝ ուժը չի բավականացնում տուժողին խեղդելու համար, ցանկանում է կրակել տուժողին, բայց զենքն անսարք է լինում, և կրակոց տեղի չի ունենում և այլն): Հանցափորձի այս տեսակը բնորոշվում է գործողությունների անավարտությամբ, օբյեկտիվ կողմի մասնակի կատարմամբ: Ընդ որում, հանցավորը գիտակցում է, որ հանցագործությունն ավարտելու համար անհրաժեշտ է կատարել ևս ինչ-որ գործողություններ, որոնք կատարել նրան չի հաջողվում (...):» (տես Կ.Հովհաննիսյանի և մյուսների գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշման 27-րդ կետը):

II. Սպանության ավարտված հանցափորձի դեպքում հանցակազմի շրջանակներից դուրս գրվող և հանցագործությունից կամովին հրաժարում չհամարվող անձի հետհանցավոր դրական վարքագծի իրավական գնահատականը.

17. Ընդհանրացնելով սույն որոշման 16-16.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սպանության ավարտված հանցափորձը բնութագրվում է հետևյալ օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներով.

ա) անձը կատարում է անհրաժեշտ բոլոր գործողությունները հանցագործությունը ավարտին հասցնելու համար,

բ) գիտակցում է, որ կատարվածն անհրաժեշտ և բավարար է հանցավոր մտադրությունն իրականացնելու համար, սակայն հանրորեն վտանգավոր հետևանքը՝ մահը, վրա չի հասնում հանցավորի կամքից անկախ հանգամանքներով:

Սուբյեկտիվ կողմից սպանության փորձը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցավորը նախատեսում է մահվան առաջացման անխուսափելիությունը կամ իրական հնարավորությունը և ցանկանում է դրա վրա հասնելը, գիտակցում է, որ եթե համապատասխան հետևանքն առաջանա, ապա այն անմիջականորեն բխելու է իր արարքից, և դրանց միջև առկա կլինի միանշանակ պատճառական կապ: Մասնավորապես, կոնկրետ դեպքում հանցագործության գործիքը կամ միջոցը, եղանակը, հասցված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը, ինչպես նաև առկա այլ օբյեկտիվ հանգամանքները կարող են վկայել հանցավորի կողմից մահվան առաջացման անխուսափելիությունը կամ իրական հնարավորությունը նախատեսելու, հետևաբար, վերջինիս մոտ ուղղակի դիտավորության առկայության մասին:

17.1. Այսպիսով, կատարվածը սպանության փորձ որակելու համար անհրաժեշտ է, որ հանցավորն ունենա անձին կյանքից զրկելու պարզ կոնկրետացված (նախապես կամ հանկարծակի առաջացած) դիտավորություն, ինչը հնարավոր է պարզել գործի հանգամանքների համակողմանի վերլուծության արդյունքում՝ հատկապես ուշադրություն դարձնելով հանցավորի՝ նախքան հանցագործությունը, հանցանքի ընթացքում և դրանից հետո դրսևորած վարքագծին:

Հանցագործությունն ավարտին հասցնելուն ուղղված անհրաժեշտ բոլոր գործողությունները կատարելուց հետո (ավարտված հանցավորձ) հանցագործությունից կամովին հրաժարում չհամարվող անձի հետհանցավոր դրական վարքագիծը կարևոր նշանակություն ունի վերջինիս դիտավորության ուղղվածությունը ճիշտ որոշելու համար: Սակայն այն ինքնին, գործի մյուս փաստական հանգամանքներից անջատ, չի կարող արարքի որակման հարցում ունենալ որոշիչ նշանակություն և պետք է գնահատման ենթարկվի նախքան հանցագործությունը և դրա ընթացքում անձի դրսևորած վարքագծի շրջանակներում, որոնք, որպես կանոն, վկայում են հանցանքը կատարելու պահին անձի ունեցած իրական դիտավորության մասին:

Մասնավորապես, եթե գործի փաստական հանգամանքների համակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցանքը կատարելու պահին հանցավորի դիտավորությունն ուղղված է եղել տուժողին կյանքից զրկելուն (օրինակ՝ դրա մասին կարող են վկայել հանցագործության գործիքները կամ միջոցները՝ հրազեն, սառը զենք, սուր ծակող-կտրող գործիքներ և այլն, հարվածների քանակն ու ուժգնությունը, պատճառված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների վնասումը), հանցագործության եղանակը, մեխանիզմը, նպատակը, շարժառիթը, իրադրությունը և այլ հանգամանքներ), ապա համապատասխան արարքն իրականացնելուց հետո անձի դրսևորած դրական վարքագիծը (օրինակ՝ հետագա գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալը, տուժողին օգնություն ցույց տալը, շտապօգնություն կանչելը և այլն) դուրս է սպանության ավարտված հանցավորձի շրջանակներից, վկայում է ոչ թե սպանելու ուղղակի դիտավորության բացակայության, այլ պարզապես կատարածի համար գղջալու մասին, ինչը դատարանի կողմից կարող է հաշվի առնվել պատիժ նշանակելիս: Նման գործողությունները չեն կարող ազդեցություն ունենալ և փոխել արարքի քրեաիրավական որակումը:

Մինևույն ժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հանցավորի՝ նախքան հանցագործությունը, հանցանքի ընթացքում և դրանից հետո դրսևորած վարքագիծը բնութագրող հանգամանքների համակցությունը վկայում է սպանության ուղղակի դիտավորության բացակայության և, համապատասխանաբար,

անուղղակի կամ չկոնկրետացված դիտավորության առկայության մասին (օրինակ՝ տուժողին ձեռքերով հարվածներ հասցնելը, դրանց ուժգնությունը և տեղակայումը կամ նույնիսկ գենքով կրակելը, սակայն կենսական ոչ կարևոր օրգանների շրջանում և այլն), ապա համապատասխան հանրորեն վտանգավոր հետևանքը՝ մահը, չառաջանալու դեպքում արարքը չի կարող որակվել որպես սպանության փորձ և պետք է որակվի ըստ փաստացի առաջացած հետևանքի:

III. Սպանության ավարտված հանցափորձից կամնովին հրաժարվելու հնարավորությունը.

18. ՀՀ քրեական օրենսգրքի 36-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործությունից կամնովին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապայրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը:

2. Հանցագործությունն ավարտին հասցնելուց կամնովին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա՝ փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում (...):»:

Մեջբերված նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունից կամնովին հրաժարումն առկա է, եթե անձը հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը դադարեցնում է՝

ա) *վերջնականապես*, այլ ոչ թե ավելի նպաստավոր պայմաններում հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով,

բ) *ժամանակին*, այսինքն՝ մինչև հանցագործության ավարտման պահը,

գ) *կամնովին*՝ իր ազատ կամաարտահայտության արդյունքում, այլ ոչ թե անհաղթահարելի խոչընդոտների հետևանքով,

դ) *գիտակցելով* հանցագործությունը մինչև վերջ հասցնելու փաստացի հնարավորության առկայությունը:

Միայն վերոնշյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում կարող է խոսք լինել հանցագործությունից կամնովին հրաժարվելու և անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին, եթե, իհարկե, նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

Այսպիսով, կամնովին հրաժարումը հնարավոր է, քանի դեռ հանցագործությունն ավարտին չի հասել, և հանցակազմի այս կամ այն տարրը կամ հատկանիշը բացակայում է:

18.1. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սպանության ավարտված հանցափորձի դեպքում կամնովին հրաժարվելու հնարավորության հիմնախնդրին:

Այսպես՝ չավարտված հանցափորձի դեպքում հանցագործությունից կամովին հրաժարումը, որպես կանոն, խնդիրներ չի առաջացնում: Մասնավորապես, երբ անձը չի իրականացրել բոլոր գործողությունները (անգործությունը) հանցանքն ավարտելու համար ու գիտակցում է, որ հանցագործությունն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է շարունակել արարքի կատարումը կամ կատարել նոր արարք, սակայն իր կամքով դադարեցնում է համապատասխան գործողությունը կամ անգործությունը, ապա ենթակա չէ քրեական պատասխանատվության հանցագործությունից կամովին հրաժարվելու հիմքով, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

Մինչդեռ ավարտված հանցափորձի պարագայում, երբ անձը կատարել է բոլոր անհրաժեշտ գործողությունները հանցագործությունը մինչև վերջ հասցնելու համար, սակայն այն չի ավարտվել իր կամքից անկախ հանգամանքներով, կամովին հրաժարումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր հետևանքի՝ մահվան առաջացման համար պահանջվում է որոշակի ժամանակահատված, և անձն իր ակտիվ վարքագծով կանխում է այդ հետևանքը: Ընդ որում, անհրաժեշտ է, որ մահվան առաջանալը կամ չառաջանալը պայմանավորված լինի անձի կամքով, վերջինս պահպանի վերահսկողությունն արարքի և հետևանքի միջև պատճառական կապի զարգացման ողջ ընթացքի նկատմամբ, հնարավորություն ունենա ցանկացած պահի միջամտելու ու կանխելու մահվան վրա հասնելը (օրինակ՝ դանդաղ ներգործող թույն տալուց հետո տալիս է հակաթույն, սպանելու նպատակով տունը հրդեհելուց հետո մարում է հրդեհը՝ նախքան այն կհասցներ տարածվել ու փրկում է տուժողի կյանքը և այլն):

Հակառակ պարագայում, երբ բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարելուց հետո համապատասխան վտանգավոր հետևանքների առաջանալը կամ չառաջանալը դուրս է հանցավորի վերահսկողության շրջանակներից, պայմանավորված է ոչ միայն նրա կամքով, այլև նրա կամքից անկախ բազմաթիվ այլ հանգամանքներով (օրինակ՝ ժամանակին ցուցաբերված բժշկական միջամտության շնորհիվ կյանքը փրկելու դեպքում), ապա կամովին հրաժարումը բացառվում է:

Վերոշարադրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպանության ավարտված և չհաջողված հանցափորձից հետո հանցանքն ավարտին հասցնելուց հրաժարվելը, նույնիսկ եթե հանցավորն իրական հնարավորություն է ունեցել այն հասցնելու մինչև վերջ, չի կարող հանցագործությունից կամովին հրաժարում համարվել: Տվյալ դեպքում փաստացի կատարված արարքն իր մեջ արդեն իսկ պարունակում է ավարտված հանցափորձի բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, հետևաբար անձը չի կարող ազատվել իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի համար քրեական պատասխանատվությունից: Չհաջողված հանցափորձից հետո հանցանքն ավարտին հասցնելուց

հրաժարվելը գործով առկա այլ հանգամանքների հետ միասին (օրինակ՝ օգնություն կանչել, հիվանդանոց տեղափոխել և այլն) կարող են գնահատվել որպես մեղմացնող հանգամանք և հաշվի առնվել դատարանի կողմից պատիժ նշանակելիս:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Գ.Մանուկյանը, գտնվելով ակոհոլային հարբածության վիճակում, 2011 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ժամը 9:00-ի սահմաններում, ծագած վեճի արդյունքում իր հետ նախապես բերված սև սպորտային պայուսակից հանել է ապօրինի ձեռք բերված հրազենը և սպառնալիքներ տալուց հետո («գնաս կկրակեմ»), մոտ 1-1,5 մետր հեռավորությունից փողոն ուղղելով տուժող Գ.Մանուկյանի վրա, կրակահերթ է արձակել նրա կենսական կարևոր օրգանի՝ պարանոցի շրջանին՝ առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնաս: Տուժողի կյանքը հնարավոր է եղել փրկել անհապաղ ցուցաբերված բժշկական օգնության շնորհիվ (տե՛ս սույն որոշման 5-րդ, 7-8-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը Գ.Մանուկյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասից վերադրակել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով՝ նշելով, որ պարանոցի շրջանում արձակված կրակահերթը տուժողին մահ պատճառելու դիտավորություն ունենալու մասին բացակայող հանգամանքների պայմաններում չի կարող որակվել որպես սպանության փորձ: Այսպես՝ դատարանը փաստել է, որ հանցավորը և տուժողը եղել են հարազատ եղբայրներ, չեն ունեցել թշնամական հարաբերություններ, գործի նյութերով չի հաստատվել, որ բացի առաջին կրակոցից, արձակված մյուս երկու կրակոցներն ուղղված են եղել տուժողի կենսական կարևոր օրգաններին, ինչպես նաև հնարավոր չէ փաստել, թե ինչի արդյունքում նշված երկու կրակոցները չեն դիպել տուժողին: Բացի այդ, տեսնելով, որ եղբայրը կենդանի է՝ հանցավորը ձեռնպահ է մնացել նրա նկատմամբ որևէ գործողություն կատարելուց, ձեռնամուխ է եղել նրան հիվանդանոց տեղափոխելուն, մինչդեռ սպանության ցանկություն ունենալու դեպքում ոչինչ չէր խոչընդոտում մտադրվածն ավարտին հասցնելու համար. այդ հանգամանքն ինքնին չեզոքացնում է այն դատողությունը, որ հանցավորն ունեցել է տուժողին կյանքից զրկելու ուղղակի դիտավորություն: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եկել է այն եզրահանգման, որ ամբաստանյալը գործել է անտուղակի դիտավորությամբ, նրա մոտ առկա է եղել չկոնկրետացված դիտավորություն, հետևաբար սպանության փորձի մասին խոսք լինել չի կարող (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, համաձայնվելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա պատճառաբանություններին, արձանագրել է, որ դրանք հիմնավորված են գործով ձեռք բերված և Առաջին

ատյանի դատարանի դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից հետևում է, որ ստորադաս դատարանները գտել են, որ պարանոցի շրջանում արձակված կրակահերթն ինքնին՝ առանց գործի մյուս հանգամանքների վերլուծության, դեռևս չի կարող հիմք լինել հանցավորի՝ սպանության դիտավորություն ունենալը հավաստելու համար: Ի հիմնավորումն վերոնշյալի՝ դատարանները, ի թիվս այլնի, նշել են, որ համապատասխան գործողություններն իրականացնելուց հետո հանցավորը ձեռնպահ է մնացել տուժողին կյանքից զրկելուն ուղղված որևէ այլ արարք կատարելուց, թեպետ ունեցել է դրա կատարման իրական հնարավորություն և ձեռնամուխ է եղել նրան օգնություն ցուցաբերելուն:

20. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-18.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել գործում առկա փաստական տվյալները, հանցանքը կատարելուց առաջ և հետո հանցավորի դրսևորած վարքագիծը և սխալ եզրահանգման են եկել անձի դիտավորության ուղղվածության, հետևաբար նաև արարքի քրեաիրավական որակման հարցում: Մասնավորապես, դատարանների կողմից անտեսվել է, որ հանցավորի՝ նախքան հանցանքը և դրա ընթացքում դրսևորած վարքագիծը վկայում է նրա մոտ տուժողին սպանելու պարզ կոնկրետացված դիտավորության առկայության մասին. այսպես՝ համապատասխան զգուշացում տալուց հետո («գնաս՝ կկրակել»), տե՛ս սույն որոշման 7-րդ կետը) ամբաստանյալը հրագնի փողն ուղղել է տուժողի կենսական կարևոր օրգանի՝ պարանոցի շրջանին և մոտ 1-1,5 մետր հեռավորությունից կրակահերթ է արձակել այդ ուղղությամբ: Այսինքն՝ տվյալ դեպքում առկա է սպանության ավարտված հանցափորձ, քանի որ հանցավորը կատարել է բոլոր անհրաժեշտ գործողությունները հանցագործությունն ավարտին հասցնելու համար, սակայն այն չի ավարտվել նրա կամքից անկախ հանգամանքներով:

Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների այն փաստարկին, որ հանցավորը և տուժողը եղել են հարազատ եղբայրներ, չեն ունեցել թշնամական հարաբերություններ, գործի նյութերով չի հաստատվել, որ բացի առաջին կրակոցից, արձակված մյուս երկու կրակոցներն ուղղված են եղել տուժողի կենսական կարևոր օրգաններին, ինչպես նաև հնարավոր չէ փաստել, թե ինչի արդյունքում նշված երկու կրակոցները չեն դիպել տուժողին, ապա Վճարելի դատարանն արձանագրում է, որ անկախ ստորադաս դատարանների մատնանշած սույն փաստարկներից՝ միայն այն հանգամանքը, որ Գ.Մանուկյանը ինքնաձիգի փողն ուղղել է տուժողի վրա և զգուշացում տալուց հետո մոտ 1-1,5 մետր հեռավորությունից վերջինիս

կենսական կարևոր օրգանի՝ պարանոցի շրջանին կրակահերթ է արձակել, արդեն իսկ ինքնին վկայում է հանցավորի մոտ տուժողին կյանքից զրկելու ուղղակի դիտավորության մասին, քանի որ նույնիսկ եթե տուժողին կյանքից զրկելը հանցավորի համար վերջնական նպատակ կամ վերջնական նպատակին հասնելու միջոց չի եղել, այնուամենայնիվ, վերջինս նախատեսել է նման հետևանքի անխուսափելիությունը, ինչը միանշանակ վկայում է սպանության ուղղակի դիտավորության առկայության մասին:

Անդրադառնալով ստորադաս դատարանների այն փաստարկին, որ Գ.Մանուկյանը, տեսնելով, որ եղբայրը կենդանի է, ձեռնպահ է մնացել նրա նկատմամբ որևէ գործողություն կատարելուց, ձեռնամուխ է եղել նրան հիվանդանոց տեղափոխելուն, մինչդեռ սպանության ցանկություն ունենալու դեպքում ոչինչ չէր խոչընդոտում մտադրվածն ավարտին հասցնելու համար՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն որոշման շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ընդգծում է, որ վերոնշյալ հանգամանքները դուրս են գտնվում սպանության արդեն իսկ ավարտված հանցավորձի շրջանակներից, կարող են հաշվի առնվել միայն պատիժ նշանակելիս և չեն կարող ազդել արարքի քրեաիրավական որակման վրա և, համապատասխանաբար, հիմք հանդիսանալ որակումը փոխելու համար:

21. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, Գ.Մանուկյանի արարքը սպանության փորձից վերադարձվելով առողջությանը ծանր վնասի պատճառում, իսկ Վերաքննիչ դատարանը, համաձայնվելով կատարված վերադարձման հետ, պատշաճ վերլուծության չեն ենթարկել գործում առկա հանգամանքները, մասնավորապես՝ հանցանքի կատարման եղանակը, օգտագործված գործիքը, հասցված մարմնական վնասվածքների բնույթը և տեղակայումը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), հանցավորի՝ նախքան հանցանքը և դրա ընթացքում դրսևորած վարքագիծը և այլ տվյալներ, որոնք իրենց համակցության մեջ բացահայտում են հանցավորի դիտավորության տեսակը և ուղղվածությունը, մասնավորապես այն, որ վերջինս գործել է տուժողին սպանելու ուղղակի դիտավորությամբ, սակայն մահը վրա չի հասել նրա կամքից անկախ հանգամանքներով: Նման պայմաններում արարքը ենթակա է որակման որպես անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձ, այլ ոչ թե ըստ փաստացի առաջացած հետևանքի:

Հետևաբար Գ.Մանուկյանի արարքում սպանության փորձի բացակայության և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

22. Մինևույն ժամանակ հաշվի առնելով այն, որ արարքի քրեաիրավական վերադարձման կապակցությամբ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն՝ Վճռաբեկ դատարանը առարկայագուրկ

է համարում անդրադառնալ վերաորակված արարքի շրջանակներում Վերաքննիչ դատարանի կողմից որպես մեղմացնող գնահատված հանգամանքների վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

23. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, Գ.Մանուկյանի արարքը սպանության փորձից վերաորակելով առողջությանը ծանր վնասի պատճառում, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ, 112-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, ինչը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գրիգոր Վոլոդյայի Մանուկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 15-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մարտի 18-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Գրիգոր Վոլոդյայի Մանուկյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

46.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0016/11/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
դատախազ դիմողի ներկայացուցիչ Վ.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ա.ԹՈՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հունիսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բադալյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արսեն Մակարյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերով (այսուհետ՝ նաև ՀԿԳ) քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Կ.Սահակյանի (այսուհետ՝ նաև Քննիչ)՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ հարուցվել է թիվ 69110614 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

2014 թվականի նոյեմբերի 25-ին ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության դատախազ

Վ.Պողոսյանի (այսուհետ՝ նաև Դատախազ) որոշմամբ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության վարույթում քննվող թիվ 69110614 քրեական գործի վարույթը կարճվել է՝ Կարեն Հարությունյանի և երկու այլ անձանց արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Ա.Մակարյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով վերացնել Դատախազի՝ 2014 թվականի նոյեմբերի 25-ի որոշումը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղդասյանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ Ա.Մակարյանի բողոքը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. 2015 թվականի փետրվարի 9-ին Ա.Մակարյանը և նրա ներկայացուցիչ Ա.Թորոսյանը բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով պարտավորեցնել վերացնելու Դատախազի՝ 2014 թվականի նոյեմբերի 25-ի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղդասյանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումները:

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ Ա.Մակարյանի և նրա ներկայացուցիչ Ա.Թորոսյանի բողոքը բավարարվել է. ՀՀ գլխավոր դատախազությանը պարտականություն է սահմանվել վերացնելու Դատախազի՝ 2014 թվականի նոյեմբերի 25-ի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղդասյանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումներով թույլ տրված և դատարանի որոշմամբ արձանագրված Ա.Մակարյանի իրավունքների խախտումը:

4. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հունիսի 4-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 27-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 4-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղդասյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. 2014 թվականի նոյեմբերի 25-ին Դատախազ Վ.Պողոսյանը, վկայակոչելով Լ.Ավետիսյանի որոշման շրջանակներում Վճարելի դատարանի

արտահայտած իրավական դիրքորոշումները և արդյունքում եզրահանգելով, որ Ա.Մակարյանի և Կ.Հարությունյանի միջև առկա հարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված քրեական գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով կարճելու մասին (տես քրեական գործի նյութեր, հատոր 1, թերթեր 134-138):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «Դատախազը, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածներում ամրագրված իմպերատիվ պահանջները, քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով, թույլ չի տվել քրեական վարույթն իրականացնող մարմինն՝ փյույ կատարել քրեատարավարական օրենսգրքով նախատեսված բոլոր արդյունավետ միջոցները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես ենթադրյալ հանցագործության մեջ կասկածվող անձի (անձանց) մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող հանգամանքները:

Այսպիսով, դատարանը, չանդրադառնալով քննարկվող քրեական գործով ձեռք բերված ապացույցների գնահատմանը, Կարեն Հարությունյանի կամ այլ անձանց կողմից ենթադրաբար քրեական օրենքով արգելված որևէ արարք կատարելու կամ այդպիսի արարքի բացակայության մասին հանգամանքներին, դատողություններ չի ներկայացնում, թե Կարեն Հարությունյանի և Արսեն Մակարյանի միջև տեղի ունեցած իրավահարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական, թե քրեաիրավական բնույթ, այլ արձանագրում է, որ դրանց բացահայտման համար քրեական վարույթն իրականացնող մարմինն՝ քննիչը, չի ունեցել բավարար հնարավորություն, քանի որ գործը կարճվել է դատավարական հսկողություն իրականացնող դատախազի կողմից՝ գրկելով ենթադրյալ հանցագործության մասին հայտարարություն փոխ, իսկ սույն միջնորդությամբ դիմող հանդիսացող անձին իրացնելու իր՝ Սահմանադրությամբ և քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված իրավունքները:» (տես քրեական գործի նյութեր, հատոր 1, թերթեր 100-101):

8. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, իր դատական ակտում փաստել է. «(...) [Թ]րեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման պահանջի պահպանման տեսանկյունից անհրաժեշտ է իրականացնել մի շարք դատավարական գործողություններ, որպեսզի պարզվի, թե իրականում Կարեն Հարությունյանի և Արսեն Մակարյանի միջև նախնական պայմանավորվածություն, մասնավորապես, որ վերջինը պարտավոր էր հեղինակ, որպեսզի մեկ տարի հետո սրացված

եկամուրներից Տիգրան Գաբրիելյանը մարի պարտքը, ինչպես նաև Կարեն Հարությունյանի առաջարկով նշված պայմանավորվածությունը պետք է ձևակերպվեր գրավոր, թե՛ ոչ: Այսինքն՝ նշված փաստաթուղթը պետք է կրեր Տիգրան Գաբրիելյանի գործողությունների վերաբերյալ երաշխիքային բնույթ (հետևողական լինել, որպեսզի Տիգրան Գաբրիելյանը սրացված եկամտից մարի պարտքը), թե Արսեն Մակարյանի համար՝ բնութամբ և պարտավորվածությամբ այլ իրավական փաստաթուղթ՝ փոխառության պայմանագիր:

Բացի այդ, վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է քննության առարկա դարձվի այն հանգամանքը, թե ինչպես է սրացվել, որ Տիգրան Գաբրիելյանը, Կարեն Հարությունյանին գումար պարտք լինելով, (ի դեպ նշված հանգամանքի մասին պնդում է նաև Տիգրան Գաբրիելյանը) փոխառության պայմանագիրը կնքել է Արսեն Մակարյանի հետ: Ավելին՝ հարկ է ուշադրություն դարձնել, որ Կարեն Հարությունյանն արդեն իսկ քաղաքացիադատարանական կարգով 500.000 ԱՄՆ դոլար գումարի (այն նույն գումարի չափով, որքանով Արսեն Մակարյանի հետ է կնքել փոխառության պայմանագիր) պահանջով հայց է ներկայացրել Տիգրան Գաբրիելյանի դեմ, և հայցն էլ դատարանի կողմից բավարարվել է: Իսկ, եթե Արսեն Մակարյանն իրականում գումար պարտք չէ Կարեն Հարությունյանին, ապա դիմումարուի այն պահանջը, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեաիրավական գնահատական պետք է տրվի ենթադրյալ խաբեության արդյունքում փոխառության պայմանագիր կնքելու և հետագայում դրա հիման վրա գումար վերցնելու Կարեն Հարությունյանի գործողություններին, արդարացված է:

Հետևապես քրեական գործում առկա նյութերը վկայում են այն մասին, որ վերը նշված անձանց միջև ձևավորված հակասական հարաբերությունների պայմաններում խաբեության հանցակազմի առկայության կամ բացակայության հարցը հնարավոր է պարզել միմիայն քրեադատարանական գործողությունների արդյունքում, այլապես՝ տվյալ փուլում վերը նկարագրված իրավիճակը դիտարկել քաղաքացիաիրավական հարաբերություն, վաղաժամ է և չի բխի ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջներից:

(...)

Բացի այդ, (...) քրեական գործ հարուցելու որոշումը կայացվել է 2014 թվականի հոկտեմբերի 31-ին և նույն օրը որոշման պարճենը սրացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից: 2014 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ գլխավոր դատախազությունը պահանջել է թիվ 69110614 քրեական գործը, որն էլ սրացվել է նույն թվականի նոյեմբերի 14-ին, իսկ նոյեմբերի 25-ին քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ դատախազի կողմից յոթօրյա ժամկետում քրեական գործ հարուցելու որոշումը չի վերացվել (ինչը վկայում է այն մասին, որ որոշման օրինականությունը ընդունելի է եղել վերջինի կողմից), այլ միայն հարուցումից 10 օր անց թիվ 69110614 քրեական գործը արուգման նպատակով պահանջվել է և այնուհետև՝ կարճվել: Այսինքն՝ վերաքննիչ դատարանը փաստում է, որ քրեական գործի հարուցումից հետո՝ մինչև քրեական գործի պահանջելը, առերևույթ ձեռք չեն բերվել այնպիսի փոփոխություններ, որոնք միանշանակ կվկայեին խարդախության հանցակազմի բացակայության մասին, որպիսի հանգամանքն էլ կարող էր հիմք հանդիսանալ քրեական գործի վարույթը կարճելու համար: Ավելին՝ նշված ժամանակահատվածում քրեական գործում առկա փեղեկությունների հավաստիությունը պարզելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից միջոցներ է ձեռնարկվել (ՌԴ գրություն է ուղարկվել, հեռախոսային զանգերի վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել), սակայն նշված գործողությունների պատասխանները դեռևս սրացված չեն եղել» (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 2, թերթեր 33-40):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես, բողոքաբերը, անդրադառնալով ստորադաս դատարանների այն պատճառաբանություններին, թե դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը քրեական գործի վարույթը կարճելու որոշում կայացնելով թույլ չի տվել քրեական վարույթն իրականացնող մարմնին ձեռնարկել քրեադատավարական օրենսգրքով նախատեսված բոլոր արդյունավետ միջոցները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, գտել է, որ դրանք անհիմն են և չեն բխում նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցներից: Բողոքաբերն անհիմն է համարել նաև դատարանների կողմից բերված այն պատճառաբանությունը, թե դատախազի կողմից կայացրած որոշումը վարույթն իրականացնող մարմնին սահմանափակել է մի շարք դատավարական գործողություններ իրականացնելու հնարավորությունը, որոնց կատարումից կպարզվեին ինչպես Կ.Հարությունյանի և Ա.Մակարյանի միջև եղած հարաբերությունների բնույթը, այնպես էլ ենթադրյալ հանցագործության մեջ կասկածվող անձի մեղավորությունը հիմնավորող կամ արդարացնող հանգամանքները:

9.1. Վկայակոչելով Լ.Ավետիսյանի գործով թիվ ԵԿԴ/0176/01/09 և Ռ.Բալասանյանի գործով թիվ ԵԿԴ/0199/01/13 որոշումներում Վճռաբեկ

դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ խարդախության հանցակազմի և քաղաքացիաիրավական հարաբերությունների սահմանազատման վերաբերյալ՝ բողոքաբերը եզրահանգել է, որ նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք բերված բավարար ապացույցներով, մասնավորապես՝ Ա.Մակարյանի, Ս.Մարգարյանի և Տ.Գաբրիելյանի ցուցմունքներով, հիմնավորվել է, որ Կ.Հարությունյանի և Ա.Մակարյանի միջև եղած հարաբերությունները քաղաքացիաիրավական բնույթի են, որն էլ հիմք է հանդիսացել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից քրեական գործի վարույթը կարճելու համար:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 27-ի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 4-ի որոշումները:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ՝ Վերաքննիչ դատարանն արդյոք կայացրել է պատշաճ կերպով պատճառաբանված դատական ակտ:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հեղաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, փուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

(...):»:

Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովումը,

- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները (տես Ն.Միսակյանի գործով Վճարելի դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ1/0003/11/08 որոշման 12-րդ կետը): Նույնաբովանդակ դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՄԴՈ-844 որոշմամբ (տես վկայակոչված որոշման 5-րդ կետը):

Վերահաստատելով վերոհիշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վ.Բաղդասարյանի գործով Վճարելի դատարանն արձանագրել է. «(...) [Մ]ինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները ենթակա են դատական բողոքարկման) դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյոք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում կայացնել հիմնավորված և պարճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնաարար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին» (տես Վ.Բաղդասարյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԴ4/0002/01/11 որոշման 22-րդ կետը):

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: (...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պարճառաբանված: Պարճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Մեջբերված դրույթները Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել Ֆ. Գալստյանի գործով որոշման մեջ՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Դատական ակտի պարճառաբանվածությունը

կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է սրեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության սրուզման համար:

(...) Պարճատարանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական արյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական սրուզման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպարճատարանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

(...) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպարճատարանվածությունը կամ ոչ բավարար պարճատարանվածությունը դիտել է՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի արդար դատական քննության իրավունքի խախտում (տես Սալովն ընդդեմ Ուկրաինայի (Salon v. Ukraine) 06.09.2005 թվականի որոշումը, գանգապ թիվ 65518/01, Բոլդեան ընդդեմ Ռումինիայի (Boldea v. Romania) 15.02.2007 թվականի որոշումը, գանգապ թիվ 19997/02, Գրադինարն ընդդեմ Մոլդովայի (Gradinar v. Moldova) 08.04.2008 թվականի որոշումը, գանգապ թիվ 7170/02)» (տես Ֆ.Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

Վերահաստատելով Ֆ. Գալստյանի գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Գ.Խնուսյանի գործով որոշման շրջանակներում արձանագրել է. «(...) [Հ]աշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպարճատարանված (կամ ոչ պարզաճ պարճատարանված) որոշումների կայացումն անընդունելի է: (...)» (տես Գ.Խնուսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

14. Վերահաստատելով և զարգացնելով Ֆ. Գալստյանի և Գ. Խնուսյանի գործերով արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանները պարտավոր են կայացնել ոչ միայն օրինական և հիմնավոր, այլև

բավարար չափով և պատշաճ կերպով պատճառաբանված դատական ակտեր: Այլ կերպ՝ դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել **վերացական, քնդհանուր բնույթի** դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող բացառապես **հստակ, որոշակի և համոզիչ** հետևությունների հիման վրա: Հակառակ պարագայում քրեական դատավարության խնդիրները չեն իրագործվի, իսկ տրամաբանությունը՝ կխարխլվի:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը փաստում է, որ դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ 2014 թվականի նոյեմբերի 25-ին Դատախազ Վ.Պողոսյանը, վկայակոչելով *Լ.Ավերիսյանի* որոշման շրջանակներում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները և արդյունքում եզրահանգելով, որ Ա.Մակարյանի և Կ.Հարությունյանի միջև առկա հարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հասկանիչներով հարուցված քրեական գործի վարույթն արարքում հանցակազմի բացակայության հիմքով կարճելու մասին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանը, քննարկելով Դատախազի՝ 2014 թվականի նոյեմբերի 25-ի որոշման դեմ բերված բողոքը, 2014 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ այն մերժել է անհիմն լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում Առաջին ատյանի դատարանն իր՝ 2015 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ Ա.Մակարյանի և նրա ներկայացուցիչ Ա.Թորոսյանի բողոքը բավարարել է. ՀՀ գլխավոր դատախազությանը պարտականություն է սահմանել վերացնելու Դատախազի՝ 2014 թվականի նոյեմբերի 25-ի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բաղայանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումներով թույլ տրված և դատարանի որոշմամբ արձանագրված Ա.Մակարյանի իրավունքների խախտումը: Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտը հիմնավորել է նրանով, որ Դատախազը, քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով, թույլ չի տվել քննիչին ձեռնարկել քրեադատավարական օրենսգրքով նախատեսված բոլոր արդյունավետ միջոցները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես ենթադրյալ հանցագործության մեջ կասկածվող անձի (անձանց) մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող հանգամանքները (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, իր դատական ակտը պատճառաբանել է այլ դատողությունների հետ զուգահեռ նաև նրանով, որ **եթե Ա.Մակարյանն իրականում գումար պարտք չէ Կ.Հարությունյանին, ապա դիմումարտի այն պահանջը, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեաիրավական գնահատական պետք է տրվի ենթադրյալ խաբեության արդյունքում փոխառության պայմանագիր կնքելու և հետագայում դրա հիման վրա գումար վերցնելու Կ.Հարությունյանի գործողություններին, արդարացված է:** Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «**[Դ]ատարախազի կողմից յոթօրյա ժամկետում քրեական գործ հարուցելու որոշումը չի վերացվել (ինչը վկայում է այն մասին, որ որոշման օրինականությունը ընդունելի է եղել վերջինի կողմից), այլ միայն հարուցումից 10 օր անց թիվ 69110614 քրեական գործը սարուզման նպատակով պահանջվել է և այնուհետև՝ կարճվել: Այսինքն՝ վերաքննիչ դատարանը փաստում է, որ քրեական գործի հարուցումից հետո՝ մինչև քրեական գործի պահանջելը, առերևույթ ձեռք չեն բերվել այնպիսի փաստեր, որոնք միանշանակ կվկայեին խարդախության հանցակազմի բացակայության մասին, որպիսի հանգամանքն էլ կարող էր հիմք հանդիսանալ քրեական գործի վարույթը կարճելու համար» (տես սույն որոշման 8-րդ կետը):**

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանը արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառաբանությունների հիմքում ընկած այն դատողությունը, որ **եթե Ա.Մակարյանն իրականում գումար պարտք չէ Կ.Հարությունյանին, ապա դիմումարտի այն պահանջը, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեաիրավական գնահատական պետք է տրվի ենթադրյալ խաբեության արդյունքում փոխառության պայմանագիր կնքելու և հետագայում դրա հիման վրա գումար վերցնելու Կ.Հարությունյանի գործողություններին, արդարացված է, իր բնույթով վերացական է. այն չի կարող համարվել **հստակ, որոշակի և համոզիչ** դատողություն:**

Բացի այդ, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից արտահայտված այն դիրքորոշմանը, որ **քրեական գործի հարուցումից հետո մինչև քրեական գործի պահանջելն առերևույթ ձեռք չեն բերվել այնպիսի փաստեր, որոնք միանշանակ կվկայեին խարդախության հանցակազմի բացակայության մասին, որպիսի հանգամանքն էլ կարող էր հիմք հանդիսանալ քրեական գործի վարույթը կարճելու համար՝ Վճարելի դատարանը փաստում է, որ հիմնավոր չէ նման փաստարկով քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման իրավաչափությունը կասկածի տակ դնելը:**

17. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ՝

Վերաքննիչ դատարանը չի կայացրել պատշաճ կերպով պատճառաբանված դատական ակտ:

18. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 419-րդ հոդվածների՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները՝ կայացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող դատական ակտ:

19. Վճարելի դատարանը փաստում է նաև, որ Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության պահանջների խախտման պարագայում Վճարելի դատարանը զրկված է բողոքաբերի՝ սույն որոշման 9.1-րդ կետում բարձրացրած փաստարկին անդրադառնալու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Դիմող Արսեն Հայկարամի Մակարյանի իրավունքների խախտումը վերացնելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 27-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի հունիսի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

47.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0091/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ
դատախազ պաշտպաններ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ԱՐԱՄՅԱՆԻ
Ա.ԳԱՐՈՅԱՆԻ
Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք. Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Ջոն Սարքիս Սարքիսի Շիրվանյանի և Արսեն Վահանի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մարտի 19-ի որոշման դեմ Ջ.Շիրվանյանի պաշտպան Ն.Բաղդասարյանի և Ա.Մուրադյանի պաշտպան Ա.Գարոյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ ՀՀ ԿԱ ԱԱԾ) քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ

մասի 1-ին կետով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 58211212 քրեական գործը:

2013 թվականի փետրվարի 11-ին Ջոն Շիրվանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով և 177-րդ հոդվածի 1-ին մասով: Ջ.Շիրվանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2013 թվականի մայիսի 24-ի որոշմամբ թիվ 58211212 քրեական գործի վարույթից անջատվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի և 177-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, ընդունվել վարույթ, և նախաքննությունը շարունակվել է թիվ 58205013 համարով:

2014 թվականի հունիսի 18-ին Ջ.Շիրվանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2014 թվականի հունիսի 18-ին Արսեն Մուրադյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Ա.Մուրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2014 թվականի հունիսի 18-ին Մարիա Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Մ.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2. 2014 թվականի հունիսի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով՝ արագացված դատական քննության կարգի կիրառմամբ, Ջ.Շիրվանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Ա.Մուրադյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Մ.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: Մ.Գրիգորյանի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, և ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Մուրադյանի, վերջինիս պաշտպան Ժ.Հարությունյանի և ամբաստանյալ Ջ.Շիրվանյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի մարտի 19-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Մուրադյանի և վերջինիս պաշտպան Ժ.Հարությունյանի վերաքննիչ բողոքները մերժել է, ամբաստանյալ Ջ.Շիրվանյանի վերաքննիչ բողոքը՝ բավարարել մասնակիորեն. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճիռը Ջ.Շիրվանյանի մասով փոփոխել է, վերջինիս գույքի վրա դրված կալանքը վերացրել և ՀՀ ԿԱ ԱԱԾ ֆինանսական վարչությանն ի պահ հանձնված 6.970 (վեց հազար ինը հարյուր յոթանասուն) եվրո գումարը վերադարձրել Ջ.Շիրվանյանին: Մնացած մասով դատավճիռը թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մարտի 19-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են ներկայացրել ամբաստանյալներ Ջ.Շիրվանյանի պաշտպան Ն.Բաղդասարյանը և Ա.Մուրադյանի պաշտպան Ա.Գարոյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ջ.Շիրվանյանին և Ա.Մուրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, նպատակ ունենալով վճարային փաստաթղթեր հանդիսացող, գույքային իրավունքի մասին վկայող, դրանք սահմանող և տրամադրող բանկային կեղծ քարտեր պատրաստել ու իրացնել, ինչպես նաև պատրաստված բանկային կեղծ քարտերով գործարքներ կատարել և տարբեր անձանց պատկանող բանկային հաշվեհամարներից գումարներ հափշտակել, նախնական համաձայնությամբ 2012 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպել են բանկային քարտերի կեղծման ու իրացման գործընթացը (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 205-209):

6. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է. «(...) Ամբաստանյալ Ջոն Մարքիս Մարքսի Շիրվանյանի անձը բնութագրող տվյալներ, պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում այն, որ նա ընդունել է մեղքը և անկեղծորեն զղջացել կատարած արարքի համար, բնութագրվում է դրական, խնամքին է գրնվում հղի կինը:

Ամբաստանյալ Արսեն Վահանի Մուրադյանի անձը բնութագրող տվյալներ, պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքներ

դատարանը հաշվի է առնում այն, որ նա ընդունել է մեղքը և անկեղծորեն գղջացել կատարած արարքի համար, բնութագրվում է դրական, խնամքին է գրնվում 2011թ. ծավաճ երեխան:

Դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ամբաստանյալներ Զ.Շիրվանյանը և Ա.Մուրադյանը լիովին վերականգնել են հանցագործության հետևանքով անմիջականորեն պարձառված գույքային վնասը:

(...)

Ամբաստանյալների պարասիսանսարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրել» (տես քրեական գործ, հատոր 5, թերթ 38):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ամբաստանյալներ Զ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի նկարումամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառումամբ՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պարիժ նշանակելու, ինչպես նաև նույն օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումամբ՝ ազատազրկման ձևով նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու հարցը, հաշվի առնելով վերջիններիս պարասիսանսարվությունն ու պարիժը մեղմացնող (...) հանգամանքները, ինչպես նաև ամբաստանյալ Զ.Շիրվանյանի պարասիսանսարվությունն ու պարիժը մեղմացնող նոր հանգամանքը՝ խնամքին մինչև 14 փարեկան երկու երեխաների առկայությունը (ծավաճ 07.11.2014թ.), հանցավորների անձը բնութագրող տվյալները, հանգում է այն հետևության, որ վերոգրյալները բավարար չեն գալու այն հետևության, որ ամբաստանյալների նկարումամբ հնարավոր է նշանակել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պարիժ, և վերջիններիս ուղղվելը հնարավոր չէ առանց պարիժը կրելու: Նրանց նկարումամբ իրենց վերագրվող հանցագործությունների համար ազատազրկման ձևով նշանակված համաչափ պարիժներ կիրառելու միջոցով կարելի է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պարժի նպատակներին՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անձանց, ինչպես նաև կանխել հանցագործությունները (...)» (տես քրեական գործ, հատոր 6, թերթ 160):

Վճարելի բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Վճարելի բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ամբաստանյալ Զ.Շիրվանյանի պաշտպան Ն.Բաղդասարյանը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի կիրառել քրեական օրենքը, թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, հետևաբար դատական ակտը պետք է պատժի մասով բեկանել և ուղարկել նոր քննության: Մասնավորապես, ստորադաս դատարանները որպես Զ.Շիրվանյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք

հաշվի չեն առել այն, որ նա ընտանիքի միակ կերակրողն է, սակայն միանգամայն այլ մոտեցում են դրսևորել ամբաստանյալ Մ.Գրիգորյանի նկատմամբ: Վերջինիս դեպքում ոչ միայն նշված մեղմացնող հանգամանքը հաշվի է առնվել, այլև նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ինչը չի բխում օրենքի միատեսակ կիրառության պահանջներից:

Ըստ բողոքաբերի՝ դատարանների կողմից հաստատված՝ Ջ.Շիրվանյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները հիմք են ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության սանկցիայի շրջանակներում պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ նշանակելու կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառելու համար:

Արդյունքում բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի որոշումը պատժի մասով բեկանել և ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

9. Ամբաստանյալ Ա.Մուրադյանի պաշտպան Ա.Գարոյանը փաստարկել է, որ նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված արարքի ծանրությանը, հանցավորի անձին և չի նպաստում անձի ուղմանը: Մասնավորապես, ստորադաս դատարանները պատշաճ գնահատականի չեն արժանացրել այն, որ Ա.Մուրադյանը տուժողին պատճառած վնասն ամբողջովին հատուցել է, նախկինում դատապարտված չի եղել, ինչը հատկապես կարևոր է անձին ազատագրկման ենթարկելու կամ չենթարկելու հարցը լուծելիս:

Բացի այդ, դատարանները հաշվի չեն առել, որ Ա.Մուրադյանն ամուսնացած է, ունի մինչև չորս տարեկան մանկահասակ երեխա և ընտանիքի միակ կերակրողն է, բնութագրվում է դրական, աշխատում է Միացյալ ազգերի կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունում:

Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել և փոփոխել, Ա.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը փոխարինել ավելի նվազ պատժաչափով և այն պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Ջ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը

պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարարկում պահելու ձևով պարիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատարարության ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պարիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պարասիսանարվությունը և պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Սույն քրեաիրավական նորմը Վճռարեկ դատարանի նախադեպային իրավունքում բազմիցս վերլուծության է ենթարկվել, և մշտապես վերահաստատվել դիրքորոշումն առ այն, որ առանց պատիժը փաստացի կրելու դատապարտյալի ուղղվելու հնարավորության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն հանցավորի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների, հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի համակողմանի ու ամբողջական գնահատման վրա: Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանն այն կիրառելիս պետք է ղեկավարվի ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով՝ նպատակ ունենալով ապահովելու ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված պատժի նպատակների իրացվելիությունը (տես, ի թիվ այլնի, Վճռարեկ դատարանի թիվ ԵՄԴԴ/0034/01/12, ԼԴ/0093/01/12, ՏԴ/0018/01/13, ԵԿԴ/0096/01/13, ԵԿԴ/0252/01/13, ԵՄԴ/0027/01/14, ԳԴ/0014/01/14, ՍԴ/0204/01/13 որոշումները):

12. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնվող հանգամանքներից հանցավորի անձը բնութագրող տվյալների վերաբերյալ Վճռարեկ դատարանը հետևյալ իրավական դիրքորոշումն է արտահայտել. «(...) «հանցավորի անձնավորություն» եզրույթն ի տարբերություն «հանցագործության սուբյեկտ» եզրույթի, ավելի ընդարձակ է, և օժրված է սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերով: ՀՀ գործող քրեական օրենսդրության իմաստով «հանցավորի անձնավորություն» եզրույթը դիրարկվում է որպես քրեական պարասիսանարվության և պարիժի անհատականացման հիմք, հանցավորի անձը բնութագրող առանձին հարկանիշները և վարքագիծը օրենքում նախատեսված են որպես պարասիսանարվությունը և պարիժը

մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ, ինչպես նաև դատապարտյալին պարժից ազատելու նախապայման:

Հիմք ընդունելով (...) ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված դրույթն այն մասին, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են (հոդված 3), մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից (հոդված 14)՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ պարժի անհատականացման ժամանակ հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես պարժի նպատակների իրականացման, այնպես էլ անձի արժանապատվության հարգման սահմանադրական պահանջի առկայությամբ» (տե՛ս Սերոբ Սարգսյանի գործով Վճարելի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12 որոշման 36-37-րդ կետերը):

Ս.Աղախանյանի գործով որոշման մեջ Վճարելի դատարանն արձանագրել է. «(...) Վճարելի դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ յուրաքանչյուր գործով նշանակված պարժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների (կատարված հանցագործությամբ պարճատված վնասի չափ, հանցավոր մտադրության իրականացման աստիճան, հանցագործության կատարման եղանակ և այլն), պետք է բազմակողմանի վերլուծության ու գնահատման ենթարկի հանցավորի անձը: Վճարելի դատարանն ընդգծում է, որ պարասիսանստիվության և պարժի անհատականացման և հետևաբար նաև նշանակված պարժի կրման հարցի լուծման համար էական նշանակություն ունեն հանցավորի անձի ոչ միայն ֆիզիկական ու հոգեկան, այլև սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ փաստական տվյալները: Հետևաբար, հանցավորի պարասիսանստիվությունն ու պարիժն անհատականացնելիս և նշանակված պարիժը փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է ուսումնասիրի հանցավորի ընտանեկան դրության, նրա ինստիտյունային անձանց առկայության, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղի ու դիրքի, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագրի և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները:

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ անձի նկատմամբ պարիժ նշանակելիս և այն փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն հանգամանքը, թե նշանակված պարիժն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ ամբաստանյալի ընտանիքի կյանքի պայմանների վրա: (...)» (տե՛ս Սերոբ Աղախանյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշման 19-րդ կետը):

13. Վճարելի դատարանը վերահաստատում է նախորդ կետում մեջբերված՝ *Սերոբ Սարգսյանի* և *Մելրան Աղախանյանի* գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն այն մասին, որ յուրաքանչյուր դեպքում պատժի կրման նպատակահարմարության հարցը որոշելիս հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում կարևոր նշանակություն ունի հանցավորի անձը բնութագրող տվյալների ամբողջական վերլուծությունը: Մասնավորապես, հանցավորի անձը դրականորեն բնութագրող սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները, հանցագործությունից հետո դրսևորած դրական վարքագիծը (կատարվածի համար գոջալը, ճշմարտացի ցուցմունքներ տալը, քննությանը չխոչընդոտելը, պատճառված վնասը հատուցելը և այլն) կարող են վկայել, որ պատժի նպատակների իրագործման տեսանկյունից բացակայում է պատիժը փաստացի կրելու անհրաժեշտությունը: Այլ խոսքով՝ հանցավորի անձը բնութագրող տվյալները բացահայտելու և օբյեկտիվորեն հաշվի առնելու դատարանի պարտականությունն ուղղակիորեն բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի տրամաբանությունից, որի համաձայն՝ պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը (*տե՛ս, mutatis mutandis, Արսաշ Շաքարյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԳ/0163/01/13 որոշման 13-րդ կետը*):

14. Սույն գործի փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ ամբաստանյալներ Ջ.Շիրվանյանը և Ա.Մուրադյանը 2012 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքում նախնական համաձայնությամբ կազմակերպել են բանկային քարտերի կեղծման ու իրացման գործընթացը՝ նպատակ հետապնդելով վճարային փաստաթղթեր հանդիսացող, գույքային իրավունքի մասին վկայող, դրանք սահմանող և տրամադրող բանկային կեղծ քարտեր պատրաստել ու իրացնել, ինչպես նաև պատրաստված բանկային կեղծ քարտերով գործարքներ կատարել և տարբեր անձանց պատկանող բանկային հաշվեհամարներից գումարներ հափշտակել (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս որպես Ջ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի անձը դրական բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ նրանք ընդունել են մեղքը, անկեղծորեն գոջացել կատարած արարքի համար, բնութագրվում են դրական, լիովին վերականգնել են հանցագործությամբ պատճառված գույքային վնասը, Ջ.Շիրվանյանի խնամքին է գտնվում հղի կինը, իսկ Ա.Մուրադյանի խնամքին՝ 2011 թվականին ծնված երեխան: Ամբաստանյալների պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չեն արձանագրվել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Արդյունքում Առաջին ատյանի դատարանը Ջ.Շիրվանյանի և

Ա.Մուրադյանի նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, քննարկելով Ջ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ կամ 70-րդ հոդվածների կիրառման հնարավորության հարցը, հիմք ընդունելով Առաջին ատյանի դատարանի կողմից արձանագրված՝ ամբաստանյալների անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև Ջ.Շիրվանյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող նոր հանգամանքը, այն է՝ խնամքին մինչև 14 տարեկան երկու երեխայի առկայությունը (ծնված՝ 2014 թվականի նոյեմբերի 7-ին), գտել է, որ ամբաստանյալների ուղղվելը հնարավոր չէ առանց պատիժը փաստացի կրելու, ինչպես նաև բացակայում են նրանց նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմքերը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները համադրելով սույն որոշման 11-13-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները թեպետ արձանագրել են գործում առկա՝ ամբաստանյալների պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև ամբաստանյալների անձը բնութագրող տվյալները, սակայն դրանք պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել նշանակված պատժի կրման անհրաժեշտության հարցը որոշելիս: Այսպես՝ Առաջին ատյանի դատարանն ընդհանրապես չի անդրադարձել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորությանը, չի քննարկել՝ արդյոք պատժի փաստացի կրումը նպատակահարմար է պատժի նպատակների իրագործման տեսանկյունից: Մինչդեռ Վճարելի դատարանը բազմիցս ընդգծել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 6-8-րդ կետերի համաձայն՝ կոնկրետ պատժաչափով կոնկրետ պատժատեսակի նշանակումը և նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության հարցի լուծումն իրենցից ներկայացնում են ինքնուրույն և հաջորդական փուլեր. դատարանը նախ և առաջ որոշում է ամբաստանյալի՝ պատժի ենթակա լինելու հարցը, այնուհետև դրա տեսակը և չափը, որից հետո որոշում, թե ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը՝ հաշվի առնելով առանց նշանակված պատիժը փաստացի կրելու դրա նպատակներին հասնելու հնարավորությունը (*տե՛ս, ի թիվս այլնի, Վճարելի դատարանի թիվ ԱՎԴ/0100/01/08, ԵԶԴԴ/0571/01/08, ԱԲԴ/0117/01/08 որոշումները*):

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանին, ապա վերջինս, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցին, ուղղակիորեն վերարտադրել է Առաջին ատյանի դատարանի դատական

ակտում հիմք ընդունված՝ ամբաստանյալների պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, անձը բնութագրող տվյալները, միևնույն ժամանակ արձանագրել Ջ.Շիրվանյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող նոր հանգամանք՝ խնամքին մինչև 14 տարեկան երկու երեխայի առկայությունը: Արդյունքում գտել է, որ նշվածները բավարար չեն եզրահանգելու, որ ամբաստանյալների ուղղվելը հնարավոր է առանց պատիժը փաստացի կրելու: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում չի նշել որևէ հիմնավորում, թե ինչու է եկել նման եզրահանգման:

16. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել ամբաստանյալների անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական և ժողովրդագրական հատկանիշները, հանցագործությունից հետո նրանց դրսևորած դրական վարքագիծը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունը, մասնավորապես այն, որ Ջ.Շիրվանյանը և Ա.Մուրադյանը բնութագրվում են դրական, խնամքին ունեն անչափահաս երեխաներ, զղջացել են և ընդունել մեղքը, ամբողջությամբ հատուցել են հանցագործությամբ պատճառված վնասը: Բացի այդ, ստորադաս դատարանները չեն անդրադարձել այն հարցին, թե նշանակված պատիժն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ ամբաստանյալների ընտանիքի կյանքի պայմանների վրա: Մինչդեռ Ջոն Շիրվանյանի խնամքին են գտնվում մինչև 14 տարեկան երկու երեխա, իսկ Ա.Մուրադյանի խնամքին՝ մեկ երեխա, հետևաբար նրանց նկատմամբ նշանակված պատիժը՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը, ողջամտորեն կարող է բացասական ազդեցություն ունենալ ամբաստանյալների ընտանիքի կյանքի պայմանների վրա:

Հետևաբար, արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից Ջ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ջ.Շիրվանյանին և Ա.Մուրադյանին մեղսագրված արարքների հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում նրանց անձը բնութագրող տվյալների և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող կոնկրետ հանգամանքների համակցությունը բավարար են հանգելու այն հետևության, որ նրանց ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու և հիմք են ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման համար: Ջ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով

հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին:

17. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, Ջ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի նկատմամբ չկիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտերի կայացման: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ և Առաջին ատյանի դատարանների դատական ակտերը բեկանելու հիմք են:

Վերոգրյալի համառոտաբանում Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ բողոքաբերների փաստարկներին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարան

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքները բավարարել: Ամբաստանյալներ Ջոն Մարքիս Մարքիսի Շիրվանյանի և Արսեն Վահանի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մարտի 19-ի որոշումը բեկանել և փոփոխել:

Ջոն Շիրվանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատիժը՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը

դնել Ջ.Շիրվանյանի բնակության վայրի այլընտրանքային պատիժների կատարման բաժնի համապատասխան ստորաբաժանման վրա:

Արսեն Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատիժը՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնել Ա.Մուրադյանի բնակության վայրի այլընտրանքային պատիժների կատարման բաժնի համապատասխան ստորաբաժանման վրա:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

48.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0108/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
պաշտպան մեղադրող Վ.ՔՈՍՅԱՆԻ
Հ.ՀԱԿՈԲՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Էդուարդ Հայկազի Նազդալյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2015 թվականի մարտի 20-ի որոշման դեմ ամբաստանյալ Է.Նազդալյանի պաշտպան Վ.Քոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի սեպտեմբերի 5-ին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում հարուցվել է թիվ 58209313 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ Էդուարդ Հայկազի Նագդալյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով: Է.Նագդալյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2014 թվականի հուլիսի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. 2014 թվականի օգոստոսի 5-ին Առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած առաջին դատական նիստի ժամանակ՝ դատական նիստի նախապատրաստական մասում, մեղադրող Հ.Հակոբյանը դատարան է ներկայացրել ամբաստանյալ Է.Նագդալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը փոփոխելու և ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում:

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռով Է.Նագդալյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ, և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Է.Նագդալյանի պաշտպան Վ.Քոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2015 թվականի մարտի 20-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի 2015 թվականի մարտի 20-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Է.Նագդալյանի պաշտպան Վ.Քոսյանը:

Վճարելի դատարանը 2015 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունել է վարոյթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Դատախազի կողմից հաստատված և Առաջին ատյանի դատարան ուղարկված մեղադրական եզրակացության համաձայն՝ «*[Է. Նագդալյանը] մեղադրվում է նրանում, որ նա «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ ունեցած 157.687 ԱՄՆ դոլարի ժամկետանց վարկային պարտավորությունների վճարման ժամկետներն երկարաձգելու կամ վարկային պայմանագրերի*

պայմաններն ի նպաստ իրեն որևէ կերպ փոփոխելու նպատակով, գիտակցելով, որ օրինական կարգով չի կարող խուսափել վարկային պարտավորությունները կատարելուց կամ դրանց դիմաց այլ կերպ հատուցելուց, նպատակադրվել է սրեղծված իրավիճակից հանգուցալուծում գրնել շորթման եղանակով, այն է՝ հանդիսանալով «Դելովոյ Էքսպրես» թերթի գլխավոր խմբագիր, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի և դրա գործադիր տնօրեն Տիգրան Դավթյանի անձի, գործարար համբավի մասին արարավորող, նրանց իրավունքներին և օրինական շահերին էական վնաս պարճատող տեղեկություններ հրատարակելու սպառնալիքով վերջինիս առաջ գույքային պահանջներ դրել» (տես քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 231-232):

6. 2014 թվականի օգոստոսի 5-ին՝ Առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած առաջին դատական նիստի ժամանակ՝ դատական նիստի նախապատրաստական մասում, մեղադրող Հ.Հակոբյանը դատարան է ներկայացրել ամբաստանյալ Է.Նագդալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը փոփոխելու և ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որով Է.Նագդալյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (տես քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 40-42):

7. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռի համաձայն՝ «[Ա]մբաստանյալ Էդուարդ Հայկազի Նագդալյանը կատարել է շորթում, այսինքն՝ Տիգրան Դավթյանի պարիվր և վերջինիս ղեկավարած «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Բանկ) գործարար համբավն արարավորող, նրանց իրավունքներին և օրինական շահերին էական վնաս պարճատող տեղեկություններ հրատարակելու սպառնալիքով նրան է ներկայացրել առանձնապես խոշոր չափով գույքային բնույթի գործողություններ կատարելու պահանջ, այսինքն՝ մեղավորությանը կատարել է հանցավոր արարք, որը համապարասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին» (տես քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 143):

8. Վերաքննիչ քրեական դատարանը հանգել է հետևության, որ «Առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իր իրավունքը պատշաճ իրականացնելու համար դատախազը պետք է գործեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավական ռեժիմով, այսինքն՝ դատաքննության ընթացքում մեղադրանքի փոփոխումը պետք է իրականացվեր գործի ապացույցները հետազոտելուց հետո միայն:

Հերևասար (...) դատախազի գործողությունները պետք է դիտել սպորինի և որևէ հերևանք չառաջացնող:

(...)

Ելնելով վերոգրյալներից՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի 2014թ. նոյեմբերի 11-ի դատավճիռը՝ Էդուարդ Հայկազի Նազդալյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, պետք է բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ այլ կազմով՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

Նոր քննության ընթացքում Առաջին արյանի դատարանը պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասով շարադրված պահանջների պահպանմամբ՝ հետազոտի գործի ապացույցները, որից հետո միայն, դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման միջնորդության առկայության դեպքում՝ անդրադառնա այդ հարցի քննարկմանը» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 70-73):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ, 23-րդ հոդվածների, 180-րդ հոդվածի 1-ին մասի, 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 398-րդ հոդվածի 5-րդ մասի, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ, 182-րդ հոդվածների պահանջները: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է Ա.Բաբայանի և Ս.Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշմանը:

10. Բողոքի հեղինակը նշել է, որ Է.Նազդալյանի արարքում բացակայում է նրան վերագրվող հանցակազմի սուբյեկտիվ կողմը, քանի որ նա համոզված է եղել, որ «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությունն իր նկատմամբ գույքի բռնագանձման անհիմն ու անօրինական քաղաքացիական դատական պրոցեսներ է սկսել և պահանջ է ներկայացրել այդ դատական պրոցեսները կասեցնելու, իրեն պատկանող գույքերի վրայից անհիմն և ապօրինի արգելանքները հանելու, չհիմնավորված տույժերը և տուգանքները կասեցնելու և հարցը բանակցությունների միջոցով կարգավորելու վերաբերյալ: Այսինքն՝ Է.Նազդալյանը պահանջել է իր գույքը կամ, գտնվելով

բարելիւող մոլորության մեջ, պահանջել է իր կարծիքով իրեն պատկանող գույքը:

Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ ամբաստանյալ Է.Նագդալյանի գործողություններն ուղղված են եղել ոչ թե բանկին կամ տուժողին պատկանող գումարները հափշտակելուն, այլ իրեն պատկանող գումարները պաշտպանելուն:

Բողոքի հեղինակը փաստել է, որ ամբաստանյալ Է.Նագդալյանի արարքում բացակայում է նաև նրան վերագրվող հանցակազմի օբյեկտիվ կողմը, քանի որ բանկի նախագահի կողմից իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մասին հողված հրապարակելը չպետք է դիտարկել որպես վարկաբեկող կամ նրա օրինական շահերը և իրավունքները ոտնահարող:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը գտել է, որ ամբաստանյալ Է.Նագդալյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը, ուստի այս հիմքով պետք է նրան արդարացնել:

11. Բողոքաբերը գտել է, որ մեղադրող կողմը մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու որոշումը կայացրել է առանց դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտման, որը քրեադատավարական օրենքի էական խախտում է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավական ռեժիմով մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում կայացնելուց հետո մեղադրողը բոլոր դեպքերում պարտավոր էր կազմել նոր մեղադրական եզրակացություն, ինչը չի կատարել՝ խախտելով Ս.Նալբանդյանի գործով Վճարելի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅՔԲԴ-2/0144/01/09 որոշման պահանջը:

12. Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ պատճառաբանված չէ Առաջին ատյանի դատարանի այն եզրահանգումը, որ ամբաստանյալ Է.Նագդալյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելի չէ:

13. Բողոքի հեղինակը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռը բեկանելով և գործն ուղարկելով ստորադաս դատարան՝ նոր քննության, հանդես է եկել մեղադրանքի կողմում՝ հնարավորություն տալով մեղադրողին նոր քննության ընթացքում շտկելու նախորդ դատական քննության ընթացքում թույլ տրված բացթողումը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի գործադրմամբ փոփոխելու առաջադրված մեղադրանքը:

14. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2015 թվականի մարտի 20-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

15. Վճարելի դատարանը գտնում է, որ մեղադրանքը փոփոխելու կարգի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդված) խախտում արձանագրելու դեպքում վերադաս ատյանի դատարանի լիազորությունների, ինչպես նաև մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելիս կայացվող դատավարական որոշման բնույթի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

1. Մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդված) և դրա խախտում արձանագրելու դեպքում վերադաս ատյանի դատարանի լիազորությունները.

16. Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանն իրավասու էր արդյոք մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու կարգի խախտում արձանագրելու հիմքով բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և գործն ուղարկել նոր քննության՝ նշելով գործի նոր քննության ընթացքում մեղադրողի կողմից օրենքով սահմանված կարգով մեղադրանքը փոփոխելու հնարավորության մասին:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի համաձայն՝ «1. *Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:*

2. *Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վարթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Մեղադրանքը խսրացման առումով փոխելը թույլատրվում է միայն սույն օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի համաձայն՝ «1. *Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խսրացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայր են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայրնի չեն եղել և չէին կարող հայրնի լինել մինչդատական վարույթում, և եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու, ապա դատարանին ներկայացնում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու*

համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: Մեղադրողը նման միջնորդությամբ կարող է հանդես գալ մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը:

(...)

3. Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խարսցման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղաագրվում է (...):»:

18. Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելով Ա.Բարայանի և Ս.Թումանյանի գործով որոշման մեջ՝ Վճռարեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «[Մ]եղադրողը օբյեկտիվորեն կրում է դատարան ներկայացրած մեղադրանքի, այդ թվում՝ մեղաագրվող արարքին տրված քրեաիրավական որակման հիմնավորվածության ուսույցը և օրենսդրական կարգավորման մակարդակով սրանում է առաջին աստիճանի դատարանում այն փոփոխելու իրավական հնարավորություն: Դատախազի կողմից վերոնշյալ հնարավորությունը չօգտագործելու դեպքում դատարանն իրավասու չէ իր վրա վերցնել մեղադրողի գործառույթները և դուրս գալ ամբաստանյալին նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքի սահմաններից: Դատական քննության փուլում դատարանի խնդիրն է ստուգել ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունն ու ապացուցվածությունը, և եթե ապացույցների հետազոտման արդյունքում մեղաագրվող արարքը կհաստատվի, դատարանը պարտավոր է կայացնել համապատասխան դատական ակտ այն քրեաիրավական որակման սահմաններում, որը նշված հանցավոր արարքին տրվել է մեղադրական եզրակացությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե հաստատված փաստական հանգամանքների պայմաններում ամբաստանյալի արարքը պետք է լրացուցիչ որակվեր նաև այլ հոդվածներով, թե՛ ոչ:

[Ա]ռաջին աստիճանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իր իրավունքը չիրացնելով՝ մեղադրողը քրեական գործի հետագա քննությունների ընթացքում զրկվում է նման նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորությունից» (տե՛ս Արմեն Զիվանի Բարայանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 23-րդ կետը):

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրողին քրեադատավարական օրենքով տրված՝ առաջին աստիճանի դատարանում մեղադրանքը փոխելու իրավունքը բացարձակ չէ, և մեղադրողն իր վերոգրյալ լիազորությունը պետք է իրականացնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածի կանոնների պահպանմամբ, որոնք հստակ սահմանում են ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու կարգն ու սահմանները: Այսպես՝ նշված իրավանորմը

սահմանում է դատարանում մեղադրանքի փոփոխման երկու ռեժիմ՝ փոփոխում քննչական գործողությունների կատարմամբ, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասեր), և փոփոխում առանց քննչական գործողություններ կատարելու, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցներն անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մաս) (առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իրավական ընթացակարգերի մասին տես *Սուրեն Կարոյի Նալբանդյանի* գործով Վճարելի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅՔԲԴ2/0144/01/09 որոշման 19-25-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իր իրավունքը պատշաճ իրականացնելու համար դատախազը պետք է գործի քրեադատավարական օրենքով սահմանված վերոգրյալ երկու իրավական ռեժիմներից որևէ մեկով, հակառակ դեպքում նրա գործողություններն ապօրինի են և որևէ իրավական հետևանք առաջացնել չեն կարող: Այլ խոսքով՝ դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածով սահմանված կարգի խախտմամբ՝ մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու մասին որոշման կայացումը հավասարազոր է օրենքով սահմանված կարգով՝ առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իրավական հնարավորությունը չօգտագործելուն: Այս դեպքում ևս դատարանն իրավասու չէ իր վրա վերցնել մեղադրողի գործառույթները, դուրս գալ ամբաստանյալին նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքի սահմաններից: Դատարանը պարտավոր է դատաքննության արդյունքներով կայացնել համապատասխան դատական ակտ այն քրեաիրավական որակման սահմաններում, որը նշված հանցավոր արարքին տրվել է մեղադրական եզրակացությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե հաստատված փաստական հանգամանքների պայմաններում ամբաստանյալի արարքը պետք է լրացուցիչ որակվեր նաև այլ հոդվածներով, թե՛ ոչ (*Կրեն Արսեն Մկրտիչի Սերոբյանի և Էդվարդ Վահանի Պետրոսյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0002/01/13 որոշման 22-րդ կետը*):

19. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ գործի դատական քննությունը սահմանափակված է մեղադրանքի այն ծավալով, որն առաջադրվել է ամբաստանյալին (*դատական քննության սահմանների վերաբերյալ մանրամասն տես Արթուր Սերոբյանի վերաբերյալ Վճարելի դատարանի 2007 մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07 որոշումը*): Հիշյալ կանոնից բացառություն են մեղադրողի

կողմից մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու դեպքերը, որոնց կառուցակարգը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածով: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ բացակայում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածով նախատեսված բացառության կանոնը, պետք է գործի ընդհանուր կանոնը, որից ցանկացած շեղում կհանգեցնի ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքի, հետևաբար՝ օրինականության սկզբունքի խախտման:

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածով նախատեսված կառուցակարգն ուղղված է պետությանը՝ ի դեմս մեղադրողի, իսկ պետության կողմից թույլ տրված սխալներն ու բացթողումները չեն կարող վերացվել անձի իրավունքների սահմանափակման միջոցով: Հետևաբար *Վճարելի դատարանն անթույլատրելի է համարում այն իրավիճակը, երբ վերադաս դատարանի կողմից կարող է քեկանվել գործով կայացված դատավճիռը և գործն ուղարկվել առաջին արյանի դատարան՝ նոր քննության, որպեսզի նոր քննության ընթացքում մեղադրողը հնարավորություն արանա շտկելու նախորդ դատական քննության ընթացքում թույլ տրված բացթողումը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածի գործադրմամբ փոփոխի առաջադրված մեղադրանքը: Եման մուրեցման դեպքում ուղղակիորեն կինատարագրկվի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը (տես Արմեն Զիվանի Բաբայանի և Սուրեն Ռազմիկի Թումանյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 23-րդ կետը):*

Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ այն դեպքում, երբ վերադաս ատյանի դատարանն արձանագրում է մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, գործն իրավասու է ուղարկել Առաջին ատյանի դատարան նոր քննության, եթե իր իրավասությունների շրջանակներում անհնարին է փոփոխել վերանայվող դատական ակտը: Այս դեպքում վերադաս ատյանի դատարանը պարտավոր է նոր քննության այնպիսի ծավալ սահմանել, որը կբացառի նոր քննության ընթացքում մեղադրողի կողմից թույլ տրված սխալը կամ բացթողումը վերանորոգելու հնարավորությունը: Վճարելի դատարանն արձանագրում է, որ հակառակ մոտեցման դեպքում կվտանգվեն անձի՝ մրցակցային դատավարության, ողջամիտ ժամկետներում գործի քննության և պաշտպանության իրավունքները:

20. Անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատախազի կողմից հաստատված և Առաջին ատյանի դատարան ուղարկված մեղադրական եզրկացության համաձայն՝ Է.Նագդալյանը, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ ունենալով ժամկետանց վարկային պարտավորություններ, վճարման ժամկետներն երկարաձգելու

կամ վարկային պայմանագրերի պայմաններն ի նպաստ իրեն որևէ կերպ փոփոխելու նպատակով կատարել է շորթում և նրան մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանում կայացած դատական նիստի ժամանակ՝ գործի քննության նախապատրաստական փուլում, մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածով, դատարան է ներկայացրել որոշում, որով ամբաստանյալ Է.Նագդալյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և դատավարական փաստաթղթերում առկա միևնույն գործողություններին տրվել այլ իրավաբանական որակում, մասնավորապես՝ Է.Նագդալյանի գործողությունները որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Է.Նագդալյանի նկատմամբ կայացրել է մեղադրական դատավճիռ՝ այն քրեաիրավական որակման սահմաններում, որը տրվել է մեղադրողի կողմից փոփոխված մեղադրանքի շրջանակներում (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Է.Նագդալյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու վերաբերյալ մեղադրողի որոշումն իրավացիորեն ճանաչել է ապօրինի և հետևանք չառաջացնող՝ փաստարկելով, որ դատախազը պատշաճ չի իրականացրել Առաջին ատյանի դատարանում մեղադրանքը փոփոխելու իր իրավունքը և չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավական ռեժիմը, այն է՝ մեղադրանքի փոփոխումը իրականացրել է մինչև դատաքննության ընթացքում գործի ապացույցները հետազոտելը: Արդյունքում Վերաքննիչ դատարանը բեկանել է դատավճիռը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Վերաքննիչ դատարանը նաև սահմանել է նոր քննության ծավալ՝ նշելով. «Նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասով շարադրված պահանջների պահպանմամբ հետազոտի գործի ապացույցները, որից հետո միայն, դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման միջնորդության առկայության դեպքում անդրադառնա այդ հարցի քննարկմանը» (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերոնշյալ փաստերից երևում է, որ Վերաքննիչ դատարանը դատավճիռը բեկանել և գործն ուղարկել է նոր քննության մեղադրողի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգի խախտմամբ մեղադրանքը փոփոխելու պատճառաբանությամբ, մինչդեռ քննարկման առարկա չդարձնելով վերաքննիչ բողոքի մնացած հիմքերը և հիմնավորումները՝ չի պատճառաբանել իր

իրավասության սահմաններում դատական ակտը փոփոխելու անհնարի-
նությունը: Այլ խոսքով՝ Վերաքննիչ դատարանն ուղղակիորեն հնարա-
վորություն է տվել մեղադրողին գործի նոր քննության ընթացքում շտկե-
լու նախորդ դատական քննության ընթացքում թույլ տրված սխալը և
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածի գործադր-
մամբ փոփոխելու առաջադրված մեղադրանքը, այն էլ այն դեպքում, երբ
վերաքննիչ վարույթն իրականացվել է պաշտպանության կողմի ներկա-
յացրած վերաքննիչ բողոքի հիման վրա:

21. Նախորդ կետում շարադրված փաստերը և դրանց վերլուծությունը
գնահատելով սույն որոշման 18-19-րդ կետերում ձևավորած իրավա-
կան դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանը գտնում է, որ
Վերաքննիչ դատարանն իրավասու չէր մեղադրողի կողմից մեղադրանքը
փոփոխելու կարգի խախտում արձանագրելու հիմքով բեկանել Առաջին
ատյանի դատարանի դատավճիռը և գործն ուղարկել նոր քննության՝ նշե-
լով գործի նոր քննության ընթացքում մեղադրողի կողմից օրենքով սահ-
մանված կարգով մեղադրանքը փոփոխելու հնարավորության մասին:

*II. Մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելիս կայացվող դատա-
վարական որոշման բնույթը.*

22. Վճարելի դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական
հարցը հետևյալն է. արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
3091-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա մեղադրանքը փոփոխելիս
նոր մեղադրական եզրակացություն չկազմելով մեղադրողը թույլ է տվել
մեղադրանքը փոփոխելու դատավարական կարգի խախտում:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածի 2-րդ
մասի համաձայն. «Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմ-
քերի առկայության դեպքում դատարանը դատախազի միջնորդությամբ
հերաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական
գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար:
Նիստը կարող է հերաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ
այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գոր-
ծողություններ կատարելու համար ողջամերորեն պահանջվում է ավելի
երկար ժամկետ:

Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում
մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփո-
խելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որը ձեռք բերված
նյութերի հետ ներկայացնում է դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդվածի համա-
ձայն՝

«1. Մեղադրական եզրակացությունը բաղկացած է նկարագրական-
պարճատարանական և եզրափակիչ մասերից:

2. Նկարագրական-պատճառաբանական մասում քննիչը շարադրում է հանցագործության հանգամանքները, մեղադրյալին, ինչպես նաև տուժողին բնութագրող հանգամանքները, մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն նրա բերվող փաստարկները և այդ փաստարկների ստուգման արդյունքում հավաքված ապացույցները:

Եթե քրեական հետապնդումը հարուցվել է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ապա այդ մասին պետք է նշվի մեղադրական եզրակացության նկարագրական - պատճառաբանական մասում:

3. Եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի մասին տեղեկությունները և առաջադրված մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով փյալ հանցագործությունը նախարեսող քրեական օրենքի նորմերը:

4. Քննիչն պտրագրում է մեղադրական եզրակացությունը՝ նշելով այն կազմելու ժամանակը և տեղը»:

23.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի հիման վրա մեղադրանքը փոխելու դեպքում մեղադրողի կողմից կայացվող դատավարական որոշման հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ս.Նալբանդյանի և Ա.Պապյանի գործերով որոշումներում:

Մասնավորապես, Ս.Նալբանդյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «[Մ]եղադրական եզրակացությունը հանդիսանում է այն դատավարական փաստաթուղթը, որով ամփոփվում են նախնական քննության արդյունքները, ինչպես նաև հիմնավորվում են քննիչի ենթադրությունները՝ մեղադրյալի մեղավորության և նրա գործողությունների իրավաբանական որակման մասին: Մեղադրական եզրակացության կարևորության մասին է վկայում այն հանգամանքը, որ դրանով ընդգծվում են քրեական գործի դատական քննության սահմանները: Մեղադրական եզրակացության նշանակությունն արտահայտվում է նաև նրանում, որ այն մեղադրյալին հնարավորություն է տալիս կազմակերպել և իրականացնել իր պաշտպանության իրավունքը՝ առաջադրված մեղադրանքի և այն հաստատող ապացույցների շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որը ձեռք բերված նյութերի հետ ներկայացնում է դատարան: Բսկ նույն հոդվածի 3-րդ մասը, որը մեղադրողին իրավունք է տալիս փոխել մեղադրանքը, ընդհանրապես չի սահմանում, թե նշված մասի հիմքով մեղադրանքը փոխելու դեպքում մեղադրողի կողմից ինչ դատավարական որոշում պետք է կայացվի:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված իրավական ռեժիմներով դատարանում մեղադրանքը փոփոխելիս մեղադրողի կողմից պետք է կայացվի ինչպես մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու մասին որոշում, այնպես էլ կազմվի նոր մեղադրական եզրակացություն» (տես Սուրեն Նալբանդյանի վերաբերյալ Վճարելի դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՀՅՔԲԴ2/0144/01/09 որոշման 24-25-րդ կետերը):

Մեջբերված և Ս.Նալբանդյանի գործով որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը վերահաստատելով Ա.Պապյանի գործով որոշման մեջ՝ Վճարելի դատարանը գրել է, որ. «[Ս]կզբնական մեղադրանքի փոփոխման դեպքում մեղադրանքի վերջնական և ամբողջական ձևակերպումը պարունակող փաստաթղթի՝ մեղադրական եզրակացության կազմումը կվերացնի անփոփոխ թողնված մեղադրանքից և փոփոխված մեղադրանքից պաշտպանվող անձանց միջև առկա անհավասար իրավական վիճակը» (տես Արկադի Պապյանի գործով Վճարելի դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 20-րդ կետը):

23.2. Մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքը փոփոխելիս նոր մեղադրական եզրակացություն կազմելու իրավաչափության հարցը քննարկման առարկա է դարձվել ՀՀ սահմանադրական դատարանի կողմից, որը թիվ ՄԴՌ-934 որոշման շրջանակներում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) դատարան ուղարկված գործով «նոր մեղադրական եզրակացություն» կազմվել չի կարող և ինչպես վիճարկվող [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մաս], այնպես էլ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի այլ նորմերով այդպիսի իրավակարգավորում նախատեսված չէ, հետևաբար՝ քրեադատավարական նորմերն այլ կերպ մեկնաբանվել չեն կարող: Նոր մեղադրական եզրակացություն կամ մեղադրական եզրակացության վերակազմում կարող է տեղի ունենալ միայն մինչդարական վարույթում՝ նշված օրենսգրքի 274-րդ հոդվածում ամրագրված կանոններին համապատասխան՝ լրացուցիչ քննության շրջանակներում» (տես ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3091-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ ՄԴՌ-934 որոշման 7-րդ կետը):

24. Սահմանադրական դատարանի մեջբերված դիրքորոշման հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ առկա է Ս.Նալբանդյանի և Ա.Պապյանի գործերով որոշումներում արտահայտած և սույն որոշման 23.1-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները վերանայելու անհրաժեշտություն: Այսպես՝ Վճարելի դատարանը, վերանայելով Ս.Նալբանդյանի և Ա.Պապյանի գործերով արտահայտած իրավական

դիրքորոշումները՝ մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելիս մեղադրական եզրակացություն կազմելու մասով, արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի հիման վրա դատարանում մեղադրանք փոփոխելիս մեղադրողն իրավասու չէ կազմել նոր մեղադրական եզրակացություն:

Դրա հետ մեկտեղ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Սահմանադրական դատարանը վերոնշյալ որոշմամբ քննարկել է մեղադրողի կողմից մեղադրական եզրակացություն կազմելու լիազորության առկայության հարցը՝ չանդրադառնալով դատարանում մեղադրանքը փոփոխելիս նրա կողմից կայացվող դատավարական որոշման բնույթին՝ բովանդակային առումով և դրա նշանակությանն անձի իրավունքների ապահովման տեսանկյունից:

Այս կապակցությամբ Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելիս կայացվող դատավարական որոշման բնույթի հետ կապված և *Ս.Նալբանդյանի* և *Ա.Պապյանի* գործերով կայացված որոշումներում բարձրացված խնդիրները շարունակում են մնալ չուծված՝ վտանգելով ՀՀ Սահմանադրությամբ և մի շարք միջազգային փաստաթղթերով երաշխավորված անձի՝ պաշտպանության իրավունքը: Մասնավորապես, Վճարելի դատարանը վերահաստատում է *Ս.Նալբանդյանի* և *Ա.Պապյանի* գործերով որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներն այն մասին, որ

- մեղադրական եզրակացությամբ ընդգծվում են քրեական գործի դատական քննության սահմանները, այն մեղադրյալին հնարավորություն է տալիս կազմակերպել և իրականացնել իր պաշտպանության իրավունքը՝ առաջադրված մեղադրանքի և այն հաստատող ապացույցների շրջանակներում,

- մեղադրանքի վերջնական և ամբողջական ձևակերպումը պարունակող փաստաթղթի կազմումը կվերացնի անփոփոխ թողնված մեղադրանքից և փոփոխված մեղադրանքից պաշտպանվող անձանց միջև առկա անհավասար իրավական վիճակը:

Պաշտպանության իրավունքի իրականացման համար մեղադրանքի ձևակերպման հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումները հիմնված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա: Մասնավորապես, Կամասինսկիի վերաբերյալ գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («ա») ենթակետի դրույթները թելադրում են շահագրգռված անձին «մեղադրանքի» մասին տեղեկացնելու հարցում ցուցաբերել ծայրահեղ զգուշավոր մոտեցում: Մեղադրական եզրակացությունը վճռորոշ դեր է խաղում քրեական հետապնդման մեջ. դրա հանձնման պահից մեղադրվող անձը համարվում է իրեն ներկայացված

մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին պաշտոնապես և գրավոր ձևով տեղեկացված (տե՛ս Kamasinski v. Austria, 1989 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 9783/82, կետ 79):

Վերոգրյալից բացի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («ա») ենթակետի դրույթները մեղադրյալին իրավունք են վերապահում տեղեկացված լինելու ոչ միայն մեղադրանքի համար առիթ հանդիսացած նյութական փաստերի մասին, այլ նաև այդ փաստերի մանրամասն իրավական որակման մասին (տե՛ս Pelissier and Sassi v. France, 1999 թվականի ապրիլի 25-ի վճիռը, գանգատ թիվ 25444/94, կետ 51):

Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ ներկայացված մեղադրանքի, հետևաբար դատարանի կողմից դրա հնարավոր իրավական որակման մասին մեղադրյալի ճշգրիտ և լրիվ տեղեկացումը քրեական դատավարությունում արդար դատաքննության էական նախապայման է (տե՛ս Pelissier and Sassi v. France, 1999 թվականի ապրիլի 25-ի վճիռը, գանգատ թիվ 25444/94, կետ 52): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («բ») ենթակետի մասով բերված բողոքի վերաբերյալ Եվրոպական դատարանը գտել է, որ («ա») և («բ») ենթակետերը կապված են միմյանց հետ, և որ մեղադրանքի բնույթի և առիթների մասին տեղեկացված լինելու իրավունքը պետք է դիտել պաշտպանության նախապատրաստության իրավունքի լույսի ներքո (տե՛ս Pelissier and Sassi v. France, 1999 թվականի ապրիլի 25-ի վճիռը, գանգատ թիվ 25444/94, կետ 54):

25. Անձի պաշտպանության իրավունքի համատեքստում զարգացնելով *Ս. Նայբանդյանի* և *Ա. Պասայանի* գործերով որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածներով սահմանված ռեժիմներով մեղադրանքը լրացնելիս կամ փոփոխելիս մեղադրողը պետք է կայացնի մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշում, որը պետք է պարունակի ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի վերջնական և ամբողջական ձևակերպումը: Մասնավորապես, մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն: Մինևույն ժամանակ մեղադրանքից պաշտպանվելու ամբաստանյալի իրավունքի պատշաճ իրականացումն ապահովելու նկատառումներից ելնելով՝ մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու

մասին որոշման մեջ պետք է արտացոլվեն նաև ամբաստանյալի մեղավորությունը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն նրա բերվող փաստարկները և այդ փաստարկների ստուգման արդյունքում հավաքված ապացույցները:

Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածով սահմանված ռեժիմներով մեղադրանքը փոփոխելիս մեղադրողի կողմից կայացվող՝ մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշումը փոխարինում է մեղադրական եզրակացությանը, հետևաբար այն բովանդակային առումով պետք է համապատասխանի մեղադրական եզրակացության բովանդակությանը ներկայացվող պահանջներին (մեղադրական եզրակացության բովանդակությանը ներկայացվող պահանջների վերլուծությունը մանրամասն տեսնելու համար՝ *Վճռաբեկ դատարանի՝ Արկադի Պարվակյանի Պապյանի գործով 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշման 18-րդ կետը, Գրիգոր Խաչատրյուրի Ճաղարյանի և այլոց գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ և 28-րդ կետերը, Արթուր, Մացակ և Արմեն Բադալյանների գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի ԼԴ/0227/01/12 որոշման 18-րդ կետը*): Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հակառակ մեկնաբանման դեպքում ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ծավալը, հետևաբար նաև՝ դատական քննության սահմանները ձեռք կբերեն անորոշ բնույթ՝ անձի՝ պաշտպանության իրավունքը դարձնելով վերացական և պատրանքային, ինչն անթույլատրելի է ժողովրդավարական հասարակությունում:

26. Սույն գործի փաստերը (տեսնելու սույն որոշման 6-րդ կետը) գնահատելով սույն որոշման 24-25-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա մեղադրանքը փոփոխելիս նոր մեղադրական եզրակացություն չկազմելով մեղադրողը թույլ չի տվել մեղադրանքը փոփոխելու դատավարական կարգի խախտում:

27. Ամփոփելով սույն որոշման իրավական և փաստական վերլուծություններն ու եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրողին հնարավորություն ընձեռելով և անուղղակիորեն առաջարկելով գործի նոր քննության ընթացքում կրկին փոփոխել առաջադրված մեղադրանքը՝ Վերաքննիչ դատարանն ուղղորդել է մեղադրանքի կողմին՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ և թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի խախտում, որի արդյունքում խախտվել են անձի՝ մրցակցային դատավարության, ողջամիտ ժամկետում գործի քննության և պաշտպանության իրավունքները: Արդյունքում Վերաքննիչ դատարանը կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ

հողվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ: Նշված դատավարական իրավունքի խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու հիմք են:

28. Ինչ վերաբերում է բողոքարերի մնացած փաստարկներին (տե՛ս սույն որոշման 10-րդ և 12-րդ կետերը)՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ իրավասու չէ դրանք գնահատման ենթարկել, քանի որ Վերաքննիչ դատարանն այդ փաստարկները քննարկման առարկա չի դարձրել: Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկի և համապատասխան գնահատական տա քննարկվող փաստարկներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Էդուարդ Հայկազի Նազդալյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի մարտի 20-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Էդուարդ Նազդալյանի խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

49.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՔԴ/0100/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի որոշման դեմ դիմող Արգիշտի Գեորգիի Կիվիլրյանի ներկայացուցիչ Ե.Վարոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արգիշտի Կիվիլրյանի ներկայացուցիչներ Լ.Մահակյանը և Ե.Վարոսյանը 2014 թվականի դեկտեմբերի 27-ին բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալ

Է.Հակոբյանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 28-ի որոշումը (այսուհետ՝ նաև Քննիչի որոշում):

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ ներկայացուցիչների բողոքը մերժվել է:

2. Վերագրյալ որոշման դեմ դիմողի ներկայացուցիչ Ե.Վարոյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի որոշման դեմ դիմող Ա.Կիվիլյանի ներկայացուցիչ Ե.Վարոյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Դիմող Ա.Կիվիլյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոյանի կողմից ներկայացված բողոքի կապակցությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված ու վարույթը կարճված թիվ 61202314 քրեական գործի նյութերը վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվել են Առաջին ատյանի դատարան, և դրանց ուսումնասիրության արդյունքում 2015 թվականի փետրվարի 23-ին կայացվել է դատական ակտ (տե՛ս նյութեր, գ.թ. 21, 27-37):

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 13-ի գրությամբ բողոքի վերաբերյալ դատարանում ստացված թիվ 61202314 քրեական գործի նյութերն ուղարկվել են Վերաքննիչ դատարան (տե՛ս նյութեր, գ.թ. 58):

6. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 5-ի գրությամբ Առաջին ատյանի դատարան են ուղարկվել թիվ 61202314 քրեական գործի նյութերը, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ նույն թվականի մայիսի 13-ի գրությամբ դրանք վերադարձվել են վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս նյութեր, գ.թ. 93-94):

7. Թիվ 61202314 քրեական գործի նյութերը Վճարելի դատարան չեն ներկայացվել, իսկ բողոքի կապակցությամբ ստորադաս դատարաններում կազմված և այնուհետև Վճարելի դատարան ներկայացված նյութերում դրանք առկա չեն: Ստորադաս դատարաններում կազմված նյութերում բացակայում է նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին Քննիչի բողոքարկվող որոշումը (տե՛ս նյութեր, գ.թ. 1-95):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճռարեկ բողոք բերած անձը գտել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով և 393-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավադրույթները, ինչպես նաև խախտել է ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ և 5-րդ հոդվածների պահանջները՝ արդյունքում կայացնելով չհիմնավորված դատական ակտ:

Բողոքի հեղինակը, հիմք ընդունելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 26-ի որոշումը, փաստել է, որ 2013 թվականի օգոստոսի 1-ին Ա.Կիվիլոյանին բերման ենթարկելիս ՀՀ ոստիկանության աշխատակիցների գործողությունները եղել են ոչ իրավաչափ: Ըստ բողոքաբերի՝ դիմողի նկատմամբ գործադրվել է անհամաչափ ուժ, և պատճառվել են մարմնական տարբեր վնասվածքներ, ինչը վկայում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված՝ «անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի» մասին: Բացի այդ, բողոքի հեղինակը մատնանշել է Ա.Կիվիլոյանի՝ անազատության մեջ օրենքով սահմանված ժամկետից ավելի գտնվելու հանգամանքը՝ արձանագրելով անձի ազատության իրավունքի խախտում:

Վերոգրյալ հանգամանքները համադրելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Միխեյեվ ընդդեմ Ռուսաստանի* (Mikheyev v. Russia, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռ, գանգատ թիվ 77617/01), *Մամմադովը (Ջալալօղլուն) ընդդեմ Ադրբեյջանի* (Mammadov (Jalaloglu) v. Azerbaijan, 2007 թվականի հունվարի 11-ի վճիռ, գանգատ թիվ 34445/04), *Բառաբանշիկովն ընդդեմ Ռուսաստանի* (Barabanshchikov v. Russia, 2009 թվականի հունվարի 8-ի վճիռ, գանգատ թիվ 36220/02) գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների և ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալ Է.Հակոբյանի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման հիմնավորումների հետ՝ բողոք բերած անձը եզրահանգել է, որ Ա.Կիվիլոյանի նկատմամբ վատ վերաբերմունքի, ինչպես նաև նրա ազատության իրավունքի խախտման կապակցությամբ պետական մարմինների կողմից արդյունավետ քննություն չի իրականացվել:

9. Անդրադառնալով ստորադաս դատարանների դատական ակտերին՝ բողոքի հեղինակը վկայակոչել է Վճռարեկ դատարանի՝ Ֆրունզիկ Գալստյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0058/11/09 գործով 2010 թվականի մարտի 26-ի և *Էրիկ Մարգարյանի* վերաբերյալ թիվ ՍԴ3/0045/01/13

գործով 2014 թվականի մարտի 28-ի որոշումները ու արձանագրել, որ թե՛ Առաջին ատյանի դատարանի և թե՛ Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել են չպատճառաբանված որոշումներ, ինչը հանգեցրել է ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ներկայացուցիչ Ե.Վարոյանը խնդրել է կայացնել նոր դատական ակտ և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել քրեական գործով վարույթը կարճելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 28-ի որոշումը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված են արդյոք Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 23-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի դատական ակտերն այն պայմաններում, երբ բողոքի կապակցությամբ կազմված նյութերում բացակայում են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը:

12. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝
«1. Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:
(...)

4. (...) [Զ]րեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, փոստդղի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և

գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատարանի կողմից:

(...)

4. (...) Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր (...):»:

13. Մեջբերված իրավական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Պյեր Ժան Մուրադյանի վերաբերյալ որոշմամբ*, որով դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) [Վ]արույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքի քննության դատական վարույթի օբյեկտը բողոքի կապակցությամբ ներկայացված նյութերն են, որոնց հիման վրա դատարանը գնահատում է անձի իրավունքների և ազատությունների խախտման առկայությունը: Հաշվի առնելով, որ վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության հիմքում դրված նյութերը գրնվում են նրա փրկապետության ներքո՝ օրենսդիրն անձի՝ դատական պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով վարույթն իրականացնող մարմնի համար սահմանել է այդ նյութերը դատարան ներկայացնելու պարտականություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մաս): Ընդ որում, վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան պետք է ներկայացվեն բողոքին վերաբերող նյութերը՝ ինչպես բողոքարկվող որոշման կամ գործողության օրինականությունը ենթադրաբար հիմնավորող, այնպես էլ՝ հերքող:

Այսպիսով, վարույթն իրականացնող մարմնի կողմից բողոքի վերաբերյալ նյութերը դատարան ներկայացնելու պահանջը կոչված է ապահովելու մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանին անհրաժեշտ փաստական հիմքը: Եշված նյութերով է պայմանավորված դատարանի կողմից մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության ու հիմնավորվածության պարզաճ ստուգում իրականացնելու և դրա արդյունքում հիմնավորված եզրահանգումներ կատարելու օբյեկտիվ հնարավորությունը:

(...) Նույն կերպ վերադաս դատական արյանը մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության դատական ստուգման արդյունքում կայացված դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս պետք է հիմք ընդունի բողոքը քննելիս ստորադաս արյանի տրամադրության տակ եղած նյութերը և դրանց համապետությունը համապատասխան գնահատական տա բողոքարկի փաստարկներին: Միայն այդ պարագայում հնարավոր կլինի պարզել դատարանի հետևությունների համապատասխանությունը գործում առկա նյութերին: Այլ խոսքով՝ վերադաս դատական արյանի կողմից ստորադաս դատական արյանի որոշման վերանայումը

հնարավոր է դատական ակտը կայացրած դատարանի հետազոտած նյութերի հիման վրա, հակառակ դեպքում վերադաս դատական արյանի որոշումը չի համապատասխանի դատական ակտերին ներկայացվող օրինականության և հիմնավորվածության պահանջներին՝ հանգեցնելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի արդար դատաքննության իրավունքի խախտման (...):

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա դատարան ներկայացված և վերջինիս կողմից հետազոտված նյութերը վարույթն իրականացնող մարմնին վերադարձնելու վերաբերյալ պահանջ: Իսկ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման կամ գործողության դեմ ներկայացված բողոքի քննության հետ կապված նյութերը կազմվում են առանձին դատական գործի տեսքով, որի բաղկացուցիչ մասն են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը: Այլ խոսքով՝ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը դատարանը պարտավոր է կցել բողոքի կապակցությամբ դատարանում կազմված նյութերին, որպիսի պահանջն ուղղակիորեն հետևում է անձի արդար դատաքննության իրավունքը՝ դատական ակտը բողոքարկելու և վերադաս դատական արյանների կողմից բողոքարկված դատական ակտը վերանայելու տեսանկյունից, ինչպես նաև պետական մարմինների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունն ապահովելու պահանջներից» (տե՛ս Պյեր Ժան Մուրադյանի վերաբերյալ Վճարելի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0143/11/14 որոշման 14-15-րդ, 17-րդ կետերը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հետազոտելով վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան ներկայացված թիվ 61202314 քրեական գործի նյութերը, 2015 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ մերժել է դիմողի ներկայացուցիչների բողոքը (տե՛ս սույն որոշման 1-ին և 4-րդ կետերը), այնուհետև 2015 թվականի մարտի 13-ի գրությամբ վերոնշյալ նյութերն ուղարկել է Վերաքննիչ դատարան (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Վերաքննիչ դատարանը 2015 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ դիմողի ներկայացուցչի բողոքը մերժել է, իսկ նույն թվականի մայիսի 5-ի գրությամբ թիվ 61202314 քրեական գործի նյութերն ուղարկել է Առաջին ատյանի դատարան, որի՝ նույն թվականի մայիսի 13-ի գրությամբ այդ նյութերը վերադարձվել են վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Թիվ 61202314 քրեական գործի նյութերը Վճարելի դատարան չեն ներկայացվել, իսկ բողոքի կապակցությամբ ստորադաս դատարաններում կազմված և այնուհետև Վճարելի դատարան ներկայացված նյութերում դրանք առկա չեն: Ընդ որում, ստորադաս դատարաններում կազմված

նյութերում բացակայում է անգամ Քննիչի՝ բողոքարկվող որոշումը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Նախորդ կետում շարադրված փաստերը վերլուծելով սույն որոշման 13-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դիմող Ա.Կիվիլյանի ներկայացուցչի բողոքի կապակցությամբ ստորադաս դատարաններում կազմված նյութերում առկա չեն վարույթն իրականացնող մարմնի՝ բողոքի վերաբերյալ դատարան ներկայացված նյութերը: Հիշյալ նյութերը ստորադաս դատարանները չեն կցել բողոքի կապակցությամբ կազմված նյութերին, դրանք Առաջին ատյանի դատարանը վերադարձրել է վարույթն իրականացնող մարմնին, ինչի արդյունքում սահմանափակվել է Վճարելի դատարանի կողմից ստորադաս դատարանի կայացրած դատական ակտը դատական ստուգման ենթարկելու հնարավորությունը:

Վերոնշյալի հաշվառմամբ Վճարելի դատարանը գրկված է վճարելի բողոքում ներկայացված փաստարկներն ըստ էության քննարկելու և այդ առումով ստորադաս դատարանների որոշումներին իրավական գնահատական տալու հնարավորությունից:

Այսպիսով, Վճարելի դատարանը գտնում է, որ օրինական և հիմնավորված չեն Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 23-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի դատական ակտերն այն պայմաններում, երբ բողոքի կապակցությամբ կազմված նյութերում բացակայում են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 19-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 290-րդ հոդվածների խախտումներ, որոնք հանգեցրել են անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացնելուն: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 419-րդ հոդվածների, հիմք են կայացված դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Արգիշտի Գեորգիի Կիվիդյանի ներկայացուցիչ Ե.Վարոսյանի բողոքը մերժելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 23-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

50.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0231/01/14

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ՝
պաշտպան դատախազ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՔԱԼԱՇՅԱՆԻՍ.
ՅՈՒԶԲԱՇՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ ամբաստանյալ Նարեկ Արմենի Արմենակյանի պաշտպան Ավետիս Քալաշյանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 90261814 քրեական գործը:

2014 թվականի դեկտեմբերի 2-ին Նարեկ Արմենի Արմենակյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ և 235-րդ հոդվածների 1-ին մասերով:

Քննիչի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ մեղադրյալ Ն.Արմենակյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չեռանալու մասին ստորագրությունը:

2014 թվականի դեկտեմբերի 19-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի մարտի 2-ի դատավճռով Ն.Արմենակյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ և 238-րդ հոդվածների 1-ին մասերով: ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով Ն.Արմենակյանի նկատմամբ պատիժ է նշանակվել կալանք՝ 2 (երկու) ամիս ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված՝ պատիժները լրիվ գումարելու սկզբունքի կիրառմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 68-րդ և 69-րդ հոդվածներով սահմանված կարգով կալանքը փոխարինելով ազատազրկման՝ Ն.Արմենակյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 2 (երկու) ամիս ժամկետով: Խափանման միջոց չեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Վերոհիշյալ դատավճռի դեմ ամբաստանյալ Ն.Արմենակյանի պաշտպան Ա.Քալաշյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 6-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ ամբաստանյալ Ն.Արմենակյանի պաշտպան Ա.Քալաշյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմինը Ն.Արմենակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ և 238-րդ հոդվածների 1-ին մասերով մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ «(...) նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ 95532 գորամասի 3-րդ հրաձգային գումարտակի 3-րդ հրաձգային վաշտի 2-րդ դասակի 1-ին ջոկի հրաձիգ-սանիտար, կոչումով կրկուսեր սերժանտ, 2014թ.

սեպտեմբերի 25-ին վաշտի զինանոցի զինամթերքի արկղից հափշտակել է «ԱԿ», «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգների և «ՄԿՄ» կարաբինների համար նախատեսված, գործարանային արտադրության, ուսումնասիրության հանդիսացող 11 հատ 7.62մմ տրամաչափի փամփուշտ, որոնք սպորտինի կերպով պահել է գործարանի կենցաղային սպասարկման սենյակում, իսկ հաջորդ օրը փոխադրել է մարտական հենակետ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 62):

5.1. Նախաքննական մարմնի կողմից կազմված մեղադրական եզրակացությունում նշվում է. « (...) Գործով մեղադրյալ Ն.Արմենակյանը 2014թ. սեպտեմբերի 25-ին 3-րդ ՀԳՄ-ի 3-րդ ՀՎ-ի անձնակազմի հետ ներկայացել է վաշտի զինանոց՝ զինամթերք սրանալու համար, քանի որ հաջորդ օրը՝ սեպտեմբերի 26-ին գումարտակի անձնակազմը մեկնելու էր մարտական հերթապահության: Ն.Արմենակյանը, զինամթերք սրանալու և պահեստարարուփերը լիցքավորելու ընթացքում, տեսնելով, որ զինանոցի առջև գրնվող սպաների և մյուս զինծառայողների ուշադրությունն իր կողմը չէ, զինամթերքի արկղից հափշտակել է (...) ուսումնասիրության հանդիսացող 11 հատ 7.62մմ տրամաչափի փամփուշտ և պահել վաշտի պահեստասենյակում: Հաջորդ օրը՝ 26.09.2014թ. առավոտյան, իր հետ վերցրել է նախորդ օրը հափշտակած 11 հատ փամփուշտները և սպորտինի կերպով փոխադրել է մարտական հենակետ: 26.09.2014թ. 3-րդ ՀԳՄ-ի հրամանատար, փոխգնդապետ Խ.Սահակյանը (...) Ն.Արմենակյանի մոտից հայտնաբերել է հափշտակած 11 հատ փամփուշտները (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 79):

6. Մինչդատական վարությամբ Ն.Արմենակյանը հայտնել է հետևյալի մասին. « (...) Յուրաքանչյուր զինծառայող սրանում է 4 հատ պահեստարարուփ և 120 հատ փամփուշտ՝ բոլոր պահեստարարուփերը լիցքավորելու համար: (...) Տվյալ դեպքում՝ սեպտեմբերի 25-ին (...) [մեզ հարկացվել] էր նշված քանակով զինամթերք (...): Լիցքավորումն ավարտելուց հետո, տեսնելով, որ ինձ վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնում, զինամթերքի արկղի միջից բոլորից թաքուն վերցրեցի մի «բուռ» 7.62 տրամաչափի փամփուշտ, որոնք (...) [հ]աջորդ առավոտյան (...) հետս տարել եմ մարտական հենակետ» Բացի այդ, նշել է, որ փամփուշտների քանակը հաշված չի եղել և դրանց՝ 11 հատ լինելու մասին իմացել է գումարտակի հրամանատարի կողմից փամփուշտները հայտնաբերելուց հետո (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 26-27):

Այն հարցին, թե ինչ նպատակով էր վերցրել փամփուշտները, Ն.Արմենակյանը պատասխանել է. «Փամփուշտները վերցրել եմ առանց որևէ պարճառի կամ նպատակի, նախապես ես նման բան չէի պլանավորել, դա սրացվել է պահի ազդեցության տակ, որևէ կոնկրետ պարասխան չեմ կարող տալ»: Իսկ այն հարցին, թե տեղյակ է, որ իրավունք չունեն զինանոցի արկղից փամփուշտ վերցնել, նշել է. «Գիտակցել եմ, որ

դա անթույլատրելի է, սակայն չեմ մտածել, որ կարող է լուրջ հետևանք ունենա այդ արարքը»: Բացի այդ, Ն.Արմենակյանն ասել է, որ **եթե փամփուշոջները չհայտնաբերվեին, ապա մարտական հերթապահությունից վերադառնալուց հետո դրանք վերադարձնելու էր զինանոց** (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 26-27):

Վերոգրյալը գրեթե նույնությամբ Ն.Արմենակյանը կրկնել է նաև որպես մեղադրյալ հարցաքննվելիս՝ ընդգծելով, որ **ինքը չի հասկանում, թե ինչու է նման բան արել, փամփուշոջներն օգտագործելու որևէ նպատակ չի ունեցել, զորամաս վերադառնալուց անմիջապես հետո դրանք վերադարձնելու էր զինանոց** (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 69-70): Ն.Արմենակյանի հայտնած սույն տվյալների մասին փաստել են նաև վկաներ Խ.Սահակյանը և Ա.Լուսապուրյանը (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 22-25 և 52-54):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Առաջադրված մեղադրանքն ամբաստանյալ Նարեկ Արմենի Արմենակյանի կողմից ընդունելու և դատական քննության արագացված կարգ կիրառելու պայմաններում՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ, կրտսեր սերժանտ Նարեկ Արմենի Արմենակյանի կողմից, նրա մեղավորությամբ, ռազմամթերք հափշտակելն ապացուցված է, նրա արարքը ճիշդ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հարկանիշներին:

Ապացուցված է նաև Նարեկ Արմենի Արմենակյանի կողմից, նրա մեղավորությամբ, ապօրինի կերպով ռազմամթերք պահելը, նրա այդ արարքը նույնպես ճիշդ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հարկանիշներին:

(...)

Հաշվի առնելով ամբաստանյալ Նարեկ Արմենի Արմենակյանի կատարած յուրաքանչյուր հանցագործության բնույթը և հանրության համար վրանգավորության աստիճանը, դրանց կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցագործությունը կատարելուց հետո նրա դրսևորած վարքագիծը, խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը և այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը, դրանք համադրելով ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքների հետ՝ դատարանը գտնում է, որ Նարեկ Արմենակյանն իր կատարած ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման համար ենթակա է պատժի այդ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել մեղմ պատժի՝ կալանքի

ձևով, որի միջոցով հնարավոր կլինի ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակները:

ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման համար ամբաստանյալ Նարեկ Արմենակյանը ենթակա է պատժի ազատազրկման ձևով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 43-45):

8. Վերաքննիչ դատարանը, քննարկելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը պատժի մասով բեկանելու և ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին վերաքննիչ բողոքը, իր որոշման շրջանակներում փաստել է. «(...) Առաջին ատյանի դատարանը քրեական գործի քննության արդյունքում նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ չի տվել, դատավճիռն օրինական է, հիմնավորված ու պարճատաքանված, համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին, ուստի վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 83):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Վճարելի բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը նշանակված պատժի մասով անհիմն է: Բողոքարեքը փաստարկել է, որ ստորագրած դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ հոդվածների պահանջները, անտեսել է օրինականության, արդարության, պատժի անհատականացման, մարդասիրության սկզբունքները, հավուր պատշաճի չի գնահատել գործում առկա մեղմացուցիչ հանգամանքների համակցությունն ու Ն.Արմենակյանի անձը բնութագրող տվյալները, իսկ արդյունքում թույլ է տվել նյութական իրավունքի խախտում՝ չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը փաստել է նաև, որ Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշումը հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ Վճարելի դատարանի՝ թիվ ՎԲ-124/07, ՎԲ-192/07, ՎԲ-01/08 գործերով որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներին:

10. Վերոգրյալի հիման վրա վճարելի բողոքի հեղինակը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 6-ի որոշումը պատժի մասով բեկանել և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ն.Արմենակյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացված իրավական հարցը վերաբերում է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելուն: Մինևույն ժամանակ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը և հաշվի առնելով այդ կապակցությամբ Մ.Էլոյանի և այլոց վերաբերյալ գործով Վճարելի դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները (տե՛ս Մ.Էլոյանի և մյուսների վերաբերյալ գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը)՝ Վճարելի դատարանը փաստում է, որ մինչ բողոքաբերի բարձրացրած իրավական խնդրին անդրադառնալը անհրաժեշտ է դուրս գալ վճարելի բողոքարկման սահմաններից, քանի որ սույն գործով առերևույթ առկա է քրեական հետապնդումը և քրեական գործի վարույթը բացառող հանգամանք: Այդ համատեքստում Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր, ուստի և անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով նախ պետք է քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական հարցը. հիմնավոր է արդյոք Ն.Արմենակյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ և 238-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված հանցակազմերի առկայության մասին ստորադաս դատարանների հետևությունը:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պարասխանաբարության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հարկանիշները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արարքի հանցավորությունը, դրա պարժելիությունը և քրեահրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Անձը ենթակա է քրեական պարասխանաբարության միայն հանրության համար վրանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վրանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վրանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով:

2. Հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հարկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պարճառով հասարակական վրանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պարճառել և չէր կարող պարճառել»:

Հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի հարցին Վճռարեկ դատարանն անդրադարձել է Գ.Մադաթյանի գործով որոշման մեջ՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «Արարքի հանրային վրանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական փյույաների ամբողջությամբ:

Արարքի հանրային վրանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պարճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը (...)» (տե՛ս Գարուշ Նորիկի Մադաթյանի գործով Վճռարեկ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Վճռարեկ դատարանը փաստել է նաև, որ հանցագործության հանրային վտանգավորության տիպային բնութագիրն արտացոլվում է օրենսդրի կողմից սահմանված սանկցիայում, իսկ յուրաքանչյուր կոնկրետ գործով արարքի հանրային վտանգավորության գնահատականը դատարանի կողմից կարող է որոշվել կոնկրետ հանցագործության տարրերի առանձնահատկությունների, դրա կատարման հանգամանքների, հանցավորի անձնավորության, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հիման վրա (տե՛ս Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռարեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 39-րդ կետը):

14. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի բովանդակությանը՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ հանրային վտանգավորությունը հանդիսանում է հանցագործության պարտադիր հատկանիշներից մեկը: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի վերոգրյալ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը հանցագործություն է համարում միայն **հանրային (հասարակական) վտանգավորության որոշակի աստիճան ունեցող արարքը:**

Քրեական իրավունքը պաշտպանում է հասարակական հարաբերությունները վերջիններիս էական վնաս պատճառելուց: Ուստի որևէ արարքի հատկանիշների միայն ձևական համընկնումը քրեական օրենքով արգելված արարքի հատկանիշների հետ չի կարող հանգեցնել այդ արարքը հանցավոր ճանաչելուն, եթե քրեական օրենքով պահպանվող հասարակական հարաբերություններին դրանով էական վնաս չի պատճառվել և չէր կարող պատճառվել: Այդպիսի արարքը պետք է ճանաչվի քրեաիրավական առումով նվազ կարևոր:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով արարքը դիտարկվում է որպես նվազ կարևոր և չի համարվում հանցագործություն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) այն ձևականորեն պարունակում է քրեական օրենքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ,

2) չի ներկայացնում հասարակական (հանրային) վտանգավորություն, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել:

15. Վճարելի դատարանը կրկնում է, որ հանրային վտանգավորությունը՝ որպես հանցագործության նյութական հատկանիշ, ունի որակական և քանակական արտահայտություն. հանրային վտանգավորության որակական արտահայտությունը հանրային վտանգավորության բնույթն է, իսկ քանակականը՝ հանրային վտանգավորության աստիճանը (տե՛ս *mutatis mutandis* Գ.Մադաթյանի գործով Վճարելի դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Այդ համատեքստում Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ արարքի նվազ կարևոր լինելու հարցը յուրաքանչյուր գործով որոշվում է ինքնուրույն, սակայն միևնույն ժամանակ այդ հարցի լուծման հիմքում պետք է դրվեն ենթադրյալ հանցագործության որակական և քանակական կողմերը բնութագրող գործոնները (մեղքի ձև և տեսակ, հանցագործության նպատակ ու շարժառիթ, հանցագործությանը պատճառված վնասի չափ, հանցագործության կատարման եղանակ և այլն): Ընդ որում, միայն դրանց համակցությունն է հնարավորություն տալիս որոշելու արարքի նվազ կարևոր լինելը կամ չլինելը:

15.1. Վերոգրյալի լույսի ներքո Վճարելի դատարանը փաստում է, որ արարքի նվազ կարևոր լինելու հարցը լուծելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նվազ կարևոր կարող է լինել, որպես կանոն, **դիտավորյալ** արարքը, ընդ որում, **ուղղակի դիտավորությամբ** կատարված: Արարքը կատարողի գիտակցությունը և կամքը պետք է ուղղված լինի հասնելու հենց այն արդյունքին, որը հանդիսանում է կատարողի գործողության կամ անգործության հետևանք: Եվ հենց այս տեսանկյունից պետք է գնահատական տրվի, թե արդյոք արարքը քրեաիրավական առումով նվազ

կարևոր է, թե ոչ: Եթե արարքը կատարողի դիտավորությունը ուղղված է եղել էական վնաս պատճառելուն, սակայն նրա կամքից անկախ պատճառներով դա նրան չի հաջողվել, ապա կատարված արարքը չի կարող համարվել նվազ կարևոր (անձի դիտավորության և փաստացի կատարածի անհամապատասխանության դեպքում պատասխանատվություն է առաջանում հանցափորձի համար): Այլ կերպ ասած՝ արարքը կատարողի կամքը և գիտակցությունը պետք է ուղղված լինեն հենց **ոչ էական վնասի** առաջացմանը: Ընդ որում, դա վերաբերում է վնասի բոլոր տեսակներին (նյութական, ֆիզիկական և այլն), և եթե արարքի հետևանք հանդիսացող վնասի մի տեսակն աննշան է, իսկ մյուսը՝ էական, ապա այդ դեպքում արարքը չի կարող համարվել նվազ կարևոր:

Հարկ է ընդգծել նաև, որ ենթադրյալ հանցավոր արարքի սուբյեկտի հատկանիշները (անչափահաս, պաշտոնատար անձ լինելը և այլն) չպետք է ազդեն նրա կատարած արարքի նվազ կարևոր լինելու հարցը որոշելու վրա, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ անհրաժեշտ է գնահատել ոչ թե անձի, այլ արարքի հանրային վտանգավորությունը:

Այդ համատեքստում Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ արարքի նվազ կարևորությունը կարող են պայմանավորել միայն այն հատկանիշները, որոնք արտահայտվել են կատարված արարքի մեջ: Իսկ հանգամանքները, որոնք չեն արտահայտվել արարքի մեջ (դրսևորած վարքագիծը մինչ ենթադրյալ հանցավոր արարքի կատարումը, գղջալը, վնասը կամովին հատուցելը, ընտանեկան դրությունը և այլն), արարքի նվազ կարևորության հարցը լուծելիս հաշվի չպետք է առնվեն:

16. Այսպիսով, Վճարելի դատարանը եզրահանգում է, որ արարքի նվազ կարևոր լինելու հարցը լուծելիս, ի թիվս այլ հանգամանքների, անհրաժեշտ է հաշվի առնել.

- ա) պատճառված վնասը,
- բ) արարքի կատարման եղանակը,
- գ) մեղքի ձևը և տեսակը,
- դ) շարժառիթը և նպատակը:

17. Սույն գործի նյութերից հետևում է, որ ՀՀ ՊՆ թիվ 95532 գորամասի զինժառայող, կրտսեր սերժանտ Ն.Արմենակյանը 2014 թվականի սեպտեմբերի 25-ին 3-րդ ՀԳՄ-ի 3-րդ ՀՎ-ի անձնակազմի հետ ներկայացել է վաշտի զինանոց՝ զինամթերք ստանալու համար, քանի որ հաջորդ օրը՝ սեպտեմբերի 26-ին, գումարտակի անձնակազմը մեկնելու էր մարտական հերթապահության: Զինամթերք ստանալու և պահեստատուփերը լիցքավորելու ընթացքում Ն.Արմենակյանը, տեսնելով, որ զինանոցի առջև գտնվող սպաների և մյուս զինժառայողների ուշադրությունն իր կողմը չէ, զինամթերքի արկղից հափշտակել է ռազմամթերք հանդիսացող 11 հատ

7.62մմ տրամաչափի փամփուշտ և պահել է վաշտի պահեստասենյակում: Հաջորդ օրը՝ 2014 թվականի սեպտեմբերի 26-ին, իր հետ վերցրել է նախորդ օրը հափշտակած 11 հատ փամփուշտները և ապօրինի կերպով փոխադրել մարտական հենակետ, որտեղ սույն օրը գումարտակի հրամանատարը Ն.Արմենակյանի մոտից հայտնաբերել է վերոհիշյալ 11 հատ փամփուշտները (տե՛ս սույն որոշման 5.1.-րդ կետը):

Մինչդատական վարույթում Ն.Արմենակյանը, փաստելով, որ յուրաքանչյուր զինձառայող ստանում է 4 հատ պահեստատուփի և 120 հատ փամփուշտ՝ բոլոր պահեստատուփերը լիցքավորելու համար, նշել է, որ սեպտեմբերի 25-ին իրեն հատկացվել էր նշված քանակով զինամթերք: Այնուհետև ավելացրել, որ լիցքավորումն ավարտելուց հետո տեսնելով, որ իր վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնում՝ զինամթերքի արկղի միջից բոլորից թաքուն վերցրել է մի «բոտ» 7.62 տրամաչափի փամփուշտ և հաջորդ առավոտյան տարել մարտական հենակետ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Ն.Արմենակյանը նշել է նաև, որ չի հասկանում, թե ինչու է նման բան արել, փամփուշտներն օգտագործելու որևէ նպատակ չի ունեցել, զորամաս վերադառնալուց անմիջապես հետո դրանք վերադարձնելու էր զինանոց: Ն.Արմենակյանի հայտնած սույն տվյալների մասին փաստել են նաև վկաներ Խ.Սահակյանը և Ա.Խաչատրյանը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը իր դատավճռում նշել է, որ հաշվի առնելով ամբաստանյալի կատարած յուրաքանչյուր հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, դրանց կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցագործությունը կատարելուց հետո նրա դրսևորած վարքագիծը, խախտված հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը և այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը, դրանք համադրելով ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանքների հետ՝ Ն.Արմենակյանը իր կատարած արարքների համար ենթակա է պատժի (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, քննարկելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը պատժի մատվ բեկանելու և ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին վերաքննիչ բողոքը, մերժել է այն՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունը վկայում է, որ՝

Ն.Արմենակյանը, լինելով զինձառայող և պատրաստվելով մեկնել մարտական հերթապահության, ունեցել է փամփուշտներ ստանալու իրավունք,

2) Ն.Արմենակյանն իրեն հասանելիք զինամթերքը ստանալուց հետո լրացուցիչ վերցրել է 11 հատ 7.62 տրամաչափի փամփուշտ,

11 հատ փամփուշտը Ն.Արմենակյանը փոխադրել է մարտական հենակետ,

Ն.Արմենակյանը փամփուշտներն օգտագործելու որևէ նպատակ չի ունեցել, դրանք վերցրել է առանց որևէ պատճառի և զորամասի մշտական տեղակայման վայր վերադառնալուն պես պատրաստվել է փամփուշտները վերադարձնել զինանոց:

18. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքներն իրենց համակցության մեջ գնահատելով սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ն.Արմենակյանին մեղսագրված արարքները չեն համարվում հանցագործություն, քանի որ դրանք թեն ձևականորեն պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ և 238-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված հանցակազմերի հատկանիշները, սակայն իրենց նվազ կարևոր լինելու ուժով չեն ներկայացնում հասարակական վտանգավորություն, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չեն պատճառել և չէին կարող պատճառել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ն.Արմենակյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ և 238-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված հանցակազմերի առկայության մասին ստորադաս դատարանների հետևությունը հիմնավոր չէ:

19. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ն.Արմենակյանի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշում կայացնելիս նաև Վերաքննիչ դատարանը թույլ են տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտման: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

20. Նախորդ կետում նշված խախտումները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների դատական ակտերը, ճանաչելու Ն.Արմենակյանի անմեղությունը առաջադրված մեղադրանքներում, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և քրեական գործի վարույթը կարճելու:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Ն.Արմենակյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, հարկավոր է վերացնել:

21. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն առարկայագուրկ է համարում անդրադառնալու բողոքաբերի՝ սույն որոշման 9-րդ կետում բարձրացրած փաստարկներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Նարեկ Արմենի Արմենակյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 2-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանել, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 238-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներում ամբաստանյալ Նարեկ Արմենի Արմենակյանին արդարացնել, հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել:

Ամբաստանյալ Նարեկ Արմենի Արմենակյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

51.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՆԴ/0011/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ՝
մեղադրող

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՔԱԼԱՇՅԱՆԻ
Ս.ՅՈՒԶԲԱՇՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հրանտ Յուրիկի Հարությունյանի և Բեգլար Գարեգինի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի ապրիլի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բադալյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի մարտի 23-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչության Նոր Նորքի քննչական բաժնում հարուցվել է թիվ 17117813 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2013 թվականի մարտի 24-ին Հ.Հարությունյանը և Բ.Հովհաննիսյանը ձերբակալվել են:

Նախաքննության մարմնի 2013 թվականի մարտի 26-ի որոշմամբ Հ.Հարությունյանը և Բ.Հովհաննիսյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2014 փետրվարի 24-ի որոշումներով Հ.Հարությունյանին և Բ.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքները փոփոխվել են, և նրանց նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի մարտի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 22-ի դատավճռով Հ.Հարությունյանին և Բ.Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրանց նկատմամբ պատիժ նշանակել՝ ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել է անպարտ և արդարացրել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցրել է և նրանց քրեական պատասխանատվությունից ազատել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքով:

3. Մեղադրող Ա.Բարսեղյանի, ամբաստանյալներ Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի պաշտպան Ե.Սարգսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ մեղադրող Ա.Բարսեղյանի բողոքը մերժել է, իսկ պաշտպան Ե.Սարգսյանի բողոքը բավարարել, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 22-ի դատավճիռը պատժի մասով փոփոխել է՝ ամբաստանյալներ Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-ր հոդվածի 4-րդ մասով պատիժ նշանակելով ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: Դատավճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2015 թվականի ապրիլի 29-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բադալյանը, ամբաստանյալներ Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի պաշտպան Ե.Սարգսյանը:

Վճարելի դատարանի 2015 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հր.Բադալյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ, իսկ 2015 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ՝ ամբաստանյալներ Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի պաշտպան Ե.Սարգսյանի վճարելի բողոքը վարույթ ընդունելը մերժվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Հ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*Մի սպորտիստի ձեռք բերած և իր մոտ պահվող, հրագեն հանդիսացող «Մարգոլին ՄՅՄ» տեսակի «M 0280» համարի սպորտանակի գործադրմամբ կատարել է խուլիգանություն և 2 կրակոցներ արձակելով, առողջության միջին ծանրության վնաս պատճառելով Երևան քաղաքի բնակիչ Արմեն Միմոնյանին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Հ.Հարությունյանն իր ընկեր Արթուր Բոբյանցից տեղեկանալով, որ նույն օրը Բերդ-Երևան ավտոճանապարհին Անուշավան Մանուչարյանն իրենց թաղամասի բնակիչներ Արման Հարությունյանի և Արայիկ Խաչատրյանի հասցեին կատարել է հայիոյանք, ընկերների՝ Բ.Հովհաննիսյանի, Ա.Բոբյանի ու Մ.Մկոյանի հետ գնացել է րուժող Ա.Մանուչարյանի՝ Երևան քաղաքի Ավանի 1-ին միկրոշրջանի 4/2 շենքի բակ՝ վերջինից հայիոյանք րալու համար պարզաբանում պահանջելու, սակայն Ա.Մանուչարյանը, նկատելով նրանց, կրկին հայիոյելով, իր «Տոյուրա պրադո» մակնիշի 550 LS 05 պերահամարանիշի ավտոմեքենայով դիմել է փախուստի: Հաջորդ օրը՝ մարտի 23-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Հ.Հարությունյանը եղբոր՝ Հրայր Հարությունյանի հետ «Վազ 21214» մակնիշի 11 SS 109 պերահամարանիշի ավտոմեքենայով, Մ.Մկոյանն ու Բ.Հովհաննիսյանը, վերջինի՝ «Վազ 2106» մակնիշի 63 LS 219 պերահամարանիշի ավտոմեքենայով, Ա.Հարությունյանը, Ա.Խաչատրյանն ու Ա.Բոբյանը՝ վերջինիս «Օպել Աստրա» մակնիշի 04 QQ 505 պերահամարանիշի ավտոմեքենայով, մեկնել են Անուշավան Մանուչարյանի բնակության վայր՝ նրան հանդիպելու և հայիոյանքների համար պարզաբանում պահանջելու նպատակով: Ժամը 15:00-ի սահմաններում Հ.Հարությունյանը նկատելով Ա.Մանուչարյանի ավտոմեքենային մոտեցող նրա ազգական Արմեն Միմոնյանին, ենթադրելով, որ իրենց հասցեին հայիոյանք կատարողն է, մոտեցել է Արմեն Միմոնյանին, փորձել նրան հրելով գեյրին գցել, սակայն հանդիպելով վերջինի դիմադրությանը՝ սպորտիստի ձեռք բերած և իր մոտ պահվող հրագեն հանդիսացող «Մարգոլին ՄՅՄ» տեսակի «M 0280» համարի սպորտանակից 1 կրակոց է արձակել գեյրին, իսկ երբ*

Արմեն Միմոնյանը շրջվելով փորձել է փախչել, նրան ապօրինաբար կյանքից զրկելու դիմումներով հարավորությամբ 2 կրակոց է արձակել Արմեն Միմոնյանի ուղղությամբ, որոնք դիպել են վերջինի ձախ հետույքին և ձախ գուրկային շրջաններին, պարճատել ստողջության միջին ծանրության վնաս, սակայն Արմեն Միմոնյանի մահը վրա չի հասել Հրանտ Հարությունյանի կամքից անկախ հանգամանքներում: Այնուհետև, Հրանտ Հարությունյանը որպես զենք օգտագործվող առարկայի՝ նույն «Մարզոլին ՄՅՄ» տեսակի «M 0280» համարի ատրճանակի գործադրմամբ (...) մոտեցել է գետնին ընկած Արմեն Միմոնյանին և անպարկեշտ վարքագիծ դրսևորելով ատրճանակը պահել է նրա վրա և բացականչել. «Տեսար, թե մի քֆուրի համար ինչ եղավ» ու քիչ անց շարունակելով իր խուլիգանական գործողությունները՝ դեպի վայրից հեռանալիս «Վագ 2106» մակնիշի 63 LS 219 պերհամարանիշի ավտոմեքենայի հետևի աջ պարուհանից ձեռքը դուրս պարզած՝ ատրճանակը կրկին պահել է Արմեն Միմոնյանի ուղղությամբ» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 196-197):

5.1 Բ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «[Ն]ա ապօրինի ձեռք բերած և իր մոտ պահվող, հրազեն հանդիսացող «Մակարով» տեսակի «HC 1577» համարի ատրճանակից 2 կրակոցներ արձակելով, Տավուշի մարզի Բերդ քաղաքի բնակիչ Անուշավան Մանուչարյանի ուղղությամբ, կատարել է սպանության փորձ և զենքի գործադրմամբ խուլիգանություն, այն է՝ նույն ատրճանակից 5 կրակոցներ արձակելով՝ վնասել է Անուշավան Մանուչարյանի՝ Երևան քաղաքի Ավանի 1-ին միկրոշրջանի 4/2 շենքի 38-րդ բնակարանի դուռը: Այսպես՝ 2013 թվականի մարտի 22-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Բեգլար Հովհաննիսյանը, իր ընկեր Արթուր Բորյանից տեղեկանալով, որ նույն օրը Բերդ-Երևան ավտոճանապարհին Անուշավան Մանուչարյանն իրենց թաղամասի բնակիչներ Արման Հարությունյանի և Արայիկ Խաչատրյանի հասցեին կատարել է հայիոյանք, ընկերների՝ Հ.Հարությունյանի, Ա.Բորյանի ու Մ.Մկոյանի հետ զնացել է րուժող Ա.Մանուչարյանի՝ Երևան քաղաքի Ավանի 1-ին միկրոշրջանի 4/2 շենքի բակ՝ վերջինից հայիոյանք փախու համար պարզաբանում պահանջելու, սակայն Ա.Մանուչարյանը, նկատելով նրանց, կրկին հայիոյելով, իր «Տոյոտա սրադո» մակնիշի 550 LS 05 պերհամարանիշի ավտոմեքենայով դիմել է փախուսարի: Հաջորդ օրը՝ մարտի 23-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Բ.Հովհաննիսյանն ընկերոջ՝ Մարատ Մկոյանի հետ իր «Վագ 2106» մակնիշի 63 LS 219 պերհամարանիշի ավտոմեքենայով, Ա.Հարությունյանը, Ա.Խաչատրյանն ու Ա.Բորյանը՝ վերջինիս «Օպել Աստրա» մակնիշի 04 QQ 505 պերհամարանիշի ավտոմեքենայով, Հրանտ և Հրայր Հարությունյանները՝ «Վագ 2124» մակնիշի 11 SS 109 պերհամարանիշի ավտոմեքենայով, կրկին մեկնել են Անուշավան Մանուչարյանի բնակության վայր՝

նրան հանդիպելու և հայիոյանքների համար պագարանում պահանջելու նպատակով: Ժամը 15:00-ի սահմաններում Բ.Հովհաննիսյանը, տեսնելով շենքի շքամուտքից դուրս եկած Անուշավան Մանուչարյանին, իսկ վերջինս էլ, նկատելով հավաքված անձանց, եր է վազել և մերել շենքի շքամուտք, իսկ Բեգլար Հովհաննիսյանը, հերասպնդելով նրան, ապօրինի ձեռք բերած և իր մոտ պահվող, հրազեն հանդիսացող «Մակարով» տեսակի «ԿՇ 1577» համարի արթճանակից Անուշավան Մանուչարյանին ապօրինաբար կյանքից զրկելու դիրավորությամբ 2 կրակոց է արձակել նրա ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չի հասցրել, Ա.Մանուչարյանը, իր ուղղությամբ արձակված կրակոցներից խուսափելով, շենքի միջանցիկ մուտքով փախել է: Դրանից հետո Բ.Հովհաննիսյանը վերադարձել է և որպես զենք օգտագործվող առարկայի՝ նույն «Մակարով» տեսակի «ԿՇ 1577» համարի արթճանակի գործադրմամբ, (...) մտրեցել է Անուշավան Մանուչարյանի բնակարանի մուտքի դռանը, նույն արթճանակից 5 կրակոցներ արձակելով վնասել է նրա՝ Երևան քաղաքի Ավանի 1-ին միկրոշրջանի 4/2 շենքի 38-րդ բնակարանի մուտքի դուռը, որի հետևանքով վերջինիս պատճառել է զգալի չափի՝ 43.000 ՀՀ դրամի նյութական վնաս ու դեպքի վայրից հեռացել է» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 197-198):

6. Դատաքննության ընթացքում Հ.Հարությունյանը հրաժարվել է ցուցմունք տալուց, իսկ նախաքննության ընթացքում տված իր ցուցմունքներում հայտնել է, որ 2013 թվականի մարտի 22-ին իր մանկության ընկեր Արթուր Բրոյանից տեղեկացել է, որ ոմն մեկը, ով վարել է «Պրադո» մակնիշի ավտոմեքենա, Բերդ-Երևան մայրուղու վրա առանց որևէ պատճառի կոպիտ հայիոյանքներ է հնչեցրել վերջինիս ընկերներ Արման Հարությունյանի ու Արայիկ Խաչատրյանի ծնողների հասցեին: Ճշտելով «Պրադո» մակնիշի ավտոմեքենայի տվյալները՝ Ա.Բրոյանի խնդրանքով Հ.Հարությունյանը հետևել ու պարզել է «Պրադո» մակնիշի ավտոմեքենայի տիրոջ բնակության վայրը: Նույն օրը Ա.Բրոյանի, Բ.Հովհաննիսյանի և նրա եղբոր՝ Մարատ Հովհաննիսյանի հետ միասին գնացել են «Պրադո» մակնիշի ավտոմեքենայի տիրոջ բնակության վայր՝ Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի 4/2 շենքի բակ՝ վերջինիս հանդիպելու և մի երկու ապտակ հասցնելու համար, որ վերջինս հասկանա, որ առանց հիմնավոր պատճառների ոչ մեկի ծնողի հասցեին նման հայիոյանքներ չեն հնչեցնում: Մակայն երբ հասել են շենքի բակ, «Պրադո» մակնիշի ավտոմեքենան այնտեղ չի եղել: Երբ հիշյալ ավտոմեքենան ժամանել է բակ, վարորդը դուրս է եկել ավտոմեքենայից և մտել շենք՝ առաջին հարկում գտնվող բնակարան: Դրանից հետո Մ.Հովհաննիսյանը մտել է շքամուտք և մեքենայի տիրոջը դուրս կանչելու պատրվակով հայտնել, որ իբր շենքի վերևի հարկում պատուհան են տեղադրում, և որ պետք է մեքենան հեռացնի պատուհանի տակից՝ այն չվնասվելու նկատառումից ելնելով: «Պրադո» ավտոմեքենայի

վարորդը դուրս է եկել շենքից և արագ նստելով մեքենան՝ կրկին իրենց բոլորի հասցեին հայտյանքներ հնչեցնելով՝ հեռացել է: Հաջորդ օրը՝ ժամը մոտավորապես 14:00-ից 15:00-ն ընկած ժամանակահատվածում, երբ նորից գնացել են հիշյալ շենքի բակ, «Պրադո» մակնիշի մեքենան արդեն իսկ կանգնած է եղել այնտեղ: Որոշել են շենքի մոտ սպասել մինչև վարորդը դուրս գա և հենց մեքենայի մոտ էլ ծեծեն նրան ու հեռանան: Որոշ ժամանակ սպասելուց հետո շենքի մուտքից մի տղամարդ է դուրս եկել և մոտեցել ավտոմեքենային, որպեսզի բացի վարորդի կողմի դուռը: Հ.Հարությունյանի ցուցմունքների համաձայն՝ քանի որ ինքը նախորդ օրն այդ տղային այդպես էլ նորմալ չէր կարողացել դեմքով տեսնել, մտածելով, թե նա նույն անձնավորությունն է, ով իրենց հայտյել է, արագ մոտեցել է վերջինիս և ասել. «Ախպերս մի բռպե սպասի»: Երբ վերջինս իր խոսքի վրա շրջվել է, աջ ոտքը դրել է նրա ոտքերի հետևը և երկու ձեռքերով փորձել կիսահրելով վայր գցել գետնին՝ միաժամանակ ասելով, թե այդ ում էր հայտյում: Սակայն վերջինս վայր չի ընկել, փոխարենը վրա է եկել և հայտյել է: Վրա գալով՝ ձեռքը մի փոքր վերև է բարձրացրել, ինչից հետո իրեն թվացել է, թե ցանկանում է իրեն հարվածել, դրա համար էլ գոտկատեղից հանել է «Մարգովին» տեսակի ատրճանակը, լիցքավորել և մեկ անգամ կրակել է գետնին՝ մտածելով, որ կվախենա, կկանգնի, սակայն վախից կամ շփոթմունքից՝ վերջինս վրա է եկել, ուժեղ հրել իրեն ու շրջվել է, որ փախնի: Հրելուց հետ-հետ է գնացել և մեխանիկորեն ևս երկու անգամ կրակել է, ու այդ պահին հիշյալ անձնավորությունը վայր է ընկել և ասել. «Մի խբիր արա, ես քեզ ինչ էի արել»: Կատարվածից զայրացած՝ զենքը ձեռքին մոտեցել է հիշյալ տղային ու ասել. «Էս էիր ուզում, տեսար քֆուրիտ համար ինչ եղավ», այնուհետև խղճացել է, առաջարկել հիվանդանոց տանել, սակայն վերջինս հրաժարվել է: Ըստ Հ.Հարությունյանի ցուցմունքի՝ նա մինչև վերջ էլ կարծել է, թե այդ տղան է իրենց հասցեին հայտյանքներ սովորը: (տե՛ս դատական նիստի արձանագրություն, քրեական գործ, հատոր 3, թերթեր 45-49):

7. Դատաքննության ընթացքում ամբաստանյալ Բ.Հովհաննիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ դեպքի նախորդ օրը՝ 2013 թվականի մարտի 22-ին, Հ.Հարությունյանի, Ա.Բրոյանի և եղբոր Մարատ Հովհաննիսյանի հետ այցելել են Ա.Մանուչարյանի բնակության վայր՝ Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի 4/2 շենք՝ հանդիպելու համար վերջինիս՝ իր վատ պահվածքի, մասնավորապես, իրենց ընկերներ Արայիկի և Արմանի հասցեին հայտյանքներ հնչեցնելու համար: 2013 թվականի մարտի 22-ին տեղի ունեցածի մասին Բ.Հովհաննիսյանը տվել է նույնաբովանդակ ցուցմունքներ, ինչ Հ.Հարությունյանը:

Բ.Հովհաննիսյանի ցուցմունքների համաձայն, երբ հաջորդ օրն ընկերներով կրկին այցելել են հիշյալ շենքի բակ, «Պրադո» ավտոմեքենայի վարորդը շքամուտքի աստիճանների վրա կանգնած կրկին հայտյանքներ

է հնչեցրել իրենց բոլորի հասցեին, ինքն էլ, նյարդայնանալով վերջինիս լկտի պահվածքից, վազել է նրա ուղղությամբ: Այդ ժամանակ հիշյալ անձնավորությունն արագ վազքով մտել է շքամուտք, իսկ ինքն էլ աստիճանների ներքևի հատվածում կանգնած՝ լիցքավորել է ատրճանակն ու կրակել: Շենքի մուտք մտնելուց հետո տեսել է, թե ինչպես է վերջինս փախչում ու հենց այդ պահին վերջինիս կինը դուրս է եկել իրեն դեմ-դիմաց ու խնդրել, որ չվնասի ամուսնուն, ինչին ինքը պատասխանել է, որ ոչ ոքի վնասելու մտադրություն չունի: Բ.Հովհաննիսյանի ցուցմունքների համաձայն՝ այդ պահին տուժողը գտնվել է իրենից մոտավորապես 20 մետր հեռավորության վրա: Դրանից հետո ներս է մտել շքամուտք և, քանի որ գտնվել է նյարդային վիճակում, ևս հինգ անգամ կրակել է հիշյալ անձնավորության բնակարանի դռան ներքևի հատվածին ու դուրս եկել այդտեղից: Դատարանի հարցերին պատասխանելիս Բ.Հովհաննիսյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ նախկինում ատրճանակից երբևէ չի կրակել: (տե՛ս դատական նիստի արձանագրություն):

8. Գործի քննության ժամանակ տուժող Ա.Մանուչարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2013 թվականի մարտի 23-ին՝ ժամը 15-ի սահմաններում, մյուս տուժողի՝ Ա.Սիմոնյանի հետ դուրս են եկել Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի 4/2 շենքում գտնվող իր բնակարանից: Տուժողի ցուցմունքների համաձայն՝ Ա.Սիմոնյանն իրենից առաջ է քայլել, և երբ նա հասել է շենքի բակում կայանված իր ավտոմեքենայի դռանը, շենքի մուտքի աստիճանների ձախ հատվածում կայանված «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայից իջել է մոտ 20-22 տարեկան, 1.65 սմ հասակով մի երիտասարդ, մոտենալով Արմենին ասել է. «Սպասի մի րոպե»: Ինքն այդ ժամանակ գտնվել է շենքի մուտքի աստիճաններին, ուշադրությունը սևեռել է ձայնի ուղղությամբ և այդ պահին նկատել է, որ 2-րդ ավտոմեքենայից իջած անձանցից մեկի աջ ձեռքը ծավված է դեպի վերև, բազկի հատվածում շոր գցած, և նա գալիս է դեպի իրեն: Մոտավորապես 5 մետր հեռավորությունից նկատել է, որ նա ձախ ձեռքով աջ ձեռքին գցած շորը մի կողմ է քաշել և ձեռքում եղած սև ատրճանակը լիցքավորելով՝ շարունակել է գալ իր կողմը: Ինքն անմիջապես շրջվել է և վազելով բարձրացել աստիճանները, ցանկացել է մտնել շենք: Առաջին կրակոցի ձայնը լսել է, երբ մտել է շքամուտք և գնացել իր բնակարանի մոտ: Գնալով իրենց բնակարանի ուղղությամբ՝ տեսել է, որ կինը, բնակարանի դուռը փակելով, գալիս է իր ուղղությամբ, ինքը բռնել է կնոջ ձեռքը, և վազել են դեպի շենքի հետնամասի մուտքը: Դեռևս շենքի հետնամասի մուտքից դուրս չեկած՝ լսել է երկրորդ կրակոցը: Կնոջ հետ դուրս գալով շենքի հետնամասի մուտքից՝ ինքը փախել է դեպի ձախ՝ կնոջն ասելով, որ նա փախչի դեպի աջ: Երբ հասել է հարևան շենքի անկյուն, այդ պահին լսել է ևս 4-5 կրակոց (տե՛ս դատական նիստի արձանագրություն):

9. Դեպքի վայրի զննության 2013 թվականի մարտի 23-ի արձանագրության համաձայն՝ «Երևանի Ավան Առինջ 1-ին միկրոշրջանի 4/2

շենքի (...) բակից սկսվել է դեպի շենքի մուտք գննությունը, որի ընթացքում պարզվել է, որ մուտքն ունի 15 քարե աստիճաններ, որոնցից հետո գրնվում է մուտքի դուռը՝ 2 X 0,90 չափսերի, շենքի մուտքից մինչև վերելակը կազմում է 10 մետր հեռավորություն: Վերելակի մուտքի աջ դռան ներքին հարվածում հարակից 35 սմ և ձախից 30 սմ հարման կետում, առկա է անցք (...):

Թիվ 38 բնակարանի մուտքի դռան ձախ հարվածում գրնվող մուտքի պարին «1,5 մմ» բարձրության վրա հերթական համարակալված «18» համարի ներքո առկա է կույր վնասվածք՝ «18X11մմ»: Թիվ 38 բնակարանի մուտքի դռան գննությամբ պարզվել է, որ այն երեսպարված է փայտով, ունի երկու ներքին փական և դռան ներքևի հարվածում 32 սմ բարձրության և աջից ձախ 38 սմ բարձրությամբ առկա է վնասված հարված: Նշված վնասված անցքն ունի 9 X 6,5 մմ կողային չափսեր, դռան ստորին եզրից 84 սմ դեպի աջ բացվող շրջանակից 16,5 սմ հեռավորության վրա առկա է կույր վնասվածք՝ 6 X 9 մմ կողային չափսերով, դռան ստորին եզրից 88 սմ բարձրության՝ բացվող շրջանակից 9 սմ հեռավորության վրա առկա է կույր վնասվածք, որն ունի 6 X 8 մմ կողային չափսեր, դռան ստորին եզրից 91 սմ բարձրության՝ աջ բացվող հարվածից 7 սմ հեռավորության վրա առկա է կույր վնասվածք, որն ունի 9 X 9 մմ կողային չափսեր, դռան ստորին եզրից 93 սմ բարձրության՝ բացվող հարվածից 8 սմ հեռավորության վրա առկա է կույր վնասվածք, որն ունի 9 X 8 մմ կողային չափսեր:

Դեպքի վայրից հայրնաբերված թվով 7 պարկուճները և թվով երկու գնդակները առգրավվել, փաթեթավորվել և կնիքվել են փորձագետի համար նախատեսված թիվ 30 կնիքով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 9-30):

10. 2013 թվականի մայիսի 18-ի՝ դատաբժշկական, դատահետքաբանական և դատաձգաբանական համալիր փորձաքննության թիվ 628 եզրակացության հետևությունների համաձայն՝ «(...) դեպքի վայր հանդիսացող Ավան Առինջ 1-ին միկրոշրջանի 4/2 շենքի առաջին հարկում գրնվող վերելակի վրա հայրնաբերված վնասվածքը մուտքի միջանցիկ հրազենային-գնդակային բնույթի վնասվածք է: Նույն եզրակացության համաձայն՝ դեպքի վայր հանդիսացող Ավան Առինջ 1-ին միկրոշրջանի 4/2 շենքի առաջին հարկի միջանցքի պարի վրա հայրնաբերված վնասվածքն հետազոտության պահին գրնվում էր ամբողջությամբ վերանորոգված և արտաքինից վերաներկված վիճակում, ինչի պարճառով կոնկրետ պարզել, թե՞ րվյալ վերանորոգված վնասվածքը հրազենային է, թե՞ ոչ, հնարավոր չէ՝ նշված վնասվածքը վերանորոգված լինելու և նախկինում վերջինիս ունեցած ձևաչափային առանձնահատկությունները և բնույթը պահպանված չլինելու պարճառներով: Նշված վնասվածքի ներսում կրակված գնդակի հնարավոր առկայությունը հայրնաբերելու նպատակով՝ րվյալ վնասվածքը համապարասիան մասնագետի

օգնությանը արտաքինից տեղային քանդվեց, ինչի արդյունքում տվյալ վնասվածքի ներսում որևէ գնդակ չհայտնաբերվեց: Դեպքի վայր հանդիսացող Ավան Առինջ 1-ին միկրոշրջանի 4/2 շենքի թիվ 38 բնակարանի մուտքի դռան արտաքին (դրսային) մակերեսի վրա հայտնաբերված N3, N4, N5 N6 և N7 վնասվածքները, առանձին-առանձին, հանդիսանում են մուտքի կույր հրազենային-գնդակային բնույթի վնասվածքներ՝ պարճառված լիցքի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից՝ 9մմ փրամաչափի գնդակներով՝ հինգ առանձին կրակոցների ներգործության հետևանքով: Տվյալ բնակարանի մուտքի դռան հակառակ (ներսային) մակերեսի վրա արտահայտված N6 և N7 ոչ միջանցիկ բնույթի վնասվածքները հանդիսանում են բնակարանի մուտքի դռան արտաքին (դրսային) մակերեսի վրա արտահայտված մուտքի կույր N6 և N7 հրազենային-գնդակային բնույթի վնասվածքների շարունակական արտահայտվածությունները ներսային կողմից՝ ոչ միջանցիկ վնասվածքների տեսքով արտահայտված: Բնակարանի մուտքի դռան վրա արտահայտված վնասվածքները կարող էին պարճառվել ինչպես դուռը փակված, այնպես էլ բացված վիճակում (դռան բացվածքի չափը կոնկրետ պարզել հնարավոր չէ՝ համապատասխան ելակերային տվյալների բացակայության պարճառով)՝ առջևից հետ ուղղությամբ արձակված հինգ առանձին կրակոցների ներգործության արդյունքում:

Արևեն Միմոնյանի հագուստների և մարմնի վրա առկա վնասվածքները կույր հրազենային-գնդակային են, թվով 2-ն են, տեղակայված են ձախ գոտկային և ձախ հետույքային շրջաններում և իրենց տեղակայմամբ հիմնականում համապատասխանում են միմյանց: Դրանք մարմնի երկայնական առանցքի նկատմամբ ունեն հետևից առաջ, քիչ ձախից աջ ուղղություն, սակայն ավելի ստույգ որոշել նրանց ուղղությունները (վերևից ներքև կամ ներքևից վերև), ինչպես նաև խորությունները, հնարավոր չէ՝ փորձագիտական բավարարչափանիշների բացակայության պարճառով» (տես քրեական գործ հատոր 2, թերթեր 200-217):

11. Ինքնակամ ներկայանալու և ատրճանակ ներկայացնելու մասին 2013 թվականի մարտի 24-ի արձանագրության համաձայն՝ «(...) [2013 թվականի մարտի 24-ին]՝ ժամը 02.30-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին է ինքնակամ ներկայացել քաղաքացի Հրանտ Յուրիկի Հարությունյանը, ով ներկայացրել է «Մարգոլին» տեսակի M 0280 համարի արճանակ, (...) և հայտարարել, որ նույն թվականի մարտի 23-ին՝ ժամը 13.00-ի սահմաններում, Ավան-Առինջ 2-րդ միկրոշրջանի 4/2 շենքի բակում իրեն անձանոթ մի երիտասարդի հետ վիճարանության ժամանակ 2-3 անգամ կրակել է, որից հետո դիմել է փախուստի: Ներկայացված արճանակի փամփոշուկայր լիցքավորված է եղել 1 (մեկ) փամփոշուով (...)» (տես քրեական գործ, հատոր 1, թերթ 52):

12. Ինքնակամ ներկայանալու և ատրճանակ ներկայացնելու մասին 2013 թվականի մարտի 24-ի արձանագրության համաձայն՝ «(...) [2013 թվականի մարտի 24-ին]՝ ժամը 02.30-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին է ինքնակամ ներկայացել քաղաքացի Բեգլար Գարեգինի Հովհաննիսյանը, ով ներկայացրել է «Մակարով» տեսակի արբճանակ, (...) փամփոշապուրով՝ «7174» գրառմամբ՝ առանց փամփոշիների և հայրաբարել, որ նույն թվականի մարտի 23-ին՝ ժամը 13.00-ի սահմաններում Ավան-Առինջ 2-րդ միկրոշրջանի 4/2 շենքի բակում իրեն անծանոթ մի երիտասարդի հետ վիճարանության ժամանակ հիշյալ արբճանակից 8 (ութ) անգամ կրակել է, որից հետո դիմել է փահուսարի» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 61):

13. 2013 թվականի ապրիլի 9-ի դատաբժշկական փորձագետի թիվ 543/հ եզրակացության համաձայն՝ *տուժող Արմեն Միմոնյանի ձախ գուրկային, ձախ հետույքային շրջանների՝ հրազենային, գնդակային, կույր վերքերի ձևով վնասվածքները հացվել են գնդակով լիցքավորված հրազենից արձակված կրակոցներով, հնարավոր է որոշման մեջ նշված ժամկետին, առաջացրել են առողջությանը միջին ծանրության վնաս* (տե՛ս քրեական գործ հատոր 2, թերթեր 67-68):

14. Անդրադառնալով Բ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքին՝ Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում հաստատված է համարել, որ «Այն պայմաններում, երբ հակառակն ապացուցված չէ ու հաստատված է, որ ամբաստանյալ Բեգլար Հովհաննիսյանը տուժող Անուշավան Մանուչարյանին մինչև դեպքը չի ճանաչել, նրանց միջև թշնամական հարաբերություն, կոնֆլիկտ, վրեժի շարժառիթ չի եղել, տուժողի բնակարանի դռան վրա, նրա տանը չգտնվելու պայմաններում 5 անգամ կրակելուն նախորդող ժամանակահատվածում՝ տուժողին տեսնելուց հետո 2 (երկու) կրակոցներից մեկի գնդակը դիպել է վերելակի դռանը՝ հարակից 35 ամ բարձրության վրա՝ վերևից ներքև արձակված մեկ առանձին կրակոցի ներգործության հետևանքով, նշված երկու կրակոցները տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում կամ այդպիսի նշանատույթամբ չեն եղել, ոչ դիպուկ կրակելու կամ տուժողի խույս տալու արդյունքում չէ, որ կրակոցները չեն դիպել տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում, սպա հնարավոր չէ Կվյալ գործի նյութերով անմեղության կանխավարկածի սկզբունքի առկայության դեպքում արձանագրել, որ կան ամբաստանյալի մեղավորությունը Կվյալ հոդվածով հիմնավորող ապացույցների համակցություն, որի բավարարության շենը «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշից բարձր է, այսինքն՝ Բեգլար Հովհաննիսյանի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության

մասին ենթադրություններ անելու համար հիմքեր չկան. հակառակի մասին ողջամիտ դատողություններ անելու հավանականությունը ցածր է:

Միևնույն ժամանակ Դատարանը գրնում է, որ ողջամիտ են պաշտպանության կողմի այն դատողությունները, թե Բեգլար Հովհաննիսյանի մոտ Կուրդի Անուշավան Մանուչարյանին կյանքից զրկելու դիտարկության առկայության դեպքում, նա կարող էր դա իրագործել, մասնավորապես՝ (...) դեռևս դեպքին նախորդող օրը [կամ] դեպքի օրը՝ 2013 թվականի մարտի 23-ին, երբ շենքի հակառակ մուտքից երկուսով դուրս են եկել և Կուրդի գրնվել է նրա փեսադաշտում, փամփշղակալում ունենալով առնվազն 5 (հինգ) փամփուշտ, այդ պահին չի կրակել նրա վրա, հետ է եկել և 5 (հինգ) կրակոց է արձակել Անուշավան Մանուչարյանի դռան վրա, որից հետո հեռացել է դեպքի վայրից:

(...) Վերոգրյալի հիման վրա Դատարանն արձանագրում է, որ Բեգլար Հովհաննիսյանը Կուրդիին կյանքից զրկելու ուղղակի դիտարկություն չի ունեցել:

Դատարանը չի կարող հերքել և համաձայն է պաշտպանության կողմի այն դիրքորոշման հետ, ըստ որի, եթե նույնիսկ հիմք ընդունվի, թե Բեգլար Հովհաննիսյանը Կուրդիի ուղղությամբ 2 կրակոց արձակելու պահին ունեցել է նրան սպանելու դիտարկություն, սպա հետագայում վերջինս կամովին հրաժարվել է իր այդ «ենթադրյալ հանցանքի» իրականացումից, քանի որ ունեցել է այն իրագործելու ռեալ հնարավորություններ: Այսինքն՝ Կուրդիի դեպքում ևս ամբաստանյալը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթակա չէր լինի»:

14.1. Անդրադառնալով Հ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքին՝ Առաջին առյուծի դատարանը հաստատված է համարել, որ. «Այն պայմաններում, երբ հակառակն ապացուցված չէ ու հաստատված է, որ ամբաստանյալ Հրանտ Հարությունյանը Կուրդի Արմեն Միմոնյանին մինչև դեպքը չի ձանաչել, նրանց միջև թշնամական հարաբերություն, կոնֆլիկտ, վրեժի շարժառիթ չի եղել, գրնվելով առանց պարնեշներով մոտ փարածության վրա Կուրդիի հետ, սկզբում կրակել է գեյրնին, 3 (երեք) կրակոցներից որևէ մեկը Կուրդիի կենսական կարևոր օրգանների շրջանում կամ այդպիսի նշանառությամբ չեն եղել, կրակոցներից մեկի գնդակը դիպել է նրան հետագայակի («ոհկոշեարի») արդյունքում, ոչ դիպուկ կրակելու կամ Կուրդիի խոյս տալու կամ ակտիվ դիմադրության արդյունքում չէ, որ կրակոցները չեն դիպել Կուրդիի կենսական կարևոր օրգաններին շրջանում, Կուրդիի առողջությանը պարճառված միջին ծանրության վնասը նրա կյանքի համար վրանգավոր չի եղել, վնասվածք պարճատելուց հետո նրան առաջարկել է հիվանդանոց տանել, սպա հնարավոր չէ Կուրդի գործի նյութերով անմեղության կանխավարկածի սկզբունքի առկայության

դեպքում արձանագրել, որ կան ամբաստանյալի մեղավորությունը փյվյալ հողվածով հիմնավորող ապացույցների համակցություն, որի բավարարության շեղը «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշից բարձր է, այսինքն՝ Հրանտ Հարությունյանի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար հիմքեր չկան. հակառակի մասին ողջամիտ դատողություններ անելու հավանականությունը ցածր է:

Միևնույն ժամանակ Դատարանը գրնում է, որ ողջամիտ են պաշտպանության կողմի այն դատողությունները, թե Հրանտ Հարությունյանի մոտ րուժող Արմեն Միմոնյանին կյանքից զրկելու դիտրավորության առկայության դեպքում, նա կարող էր դա իրագործել, մասնավորապես՝

ա) Դեպքի օրը՝ մինչև Արմեն Միմոնյանին մոտենալն ու գեղնին զցելու նպատակով հրելը,

բ) րուժողի՝ մարմնական վնասվածք սրացած վիճակում գեղնին ընկած ժամանակ, երբ դեպքի վայրից հեռանալիս առնվազն մեկ փամիուշրով լիցքավորված արրճանակը ձեռքին մոտ րարածության վրա և ակնհայտ րեանելով, որ րուժողը կենդանի է, արրճանակն ուղղել է վրան ու համապարտսիսան իոսրերն սսել:

(...)

Վերոգրյալի հիման վրա Դատարանն արձանագրում է նաև, որ Հրանտ Հարությունյանը րուժողին կյանքից զրկելու դիտրավորություն չի ունեցել:

Տվյալ դեպքում ամբաստանյալ Հրանտ Հարությունյանը, կրակոցներ արձակելու եղանակով րուժողի նկարմամբ ուրնձգություն կատրելու արդյունքում նրա առողջությանը պարճատել է միջին ճանրության վնաս, սակայն րուժողին կյանքից զրկելու դիտրավորություն չի ունեցել, իսկ անձը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հողվածի 1-ին մասով քրեական պարասիսանարվության ենթակա է միայն ուղղակի դիտրավորությամբ կատրված արարքի համար:

Բացի այդ, հարկ է նշել, որ Դատարանը չի կարող հերքել և համաճայն է պաշտպանության կողմի այն դիրքորոշման հետ, ըստ որի, եթե նույնիսկ հիմք ընդունվի, թե Հրանտ Հարությունյանը րուժողի ուղղությամբ կրակոցներ արձակելու պահին ունեցել է նրան սպանելու դիտրավորություն, սպա հերագայում վերջինս կամովին հրաճարվել է իր այդ «ենթադրյալ հանցանքի իրականացումից», քանի որ ունեցել է այն իրագործելու ոեալ հնարավորություններ: Այսինքն՝ փյվյալ դեպքում ևս ամբաստանյալը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հողվածի 1-ին մասով քրեական պարասիսանարվության ենթակա չէր լինի» (տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթեր 71-134):

15. Անդրադատնալով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հողվածի 1-ին մասով ամբաստանյալներին պատասիսանատվության ենթարկելու

հարցին՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ. «(...) այն պայմաններում, երբ արձանագրվել է, որ մասնավորապես՝

ա) Հրանյր Հարությունյանն ու Բեգլար Հովհաննիսյանը 2013 թվականի մարտի 24-ին՝ ժամը 02.30-ին, ինքնակամ ներկայացել են ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին,

բ) Կամուլին հանձնել են ապօրինի ձեռք բերած և պահվող՝ առաջինը՝ «Մարգոլին ՄՅՄ» տեսակի, «M 0280» համարի ապրճանակը՝ 1 փամփուշտով, իսկ վերջինը՝ «Մակարով» տեսակի, «HC 1577» համարի ապրճանակը»

գ) Ինքնակամ ներկայանալով՝ հայտարարել են, որ, մասնավորապես, մարտի 23-ին՝ ժամը 13.00-ի սահմաններում, Ավան-Առինջ 2-րդ միկրոշրջանի 4/2 շենքի բակում իրենք են կրակել ու դիմել փախուստի,

դ) Մինչև Հրանյր Հարությունյանի ու Բեգլար Հովհաննիսյանի ինքնակամ ներկայանալը քրեական գործի նյութերում նրանց վերաբերյալ որևէ փյվյալ առկա չէ, այդ պահին բացահայտվելու, նրանց մոտ նշված հրազենները հայտնաբերելու իրական վրանագ առկա չի եղել,

ե) Հրանյր Հարությունյանն ու Բեգլար Հովհաննիսյանը ապօրինի ձեռք բերած և իրենց մոտ պահվող համապատասխան հրազենները ոստիկանությանը հանձնել են կամուլին. հանձնումը չի եղել այն հայտնաբերելու և առգրավելու հետ կապված որևէ դատավարական, քննչական գործողություն կատարելու ընթացքում, ինչպես նաև հակառակի մասին հետևություններ անել հնարավոր չէ (չկա նաև դրա մասին վկայող պատշաճ որևէ ապացույց),

այս պերջիններս ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ենթակա չեն քրեական պատասխանատվության. նույն հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ պետք է քրեական պատասխանատվությունից ազատվեն» (տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթեր 71-134):

16. Վերաքննիչ դատարանը, վերանայելով ստորադաս դատարանի դատական ակտը, հիմնավոր է համարել Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները՝ ամբաստանյալներ Հ.Հարությունյանին և Բ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներնետրով արդարացնելու, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին (տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթեր 69-96):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

17. Բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարանները, քրեական գործում առկա՝ Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի կողմից ՀՀ

քրական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարումը հիմնավորող ապացույցներին պատշաճ իրավական գնահատական չտալով, թույլ են տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Մասնավորապես, վերլուծելով սպանության հանցակազմի, սպանության փորձի, ինչպես նաև զենքը կամովին հանձնելու վերաբերյալ Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի վերաբերյալ գործով ձեռք բերված ապացույցները և գործի փաստական հանգամանքները՝ բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանները ճիշտ իրավական գնահատականներ չեն տվել ամբաստանյալների կողմից կատարված արարքներին:

18. Ըստ բողոքաբերի՝ սույն գործով ձեռք են բերվել բավարար ապացույցներ, որոնցով հիմնավորվել է, որ ամբաստանյալներ Հ.Հարությունյանը և Բ.Հովհաննիսյանը, իմանալով 2013 թվականի մարտի 22-ին Բերդ-Երևան մայրուղու վրա տեղի ունեցած միջադեպի մասին, որի ընթացքում տուժող Ա.Մանուչարյանը հայիոյանքներ է տվել վերջիններիս ընկերների հասցեին, հաջորդ օրն ընկերների հետ գնացել են տուժողի շենքի բակ՝ նրանից վրեժխնդիր լինելու նպատակով: Այսինքն՝ հիմնավոր չեն դատարանների այն փաստարկները, թե Բ.Հովհաննիսյանը և Հ.Հարությունյանը նախքան դեպքը տուժողներին չեն ճանաչել, և նրանց միջև թշնամական հարաբերություն, կոնֆլիկտ, վրեժի շարժառիթ չի եղել:

19. Բողոքաբերի պնդմամբ ստորադաս դատարանները ոչ մի հիմք չեն ունեցել եզրակացնելու, որ Բ.Հարությունյանի կողմից արձակված երկու կրակոցները տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում կամ այդպիսի նշանառությամբ չեն եղել, և ոչ դիպուկ կրակելու կամ տուժողի խույս տալու արդյունք չէ, որ կրակոցները չեն դիպել տուժող Անուշավան Մանուչարյանի կենսական կարևոր օրգաններին: Ավելին՝ ինչպես նախաքննությամբ ձեռք բերված, այնպես էլ դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով, մասնավորապես, տուժող Ա.Մանուչարյանի ցուցմունքներով հիմնավորվել է, որ երբ տուժող Ա.Մանուչարյանը, նկատելով զենքը ձեռքին իր ուղղությամբ քայլող Բեգլար Հովհաննիսյանին, շքամուտքով դիմել է փախուստի, վերջինս էլ, հետապնդելով Անուշավան Մանուչարյանին, կրակոցներ է արձակել նրա ուղղությամբ:

Բացի այդ, դատաքննության ընթացքում ցուցմունք տալու ժամանակ Բ.Հովհաննիսյանը հայտնել է, որ մինչև դեպքը ատրճանակից երբևէ չի կրակել, նույնիսկ չի իմացել, թե կրակոցի պահին այն ինչ ձայն է արտահանում:

Հաշվի առնելով, որ երբևէ ատրճանակ չկիրառած անձի կողմից կրակոցներն արձակվել են վազքի մեջ գտնվող անձի ուղղությամբ, բողոքաբերի պնդմամբ միանշանակ կարելի է եզրահանգել, որ ամբաստանյալ

Բ.Հովհաննիսյանը ոչ թե չի ցանկացել սպանել Անուշավան Մանուշարյանին, այլ պարզապես վրիպել է ոչ դիպուկ կրակելու հետևանքով: Այլ խոսքով՝ գործով ձեռք բերված ապացույցների վերլուծությունից ակնհայտ է, որ տվյալ դեպքում Բեգլար Հովհաննիսյանին չի հաջողվել իր հանցավոր մտադրությունն ավարտին հասցնել՝ տուժողի փախուստի և իր կողմից ոչ դիպուկ կրակոցներ արձակելու հետևանքով:

20. Բողոքաբերը հիմնագուրկ է համարել նաև սպանության փորձ կատարելու մասով Հ.Հարությունյանի մեղավորությունը ապացուցված չլինելու վերաբերյալ դատարանների հետևությունները:

Այսպես՝ ստորադաս դատարաններն արձանագրել են, որ տուժող Արմեն Միմոնյանը հրազենային վնասվածքներից մեկը ստացել է գնդակի հետացատկի («ռիկոշետի») արդյունքում: Մինչդեռ բողոքաբերի պնդմամբ՝ ապացույցների վերլուծությունը թույլ է տալիս հանգելու հիմնավոր եզրակացության, որ տուժող Արմեն Միմոնյանը հրազենային վնասվածքներից ոչ մեկը չի ստացել ռիկոշետի արդյունքում, այլ դրանք ստացել է ուղիղ կրակոցների հետևանքով՝ մեջքի կողմից:

Բողոքաբերը հիմնավոր չի համարել նաև դատարանների կողմից արված այն եզրահանգումները, որ Հ.Հարությունյանի կողմից արձակված կրակոցները չեն եղել տուժող Ա.Միմոնյանի կենսական կարևոր օրգանների շրջանում: Բողոքի հեղինակը, մասնավորապես, նշել է, որ տուժողը հրազենային վնասվածքները ստացել է ողնաշարին հարակից և կոնքի շրջանում, որտեղ գտնվում են ինչպես ողնուղեղը, այնպես էլ մարդու կյանքի համար կենսական նշանակություն ունեցող ներքին օրգաններ, որոնց վնասումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների՝ ընդհուպ մահվան: Հետևաբար, տուժող Արմեն Միմոնյանը վնասվածքները ստացել է կենսական կարևոր օրգանների շրջանում և դրանց չվնասվելը զուտ պատահականություն է: Քրեական գործով ձեռք բերված ապացույցների վերլուծությունից ակնհայտ է, որ տվյալ դեպքում մահացու հետևանքը վրա չի հասել Հրանտ Հարությունյանի կամքից անկախ պատճառներով՝ տուժող Արմեն Միմոնյանի ակտիվ դիմադրության, ժամանակին փախուստի դիմելու, տուժողին ժամանակին բժշկական օգնություն ցույց տալու և մի շարք այլ հանգամանքների հետևանքով:

21. Անդրադատնալով ստորադաս դատարանների այն եզրահանգումներին, որ տուժողներին կյանքից զրկելու դիտավորության առկայության դեպքում Հ.Հարությունյանը և Բ.Հովհաննիսյանը կարող էին դա իրագործել դեռևս դեպքի նախորդ օրը, երբ ունեցել են նման հնարավորություն՝ բողոքաբերը նշել է, որ ցանկացած անձ որևէ հանցագործություն կատարելու իր հանցավոր մտադրությունն իրագործելիս ինքնուրույն է որոշում, թե կոնկրետ երբ, որտեղ և ինչ եղանակով իրագործի այն: Սպանելու դիտավորությամբ կրակոցներ արձակելն ինքնին սպանության փորձի հանցակազմ է պարունակում, որպիսի պայմաններում

շենքի հակառակ մուտքից դուրս գալուց հետո Անուշավան Մանուչարյանի ուղղությամբ Բեգլար Հովհաննիսյանի կողմից կրկին կրակոցներ չարձակելը, կամ Արմեն Միմոնյանին մեջքի կողմից հրազենային երկու վնասվածքներ պատճառելուց հետո Հրանտ Հարությունյանի կողմից կրկին չկրակելը որևէ նշանակություն չի կարող ունենալ ամբաստանյալների արարքները սպանության փորձ որակելու հարցում: Վերջիններիս դիտավորության մասին են վկայում նաև կրակոցների քանակը, ուղղությունը, հանցավորի և տուժողի փոխադարձ դիրքը, կրակոցներին նախորդող ժամանակահատվածում տուժողի և հանցավորի գործողությունների բնույթը, հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով ընտրված առարկաները և այլն: Եթե իրականում ամբաստանյալներն նպատակ են ունեցել հայիոյանքներ տալու համար «պատժել» Անուշավան Մանուչարյանին՝ ծեծի ենթարկել վերջինիս, ապա թվային առումով մի քանի անգամ գերազանցելով տուժողներին, կարող էին առանց զենքերի գործադրման հեշտությամբ հաշվեհարդար տեսնել նրանց հետ:

22. Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ դատարանները հանգել են ոչ ճիշտ հետևության, որ Հրանտ Հարությունյանը և Բեգլար Հովհաննիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ենթակա չեն քրեական պատասխանատվության:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմի կիրառման հիմքում ընկած է հոդվածում նշված առարկաների կամովին հանձնելու պարտադիր հանգամանքը, ինչը ենթադրում է, որ անձը գիտակցում է իրեն բացահայտելու իրական սպառնալիքի բացակայությունը: Եթե անձը զգում է, որ այդ պահին առկա է իրեն բացահայտելու իրական սպառնալիքը և այդ հանգամանքից դրդված է իրականացնում հանձնումը, ապա այն կամովին համարվել չի կարող: Յուրաքանչյուր դեպքում հանձնման կամավորությունը որոշվում է կոնկրետ գործի փաստական հանգամանքներից ելնելով: Քրեական գործով ձեռք բերված ապացույցների վերլուծությունը և դեպքի փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ ամբաստանյալների կողմից հրազենների հանձնումը կամովին համարվել չի կարող, քանի որ վերջիններս որևէ հիմք չեն ունեցել գիտակցելու իրենց բացահայտելու իրական սպառնալիքի բացակայությունը:

Այսպես՝ ամբաստանյալների կողմից հրազենների գործադրմամբ կատարված առանձնապես ծանր հանցագործության դեպքի առթիվ վարույթն իրականացնող մարմնի կողմից նույն օրը հարուցվել է քրեական գործ, որի շրջանակներում ձեռնարկվել են դատավարական և քննչական համապատասխան գործողություններ, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հանցագործություն կատարած անձանց հայտնաբերելու և քննությանը ներկայացնելու ուղղությամբ: Քրեական գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է, որ

Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի կողմից հրազենները կիրառվել են օրը ցերեկով՝ բնական լուսավորության պայմաններում, բազմաբնակարան շենքի բակում, բազմաթիվ անձանց ներկայությամբ: Նրանց մոտ զենքերի առկայությունը և դրանց գործադրումը տեսանելի է եղել շատերին: Բացի այդ, դեպքի վայրում հայտնաբերվել են կրակված, նույնացման համար պիտանի գնդակներ ու պարկուճներ, կրակոցների այլ հետքեր: Ամբաստանյալները դեպքի վայրից հեռացել են իրենց ավտոմեքենաներով, որոնց համարանիշները տեսանելի են եղել շատերին, վերջիններս նախքան դեպքը և դրանից հետո շահագործել են բջջային հեռախոսներ և այլն: Հատկանշական է նաև ամբաստանյալ Հրանտ Հարությունյանի՝ դատարանում արտահայտած այն միտքը, որ փախչելու կամ թաքնվելու իմաստ չի տեսել, այդ պատճառով էլ ինքնակամ ներկայացել է ոստիկանություն:

Նման պայմաններում փաստել, թե ամբաստանյալների կողմից զենքերի հանձնումն եղել է կամավոր, ըստ բողոքաբերի, անթույլատրելի է:

23. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի վերաբերյալ Առաջին ստյանի դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 22-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2015 թվականի ապրիլի 29-ի որոշումը՝ գործն ուղարկելով ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

1. Սպանության փորձի վերաբերյալ.

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Բ.Հովհաննիսյանի և Հ.Հարությունյանի արարքներում սպանության փորձի բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

25. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվություն է նախատեսված սպանության՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելու համար:

Վճռաբեկ դատարանը կրկնում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն առ այն, որ մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործություններից հանրային առավել բարձր վտանգավորությամբ առանձնանում է սպանությունը: Սպանության օբյեկտ են հասարակական այն հարաբերությունները, որոնք ուղղված են մարդու կյանքի անվտանգության ապահովմանը: Այլ կերպ ասած՝ նշված հանցագործության անմիջական օբյեկտը յուրաքանչյուր մարդու կյանքն է, որը ենթակա է քրեաիրավական պաշտպանության նրա ծնվելու պահից մինչև մահ

(տե՛ս Ա.Բաղդասարյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10 որոշման 14-րդ կետը):

26. ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցափորձ է համարվում ուղղակի դիրավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անսխի հանգամանքներով»:

Վճարելի դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է հանցափորձի և դրա հատկանիշների իրավական վերլուծությանը (տե՛ս, մասնավորապես, Ս.Հունիկյանի գործով 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08, Ա.Բաղդասարյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10, Կ.Հովհաննիսյանի և մյուսների գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12, Գ.Մանուկյանի գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱՄԴ/0110/01/12 որոշումները):

Այսպես՝ քննարկելով սպանության փորձի հատկանիշները՝ Գ.Մանուկյանի վերաբերյալ որոշմամբ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) Սուբյեկտիվ կողմից սպանության փորձը դրսևորվում է միայն ուղղակի դիրավորությամբ, այսինքն՝ հանցավորը նախատեսում է մահվան առաջացման անխուսափելիությունը կամ իրական հնարավորությունը և ցանկանում է դրա վրա հասնելը, գիրակցում է, որ եթե համապատասխան հեղուկներն առաջանա, ապա այն անմիջականորեն բխելու է իր արարքից, և դրանց միջև առկա կլինի միանշանակ պարճատական կապ: Մասնավորապես, կոնկրետ դեպքում հանցագործության գործիքը կամ միջոցը, եղանակը, հասցված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը, ինչպես նաև առկա այլ օբյեկտիվ հանգամանքները կարող են վկայել հանցավորի կողմից մահվան առաջացման անխուսափելիությունը կամ իրական հնարավորությունը նախատեսելու, հեղուկներ վերջինիս մոտ ուղղակի դիրավորության առկայության մասին:

(...) Այսպիսով, կատարվածը սպանության փորձ որակելու համար անհրաժեշտ է, որ հանցավորն ունենա անձին կյանքից զրկելու պարզ կոնկրետացված (նախապես կամ հանկարծակի առաջացած) դիրավորություն, ինչը հնարավոր է պարզել գործի հանգամանքների համակողմանի վերլուծության արդյունքում հատկապես ուշադրություն դարձնելով հանցավորի՝ նախքան հանցագործությունը, հանցանքի ընթացքում և դրանից հետո դրսևորած վարքագծին:

[Ե]թե գործի փաստական հանգամանքների համակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցանքը կատարելու պահին հանցավորի դիրավորությունն ուղղված է եղել տուժողին կյանքից զրկելուն (օրինակ՝ դրա մասին կարող են վկայել հանցագործության գործիքները կամ միջոցները՝ հրազեն, սառը զենք, սուր ծակող-կտրող

գործիքներ և այլն, հարվածների քանակն ու ուժգնությունը, պարճառված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների վնասումը), հանցագործության եղանակը, մեխանիզմը, նպատակը, շարժառիթը, իրադրությունը և այլ հանգամանքներ), ապա համապարասիան արարքն իրականացնելուց հետո անձի դրսևորած դրական վարքագիծը (օրինակ՝ հեղազու գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալը, փուժողին օգնություն ցույց տալը, շրտաօգնություն կանչելը և այլն) դուրս է սպանության ավարտված հանցափորձի շրջանակներից, վկայում է ոչ թե սպանելու ուղղակի դիրավորության բացակայության, այլ պարզապես կատարածի համար զղջալու մասին, ինչը դատարանի կողմից կարող է հաշվի առնվել պարիժ նշանակելիս: Եման գործողությունները չեն կարող ազդեցություն ունենալ և փոխել արարքի քրեաիրավական որակումը:

Միևնույն ժամանակ (...) բոլոր այն դեպքերում, երբ հանցավորի՝ նախքան հանցագործությունը, հանցանքի ընթացքում և դրանից հետո դրսևորած վարքագիծը բնութագրող հանգամանքների համակցությունը վկայում է սպանության ուղղակի դիրավորության բացակայության և, համապարասիանարար, անուղղակի կամ չկոնկրետացված դիրավորության առկայության մասին (օրինակ՝ փուժողին ձեռքերով հարվածներ հասցնելը, դրանց ուժգնությունը և տեղակայումը կամ նույնիսկ զենքով կրակելը, սակայն կենսական ոչ կարևոր օրգանների շրջանում և այլն), ապա համապարասիան հանրորեն վրանգավոր հեղևանքը՝ մահը, չառաջանալու դեպքում արարքը չի կարող որակվել որպես սպանության փորձ և պետք է որակվի ըստ փաստացի առաջացած հեղևանքի» (տես, Գ.Մանուկյանի գործով Վճարելի դատարանի 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշման 17 և 17.1-րդ կետերը):

27. Սույն գործի փաստերի վերլուծությունից երևում է, որ Հ.Հարությունյանը և Բ.Հովհաննիսյանը, իմանալով, որ Ա.Մանուկյանը հայհոյանքներ է տվել իրենց ընկերների հասցեին, 2013 թվականի մարտի 22-ին գնացել են Ա.Մանուկյանի բնակության վայր՝ Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի 4/2 շենք՝ հանդիպելու և վրեժխնդիր լինելու համար, սակայն այդ օրը նրան հանդիպել չի հաջողվել: Հաջորդ օրը՝ ժամը 13.30-ի սահմաններում, ամբաստանյալներն ընկերների հետ դարձյալ գնացել են տուժողի բնակության վայր: Ժամը 15.00-ի սահմաններում շենքի շքամուտքից դուրս է եկել տուժող Ա.Միմոնյանը, իսկ նրա հետևից՝ տուժող Ա.Մանուկյանը: Հ.Հարությունյանը, նկատելով Ա.Մանուկյանի ավտոմեքենային մոտեցող նրա ազգական Արմեն Միմոնյանին, կարծելով, թե նա Ա.Մանուկյանն է, ապօրինի ձեռք բերած և իր մոտ պահվող հրազեն հանդիսացող «Մարգոլին ՄՅՄ» տեսակի, «M 0280» համարի ատրճանակը ձեռքին մոտեցել է Ա.Միմոնյանին, փորձել հրելով գցել գետնին, սակայն տեսնելով, որ վերջինս չի ընկնում և հրելով փորձում է հեռանալ, կրակոց

է արձակել գետնին, իսկ երբ Ա.Սիմոնյանը, շրջվել է ու փորձել փախչել, ևս երկու կրակոց է արձակել նրա ուղղությամբ, որոնք դիպել են վերջինիս ձախ հետույքային և ձախ գոտկային շրջաններին, պատճառել առողջության միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով:

Այդ նույն ընթացքում Բ.Հովհաննիսյանն ապօրինի ձեռք բերած և իր մոտ պահվող հրազեն հանդիսացող «Մակարով» տեսակի, «HC 1577» համարի ատրճանակը ձեռքին հետապնդել է շենքի շքամուտքից դուրս եկած, իրեն նկատած և փախուստի դիմած Ա.Մանուչարյանին: Վերջինիս փախչելու՝ Ավան Առինջ 1-ին միկրոշրջանի 4/2 շենքի առաջին հարկի շքամուտքի ուղղությամբ կատարել է 2 կրակոց, որից մեկի գնդակը դիպել է վերելակի դռանը: Անուշավան Մանուչարյանին հետապնդել է մինչև հիշյալ շենքի ետնամասի մյուս մուտքը, որից հետո դադարել է հետապնդել նրան, վերադարձել է շքամուտք ու հինգ կրակոցներ արձակել տուժողի բնակարանի մուտքի դռանը, որի հետևանքով վերջինիս պատճառել է զգալի չափի՝ 43.000 ՀՀ դրամի նյութական վնաս (տե՛ս սույն որոշման 5-8-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում Բ.Հովհաննիսյանին և Հ.Հարությունյանին արդարացրել է: Վերլուծելով ամբաստանյալների՝ դեպքին նախորդող և հաջորդող պահերին դրսևորած վարքագիծը, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ դրանք վկայում են ամբաստանյալների՝ տուժողներին կյանքից զրկելու դիտավորության բացակայության մասին: Առաջին ատյանի դատարանն իր դիրքորոշումը հիմնավորել է նաև նրանով, որ տուժողներին կյանքից զրկելու դիտավորություն ունենալու պարագայում ամբաստանյալներն իրենց հանցավոր մտադրությունը կարող էին իրագործել դեռևս դեպքի նախորդ օրը կամ դեպքի օրը՝ առավել հարմար պահի: Դատարանը կարևորել է նաև այն հանգամանքը, որ եթե նույնիսկ ամբաստանյալները կրակոցներ արձակելու պահին ունեցել են տուժողներին սպանելու դիտավորություն, ապա հետագայում վերջիններս կամովին հրաժարվել են այդ ենթադրյալ հանցանքն ավարտին հասցնելուց, քանի որ ունեցել են այն իրագործելու ռեալ հնարավորություն (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին հիմնավոր է համարել Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները՝ ամբաստանյալներին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներն արդարացնելու մասին (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը):

28. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 26-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել գործում առկա և ամբաստանյալների դիտավորության

բացահայտման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Մասնավորապես, ստորադաս դատարանների կողմից անտեսվել է, որ.

- ամբաստանյալներից Բ.Հովհաննիսյանը, տեսնելով իրենից 5-6 մետր հեռավորության վրա գտնվող տուժող Ա.Մանուչարյանին, զենքը ձեռքին, հետապնդել է նրան և երկու կրակոց արձակել նրա ուղղությամբ: Այս առնչությամբ Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում հաստատված է համարել, որ երկու կրակոցները տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում կամ այդպիսի նշանառությամբ չեն եղել այն պարագայում, երբ ըստ գործի նյութերի՝ առաջին կրակոցը դիպել է վերելակի դռանը, իսկ երկրորդ կրակոցի տեղը չի պարզվել (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ինչի մասին իր դատական ակտում նշել է նաև Առաջին ատյանի դատարանը:

Ինչ վերաբերում է դատարանի այն դիտարկմանը, որ ոչ դիպուկ կրակելու կամ տուժողի խոյս տալու արդյունքում չէ, որ կրակոցները չեն դիպել նրա կենսական կարևոր օրգանների շրջանում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հենց Առաջին ատյանի դատարանը, իր դատական ակտում արձանագրելով Բ.Հովհաննիսյանի ցուցմունքն առ այն, որ նա նախկինում ատրճանակից երբևէ չի կրակել, պատշաճ գնահատման չի ենթարկել այն, բացի այդ հաստատված է համարել, որ Բ.Հովհաննիսյանին նկատելուց անմիջապես հետո Ա.Մանուչարյանը դիմել է փախուստի: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավորված չի համարում Առաջին ատյանի դատարանի՝ քննարկվող դիտարկումը:

- Հ.Հարությունյանի և տուժող Ա.Սիմոնյանի միջև տեղի ունեցած ընդհարումից հետո Հ.Հարությունյանը մոտ տարածությունից 2 անգամ կրակել է տուժողի մեջքի ուղղությամբ: Ընդ որում, Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում հաստատված է համարել, որ ամբաստանյալը և տուժողը գտնվել են մոտ տարածության վրա: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում բողոքաբերի փաստարկներն առ այն, որ տուժողը հրազենային վնասվածքները ստացել է ողնաշարին հարակից և կոնքի շրջանում, որտեղ գտնվում են մարդու կյանքի համար կենսական նշանակություն ունեցող ներքին օրգաններ, որոնց վնասումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների՝ ընդհուպ մահվան (տե՛ս սույն որոշման 19-րդ կետը): Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն դիտարկմանը, որ կրակոցներից մեկի գնդակը դիպել է Ա.Սիմոնյանին հետացատկի («ոիկոշետի») արդյունքում (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը), Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ գործի նյութերում, մասնավորապես, դատաբժշկական, դատահետքաբանական և դատաձգաբանական համալիր փորձաքննության թիվ 628 եզրակացության մեջ չկա որևէ փաստական տվյալ, որը հնարավորություն կտար եզրահանգելու, որ կրակոցներից մեկի գնդակը դիպել է Ա.Սիմոնյանին հետացատկի (ոիկոշետի) արդյունքում: Նշված փորձաքննության եզրակացության

համաձայն՝ «Արմեն Միմոնյանի հազուարների և մարմնի վրա առկա վնասվածքները (...) մարմնի երկայնական առանցքի նկատմամբ ունեն հետևից առաջ, քիչ ձախից աջ ուղղություն» (տես սույն որոշման 10-րդ կետը):

29. Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել այն հանգամանքները, որ ամբաստանյալներից յուրաքանչյուրը մոտ տարածությունից երկու անգամ կրակել են տուժողների ուղղությամբ, հրագն են գործադրել այն պարագայում, երբ թվային առումով մի քանի անգամ գերազանցելով տուժողներին՝ կարող էին առանց զենքերի գործադրման հեշտությամբ հաշվեհարդար տեսնել նրանց հետ, կրակոցներ են արձակել տուժողների ուղղությամբ, այլ ոչ թե օդ կամ հատակին, երբ վերջիններս վախից դիմել են փախուստի:

Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների այն փաստարկին, որ ամբաստանյալները և տուժողները չեն ունեցել թշնամական հարաբերություններ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործի նյութերից, մասնավորապես՝ ամբաստանյալներ Հ.Հարությունյանի, Բ.Հովհաննիսյանի ցուցմունքներից բխում է, որ վերջիններս 2013 թվականի մարտի 22-ին և 23-ին գնացել են տուժող Ա.Մանուչարյանի բնակության վայր՝ ամբաստանյալների ընկերների և տուժողի միջև Երևան-Բերդ մայրուղու վրա տեղի ունեցած միջադեպի համար հաշվեհարդար տեսնելու նպատակով:

Նման հանգամանքների համակցությունն արդեն իսկ, անկախ հետևանքներից, վկայում է հանցավորների մոտ տուժողներին կյանքից զրկելու ուղղակի դիտավորության մասին: Մասնավորապես, նույնիսկ եթե տուժողներին կյանքից զրկելը ամբաստանյալների համար վերջնական նպատակ չի եղել, այնուամենայնիվ, վերջիններս նախատեսել են նման հետևանքի անխուսափելիությունը, ինչը վկայում է սպանության ուղղակի դիտավորության առկայության մասին: Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ առկա է սպանության ավարտված հանցավորձ, քանի որ հանցավորները կատարել են բոլոր անհրաժեշտ գործողությունները հանցագործությունն ավարտին հասցնելու համար, սակայն այն չի ավարտվել նրանց կամքից անկախ հանգամանքներով (սպանության ավարտված հանցավորձի մասին մանրամասն տե՛ս Գ.Մանուկյանի գործով Վճարելի դատարանի վերը հիշարակված որոշման 16.1 և 17-րդ կետերը):

30. Վճարելի դատարանն իրավաչափ չի համարում նաև ամբաստանյալներ Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի մոտ տուժողներին կյանքից զրկելու դիտավորության բացակայության մասին ստորադաս դատարանների այն հիմնավորումը, որ կյանքից զրկելու դիտավորություն ունենալու պարագայում ամբաստանյալներն իրենց հանցավոր մտադրությունը կարող էին իրագործել դեռևս դեպքի նախորդ օրը կամ դեպքի օրը՝ առավել հարմար պահի: Վճարելի դատարանը հիմնավորված է համարում բողոքաբերի այն դիրքորոշումը, որ ցանկացած անձ որևէ

հանցագործություն, սույն գործով՝ սպանություն, կատարելու իր հանցավոր մտադրությունն իրագործելիս, ինքնուրույն է որոշում, թե կոնկրետ երբ, որտեղ և ինչ եղանակով իրագործի այն (տե՛ս սույն որոշման 20-րդ կետը):

Վճարելի դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում նաև Առաջին ատյանի դատարանի դատական ակտի հիմքում դրված այն դիրքորոշմանը, որ եթե նույնիսկ ամբաստանյալները կրակոցներ արձակելու պահին ունեցել են տուժողներին սպանելու դիտավորություն, ապա հետագայում վերջիններս կամովին հրաժարվել են այդ ենթադրյալ հանցանքն ավարտին հասցնելուց, քանի որ ունեցել են այն իրագործելու ռեալ հնարավորություն: Մասնավորապես, Վճարելի դատարանն արձանագրում է, որ սպանության ավարտված և չհաջողված հանցավորձից հետո հանցանքն ավարտին հասցնելուց հրաժարվելը, նույնիսկ եթե հանցավորներն իրական հնարավորություն են ունեցել այն հասցնելու մինչև վերջ, չի կարող հանցագործությունից կամովին հրաժարում համարվել: Տվյալ դեպքում փաստացի կատարված արարքն իր մեջ արդեն իսկ պարունակում է ավարտված հանցավորձի բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, հետևաբար անձը չի կարող ազատվել իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի համար քրեական պատասխանատվությունից: Մինևույն ժամանակ չհաջողված հանցավորձից հետո հանցանքն ավարտին հասցնելուց հրաժարվելը գործով առկա այլ հանգամանքների հետ միասին կարող են գնահատվել որպես մեղմացնող հանգամանք և հաշվի առնվել դատարանի կողմից պատիժ նշանակելիս (*սպանության ավարտված հանցավորձի դեպքում կամովին հրաժարվելու ինստիտուտի առանձնահատկությունների վերաբերյալ մանրամասն տե՛ս Գ.Մանուկյանի գործով Վճարելի դատարանի վերը հիշարակված որոշման 18.1-րդ կետը*):

31. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, Հ.Հարությունյանին և Բ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով արդարացնելով, իսկ Վերաքննիչ դատարանը, համաձայնվելով Առաջին ատյանի դատարանի դիրքորոշման հետ, պատշաճ վերլուծության չեն ենթարկել գործում առկա հանգամանքները, հանցավորի՝ նախքան հանցանքը և դրա ընթացքում դրսևորած վարքագիծը և Վճարելի դատարանի կողմից սույն որոշմամբ արձանագրված մնացած հանգամանքները, որոնք իրենց համակցության մեջ բացահայտում են հանցավորների դիտավորության տեսակը և ուղղվածությունը, մասնավորապես այն, որ վերջիններս գործել են տուժողներին սպանելու ուղղակի դիտավորությամբ:

Հետևաբար, Բ.Հովհաննիսյանի և Հ.Հարությունյանի արարքներում սպանության փորձի բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

II. Ձեռքը կամովին հանձնելու վերաբերյալ.

32. Վճարելի դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված են արդյոք ստորադաս դատարանների հետևությունները՝ Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի կողմից իրենց մոտ ապօրինի պահվող զենքը կամովին հանձնելու մասին:

33. ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նշված առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:

33.1. Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքում առկա են նորմեր, որոնք կարգավորում են հանցագործություն կատարելուց հետո անձի կողմից դրսևորած պոզիտիվ վարքագծի հիման վրա ծագող հատուկ հասարակական հարաբերություններ: Օրենսդրի կողմից հիշյալ հարաբերությունները կարգավորող նորմերը զետեղված են ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 11-րդ գլխում, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված առանձին հոդվածներում (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ, 200-րդ, 218-րդ, 223-րդ, 235-րդ, 299-րդ, 312-րդ, 327.1-րդ, 362-րդ և այլ հոդվածներ): Վկայակոչված նորմերն իրենց բնույթով խրախուսական նորմեր են, որոնք քրեորեն հետապնդելի արարք կատարած անձին առաջարկում են իրականացնել սոցիալական նշանակություն ունեցող որոշակի դրական վարքագիծ՝ նրա արարքը խթանելով խրախուսանքով: Այդ նորմերում սահմանվում են պահանջներ, որոնց իրականացման դեպքում հնարավոր է եզրակացնել, որ հանցագործություն կատարած անձը կորցրել է իր երբեմնի հանրային վտանգավորությունը, որի արդյունքում նպատակահարմար է այդ անձին ազատել քրեաիրավական ներգործության միջոցներից, մասնավորապես՝ քրեական պատասխանատվությունից:

ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում առանձին հանցակազմերի առնչությամբ խրախուսական նորմերի նախատեսումն ինքնանպատակ չէ: Այն որոշակի բնույթի հանցագործությունների դեմ պայքարի յուրահատուկ միջոց է, որն ուղղված է դրանց խափանմանը կամ դրանց հետ կապակցված այլ հանցագործությունների կանխմանը կամ բացահայտմանը:

34. Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված խրախուսական նորմը նպատակ ունի ապօրինի պահվող զենքի և նորմում թվարկված մյուս առարկաների կամավոր հանձնումը խրախուսելու եղանակով դադարեցնելու ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ

հողվածով նախատեսված հանցագործության կատարումը և այդպիսով կանխելու հետագայում դրանց հնարավոր գործադրմամբ անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված կամ այլ հանցագործությունները: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված արարքների հանրային վտանգավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանով նախատեսված առարկաները հանցավոր նպատակով օգտագործելու իրական հնարավորություն է ստեղծվում, ինչը վտանգ է առաջացնում մարդկանց կյանքի և առողջության համար: Քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը հողվածում նշված առարկաների անօրինական շրջանառությունից մարդու և հասարակության անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հետևաբար հողվածում նշված առարկաների հանձնման դեպքում ապահովվում է տվյալ հանցագործության օբյեկտի պահպանությունը, իսկ հանձնման կամավորության դեպքում՝ վերանում հանցանք կատարած անձի հանրային վտանգավորությունը:

Հողվածում նշված առարկաների հանձնման կամովին լինելու հարցը Վճռաբեկ դատարանն իրավական վերլուծության է ենթարկել Հ.Բաղդասարյանի վերաբերյալ որոշմամբ, որտեղ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «Հանձնումը համարվում է կամովին, եթե անձը, գիտակցելով, որ այդ պահին իրեն բացահայտելու իրական սպառնալիք չկա, իր հայեցողությամբ հանձնում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածում նշված առարկաները, այսինքն՝ անձի ընդունած այդ որոշումը պետք է լինի ազատ և գիտակցված ընտրության արդյունք: Բացահայտման իրական սպառնալիքի առկայությունը և դրանից դրդված հանձնումը չի կարող համարվել կամովին: Այն դեպքերում, երբ իշխանությունները տեղյակ են կոնկրետ անձի մուր նշված առարկաների առկայության մասին և առաջարկում են հանձնել դրանք, հանձնումը կամովին համարվել չի կարող: Այս պայմաններում դա կարող է դիտվել միայն որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք» (տե՛ս Հ.Բաղդասարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ2/0059/ 01/08 որոշման 20-րդ կետը):

Վերահաստատելով և զարգացնելով վերոհիշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող հողվածում նշված առարկաների հանձնումը կարող է համարվել կամովին, եթե անձը, գիտակցելով դրանք ապօրինի պահելը շարունակելու իրական հնարավորությունը, այդուհանդերձ հանձնում է քննարկվող առարկաները կամ հայտնում դրանց գտնվելու վայրի մասին: Քննարկվող առարկաները ապօրինի պահելու իրական հնարավորություն անձը կարող է ունենալ, եթե, օրինակ,

վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէ զենքի գոյության մասին կամ բացակայում են դրա բացահայտման օբյեկտիվ հնարավորության մասին վկայող հանգամանքները և անձը ողջամտորեն գիտակցում է դա: Հետևաբար, ապօրինի պահվող զենքի գործադրմամբ հանրորեն վտանգավոր այս կամ այն արարքը կատարելուց հետո զենքը հանձնած անձը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, քանի որ զենքի գործադրման փաստը վարույթն իրականացնող մարմիններին հաստատապես հայտնի լինելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառումը չի բխի քննարկման առարկա խրախուսական նորմը նախատեսելու քրեական քաղաքականության նպատակներից: Մինևույն ժամանակ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ապօրինի զենքով հանրորեն վտանգավոր այս կամ այն արարքը կատարելուց հետո անձի կողմից զենքը հանձնելը կարող է գնահատվել որպես անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք և հաշվի առնվել պատիժ նշանակելիս:

35. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ.Հարությունյանն ու Բ.Հովհաննիսյանը 2013 թվականի մարտի 24-ին՝ ժամը 02.30-ին, ինքնակամ ներկայացել են ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին և հանձնել ապօրինի ձեռք բերած և իրենց մոտ պահվող «Մարգոլին ՄՅՄ» տեսակի, «M 0280» համարի և «Մակարով» տեսակի, «HC 1577» համարի ատրճանակները (տե՛ս սույն որոշման 11-րդ և 12-րդ կետերը): Ստորադաս դատարանները, Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնելիս և նրանց քրեական պատասխանատվությունից ազատելիս արձանագրել են, որ մինչև ինքնակամ ներկայանալը քրեական գործի նյութերում նրանց վերաբերյալ որևէ տվյալ, այդ պահին բացահայտվելու, նրանց մոտ նշված հրազենները հայտնաբերելու իրական վտանգ առկա չի եղել, Հ.Հարությունյանն ու Բ.Հովհաննիսյանը հրազենները ոստիկանությանը հանձնել են կամովին, հանձնումը չի եղել այն հայտնաբերելու և առգրավելու հետ կապված որևէ դատավարական, քննչական գործողություն կատարելու ընթացքում (տե՛ս սույն որոշման 15-րդ և 16-րդ կետերը):

36. Հաշվի առնելով սույն որոշման 33.1-34-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա ամբաստանյալներին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին եզրահանգում անելիս անտեսել են, որ նախքան Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի կողմից մեղայականով ներկայանալը և զենքերը հանձնելը, նրանք այդ զենքերի

գործադրմամբ կատարել էին հանրորեն վտանգավոր այլ արարքներ: Սպանության փորձ կատարելու և ապօրինի կերպով հրազեն պահելու փաստի առթիվ 2013 թվականի մարտի 23-ին արդեն իսկ քրեական գործ էր հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ կետերի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (տե՛ս սույն որոշման 1-ին կետը), որի շրջանակներում նույն օրը կատարված դեպքի վայրի զննության արդյունքում հայտնաբերվել և առգրավվել են թվով 7 պարկուճներ և 2 գնդակներ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Քրեական գործով ձեռնարկվել են նաև դեպքի հանգամանքների բացահայտման ուղղված քննչական և այլ դատավարական գործողություններ, մասնավորապես, հարցաքննվել են վկաներ, տուժող է ճանաչվել և հարցաքննվել Ա.Մանուչարյանը, Հ.Հարությունյանը և Բ.Հովհաննիսյանը հրազենները կիրառել են ցերեկով, բնական լուսավորության պայմաններում, բազմաբնակարան շենքի բակում, բազմաթիվ անձանց ներկայությամբ, դեպքի վայրից հեռացել են իրենց ավտոմեքենաներով, որոնց համարանիշները տեսանելի են եղել շատերին և այլն: Նշված հանգամանքները ողջամտորեն հիմք են ամբաստանյալների մոտ՝ իրենց բացահայտելու իրական սպառնալիքի և զենքերն ապօրինի պահելը շարունակելու իրական հնարավորության բացակայության մասին գիտակցում ձևավորելու համար:

Վերոշարադրյալի հիման վրա Վճարելի դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևությունները՝ Հ.Հարությունյանի և Բ.Հովհաննիսյանի կողմից իրենց մոտ ապօրինի պահվող զենքը կամովին հանձնելու մասին, օրինական և հիմնավորված չեն:

37. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը ամբաստանյալներ Հ.Հարությունյանին և Բ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներով արդարացնելով, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնելով և նրանց քրեական պատասխանատվությունից ազատելով, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ, 235-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, ինչը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պետք է թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով, որ նրանց կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները չեն վերացել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռարեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Հրանտ Յուրիկի Հարությունյանին և Բեգլար Գարեգինի Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելու, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու և նրանց քրեական պատասխանատվությունից ազատելու, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղավոր ճանաչելու վերաբերյալ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 22-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի ապրիլի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ամբաստանյալներ Հրանտ Յուրիկի Հարությունյանի և Բեգլար Գարեգինի Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

52.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ/0009/01/15

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճարելի դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ մասնակցությամբ դատախազ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ Ա.ԱՐԱՄՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի որոշման դեմ դիմող Արարատ Կառլենի Աբրահամյանի ներկայացուցիչ Ա.Մկոյանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի օգոստոսի 12-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության քննիչ Վ.Հարությունյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 58211214 քրեական գործը:

2014 թվականի սեպտեմբերի 10-ին Դավիթ Սասունի Օհանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի սեպտեմբերի 11-ին Արկադի Գագիկի Աջամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215-րդ հոդվածի 1-ին մասով:

Դ.Օհանյանին և Ա.Աջամյանին առաջադրված մեղադրանքները 2015 թվականի փետրվարի 3-ին փոփոխվել և լրացվել են:

2. 2015 թվականի փետրվարի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 20-ի դատավճռով Ա.Աջամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ 1.000.000 ՀՀ դրամ չափով, Դ.Օհանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-215-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ 1.000.000 ՀՀ դրամ չափով: Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ իրեղեն ապացույց ճանաչված 10.000 եվրո և 36.880 ԱՄՆ դոլար գումարի բռնագանձումը կարող է կատարվել քաղաքացիական դատավարության կարգով:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մայիսի 20-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Արարատ Աբրահամյանի ներկայացուցիչ Ա.Մկոյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ Ա.Աբրահամյանի ներկայացուցիչ Ա.Մկոյանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի որոշման դեմ վճարելի բողոք է ներկայացրել Ա.Աբրահամյանի ներկայացուցիչ Ա.Մկոյանը, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. «(...) Անդրադառնալով իրեղեն ապացույց ճանաչված գումարի բռնագանձման հարցին՝ դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործի նախաքննության ընթացքում, ի սկզբանե ամբաստանյալ Արկադի Աջամյանը՝ ի պատասխան գործի վարույթն իրականացնող մարմնի,

հայրնել է, որ մաքսանենգության առարկա գումարը պարկանել է իր կնոջ հորը՝ Արարայր Կառլենի Աբրահամյանին, որը գումարը փրամատրել էր Երևան քաղաքում իր համար բնակարան գնելու նպատակով: Նշված գումարի պարկանելիության կասկածից հետո պաշտպանության կողմը ներկայացրել է անձին հարցման ենթարկելու արձանագրություն, նույնպես վավերացմամբ հայտարարություն, լիազորագիր և այլն: Փաստորեն, մաքսանենգության առարկա գույքի բռնագանձման կասկածից հետո առկա է վեճ, այսինքն՝ պաշտպանության կողմը փորձում է հիմնավորել, որ այն ենթակա է վերադարձման Արարայր Կառլենի Աբրահամյանին, իսկ մեղադրող դատախազի հիմնավորմամբ՝ այն որպես իրեղեն ապացույց ու մաքսանենգության առարկա պետք է բռնագանձվի հոգուր պետության: Նշված պայմաններում դատարանը կիրառելի է համարում ՀՀ քրեական օրենսգրքի 103.1 հոդվածի 3-րդ մասում ամրագրված նյութահրավական նորմը, ըստ որի՝ մաքսանենգության առարկա գույքի՝ փվյալ դեպքում իրեղեն ապացույց ճանաչված գումարի բռնագանձումը կարող է կատարվել քաղաքացիական դատավարության կարգով (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 50):

6. Վերաքննիչ դատարանն առանց քննության թողնելու մասին որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի փրառացի մեկնաբանությունից ու բովանդակային վերլուծությունից հետևում է, որ Առաջին աստիճանի դատարանի դատավճի դեմ՝ վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն քրեադատավարական օրենքը *inter alia* վերապահել է միայն նշված հոդվածում թվարկված անձանց, ինչից հետևում է, որ ՌԴ քաղաքացի Արարայր Աբրահամյանը, որը փվյալ քրեական գործով կողմ չի հանդիսանում և դատավարական որևէ կարգավիճակ չունի, հետևաբար նաև նրա ներկայացուցիչը իրավասու չեն վերաքննության կարգով բողոքարկելու Առաջին աստիճանի դատարանի 2015թ. մայիսի 20-ի դատավճիորը՝ իրեղեն ապացույցների փրօրինման մասով, այսինքն՝ վերաքննիչ բողոքը բերել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, ինչն էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Ա. Աբրահամյանի ներկայացուցիչ Ա.Մկոյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու քավարար հիմք է» (տե՛ս նյութեր, թերթ 30):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

7. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքարկի կարծիքով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ

հողվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի խախտում:

Մեջբերելով Ստեփան Սահակյանի ու Մարատ և Կարեն Սարգսյանների վերաբերյալ գործերով Վճարելի դատարանի որոշումները՝ բողոքի հեղինակը նշել է, որ թեպետ Ա.Աբրահամյանը դատավարության մասնակից չէ, սակայն ստորադաս դատարանների դատական ակտերով խախտվել են նրա իրավունքներն ու օրինական շահերը, հետևաբար նա իրավունք ունի անձամբ կամ ներկայացուցչի միջոցով դիմելու թե՛ դատարան և թե՛ վերադատության կարգով բողոք ներկայացնել, իսկ դատարանները պարտավոր են քննության առնել ներկայացված դիմումներն ու բողոքները:

Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը, ներկայացված բողոքն առանց քննության թողնելով, գրկել է Ա.Աբրահամյանին ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքից:

7.1. Բողոքաբերը կարծում է նաև, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ առկա է հակասություն Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի դատական ակտի և Մարատ ու Կարեն Սարգսյանների վերաբերյալ Վճարելի դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0-282/01/09, Ստեփան Սահակյանի վերաբերյալ Վճարելի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0059/11/10 որոշումների միջև:

Մասնավորապես, բողոք բերած անձը նշել է, որ ստորադաս դատարանն անտեսել է սույն գործի փաստական հանգամանքների հետ նույնական փաստական հանգամանքներ ունեցող թիվ ԵԿԴ/0282/01/09 և թիվ ԵԿԴ/0059/11/10 գործերով Վճարելի դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները:

8. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճարելի բողոքն ընդունել վարույթ, Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատավարության մասնակից չհանդիսացող անձի՝ քրեադատավարական իրավահարաբերություններին մասնակցելու իրավունքի իրացման հնարավորության կապակցությամբ առկա է առերևույթ հակասություն սույն գործով Վերաքննիչ դատարանի ու Վճարելի դատարանի՝ *Մարատ և Կարեն Սարգսյանների* գործով կայացված դատական ակտերի միջև: Ուստի օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու իր գործառնություն շրջանակներում

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննության առարկա դարձնել վերոնշյալ դատական ակտերի միջև հակասությունների առկայության հարցը:

9.1. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի դատական ակտը հակասում է արդյոք *Մարտիր և Կարեն Մարգարյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0282/01/09 որոշմանը:*

10. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական արյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միարեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:*

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:*

Մեջբերված նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված որոշումների շրջանակներում (թիվ ՎԲ-17/08, թիվ ԵԿԴ/0093/11/11, թիվ ԵԿԴ/0055/11/13 և այլն), և կայուն նախադեպային իրավունք է ձևավորվել առ այն, որ նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ Վճռաբեկ դատարանի որոշումները պարտադիր են ստորադաս դատարանների համար: Այս ընդհանուր կանոնից բացառություն են միայն այն դեպքերը, երբ ստորադաս դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ

հիմնավորում է, որ տվյալ դատական ակտի հիմնավորումները կիրառելի չեն քննվող գործի փաստական հանգամանքների նկատմամբ: Ընդ որում, Վճարելի դատարանի նախկինում կայացված որոշումը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա ոչ կիրառելի:

Դրա հետ մեկտեղ Վճարելի դատարանի նախկինում կայացված որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը, եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն (տե՛ս, ի թիվս այլնի, «Մարտերայ» ՍՊԸ-ի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՇԴ/0011/11/14 որոշման 11-րդ կետը, Վ.Խնուկի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0179/11/14 որոշման 16-րդ կետը):

11. Դատավարության մասնակից չհանդիսացող անձի՝ քրեադատավարական իրավահարաբերություններին մասնակցելու իրավունքին Վճարելի դատարանն անդրադարձել է Սարատ և Կարեն Սարգսյանների գործով որոշման մեջ՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը.

«(...) [Ե]թե անձը դատավարության մասնակից չէ, սակայն վարույթն իրականացնող մարմնի ընդունած ակտով խախտվում են նրա իրավունքներն ու օրինական շահերը կամ այդ ակտն առնչվում է նրա իրավունքներին և օրինական շահերին, ապա անձն իրավունք ունի դիմել թե՛ դատարան և թե՛ վերադատության կարգով բողոքարկել դատական ակտը՝ իր իրավունքների պաշտպանության կամ խախտված իրավունքները վերականգնելու համար, իսկ դատարանները պարտավոր են քննության առնել նրանց դիմումները և բողոքները:

(...) [Դ]ատական պաշտպանության հիմնարար իրավունքը վերաբերում է նաև այն անձանց, ովքեր դատավարության մասնակից չեն, սակայն վարույթն իրականացնող մարմինների ընդունած որոշումն

առնչվում է նրանց օրինական շահերին, ենթադրաբար խախտում է նրանց իրավունքներն ու ազատությունները:

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ դատավարության մասնակից չհանդիսացող անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը պետք է լինի իրական, այսինքն՝ անձն իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ենթադրյալ խախտման յուրաքանչյուր դեպքում պետք է դատարան դիմելու և իր խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա» (տե՛ս Մարատ և Կարեն Սարգսյանների գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0282/01/09 որոշման 22-23-րդ կետերը):

Վերոգրյալ դիրքորոշումը ձևավորելիս Վճարելի դատարանը հիմք է ընդունել նաև բողոքաբերի կողմից վկայակոչված թիվ ԵԿԴ/0059/11/10 որոշման շրջանակներում արված դատողությունները:

Մարատ և Կարեն Սարգսյանների գործով վերը մեջ բերված դիրքորոշումը Վճարելի դատարանը վերահաստատել է նաև Լևոն և Ռուբիկ Թարվերդյանների գործով որոշման շրջանակներում: Մասնավորապես, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված այն հիմնարար մտեցումը, ըստ որի՝ արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրիչ հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չպետք է այն աստիճան լինի, որ խաթարվի իրավունքի բուն էությունը՝ Վճարելի դատարանն արձանագրել է. «(...) [Ա]ռաջին արյանի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում առկա ձևակերպման պայմաններում չի ապահովվում դատավարության մասնակից չհանդիսացող անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումը, ում իրավունքներին և օրինական շահերին առնչվում է առաջին արյանի դատարանի դատական ակտը, հետևաբար դատավարության մասնակից չհանդիսացող անձին հնարավորություն չի ընձեռվում վերադաս դատական արյաններում վիճարկել իր շահերին առնչվող դատական ակտի օրինականությունը:

Ուստի, Վճարելի դատարանը, հիմք ընդունելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի, ինչպես նաև այդ իրավունքի իրացման արդյունավետ երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը, գրնում է, որ հարկ է վերաքննիչ բողոք բերելու իրավունք նախաբեռել նաև քրեական դատավարության մասնակից չհանդիսացող այն անձի համար,

ում իրավունքներին և օրինական շահերին առնչվում է առաջին արյանի դատարանի դատական ակտը (...)» (տե՛ս Լևոն և Ռուբիկ Թարվերդյանների գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԱՎԴ-2/0007/01/12 որոշման 15-րդ կետը):

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը գործի քննության արդյունքում արձանագրել է, որ մաքսանենգության առարկա գույքի բռնագանձման կապակցությամբ առկա է վեճ: Այսպես՝ ամբաստանյալ Ա.Աջամյանն իր նախաքննական ցուցմունքում նշել է, որ իրեղեն ապացույց ճանաչված 10.000 եվրո և 36.8-80 ԱՄՆ դոլար գումարը ձեռք է բերել իր կնոջ հորից՝ Ա.Աբրահամյանից՝ Երևան քաղաքում նրա համար բնակարան գնելու նպատակով: Բացի այդ, պաշտպանության կողմը ներկայացրել է Ա.Աբրահամյանին հարցման ենթարկելու արձանագրություն, նոտարական վավերացմամբ հայտարարություն, լիազորագիր և այլ փաստաթղթեր: Մինչդեռ մեղադրող դատախազը պնդում է, որ այն պետք է բռնագանձվի հոգուտ պետության (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ Ա.Աբրահամյանի ներկայացուցիչ Ա.Մկոյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից թողնվել է առանց քննության այն հիմնավորմամբ, որ Ա.Աբրահամյանը քրեական գործով կողմ չէ և որևէ դատավարական կարգավիճակ չունի, հետևաբար նրա ներկայացուցիչն իրավասու չէ վերաքննության կարգով բողոքարկել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը կարող էր առերևույթ առնչվել Ա.Աբրահամյանի իրավունքներին և օրինական շահերին, իսկ Վերաքննիչ դատարանը, առանց այդ հարցը քննարկման առարկա դարձնելու, բողոքը քննության չի առել այն հիմնավորմամբ, որ դա բերվել է դատավարության մասնակից չհանդիսացող անձի կողմից:

13. Սույն որոշման 10-11-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 12-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի դատական ակտը հակասում է *Մարտիր և Կարեն Սարգսյանների* գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0282/01/09 որոշմանը:

Վճարելի դատարանի վերոշարադրյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ Մարտիր և Կարեն Սարգսյանների գործով կայացված դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող և սույն որոշման 11-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով առավել ընդհանրական են, և դրանց կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել

փոքր ընդհանրություն: Այս կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն և *Մարայր ու Կարեն Մարգարյանների* գործերի փաստական հանգամանքների ընդհանրությունն այն է, որ երկու դեպքում էլ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը հաշվի չի առել դատավարության մասնակից չհանդիսացող անձի կողմից բողոք բերելու հնարավորությունը այն դեպքում, երբ բողոքարկվող դատական ակտը առերևույթ առնչվում է այդ անձի իրավունքներին և օրինական շահերին: Նշված փաստական հանգամանքների համընկնումը Վճարելի դատարանին հիմք է տալիս պնդելու, որ *Մարայր և Կարեն Մարգարյանների* գործով որոշման հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանի համար պարտադիր են եղել:

Մինչդեռ անտեսելով *Մարայր և Կարեն Մարգարյանների* գործով որոշման մեջ Վճարելի դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումներն այն պայմաններում, երբ Առաջին աստիճանի դատարանի դատավճիռը կարող էր առերևույթ առնչվել դիմողի իրավունքներին և օրինական շահերին, Վերաքննիչ դատարանը, առանց այդ հարցը քննարկման առարկա դարձնելու, քննության չի առել վերջինիս ներկայացուցչի բողոքը այն հիմնավորմամբ, որ դիմողը քրեական գործով կողմ չէ, չունի դատավարական կարգավիճակ (տես սույն որոշման 6-րդ կետը):

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանի որ սույն գործի քննության ժամանակ անտեսել է *Մարայր և Կարեն Մարգարյանների* գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի որոշման հիմնավորումները, որոնք վերջինիս համար պարտադիր են եղել: Վերաքննիչ դատարանը ոչ միայն չի կիրառել կիրառման ենթակա Վճարելի դատարանի նախկինում կայացված որոշումը, այլև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չի հիմնավորել, որ այն կիրառելի չէ տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

14. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, մասնավորապես՝ խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: Խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի

Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 398-րդ, 406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռարեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Դիմող Արարատ Կառլենի Աբրահամյանի ներկայացուցիչ Ա.Մկոյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

53.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0109/06/15

ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճարելի դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դատախազ պաշտպան

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Տ.ԵՆՈՔՅԱՆԻ
Լ.ՍԻՄՈՆՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Նիկոլայ Մովսեսի Ավայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 11-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Բադայանի վճարելի բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի ապրիլի 18-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածների 1-ին մասերի հատկանիշներով հարուցվել է թիվ 13141215 քրեական գործը:

2015 թվականի ապրիլի 20-ին Նիկոլայ Ավալյանը ձերբակալվել է:

Նախաքնության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ Ն.Ավալյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածների 1-ին մասերով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ միջնորդություն է հարուցվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Ն.Ավալյանի նկատմամբ որպես խափանման միջոց 2 ամիս ժամկետով կալանավորում կիրառելու մասին:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ Ն.Ավալյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու մասին պաշտպանի միջնորդությունը:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի մայիսի 11-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 22-ի որոշումը փոփոխելու մասին: Մեղադրյալ Ն.Ավալյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է այլընտրանքային խափանման միջոց գրավով, և գրավի չափ է սահմանվել 2.000.000 ՀՀ դրամը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 11-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Բադալյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

2015 թվականի սեպտեմբերի 28-ին մեղադրյալ Ն.Ավալյանի պաշտպան Լ.Սիմոնյանը ներկայացրել է վճարելի բողոքի պատասխան՝ փաստարկելով, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է ու հիմնավորված, իսկ դրա դեմ բերված վճարելի բողոքը, ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի որոշումն անհիմն են: Ուստի խնդրել է մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճարելի բողոքը:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ն.Ավալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածների 1-ին մասերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*նա, 2015թ.-ի ապրիլի 17-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի գերեզմանատան*

կենտրոնական մուտքի մուր վիճարանության մեջ մտնելով եղբայրներ Էոնեսուր Զաքարյանի և Էդմոնդ Զաքարյանի հետ, դիրավորությամբ վերջիններիս առողջությանը պարճառել է ծանր և միջին ծանության վնասվածքներ: Այսպես՝ Նիկոլայ Մովսեսի Ավալյանը 2015 թ.-ի ապրիլի 17-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, անձնական օգրագործման «Վազ 21 010» մակնիշի, «90 US 003» հաշվառման համարանիշի ավտոմեքենայով երթևեկել է Երևան քաղաքի Արմենասկյան փողոցով Կենտրոն համայնքի ուղղությամբ: Նույն ճանապարհով հանդիպակաց ուղղությամբ, «Օպել Աստրա» մակնիշի, «14 OL 046» հաշվառման համարանիշի ավտոմեքենայով երթևեկել է Էոնեսուր Ռադիկի Զաքարյանը եղբոր՝ Էդմոնդ Ռադիկի Զաքարյանի հետ: Ընթացքի ժամանակ Էոնեսուր Զաքարյանի և Ն.Ավալյանի ավտոմեքենաները բախվել են, որից հետո Էոնեսուր Զաքարյանը շարունակել է երթևեկությունը: Ցանկանալով պարզաբանում արանալ բախումից հետո երթևեկությունը շարունակելու վերաբերյալ՝ Ն.Ավալյանն Էոնեսուր Զաքարյանին և Էդմոնդ Զաքարյանին բուռն անց հանդիպել է Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի գերեզմանատան կենտրոնական մուտքի մուր, որտեղ նրա և Զաքարյանների միջև վիճարանություն է սկսվել, որի ընթացքում Ն.Ավալյանն իր մուր պահվող դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել Էդմոնդ և Էոնեսուր Զաքարյանի մարմնի տարբեր հարվածներին և դիրավորությամբ Էոնեսուր Զաքարյանի առողջությանը պարճառել է ծանր վնաս՝ ձախ կրծքագոյրկային հատվածի թիկնային մակերեսին՝ դեպի ձախ պլերալ խոռոչ թափանցող և չթափանցող վերքերի ձևով, իսկ Էդմոնդ Զաքարյանի առողջությանը՝ միջին ծանության վնաս՝ աջ և ձախ կրծքագոյրկային հատվածների չթափանցող, աջ ուսագոյրու սրորին մակերեսի, աջ բազուկի հետին մակերեսի արյունահոսող, ծակած-կորած և ձախ նախաբազկի սրորին երրորդականի առաջնային մակերեսի կորած արյունահոսող վերքերի ձևով» (տե՛ս նյութեր, թերթ 44):

6. Տուժողներ Էդմոնդ Զաքարյանի և Էոնեսուր Զաքարյանի՝ համապատասխանաբար 2015 թվականի ապրիլի 18-ի և ապրիլի 19-ի հարցաքննությունների արձանագրություններից հետևում է, որ վերջիններս իրենց ցուցմունքներում, ըստ էության, նշել են, որ գերեզմանատան մոտ վիճարանել են մեկից ավելի անձանց հետ և ստացել վնասվածքներ:

Մեղադրյալ Ն.Ավալյանը 2015 թվականի ապրիլի 20-ին որպես կասկածյալ հարցաքննվելիս ցուցմունք է տվել այն մասին, որ գերեզմանատան մոտ աչքերը փակած վիճակում դանակի անկանոն հարվածներ է հասցրել իր ավտոմեքենային բախված «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդին և ուղևորին, բացի այդ, հաստատապես պնդել է, որ ն՝ դանակահարության պահին, ն՝ դրանից առաջ իր հետ որևէ մեկը չի եղել՝ պատճառաբանելով, որ եթե իր հետ մարդիկ լինեին, ապա դանակը չէր հանի (տե՛ս նյութեր, թերթեր 14-18, 22-34):

7. Մեղադրյալ Ն.Ավալյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին Առաջին աստիճանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 22-ի որոշման մեջ նշվել է. «(...) Հաշվի առնելով, որ ներկայացված նյութերով, մասնավորապես՝ 2015 թվականի ապրիլի 18-ի տուժող Էդմոնդ Զաքարյանի հարցաքննության արձանագրությամբ, 2015 թվականի ապրիլի 19-ի տուժող Էդմոնդ Զաքարյանի հարցաքննության արձանագրությամբ, 2015 թվականի ապրիլի 20-ի՝ դանակ և ավրուներենա ներկայացնելու մասին արձանագրությամբ, 2015 թվականի ապրիլի 20-ի՝ Նիկոլայ Ավալյանի որպես կասկածյալ տված հարցաքննության արձանագրությամբ և 2015 թվականի ապրիլի 22-ի՝ վկաներ Արամ Գալստյանի և Արամ Սյրեփանյանի հարցաքննության արձանագրություններով, հաստատվում է հիմնավոր կասկածը, որ մեղադրյալ Նիկոլայ Ավալյանը մասնակցություն ունի իրեն վերագրվող արարքին, ինչպես նաև մեղադրյալ Նիկոլայ Ավալյանին մեղաագրվող արարքի բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, այն, որ նա, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդարակյան վարույթում գործի քննությանը քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով, բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը դասվում է ծանր հանցագործությունների շարքին, որի սանկցիան նախատեսում է միայն ազատազրկման ձևով պարիժ երեքից յոթ տարի ժամկետով, ուստի դատարանը գտնում է, որ [մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու] միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

(...) [Դատարանը գտնում է, որ Նիկոլայ Ավալյանի պաշտպան Լիպարիտ Սիմոնյանի միջնորդությունը [վերը նշված հիմնավորումներով] անհիմն է, և մեղադրյալ Նիկոլայ Ավալյանին գրավով ազատելը պետք է ճանաչել անթույլատրելի» (տես նյութեր, թերթեր 54-62):

8. Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաձայն՝ «(...) [Առաջին աստիճանի դատարանը] ներկայացված նյութերով հիմնավոր կասկածի առկայությունը հավաստելուց հետո, մեղաագրվող արարքների բնույթը և վրանգավորության աստիճանը հաշվի առնելով, եկել է ճիշտ եզրահանգման, որ Նիկոլայ Ավալյանը կարող է խոչընդոտել գործի քննությանը քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով:

Այնուհետև [Առաջին աստիճանի դատարանը, անդրադառնալով գրավի կիրառմանը, գրել է, որ քրեական գործին խոչընդոտելու հավանականության պայմաններում գրավի կիրառումն անթույլատրելի է: Տվյալ հարցում Վերաքննիչ դատարանը համակարծիք չէ [Առաջին աստիճանի դատարանի հետ, քանի որ մեղադրյալ Նիկոլայ Ավալյանն

ինքնակամ է ներկայացել ՀՀ ոստիկանության բաժին և ներկայացրել է ենթադրյալ հանցագործության գործիք հանդիսացող դանակը, դեպքին իր մասնակցության վերաբերյալ Կրկել է խոստովանական ցուցմունքներ, որն էլ այնպես է քննչական փորձարարության ընթացքում, ինչպես նաև նախկինում արարավորված՝ դատապարտված, չի եղել, որպիսի պայմաններում գրավի գումարի վճարման երաշխիքը կարող է ապահովել մեղադրյալի պարզաձև վարքագիծը, ուստի մեղադրյալին գրավով կալանքից ազատ արձակելը թույլատրելի է: Ինչ վերաբերում է մեղադրյալի կողմից դեպքերի հանգամանքների, մասնավորապես՝ դիտարկյալ հարվածներ հասցնելու մասով մեղքը չընդունելուն, ապա այդ հանգամանքը էական նշանակություն չի կարող ունենալ գրավի կիրառման հարցում, այլապես կդիտվի որպես պարտիզ գործոն:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ մեղադրյալը կարող է խոչընդոտել քրեական գործի քննությանը, քանի որ մեղադրվում է ծանր հանցագործության կատարման մեջ, ապա վերը նշված մեկնաբանությունները հիմք ընդունելով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ կալանավորման անհրաժեշտությունը չի կարող գնահատվել բացառապես վերացական փաստակցությունից՝ հաշվի առնելով միայն հանցագործության ծանրությունը: Ավելին՝ մեղադրվող հանցանքներից մեկը դասվում է մասնավոր մեղադրանքի գործերի շարքին:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով մեղադրանքի էությունը, ինչպես նաև այն, որ գրավի գումարի սահմանումը չունի վնասը հատուցելու նշանակություն, գտնում է, որ 2.000.000 ՀՀ դրամի վճարումը կարող է ապահովել մեղադրյալի պարզաձև վարքագիծը, այն է՝ ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով և չխոչընդոտել գործի քննությանը (...):» (տե՛ս նյութեր, թերթեր 97-101):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 11-ի որոշմամբ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը մատնանշել է մի շարք հանգամանքներ, որոնք Վերաքննիչ դատարանի կողմից գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս հաշվի չեն առնվել: Մասնավորապես այն, որ տուժողներ Էդմոնդ և Էռնեստ Ջաքարյաններն իրենց ցուցմունքներում նշել են մեկից ավելի անձանց հետ վիճարանելու և բազմաթիվ հարվածներ ստացած լինելու վերաբերյալ, որպիսի հանգամանքի մասին են վկայում նաև տուժողների մարմինների տարբեր մասերում տեղակայված մարմնական վնասվածքները: Այս կապակցությամբ

բողոքաբերը նշել է, որ 2015 թվականի մայիսի 12-ի թիվ 688/հ և 689/հ դատարժշկական փորձաքննությունների եզրակացությունների համաձայն՝ Էդմոնդ Զաքարյանի մոտ հայտնաբերվել են գլխի աջ քունքային շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդ, կրծքավանդակի աջ և ձախ շրջանների չթափանցող, աջ ուսագոտու, աջ բազկի ծակած-կտրած, ձախ նախաբազկի կտրած վերքեր, որոնցից սալջարդը պատճառվել է բուխ կոշտ առարկայով, կտրած վերքը՝ սուր եզր ունեցող ծակող-կտրող գործիքով, իսկ Էդմոնտ Զաքարյանի մոտ հայտնաբերվել են գլխի աջ գագաթակողմնային մակերեսի սալջարդ վերք՝ ներկայիս սպի, վերագոտկային շրջանների ծակած-կտրած, արյունահոսող, թափանցող և չթափանցող վերքեր՝ ներկայիս սպիեր, ձախ թոքի վնասում, ձախակողմյան պնևմոթորաքս, ձախից 8-9-րդ կողերի կտրվածքներ, թոքերի սալջարդ, ստոծանու ձախ գմբեթի վնասում, հեմոպերիտոնևտում: Մինչդեռ Ն.Ավալյանը հայտնել է, որ 2015 թվականի ապրիլի 17-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Արմենակյան փողոցում տեղի ունեցած ավտովթարի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ Երևան քաղաքի Նորք թաղամասի գերեզմանատան մոտ այքերը փակ վիճակում դանակի անկանոն հարվածներ է հասցրել իր ավտոմեքենային բախված «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդին և ուղևորին:

Նշված հանգամանքները բողոքաբերին հիմք են տվել եզրահանգելու, որ մեղադրյալ Ն.Ավալյանը, ինքնական ներկայանալով վարույթն իրականացնող մարմին և ներկայացնելով հանցագործության գործիք հանդիսացած դանակը, այդ կերպ փորձել է ամեն ինչ վերագրել իրեն՝ թաքցնելով տուժողներին այլ անձանց կողմից ևս մարմնական վնասվածքներ պատճառելու հնարավոր հանգամանքը: Ուստի մնալով ազատության մեջ՝ Ն.Ավալյանն, ըստ բողոքի հեղինակի, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով կխոչընդոտի մինչդատական վարույթում գործի քննությանը և գործով ճշմարտության բացահայտմանը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով Վճարելի դատարանի՝ *Դ.Վարդանյանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրյալ Ն.Ավալյանին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով կալանավորելու պայմաններում Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, չի կարող գործուն երաշխիք հանդիսանալ նշված հիմքի չեզոքացման համար:

10. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2015

թվականի մայիսի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 22-ի որոշմանը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Ն.Ավալյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը (...) խափանման միջոց կարող է/ կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պարասիանաարվությունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի է/ առնվում վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, համապարասիան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայրնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից»:*

Կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառելիության հարցին Վճարելի դատարանն անդրադարձել է Ա.Ավետիսյանի գործով որոշմամբ՝ իրավական դիրքորոշում հայտնելով առ այն, որ *«(...) [Ա]նձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու*

պարճառաքանության հիմքում պայմանով, որ այդ պարճառաքանությունը հիմնված լինի գործով առկա փաստական փյույթների վրա (...):

(...) Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի վերաբերյալ արված իրավական մեկնաքանություններում չի արգելվում չնշված առանձին դեպքերում անձին երաշխիքով ազատ արձակելը ճանաչել անթույլարելի. մասնավորապես, երբ առկա է անձի կողմից թաքնվելու կամ գործով ճշմարտությունը քացահայրելու ընթացքին միջամրելու վրանգ, կամ երբ դա անհրաժեշտ է հանցագործությունը կանխելու կամ հասարակական կարգի պահպանությունն իրականացնելու համար:

(...) Այդ առումով Եվրոպական կոնվենցիային չի հակասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթը, որ դատարանը, համապարասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելն առանձին դեպքերում ճանաչել անթույլարելի: (...)

[Գրավի կիրառման անթույլարելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համարեքարում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև՝ մինչդարական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդորելու հիմքը» (տես Ա.Ավետիսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 34-36-րդ կետերը):

Կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս անձին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը պատշաճ գնահատման ենթարկելու անհրաժեշտության հարցին Վճարելի դատարանն անդրադարձել է Ս.Մարգարյանի գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) [Գրավի թույլարելիության հարցի լուծման ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ մեղադրյալին վերագրվող արարքի հանրային վրանգավորության աստիճանն ու բնույթը գնահատելիս դատարանը պետք է գործով ներկայացված փյույթների հիման վրա պարգի մեղադրյալին վերագրվող հանցագործության կարարման եղանակը, հանցավոր մրադրության իրականացման աստիճանը, իսկ հանցակցության դեպքում՝ հանցավորի կարարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը: Այլ խոսքով՝ (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների կարարման հավանականությունը գնահատելիս և, հերևարար, դրա հիման վրա մեղադրյալի նկարամար գրավի կիրառումը թույլարելի ճանաչելիս դատարանը, ի թիվս այլոց, պետք է պարշաճ գնահատման ենթարկի մեղսագրվող արարքի կարարման եղանակը, հանցավոր մրադրության իրականացման

աստիճանը և արարքի հանրային վրանգավորության աստիճանն ու բնույթը բնութագրող այլ հանգամանքները:

[Վ]երոնշյալ հանգամանքներն էական նշանակություն ունեն մեղադրյալի անձի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար: Ուստի, առանց դրանք գործի նյութերից բխող մյուս տվյալների հետ համադրված վերլուծության և գնահատման ենթարկելու, հնարավոր չէ հիմնավորված ենթադրություն անել մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ, հետևաբար հնարավոր չէ նաև օրինական, հիմնավորված և պարզապարզ կազմակերպված որոշում կայացնել անձի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ (...):» (տես Ս.Մարգարյանի գործով Վճռարեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 որոշման 14-րդ կետը):

13. Ջարգացնելով գրավի թույլատրելիության վերաբերյալ իր նախադեպային իրավունքը՝ Վճռարեկ դատարանը Դ.Վարդանյանի գործով որոշմամբ արձանագրել է. «(...) [Մ]եղադրյալին կալանքից գրավով ազատելու հարցը քննարկելիս դատարանները հարույկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե մեղադրյալի նկատմամբ ինչ հիմքով է կալանավորումը կիրառվել որպես խափանման միջոց, և արդյոք տվյալ դեպքում գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, կարող է գործունե երաշխիք հանդիսանալ տվյալ հիմքի չեզոքացման համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ Եվրոպական դատարանը մշակել է հանցագործության համար մեղադրվող անձին մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքեր. մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վրանգը (տես *Stogmuller v. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10, § 15), վրանգը, որ մեղադրյալն ազատ արձակվելու դեպքում կհոշրնդորի արդարադատության իրականացմանը (տես *Wemhoff v. Germany*, 1968 թվականի հունիսի 27, § 14) կամ կկատարի նոր հանցանքներ (տես *Matznetter v. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10, § 9) կամ կկատարի հասարակական անկարգություններ (տես *Letellier v. France*, 1991 թվականի հունիսի 26, § 51): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում ըստ էության նախատեսված են նշված հիմքերը, որոնցից յուրաքանչյուրի առկայությունը կալանավորման պայմանների հետ միասին ինքնին հիմք է անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար:

Միևնույն ժամանակ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմի ուսումնասիրությունից հետևում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս իրավասու դատարանները լիազորված են քննարկել դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման

հնարավորությունը: ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա այդպիսի միջոց է գրավել: (...)

[Գ]րավել քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու վրանգը չեզոքացնելու երաշխիք է, և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրավասու դատարանի կողմից կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության փակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով (տե՛ս Դ.Վարդանյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԱԲԴ/00-56/06/14 որոշման 16-րդ կետը):

14. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ն.Ավալյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածների 1-ին մասերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի գերեզմանատան կենտրոնական մուտքի մոտ վիճաբանության մեջ է մտել եղբայրներ Էոնեստ և Էդմոնդ Զաքարյանների հետ, ապա իր մոտ պահվող դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրանց մարմինների տարբեր մասերին: Արդյունքում Ն.Ավալյանը Էոնեստ Զաքարյանի առողջությանը դիտավորությամբ պատճառել է ծանր, իսկ Էդմոնդ Զաքարյանի առողջությանը՝ միջին ծանրության վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Տուժողներ Էդմոնդ Զաքարյանի և Էոնեստ Զաքարյանի՝ համապատասխանաբար 2015 թվականի ապրիլի 18-ի և ապրիլի 19-ի հարցաքննությունների արձանագրություններից հետևում է, որ վերջիններս իրենց ցուցմունքներում, ըստ էության, նշել են, որ գերեզմանատան մոտ վիճաբանել են մեկից ավելի անձանց հետ և ստացել վնասվածքներ: Մինչդեռ մեղադրյալ Ն.Ավալյանը 2015 թվականի ապրիլի 20-ին որպես կասկածյալ հարցաքննվելիս ցուցմունք է տվել այն մասին, որ գերեզմանատան մոտ աչքերը փակած վիճակում դանակի անկանոն հարվածներ է հասցրել իր ավտոմեքենային բախված «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդին և ուղևորին, բացի այդ, հաստատապես պնդել է, որ ն՝ դանակահարության պահին, ն՝ դրանից առաջ իր հետ որևէ մեկը չի եղել՝ պատճառաբանելով, որ եթե իր հետ մարդիկ լինեին, ապա դանակը չէր հանի (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել Ն.Ավալյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին: Դատարանն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ առկա է հիմնավոր կասկած մեղսագրվող արարքին մեղադրյալի առնչության վերաբերյալ: Բացի այդ, դատարանը նշել է, որ հաշվի է առնում մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը դասվում է ծանր հանցագործությունների շարքին, որի սանկցիան նախատեսում

է միայն ազատագրկման ձևով պատիժ՝ երեքից յոթ տարի ժամկետով, ինչպես նաև այն, որ Ն.Ավայանը, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով: Վերոնշյալ հիմնավորումներով Առաջին ատյանի դատարանը մերժել է մեղադրյալին կալանքից գրավով ազատելու վերաբերյալ մեղադրյալի պաշտպանի միջնորդությունը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման, որ մեղադրյալը կարող է խոչընդոտել գործի քննությանը, այնուամենայնիվ, փոփոխել է վերջինիս կողմից կայացված որոշումը և մեղադրյալ Ն.Ավայանի նկատմամբ թույլատրելի է ճանաչել գրավի կիրառումն այն հիմնավորմամբ, որ Ն.Ավայանն ինքնակամ է ներկայացել ՀՀ ոստիկանություն, ներկայացրել է ենթադրյալ հանցագործության գործիք հանդիսացող դանակը, դեպքին իր մասնակցության վերաբերյալ տվել է խոստովանական ցուցմունքներ, որն էլ պնդել է քննչական փորձարարության ընթացքում, ինչպես նաև նախկինում արատավորված՝ դատապարտված, չի եղել: Արդյունքում ստորադաս դատարանը եզրահանգել է, որ գրավի գումարի վճարման երաշխիքը կարող է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը, այն է՝ ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով և չխոչընդոտել գործի քննությանը:

Վերաքննիչ դատարանն անդրադարձել է նաև մեղադրյալի կողմից դեպքերի հանգամանքների, մասնավորապես՝ դիտավորյալ հարվածներ հասցնելու մասով մեղքը չընդունելուն, և փաստել, որ այդ հանգամանքն էական նշանակություն չի կարող ունենալ գրավի կիրառման հարցում, այլապես կդիտվի որպես պատժիչ գործոն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով այն հանգամանքին, որ մեղադրյալը կարող է խոչընդոտել քրեական գործի քննությանը, քանի որ մեղադրվում է ծանր հանցագործության կատարման մեջ, գտել է, որ կալանավորման անհրաժեշտությունը չի կարող գնահատվել բացառապես վերացական տեսանկյունից՝ հաշվի առնելով միայն հանցագործության ծանրությունը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանը նախևառաջ արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս չի պահպանել *Ս.Մարգարյանի* գործով որոշմամբ Վճարելի դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի պահանջները՝ անտեսելով Ն.Ավայանին մեղսագրվող

արարքների բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը: Մասնավորապես, պատշաճ գնահատման չեն ենթարկվել՝

ա) վերագրվող արարքի կատարման եղանակը՝ մասնավորապես այն, որ Ն.Ավալյանը, վիճաբանության մեջ մտնելով տուժողների հետ, իր մոտ պահվող դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել նրանց մարմինների տարբեր մասերին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը),

բ) հանցավոր մտադրության իրականացման աստիճանը՝ մասնավորապես այն, որ Ն.Ավալյանի ենթադրյալ գործողությունների արդյունքում տուժող Էոնեստ Զաքարյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ ձախ կրծքագոտկային հատվածի թիկնային մակերեսին՝ դեպի ձախ պլերալ խոռոչ թափանցող և չթափանցող վերքերի ձևով, իսկ տուժող Էդմոնդ Զաքարյանի առողջությանը՝ միջին ծանրության վնաս՝ աջ և ձախ կրծքագոտկային հատվածների չթափանցող, աջ ուսագոտու ստորին մակերեսի, աջ բազուկի հետին մակերեսի արյունահոսող, ծակած-կտրած և ձախ նախաբազկի ստորին երրորդականի առաջնային մակերեսի կտրած արյունահոսող վերքերի ձևով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վերը նշված հանգամանքները պատշաճ գնահատման չենթարկելու հետևանքով Վերաքննիչ դատարանը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջն այն մասին, որ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնվեն վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը: Արդյունքում Վերաքննիչ դատարանը զրկված է եղել Ն.Ավալյանի հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն անելու հնարավորությունից:

15.1. Միաժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ն.Ավալյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս, ինչպես նաև նրա նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելիս Առաջին ատյանի դատարանը, մատնանշելով մինչդատական վարույթում գործի քննությանը քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով մեղադրյալի կողմից խոչընդոտելու հանգամանքը, թերի է պատճառաբանել դրա հավանականությունը: Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ վկայակոչված՝ տուժողներ Էդմոնդ Զաքարյանի և Էոնեստ Զաքարյանի ցուցմունքների բովանդակությունից հետևում է, որ նրանք վիճաբանել են մեկից ավելի անձանց հետ: Իսկ Ն.Ավալյանն իր ցուցմունքում հաստատապես պնդել է, որ և՛ դանակահարության պահին, և՛ դրանից առաջ իր հետ որևէ մեկը չի եղել: Սույն հանգամանքների հետ համակցված հաշվի առնելով նաև Ն.Ավալյանին մեղսագրվող արարքի կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը (տե՛ս սույն

որոշման 5-րդ կետը) և հատկապես այն, որ տուժողները երկուսն են, իսկ նրանց մարմնի տարբեր հատվածներին դանակի բազմաթիվ հարվածներով պատճառվել են մարմնական վնասվածքներ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումն առ այն, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը, իրական է և բխում է դատարան ներկայացված և գործի նյութերում առկա փաստական տվյալներից:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Վերաքննիչ դատարանը նույնպես փաստել է, որ մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու հավանականության առկայության կապակցությամբ Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Այս պայմաններում Վերաքննիչ դատարանը, անտեսելով *Դ.Վարդանյանի* գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները՝ մասնավորապես այն, որ գրավը կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով և մեղադրյալի կողմից դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթի պատշաճ ընթացքին խոչընդոտելու վտանգի չեզոքացման գործուն երաշխիք չի կարող հանդիսանալ (*տե՛ս Դ.Վարդանյանի գործով վերը վկայակոչված որոշման 19-րդ կետը*), փոփոխել է Առաջին ատյանի դատարանի որոշումը և Ն.Ավալյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի:

15.2. Քննարկման առարկա դարձնելով Վերաքննիչ դատարանի հետևյալ դիրքորոշումը. «*Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ մեղադրյալը կարող է խոչընդոտել քրեական գործի քննությանը, քանի որ մեղադրվում է ծանր հանցագործության կատարման մեջ, ապա (...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ կալանավորման անհրաժեշտությունը չի կարող գնահատվել բացառապես վերացական տեսանկյունից՝ հաշվի առնելով միայն հանցագործության ծանրությունը*»՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն անհիմն է, քանի որ Առաջին ատյանի դատարանը գործի քննությանը Ն.Ավալյանի կողմից խոչընդոտելու հանգամանքը չի պայմանավորել վերջինիս մեղսագրվող հանցանքի ծանրությամբ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ դատողությունը ուղղակիորեն հակասում է նույն դատարանի այն դիրքորոշմանը, ըստ որի՝ Առաջին ատյանի դատարանը «*մեղսագրվող արարքների բնույթը և վրանգավորության աստիճանը*

հաշվի առնելով՝ եկել է ճիշտ եզրահանգման, որ Նիկոլայ Ավալյանը կարող է խոչընդոտել գործի քննությանը»:

16. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված՝ Ն.Ավալյանի անձը բնութագրող հանգամանքներին և վարքագծին (ինքնակամ ներկայանալը, դեպքին իր մասնակցության վերաբերյալ խոստովանական ցուցմունքներ տալը և այլն (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը)), ապա Վճարելի դատարանը գտնում է, որ դրանք սույն որոշման 15.1.-րդ կետում նշված համապատասխան հիմքերի առկայության պայմաններում չեն կարող բավարար լինել մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու համար:

16.1. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից արտահայտված այն դիրքորոշմանը, որ տուժողներին դիտավորյալ հարվածներ հասցնելու մասով մեղադրյալի կողմից մեղքը չընդունելը էական նշանակություն չի կարող ունենալ գրավի կիրառման հարցում, այլապես կդիտվի որպես պատժիչ գործոն (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը)՝ Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանի մատնանշված սույն փաստը Առաջին ատյանի դատարանի կողմից չի քննարկվել և առավել ևս հիմք չի ընդունվել մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելիս, հետևաբար Վերաքննիչ դատարանի դատողություններն այս մասով առարկայագուրկ են:

17. Ամփոփելով սույն որոշման 15-16.1.-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ն.Ավալյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

Այսպիսով, Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 143-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 419-րդ հոդվածների համաձայն, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մինևսույն ժամանակ Վճարելի դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ն.Ավալյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը բավարարելու, իսկ մեղադրյալին կալանքից գրավով ազատելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշում կայացնելիս Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 22-ի որոշմանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ն.Ավալյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց գրավը ենթակա է վերացման, իսկ որպես գրավ մուծված 2.000.000 ՀՀ դրամը համապատասխան պայմանների առկայության դեպքում պետք է վերադարձնել գրավատուին: Ընդ որում, Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված 2 ամիս ժամկետով կալանավորմանը պետք է հաշվակցել Ն.Ավալյանին փաստացի արգելանքի վերցնելու պահից՝ 2015 թվականի ապրիլի 20-ից, մինչև գրավի կիրառմամբ ազատ արձակվելը նրա՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Մեղադրյալ Նիկոլայ Մովսեսի Ավալյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի մայիսի 11-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 22-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 ամիս ժամկետին հաշվակցել 2015 թվականի ապրիլի 20-ից մինչև գրավի կիրառմամբ ազատ արձակվելը մեղադրյալ Ն.Ավալյանի՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

54.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դոնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2015 թվականի ապրիլի 13-ի որոշման դեմ դիմողներ Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաչարյանի ներկայացուցիչ Արմեն Ֆերոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում 2015 թվականի մարտի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով հարուցվել է թիվ 11114015 քրեական գործը: Նույն բաժնի քննիչ Ս.Նա-գարյանի՝ 2015 թվականի մարտի 9-ի որոշմամբ վերոհիշյալ քրեական գործն ընդունվել է վարույթ:

2. Քննիչ Ս.Նազարյանը (այսուհետ նաև՝ Քննիչ) 2015 թվականի մարտի 26-ին որոշում է կայացրել «Բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին»:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2015 թվականի մարտի 26-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 26-ի որոշման դեմ դիմողներ Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի ներկայացուցիչ Արմեն Ֆերոյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 13-ի որոշման դեմ դիմողներ Ս.Թադևոսյանի և Ս.Նաջարյանի ներկայացուցիչ Ա.Ֆերոյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 2015 թվականի ապրիլի 10-ին փաստաբան Արմեն Ֆերոյանի դիմումի հիման վրա վերջինիս տրամադրված՝ 2003 թվականի սեպտեմբերի 9-ին կազմված սեփականության իրավունքի գրանցման թիվ 1844580 վկայականի (այսուհետ նաև՝ Սեփականության իրավունքի վկայական)՝ կնիքով հաստատված պատճենի համաձայն՝ Երևան քաղաքի Արտաշիայան փողոցի (նախկին անվանումը՝ Ծերեթելու փողոց) 48 շենքի թիվ 15 բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Սիրուն Նաջարյանին (տե՛ս Նյութեր, հատոր 2, թերթ 17, 19, 20-24):

6. Ս.Թադևոսյանի կողմից 2011 թվականի մայիսի 11-ին ուստիկանություն ներկայացված՝ անձնագիր տալու մասին դիմումում որպես նրա բնակության վայր նշված է «Ս.Տարոնցի փ., 7շ., բն. 35» հասցեն (տե՛ս Նյութեր, հատոր 1, թերթ 8):

7. Քննիչի՝ 2015 թվականի մարտի 26-ի «Բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին» որոշման համաձայն՝ «Անհայտ անձը, 2015 թվականի մարտի 06-ի ժամը 17:00-ից մինչև 22:00-ն ընկած ժամանակահատվածում, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիրավորությամբ, հարմարեցրած բանալիով բացել է Նաիրա Խաչիկի Մանասերյանին պարկանող Երևան քաղաքի

Արքաշիսյան փողոցի 63/1 շենքի 12-րդ բնակարանի մուրքի դուրը, ապօրինի մուրք է գործել բնակարան և գաղտնի հափշտակել ընդհանուրը՝ 2.000.000 ՀՀ դրամ արժողության ոսկյա զարդեր:

(...)

2015 թվականի մարտի 26-ին ոստիկանության Շենգավիթի բաժնից ստացվել է թիվ 28/1-3498 գրությունն այն մասին, որ նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ հնարավոր է հափշտակված ոսկյա զարդերը թաքցրած լինեն Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանին պարկանոց Երևան քաղաքի Արքաշիսյան փողոցի 48 շենքի թիվ 15 բնակարանում:

Նկարի ունենալով, որ հնարավոր է Սեպուհ Թադևոսյանի հիշյալ բնակարանում, նշված բնակարանին կից օժանդակ շինություններում պահված լինեն հափշտակված ոսկյա զարդերը, (...) միջնորդություն հարուցել (...) Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանի՝ Երևան քաղաքի Արքաշիսյան փողոցի 48 շենքի 15 բնակարանում և դրան կից օժանդակ շինություններում երեք օրվա ընթացքում խուզարկություն կատարելու թույլտվություն արանալու համար» (տե՛ս Նյութեր, հատոր 1, թերթ 3):

8. 2015 թվականի մարտի 26-ին ոստիկանության Շենգավիթի բաժնի պետ Ա.Հովհաննիսյանի կողմից Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետ Ս.Մկրտչյանին հասցեագրված թիվ 28/1-3498 գրության (այսուհետ նաև՝ Գրություն) համաձայն՝ «(...) Ոստիկանության Շենգավիթի բաժնի ԲՀԲ-ում ստացվել է հավաստի օպերատիվ տեղեկություններ, որ հափշտակված ոսկյա զարդերը հնարավոր է թաքցրած լինեն Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանին /ծնվ. 01.06.1982թ., բն. ք. Երևան Արքաշիսյան փող. 48 շենք 15 բն./ պարկանոց Երևան քաղաքի Արքաշիսյան փող. 48 շենք 15 բնակարանում» (տե՛ս Նյութեր, հատոր 1, թերթ 4):

9. Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մարտի 26-ի որոշման համաձայն՝ «(...) Դատարանն արձանագրելով, որ հնարավոր է, Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանի՝ Երևան քաղաքի Արքաշիսյան փողոցի 48 շենքի 15 բնակարանում և օժանդակ կառույցներում խուզարկությամբ հայտնաբերվեն ոսկյա զարդերը, գրնում է, որ ՀՀ քննչական կոմիտեի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ս.Նազարյանի միջնորդությունն ենթակա է բավարարման»:

Որոշման եզրափակիչ մասը ձևակերպված է հետևյալ կերպ. «Միջնորդությունը բավարարել է թույլտվությունը 2015թվ. մարտի 26-ից մարտի 28-ն ընկած ժամանակահատվածում կատարելու խուզարկություն Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանի՝ Երևան քաղաքի Արքաշիսյան փողոցի 48 շենքի 15 բնակարանում և օժանդակ կառույցներում:

(...)» (տե՛ս Նյութեր, հատոր 1, թերթ 11):

10. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 13-ի որոշման համաձայն՝ «(...) Ինչպես երևում է գործի նյութերից, քրեական գործը

հարուցվել է Նաիրա Մանասերյանին պարկանոց Երևան քաղաքի Արարաշխյան փողոցի 63/1 շենքի 12-րդ բնակարանն ապօրինի մուտք գործելու և գաղտնի 2.000.000 ՀՀ դրամ արժողության ոսկյա զարդեր հափշտակելու առթիվ:

Համաձայն գործի նյութերի, թիվ 28/1-3498 գրությամբ հաղորդագրություն է սրացվել ոստիկանության Շենգավիթի բաժին այն մասին, որ հափշտակված ոսկյա զարդերը հնարավոր է թաքցված լինեն Սեպուհ Թադևոսյանին պարկանոց Երևան քաղաքի Արարաշխյան փողոցի 48 շենքի 15 բնակարանում:

Քննիչը նկատի ունենալով, որ հափշտակված ոսկյա զարդերը հնարավոր է պահված լինեն նշված բնակարանում, միջնորդություն է ներկայացրել Ս.Թադևոսյանի բնակարանում խուզարկություն կատարելու համար:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ քննիչն իր որոշմամբ ներկայացրել է խուզարկություն կատարելու անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան հիմնավորումներ:

(...) Վերլուծելով գործի նյութերը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին աստիճանի դատարանը սույն գործով հանգել է ճիշտ հետևության, որ սույն գործում առկա է հիմքեր, ինչը բավարար է ենթադրելու, որ Սեպուհ Թադևոսյանի հիշյալ բնակարանում և բնակարանին կից օժանդակ շինություններում կարող են պահվել հափշտակված ոսկյա զարդերը:

(...) Վերաքննիչ դատարանը վերոշարադրյալ հիմքերով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 26-ի վերոհիշյալ որոշումը համարում է ճիշտ, իսկ վերաքննիչ բողոքում բերված եզրահանգումներն՝ անհիմն: (...)» (տե՛ս Նյութեր, հատոր 2, թերթ 29-33):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Վճարելի բողոք բերած անձը գտնում է, որ սույն գործով դատարանները կայացրել են անօրինական, չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտեր:

Բողոքաբերը նշել է, որ Առաջին աստիճանի դատարանը բավարարել է բնակարանում խուզարկություն կատարելու մասին քննիչի միջնորդությունը, թեև այն հիմնված է եղել միայն օպերատիվ տվյալի հիման վրա: Մինչդեռ, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը չի կարող մեկնաբանվել այնպես, որ ընդամենը մեկ օպերատիվ տեղեկատվության հիման վրա այն սահմանափակվի: Հակառակ դեպքում քրեական հետապնդում իրականացնող մարմինը կարող է սեփական քննադատությամբ, կամայականորեն խուզարկել ցանկացած բնակարան՝ ընդամենը կեղծ օպերատիվ

տեղեկություն վկայակոչելով: Ըստ բողոքի հեղինակի՝ այդ պարագայում իմաստագրվում է դատարան դիմելու անհրաժեշտությունը:

Բողոքաբերը նշել է, որ միայն օպերատիվ տվյալի հիման վրա խուզարկության թույլտվություն տալու հարցի վերաբերյալ տարբեր դատարանների կողմից դրսևորվում է տարբերվող մոտեցում: Մի դեպքում դատավորը միայն օպերատիվ տեղեկության հիման վրա բավարարում է բնակարանում խուզարկություն կատարելու մասին քննիչի միջնորդությունը, իսկ մյուս դեպքում՝ բացառապես օպերատիվ տվյալի հիման վրա բնակարանի խուզարկություն կատարելու միջնորդությունը՝ մերժվում է: Ի հիմնավորումն իր այս պնդման՝ բողոքաբերը ներկայացրել է «Խուզարկություն կատարելու միջնորդությունը քննության առնելու մասին» Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունիսի 19-ի թիվ ԵԱԴԴ/0074/07/14 որոշումը, որում առկա է հետևյալ ձևակերպումը. «Քննիչը Դեմոտի Գիզաուրու բնակության վայրում խուզարկություն կատարելու անհրաժեշտությունը պարճատաքանել է միայն ոստիկանության կողմից ներկայացված օպերատիվ տվյալով, ինչը բավարար չէ ենթադրություն անելու, որ Դ.Գիզաուրու բնակության վայրում կարող են հայտնաբերվել հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք և քրեական գործի համար նշանակություն ունեցող այլ իրեր»:

12. Բողոքաբերը նշել է նաև, որ ըստ Առաջին ատյանի դատարանի 2015 թվականի մարտի 26-ի որոշման՝ խուզարկությունը պետք է իրականացվեր Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանին պատկանող բնակարանում, մինչդեռ խուզարկություն է կատարվել Սիրուն Նաջարյանին պատկանող բնակարանում: Այդ խուզարկությունը կատարելու համար ժամանած ոստիկաններին ներկայացվել է առարկություն, որ Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանն այդ բնակարանում չի բնակվում և այն նրա բնակարանը չէ: Այդուհանդերձ խուզարկությունը կատարվել է, և դրանով ուղղակիորեն խախտվել է Սիրուն Նաջարյանի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, հետևաբար այդ գործողությունը, որպես օրենքի խախտմամբ կատարված գործողություն, ենթակա է անվավեր ճանաչման:

13. Վճռարեկ բողոք բերած անձը նշել է նաև, որ խուզարկություն կատարելու նպատակով ժամանած ոստիկանները տեղեկացվել են, որ Սեպուհ Թադևոսյանը Հովանդիայից Հայաստան է եկել եղբոր հուղարկավորությանը մասնակցելու համար, հետևաբար՝ 2015 թվականի մարտի 4-ին մահացած եղբոր մահը սգալով Հայաստանի Հանրապետություն ժամանած Սեպուհ Թադևոսյանը չէր կարող 2015 թվականի մարտի 6-ին՝ ժամը 17:00-ից մինչև 22:00-ն ընկած ժամանակահատվածում, եղբոր հոգեհանգստի արարողության ժամանակ, գողություն կատարել կամ գողացված ոսկյա զարդեր թաքցնել իր ենթադրյալ բնակարանում:

Վճռարեկ բողոքի հեղինակը շեշտել է, որ վիճարկվող դատական ակտի կայացման համար հիմք է հանդիսացել ակնհայտ կեղծ օպերատիվ

տեղեկատվությունը, ինչի մասին ուղղակիորեն վկայում է այն հանգամանքը, որ եղբոր մահը սգացող Սեպուհ Թադևոսյանը հոգեհանգստի արարողության ժամանակ չէր կարող գողություն կատարել կամ գողոն թաքցնել:

14. Բողոքաբերը փաստարկել է, որ իր բարձրացրած խնդիրներին, մասնավորապես քննիչի կողմից թույլ տրված խախտումներին, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել և կայացրել է չհիմնավորված ու չպատճառաբանված դատական ակտ:

Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ սույն գործով կայացված դատական ակտերը հակասում են Վճարելի դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 գործով որոշմանը, քանի որ ստորադաս դատարանների վերոհիշյալ դատական ակտերը չեն հիմնավորվել և չեն պատճառաբանվել, իսկ չպատճառաբանված և չհիմնավորված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը:

15. Վճարելի բողոքի հեղինակը խնդրել է Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումներն ամբողջությամբ բեկանել և փոփոխել, բնակարանում խուզարկություն կատարելու մասին քննիչի ներկայացրած միջնորդությունը մերժել, ճանաչել 2015 թվականի մարտի 28-ին կատարված խուզարկությամբ Սիրուն Նաջարյանի բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը, իսկ կատարված խուզարկությունը՝ որպես օրենքի խախտմամբ իրականացված գործողություն՝ համարել անվավեր:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

16. Վճարելի դատարանը գտնում է, որ խուզարկություն կատարելը թույլատրելիս անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի ապահովման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

17. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ «Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանի՝ Երևան քաղաքի Արտաշիայան փողոցի 48 շենքի 15 բնակարանում և օժանդակ կառույցներում» խուզարկություն կատարելը թույլատրելիս ստորադաս դատարանները պահպանել են արդյոք անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը:

1. Միջազգային-իրավական չափանիշները.

18. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (այսուհետ նաև՝ Դաշնագիր) 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ոչ որ չի կարող ենթարկվել (...) քննհաճ կամ

անօրինական ուրնձգության իր բնակարանի անձեռնմխելիության (...)
նկատմամբ»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր (...) բնակարանի (...) նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Մեջբերված միջազգային-իրավական նորմերով նախատեսված է անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը: Վերջինս անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի բաղադրատարր է և, որպես այդպիսին, հանդիսանում է անձի և հասարակության բնականոն գործունեության ու զարգացման կարևոր նախապայման: Նշվածի հաշվառմամբ միջազգային իրավական մի շարք փաստաթղթերով նախատեսված են բնակարանի անձեռնմխելիության իրավունքի նվազագույն երաշխիքները:

19. Այսպես, Դաշնագրով նախատեսված է բնակարանի անձեռնմխելիության նկատմամբ «քմահաճ կամ անօրինական ուրնձգության» արգելք: Ընդ որում Դաշնագրի 17-րդ հոդվածի կապակցությամբ Միացյալ ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեի (HRC)՝ 1988 թվականի ապրիլի 8-ի «Անձնական, ընտանեկան կյանքի, բնակարանի և հաղորդակցության հարգման ու պատվի և համբավի պաշտպանության իրավունքի մասին» թիվ 16 ընդհանուր նկատառման (General Comment No. 16, Article 17: The right to respect of privacy, family, home and correspondence, and protection of honour and reputation) 3-րդ պարագրաֆի համաձայն՝ «**անօրինական**» եզրույթը նշանակում է, որ միջամտություն ընդհանրապես չի կարող տեղի ունենալ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Պետությունների կողմից թույլատրվող միջամտությունը կարող է իրականացվել միայն օրենքի հիման վրա, որն էլ իր հերթին պետք է համապատասխանի Դաշնագրի դրույթներին, նպատակներին և խնդիրներին:

Նույն փաստաթղթի 4-րդ պարագրաֆի համաձայն՝ «**քմահաճ ունձգություն**» արտահայտությունը կարող է տարածվել նաև օրենքով թույլատրելի միջամտության դեպքերի վրա: Քմահաճության

հասկացության ներդնումը կոչված է ապահովել, որպեսզի օրենքով թույլատրելի միջամտությունը համապատասխանի Դաշնագրի դրույթներին, նպատակներին, խնդիրներին և բոլոր դեպքերում լինի կոնկրետ հանգամանքներում **հիմնավորված**:

20. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր հերթին, անդրադառնալով Կոնվենցիայի 8-րդ հոդվածի մեկնաբանությանը, կայուն նախադեպային պրակտիկա է ձևավորել առ այն, որ անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի տեսանկյունից պետք է լինի **արդարացված**, այսինքն՝

- պետք է կատարվի «օրենքին համապատասխան»,

- հետապնդի Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված մեկ կամ մի քանի օրինական նպատակ,

- այդ նպատակներին հասնելը պետք է լինի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» (*յրեն, ի թիվս այլնի, Սմիրնովն ընդդեմ Ռուսաստանի (Smirnov v. Russia) գործով 2007 թվականի հունիսի 7-ի վճիռ, գանգառ թիվ 71362/01, կետ 37, Կոլեսնիչենկոն ընդդեմ Ռուսաստանի (Kolesnichenko v. Russia) գործով 2009 թվականի ապրիլի 9-ի վճիռ, գանգառ թիվ 19856/04, կետ 30*):

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն «**անհրաժեշտություն**» հասկացությունը ենթադրում է, որ միջամտությունը համապատասխանում է անհետաձգելի հասարակական պահանջին և համաչափ է հետապնդվող նպատակին: Միջամտության՝ «**ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ**» լինելը գնահատելիս Եվրոպական դատարանը հաշվի է առնում, որ հայեցողության որոշակի շրջանակ թողնված է Պետություններին: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված բացառությունները պետք է նեղ մեկնաբանվեն և դրանց անհրաժեշտությունը կոնկրետ գործով պետք է **համոզիչ կերպով հաստատվի**: Մասնավորապես, բնակարանի խուզարկության առնչությամբ Եվրոպական դատարանը գնահատում է՝ արդյոք այդ միջոցի կիրառման անհրաժեշտության համար ներկայացված **հիմքերը եղել են «վերաբերելի» և «բավարար»** և արդյոք վերոնշյալ **համաչափության սկզբունքը պահպանված է**: Վերջինիս կապակցությամբ Եվրոպական դատարանը նախ պարզում է՝ արդյոք համապատասխան օրենսդրությունը և պրակտիկան անձանց տրամադրում են համարժեք և արդյունավետ երաշխիքներ չարաշահումների դեմ, այնուհետև հաշվի է առնում գործի կոնկրետ հանգամանքները՝ պարզելու համար արդյոք միջամտությունը եղել է համաչափ հետապնդվող նպատակին (*յրեն, Սմիրնովն ընդդեմ Ռուսաստանի (Smirnov v. Russia) գործով 2007 թվականի հունիսի 7-ի վճիռ, գանգառ թիվ 71362/01, կետեր 43-44*): Որպես վերջին

հանգամանքի գնահատման չափանիշ Եվրոպական դատարանը, ի թիվս այլնի, հիմք է ընդունում այն հանցագործության ծանրությունը, որի կապակցությամբ խուզարկությունը կատարվում է, թույլտվությունը տալու կարգը և հանգամանքները, մասնավորապես՝ այդ պահին հավելյալ ապացույցների առկայությունը, թույլտվության բովանդակությունը և սահմանները՝ **հատուկ ուշադրություն դարձնելով խուզարկվող բնակարանի բնույթին** և այն երաշխիքներին, որոնք կիրառվել են միջամտության ազդեցությունը ողջամտորեն սահմանափակելու համար (*Կեն, Բաքս ընդդեմ Գերմանիայի (Buck v. Germany) գործով 2005 թվականի ապրիլի 28-ի վճիռ, գանգապ թիվ 41604/98, կետ 45*):

II. Ներպետական իրավական կարգավորումները.

21. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանի որոշմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ՝ մուտք գործել նրա բնակարանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մուտք գրավում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար:

2. Խուզարկություն կարող է կատարվել նաև հետախուզվող անձանց, հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց, ինչպես նաև դիակները հայրնաբերելու համար:

3. Բնակարանի խուզարկությունը կատարվում է միայն դատարանի որոշմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածը սահմանում է, որ.

«1. Դատարանում վարույթն սկսելու հիմք է ծառայում (...) քննիչի (...) պատճառաբանված որոշման մեջ պարունակվող միջնորդությունը՝ համապատասխան գործողություններ կատարելու մասին թույլտվություն ստանալու համար:

2. Որոշման պատճառաբանական մասում պետք է նշվեն տվյալներ այն հանցագործության մասին, որի առիթով մտադրություն կա կատարել համապատասխան քննչական գործողություն, ինչպիսի տվյալներ պետք է ստացվեն քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված այդպիսի գործողությունների արդյունքում, համապատասխան գործողությունների կատարման ժամկետը, տեղը, անմիջական կատարողները, արդյունքների ամրագրման ձևը, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են դատարանին օրինական և հիմնավորված որոշում ընդունելու համար: Եթե այդ նյութերը բավարար չեն, դատավորն իրավունք ունի պահանջել լրացնել դրանք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«Միջնորդության քննումն ավարտելուց հետո դատավորը որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը»:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված՝ անձի հիմնական իրավունքների գերակայության հիմնադրույթից բխում է, որ հանրային շահի համեմատ մարդու իրավունքի գերակայությունը կանխավարկած է, քանի դեռ կոնկրետ դեպքում, հանրային շահի կարևորությունից ելնելով, այդ կանխավարկածը պատշաճ ընթացակարգով չի հաղթահարվում: Նշվածից ելնելով անձի իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատելու յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել կոնկրետ գործով հանրային շահի կարևորությունը:

Հաշվի առնելով, որ խուզարկությունը դասվում է այն քննչական գործողությունների շարքին, որոնք էականորեն սահմանափակում են անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը՝ ներպետական օրենսդրությամբ միջազգային իրավական չափանիշների հաշվառմամբ նախատեսված են դրա օրինականությանը և արդարացվածության

ապահովմանն ուղղված մի շարք կարգավորումներ, որոնք իրենց հերթին անձանց իրավունքների ապահովման երաշխիքներ են:

Այսպես, օրենսդիրը, խուզարկությունը դասելով նախնական դատական վերահսկողության օբյեկտների շարքին, հստակ սահմանել է ինչպես խուզարկություն կատարելու թույլտվություն տալու, այնպես էլ այն իրականացնելու փուլերին առաջադրվող մի շարք պահանջներ: Մասնավորապես, խուզարկություն կատարելու թույլտվություն տալու փուլին առաջադրվող հիմնական պահանջներից է դրա կատարման համար փաստական և իրավական հիմքերի առկայությունը:

II.1. Խուզարկության կատարման փաստական հիմքը.

22. Բնակարանի խուզարկության կատարման փաստական հիմքն այն բավարար տվյալներն են, որոնք հանգեցնում են ողջամիտ ենթադրության առ այն, որ տվյալ բնակարանում կարող են հայտնաբերվել գործի համար նշանակություն ունեցող առարկաներ, փաստաթղթեր, հետախուզվող կամ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձինք, ինչպես նաև դիակներ: Հաշվի առնելով, որ բնակարանում խուզարկություն կատարելը կապված է անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի էական սահմանափակման, ինչպես նաև հարկադրանքի կիրառման հետ՝ դրա կատարման փաստական հիմքին պետք է ներկայացվեն խիստ պահանջներ: Հակառակ մոտեցումը կհանգեցնի կամայականությունների՝ խախտելով միջամտության համաչափության սկզբունքը:

Այսպես, խուզարկության կատարման փաստական հիմք կարող է հանդես գալ ցանկացած տվյալ, որը հնարավոր է գնահատման ենթարկել: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ այս փուլում տվյալի գնահատման չափանիշներին ներկայացվում են ավելի ցածր պահանջներ, քան անձի մեղավորության հարցի գնահատման ժամանակ ապացույցների գնահատմանը:

Խուզարկության կատարման փաստական հիմք կարող են հանդես գալ, որպես կանոն, քրեական գործի նյութերում առկա և որոշակի բնակարանում գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկայի կամ անձի գտնվելու մասին տեղեկություններ պարունակող ապացույցները (կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկայի ցուցմունքներ և այլն): Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներին՝ անհրաժեշտ է նշել, որ դրանք ապացույցների նկատմամբ ստորադաս բնույթ ունեն, սակայն որոշ դեպքերում անփոխարինելի և եզակի տվյալներ կարող են պարունակել որոշակի բնակարանում գործի համար նշանակություն ունեցող առարկաների կամ անձանց գտնվելու վերաբերյալ, հետևաբար օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալները վարույթն իրականացնող մարմնի կողմից անտեսելն անթույլատրելի է: Միևնույն ժամանակ օպերատիվ-հետախուզական

գործունեության առանձնահատկություններով (մասնավորապես՝ գործունեության գաղտնի մեթոդների և միջոցների կիրառումը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահությունը («Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված) պայմանավորված՝ մի շարք դեպքերում վարույթն իրականացնող մարմինը զրկված է գնահատելու օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալները: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը հնարավոր է գնահատման ենթարկել, այն կարող է հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք: Մասնավորապես, օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը գնահատելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի միջոցառման՝

- կոնկրետ տեսակին («Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մաս) օրենքով առաջադրվող պահանջները: Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված է օպերատիվ-հետախուզական միջոցառումների որոշակի տեսակների նկատմամբ նախնական դատական վերահսկողության պահանջ, ինչը դրանց օրինականության գործունեություն երաշխիք է: Այդպիսի օպերատիվ-հետախուզական միջոցառումներն են՝ ներքին դիտումը, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը, հեռախոսային խոսակցությունների վերահսկումը, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը, ինչպես նաև արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին,

- արդյունքների ամրագրման եղանակը (օրինակ՝ տեխնիկական միջոցների կիրառման առկայությունը),

- աղբյուրի՝ օրենքով սահմանված կարգով բացահայտման հանգամանքը և այլն:

Իսկ այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալի գնահատումն անհնար է, այն ինքնին խուզարկության հիմք չի կարող հանդիսանալ, սակայն այլ տվյալների (այդ թվում՝ օպերատիվ-քննչական իրադրության) հետ համակցությամբ կարող է հաշվի առնվել խուզարկության կատարման անհրաժեշտության հարցը լուծելիս, հատկապես

քննության վաղ փուլերում, երբ համապատասխան ապացույցներ դեռ ձեռք չեն բերվել:

Վճարելի դատարանի վերոհիշյալ դիրքորոշումը հիմնված է նաև Եվրոպական դատարանի՝ Ռատուշնան ընդդեմ Ուկրաինայի գործով արտահայտած իրավական դիրքորոշումների և կոնկրետ գործի փաստերին տրված գնահատականների վրա: Մասնավորապես, վկայակոչված որոշմամբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարանն ուներ որոշակի տվյալներ՝ ենթադրելու, որ Դիմումատուի որդին կարող էր ներգրավված լինել քննվող գողությանը և որ նա փաստացի մշտապես կամ զգալի ժամանակահատվածում բնակվել է Դիմումատուի տանը: Այսպես, առկա է եղել վկայի ցուցմունք, որի համաձայն գողության գիշերը Դիմումատուի որդու մեքենային նման մեքենա է նկատվել խանութի մոտ: Ավելին՝ Դիմումատուի որդին գործագուրկ է եղել և արձանագրվել է, որ նա ընկերական հարաբերություններ է ունեցել նախկինում գողության համար դատապարտված անձի հետ: Վերջապես, չնայած առկա էին վկաների ցուցմունքներ առ այն, որ Դիմումատուի որդին քննարկվող իրադարձությունների ժամանակ այլ քաղաքում է ապրել, առկա էին նաև փաստական տվյալներ և ցուցմունքներ այն մասին, որ նա ապրում էր Դիմումատուի հետ՝ նրա տանը: Վերոնշյալի հաշվառմամբ Եվրոպական դատարանը գտել է, որ այդ տվյալներն ունակ էին հանգեցնել համոզման, որ գողացված իրերը կարող էին պահվել Դիմումատուի բնակարանում: Եվրոպական դատարանն ընգծել է, որ նման կասկած հարուցող փաստերը կարիք չունեն լինելու նույն մակարդակի, ինչպիսիք անհրաժեշտ են մեղադրանք առաջադրելու կամ անձին դատապարտելու համար: Նշելով նաև, որ ներպետական դատարանը կասկածը հաստատված է համարել՝ հղում կատարելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տվյալների վրա, գտել է, որ հավելյալ տվյալներ պահանջելն իրավացիորեն արդարացված չէր լինի՝ հաշվի առնելով քննության վաղ փուլը և մասնավորապես այն փաստը, որ որոշ էական ապացույցներ (այն է՝ գողացված իրերը) դեռ պետք է բացահայտվեին (տե՛ս Ռատուշնան ընդդեմ Ուկրաինայի (*Ratushna v. Ukraine*) գործով 2010 թվականի դեկտեմբերի 2-ի վճիռ, գանգառ թիվ 17318/06, կետեր 76-77, 80):

23. Անհրաժեշտ է ընդգծել, որ խուզարկության կատարման փաստական հիմք են «**բավարար տվյալները**»: Այլ խոսքով՝ տվյալների առկայությունն ինքնին խուզարկության կատարման փաստական հիմք չէ, քանի դեռ չի համապատասխանում բավարարության վերաբերյալ պահանջին: Տվյալների՝ բավարարության տեսանկյունից գնահատումը պետք է հանգեցնի այն ողջամիտ եզրահանգման, որ խուզարկության կատարման արդյունքում կարող են ձեռք բերվել փնտրվող առարկաները: Ընդ որում, օրենսդրորեն նախատեսված չէ տվյալների համակցության վերաբերյալ պահանջ: Այլ խոսքով՝ տվյալների բավարարության վերաբերյալ պահանջը որակական

բնույթ է կրում. խուզարկության կատարման արդյունքում փնտրվող առարկաների հայտնաբերման հավանականության մասին եզրահանգումը կարող է հիմնված լինել ինչպես մեկ վերաբերելի և արժանահավատ տվյալի, այնպես էլ՝ տվյալների համակցության վրա:

II. II. Խուզարկության կատարման իրավական հիմքը.

24. Խուզարկության կատարման իրավական հիմքը խուզարկություն կատարելը թույլատրելու մասին դատարանի որոշումն է: Ընդ որում, դատարանի որոշման համար առիթ է հանդիսանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին նախաքննական մարմնի որոշումը:

Ինչպես նախաքննական մարմնի, այնպես էլ դատարանի որոշումները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված: Մասնավորապես, նախաքննական մարմնի որոշման պատճառաբանական մասում պետք է նշվեն տվյալներ այն հանցագործության մասին, որի առիթով մտադրություն կա կատարել խուզարկություն, ինչպիսի առարկաներ պետք է ստացվեն քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված գործողության արդյունքում, դրա կատարման ժամկետը, այն բնակարանի նույնականացման տվյալները, որտեղ պետք է կատարվի խուզարկությունը, տվյալները, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ փնտրվող առարկաները գտնվում են տվյալ բնակարանում, քննչական գործողության անմիջական կատարողները, արդյունքների ամրագրման ձևը, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են դատարանին օրինական և հիմնավորված որոշում ընդունելու համար:

Դրան համապատասխան՝ միջնորդության քննման արդյունքում դատարանը որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը: Միջնորդության բավարարման դեպքում դատարանի որոշումը պետք է պարունակի նշում խուզարկության կատարման փաստական հիմքերի առկայության մասին, դրանց վերաբերելիության, արժանահավատության և բավարարության մասին հիմնավորումներ, փնտրվող առարկաների՝ գործի համար նշանակության վերաբերյալ հիմնավորումներ, ինչպես նաև հստակ նշում բնակարանի նույնականացման համար անհրաժեշտ տվյալների և փնտրվող առարկաների բնութագրի վերաբերյալ:

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ որպես բնակարանի նույնականացման տվյալ պետք է նշվի դրա տեսակը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետ), գտնվելու վայրը՝ հասցեն, ինչպես նաև՝ ում է պատկանում կամ ում կողմից է մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում (սուբյեկտը, ում բնակարանի անձեռնմխելիության իրավունքը ենթակա է

սահմանափակման): Դատարանին նշված տվյալների տրամադրումը և վերջինիս կողմից դրանց ստուգումը և դատական ակտում արտացոլումը երաշխիք է անձի՝ Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով նախատեսված՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի ապահովման համար: Ավելին՝ «բնակարան» հասկացության տակ ներառվող որոշակի օբյեկտներ ունեն իրավական պաշտպանության ավելի բարձր աստիճան, որը ենթադրում է դրա անձեռնմխելիության սահմանափակման արգելք (օրինակ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված օբյեկտները) կամ դրա համար ավելի խիստ պահանջներ (օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 449-րդ հոդվածով նախատեսված՝ դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող օբյեկտները), իսկ առանց բնակարանի նույնականացման վերոնշյալ տվյալներն ունենալու անհնարին կլինի դրանց իրավական պաշտպանությունն ապահովելը:

25. Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ դիրքորոշումները հիմնված են նաև Եվրոպական դատարանի այն իրավական դիրքորոշումների վրա, որոնց համաձայն խուզարկության մասին որոշումները, որքանով հնարավոր է, պետք է ձևակերպվեն այն հաշվարկով, որպեսզի դրանց ազդեցությունը տարածվի ողջամիտ սահմաններում (*տե՛ս Վան Ռոսսեմն ընդդեմ Բելգիայի (Van Rossem v. Belgium) գործով 2004 թվականի դեկտեմբերի 9-ի վճիռ, գանգապ թիվ 41872/98, կետ 45, Իլյա Ստեֆանովն ընդդեմ Բուլղարիայի (Iliya Stefanov v. Bulgaria) գործով 2008 թվականի մայիսի 22-ի վճիռ, գանգապ թիվ 65755/01, կետ 41*): Խուզարկության վերաբերյալ յուրաքանչյուր որոշում պետք է պարունակի որոշակի նվազագույն տեղեկություններ, որոնք կապահովեն խուզարկություն կատարող անձանց գործողությունների օրինականության հետագա ստուգման հնարավորությունը (*տե՛ս Վան Ռոսսեմն ընդդեմ Բելգիայի (Van Rossem v. Belgium) գործով 2004 թվականի դեկտեմբերի 9-ի վճիռ, գանգապ թիվ 41872/98, կետ 45*):

Վերը վկայակոչված Սմիրնովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտում է ճանաչել, ի թիվս այլնի, հիմք ընդունելով, որ խուզարկության որոշումը կազմված էր չափազանց ընդարձակ եզրույթներով, այն չէր պարունակում որևէ տվյալ՝ շարունակվող վարույթի, խուզարկության նպատակի և այն պատճառների մասին, որոնք հիմք են հանդիսացել ենթադրելու, որ տվյալ անձի բնակարանում խուզարկություն կատարելու արդյունքում կարող են ձեռք բերվել որևէ հանցագործության ապացույցներ: Մասնավորապես, ներպետական դատարանը, նշելով, որ խուզարկության թույլտվությունը արդարացված էր, հղում է կատարել չորս անվանական փաստաթղթերի և այլ չորոշակիացված նյութերի՝ առանց նկարագրելու դրանցից որևէ մեկի բովանդակությունը: Դատարանը չի ներկայացրել որևէ հիմնավորում

այդ նյութերի վերաբերելիության մասին, ավելին՝ չորս փաստաթղթերից երկուսը հայտնվել են խուզարկության կատարումից հետո: Արդյունքում՝ Եվրոպական դատարանը գտել է, որ պետական մարմինները թույլ են տվել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում (տե՛ս վկայակոչված որոշման 47-րդ կետը):

III. Իրավական կարգավորումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

26. Գործի փաստերից երևում է, որ Քննիչը՝ բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին որոշմամբ նշել է, որ անհայտ անձի կողմից 2015 թվականի մարտի 6-ի ժամը 17:00-ից մինչև 22:00-ն ընկած ժամանակահատվածում Նաիրա Խաչիկի Մանասերյանին պատկանող Երևան քաղաքի Արտաշիայան փողոցի 63/1 շենքի 12-րդ բնակարանից 2.000.000 ՀՀ դրամ արժողությամբ ոսկյա զարդեր գաղտնի հափշտակելու դեպքի կապակցությամբ Շենգավիթի բաժնից ստացվել է թիվ 28/1-3498 գրությունն այն մասին, որ նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ հնարավոր է հափշտակված ոսկյա զարդերը թաքցրած լինեն Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանին պատկանող Երևան քաղաքի Արտաշիայան փողոցի 48 շենքի թիվ 15 բնակարանում: Նկատի ունենալով, որ հնարավոր է Սեպուհ Թադևոսյանի հիշյալ բնակարանում, նշված բնակարանին կից օժանդակ շինություններում պահված լինեն հափշտակված ոսկյա զարդերը՝ Քննիչը միջնորդություն է հարուցել «Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանի՝ Երևան քաղաքի Արտաշիայան փողոցի 48 շենքի 15 բնակարանում և դրան կից օժանդակ շինություններում երեք օրվա ընթացքում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու համար» (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Նյութերում առկա է ոստիկանության Շենգավիթի բաժնի պետ Ա.Հովհաննիսյանի՝ 2015 թվականի մարտի 26-ի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետ Ս.Մկրտչյանին հասցեագրված թիվ 28/1-3498 գրությունը, որի համաձայն՝ «(...) Ոստիկանության Շենգավիթի բաժնի ՔՀԲ-ում ստացվել է հավաստի օպերատիվ տեղեկություններ, որ հափշտակված ոսկյա զարդերը հնարավոր է թաքցրած լինեն Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանին /ծնվ. 01.06.1982թ., բն. ք. Երևան Արտաշիայան փող. 48 շենք 15 բն./ պատկանող Երևան քաղաքի Արտաշիայան փող. 48. 15 բնակարանում» (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով, որ հնարավոր է՝ Սեպուհ Հակոբջանի Թադևոսյանի՝ Երևան քաղաքի Արտաշիայան փողոցի 48 շենքի 15 բնակարանում և օժանդակ կառույցներում խուզարկությամբ հայտնաբերվեն ոսկյա զարդերը, գտել է, որ Քննիչի միջնորդությունը ենթակա է բավարարման: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը

որոշել է. «Միջնորդությունը բավարարել: Թույլատրել 2015թվ. մարտի 26-ից մարտի 28-ն ընկած ժամանակահատվածում կատարելու խուզարկություն Սեպուհ Հակոբջանի Թաղևոսյանի Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 48 շենքի 15 բնակարանում և օժանդակ կառույցներում» (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին, ստուգելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը, գտել է, որ Քննիչն իր որոշմամբ ներկայացրել է խուզարկություն կատարելու անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան հիմնավորումներ, իսկ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության, որ սույն գործում առկա են հիմքեր, ինչը բավարար է ենթադրելու, որ Սեպուհ Թաղևոսյանի հիշյալ բնակարանում և բնակարանին կից օժանդակ շինություններում կարող են պահվել հափշտակված ոսկյա զարդերը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

27. Նախորդ կետում մեջբերված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 18-25-րդ կետերում շարադրված իրավական նորմերը և դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ.

- Քննիչի միջնորդության մեջ որպես խուզարկության փաստական հիմք վկայակոչվել է միայն Շենգավիթի բաժնից ստացված թիվ 28/1-3498 գրությունն այն մասին, որ նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ հնարավոր է հափշտակված ոսկյա զարդերը թաքցված լինեն Սեպուհ Հակոբջանի Թաղևոսյանին պատկանող Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 48 շենքի թիվ 15 բնակարանում,

- Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ վկայակոչել է գրությունը և դրա հիման վրա եզրահանգել, որ հնարավոր է, որ Սեպուհ Հակոբջանի Թաղևոսյանի՝ Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 48 շենքի 15 բնակարանում և օժանդակ կառույցներում խուզարկությամբ հայտնաբերվեն ոսկյա զարդերը՝ բավարարելով Քննիչի միջնորդությունը,

- Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին գտել է, որ Քննիչն իր որոշմամբ ներկայացրել է խուզարկություն կատարելու անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան հիմնավորումներ, իսկ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության:

27.1. Վերոգրյալից հետևում է, որ ստորադաս դատարանները որպես խուզարկություն կատարելու թույլտվություն տալու հիմք են դիտարկել միայն Շենգավիթի բաժնից ստացված վերոնշյալ գրությունը՝ առանց գնահատման ենթարկելու դրանում առկա տվյալները: Այսպես, ստորադաս դատարաններն անտեսել են հանգամանքներն առ այն, որ օպերատիվ տեղեկությունների ձեռքբերումը դասվում է այն օպերատիվ-հետախուզական միջոցառումների շարքին, որոնք ընգրկված չեն նախնական դատական վերահսկողության օբյեկտների շրջանակում, դրա արդյունքն ամրագրված է միայն փաստաթղթային ձևով, աղբյուրը

բացահայտված չէ: Գործի նյութերում առկա չեն այլ հանգամանքներ, որոնք հնարավորություն կտան գնահատել այդ տվյալը, ինչպես նաև բացակայում են այլ տվյալներ, որոնց հետ համակցությամբ քննարկվող օպերատիվ տվյալը կարող էր հիմք հանդիսանալ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու համար: Նման պայմաններում՝ միայն վկայակոչված օպերատիվ տվյալի հիման վրա խուզարկություն կատարելու թույլտվություն տալը բովանդակագրկել է քննարկվող քննչական գործողության նկատմամբ դատական վերահսկողության էությունը, այն դարձել է ձևական, իսկ անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը՝ վերացական և պատրանքային, ինչն անթույլատրելի է:

27.2. Բացի այդ՝ գործի փաստերից հետևում է, որ ինչպես Քննիչը, այնպես էլ ստորադաս դատարանները որպես Բնակարանի նույնականացման տվյալ նշել են, որ այն պատկանում է Մեպոի Հակոբջանի Թադևոսյանին: Մինչդեռ ինչպես միջնորդության մեջ, այնպես էլ ստորադաս դատարանների հետևություններում առկա չէ որևէ հիմնավորում, իսկ գործի նյութերում որևէ պատշաճ փաստաթուղթ այն մասին, թե Մեպոի Հակոբջանի Թադևոսյանն ինչ առնչություն ունի (սեփականատերն է, բնակվում է կամ բնակվել է) Երևան քաղաքի Արտաշիայան փողոցի 48 շենքի 15 բնակարանի հետ, այն պայմաններում, որ Ս.Թադևոսյանի կողմից 2011 թվականի մայիսի 11-ին ոստիկանություն ներկայացված՝ անձնագիր տալու մասին դիմումում որպես նրա բնակության վայր նշված է «Ս.Տարոնցի փ., 72., բն. 35» հասցեն (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Բացի այդ՝ Վերաքննիչ դատարանին ներկայացված Մեփականության իրավունքի վկայականի համաձայն վկայակոչված բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Սիրուն Նաջարյանին (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

28. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ «Մեպոի Հակոբջանի Թադևոսյանի՝ Երևան քաղաքի Արտաշիայան փողոցի 48 շենքի 15 բնակարանում և օժանդակ կառույցներում» խուզարկություն կատարելը թույլատրելիս ստորադաս դատարանները չեն պահպանել անձի՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը:

Մասնավորապես, ստորադաս դատարանները որպես խուզարկության կատարման բավարար հիմք գնահատելով Գրությունում մատնանշված օպերատիվ տվյալը, չեն կատարել խուզարկությունը թույլատրելու համար վերաբերելի և բավարար հիմքեր նշելու իրենց պարտականությունը, որի արդյունքում Ս.Նաջարյանի բնակարանի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը եղել է ոչ արդարացված: Արդյունքում, ինչպես նաև սխալ նշելով բնակարանի նույնականացման տվյալները, ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 24-րդ, Դաշնագրի 17-րդ, Կոնվենցիայի 8-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածների պահանջների խախտումներ: Դրանք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների

համաձայն՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Վերոնշյալի և սույն որոշման 27-27.2-րդ կետերում նշված վերլուծության հաշվառմամբ՝ Վճարելի դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է բեկանել Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերը և մերժել բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն հայցելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունը:

Վճարելի բողոք ներկայացրած անձի փաստարկներին այն մասին, որ Ս.Թադևոսյանը չէր կարող գողություն կատարած լինել (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը), Վճարելի դատարանը չի անդրադառնում դրանք գնահատելով որպես սույն գործով խուզարկություն կատարելը թույլատելու հարցին ոչ վերաբերելի, քանի որ ինչպես քննիչի միջնորդությունում, այնպես էլ ստորադաս դատարանների դատական ակտերում որևէ նշում կամ ակնարկ առկա չէ Ս.Թադևոսյանի կողմից հանցանքը կատարված լինելու կասկածի վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմողներ Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի ներկայացուցիչ Արմեն Ֆերոյանի վճարելի բողոքը բավարարել: Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 26-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 13-ի որոշումը բեկանել և բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն հայցելու վերաբերյալ նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մարտի 26-ի միջնորդությունը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

55.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0039/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԱՍՏԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ պաշտպան Տ.ԵՆՈՔՅԱՆ
Վ.ՔՈՍՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Միեր Սամվելի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 15-ի որոշման դեմ ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի պաշտպան Վ.Քոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի մարտի 30-ին թիվ Ն/SU-06/1-3308 գրությամբ «Նաիրի Ինչուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) գործադիր տնօրեն Դ.Բաղդասարյանը յուրացման վերաբերյալ հաղորդում է ներկայացրել Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանին:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության (այսուհետ նաև՝ ՔԳՎ) Երևան քաղաքի քննչական վարչության (այսուհետ նաև՝ ՔՎ) Կենտրոնականի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Գեղամյանի՝ 2014 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ վերոհիշյալ հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2014 թվականի հուլիսի 15-ին ընկերության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հ.Գևորգյանը քննիչ Ա.Գեղամյանի՝ 2014 թվականի հուլիսի 4-ի որոշման դեմ բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազություն:

Երևան քաղաքի դատախազի տեղակալ Լ.Գրիգորյանը 2014 թվականի օգոստոսի 1-ի թիվ 50/726դ-14 գրությամբ պատասխանել է, որ բաց է թողնվել օրենքով նախատեսված բողոքարկման ժամկետը՝ մինչև ժամանակ նշելով, որ քննիչ Ա.Գեղամյանի՝ 2014 թվականի հուլիսի 4-ի որոշման օրինականությունը հաստատվել է Երևան քաղաքի դատախազությունում:

Ընկերության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հ.Գևորգյանը 2014 թվականի օգոստոսի 6-ին բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել Ա.Գեղամյանի՝ 2014 թվականի հուլիսի 4-ի որոշումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ բողոքը մերժվել է:

Ընկերության ներկայացուցիչ Ա.Ասատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2014 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումը և նյութերն ուղարկել դատախազին՝ օրենքի պահանջի համաձայն ընթացքը լուծելու համար:

Մինչ այդ՝ 2014 թվականի սեպտեմբերի 26-ին, ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի ՔՎ Կենտրոնականի քննչական բաժնում Արամայիս Ասատրյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 13804014 քրեական գործը՝ Մ.Հովհաննիսյանի կողմից յուրացման եղանակով խոշոր չափի գույք հափշտակելու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ Մ.Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Նույն օրը նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չեռանալու մասին ստորագրությունը, և հայտարարվել հետախուզում:

2014 թվականի նոյեմբերի 28-ին թիվ 13804014 քրեական գործով վարույթը կասեցվել է Մ.Հովհաննիսյանի գտնվելու վայրը պարզված չլինելու պատճառաբանությամբ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազի տեղակալ Կ.Հովհաննիսյանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ Կենտրոնականի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Գեղամյանի՝ 2014 թվականի հուլիսի 4-ի որոշումը վերացվել է, հարուցվել թիվ 13212714 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի՝ նախաքննություն կատարելու համար:

2015 թվականի փետրվարի 9-ին Մ.Հովհաննիսյանն ինքնակամ ներկայացել է ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի: Նույն օրը թիվ 13804014 քրեական գործով վարույթը վերակալվել է, և Մ.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2015 թվականի փետրվարի 11-ին թիվ 13804014 քրեական գործը միացվել է թիվ 13212714 քրեական գործին:

2015 թվականի փետրվարի 12-ին Մ.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել և լրացվել է, նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2015 թվականի փետրվարի 27-ին Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ստյանի դատարան):

2. Առաջին ստյանի դատարանը դատաքննության արագացված կարգի կիրառմամբ 2015 թվականի մարտի 19-ի դատավճռով Մ.Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրա նկատմամբ նշանակել ազատազրկման ձևով պատիժ՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ հաշվակցելով արգելանքի տակ գտնվելու 3 (երեք) օրը՝ ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը փոփոխվել, և որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

3. Ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի մայիսի 15-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի մարտի 19-ի դատական ակտը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մայիսի 15-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի պաշտպան Վ.Քոսյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի պաշտպան Վ.Քոսյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Մ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա, 2013 թվականի դեկտեմբերի 25-ից հանդիսանալով «Նաիրի Բնշուրանս» ապահովագրական ՍՊ ընկերության գործակալ, 2014 թվականի փետրվարի 3-ից 4-ն ընկած ժամանակահատվածում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարասիսանսարվության պարտադիր ապահովագրության ընդհանուր թվով 44 պայմանագիր է կնքել «Տրանս Կոմֆորթ» և «Կինգ Դեյյուքս» ՍՊ ընկերությունների հետ և համարեղ միասնական դիրավորությամբ յուրացման եղանակով հափշտակել է դրանց դիմաց սրացած, իր վարահողությանը հանձնված, ապահովագրական ընկերությանը պարկանող ընդհանուր առանձնապես խոշոր չափի հասնող 3.567.000 ՀՀ դրամ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 332-333):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) [Պարիժ նշանակելիս] [դ]ատարանը հաշվի է առնում (...) ամբաստանյալ Մհեր Սամվելի Հովհաննիսյանի կողմից ծանր հանցագործություն կատարած լինելը և դրա՝ հանրության համար վրանգավորության աստիճանը, այն, որ ամբաստանյալին մեղսագրված, իրեն վարահված ուրիշի գույքի յուրացման առանձնապես խոշոր չափը առավել մոտ է րվյալ հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առանձնապես խոշոր չափի (...) նվազագույն սահմանին:

Դատարանը հաշվի է առնում նաև հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցագործությունը կատարելուց հետո նրա դրսևորած վարքագիծը, այն, որ Մ.Հովհաննիսյանն ինքնակամ ներկայացել է վարույթն իրականացնող մարմին, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել,

տվել է ինքնախուսարժանական ցուցմունքներ, տուժողին պատճառված գույքային վնասը մասնակիորեն կամեղիկ հատուցել է:

Որպես հանցավորի անձը բնութագրող հարկանիշ դատարանը հաշվի է առնում նրա՝ աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, այն, որ հանդիսանալով Ընկերության գործակալ՝ յուրացման եղանակով համաշխարհային է Ընկերությանը պարկանող, առանձնապես խոշոր չափի՝ 3.567.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարը, որից հետո մեկնելով Հայաստանի Հանրապետությունից՝ խուսափել է վարույթն իրականացնող մարմնից:

Վերոհիշյալը համադրելով ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքների հետ և հաշվի առնելով նաև ամբաստանյալի պատասխանատվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ դատարանը գտնում է, որ Մեծեր Սամվելի Հավիաննիսյանն իր կատարած (...) հանցագործության համար ենթակա է պարժի ազատազրկման ձևով առանց գույքի բռնագրավման, որի միջոցով հնարավոր կլինի ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պարժի նպատակները» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 65-69):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման շրջանակներում փաստել է. «Մ.Հովհաննիսյանի նկատմամբ պարիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննելիս առաջին արյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, բավարար չափով արուգման ու բազմակողմանի գնահատման է ենթարկել ամբաստանյալի վերաքննիչ բողոքում մարմանշված բոլոր հանգամանքները, (...) պատասխանատվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում վերջինիս նկատմամբ նշանակել է ազատազրկման ձևով ռեալ պարիժ, ինչն արդարացի է, բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից (...):

Անդրադառնալով ամբաստանյալի վերաքննիչ բողոքի փաստարկին և այդ կապակցությամբ Վերաքննիչ դատարան ներկայացված ապացույցներին այն մասին, որ ՀՀ Արարարի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 19.06.2013 թվականի թիվ ԱՎԴ4/0021/01/13 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտված լինելով ազատազրկման և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու արդյունքում իր կամքով պարտավորվել է ավտոմեքսի հետևանքով մասհացած տուժող Գ.Թովմասյանի երկու անչափահաս երեխաներին՝ մինչև նրանց չափահաս դառնալը վճարել ամսական 30.000 ՀՀ դրամ՝ որպես նրանց կենսապահովման միջոց և բարոյական պարտականություն, ինչը չի կարող կատարել

անազատության մեջ գրավելու պայմաններում, ապա Վերաքննիչ դատարանն այն քննության առարկա չի դարձնում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ թիվ ԱՎԴ4/0021/01/13 քրեական գործը որևէ առնչություն չունի քննվող թիվ ԵԿԴ/0039/01/15 քրեական գործի հետ:

Ինչ վերաբերում է (...) ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանին տրված դրական բնութագրին, ինչպես նաև (...) Ընկերության գործադիր տնօրեն Հ.Գևորգյանի կողմից 28.04.2015թ.-ին տրված տեղեկանքին այն մասին, որ (...) Ընկերության հանդեպ ունեցած պարտավորությունը (...) ամբողջությամբ կատարվել է, և Ընկերությունը այս պահին որևէ պահանջ չունի ամբաստանյալի նկատմամբ, ապա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ վերոգրյալ հանգամանքները սույն գործի շրջանակներում չեն կարող բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալի նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պարիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 66-75):

8. Քրեական գործի նյութերում առկա են հետևյալ փաստական տվյալները.

1) 2015 թվականի փետրվարի 12-ի թիվ 18 օրդերը, ըստ որի՝ Մ.Հովհաննիսյանի կողմից «Նաիրի Ինշուրանս» ընկերության հաշվեհամարին փոխանցվել է 2.000.000 ՀՀ դրամ (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 299):

2) «Նաիրի Ինշուրանս» ընկերության գործադիր տնօրեն Հ.Գևորգյանի կողմից 2015 թվականի ապրիլի 28-ին տրված տեղեկանքն այն մասին, որ 2015 թվականի ապրիլի 27-ի դրությամբ Մ.Հովհաննիսյանի գործակալական թիվ Գ13-113 պայմանագրից բխող և ընկերության հանդեպ ունեցած պարտավորությունը վերջինիս կողմից ամբողջությամբ կատարվել է, և ընկերությունն այս պահին որևէ պահանջ չունի նրա նկատմամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 40):

3) Ա.Բադալյանի 2015 թվականի ապրիլի 3-ին տրված հայտարարությունն այն մասին, որ ավտովթարի հետևանքով իր ամուսնու՝ Գ.Թովմասյանի մահից հետո Մ.Հովհաննիսյանը պարտավորվել է իրենց երկու անչափահաս երեխաներին մինչև չափահաս դառնալը վճարել ամսական 30.000 ՀՀ դրամ, որն էլ պարտաճանաչ կատարում է (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 38):

4) Երևան քաղաքի Ն.Շենգավիթ 10/11 շենքի համայնքի նախագահի կողմից ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանին տրված դրական բնութագիրը (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 39):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի 2-րդ մասի, 61-րդ, 62-րդ, 70-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 17-րդ հոդվածների, 358-րդ հոդվածի 4-րդ մասի և 360-րդ հոդվածի պահանջների խախտումներ:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանը հաշվի չի առել հանցավորի անձը բնութագրող և արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնող քրեական գործում առկա փաստական հանգամանքները, մասնավորապես այն, որ ամբաստանյալը տուժողի վնասն ամբողջությամբ վերականգնել է, նախկինում արատավորված չի եղել, կամավոր ներկայացել է նախաքննական մարմին, տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, օգնել է նախաքննական մարմինն հանցագործությունը բացահայտելուն, տուժողը բողոք չունի և խնդրել է ամբաստանյալի նկատմամբ մեղմ պատիժ սահմանել:

Բացի այդ, ըստ բողոք բերած անձի՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր քննարկման առարկա դարձնել վերաքննիչ բողոքում փաստարկված այն հանգամանքը, որ ամբաստանյալը մեկ այլ՝ ավտովթարի վերաբերյալ քրեական գործով, առանց դատարանի որոշման, կամավոր իր վրա է վերցրել տուժողի մանկահասակ երեխաներին որպես կենսապահովման գումար՝ ամսական 30.000 ՀՀ դրամ, հատկացնելու պարտավորություն և շուրջ երեք տարի պարտաճանաչ կատարում է ստանձնած պարտավորությունը, ինչը չի կարող անել անազատության մեջ գտնվելու պայմաններում:

10. Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտում ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի մեկնաբանությունը հակասում է Վճարելի դատարանի՝ նույնանման փաստական հանգամանքներով թիվ ՎԲ-124/07, թիվ ՎԲ-192/07, թիվ ԵԿԴ/0126/01/10, թիվ ՀՅԲԴԴ/0109/01/08, թիվ ԵԲԴԴ/0571/01/08, թիվ ԼԴ/0019/01/09 և թիվ ՄԴ/0226/01/09 որոշումներում սեփականության դեմ ուղղված հանցագործություններով պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական խնդրի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

11. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մայիսի 15-ի որոշումը բեկանել և փոփոխել. ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան, կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք

Մ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշման հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը, կայանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...):»:

Սույն քրեաիրավական նորմերը Վճարելի դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճարելի դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (*հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տեսնելով Վճարելի դատարանի՝ Գարուշ Մադաթյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, Արարաթ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները*) հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (ԵԱԴԴ/00-34/01/12, ԼԴ/0093/01/12, ՏԴ/0018/01/13, ԵԷԴ/0132/01/13, ԵԱՆԴ/0060/01/13,

ԵԿԴ/0096/01/13, ԵԿԴ/0252/01/13, ԵՄԴ/0027/01/14, ԳԴ/0014/01/14, ՍԴ/0204/01/13, ՏԴ/0031/01/14, ՍԴՅ/0174/01/14, ԵԱԴԴ/0011/01/14, ԵԱԲԴ/0091/01/14 և այլն):

14. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնվող հանգամանքներից հանցավորի անձը բնութագրող տվյալների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) «*հանցավորի անձնավորություն*» եզրույթն ի տարբերություն «*հանցագործության սուբյեկտ*» եզրույթի, ավելի ընդարձակ է, և օժտված է սոցիալ-ժողովրդագրական, բարոյա-հոգեբանական և քրեաիրավական բնութագրերով: (...)

(...) [Պ]ատժի անհատականացման ժամանակ հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես պատժի նպատակների իրականացման, այնպես էլ անձի արժանապատվության հարգման սահմանադրական պահանջի առկայությամբ» (տես Ս.Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12 որոշման 36-37-րդ կետերը):

Իսկ Ս.Աղախանյանի գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը փաստել է. «(...) [Յ]ուրաքանչյուր գործով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների (...), պետք է բազմակողմանի վերլուծության ու գնահատման ենթարկի հանցավորի անձը: (...) պատասխանատվության և պատժի անհատականացման և հետևաբար նաև նշանակված պատժի կրման հարցի լուծման համար էական նշանակություն ունեն հանցավորի անձի ոչ միայն ֆիզիկական ու հոգեկան, այլև սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ փաստական տվյալները» (տես Ս.Աղախանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշման 19-րդ կետը):

Ս.Սարգսյանի և Ս.Աղախանյանի գործերով որոշումներում արդա-հայրված իրավական դիրքորոշումները Վճռաբեկ դատարանը վերահասարարել է նաև Զ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի վերաբերյալ որոշման շրջանակներում՝ ընդգծելով, որ. «[Յ]ուրաքանչյուր դեպքում պատժի կրման նպատակահարմարության հարցը որոշելիս հանցագործության հանրային վրանգավորության բնույթի և աստիճանի համարաբարձրում կարևոր նշանակություն ունի հանցավորի անձը բնութագրող տվյալների ամբողջական վերլուծությունը: Մասնավորապես, **հանցավորի անձը դրականորեն բնութագրող սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները, հանցագործությունից հեղու դրսևորած դրական վարքագիծը** (կատարվածի համար զղջալը, ճշմարտացի ցուցմունքներ տալը, քննությանը չխոչընդոտելը, պատճառով փաստը հատուցելը և այլն) կարող են վկայել, որ պատժի նպատակների

իրագործման րեասնկյունից բացակայում է պատիժը փաստացի կրելու անհրաժեշտությունը: Այլ խոսքով՝ հանցավորի անձը բնութագրող տվյալները բացահայտելու և օբյեկտիվորեն հաշվի առնելու դատարանի պարտականությունն ուղղակիորեն բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի տրամաբանությունից, որի համաձայն՝ պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը» (տե՛ս Ջ.Շիրվանյանի և Ա.Մուրադյանի գործով Վճարելի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0091/01/14 որոշման 13-րդ կետը):

14.1. Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ Ե.Սարգսյանի և Գ.Պետրոսյանի գործերով որոշումներում քննարկման առարկա դարձնելով սեփականության դեմ ուղղված հանցագործություններով պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական խնդիրը՝ Վճարելի դատարանն ընդգծել է, որ. «(...) [Հ]անցագործության հանրային վրանգավորության աստիճանի նվազեցման համար էական նշանակություն ունի պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հանգամանքը» (տե՛ս Ե.Սարգսյանի գործով Վճարելի դատարանի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅԲԲԴ/0109/01/08 որոշման 31-րդ կետը, Գ.Պետրոսյանի գործով Վճարելի դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0126/01/10 որոշման 22-րդ կետը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը Մ.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, ի թիվս այլ հանգամանքների, հաշվի է առել հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանցագործությունը կատարելուց հետո նրա դրսևորած վարքագիծը, մասնավորապես այն, որ Մ.Հովհաննիսյանն ինքնակամ ներկայացել է վարույթն իրականացնող մարմին, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել, տվել է խոստովանական ցուցմունքներ, տուժողին պատճառված գույքային վնասը մասնակիորեն կամովին հատուցել է: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ Մ.Հովհաննիսյանը ենթակա է պատժի ազատազրկման ձևով, որի միջոցով հնարավոր կլինի ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հարցը, մատնանշել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտում հիմք ընդունված ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը և արդյունքում եզրահանգել, որ

ազատագրվման ձևով նշանակված պատիժը արդարացի է, բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված սկզբունքից: Մինևույն ժամանակ անդրադառնալով վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ թիվ ԱՎԴ-4/0021/01/13 քրեական գործով ամբաստանյալն իր կամքով պարտավորվել է ավտովթարի հետևանքով մահացած տուժողի երկու անչափահաս երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը վճարել ամսական 30.000 ՀՀ դրամ՝ որպես նրանց կենսաապահովման միջոց և բարոյական պարտականություն, ինչը չի կարող անել անազատության մեջ գտնվելու պայմաններում՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ այն քննության առարկա չի դարձնում՝ նկատի ունենալով, որ թիվ ԱՎԴ-4/0021/01/13 քրեական գործը որևէ առնչություն չունի սույն քրեական գործի հետ:

Քննարկման առարկա դարձնելով բնակության վայրից ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանին տրված դրական բնութագիրը, ինչպես նաև հանցագործությամբ պատճառված նյութական վնասն ամբողջությամբ հատուցած լինելու մասին 2015 թվականի ապրիլի 28-ի տեղեկանքը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը)՝ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ վերոգրյալ հանգամանքները սույն գործի շրջանակներում չեն կարող բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալի նկատմամբ ազատագրվման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու համար (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները համադրելով սույն որոշման 13-14.1-րդ կետերում շարադրված վերլուծության հետ՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը թեպետ արձանագրել է գործում առկա ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, սակայն դրանք պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել նշանակված պատժի կրման անհրաժեշտության հարցը որոշելիս:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը պատշաճ ստուգման և գնահատման չի ենթարկել ամբաստանյալի անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական և ժողովրդագրական հատկանիշները, հանցագործությունից հետո նրա դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ Մ.Հովհաննիսյանի՝ դրական բնութագրվելը, վարույթն իրականացնող մարմին ինքնական ներկայանալը, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր ճանաչելը, հանցագործությամբ պատճառված վնասն ամբողջությամբ հատուցելը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Վերջին հանգամանքը էական նշանակություն ունի նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազեցման տեսանկյունից:

Բացի այդ, Վճարելի դատարանն արձանագրում է, որ քննության առարկա չդարձնելով վերաքննիչ բողոքի այն փաստարկը, որ թիվ ԱՎԴ-4/0021/01/13 քրեական գործով նշանակված պատիժը

պայմանականորեն չկիրառելու արդյունքում ամբաստանյալն իր կամքով պարտավորվել է ավտովթարի հետևանքով մահացած տուժողի երկու անչափահաս երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը վճարել ամսական 30.000 ՀՀ դրամ (որպես նրանց կենսասպառնալից միջոց և բարոյական պարտականություն)՝ Վերաքննիչ դատարանը չի ներկայացրել բովանդակային պատճառաբանություն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Այդ առումով Վճարելի դատարանը փաստում է, որ երկու առանձին քրեական գործերի միմյանց հետ կապված չլինելը դեռևս չի կարող վկայել դրանցից մեկում առկա որևէ հանգամանքի՝ մեկ այլ գործի համար բացարձակ նշանակություն չունենալու մասին:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշման հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

17. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 358-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 419-րդ հոդվածների՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Վճարելի դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Մ.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարան

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Միեր Սամվելի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2015 թվականի մարտի 19-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի մայիսի 15-ի

որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Մհեր Սամվելի Հովհաննիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

56.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0009/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ մասնակցությամբ
դատախազ տուժող ամբաստանյալ պաշտպան

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Դ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
Վ.ՊԱՊՅԱՆԻ
Ն.ԱՓՈՅԱՆԻ
Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Նելլի Խաչատուրի Ափոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 4-ի որոշման դեմ Ն.Ափոյանի պաշտպան Ա.Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը

Պ Ա Ր Զ Ե Յ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2011 թվականի դեկտեմբերի 6-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի

քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 11143211 քրեական գործը:

2012 թվականի փետրվարի 6-ին քրեական գործն ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժին՝ նախաքննությունը շարունակելու համար:

2012 թվականի հուլիսի 21-ին Նելլի Ափոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ Ն.Ափոյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է, և նրա նկատմամբ կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

2012 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ Մնացական Կուրդինյանի կողմից Ն.Ափոյանի նկատմամբ վաշխառություն կատարելու փաստի առթիվ քրեական հետապնդում չի իրականացվել՝ համաներման ակտի ընդունման պատճառաբանությամբ:

2. 2013 թվականի հունվարի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 29-ի դատավճռով Ն.Ափոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ չորս տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակված պատժին հաշվակցվել է Ն.Ափոյանի՝ 2012 թվականի հուլիսի 18-ից մինչև 2012 թվականի հուլիսի 21-ը կալանքի տակ գտնվելու ժամկետը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ երեք տարի տասնմեկ ամիս քսանյոթ օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Տուժող Վիոլետա Պապյանի քաղաքացիական հայցը բավարարվել է, և վճռվել է Ն.Ափոյանից բռնագանձել 3.036.330 (երեք միլիոն երեսունվեց հազար երեք հարյուր երեսուն) ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված նյութական վնասի հատուցում:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 29-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել ամբաստանյալ Ն.Ափոյանը և տուժող Վ.Պապյանը, որոնք վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2015 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 4-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ամբաստանյալ Ն.Ափոյանի պաշտպան Ա.Մարտիրոսյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ն.Ափոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն/ա խարդախությանը ուրիշի՝ առանձնապես խոշոր չափի գույք հափշտակելու դիտարկությանը 2007 թվականի հուլիս ամսին Երևան քաղաքի Շիրվանզադե 1 հասցեում գրնվող Վահան Ենգիբարյանի գրասենյակում վերջինիս ծանոթ Վիոլետրա Պապյանի դուստր Անի Կուրդինյանին «Սանկտ-Պետերբուրգի» համալսարանի Երևանի մասնաճյուղից «Հայ-Ռուսական պերական պավոնական» համալսարան տեղափոխելու պարտվակով, չարաշահելով Վ.Պապյանի վարահությունը, խաբեությանը նրանից վերցրել է առանձնապես խոշոր չափերի՝ 3.036.330 ՀՀ դրամին համարժեք 9.000 ԱՄՆ դոլար գումար և այդ ուղղությանը որևէ գործողություն չկատարելով՝ խարդախությանը հափշտակել է գումարը» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 203-204):

6. Հանցագործության մասին հաղորդումը ներկայացվել է 2011 թվականի հոկտեմբերի 3-ին տուժող Վ.Պապյանի ամուսնու՝ Մ.Կուրդինյանի կողմից (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 2-3):

7. Տուժող Վ.Պապյանը **նախաքննության ընթացքում** հարցաքննվելիս նշել է, որ իր աղջկա՝ Ա.Կուրդինյանի համալսարան ընդունվելու կապակցությամբ *իրենց ընտանիքի ծանոթ Վ.Ենգիբարյանը ծանոթացրել է Ն.Ափոյանի հետ*: Այսպես՝ 2007 թվականի հուլիսի 24-ին ինքն Ա.Կուրդինյանի և Գ.Կուրդինյանի հետ գնացել է Վ.Ենգիբարյանի գրասենյակ, հանդիպել և ծանոթացել է Ն.Ափոյանի հետ: Վերջինս խոստացել է կազմակերպել Անիի ընդունելության հարցը և դրա դիմաց իրենից պահանջել է 9.000 ԱՄՆ դոլար: 2007 թվականի հուլիսի 25-ին դարձյալ Վ.Ենգիբարյանի գրասենյակում ինքն անձամբ 9.000 ԱՄՆ դոլար գումարը հանձնել է Ն.Ափոյանին, վերջինս *վերցրել է այն, դրել* պայուսակի մեջ և խոստացել Սանկտ-Պետերբուրգի համալսարանի առաջին կիսամյակն ավարտելուց հետո Ա.Կուրդինյանին տեղափոխել Սլավոնական համալսարան (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 13-14, 45-47, հատոր 2, թերթեր 25-29, 85-91):

Դատաքննության ընթացքում Վ.Պապյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Վ.Ենգիբարյանի գրասենյակում Ն.Ափոյանն առաջարկել է,

որ Անին սկզբում ընդունվի Սանկտ-Պետերբուրգի համալսարան, որտեղ մեկ կիսամյակ սովորելուց հետո կտեղափոխի Սլավոնական համալսարան: Նշված գործողությունների համար իրենից պահանջել է 9.000 ԱՄՆ դոլար գումար: Հաջորդ օրը հանդիպել են դարձյալ Վ.Ենգիբարյանի գրասենյակում: Ինքը պայուսակից հանել է ծրարը և տվել Ն.Ափոյանին: Վերջինս վերցրել է այն, թերթելու նման հաշվել գումարը և դրել պայուսակի մեջ (տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթեր 79-80):

8. Վկա Ա.Կուրդինյանը **նախաքննության ընթացքում** հարցաքննվելիս ցուցմունք է տվել այն մասին, որ 2007 թվականին ինքը ցանկանում էր ընդունվել Սլավոնական համալսարան, սակայն առաջին քննությունը չի ստացել, և *իրենց ընտանիքի ծանոթ Վ.Ենգիբարյանը* ծանոթացրել է Ն.Ափոյանի հետ: Հանդիպումը եղել է *Վ.Ենգիբարյանի՝ Շիրվանզադե 1* հասցեում գտնվող գրասենյակում, *ներկա են եղել ինքը, մայրը՝ Վ.Պասյանը, հորեղբոր որդին՝ Գ.Կուրդինյանը, Վ.Ենգիբարյանը և Ն.Ափոյանը:* Ն.Ափոյանն առաջարկել է ժամանակավոր ընդունվել Սանկտ-Պետերբուրգի համալսարան, այնուհետև առաջին կիսամյակն ավարտելուց հետո տեղափոխվել Սլավոնական համալսարան: Վերոնշյալ գործողությունների համար նա իր մայրիկից՝ *Վ.Պասյանից պահանջել է 9.000 ԱՄՆ դոլար:* Հաջորդ օրը դարձյալ *Վ.Ենգիբարյանի* գրասենյակում նույն մարդկանց ներկայությամբ Վ.Պասյանն այդ գումարը փոխանցել է Ն.Ափոյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 51-52, հատոր 2, թերթեր 16-19):

Ա.Կուրդինյանը Ն.Ափոյանի հետ առերես հարցաքննության ժամանակ նշել է. «Դուք [Ն.Ափոյանը] մամայի ձեռքից վերցրեցիք [9000 ԱՄՆ դոլար գումարը] և *անմիջապես* դրեցիք ձեր պայուսակի մեջ: Ներկաներից ինչ-որ մեկը հարցրեց ձեզ՝ գումարը *չեք հաշվում, իսկ դուք ասացիք, որ ոչ*» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 111):

Գատարնության ընթացքում Ա.Կուրդինյանը հայտնել է, որ իր հորեղբոր որդու՝ Գ.Կուրդինյանի միջոցով ծանոթացել են Վ.Ենգիբարյանի հետ: Վերջինս ասել է, որ ծանոթ ունի, ով կարող է օգնել ընդունելության հարցում, և ծանոթացրել է Ն.Ափոյանի հետ: Առաջին հանդիպմանը գնացել են *ինքը, քույրը, մայրը և Գ.Կուրդինյանը:* Ինքը և քույրը սպասել են մեքենայում, իսկ մայրն ու Գուրգենը գնացել են Վ.Ենգիբարյանի գրասենյակ: Ն.Ափոյանի առաջարկով ինքն սկզբում պետք է ընդունվեր այլ բուհ և առաջին կիսամյակը ավարտելուց հետո տեղափոխվեր Սլավոնական համալսարան: Հաջորդ օրը Վ.Ենգիբարյանի գրասենյակում հանդիպել են Ն.Ափոյանի հետ: Այդ ժամանակ Վ.Պասյանը պայուսակից հանել է ծրարով գումարը և տվել Ն.Ափոյանին: Վերջինս *ծրարը նայել է, հաշվելու նման մայրով արել, փակել է և դրել իր պայուսակի մեջ:* Ա.Կուրդինյանը պնդել է, որ ինքը Ն.Ափոյանի հետ Վ.Ենգիբարյանի գրասենյակում հանդիպել է մեկ անգամ (տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթ 82):

9. Վկա Գ.Կուրդինյանը **նախաքննության ընթացքում** տվել է հետևյալ ցուցմունքները. «(...) Հորեղբորս աղջիկը՝ Անի Կուրդինյանը, (...) ցանկանում էր ընդունվել Սլավոնական համալսարան, սակայն չընդունվեց, և նրա մայրը՝ Վիոլետա Պապյանը, ասաց, որ ցանկանում էր մարդ գտնել, որը կօգներ ընդունվել համալսարան: Խոսակցության ժամանակ ես այդ մասին հայտնեցի *աներոջս եղբայր Վազգեն Դեզիրմենջյանին*, որը ասաց, որ իր ծանոթ Վահան Ենգիբարյանը հնարավոր է ծանոթ ունենա (...)

» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 12):

Ն.Ափոյանի հետ առերես հարցաքննության ընթացքում Գ.Կուրդինյանը նշել է. «Գումարը Վիոլետան փոխանցեց Նելլի Ափոյանին *ծրարով*, Նելլին դրեց պայուսակի մեջ(...)

» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 113-114):

Գ.Կուրդինյանը **դատաքննության ընթացքում** հարցաքննվելիս հայտնել է, որ իր բարեկամ Վազգեն Դեզիրմենջյանն է խորհուրդ տվել դիմել Վ.Ենգիբարյանին: Վերջինիս գրասենյակում իրենք՝ Ն.Ափոյանը, Ա.Կուրդինյանը, Վ.Պապյանը, Վ.Ենգիբարյանը և ինքը, հանդիպել են *երկու անգամ*, գումարային խոսակցությունները՝ 9.000 ԱՄՆ դոլարի մասին, *վարել և Ն.Ափոյանի հետ համաձայնության է եկել Վ.Պապյանը*: Հաջորդ օրը նույն մարդկանց ներկայությամբ Վ.Պապյանը 9.000 ԱՄՆ դոլար գումարը ծրարով փոխանցել է Ն.Ափոյանին, *վերջինս հաշվել է, նորից գումարը դրել ծրարի մեջ*, այնուհետև դրել պայուսակը (տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթ 83):

10. Վկա Վ.Ենգիբարյանը **նախաքննության ընթացքում՝ 2011 դեկտեմբերի 28-ի** հարցաքննության ժամանակ, տվել է հետևյալ ցուցմունքները. «2007 թվականին *իմ ընկեր Վազգենը* մեր տանն (...) ինձ ասաց, որ իր փեսայի՝ Գուգոյի հորեղբոր աղջիկը գալիս է (...) Սլավոնական համալսարան ընդունվելու համար (...): Քանի որ իմ ընկեր Վազգենն իմ կողմից շատ հարգված անձնավորություն էր, ես նրա խնդրանքը չմերժեցի և ասացի, որ վերջերս ծանոթացել եմ վերոհիշյալ համալսարանի պրոռեկտորի՝ Նելլի Ափոյանի հետ և կարող եմ ծանոթացնել նրան և փեսայիդ իրար հետ (...):

(...) Վիոլետայի աղջկան Նելլին հունվար ամսին պետք է տեղափոխեր Սանկտ-Պետերբուրգի համալսարանից Սլավոնական համալսարան և նրանից պահանջեց 9.000 ԱՄՆ դոլար: Ես ինձ այդ թիվը *լսելիս վարզացի*, բայց քանի որ Վիոլետան համաձայնվեց (...) Գուրգենի հետ եկան իմ օֆիս և այնտեղ իմ ներկայությամբ այդ գումարը հանձնեց անմիջապես Վիոլետան Նելլին, Նելլին գումարը վերցրեց, հաշվեց և ասաց, որ հունվարի առաջին կիսամյակն ավարտելուց հետո անմիջապես կտեղափոխի Սանկտ-Պետերբուրգի համալսարանից Սլավոնական համալսարան (...)

2012 թվականի փետրվարի 10-ի հարցաքննության ընթացքում Վ.Ենգիբարյանը հայտնել է հետևյալը՝ «(...) [Ի]մ Շիրվանզադե 1 հասցեում գործվող գրասենյակում ես Նելլիի հետ ծանոթացրեցի Վիոլետա Պապյանին, Անի Կուրդինյանին և Գուրգեն Կուրդինյանին, խոսակցությունից հետո Նելլին ասաց, որ այդ գործը ուրիշների համար կաներ 10.000 ԱՄՆ դոլարով, բայց ձեր համար կվերցնեմ 9.000 ԱՄՆ դոլար (...):

Մի քանի օրից կրկին իմ նշած գրասենյակում հանդիպեցինք: Վիոլետան իմ, Անիի և Գուրգենի ներկայությամբ Նելլի Ափոյանին փոխանցեց 9.000 ԱՄՆ դոլար, Նելլին հաշվեց գումարը և խոստացավ հունվարի առաջին կիսամյակն ավարտելուց հետո Անիին տեղափոխել Սլավոնական համալսարան, անգամ խոստացավ վճարել առաջին տարվա ուսման վարձը (...):

(...) 2011 թվականի հունվարին՝ օրը չեմ հիշում, ես, Մնացականը և Վոլոդյան հանդիպեցինք Նելլի Ափոյանի հետ նրա օֆիսում՝ Հ.Քոչար փողոցում: Հանդիպման ժամանակ ես Նելլիին ասացի, որ (...) ստացած 9.000 ԱՄՆ դոլարը հետ վերադարձրու, ամոթ է, և թող փակվի այդ խոսակցությունը (...):

(...) Դրանից հետո առաջին անգամ Մնացականենց տանը ես հանդիպեցի Անդրանիկի և Վոլոդյայի հետ: Հանդիպման ժամանակ տնօրեն Անդրանիկն ասաց, որ Նելլին կատարել է չարաշահումներ և բռնորոս ընկել ենք կրակը (...):

(...) Դրանից հետո (...) ես, Վոլոդյան և Մնացականը գնացինք Նելլիի օֆիս, որտեղ պահանջեցինք աուդիտի արդյունքները, որ մեզ խոսք էր տվել Նելլին, նա ինձ վիրավորեց, պահանջեց, որ իր օֆիս ոտք չդնեմ (...): (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 9-10):

Ն.Ափոյանի հետ առերես հարցաքննության ընթացքում Վ.Ենգիբարյանը հայտնել է՝ «(...) Ծրարի միջի պարունակությունը նման էր դոլարի կուպյուրի (...):

(...) Վ.Պապյանը փոխանցել է ծրար դոլարի կուպյուրով, գումարի հաշվելը կամ առաջին ամսվա վարձի վճարի մասին ամենայն անկեղծությամբ չեմ հիշում» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 111, 113):

Նշված հակասությունների կապակցությամբ քննիչի հարցին ի պատասխան՝ Վ.Ենգիբարյանը նշել է՝ «(...) իրական ցուցմունքս հանդիսանում է այն, որ ես տեսել եմ, թե ինչպես է Ն.Ափոյանը նշված գումարը՝ 9000 ԱՄՆ դոլար, վերցրել, հաշվել և դրել է պայուսակը, իսկ առաջին հարցաքննության ժամանակ ես այդ մասին չեմ ասել, քանի որ խղճացել եմ նրան» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 152):

10.1. Վ.Ենգիբարյանը **դատաքննության ընթացքում** ցուցմունք է տվել այն մասին, որ Կուրդինյանների ընտանիքի հետ ծանոթացել է իր ընկերներից մեկի՝ Գ.Կուրդինյանի խնամի Վազգեն Դեգիրսենյանի

միջոցով, ով իր տանն այդ ժամանակ շինարարական աշխատանքներ է իրականացրել: Վերջինս իրեն խնդրել է օգնել Ա.Կուրդինյանի ընդունելության հարցում: Նշված դեպքից մոտ 1-2 շաբաթ անց ինքը ճշտել է Ն.Ափոյանի հեռախոսահամարը, նրա հետ *հանդիպել Արուվյան փողոցում* և պայմանավորվածություն ձեռք բերել: Հաջորդ հանդիպումը տեղի է ունեցել արդեն իր գրասենյակում: Ընդ որում, մինչև իր գրասենյակում հանդիպումը *գումարի չափի վերաբերյալ ինքն արդեն խոսել էր Ն.Ափոյանի հետ և այդ մասին հաղորդել Վ.Պապյանին*, ով համաձայնվել էր:

Ըստ Վ.Ենգիբարյանի դատաքննական ցուցմունքների՝ իր գրասենյակում իրենք՝ Ն.Ափոյանը, Գ.Կուրդինյանը, Ա.Կուրդինյանը, Վ.Պապյանը և ինքը, հանդիպել են միայն մեկ անգամ:

Վ.Ենգիբարյանը հարցաքննության ընթացքում հայտնել է նաև, որ Վ.Պապյանը գումարը՝ *ստանց ծրարի* հանել է պայուսակից, *հաշվել* բոլորի ներկայությամբ՝ 9.000 ԱՄՆ դոլար, և տվել Ն.Ափոյանին:

Նշված դեպքից մեկ տարի անց Վ.Ենգիբարյանը ծանոթացել է Մ.Կուրդինյանի հետ, այնուհետև նրա հետ հանդիպել է մոտ մեկ ու կես տարի հետո: 2010 թվականի դեկտեմբերին Մ.Կուրդինյանը զանգել է իրեն և ասել, որ ուզում է տեսնել: Այդ ժամանակ ոչ մի խոսակցություն չի եղել: Դրանից մեկ տարի անց Մ.Կուրդինյանն իր խնամու՝ Վ.Բեզոյանի հետ եկել է Վ.Ենգիբարյանի մոտ, և նրանք միասին գնացել են Ն.Ափոյանի գրասենյակ, ով իրենց հայտնել է, որ սպասում է աուդիտի արդյունքներին: Նոր տարուց հետո նրանք մեկ անգամ ևս գնացել են Ն.Ափոյանի գրասենյակ, սակայն աուդիտի արդյունքները չեն ստացել: Ըստ Վ.Ենգիբարյանի ցուցմունքների՝ այդ ժամանակ 9.000 ԱՄՆ դոլարի մասին խոսակցություն չի եղել, այլ եղել է այն ժամանակ, երբ ինքը, Վ.Բեզոյանը և Ա.Ղազարյանը հանդիպել են Մ.Կուրդինյանի տանը (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

11. Վկա Մ.Կուրդինյանը **նախաքննության ընթացքում** ընդհանուր առմամբ տվել է հետևյալ ցուցմունքները.

Ն.Ափոյանի հետ ծանոթացել է 2008 թվականի մարտին:

2008 թվականի հոկտեմբերին Ն.Ափոյանին է փոխանցել 5000 եվրո գումար՝ համատեղ ընկերություն հիմնադրելու համար:

2008 թվականի դեկտեմբերին նրանք հիմնել են «Լինք-Ավիա» ՄՊԸ-ն, որի 60% բաժնեմասը պատկանել է Մ.Կուրդինյանին, իսկ 40%-ը՝ Ն.Ափոյանին:

2009 թվականին Մ.Կուրդինյանը Ն.Ափոյանին մաս-մաս տվել է ընդհանուր 27.700 ԱՄՆ դոլար: Մասնավորապես՝ մարտ-ապրիլ-մայիս ամիսների ընթացքում նա փոխանցել է 10.000 ԱՄՆ դոլար, 10.000 եվրո և 2.500 եվրո գումար:

2009 թվականի սեպտեմբերին Մ.Կուրդինյանը կնոջ ներկայությամբ Ն.Ափոյանի խնդրանքով նրա ամուսնուն է փոխանցել 2.000 ԱՄՆ դոլար:

2010 թվականի մայիսի 20-ին Մ.Կուրդինյանը ստացականով Ն.Ափոյանին է փոխանցել 8.000 ԱՄՆ դոլար:

2010 թվականի հոկտեմբերի վերջին Մ.Կուրդինյանը կնոջ ներկայությամբ Ն.Ափոյանին և նրա ամուսնուն՝ Ա.Սարգսյանին տվել է 3.000 ԱՄՆ դոլար:

2010 թվականի դեկտեմբերի սկզբին Մ.Կուրդինյանը դարձյալ կնոջ ներկայությամբ Ն.Ափոյանին է տվել 40.000 ռուբլի (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 49, հատոր 2, թերթեր 39-44, 92-95):

Բացի այդ, 2008 թվականի հոկտեմբերի 22-ին Մ.Կուրդինյանը Ն.Ափոյանին տվել է լիազորագիր՝ նրան ներկայացնելու և նրա փոխարեն հանդես գալու համար՝ երեք տարի ժամկետով (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 47):

Մ.Կուրդինյանը 2010 թվականի մայիսի 6-ի հայտարարությամբ նշել է, որ ոչ մի պատասխանատվություն (ո՛չ նյութական, ո՛չ բարոյական) չի կրում «Լինք-Ավիա» ՍՊԸ-ի տնօրինության և դրա 40% բաժնետեր Ն.Ափոյանի առաջ (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 11):

2010 թվականի դեկտեմբերի 16-ին Մ.Կուրդինյանի և Ն.Ափոյանի ամուսնու՝ Ա.Սարգսյանի միջև կնքվել է բաժնեմասի առուծախի պայմանագիր, որով Մ.Կուրդինյանն իր 60% բաժնեմասը 30.000 ՀՀ դրամով վաճառել է Ա.Սարգսյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 10):

11.1. Մ.Կուրդինյանն իր ցուցմունքներում նշել է. «2009 թվականի ապրիլ ամսին Ն.Ափոյանը եկել է մեր տուն և ասել, որ Անին դիմում գրի Սլավոնական համալսարանի դեկանի անունով, որպեսզի ինքը Անին տեղափոխվի (...): Երրորդ կուրսում Անին արդեն չցանկացավ տեղափոխվել, ուստի մենք պահանջեցինք՝ Նելլին հետ վերադարձնի գումարը, սակայն նա ասաց (...) մեզ նոր դիմորդ գտնել, որին ինքը կընդունի Սլավոնական համալսարան (...): [Մ]ենք չհամաձայնեցինք, քանի որ *ես վարսահ էի, որ Նելլին խաբում է (...)*» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 39-40):

Քննիչի այն հարցին, թե ՍՊԸ-ից դուրս գալուց հետո ինչու է Ն.Ափոյանին կրկին տվել 8.000 ԱՄՆ դոլար, 3.000 ԱՄՆ դոլար և 40.000 ռուբլի, Մ.Կուրդինյանը պատասխանել է. «(...) նա ինձ վստահեցնում էր, որ գտել է սպոնսորներ, որոնք մեծ գումարներ են ներդնելու (...): Իսկ այն հարցին, թե ինչու ստացականներ չի վերցրել, պատասխանել է. «(...) Քանի որ (...) ես նրան վստահում էի (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 45):

Մ.Կուրդինյանը **դատաքննության ընթացքում** հայտնել է, որ 2007 թվականին իր կինը՝ Վ.Պապյանը, և աղջիկը՝ Ա.Կուրդինյանը, Ռուսաստանից վերադարձել են Հայաստան, որպեսզի վերջինս ընդունվի Սլավոնական համալսարան, սակայն Ա.Կուրդինյանը չի կարողացել հանձնել քննությունները և չի ընդունվել: Վ.Պապյանը զանգահարել և հայտնել է իրեն, որ ծանոթացել է Ն.Ափոյանի հետ, ով պատրաստ է 9.000 ԱՄՆ դոլարի դիմաց իրենց դստերն ընդունել Սլավոնական համալսարան:

Ինքը կնոջն ասել է, որ այդ գումարը փոխանցի նրան: Հաջորդ օրը Վ.Պապյանը գանգել և ասել է, որ գումարը տվել է Ն.Ափոյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթ 83):

12. Ամբաստանյալ Ն.Ափոյանը թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և ընդհանուր առմամբ ցուցմունք է տվել այն մասին, որ տուժողի ամուսինը եղել է իր գործընկերը մինչև 2010 թվականի դեկտեմբերի 16-ը: Հարավ-չինական ավիատոլիների գործակալ դառնալու ցանկությունն իրականացնելու համար ինքը չուներ իրավաբանական տարածք, և այդ տարածքն իրեն է տրամադրել Մ.Կուրդիկյանը: Մեղադրանքի անհետեթությունն այն է, որ իբր իրեն 9.000 ԱՄՆ դոլար են տվել ապագայում կատարվելիք գործարքի համար, բայց ո՛չ ստացական են վերցրել, ո՛չ էլ կոնկրետ հասկացել են, թե ինչի համար են գումար տալիս (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 197-198, հատոր 10, թերթեր 78-79):

Նախաքննության ընթացքում Ն.Ափոյանը հայտնել է նաև հետևյալը. «(...) 2011 թվականի մայիսի 28-ին արդեն «Լինք-Ավիան» կնքել էր պայմանագիրը Հարավ-չինական ավիատոլիների հետ: Մացոն իր խնամի Վալոդի հետ եկել էր մեր օֆիս և սպառնալիքով ստիպում էր իրեն վերադարձնել իր 60%-ը: (...) Ես նրանց օֆիսից բոլորի ներկայությամբ վոնդել եմ: Դա եղել է 2011 թվականի հունիս ամսին (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 117):

Ն.Ափոյանը նման ցուցմունքներ է տվել նաև 2012 թվականի ապրիլի 3-ի և 2012 թվականի ապրիլի 14-ի հարցաքննությունների ժամանակ (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 67, 91):

Դատաքննության ընթացքում Ն.Ափոյանը նշել է, որ 2010 թվականի հոկտեմբերի 12-ից հետո իրենց օֆիս են գնացել Մ.Կուրդիկյանը, Վ.Ենգիբարյանը, Վ.Բեգոյանը: Մ.Կուրդիկյանը պահանջել է գրավից ազատել իր տարածքը, վերադարձնել իր «ներդրած» գումարները և թույլ տալ, որպեսզի նա դուրս գա 60% բաժնետիրությունից: Վ.Բեգոյանը և Վ.Ենգիբարյանն իրենից պահանջել են աուդիտորի հեռախոսահամարը, ինքը տվել է:

Ն.Ափոյանի պնդմամբ Վ.Ենգիբարյանը նշել է, որ ինքը ներկայացնում է Մ.Կուրդիկյանի շահերը՝ նրա փաստաբանն է (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

2011 թվականի ամռանը, երբ իրենք արդեն մեծ մասշտաբով գովազդում էին չինական ավիատոլիների ներկայացուցչությունը, Մ.Կուրդիկյանն իր խնամո՛ւ՝ Վ.Բեգոյանի հետ գնացել է իրենց գրասենյակ և հայտարարել, որ կվնասեն Մարտակերտի դիրքերում ծառայող իր որդուն, եթե ինքը 60% բաժնեմասը չվերադարձնի Մ.Կուրդիկյանին: Այդ միջադեպը տեղի է ունեցել իր գրասենյակի աշխատակիցների ներկայությամբ, ովքեր կարող են վկայություն տալ (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

Ն.Ափոյանը նշել է նաև, որ այդ անձինք հինգ տարի շարունակ լուել են և չեն հայտնել խոշոր չափերի հափշտակության մասին, որովհետև իրականում այդպիսի բան չի եղել, և այդ ամենը կազմակերպվել է իրեն և իր բիզնեսը կործանելու համար (տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթ 79):

13. Վկա Անդրանիկ Ղազարյանի **նախաքննական ցուցմունքների** համաձայն՝ ինքը Ն.Ափոյանի առաջարկով աշխատել է «Լինք-Ավիա» ՍՊԸ-ում որպես տնօրեն: Այդ ընթացքում ծանոթացել է Մ.Կուրդինյանի հետ: 9.000 ԱՄՆ դոլարի մասին իմացել է Մ.Կուրդինյանի և Ն.Ափոյանի հետ ունեցած խոսակցություններից (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 48-54, 137-140):

Ա.Ղազարյանը դատաքննության ընթացքում հայտնել է, որ 9.000 ԱՄՆ դոլարի մասին լսել է Մ.Կուրդինյանից: Վ.Ենգիբարյանի հետ ծանոթացել է Մ.Կուրդինյանի տանը՝ 2011 թվականի հունվարին, իսկ *Վ.Բեզոյանին չի ճանաչում*:

Հարցաքննության սկզբում Ա.Ղազարյանը նշել է, որ որոշակի տարածայնություններ է ունեցել Ն.Ափոյանի հետ, և վերջինիս մեղադրել է իրեն գրպարտելու մեջ (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

14. Վկա Վոլոդյա Բեզոյանը **նախաքննության ընթացքում** տվել է հետևյալ ցուցմունքները. «(...) Մնացական Կուրդինյանը հանդիսանում է հարսիս հայրը (...): [Վ.]երջինիս ընտանիքին ճանաչում եմ 2008 թվականից: (...) [Վ.]երջինիս ընտանիքի հետ շփման ժամանակ լսել եմ, որ Մնացականի կինը՝ Վիոլետտան, 9.000 ԱՄՆ դոլար գումար է տվել Սլավոնական համալսարանի նախկին աշխատակից Նելլի Ափոյանին (...):

(...) [Հ]ասկանալով, որ Մնացականը խաբվել է Նելլի Ափոյանի կողմից, ես և Մնացականը *մեր փաստաբան* Վահան Ենգիբարյանի հետ այցելել ենք Ն.Ափոյանի նոր գրասենյակ (...):

(...) *Ավելացնեմ, որ ես երեք անգամ հանդիպել եմ ՍՊԸ փնտրեն Անդրանիկ Ղազարյանին*, որը ինձ հայտնել է, որ Նելլի Ափոյանը գումարներ է վերցրել ՍՊԸ-ի դրամարկղից (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 59-60):

Վ.Բեզոյանը **դատաքննության ժամանակ** հայտնել է, որ Մ.Կուրդինյանի հետ ունեցած խոսակցություններից տեղեկացել է, որ նրա կինը՝ Վ.Պապյանը, իրենց դստերը՝ Ա.Կուրդինյանին Սլավոնական համալսարան տեղափոխելու համար Ն.Ափոյանին տվել է 9.000 ԱՄՆ դոլար գումար, սակայն վերջինս չի կատարել իր խոստումը և վերցրած գումարը չի վերադարձրել:

Ն.Ափոյանի հետ նրա գրասենյակում տեղի ունեցած խոսակցության ժամանակ ինքն առաջարկել է վերադարձնել Վ.Պապյանից վերցրած գումարը, սակայն վերջինս պատասխանել է, որ դա իր գործը չէ, թող

չխառնվի: Այդ հանդիպմանը ներկա են եղել Մ.Կուրդինյանը, Վ.Ենգիբարյանը, Ն.Ափոյանը և նրա ամուսինը (տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթ 82):

15. Դատախազ Դ.Կարապետյանը (այսուհետ՝ նաև Դատախազ) ոստիկանության Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնի պետ Գ.Կարապետյանին ուղղված 2012 թվականի հուլիսի 27-ի գրությամբ արձանագրել է. «(...) Մույն քրեական գործով Վազգեն Դեգիրմենջյանը չի հարցաքննվել (...):

(...) [Զ]պարզաբանված է մնում մեկ հանգամանք, թե Ն.Ափոյանի կողմից խաբվելուց հետո ինչու է հեղազա տարիներին Մ.Կուրդինյանը Ափոյանին վարահել և շուրջ 100.000 ԱՄՆ դոլար գումարի չափով կրկին գումար տվել: Այս հանգամանքը պարզաբանելու նպատակով լիարժեք քննություն չի իրականացվել:

Բացի այդ, ըստ Մասցակյան Կուրդինյանի՝ ինքը 2010 թվականի դեկտեմբեր ամսին հրաժարվել է ընկերությունում իր ունեցած բաժնեմասից՝ հավատարմով Ն.Ափոյանին, որ նշված ամսվա վերջին Ն.Ափոյանը կվերադարձնի պարտք մնացած ամբողջ գումարը:

Այս կապակցությամբ նույնպես պարզ չէ, թե երեք տարի խաբված լինելով ինչպես է համաձայնվել Ն.Ափոյանին հանձնել իր ունեցած բաժնեմասերը:

(...) Արդեն իսկ կատարված հարցաքննությունների և առերես հարցաքննությունների ժամանակ հիշյալ հարցերի պարզաբանմանը բավարար ուշադրություն չի դարձվել:

Բացի այդ հարցումներ չեն կատարվել Հայ-ռուսական սլավոնական համալսարան՝ պարզելու համար (...) երբևէ Ա.Կուրդինյանի անվամբ Հայ-ռուսական սլավոնական համալսարան տեղափոխվելու դիմում եղել է, թե ոչ:

(...) [Հ]երաքննության մարմնին հանձնարարություն չի տրվել, որպեսզի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման եղանակով, մասնավորապես Անի Կուրդինյանի համակոորսեցիներից համապատասխան հարցումների միջոցով պարզվի, թե Անի Կուրդինյանը երբևէ այլ բո՛ւհ տեղափոխվելու մասին խոսել է, թե ոչ, այդ նպատակով որևէ մեկին, մասնավորապես Նելլի Ափոյանին 9000 ԱՄՆ դոլար գումար տալու մասին նշել է, թե ոչ (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 5-6):

16. Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի պրոռեկտոր Գ.Սարգսյանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 5-ի գրության համաձայն՝ 2009-2012 թվականներին Ա.Կուրդինյանի անունով Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան տեղափոխվելու դիմում չի եղել (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 103):

17. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Վերլուծելով և գնահատելով դատական քննության ժամանակ

հետագուրված ապացույցներն իրենց համակցության մեջ, դատարանը ձեռք բերված ապացույցները բավարար է գրնում և գործի փաստական հանգամանքներով հաստատված է համարում, որ ամբաստանյալ Նելլի Ափոյանը խարդախությանը ուրիշի՝ առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու դիտարկությամբ, 2007թ. հուլիս ամսին, Վահան Ենգիբարյանի Երևան քաղաքի Շիրվանզադե 1 հասցեում գրնվող գրասենյակում, վերջինիս ծանոթ Վիդեյա Պապյանի դուրերը՝ Անի Կուրդինյանին «Մանկր-Պերերբորգի» համալսարանի Երևանի մասնաճյուղից «Հայ-Ռուսական պերական պլվնոնական» համալսարան րեդաիոիելու պարվակով, չարաշահելով Վ.Պապյանի վարահոթյունը, խարեությանը նրանից վերցրել է առանձնապես խոշոր չափերի՝ 3.036.330 ՀՀ դրամին համարժեք 9.000 ԱՄՆ դոլար գումար և այդ ուղղությանը որևէ գործողություն չկարարելով խարդախությանը հափշտակել է գումարը: Այսինքն՝ Ն.Ափոյանը կարարել է հանցավոր արարք, որը համապարասիանում է ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կերի հարկանիշներին, որով նա ենթակա է քրեական պարասիանարվության» (տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթ 84):

18. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը վերլուծության և գնահատման ենթարկելով գործով ձեռք բերված ապացույցները, դրանցից յուրաքանչյուրը գնահատելով վերաբերելիության, թույլարելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության րեսանկյունից, հանգում է այն հերևության, որ ամբաստանյալ Նելլի Ափոյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված և հաստատված է գործին վերաբերվող փոխկապակցված, հավասարի ապացույցների բավարար ամբողջությամբ (...):

(...)

Վերաքննիչ դատարանը, քնության առնելով պաշտպանական կողմի փաստարկներն այն մասին, որ առաջին արյանի դատարանը ամբաստանյալ Ն.Ափոյանի նկարմամբ մեղադրական դարավճիռ կայացնելիս հիմք է ընդունել իրար հեր հարազարական կապեր ունեցող շահագրգիռ անձանց՝ րուժողի և վկաների, ցուցմունքները, որոնք ըստ ՀՀ Վճռարեկ դատարանի նախադեպային որոշման չեն կարող արժանահավար համարվել և ապացուցողական նշանակություն ունենալ, գրնում է անհիմն, քանի որ առաջին արյանի դատարանը կարարել է ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները, ապահովել է քրեական գործի հանգամանքների լրիվ, օրլեկրիվ և բազմակողմանի հերագրություն (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթ 203):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

19. Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանները չեն իրականացրել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում, չեն գնահատել նախաքննության ընթացքում և դատարանում տուժողի և վկաների ցուցմունքների միջև առկա էական հակասությունները, ինչպես նաև հաշվի չեն առել տուժողի և վկաների միջև բարեկամական կապի առկայությունը և նրանց՝ գործի ելքով շահագրգռված լինելու հանգամանքը: Այսպես՝ Մնացական Կուրդիյանը տուժողի ամուսինն է, Անի Կուրդիյանը՝ տուժողի դուստրը, Գուրգեն Կուրդիյանը՝ տուժողի տեգրոջ որդին, Վոլոդյա Բեգոյանը՝ տուժողի խնամին, Վահան Ենգիբարյանը Մ.Կուրդիյանի փաստաբանն է և որպես փաստաբան վարձատրվել է նրա կողմից, իսկ Անդրանիկ Գազարյանը և Վոլոդյա Բեգոյանը 9.000 ԱՄՆ դոլարի պատմությունը լսել են տուժողի ընտանիքի անդամներից: Վերոշարադրյալ հանգամանքներով պայմանավորված՝ բողոքաբերը կարծիք է արտահայտել, որ վերջիններիս ցուցմունքները ճշմարտացի ու արժանահավատ չեն և նպատակ են հետապնդում օժանդակելու տուժողին:

20. Բողոքաբերը, մեջբերելով Լ.Ավետիսյանի վերաբերյալ Վճարելի դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, փաստել է, որ գործում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձևին համապատասխան որևէ գրավոր ապացույց, որը կհավաստի տուժողի կողմից Ն.Ափոյանին գումար փոխանցելու փաստը: Բացի այդ, դատական ակտերում իսպառ բացակայում են դատարանների իրավական վերլուծություններն այն մասին, թե կոնկրետ որ ապացույցների հիման վրա են հետևության հանգել Ն.Ափոյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելու վերաբերյալ:

Հետևաբար ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես՝ Ն.Ափոյանի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, որը չպետք է կիրառվեր, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ, 358-րդ հոդվածների պահանջները: Այսպես՝ անտեսվել են նախաքննության և դատաքննության ընթացքում տուժողի ու վկաների ցուցմունքների միջև առկա էական հակասությունները, կայացվել է անօրինական, չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է դատական ակտերը բեկանելու համար:

Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճարելի բողոքն ընդունել վարույթ, ամբողջությամբ բեկանել Առաջին աստիանի դատարանի

դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը, քրեական գործի վարույթը կարճել և Ն.Ափոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

21. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Ն.Ափոյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք կատարված լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

22. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *խարդախությունը խաբեության կամ վարահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունն է կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը:*

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *քրեական պարտասխանարվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հարկանիշները:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝ *«Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝*

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.

(...)

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.

(...)»:

Վճարելի դատարանը խարդախության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները բազմիցս վերլուծության է ենթարկել և կայուն նախադեպային իրավունք ձևավորել այն մասին, որ օբյեկտիվ կողմից խարդախությունը դրսևորվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, իսկ սուբյեկտիվ կողմից բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ և շահադիտական դրդումներով: Այլ կերպ ասած՝ կատարվածը խարդախություն որակելու համար անհրաժեշտ է, որ հանցավորն ի սկզբանե՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը, նպատակ հետապնդի չվերադարձնելու և հափշտակելու այն, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները (*տե՛ս հա մնապարտասխանաբար Լ.Ավերիսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 25-26.2-րդ*

և Վ.Մաթևոսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշման 26-27-րդ կետերը):

22.1. Վերահաստատելով և զարգացնելով Լ.Ավետիսյանի և Վ.Մաթևոսյանի գործերով կայացված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն ընդգծում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված՝ յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքներից առաջինը՝ հանցագործության դեպքը (ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքը) և այն բնութագրող հանգամանքները (հանցագործության տեղ, ժամանակ, եղանակ, միջոցներ և այլն) բացահայտելու պահանջն է (հանցագործության օբյեկտիվ կողմը), ինչից հետո միայն անհրաժեշտ է անդրադառնալ դեպքին անձի առնչությանը և նրա մեղավորությանը քրեական օրենքով արգելված արարք կատարելու մեջ (հանցագործության սուբյեկտիվ կողմը): Հետևաբար խարդախության հանցակազմի առկայությունը հավաստելու համար նախևառաջ պետք է պարզել հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշների առկայությունը, այնուհետև անցնել սուբյեկտիվ կողմի բացահայտմանն ու վերլուծությանը:

Այսպես՝ խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներն են հանրորեն վտանգավոր արարքը՝ ուրիշի գույքը հափշտակելը այսինքն՝ այն վերցնելը, հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, և հանցագործության եղանակը՝ ուրիշի գույքը հափշտակելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով: Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական դրդումներով:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հերկությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարսարվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պարզաճիբավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուր մեղադրյալի կամ կասկածյալի: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝

«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ սրուզման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն

այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «1. Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝

1) ապացուցված է արդյոք արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալը.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավասարի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին տրախ է հաստատող պատասխաններ»:

23.1. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հանցագործության մեջ անձի մեղավորության հարցը լուծվում է դրա մասին վկայող բավարար ապացույցների ամբողջությամբ: «Ապացույցների բավարարություն» հասկացությունը գնահատողական է և իրենից ներկայացնում է ապացույցների համակցության գնահատման վերջնական արդյունք (ապացույցների բավարարության չափանիշների՝ վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքի, դատավարական որոշումների հիմնավորվածության և պարճառարանվածության, անմեղության կանխավարկածի մասին մանրամասն տես Միրակ Սաքանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 15-19-րդ կետերը):

Վճռաբեկ դատարանն ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշների վերաբերյալ ձևավորած իրավական դիրքորոշումներն ամբողջացրել և զարգացրել է Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի գործով որոշման շրջանակներում: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ անձի դատապարտման համար անհրաժեշտ է ապացույցների այնպիսի համակցություն, որը բավարար կլինի անմեղության կանխավարկածը հաղթահարելու, անձի մեղավորության առնչությամբ ցանկացած ողջամիտ կասկած բացառելու և ապացույցների գնահատումն իրականացնող սուբյեկտի մոտ համապատասխան ներքին համոզմունք ձևավորելու համար: Ներքին համոզմունքը՝ որպես սուբյեկտիվ կատեգորիա, պետք է օբյեկտիվ հիմքեր ունենա, այն է՝ բխի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ հաստատված փաստական տվյալների ամբողջությունից, որոնք անկողմնակալ դիրքորոշի մոտ կձևավորեն անձի մեղավորության վերաբերյալ համոզվածություն: Ընդ որում, ներքին համոզմունքն օբյեկտիվանում և իրավական նշանակություն է ձեռք բերում դատական ակտերի հիմնավորման և պատճառաբանման միջոցով (*մանրամասն տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշման 29-32-րդ կետերը*):

Վճռաբեկ դատարանը քննարկվող որոշմամբ արձանագրել է, որ «*[Զ]րեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած» (տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշման 33-րդ կետը):*

24. Ընդհանրացնելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հանցագործության համար դատապարտումը չի կարող պայմանավորված լինել անձի հավանական մեղավորության վերաբերյալ հետևություններով կամ ենթադրություններով, այլ պետք է բխի նրա կողմից տվյալ արարքը

կատարելու հարցում դատարանի համոզմունքից: Միաժամանակ դատարանի համոզմունքը չի կարող կամայական և սուբյեկտիվ լինել. այն պետք է ձևավորվի պատշաճ ընթացակարգի շրջանակներում ապացույցների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ հետազոտման և գնահատման արդյունքում:

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հերևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հերևագրված ապացույցների վրա.

այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար. դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հերևագրված ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պարճատարանված: Պարճատարանման ենթակա են դատարանի կողմից դատավճոում շարադրվող բոլոր հերևությունները և որոշումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճոի նկարագրական-պարճատարանական մասում ցույց է րրվում (...)

3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հերևությունները, ինչպես նաև այս կամ այն ապացույցն անարճանահավար համարելու փաստարկները»:

Դատական ակտերի պատճատարանվածության օրենսդրական պահանջը Վճռարեկ դատարանը վերլուծության է ենթարկել Ֆ.Գալստյանի գործով որոշման մեջ՝ ճևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Դատական ակտի պարճատարանվածությունը կոչված է պարգարանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հերևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է սրեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության սրուզման համար:

(...) Պարճատարանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական արյանի հնարավորությունը՝ լիարճեք դատական սրուզման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հերևարար դատական ակտի չպարճատարանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության

իրավունքի խախտման (...)» (տե՛ս Ֆ.Գալստյանի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

25.1. Վերահաստատելով Ֆ.Գալստյանի գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը կրկնում է իր նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումն այն մասին, որ դատարանը պարտավոր է կայացվող դատական ակտում վերլուծության ենթարկել և թույլատրելիության, վերաբերելիության ու արժանահավատության տեսանկյունից գնահատել բոլոր այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև նշել այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները: Ընդ որում, ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս կարևոր է դրա աղբյուրի հատկանիշների բացահայտումը (ցուցմունք տվող անձանց շահագրգռվածություն, ֆիզիկական ու հոգեբանական վիճակ և այլն), բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը, այլ աղբյուրից նույն տեղեկությունն ստանալու հնարավորության պարզումը և այլն: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները (տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 31.3-32-րդ կետերը):

26. Սույն որոշման 22-22.1-րդ և 23.1-25.1-րդ կետերում կատարված իրավական վերլուծության հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ խարդախության գործերով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների այնպիսի համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր հանողվածություն հանցագործության դեպքի և այն բնութագրող հանգամանքների (մասնավորապես՝ ուրիշի գույքը հափշտակելու և խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակի) առկայության, դրանում անձի մեղավորության (մասնավորապես՝ հանցավորի մոտ ի սկզբանե ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության առկայության) վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան

կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնելու հիմնավորված ու պատճառաբանված որոշում:

27. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ն.Ափոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել Վ.Պապյանի վստահությունը չարաշահելով, խաբեությամբ նրանից առանձնապես խոշոր չափերով՝ 3.036.330 ՀՀ դրամին համարժեք 9.000 ԱՄՆ դոլար գումար հափշտակելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Առաջադրված մեղադրանքում Ն.Ափոյանն իրեն մեղավոր չի ճանաչել և բոլոր ցուցմունքներում՝ թե՛ նախաքննական, թե՛ դատաքննական, հերքել է Վ.Պապյանից առանձնապես խոշոր չափերով գումար հափշտակելու հանգամանքը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, գնահատելով գործում առկա ապացույցները, հաստատված է համարել Ն.Ափոյանի կողմից առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելու փաստը՝ նշելով, որ վերջինիս մեղքը հիմնավորվում է գործում առկա օբյեկտիվ և ճշմարտացի ապացույցների համակցությամբ (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալ Ն.Ափոյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված և հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված, հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, և նրա նկատմամբ կիրառվել է այն օրենքը, որը ենթակա է կիրառման, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը (տե՛ս սույն որոշման 18-րդ կետը):

28. Մինչդեռ գործի նյութերից երևում է, որ Ն.Ափոյանին առաջադրված մեղադրանքի հիմքում ընկած են միմյանց հետ բարեկամական հարաբերությունների մեջ գտնվող այնպիսի անձանց ցուցմունքներ, ովքեր ինչ-որ չափով շահագրգռված են գործի ելքով: Մասնավորապես՝ Ա.Կուրդիյանը տուժողի դուստրն է, Մ.Կուրդիյանը՝ ամուսինը, Գ.Կուրդիյանը՝ ամուսնու եղբոր որդին, Վ.Բեգոյանը՝ նրանց խնամին: Բացի այդ, վերոնշյալ վկաների ցուցմունքներում առկա են մի շարք էական հակասություններ:

Հետևաբար արժանահավատության տեսանկյունից վերոնշյալ անձանց ցուցմունքները գնահատելիս կարևոր է դրանց բովանդակությունը հաստատող նույն տեղեկատվության ստացումը մեկ այլ՝ գործի ելքով չշահագրգռված անձից կամ այլ օբյեկտիվ աղբյուրից, որն առանց ներքին հակասությունների, գործում առկա մյուս ապացույցներին համահունչ կպարունակի ապացուցման ենթակա հանգամանքների վերաբերյալ ճշմարտացի և արժանահավատ տեղեկատվություն:

Ինչ վերաբերում է վկաներից փաստաբան Վ.Ենգիբարյանի և Ա.Ղազարյանի ցուցմունքներին, ապա թեև գործի նյութերում առկա չեն տվյալներ նրանց՝ Կուրդիյանների ընտանիքի հետ ազգակցական հարաբերությունների մեջ գտնվելու վերաբերյալ, այնուամենայնիվ նրանց ցուցմունքներն արժանահավատության և գործի լուծման համար

բավարարության տեսանկյունից գնահատելիս ստորադաս դատարանները համակողմանի վերլուծության չեն ենթարկել ամբաստանյալի և տուժող կողմի հետ վերջիններիս ունեցած հարաբերությունների բնույթը, գործի ելքով շահագրգռված լինելու հավանականությունը, ինչպես նաև չեն պարզաբանել հանցագործության դեպքի ու հանգամանքների վերաբերյալ նրանց հաղորդած տեղեկատվության մեջ առկա էական հակասությունները, միջոցներ չեն ձեռնարկել նրանց հայտնած տեղեկություններն այլ աղբյուրներից ստացված տեղեկություններով հաստատելու կամ հերքելու ուղղությամբ:

28.1. Այսպես՝ վկա Վահան Ենգիբարյանն իր ցուցմունքներում նշել է, որ Կուրդիյանների ընտանիքի հետ որևէ առնչություն չունի, տուժող Վ.Պապյանի հետ ծանոթացել է 2007 թվականին իր ընկերոջ՝ Վազգեն Դեգիրմենջյանի միջոցով, իսկ Մ.Կուրդիյանի հետ ծանոթացել է դեպքից մեկ տարի անց՝ 2008 թվականին: Սակայն Վ.Պապյանն իր ցուցմունքներում բազմիցս նշել է, որ Ն.Ափոյանի հետ ծանոթացել են *«իրենց ընտանիքի ընդհանուր ծանոթ»* Վ.Ենգիբարյանի միջոցով: Նրան որպես *«իրենց ընտանիքի ծանոթ»* է ներկայացրել նաև Ա.Կուրդիյանն իր ցուցմունքներում (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը):

Բացի այդ, գործում առկա տվյալների համաձայն՝ Վ.Ենգիբարյանը երկու անգամ Մ.Կուրդիյանի և Վ.Բեգոյանի հետ այցելել է Ն.Ափոյանի գրասենյակ: Ն.Ափոյանն իր ցուցմունքներում նշել է, որ Վ.Ենգիբարյանը ներկայացել է որպես Մ.Կուրդիյանի փաստաբան և իրենից պահանջել է աուդիտորի հեռախոսահամարը: Վ.Բեգոյանն իր նախաքննական ցուցմունքներում ընդգծել է, որ ինքը Մ.Կուրդիյանի և *«իրենց փաստաբան»* Վ.Ենգիբարյանի հետ այցելել է Ն.Ափոյանի նոր գրասենյակ: Վերոնշյալ հանգամանքը հաստատվում է նաև Վ.Ենգիբարյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներով: Մասնավորապես, վերջինս հայտնել է, որ երկու անգամ Մ.Կուրդիյանի և Վ.Բեգոյանի հետ գնացել են Ն.Ափոյանի գրասենյակ, սակայն այդպես էլ աուդիտի արդյունքները չեն ստացել (տե՛ս սույն որոշման 10-10.1-րդ, 12-րդ, 14-րդ կետերը):

Վերանայվող դատական ակտերի ուսումնասիրությունից երևում է, որ թե՛ Առաջին ատյանի, թե՛ Վերաքննիչ դատարանները չեն պարզել՝ տվյալ ժամանակահատվածում Վ.Ենգիբարյանն ինչպիսի հարաբերություններ է ունեցել Կուրդիյանների ընտանիքի հետ, ինչու և ինչ կարգավիճակով է նա երկու անգամ ներկայացել Ն.Ափոյանի գրասենյակ ու պահանջել աուդիտի արդյունքները, արդյոք նա եղել է Մ.Կուրդիյանի փաստաբանը: Մինչդեռ վկայակոչված հանգամանքների պարզաբանումն էական նշանակություն ունի Վ.Ենգիբարյանի անաչառության, նրա ցուցմունքների արժանահավատության և ճշմարտացիության գնահատման համար:

28.2. Գործի նյութերից երևում է, որ Վ.Ենգիբարյանին և Վ.Պապյանին ծանոթացրել է Վ.Ենգիբարյանի ընկերը՝ Վ.Դեգիրմենջյանը, ով

Մ.Կուրդիյանի եղբոր որդու՝ Գ.Կուրդիյանի աներոջ եղբայրն է: Վ.Ենգիբարյանը դատաքննության ընթացքում նշել է, որ տվյալ ժամանակահատվածում Վ.Դեգիրմենջյանն իր գրասենյակում շինարարական աշխատանքներ է իրականացրել (տե՛ս սույն որոշման 9-10.1-րդ կետերը):

Վճարելի դատարանը գտնում է, որ Վ.Ենգիբարյանի ցուցմունքների արժանահավատությունը ճշտելու, Կուրդիյանների ընտանիքի հետ ծանոթանալու հանգամանքները և հետագայում նրանց միջև ձևավորված փոխհարաբերությունների բնույթը պարզելու տեսանկյունից կարևոր էր Վ.Դեգիրմենջյանի հարցաքննությունը: Ընդ որում, դատախազ Գ.Կարապետյանը նախաքննության ընթացքում քննիչին ուղղված գրությամբ ցուցում է տվել Վ.Դեգիրմենջյանին հարցաքննելու անհրաժեշտության վերաբերյալ, սակայն գործի նյութերից երևում է, որ այդ ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

28.3. Վճարելի դատարանը փաստում է նաև, որ ստորադաս դատարանները չեն վերլուծել և պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել Վ.Ենգիբարյանի ցուցմունքներում մի շարք ներքին հակասությունների առկայությունը:

Այսպես՝ Վ.Ենգիբարյանը հանցագործության դեպքի և դրա հանգամանքների վերաբերյալ տվել է հակասական ցուցմունքներ, մասնավորապես՝

- 2011 թվականի դեկտեմբերի 28-ի և 2012 թվականի փետրվարի 10-ի հարցաքննությունների ժամանակ նշել է, որ Վ.Պապյանը գումարը հանձնել է Ն.Ափոյանին, վերջինս այն *հաշվել է* և դրել պայուսակի մեջ,

- Ն.Ափոյանի հետ առերես հարցաքննության ընթացքում հայտնել է, որ Վ.Պապյանը Ն.Ափոյանին փոխանցել է *ծրար՝ դոլարի կուպյուրով, իսկ հաշվելու մասին չի հիշում*,

- նշված հակասությունների վերաբերյալ հարցաքննվելիս ընդգծել է, որ իրականն այն է, որ Ն.Ափոյանը վերցրել է գումարը, *հաշվել է* և դրել պայուսակը,

- դատաքննության ընթացքում Վ.Ենգիբարյանը նշել է, որ ծրար չի եղել, Ն.Ափոյանը գումարը *հաշվել է* բոլորի ներկայությամբ (տե՛ս սույն որոշման 10-10.1-րդ կետերը):

- նախաքննության ընթացքում վերջինս նշել է, որ Վ.Պապյանին, Ա.Կուրդիյանին և Գ.Կուրդիյանին Ն.Ափոյանի հետ ծանոթացրել է իր Շիրվանգադե 1 հասցեում գտնվող գրասենյակում, որտեղ Ն.Ափոյանը Վ.Պապյանին հայտնել է, որ այդ գործն ուրիշների համար կաներ 10.000 ԱՄՆ դոլարով, բայց նրանցից կվերցնի 9.000 ԱՄՆ դոլար: Մի քանի օրից կրկին հանդիպել են վերոնշյալ գրասենյակում (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Մինչդեռ դատաքննության ընթացքում Վ.Ենգիբարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը սկզբում հանդիպել է Ն.Ափոյանի

հետ Աբովյան փողոցում, պայմանավորվել գումարի չափի վերաբերյալ, այդ մասին հաղորդել Վ.Պապյանին, վերջինս էլ համաձայնվել է, իսկ իր գրասենյակում հանդիպել են ընդամենը մեկ անգամ, որի ընթացքում Վ.Պապյանը գումարը փոխանցել է Ն.Ափոյանին (տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը):

Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ վկա Վ.Ենգիբարյանի ցուցմունքներում առկա են բազմաթիվ հակասություններ հանցագործության դեպքի՝ գումարի վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերելու, այն Ն.Ափոյանին հանձնելու հանգամանքների, տեղի ունեցած հանդիպումների թվի և վայրի հետ կապված, որպիսի հակասությունների պատճառները ստորադաս դատարանների կողմից չեն պարզվել և պատշաճ գնահատման չեն ենթարկվել:

28.4. Վկա Անդրանիկ Ղազարյանի ցուցմունքները գործի լուծման համար բավարարության տեսանկյունից գնահատելիս ստորադաս դատարանները պատշաճ գնահատականի չեն արժանացրել այն հանգամանքները, որ նա 9.000 ԱՄՆ դոլարի մասին լսել է Մ.Կուրդինյանից, բացի այդ, որոշակի գումարային հարցերի պատճառով նա Ն.Ափոյանի հետ գտնվում է լարված հարաբերությունների մեջ (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

28.5. Վկա Անի Կուրդինյանը հանցագործության դեպքի և հանգամանքների վերաբերյալ տվել է հակասական ցուցմունքներ: Մասնավորապես, նախաքննության ընթացքում՝ Ն.Ափոյանի հետ առերես հարցաքննվելիս, նա նշել է, որ Ն.Ափոյանը գումարը չի հաշվել, անմիջապես դրել է պայուսակի մեջ, ավելին՝ ներկաներից մեկը հարցրել է՝ չես ցանկանում հաշվել, նա էլ պատասխանել է, որ ոչ: Ա.Կուրդինյանը նշել է նաև, որ Վ.Ենգիբարյանի գրասենյակում հանդիպել են երկու անգամ, նեկա են գտնվել ինքը, Վ.Պապյանը, Գ.Կուրդինյանը, Վ.Ենգիբարյանը և Ն.Ափոյանը, գումարի շուրջ պայմանավորվածություն է ձեռք բերել իր մայրը՝ Վ.Պապյանը: Մինչդեռ դատաքննության ընթացքում Ա.Կուրդինյանը ցուցմունք է տվել այն մասին, որ առաջին հանդիպմանն իրենց հետ է եղել նաև իր քույրը. ինքը և քույրը սպասել են մեքենայի մեջ, իսկ Վ.Ենգիբարյանի գրասենյակ են գնացել Վ.Պապյանը և Գ.Կուրդինյանը: Հաջորդ օրը մայրը գումարը ծրարով փոխանցել է Ն.Ափոյանին, վերջինս հաշվելու նման մատով է արել, փակել և դրել պայուսակը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

28.6. Ըստ տուժող Վիոլետա Պապյանի և վկա Գուրգեն Կուրդինյանի ցուցմունքների՝ Վ.Ենգիբարյանի գրասենյակում Ն.Ափոյանի հետ հանդիպել են երկու անգամ, միևնույն անձանց ներկայությամբ: Մասնավորապես՝ ներկա են գտնվել Վ.Պապյանը, Ա.Կուրդինյանը, Գ.Կուրդինյանը, Վ.Ենգիբարյանը և Ն.Ափոյանը, գումարի չափի վերաբերյալ պայմանավորվածություն են ձեռք բերել Ն.Ափոյանը և Վ.Պապյանը:

Վ.Պապյանը նախաքննության ընթացքում նշել է, որ Ն.Ափոյանը գումարը վերցրել և դրել է պայուսակի մեջ, իսկ դատարանում ցուցմունք է տվել, որ թերթթելու նման մատով է արել, մինչդեռ Գ.Կուրդիյանը հայտնել է, որ Ն.Ափոյանը գումարը հաշվել է և նորից հետ դրել ծրարի մեջ (տե՛ս սույն որոշման 7-րդ, 9-րդ կետերը):

28.7. Վկա Մնացական Կուրդիյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքների արժանահավատությունը գնահատելիս ստորադաս դատարանները գնահատման չեն արժանացրել Մ.Կուրդիյանի ցուցմունքներում պարունակվող տեղեկություններն այն մասին, որ.

- հանցագործության ենթադրյալ դեպքից մոտ մեկ տարի անց՝ 2008 թվականի դեկտեմբերին, Ն.Ափոյանի հետ համատեղ ընկերություն է հիմնել, որի 60% բաժնեմասը պատկանել է իրեն, իսկ 40%-ը՝ Ն.Ափոյանին: Ընկերության հիմնադրման օրվանից ինքը ներդրումներ է իրականացրել, ինչպես նաև Ն.Ափոյանին է փոխանցել մեծ թվով գումարներ, որոնց համար, սակայն, ստացականներ չի վերցրել (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

- 2009 թվականի ապրիլին՝ այն բանից հետո, երբ իր դատերը՝ Ա.Կուրդիյանին Ն.Ափոյանն այդպես էլ չէր տեղափոխել Սլավոնական համալսարան, իսկ հետագայում արդեն Անին ինքը չէր ցանկացել տեղափոխվել, Ն.Ափոյանն առաջարկել է իրեն նոր դիմորդ գտնել, ինչին, սակայն, ինքը չի համաձայնվել, քանի որ *վարտահ էր*, որ Ն.Ափոյանը *խաբում էր*: Մինչդեռ ապրիլ ամսից հետո շարունակել է Ն.Ափոյանին փոխանցել գումարներ՝ 2009 թվականի սեպտեմբերին՝ 2.000 ԱՄՆ դոլար, 2010 թվականի մայիսի 20-ին՝ 8.000 ԱՄՆ դոլար՝ ստացականով, 2010 թվականի հոկտեմբերի վերջին՝ 3.000 ԱՄՆ դոլար, 2010 թվականի դեկտեմբերի սկզբին՝ 40.000 ռուբլի (տե՛ս սույն որոշման 11-11.1-րդ կետերը):

Ստացվում է՝ այն բանից հետո, երբ Մ.Կուրդիյանը հասկացել էր և վստահ էր, որ Ն.Ափոյանն իրեն խաբում է, շարունակել է նրան մեծ թվով գումարներ տալ:

- 2010 թվականի դեկտեմբերի 16-ին բաժնեմասի առուծախի պայմանագրով իր 60% բաժնեմասը 30.000 ՀՀ դրամով վաճառել է Ն.Ափոյանի ամուսնուն՝ Ա.Սարգսյանին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), իսկ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել միայն 2011 թվականի հոկտեմբերի 3-ին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Այսպիսով, պարզ չէ՝ ինչու է Մ.Կուրդիյանն առանց ստացականի խոշոր գումարներ տվել Ն.Ափոյանին, երբ, ըստ իր ցուցմունքների, դադարել էր այլևս նրան վստահել, ինչու է իր բաժնեմասը վաճառել Ն.Ափոյանին, երբ նրանից դրամական պահանջներ ուներ, ինչու է հանցագործության մասին հաղորդում ներկայացրել ոստիկանություն իր բաժնեմասի առուվաճառքից հետո մոտ մեկ, իսկ հանցագործության ենթադրյալ դեպքից հետո մոտավորապես չորս տարի անց: Ընդ որում, նախաքննության ընթացքում նշված

հանգամանքների շուրջ իր կասկածներն է հայտնել նաև դատախազը՝ նշելով, որ այդ ուղղությամբ լիարժեք քննություն չի իրականացվել և քննիչին ուղղված գրությամբ ցուցում է տվել պարզելու, թե Ն.Ափոյանի կողմից խաբվելուց հետո ինչու է հետագա տարիներին Մ.Կուրդինյանը Ն.Ափոյանին վստահել և շուրջ 100.000 ԱՄՆ դոլար գումարի չափով կրկին գումար տվել, երեք տարի խաբված լինելով՝ ինչպես է համաձայնվել Ն.Ափոյանին հանձնել իր ունեցած բաժնետմասերը (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված հանգամանքները, որոնք էական նշանակություն ունեն գործով բազմակողմանի և լրիվ քննություն իրականացնելու տեսանկյունից, ստորադաս դատարանների կողմից այդպես էլ չեն պարզաբանվել:

28.8. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Ն.Ափոյանը նախաքննության և դատաքննության ընթացքում բազմիցս պնդել է, որ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելով և իրեն առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելու մեջ մեղադրելով՝ Մ.Կուրդինյանը ցանկացել է 60% վաճառված բաժնետմասը վերադարձնելուց հրաժարվելու համար վրեժխնդիր լինել իրենից: Այսպես՝ ըստ Ն.Ափոյանի ցուցմունքների՝ 2011 թվականի ամռանը Մ.Կուրդինյանը և Վ.Բեզոյանը այցելել են նրա գրասենյակ և սպառնալիքներով հետ պահանջել բաժնետմասը, ինչին Ն.Ափոյանը չի համաձայնվել: Վերջինս ընդգծել է, որ առկա են ականատես վկաներ և կարող են այդ դեպքի շուրջ վկայություն տալ (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության իրականացումն ապահովելու, Մ.Կուրդինյանի ու Ն.Ափոյանի ցուցմունքների արժանահավատությունը գնահատելու տեսանկյունից կարևոր էր մատնանշված հանգամանքների իսկության ստուգումը, ինչին, սակայն, թե՛ նախաքննական մարմինները, թե՛ դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել:

29. Ամփոփելով սույն որոշման 28-28.8-րդ կետերում շարադրված փաստական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Ն.Ափոյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցներն օբյեկտիվ են և արժանահավատ, բավարար գործի ճիշտ լուծման տեսանկյունից, չեն հաստատվում գործի փաստերով: Մասնավորապես՝ դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել գործում առկա ապացույցները, չեն պարզել դրանցում առկա և սույն որոշման 28-28.8-րդ կետերում արձանագրված հակասությունները, արժանահավատության տեսանկյունից չեն վերլուծել և իրավական գնահատականի չեն արժանացրել տուժողի և վկաների՝ գործի ելքով

հնարավոր շահագրգռվածություն ունենալու հանգամանքը, այլ, բավարարվելով դրանց պարզ շարադրմամբ, հետևության են հանգել Ն.Ափոյանի արարքում խարդախության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առկայության վերաբերյալ:

30. Մինևույն ժամանակ վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ ստորադաս դատարանները, Ն.Ափոյանի արարքում խարդախության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները հաստատված համարելով, չեն հիմնավորել և պատճառաբանել նրա մոտ ի սկզբանե ուրիշի գույքը հափշտակելու ուղղակի դիտավորության առկայությունը՝ դրանով իսկ անտեսելով վճարելի դատարանի նախկինում՝ *Լ.Ավետիսյանի և Վ.Մաթևոսյանի* գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, վերոնշյալ գործերով վճարելի դատարանն ընդգծել է, որ դատարանն ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր չափանիշով պետք է հիմնավորի, որ հանցավորը, նախքան գույքը վերցնելը, ուղղակի դիտավորություն է ունեցել խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակելու այն (*տես Լ.Ավետիսյանի գործով վճարելի դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 և Վ.Մաթևոսյանի գործով վճարելի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշումները*):

31. Սույն որոշման 27-30-րդ կետերում շարադրված փաստերը և եզրահանգումները գնահատելով 22-26-րդ կետերում մեջբերված նորմերի և ձևավորած իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ վճարելի դատարանն արձանագրում է, որ Ն.Ափոյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք կատարված լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

32. Անփոփելով վերոշարադրյալը՝ վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները խախտել են ապացույցները գնահատելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 127-րդ, 126-րդ, 365-րդ հոդվածների պահանջները, կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտեր, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է դատական ակտերը բեկանելու և նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Նելլի Խաչատուրի Ափոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 29-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Նելլի Խաչատուրի Ափոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

57.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴՅ/0028/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան	Մ.ԳԻՆՈՍՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գոռ Հակոբի Ասատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի մարտի 10-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Ասատրյանի պաշտպան Մ.Գինոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի դեկտեմբերի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 46117113 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի դեկտեմբերի 30-ի որոշմամբ Գոռ Հակոբի Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի մայիսի 16-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 2-ի դատավճռով Գ.Ասատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Գ.Ասատրյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Մեղադրող Ա.Սարգսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի մարտի 10-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 2-ի դատավճիռը, Գ.Ասատրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մարտի 10-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Գ.Ասատրյանի պաշտպան Մ.Գինոսյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 12-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Գ.Ասատրյանին մեղադրանք է առաջադրվել և նախաքննությամբ հիմնավորված է համարվել, որ «(...) [Նա] 2013թ. ամռան ամիսներին, րանը շինարարական աշխատանքներ կատարելու համար, ցեմենտ է գնել րուժող՝ Անդրանիկ Ասատրյանից և պարտք մնացել 36.000 դրամ ու խոստացել է գումարը վճարել հոր՝ Հակոբ Ասատրյանի ՌԴ-ից արքագնա աշխատանքից վերադառնալուց հետո:

14.12.2013թ. Ա.Ասատրյանը րեղելացել է, որ Գոռ Ասատրյանի հայրը 2013թ. դեկտեմբերի 7-ին վերադարձել է ՌԴ-ից և Գ.Ասատրյանը չի վերադարձնում պարտքը, այդ կապակցությամբ զանգահարել է նրա քջային հեռախոսին, սակայն վերջինս չի պարասխանել զանգերին, իսկ պարասխանելուց անհարկի ձգձգել է գումարի վերադարձը, որի պարճառով Ա.Ասատրյանը գնացել է Կոտայքի մարզի Նոր-Գեղի գյուղի

Հրաչյա Քոչար փողոցի 3-րդ փան քակ և դուրս հրավիրել Գ.Ասատրյանին, ով փանից խոհանոցային դասակր ձեռքին դուրս է եկել Ա.Ասատրյանին ընդատաջ:

Այնուհետև, կենցաղային հարցերի շուրջ, գումարը վերադարձնելու հետ կապված, Ա.Ասատրյանի և Գ.Ասատրյանի միջև ծագել է վիճարանություն, որի ընթացքում միմյանց հասցեին փվել են հայհոյանքներ և այն վերածվել է **քաջքռուկի ու ծեծկոտորի**, որը րևել է շուրջ հինգ րոպե: Վիճարանության ժամանակ, Ա.Ասատրյանը գեղնին վայր է գցել Գ.Ասատրյանին, ծնկել նրա վրա և բռնուցքներով հարվածներ հասցրել վերջինիս դեմքին, պարճառել ֆիզիկական ցավ, որի ժամանակ Գ.Ասատրյանը խոհանոցային դասակով դիտարկողայ հարվածել է Ա.Ասատրյանի կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսին և նրա առողջությանը պարճառել է կյանքին վրանգ սպառնացող ծանր վնաս: Նրանց միջև ծագած **ծեծկոտորք** րեսել է Գ.Ասատրյանի կինը՝ Արմինե Բալասանյանը, օգնության է կանչել ամուսնու ծնողներ՝ Հակոբ և Թամարա Ասատրյաններին, ովքեր հարևանուհի՝ Նինա Հարությունյանի հետ միասին մտրեցել և քաճանել են նրանց» (տես քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 137):

6. Առաջին ատյանի դատարանը ապացուցված է համարել հետևյալը. «(...) Գոռ Ասատրյանը, 2013թ.-ի ամռանը, իր՝ Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղի Հրաչյա Քոչարի փողոց, 3-րդ հասցեում գրնվող փանը, կարարել է շինարարական աշխարանքներ, որի ժամանակ, Անդրանիկ Ասատրյանից գնել է ցեմենտ, որի գումարի մի մասը փվել է Անդրանիկ Ասատրյանին, իսկ 36.000 դրամը՝ սեպտեմբեր ամսին մնացել է պարտք և փոխադարձ պայմանավորվածություն են ձեռք բերել այն մասին, որ Գոռ Ասատրյանը նշված գումարը Անդրանիկ Ասատրյանին կվերադարձնի հոր՝ Հակոբ Ասատրյանի, ՌԴ-ից արտագնա աշխարանքից վերադառնալուց հետո:

(...) Անդրանիկ Ասատրյանը, 2014թ.-ի դեկտեմբերի 14-ին, րեղեկանալով, որ Գոռ Ասատրյանի հայրը վերադարձել է, իսկ Գոռ Ասատրյանը իրենց փոխադարձ պայմանավորվածության համաձայն՝ 36.000 դրամ պարտք գումարը չի վերադարձնում, (...) մի քանի անգամ բջջային հեռախոսով զանգահարել է Գոռ Ասատրյանին, սակայն վերջինս, հասկանալով, որ Անդրանիկ Ասատրյանը պարտք գումարը պետք է պահանջի, մինչդեռ նա այդ գումարը չի ունեցել և Անդրանիկ Ասատրյանի հեռախոսազանգերին չի պարասխանել: Անդրանիկ Ասատրյանը Գոռ Ասատրյանի վերը նշված վարքագծից զայրացած, նույն օրը (...) իր ավտոմեքենայով գնացել է Գոռ Ասատրյանի փան մոտ, ավտոմեքենայից իջել և մտրեցել է նրա փան դարպասներին և այնրեղից րեսել է պարուհանի մոտ կանգնած Գոռ Ասատրյանին ու բջջային հեռախոսով զանգահարել է նրան: Վերջինս նույնպես պարուհանից րեսել է իրենց փան դարպասների մոտ կանգնած Անդրանիկ Ասատրյանին, վերցրել է հեռախոսը և նրանք երկուսով, պարտքի շուրջ վիճարանել են և վիրավորել միմյանց և Անդրանիկ Ասատրյանը Գոռ

Ասատրյանին դուրս է կանչել: Մինչ Անդրանիկ Ասատրյանի հետ հեռախոսով խոսելը, Գոռ Ասատրյանը, գրնվելով իր տանը, իր երեխաների համար, խոհանոցային դանակով, ինձոր կտրելիս է եղել, և երբ Անդրանիկ Ասատրյանը հեռախոսով կապվել է և նրան դուրս կանչել, նա աջ ձեռքին ունենալով տան խոհանոցային դանակը, իսկ ձախ ձեռքին՝ ինձոր, դրանք, մեխանիկորեն, իր հետ վերցնելով, դուրս է եկել իրենց տան բակ և ընդատաջ գնացել Անդրանիկ Ասատրյանին:

Վերջինս, տեսնելով Գոռ Ասատրյանին, մտել է նրանց տան բակ և նրա ձեռքին տեսնելով դանակ, ավելի է զայրացել և հայհոյել Գոռ Ասատրյանին, ասելով, թե՛ պարտքը չի վերադարձում և դանակով զայիս է իր վրա և նրանք երկուսով, փոխադարձ վիրավորանքներ են հասցրել միմյանց և քաշքշել իրար, որի ժամանակ, Անդրանիկ Ասատրյանը աջ ոտքով հարվածել է Գոռ Ասատրյանի աջ ձեռքին, որից դանակը ընկել է գետնին, ձյան մեջ, 1 մետր հեռավորության վրա:

Դրանից հետո, Անդրանիկ Ասատրյանը, նույն ոտքով հարվածել է Գոռ Ասատրյանի ոտքերին, որից Գոռ Ասատրյանը մեջքի վրա վայր է ընկել գետնին, իսկ Անդրանիկ Ասատրյանը, որը ֆիզիկապես ավելի ուժեղ և հաղթանդամ է եղել, քան Գոռ Ասատրյանը, ինչպես նաև նրանից 7 տարի տարիքով մեծ է եղել, ծնկել է նրա վրա, ձախ ձեռքով բռնել է նրա օձիքից, իսկ աջ ձեռքով, բռունցքով սկսել է հարվածներ հասցնել Գոռ Ասատրյանի դեմքին:

Գոռ Ասատրյանը փորձել է դիմադրել, սակայն չի կարողացել, դիմել է Անդրանիկ Ասատրյանին, որպեսզի իրեն բաց թողնի և հարվածներ չհասցնի, սակայն Անդրանիկ Ասատրյանը գրնվելով զայրացած վիճակում, շարունակել է բռունցքով հարվածներ հասցնել Գոռի դեմքին: Նրանց աղմուկի ձայներից, նրանց է մտրեցել Գոռ Ասատրյանի կինը՝ Արմինե Բալասանյանը, այնուհետև՝ երեխաները, Արմինե Բալասանյանը նույնպես խնդրել է և պահանջել է Անդրանիկ Ասատրյանին՝ բաց թողնել Գոռ Ասատրյանին: Այդ ժամանակ, երեխաները սկսել են լաց լինել, սակայն Անդրանիկ Ասատրյանը շարունակել է հարվածել Գոռ Ասատրյանին, իսկ վերջինս, ֆիզիկապես ավելի թույլ լինելով, չի կարողացել ազատվել նրանից և նրա բռունցքների հարվածներից, շարունակելով մեջքի վրա պառկած մնալ գետնին, իսկ Անդրանիկ Ասատրյանը՝ ծնկած նրա վրա:

Այդ ժամանակ, Գոռ Ասատրյանը իր աջ ձեռքը ազատել է, շոշափելով փորձել է գետնից ինչ-որ մի իր վերցնել, Անդրանիկ Ասատրյանին վնասելու և նրանից ազատվելու համար, գետնից, ձյան միջից, նրա ձեռքն է ընկել իր ձեռքին եղած, գետնին ընկած դանակը և զգուշացրել Անդրանիկ Ասատրյանին, որ իրեն բաց թողնի, այլապես՝ կծակի նրան, սակայն Անդրանիկ Ասատրյանը բաց չի թողել և շարունակել է Գոռի վրա ծնկի եկած վիճակում, ձախ ձեռքով նրա օձիքը բռնած, աջ ձեռքով՝ բռունցքով հարվածներ հասցնել, իսկ Գոռ Ասատրյանը, իրենց տան խոհանոցային դանակով, մեկ

անգամ հարվածել է Անդրանիկ Ասատրյանի կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսին, սակայն, դրանից հետո, Անդրանիկ Ասատրյանը շարունակել է բռունցքով հարվածներ հասցնել Գոռ Ասատրյանի դեմքին: Այնուհետև, նրանց աղմուկից, փանից դուրս է եկել Գոռ Ասատրյանի մայրը (...) և հարևանուհին (...), ինչպես նաև (...) Գոռ Ասատրյանի հայրը (...) և նրանք երեքով բաժանել են Գոռ և Անդրանիկ Ասատրյաններին (...):» (տես քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 146-148):

7. Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Գ.Ասատրյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասից վերաորակելով նույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով և այդ հոդվածով նրան մեղավոր ճանաչելով, արձանագրել է., (...) /Դ/ապարանը հաստատված է համարում, որ Գոռ Ասատրյանը, մեջքի վրա ընկած լինելով գետնին, ձյան մեջ, և չկարողանալով ազարվել իրենից ֆիզիկապես ուժեղ և հաղթանդամ Անդրանիկ Ասատրյանից, որը նաև 7 փարի փարիքով մեծ է եղել Գոռ Ասատրյանից, Գոռ Ասատրյանի վրա ծնկի եկած վիճակում, ձախ ձեռքով Գոռ Ասատրյանի օձիքից բռնած, աջ ձեռքով բռունցքով հարվածներ է հասցրել Գոռ Ասատրյանի դեմքին, որից նա սրացել է աջ ակնազնդի արյունազեղման, դեմքի աջ կեսի աջից պարանոցի քերծվածքներ, Գոռ Ասատրյանը ինքնապաշտպանության նպատակով, իր կյանքի և առողջության դեմ Անդրանիկ Ասատրյանի կողմից իրականացվող հանրորեն վրանգավոր նրնձգությունից պաշտպանվելու և այն դադարեցնելու նպատակով, գետնից փնտրել և գրել է իր ձեռքից իսկ Անդրանիկ Ասատրյանի ոտքի հարվածով գետնին ընկած դանակը, դրանով մեկ անգամ հարվածել է Անդրանիկ Ասատրյանին, վերջինիս պարճատելով ծանր մարմնական վնասվածք, որպես կյանքին վրանգ սպառնացող, որով թույլ է տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

(...)

Գոռ Ասատրյանը տուժող՝ Անդրանիկ Ասատրյանին [որպես կյանքին վրանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք] է պարճատել նրա հակաիրավական գործողությունները կանխելու նպատակով, պաշտպանվելով իր առողջության նկատմամբ իրականացվող հանկարծակի և ինտենսիվ նրնձգությունից:

Վերը նշվածներն ապացուցում են, որ ամբաստանյալ՝ Գոռ Ասատրյանի նկատմամբ տուժող՝ Անդրանիկ Ասատրյանի կողմից իրականացված նրնձգությունը եղել է հանրորեն վրանգավոր, առկա և իրական: Ամբաստանյալի գործողություններն ուղղված են եղել իր շահերի պաշտպանությանը և նա պաշտպանությանը վնաս է պարճատել ոչ թե երրորդ անձի, այլ իրեն բռունցքով հարվածներ հասցնող և աջ ակնազնդի արյունազեղմամբ, դեմքի աջ կեսի աջից պարանոցի քերծվածքների տեսքով մարմնական վնասվածքներ պարճատող տուժող՝ Անդրանիկ Ասատրյանին (...):» (տես քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 154-155):

8. Վերաքննիչ դատարանն իր՝ 2015 թվականի մարտի 10-ի որոշմամբ արձանագրել է. «Քրեական գործի նյութերով հաստատվել է, որ (...) կենցաղային հարցերի շուրջ, գումարը վերադարձնելու հետ կապված, Ա.Ասարյանի և Գ.Ասարյանի միջև ծագել է վիճարանություն, որի ընթացքում միմյանց հասցեի տվել են հայտոյանքներ և այն **վերաձվել է քաշքշուկի ու ծեծկոտուքի, որը տևել է շուրջ հինգ րոպե:**

(...)

Առաջին արյանի դատարանը, ամբաստանյալ Գ.Ասարյանի հանցանքը վերաորակելիս, չպարճառաբանված կերպով հիմնվել է վերջինիս ցուցմունքի վրա, որ «... Ինքն իրականում դանակը իր հետ տարել է մեխանիկորեն, քանի որ, երբ Անդրանիկն իրեն կանչել է, այդ ժամանակ դանակով միտք կտրելիս է եղել, ինքը մտադրություն չի ունեցել վիճելու, կամ վնասելու Անդրանիկին...»

(...) [Տ]ուժողի գործողություններում ուղնազությունը պայմանավորված է եղել ամբաստանյալի վարքագծով ու պահվածքով, ամբաստանյալ Գ.Ասարյանը՝ դանակը ձեռքին դուրս գալով տուժողին ընդառաջ, գիրակցել է իր գործողության՝ հանրության համար վրանգավոր բնույթը, նախատեսել հանրության համար վրանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, **փոխադարձ կովի ընթացքում** դանակով դիրավորյալ հարվածել է տուժողին՝ չցանկանալով դրա հետևանքները, բայց գիրակցաբար թույլ է տվել դրանք:

(...)

Տուժողի և ամբաստանյալի միջև, վերջինիս վարքագծի պարճատով առկա են եղել անբարյացկամ հարաբերություններ և այդ հողի վրա առաջացած վիճարանության ընթացքում ամբաստանյալը դիրավորությունը հարված է հասցրել տուժողին, ինչի հետևանքով նրա առողջությանը պարճատվել է ծանր վնաս՝ որպես կյանքին վրանգ պատնացող:

Համադրելով գործի փաստական հանգամանքները՝ ակնհայտ է, որ ամբաստանյալ Գ. Ասարյանը **փոխադարձ կովի ընթացքում** դանակով դիրավորյալ է հարվածել Ա. Ասարյանին, որի հետևանքով նրա առողջությանը պարճատվել է ծանր վնաս:

(...)

Վերաքննիչ դատարանը, գործի քննության արդյունքներով հանգում է այն հետևության, որ Առաջին արյանի դատարանը Գ.Ասարյանի արարքի իրավաբանական որակումը փոխել է դրա համար անհրաժեշտ հիմքերի բացակայության պայմաններում և առաջադրված մեղադրանքի սահմաններում անհրաժեշտ է կիրառել ավելի ծանր հանցագործության համար օրենքը՝ վերջինիս կատարած արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասից վերաորակելով նույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 222-224):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 126-127-րդ հոդվածների պահանջները, չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ, 116-րդ հոդվածի 2-րդ մասերում ամրագրված նորմերը, որոնք պետք է կիրառեր և սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի կիրառումը կանոնակարգող Վճարելի դատարանի որոշումները:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ գործի փաստական հանգամանքների, գործով ձեռք բերված ապացույցների և տուժողի ցուցմունքի համադրումից հետևում է, որ Գ.Ասատրյանի նկատմամբ իրականացված ոտնձգությունը եղել է հանկարծակի, հանրորեն վտանգավոր, առկա և իրական, իսկ Գ.Ասատրյանի գործողություններն ուղղված են եղել իր շահերի պաշտպանությանը, և վերջինս տուժողին մարմնական ծանր վնաս է պատճառել նրա հակաիրավական գործողությունները կանխելու նպատակով:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի մարտի 10-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 2-ի դատավճռին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճարելի դատարանը գտնում է, որ փոխադարձ կռիվի ժամանակ անհրաժեշտ պաշտպանության թույլատրելիության հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Գ.Ասատրյանի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի ոչ թե 116-րդ հոդվածի 2-րդ, այլ 112-րդ հոդվածի 1-ին մասով:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *«Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության*

կամ պետության շահերը հանրության համար վրանգավոր ուրնագությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ուրնագություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

Մեջբերված քրեաիրավական նորմը Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել Ա.Հակոբյանի գործով կայացված որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն ունի որոշակի սահմաններ: ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի մեկնաբանման հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ օրենքով ամրագրված են որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում է միայն պաշտպանությունն իրավաչափ և հերևաբար՝ արարքի հանցավորությունը բացառող: Այսպես, անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմաններն են.

ա) ուրնագության հանրային վրանգավորությունը.

բ) ուրնագության առկայությունը.

գ) ուրնագության իրական լինելը»

դ) վրանգ սպառնալը անձի, հասարակության, պետության շահերին.

ե) վնաս հասցնելը միայն ուրնագողին.

զ) պաշտպանության համարժեքությունը ուրնագությանը (տե՛ս Ա.Հակոբյանի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0149/01/09 որոշման 27-րդ կետը):

14. Վերոգրյալի համատեքստում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ փոխադարձ կովի ժամանակ անհրաժեշտ պաշտպանության թույլատրելիության հարցին:

Այսպես՝ փոխադարձ կովին անձանց ֆիզիկական ընդհարումն է, որը կարող է սկսվել կողմերի՝ միմյանց միաժամանակ վնաս հասցնելով, ինչպես նաև այն դեպքում, երբ կովվը սկսվում է կողմերից մեկի նախաձեռնությամբ, սակայն մյուս կողմն ընդունում է մարտահրավերը և ընդգրկվում կովի մեջ: Փոխադարձ կովի ժամանակ երկու կողմն էլ հանդես են գալիս ոտնձգողի դերում, դրսևորում ոչ իրավաչափ վարքագիծ, ատելության, վրեժի, զայրույթի կամ այլ շարժառիթներով փոխադարձ հարվածներ են հասցնում միմյանց՝ նպատակ ունենալով մեկը մյուսին վնաս պատճառելու:

Վերոնշյալի հիման վրա Վճարելի դատարանը փաստում է, որ փոխադարձ կովի ժամանակ, որպես կանոն, անհրաժեշտ պաշտպանության վիճակն անհնար է, քանի որ կովողներից յուրաքանչյուրը, հանդես գալով ոտնձգողի դերում, չի ղեկավարվում պաշտպանությանը բնորոշ շարժառիթներով և նպատակներով: Այսինքն՝ թեև կովի մասնակից երկու կողմերի դեպքում էլ առերևույթ առկա են անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանները, սակայն դրանք չեզոքանում են փոխադարձ կովի իրողությամբ: Հետևաբար այդ պարագայում նրանց արարքը ենթակա է որակման ըստ փաստացի վրա հասած հետևանքի:

15. Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փոխադարձ կովի ընթացքում կողմերի նպատակները և դրդապատճառները կարող են փոխվել, ինչը կարող է հանգեցնել նաև նրանց վարքագծի փոփոխմանը և անհրաժեշտ պաշտպանության վիճակ առաջացնել: Մասնավորապես՝ որպես այդպիսին կարող են գնահատվել այն իրավիճակները, երբ՝

ա) կովի ընթացքում կողմերից մեկը դադարեցնում է կռիվը, իսկ մյուսը շարունակում է հարվածներ հասցնել: Այս պայմաններում փոխադարձ կռիվը, ըստ էության, ավարտված է և հարվածներ հասցնող ու կռիվը շարունակող կողմն արդեն հանդես է գալիս ոտնձգողի դերում, իսկ նրա գործողությունները դիտարկվում են ոչ իրավաչափ, ինչն էլ հիմք է հանդիսանում կռիվը դադարեցրած կողմի համար օգտվելու անհրաժեշտ պաշտպանության իրավունքից: Այլ կերպ՝ այն դեպքում, երբ կռիվը դադարեցրած կողմը սկսում է հանրորեն վտանգավոր ոտնձգությունից պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը, ապա նրա գործողությունները պետք է գնահատել որպես անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված,

բ) կովի ընթացքում կողմերից մեկի հնարավորությունները շեշտակի ուժեղանում են (օրինակ՝ կողմերից մեկը զինվում է, կամ նրա կողմից սկսում են կռիվ այլ անձինք)։ այս դեպքում մյուս կողմն անհրաժեշտ պաշտպանության իրավունք է ստանում,

գ) կռիվը դադարեցնելու, ծանր հետևանքները կանխելու նպատակով կռիվն չմասնակցող երրորդ անձինք վնաս են հասցնում կռիվող կողմերից մեկին կամ երկուսին՝ ստանալով անհրաժեշտ պաշտպանության իրավունք:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է. *«Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտարկորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վրանգավորությանը:*

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հարկապես նախարեսված է սույն օրենսգրքի հարուկ մասով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելու համար:

17. Ա.Հակոբյանի գործով որոշման շրջանակներում անդրադառնալով անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. *«Անհրաժեշտ պաշտպանության համարժեքության գնահատման և որպես արդյունք՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման առկայության կամ բացակայության որոշման*

համար անհրաժեշտ է գնահատել նյութագրության վրանգավորության սարհանի և պաշտպանության միջև համապատասխանությունը:

Օրենքը չի պահանջում, որ պաշտպանվողը կիրառի նյութագրի կողմից կիրառվող միջոցներին հավասարազոր միջոցներ: Պաշտպանվողը կարող է գործադրել նաև առավել արդյունավետ միջոցներ:

Որնաձգության և պաշտպանության միջոցների միջև համամասնության խնդիրը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝
ա) պաշտպանվող բարիքի արժեքավորությունը և այն վնասի չափը, որ կարող էր հասցվել դրան՝

բ) նյութագրության ինտենսիվությունը ու հանկարծակիությունը՝

գ) պաշտպանվողի և նյութագրի ֆիզիկական հնարավորությունները (սեռը, տարիքը, առողջական վիճակը, ֆիզիկական ուժը և այլն)՝

դ) նյութագրողների և պաշտպանվողների քանակը՝

ե) նյութագրության իրադրությունը, տեղը, ժամանակը և այլն» (տե՛ս Ա.Հակոբյանի գործով Վճարելի դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0149/01/09 որոշման 28-րդ կետը):

Ջարգացնելով Ա.Հակոբյանի գործով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Ա.Թորոսյանի գործով որոշման շրջանակներում Վճարելի դատարանը փաստել է. «(...) [Ա]նհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումը բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներով:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման օբյեկտիվ հատկանիշների կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ նյութագրության բնույթն ու վրանգավորությունը որոշվում են նյութագրության օբյեկտի արժեքավորությամբ, նյութագրության ինտենսիվությամբ, պաշտպանվողի և նյութագրի ֆիզիկական հնարավորություններով, նրանց քանակով, նյութագրության իրադրությամբ և այլն: Ուստի, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումն առկա է այն դեպքում, երբ առկա է ակնհայտ (խիստ, էական) անհամապատասխանություն նյութագրությամբ սպառնացող և պաշտպանվողի կողմից պատճառվող վնասների միջև:

(...) Այլ կերպ՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումն առկա է այն դեպքում, երբ պաշտպանվողը կիրառել է պաշտպանության այնպիսի միջոցներ և մեթոդներ, որոնց կիրառումն ակնհայտ կերպով չէր բխում ո՛չ նյութագրության բնույթից և վրանգավորությունից, ո՛չ էլ իրադրությունից:

(...)

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման սուբյեկտիվ հատկանիշների կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումը բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով (տե՛ս Ա.Թորոսյանի գործով Վճարելի

դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0118/01/11 որոշման 15-16-րդ կետերը):

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ նախաքննության մարմնի կողմից ամբաստանյալ Գ.Ասատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ կենցաղային հարցերի շուրջ Ա.Ասատրյանի և Գ.Ասատրյանի միջև ծագած վիճաբանության ժամանակ Ա.Ասատրյանը գետնին վայր է գցել Գ.Ասատրյանին, ծնկել նրա վրա, բռունցքներով հարվածներ հասցրել վերջինիս դեմքին և պատճառել ֆիզիկական ցավ, որի ժամանակ Գ.Ասատրյանը խոհանոցային դանակով դիտավորյալ հարվածել է Ա.Ասատրյանի կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսին և նրա առողջությանը պատճառել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, Գ.Ասատրյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասից վերադրակելով՝ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով, պատճառաբանել է, որ Գ.Ասատրյանը, մեջքի վրա ընկած լինելով գետնին և չկարողանալով ազատվել իրենից ֆիզիկապես ուժեղ և հաղթանդամ Ա.Ասատրյանից, ով Գ.Ասատրյանի վրա ծնկի եկած վիճակում, ձախ ձեռքով նրա օձիքից բռնած՝ աջ ձեռքի բռունցքով հարվածներ է հասցրել վերջինիս դեմքին (որից նա ստացել է աջ ակնազնդի արյունազեղման, դեմքի աջ կեսի աջից պարանոցի քերծվածքներ), ինքնապաշտպանության, իր կյանքի և առողջության դեմ Ա.Ասատրյանի կողմից իրականացվող հանրորեն վտանգավոր ոտնձգությունից պաշտպանվելու և այն դադարեցնելու նպատակով գետնից փնտրել և գտել է իր ձեռքից իսկ Ա.Ասատրյանի ոտքի հարվածով գետնին ընկած դանակը, դրանով մեկ անգամ հարվածել Ա.Ասատրյանին՝ վերջինիս պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք, որով թույլ է տվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ ամբաստանյալ Գ.Ասատրյանը տուժող Ա.Ասատրյանին ծանր մարմնական վնասվածք է պատճառել նրա հակաիրավական գործողությունները կանխելու նպատակով՝ պաշտպանվելով իր առողջության նկատմամբ իրականացվող հանկարծակի և ինտենսիվ ոտնձգությունից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Գ.Ասատրյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, արձանագրել է, որ տուժողի գործողություններում ոտնձգությունը պայմանավորված է եղել ամբաստանյալի վարքագծով ու պահվածքով, ամբաստանյալ Գ.Ասատրյանը, դանակը ձեռքին դուրս գալով տուժողին ընդառաջ, գիտակցել է իր գործողության՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել հանրության

համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, **փոխադարձ կովի ընթացքում** դանակով դիտավորյալ հարվածել է տուժողին՝ չցանկանալով դրա հետևանքները, բայց գիտակցաբար թույլ տվել դրանք: Համադրելով գործի փաստական հանգամանքները՝ ակնհայտ է, որ ամբաստանյալ Գ.Ասատրյանը **փոխադարձ կովի ընթացքում** դանակով դիտավորյալ հարվածել է Ա.Ասատրյանին, որի հետևանքով նրա առողջությանը պատճառվել է ծանր վնաս: Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ Առաջին առյանի դատարանը ամբաստանյալ Գ.Ասատրյանի հանցանքը վերաորակելիս չպատճառաբանված կերպով հիմնվել է վերջինիս հետևյալ ցուցմունքի վրա. «... Ինքն իրականում դանակը իր հետ տարել է մեխանիկորեն, քանի որ, երբ Անդրանիկն իրեն կանչել է, այդ ժամանակ դանակով միզ կտրելիս է եղել, ինքը մտադրություն չի ունեցել վիճելու, կամ վնասելու Անդրանիկին...» (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18.1. Սույն գործի փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ՝

ա) ամբաստանյալ Գ.Ասատրյանը դանակը ձեռքին դուրս է եկել տուժող Ա.Ասատրյանին ընդառաջ, սակայն չի փորձել նրան դանակով հարվածել կամ չի սպառնացել, որ կհարվածի, դա տեղի չի ունեցել նաև այն ժամանակ, երբ տուժողը, զայրանալով, որ ամբաստանյալի ձեռքին առկա է դանակ, հայհոյել է նրան, կողմերը քաշքշել ու փոխադարձ վիրավորանքներ են հասցրել միմյանց (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը),

բ) Ա.Ասատրյանի և Գ.Ասատրյանի միջև ծագած վիճաբանության ընթացքում կողմերը միմյանց հասցեին տվել են հայհոյանքներ, այն վերածվել է **քաշքշուկի ու ծեծկոտուքի**, ինչը տևել է շուրջ հինգ րոպե: Վիճաբանության ժամանակ տուժողը սկզբում աջ ոտքով հարվածել է ամբաստանյալի աջ ձեռքին, որից դանակը ընկել է գետնին՝ 1 մետր հեռավորության վրա, իսկ այնուհետև ամբաստանյալի ոտքերին տուժողի ոտքով հարվածից հետո ամբաստանյալն է ընկել գետնին: Գ.Ասատրյանի ընկնելուց հետո տուժողը ծնկել է նրա վրա, ձախ ձեռքով բռնել նրա օձիքից, իսկ աջ ձեռքի բռունցքով սկսել հարվածներ հասցնել ամբաստանյալի դեմքին (տե՛ս սույն որոշման 6-րդ, 8-րդ կետերը),

գ) ամբաստանյալը **փորձել է դիմադրել, սակայն չի կարողացել**, դիմել է Ա.Ասատրյանին, որպեսզի իրեն **բաց թողնի և հարվածներ չհասցնի**, սակայն տուժողը **շարունակել է բռունցքով** հարվածներ հասցնել ամբաստանյալի դեմքին, ինչը **չի դադարեցրել** նաև Գ.Ասատրյանի կնոջ և երեխաների՝ իրենց մոտենալու ժամանակ, երբ Գ.Ասատրյանի կինը խնդրել և պահանջել է դադարեցնել բռունցքով հարվածներ հասցնել իր ամուսնուն, իսկ երեխաներն այդ ամենը տեսնելով՝ լաց են եղել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը),

դ) այդ ժամանակ Գ.Ասատրյանն իր աջ ձեռքը ազատել է, շոշափելով փորձել է գետնից ինչ-որ մի իր վերցնել՝ Ա.Ասատրյանին վնասելու և նրանից

ազատվելու համար, նրա ձեռքն է ընկել գետնին ընկած դանակը, ինչից հետո **զգուշացրել է Ա.Ասատրյանին, որ իրեն բաց թողնի, այլապես կվնասի նրան, սակայն Ա.Ասատրյանը բաց չի թողել և շարունակել է բռունցքով հարվածներ հասցնել:** Արդյունքում Գ.Ասատրյանը իրենց տան խոհանոցային դանակով մեկ անգամ հարվածել է Ա.Ասատրյանի կրծքավանդակի ձախ կեսի կողմնային մակերեսին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

19. Սույն որոշման 18-18.1-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-17-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ ամբաստանյալ Գ.Ասատրյանը տուժող Ա.Ասատրյանին դանակով դիտավորյալ հարվածել է փոխադարձ կռվի ընթացքում, անհիմն է և չի բխում սույն գործի փաստական հանգամանքներից: Վճռաբեկ դատարանի վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ ամբաստանյալ Գ.Ասատրյանի կողմից տուժողին դանակով հարվածելու պահին նրանց միջև ծագած փոխադարձ կռիվն արդեն իսկ դադարել էր, ինչի մասին են անմիջականորեն վկայում ստորադաս դատարանների կողմից հաստատված այն հանգամանքները, որ ամբաստանյալ Գ.Ասատրյանը, մեջքի վրա ընկած լինելով գետնին և չկարողանալով դիմադրություն ցույց տալ իր վրա ծնկի եկած և իրեն հարվածող տուժողին, թե՛ մինչ դանակն իր ձեռքում հայտնվելը, թե՛ դանակով հարվածելուց անմիջապես առաջ դիմել է վերջինիս, որ իրեն **բաց թողնի և հարվածներ չհասցնի՝** երկրորդ դեպքում տուժողին նախազգուշացնելով նաև, որ հակառակ պարագայում վերջինիս կվնասի: Սակայն երկու դեպքերում էլ տուժողը **շարունակել է բռունցքով հարվածներ հասցնել ամբաստանյալին** (տե՛ս սույն որոշման 6-8-րդ կետերը):

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ *Առաջին արյանի դարարանը ամբաստանյալ Գ.Ասատրյանի հանցանքը վերաորակելիս չպարձառարանված կերպով հիմնվել է վերջինիս այն ցուցմունքի վրա, որ «... Ինքն իրականում դանակը իր հետք փարել է մեխանիկորեն, քանի որ, երբ Անդրանիկն իրեն կանչել է, այդ ժամանակ դանակով միրգ կորելիս է եղել, ինքը մտադրություն չի ունեցել վիճելու, կամ վնասելու Անդրանիկին...»* (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ դատողությունն անելիս Վերաքննիչ դատարանն այլ փաստարկների միջոցով, ըստ էության, չի հաստատել մատնանշված տվյալների անարժանահավատ լինելը:

Ինչ վերաբերում է Գ.Ասատրյանի ձեռքին դանակ տեսնելու հետևանքով վերջինիս կողմից հարձակում գործելու տուժողի հնարավոր ընկալմանը, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել,

որ ամբաստանյալի ձեռքին եղած դանակը տուժողի կողմից հարվածով վայր գցելու պահից ողջամտորեն չեզոքացել էր այդպիսի հարձակման սպառնալիքը:

19.1. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ ծագած փոխադարձ կոիվը դադարելուց հետո, երբ միայն տուժողն է հանդես եկել ոսնձգողի դերում և միայն նրա կողմից է այդ պահին դրսևորվել ոչ իրավաչափ վարքագիծ, Գ.Ասատրյանը, դանակով վնաս պատճառելով ոսնձգող տուժողին, իրականացրել է իր իրավունքների և ազատությունների իրավաչափ պաշտպանություն, սակայն դուրս է եկել անհրաժեշտ պաշտպանության սահմաններից՝ թույլ տալով անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում: Այլ կերպ՝ հիմնավոր է Առաջին ատյանի դատարանի եզրահանգումն առ այն, որ Գ.Ասատրյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

20. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Գ.Ասատրյանի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի ոչ թե 116-րդ հոդվածի 2-րդ, այլ 112-րդ հոդվածի 1-ին մասով, հիմնավոր չեն:

Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ, 116-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Նշված խախտումներն իրենց բնույթով էական են և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 419-րդ հոդվածների համաձայն, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ Վճարելի դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Գ.Ասատրյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասից վերաորակելով նույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով և այդ հոդվածով նրան մեղավոր ճանաչելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 2-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի

Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գոռ Հակոբի Ասատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի մարտի 10-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

58.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0067/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ մասնակցությամբ պաշտպան	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Մայիս Լևոնի Սաֆարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2015 թվականի ապրիլի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 16811013 քրեական գործը՝ անհայտ անձի կողմից

Հայկ Վասիլյանի առողջությանը դիտավորությանը ծանր վնաս պատճառելու դեպքի առթիվ:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ Մ.Սաֆարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ Մ.Սաֆարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2014 թվականի մայիսի 12-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին աստիճանի դատարան):

2. Առաջին աստիճանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 29-ին դատավճռով Մ.Սաֆարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը վերադրակվել է, և նա մեղավոր է ճանաչվել նույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով՝ դատապարտվելով ազատազրկման՝ 1 տարի 6 ամիս ժամկետով:

3. Պաշտպանի և դատախազի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2015 թվականի ապրիլի 1-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին աստիճանի դատարանի՝ դեկտեմբերի 29-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 1-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճարելի դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Մ.Սաֆարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա 2013 թվականի նոյեմբերի 21-ին ժամը 14:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Աթենքի 6/4 հասցեում գործվող փորձարկական խանութի դիմաց՝ թիվ 4 երթուղային փարսու կայանաարեղիում, իր կողմից վարվող «Մերսեդես» մակնիշի 35 PS 667 պերհամարանիշի ավտոմեքենան կայանելու պարճառով վիճարանել է նշված համարի երթուղային փարսու ծառայության երթակարգավորիչ Հայկ Արքրակի Վասիլյանի հետ, որի ընթացքում դանակով մեկ անգամ

դիրավորությամբ հարվածել է Հայկ Արտակի Վասիլյանի կրծքավանդակի ձախ կեսին և նրա առողջությանը պարճառել ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող, ծակած-կտրած թափանցող վերքի՝ ձախ թոքի վնասումով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 307-312):

6. Ամբաստանյալ Մայիս Սաֆարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ դեպքի օրն իր և տուժող Հայկ Վասիլյանի միջև ավտոմեքենա կայանելու հարցի շուրջ վիճաբանություն և քաշքշուկ է տեղի ունեցել, որից հետո Հայկն անսպասելի իրեն հետ է կանչել՝ ասելով «լավ չես հասկանում, հետ արի»: Այդ ժամանակ նա գնացել է իր ավտոմեքենայի մոտ, բացել վարորդի կողքի դուռը, ավտոմեքենայի միջից ինչ-որ բան դրել մեջքի կողմը և արագ քայլելով վրա է տվել իրեն՝ հարձակվելով իր վրա՝ հրելով իրեն հետ է տարել և ասել «արա ինչ ես ասում»: Ինքը նրան իրենից հեռացնելու համար ձեռքերով հետ է հրել՝ ասելով. «Ինչ ես մտել բերանս, ուզում ես խոսենք, համբերի երեկոյան կգամ կխոսենք»: Ինքը տեսել է, որ Հայկը մի երկու քայլ հետ գնալիս մեջքի կողմից ինչ-որ իր է հանել՝ **մետաղյա զսպանակով մահակ**, ու դրանով աջ ձեռքով հարվածել է գլխին, սակայն ինքը ձախ ձեռքով պահել է, և հարվածը կպել է ձեռքին: Դրանից անմիջապես հետո հարվածել է 2 անգամ: Ինքը նորից ձախ ձեռքով պահել է այդ հարվածները՝ միաժամանակ մի փոքր հետ քաշվելով, որովհետև նորից է ուզել հարվածել, տեսնելով վտանգը և հասկանալով, որ այդ հարվածները կարող են իր կյանքում լինել ճակատագրական, փորձելով պաշտպանվել այդ հարվածներից՝ աջ ձեռքով գրպանից հանել է եղունգկտրիչ դանակը, բույթ մատով բացել և հարվածել է, իսկ թե կպել է նրան, թե՛ ոչ, ինքը այդ ժամանակ չի գգացել: Հետո է իմացել, որ դանակով իր կողմից շարժում կատարելու պատճառով Հայկը վնասվածք է ստացել: Դանակով իր կողմից շարժում կատարելուց անմիջապես հետո այնտեղ գտնվող Արմեն Պետրոսյանը Հայկին թիկունքի կողմից երկու ձեռքով գրկել ու հետ է քաշել՝ տանելով տնտեսական խանութ: Մինչ գրկելը Հայկը նորից է ուզել խփել այդ մահակով, դրա համար Արմեն Պետրոսյանը նրան գրկել ու տարել է խանութ (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 87-104):

Ամբաստանյալ Մայիս Սաֆարյանի կողմից գործի վարույթի ընթացքում տուժող Հայկ Վասիլյանի կողմից գործադրված «մահակը» նկարագրվել է տարբերվող բնորոշումներով: Այսպես 2013 թվականի նոյեմբերի 22-ի հարցաքննությամբ Մ.Սաֆարյանը հայտնել է «արծաթագույն, փայլուն մետաղե զսպանակի», 2014 թվականի ապրիլի 26-ի առերեսմամբ՝ «ինչ-որ սև բանի», իսկ նույն թվականի ապրիլի 30-ի հարցաքննությամբ՝ «զսպանակե մահակի» մասին (տե՛ս հատոր 1-ին, թերթեր 58-61, 286-288, 299-300):

6.1. Տուժող Հայկ Վասիլյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը երկար տարիներ աշխատել է որպես

երթակարգավորող: Իր պարտականությունների մեջ է մտել հսկել, որպեսզի երթուղային տաքսիներն ունենան կայանելու ազատ տարածք, որպեսզի չթույլատրված վայրում կայանելու համար չտուգանվեն, ինչպես նաև ուղևորվելու ժամային միջակայքը պահպանելը: Այն վայրում, որտեղ ավտոմեքենան կայանել է Մայիսը, ընդհանրապես ավտոմեքենաներ չեն կայանում, կայանելու դեպքում, եթե ինքը նկատում է, մոտենում զգուշացնում է, որ հասնեն ավտոմեքենան: Դեպքի օրը չի հիշում: Մեքենայի կայանման համար վիճաբանություն է եղել: Այդ վայրում կայանելիս են եղել իր գազելները, ինչ-որ մեկը կայանել է «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա: Ինքը զգուշացրել է, որ չկայանի այդ վայրում: Սկսվել է քաշքշուկ: Իրեն դանակով հարվածել է իր հետ քաշքշուկի մեջ գտնված անձը: Դանակ տեսել է, իսկ հարվածի պահը չի տեսել: Իրենց քաշքշուկը չի հիշում որքան ժամանակ է տևել: Ծակոց է զգացել, իսկ դեպքից մի քանի րոպե հետո տեսել է, որ ցավացող մասից արյուն է գալիս: Գնացել է ավտոկայան իրենց վարորդներից Արմենի հետ: Նույն օրը գնացել է հիվանդանոց: Ամբաստանյալը չի եղել իրեն դանակով մարմնական վնասվածք հասցրած անձը: Եթե իր հետ վիճաբանողին տեսնի կճանաչի: Մեքենան և իրեն հարվածողին առաջին անգամ է տեսել: Արմեն Պետրոսյանին հանդիպել է խանութ մտնելիս: Քաշքշուկի պահին իրեն ծանոթ մարդիկ չեն եղել: Ինքը հարվածներ չի հասցրել վիճաբանության ժամանակ (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 87-104):

6.2. Վկա Արմեն Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ճանաչում է ամբաստանյալին որպես հաճախորդ, երբ ինքը աշխատելիս է եղել խանութում: Դեպքի օրը ինքը իր ավտոմեքենան կայանել է խանութի դիմաց, եղել է ավտոմեքենայի մեջ: Եղել է իր ավտոմեքենայի մեջ, հեռախոսով խաղ է խաղացել, ինտերնետ է մտել: Լսել է բարձր ձայներ և երբ դուրս է եկել ավտոմեքենայից, տեսել է իրարանցում: Մոտեցել, տեսել է, որ Մայիս Սաֆարյանն ու Հայկ Վասիլյանը ագրեսիվ են իրար նկատմամբ: Տարածքում հավաքված են եղել անցորդներ, որոնցից ոչ ոքի չի ճանաչել: Հարված չի նկատել նրանց վիճաբանության ընթացքում: Ինքը, ինչպես Հայկ Վասիլյանի, այնպես էլ Մայիս Սաֆարյանի ձեռքին ոչ մի իր չի նկատել: Այնուհետև բաժանել է նրանց և Հայկ Վասիլյանին առանձնացրել՝ տանելով խանութի մուտքի մոտ: Հայկի մոտ խուճապ է եղել: Նրա հագին եղել է սպորտային հագուստ, որի թևատակի հատվածում ինքը նկատել է արյունահոսություն (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 87-104):

6.3 Վկա Արման Բաղդասարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ չի ճանաչում ամբաստանյալ Մայիս Սաֆարյանին: Դեպքի օրը՝ ժամը 18-ի սահմաններում, զանգահարել է Հայկին, ով իրեն հայտնել է, որ վիճաբանություն է տեղի ունեցել (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 87-104):

6.4. Վկա Կարեն Բլբուլյանը ցուցմունք է տվել այն մասին, որ աշխատում է որպես խանութի տնօրեն: Դեպքի մասին իմացել է ոստիկանության բաժնում, իսկ դեպքի օրը խանութում չի եղել: Իրեն բաժին են հրավիրել, քանի որ խանութի դիմաց վիճաբանություն է եղել (տես քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 87-104):

6.5. Դատաբժշկական փորձագետի՝ 2013 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 3924 եզրակացության համաձայն՝ «(...) Մ.Սաֆարյանի մոտ, փորձաքննության պահին, մարմնական վնասվածքների օբյեկտիվ հարկանիշներ չեն հայտնաբերվել» (տես քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 163-164):

6.6. Վկա Սամվել Հակոբյանը 2014 թվականի սեպտեմբերի 9-ի հարցաքննության ժամանակ տրված ցուցմունքում հայտնել է, որ «(...) **ճանաչում եմ Մայիս Լևոնի Սաֆարյանի հորը՝ Լևոնին, նրա հետ ծանոթացել եմ ընտանիքային ժամանակ՝ մոտ երկու տարի առաջ, և գիտեմ, որ մեր Կիլիկիայի թաղի բնակիչ է, ու իմանալով, որ Լևոնի որդին՝ Մայիսը, 2013 թվականի նոյեմբեր ամսվա կեսերին (...) վիճաբանության ժամանակ դանակահարել է ինչ-որ մեկին, (...) գրելով է կալանքի տակ, ես 2014 թվականի հունվար ամսին պատահական մեր թաղում՝ կանգառի մոտ, հանդիպեցի Լյովային և հարցուփորձ արեցի որդուց ու նրան պատմեցի, որ իր որդու կովի ժամանակ ես այնտեղ եմ եղել և սասցի, որ «նախկինում դեպքի օրը չեմ ճանաչել որդուդ, միայն հեռուստացույցով «02» հաղորդում րեսնելուց հետո որդիս՝ Վահրամը, սասց, որ քո որդին է»:** Դրանից հետո Լյովան ինձ հարցրեց՝ **«եթե կարիք լինի, ժամանակ կունենան գնասուարկանություն և պատմես դեպքի եղելությունը»**, ես համաձայնվեցի, քանի որ արդարության կողմնակից եմ: Դրանից հետո, մրաժելով, որ ինձ ուարկանություն կհրավիրեն որպես վկա ցուցմունք տալու, ես տանք փորձեցի ավելի մանրամասն հիշեմ դեպքը և ինձ մոտ կատարեմ գրառումներ, քանի որ ես վարատող չեմ, ունեմ հիշողության հետ կապված ինդիքներ, րեսածս և լսածս շուր եմ մոռանում, այդ իսկ պարճառով ինդրում եմ ինձ թույլատրել, որ օգրվեմ իմ գրառումներից, որպեսզի կարողանամ Լյովայի որդու վիճաբանության հետ կապված դեպքն ավելի մանրամասն վերհիշեմ և հայտնեմ ձեզ: Եշված գրառումները ես կատարել եմ մեր տանը, գրված է իմ ձեռքով և այդ ժամանակ ինձ մոտ տան անդամներից ոչ ոք չի եղել և չեն օգնել: Առաջադրված հաջորդ քանավոր հարցին, օգրվելով իմ գրառումներից, պատասխանում եմ, որ 2013 թվականի նոյեմբեր ամսվա կեսերին [Հրազդան տոնավաճառի դիմաց գրելով կանգառում] ինձանից աջ կողմում լսեցի [ձայներ] դեպի շինանյութի խանութի կողմը և, նայելով այդ կողմ, րեսս, որ երկու երիտասարդ տղաներ միմյանց հետ խոսում էին բարձր ձայնով, որը նման էր վեճի: Ես կանգառից քայլեցի դեպի նրանց կողմ՝ հասկանալու համար, թե ինչ է եղել և անհրաժեշտության դեպքում միջամրելի և չթողնելի, որ կովեն: Այդ ժամանակ նրանք միմյանց հետ լեզվակոխի էին անում ու (...) հայիոյելով բարձր տոնով խոսում էին

(...): [Այն փրկան, որ պահանջում էր, որ ավերուներենսան հանի, հետ շրջվեց դեպի իմ կողմը և քայլեց [դեպի] փողոցում կայանված (...) ավերուներենսան (...), մեքենայի միջից վերցրեց ինչ-որ իր, որը փայլուն ձող [էր], (...) ձողը ձեռքին երկրասարդը այդ ձողով հարվածեց մյուս երկրասարդին և կպավ, թե չկպավ, ես չբռնա (...), ձողով առաջին հարվածից հետո անմիջապես ձողով երկրորդ անգամ հարվածեց (...): Չողը եղել է մուգ գույնի, փայլուն, մոտ 30 սմ երկարության (...), պինդ նյութից, թե մեղադրից» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 252-256):

6.7. Վկա Վահրամ Հակոբյանի (վկա Սամվել Հակոբյանի որդու)՝ 2014 թվականի սեպտեմբերի 16-ի հարցաքննության արձանագրության համաձայն՝ «(...) [Ի պարսպան վարույթն իրականացնող մարմնի՝ Սամվել Հակոբյանի հետ «02» հաղորդաշարը դիտելու, Մ.Սաֆարյանին ճանաչելու և այդ մասին Սամվել Հակոբյանին հայտնելու վերաբերյալ հարցի] նման դեպք չի եղել, որ հորս հետ հեռուստացույց նայելիս հայրս «02» հաղորդաշարի ժամանակ հայտնած լինի, որ ինքը ինչ-որ վիճարանության ականատես է եղել և ես էլ իրեն հայտնած լինեմ, դանակահարող անձը մեր թաղի բնակիչ Լևոնի որդի Մայիսն է: (...) Բացի այդ, ցանկանում եմ նշել, որ մոտ 7 փարի առաջ [հայրս] ինտույտ է սրացել, որից հետո հորս մոտ առաջացել են հիշողության և րեանողության հետ կապված խնդիրներ: Բացի այդ, նկարվում է նաև հոգեկան անհավասարակշռում, հորս մոտ նկարվում է նաև ուժեղ (ֆանտազիա) երևակայություն, և հաճախակի փարբեր հորինվածքներ է արտահայտում, և խնդրում եմ հորս կողմից փրված ցուցմունքը հիմք մի ընդունեք, քանի որ ձեզ հստակ ոչինչ ինքը չի կարող հայտնել իր հիվանդության պարճատով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 260-261):

6.8. Բժիշկ-նյարդաբան Վ.Մ.Պապիկյանի կողմից կնքված և ստորագրված՝ «Էտապային էպիկրիզ»-ի համաձայն՝ վկա Սամվել Հակոբյանի մոտ ախտորոշվել է «Կայուն մասցորդային երևույթներ կրած գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարումից ձախ հետին ուղեղային զարկերակի ավազանում, աջակողմ հոմոնիմ հեմիանոպսիա, սաթենոդեպրեսիվ սինդրոմ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 264):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) Քննվող քրեական գործով, ինչպես նախաքննությանը, այնպես էլ դատարանում մեղադրանքի մարմինների կողմից ի հայր չեն բերվել գործի այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք կարող էին վկայել այն մասին, որ ամբաստանյալ Մայիս Լևոնի Սաֆարյանն ունեցել է ուղղակի դիտավորություն փուժող Հայկ Վասիլյանի առողջությանը ծանր վնաս պարճատելու:

(...) Նախաքննության ժամանակ հարցաքննված, սակայն չդատարկված վկա Սամվել Հակոբյանն իր ցուցմունքով նշել է, որ րեանել է, թե ինչպես է փուժող Հայկ Վասիլյանը քաշքշուկի ժամանակ մոտենում

իր ավերումներնային, իսկ հետո նրա ձեռքին նկատել է ինչ-որ երկար առարկա՝ ձող, որով էլ հարվածել էլ իր հետ վիճաբանողին:

Դեպքին ակնատես այլ անձինք նախաքննությամբ չեն հայտնաբերվել, իսկ ամբաստանյալի կողմից բուժօգնություն հիմնավորությամբ ծանր մարմնական վնասվածք պարճատելը հիմնավորող ապացույցներ չկան:

(...) [Բ]նչպես նախաքննությամբ, այնպես էլ դատաքննությամբ ապացուցվել է, որ.

1. Կովի նախահարձակը եղել է բուժօգնություն:

2. Մայիս Մաֆարյանը բուժօգնություն եղունգկտրիչի դանակով հարվածել է նրա կողմից հակաօրինական արարք կատարելու ընթացքում, երբ բուժօգնություն **ձեռքի զսպանակե մահակով հարվածել** ու ֆիզիկական ցավ է պարճատել ամբաստանյալին:

3. Մայիս Մաֆարյանը բուժօգնություն մարմնական վնասվածք է պարճատել նրա հակաիրավական գործողությունները կանխելու նպատակով պաշտպանվելով իր առողջության նկատմամբ իրականացվող ինտենսիվ ունիվերսալ ծնուցումից:

Վերը նշվածներն ապացուցում են, որ ամբաստանյալի նկատմամբ իրականացված ունիվերսալ ծնուցումը եղել է հանրորեն վրանգավոր, առկա և իրական: Ամբաստանյալի գործողություններն ուղղված են եղել իր շահերի պաշտպանությանը, և նա պաշտպանությամբ վնաս է պարճատել ոչ թե երրորդ անձի, այլ իրեն ծեծի ենթարկող և մարմնական վնասվածք պարճատող բուժօգնություն:

Միաժամանակ (...) դատարանը գտնում է, որ բուժօգնության կողմից զսպանակե մահակով ամբաստանյալին հարվածելու պարագայում ամբաստանյալի կողմից եղունգկտրիչի դանակով բուժօգնություն ծանր մարմնական վնասվածք պարճատելը չի համապատասխանում բուժօգնության ունիվերսալ ծնուցումից և վրանգավորությանը, [որպիսի] հանգամանքը ամբաստանյալի համար, մինչև բուժօգնություն հարվածելը ակնհայտ է եղել, քանի որ բուժօգնության կողմից ձեռքի մահակը որևէ այլ մարմնական վնասվածք պարճատելու համար հարմարեցված առարկա չի օգտագործվել:

Այսպիսով, [Բ]ատարանը հիմնավորված է համարում, որ ամբաստանյալ Մայիս Մաֆարյանն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ բուժօգնության առողջությանը պարճատել է ծանր վնաս» (տես քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 87-104):

8. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 1-ի որոշման համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը (...) հանգում է այն հետևության, որ [Առաջին արյանի դատարան] ամբաստանյալ Մայիս Մաֆարյանին վերագրվող հանցավոր արարքի որակման առումով հիմնավոր հետևության հանգեցրելու համար անհրաժեշտ և բավարար վերլուծության և գնահատման է ենթարկել գործի լուծման համար անհրաժեշտ բացահայտման ենթակա հանգամանքները, որի արդյունքում ամբաստանյալ Մայիս Մաֆարյանի

հանցավոր արարքին փոխել է ճիշտ քրեաիրավական գնահատական, և կիրառվել է քրեական այն օրենքը, որը ենթակա է եղել կիրառման:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործի նյութերում առկա են փաստական փվյալներ, որոնց հիման վրա հնարավոր է ողջամիտ հետևության հանգելու քրեական գործով ձեռք բերված ապացույցների բավարարության և արժանահավատության վերաբերյալ:

Մասնավորապես՝ համաձայն սրացիոնար դատահոգեբուժական փորձաքննության թիվ 21 եզրակացության՝ ամբաստանյալ Մայիս Սաֆարյանը զորակոչային փարիքում երկու անգամ հետագործվել է Նուրարաշենի հոգեբուժական կլինիկայում, առաջին անգամ՝ 22.10.2007թ-29.10.2007թ., դուրս է գրվել «Օրգանական ծագման էմոցիոնալ անկայուն խանգարում» /թիվ 2063/36152 քաղվածքից/: Երկրորդ անգամ հետագործվել է 03.11.2010թ-08.11.2010թ., «Օրգանական ծագման էմոցիոնալ անկայունություն» /թիվ 2277/43820 քաղվածքից և ամբուլատոր քարտից/: Ազատվել է զինծառայությունից՝ համաձայն ՀՀ ՊՆ 175-10 հոդ. 2 «բ» կետի, Ավանի հոգեբուժական կլինիկայում հաշվառված է վերը նշված ախտորոշմամբ 04.12.2004 թվականից:

Թյրեական գործի թե՛ նախաքննության և թե՛ դատաքննության ընթացքում ամբաստանյալ Մայիս Սաֆարյանը նույնարվանդակ ցուցմունքներ է փոխել և միանշանակ պնդել, որ փուժող Հայկ Վասիլյանի ձեռքին եղել է երկաթյա մահակ, որով վերջինս մինչև իր կողմից դանակով հարվածելը, երկու անգամ փորձել է հարվածել իր գլխին, իսկ ինքը ձեռքով պաշտպանվել է:

Վերաքննիչ դատարանը փվյալ դեպքում, ամբաստանյալ Մայիս Սաֆարյանի ցուցմունքների արժանահավատության փաստականից կարևորում է այն հանգամանքը, որ ամբաստանյալ Մայիս Սաֆարյանը, նախկինում սրացած գանգուղեղային վնասվածքի հետևանքով փառապելով վերը նշված հիվանդությամբ, նախաքննության ընթացքում փված առաջին իսկ ցուցմունքով, (ընդ որում, հարցաքննությունը կատարվել է պաշտպանի բացակայությամբ), հայրնել է փուժողի ձեռքին երկաթյա մահակ լինելու հանգամանքի վերաբերյալ: Ամբաստանյալն իր ցուցմունքները պնդել է նաև փուժողի հետ առերես հարցաքննության ընթացքում:

Ինչ վերաբերվում է փուժող Հայկ Վասիլյանի ցուցմունքներին, ապա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ թեև փուժողը նախաքննության ընթացքում ցուցմունքներ է փոխել ամբաստանյալ Մայիս Սաֆարյանի հետ փիճաքանելու վերաբերյալ, սակայն դատաքննության ընթացքում հայրնել է, որ «(...) ամբաստանյալը չի եղել իրեն դանակով մարմնական վնասվածք հասցրած անձը: Եթե իրեն փիճաքանողին փեսանի, կճանաչի: (...) Ինքը նայում է, չի նմանեցնում ամբաստանյալին իր հետ փիճաքանողին: Իր հետ փիճաքանողը ավտոմեքենայի վարորդ է եղել,

որը կայանել է երթուղային տրաքսինների համար նախատեսված կայանատեղում (...):»

Անդրադառնալով դատարժեկական փորձաքննության թիվ 3924/հ եզրակացությանը, համաձայն որի՝ ամբաստանյալ Մայիս Սաֆարյանի մոտ փորձաքննության պահին մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանի դատաքննության ընթացքում պաշտպանական կողմը, առարկելով մեղադրողի վերաքննիչ բողոքի դեմ, հայտնել է, որ դեպքը տեղի է ունեցել 2013 թվականի նոյեմբերի 21-ին, և ամբաստանյալ Մայիս Սաֆարյանը գրնվել է ձմեռային հագուստներով, որի պարճառով էլ տուժողի հարվածներից Մայիս Սաֆարյանը ձեռքի շրջանում տեսանելի մարմնական վնասվածքներ չի սրացել: Միաժամանակ, դատաքննության ընթացքում առարկելով փորձագետի եզրակացության դեմ ամբաստանյալ Մայիս Սաֆարյանը հայտնեց, որ փորձաքննության ընթացքում իր մարմնի և ձեռքերի զննումը կատարվել է հագուստով և կրել է ձևական բնույթ:

Այս պայմաններում Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ամբաստանյալի ցուցմունքում տեղ գրած այն հանգամանքը, որ վիճաբանության ընթացքում տուժողի ձեռքին եղել է երկաթյա մահակ, որով էլ վերջինս փորձել է հարվածներ հասցնել ամբաստանյալին, հերքող բավարար ապացույցներ ինչպես քրեական գործի նախաքննությամբ, այնպես էլ դատաքննության ընթացքում ձեռք չեն բերվել, ինչը հիմք է տալիս ամբաստանյալի կողմից հայտնած հանգամանքի հավաստիության կասկակցությամբ հանգելու ողջամիտ ենթադրության, որն էլ անմեղության կանխավարկածի սկզբունքի համարեքստում ենթակա է մեկնաբանման հոգուր ամբաստանյալի (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 51-74):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտել է, որ ստորագրած դատարանների կողմից կայացվել են անօրինական և անհիմն դատական ակտեր:

Բողոք բերած անձը, վերլուծելով Վճարելի դատարանի՝ թիվ ԵԲԲԴ-Դ/0632/01/08, թիվ ԾԴ/0126/01/12, թիվ ԵԿԴ/0168/01/12, թիվ ԵԷԴ/0058/01/10 և թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները, եկել է այն եզրահանգման, որ Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել են ապացույցների գնահատման վերաբերյալ հիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները: Արդյունքում՝ ստորագրած դատարանները կամայական մոտեցմամբ առավել արժանահավատ են համարել Մ.Սաֆարյանին առաջադրված մեղադրանքը հերքող

ապացույցները՝ անտեսելով գործով ձեռք բերված և, համապատասխանաբար, առաջադրված մեղադրանքը հիմնավորող ապացույցները:

10. Ի հիմնավորումն իր փաստարկների՝ բողոքի հեղինակը գտել է, որ դատարանները հաստատված են համարել տուժող Հ.Վասիլյանի կողմից ամբաստանյալ Մ.Սաֆարյանին մահակով հարվածներ հասցնելու հանգամանքը՝ հիմք ընդունելով ոչ արժանահավատ ապացույցներ, այն է՝ ամբաստանյալի և վկա Ս.Հակոբյանի ցուցմունքները: Բողոքաբերը փաստարկել է, որ Մ.Սաֆարյանն իր նկատմամբ գործադրված ինտենսիվ բռնության, մասնավորապես՝ հասցված հարվածների քանակի և իր կողմից ֆիզիկական ցավ զգալու հետ կապված տվել է հակասական ցուցմունքներ, ինչը կասկածի տակ է դնում դրանց ճշմարտացիությունը: Ինչ վերաբերում է վկա Ս.Հակոբյանի ցուցմունքներին, ապա բողոքի հեղինակը շեշտել է, որ այդ անձն ամբաստանյալի և նրա հոր մերձավորն է, իսկ նրա ցուցմունքի բովանդակությունից հետևում է, որ նա ցուցմունք է տվել ամբաստանյալի հոր հետ խորհրդակցելուց հետո:

Բողոք բերած անձը, բացառելով տուժողի կողմից ամբաստանյալի նկատմամբ ինտենսիվ բռնություն գործադրելու հանգամանքը, նշել է նաև, որ տուժող Հ.Վասիլյանի ձեռքին մահակ չլինելու մասին ցուցմունքներ են տվել ինչպես ամբաստանյալի ծանոթ Ա.Պետրոսյանը, այնպես էլ ինքը՝ տուժողը, ընդ որում, Հ.Վասիլյանը դատարանում տրված ցուցմունքներով կասկածի տակ է դրել ընդհանրապես ամբաստանյալ Մ.Սաֆարյանին ճանաչելու հանգամանքը, սակայն իր կողմից մահակ գործադրելու փաստը հերքել է դատավարության ողջ ընթացքում:

Վերագրյալի հետ մեկտեղ՝ բողոքի հեղինակը փաստարկել է, որ դեպքից երկու օր անց կատարված դատաբժշկական փորձաքննությամբ Մ.Սաֆարյանի մոտ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել, իսկ ամբաստանյալը որևէ գանգատ չի հայտնել հարվածներ ստանալու կամ դրանց հետևանքների մասին: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը փորձել է հերքել սույն փաստարկը՝ հղում անելով պաշտպանական կողմի այն պատճառաբանություններին, որ Մ.Սաֆարյանի մոտ մարմնական վնասվածքների բացակայությունը պայմանավորված էր ձմեռային հագուստ կրելու հանգամանքով, ինչպես նաև հիմք է ընդունել ամբաստանյալի կողմից ձևական փորձաքննության ենթարկվելու վերաբերյալ հայտարարությունները: Վերաքննիչ դատարանի նշված հիմնավորումները, ըստ բողոքաբերի, պաշտպանական կողմի փաստարկների պարզունակ մեջբերումներ են և զուրկ են որևէ տրամաբանությունից:

Բացի այդ, բողոք բերած անձը գտել է, որ անհիմն են ամբաստանյալ Մ.Սաֆարյանի ցուցմունքների ճշմարտացիությունը նրա ունեցած՝ «Օրգանական ծագման էմոցիոնալ անկայուն խանգարում» հիվանդությամբ պայմանավորվելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները,

քանի որ այդ հանգամանքը որևէ կերպ չէր կարող ազդել Մ.Սաֆարյանի կողմից հայտնած տվյալների արժանահավատության վրա:

10.1. Բողոքաբերն անդրադարձել է նաև ամբաստանյալ Մ.Սաֆարյանի արարքին տրված իրավաբանական գնահատականին՝ արձանագրելով, որ անհիմն է սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի կիրառումը: Մասնավորապես՝ բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի հետևություններն անհրաժեշտ պաշտպանության իրավիճակի համար որոշիչ այնպիսի հանգամանքների մասին, ինչպիսիք են վիճարանության փոխադարձությունը, ոտնձգության առկայությունը, վտանգավորությունը և ինտենսիվությունը, տուժողին վնաս պատճառելու՝ ամբաստանյալի դիտավորության ուղղվածությունը, կատարվել են միայնաց ուղղակիորեն հակասող դատողությունների պայմաններում և չեն հիմնվել գործով ձեռք բերված ապացույցների պատշաճ գնահատման վրա: Վերաքննիչ դատարանը, իր հերթին, իրավաչափ է համարել Մ.Սաֆարյանի կողմից հանցագործությունն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարելու հանգամանքը՝ ոչ էական ու ձևական հիմնավորումներով օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերը՝ գործն ուղարկելով համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյոք ամբաստանյալ Մ.Սաֆարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ապացուցումը՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, սրույզելը և գնահատելն է»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածը սահմանում է, որ.

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. [Դ]ատրավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում է՝ ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Ապացուցման նպատակը կազմող ապացուցման ենթակա հանգամանքների համակարգը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում, որի համաձայն՝ «Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն),

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին,

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները,

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ,

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խտրացնող հանգամանքները,

6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով (...):

Մեջբերված դատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Ս.Սաքանյանի գործով կայացված որոշման մեջ՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «[ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածով նախատեսված] հանգամանքներն իրենց ամբողջության մեջ կազմում են ապացուցման առարկան, որն օրենքում ձևակերպված է ընդհանուր տեսքով և կիրառելի է բոլոր տեսակի հանցագործությունների համար: Դրա հետ մեկտեղ, սակայն, (...) ապացուցման առարկայի՝ օրենքում ամրագրված տիպական թվարկումը յուրաքանչյուր գործով ճշգրտվում և լրացվում է հանցագործության քրեահրավական որակմանը համապատասխան: Սա նշանակում է, որ կատարված իրադարձությունը (ինչպես ամբողջությամբ, այնպես էլ նրա յուրաքանչյուր հանգամանքը առանձին վերցված) յուրաքանչյուր դեպքում պետք է հետազոտել հաշվի առնելով քրեական օրենքով նախատեսված կոնկրետ հանցակազմի հատկանիշները:

(...) Ապացուցման առարկա կամ ապացուցման ենթակա հանգամանքներ հասկացության հետ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը կապում է «ապացույցների բավարարություն» հասկացությունը:

(...)

[Ա]պացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր փաստի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ

հանգամանքների բացահայտման արժանահավաստությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պարճատարանվածությունը:

(...)

[Ա]պացուցումը սերտորեն կապված է «հանցագործությունների որակում» հասկացության հետ. դրանք հարաբերակցվում են որպես գործունեություն և արդյունք: Հանցագործությունների որակումը ենթադրում է գործով բացահայտված հանգամանքների հետազոտություն, օրենքի իմաստի բացահայտում, կոնկրետ նորմի ընտրություն, այդ նորմում ամրագրված հարկանիշների հարադրում բացահայտված փաստերի հետ և որպես արդյունք՝ համապատասխան դատավարական փաստաթղթերում հերևության ձևավորում: (...)» (տես Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռարեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 14-15-րդ և 21-րդ կետերը):

14. ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վրանգավոր ուրնագությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ուրնագություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

(...)

4. Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտարկվող այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ուրնագության բնույթին և վրանգավորությանը:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հարկապես նախատեսված է սույն օրենսգրքի հարուկ մասով»:

Անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը, հատկապես՝ դրա իրավաչափության պայմանները Վճռարեկ դատարանը մանրամասն վերլուծության է ենթարկել Ա.Հակոբյանի գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ. «[Ա]նհրաժեշտ պաշտպանությունը՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք, կարող է դրսևորվել այն իրավիճակում, երբ հանրորեն վրանգավոր ուրնագությունից ուրնագողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանվում են

անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը: Իսկ սեփական կյանքը, առողջությունը և իրավունքները պաշտպանելիս անհրաժեշտ պաշտպանությունը դրսևորվում է որպես մարդու հիմնարար իրավունք:

(...) Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն ունի որոշակի սահմաններ: ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի մեկնաբանման հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ օրենքով ամրագրված են որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում է միայն պաշտպանությունը իրավաչափ և հետևաբար՝ արարքի հանցավորությունը բացառող: Այսպես, անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմաններն են.

ա) ուրնձգության հանրային վրանգավորությունը,

բ) ուրնձգության առկայությունը,

գ) ուրնձգության իրական լինելը,

դ) վրանգ սպառնալը անձի, հասարակության, պետության շահերին,

ե) վնաս հասցնելը միայն ուրնձգողին,

զ) պաշտպանության համարժեքությունը ուրնձգությանը:

Առաջին պայմանից հետևում է, որ ուրնձգությունն օժտված է հանրային վրանգավորությամբ, եթե այն անձի, հասարակության, պետության շահերին կարող է էական վնաս հասցնել:

Երկրորդ պայմանի համաձայն՝ ուրնձգությունը համարվում է առկա այն դեպքում, երբ այն արդեն սկսվել է, ընթացքի մեջ է և չի ավարտվել, ինչպես նաև այն դեպքում, երբ առկա է ուրնձգությունը սկսելու իրական, անմիջական սպառնալիք: Ուրնձգության առկայության պայմանը ենթադրում է, որ անհրաժեշտ պաշտպանությունն անթույլատրելի է արդեն ավարտված ուրնձգության դեպքում, բացառությամբ այն դեպքի, երբ վնաս պատճառողը չի գիտակցել ուրնձգության ավարտման փաստը: Վերջինիս դեպքում ուրնձգությունից առաջացած հուզմունքի պատճառով պաշտպանվողին կարող է թվալ, թե ուրնձգությունը դեռևս չի ավարտվել և անհրաժեշտ է պաշտպանվել: Նման դեպքերում թեև պաշտպանությունն անժամանակ է (ուշացած է), այն, այնուամենայնիվ, իրավաչափ է (...)» (տես Արտյոն Նորայրի Հակոբյանի վերաբերյալ Վճարելի դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0149/01/09 որոշման 26-27-րդ կետերը):

14.1. Անդրադառնալով անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման հարցին՝ Վճարելի դատարանը վերահաստատում է *Անուշավան Թորոսյանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներն այն մասին, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման հատկանիշների առկայության կամ բացակայության հարցի քննարկման համար առաջին հերթին պետք է պարզել անհրաժեշտ պաշտպանության վիճակի առկայության հարցը: Այլ կերպ՝ անհրաժեշտ է առաջին հերթին պարզել ուրնձգության և պաշտպանության առկայության, ապա

նոր միայն դրանց արդյունքում պատճառված վնասների համապատասխանության հարցը (տե՛ս Անուշավան Արամի Թորոսյանի վերաբերյալ Վճարելի դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0118/01/11 որոշման 15-րդ կետը):

15. Սույն որոշման 13-րդ և 14-14.1-րդ կետերի համադրված վերլուծության հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով ապացուցման առարկան կազմող հանգամանքների շարքում ընդգրկվում են նաև անհրաժեշտ պաշտպանության վիճակի առկայության և դրա սահմանազանցման հանգամանքները:

Ընդ որում, անձի արարքն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ հանցագործություն որակելու համար վարույթն իրականացնող մարմինը, ի թիվս ապացուցման առարկան կազմող այլ հանգամանքների, պարտավոր է արժանահավատ կերպով հաստատված համարել անհրաժեշտ պաշտպանության վիճակի (ոչնձգության և պաշտպանության) առկայության և դրա սահմանազանցման (սկնհայտ (խիստ, էական) անհամապատասխանություն ոչնձգությամբ սպառնացող և պաշտպանվողի կողմից պատճառվող վնասների միջև) հանգամանքները:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից Մ.Սաֆարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել Հ.Վասիլյանի հետ վիճաբանելու ընթացքում դիտավորությամբ նրա կրծքավանդակի ձախ կեսին դանակով մեկ անգամ հարվածելու և դրա հետևանքով վերջինիս առողջությանը կյանքին վտանգ սպառնացող, ծակած-կտրած թափանցող վերքի՝ ձախ թոքի վնասումով ծանր վնաս պատճառելու համար (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանն ապացուցված չի համարել Մայիս Սաֆարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարումը և գտել է, որ ամբաստանյալի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին՝ հաստատված համարելով տուժող Հայկ Վասիլյանի կողմից **կովի նախահարձակը** լինելու, ամբաստանյալ Մայիս Սաֆարյանին **ձեռքի զսպանակե մահակով** հարվածելու և նրան ֆիզիկական ցավ պատճառելու հանգամանքները: Նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ ամբաստանյալը տուժողին դանակով հարվածել և մարմնական վնասվածք է պատճառել վերջինիս հակաիրավական գործողությունները կանխելու նպատակով՝ դրանով իսկ պաշտպանվելով իր առողջության նկատմամբ իրականացվող **ինտենսիվ ոտնձգությունից՝**

թույլ տալով անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը նույնպես եզրահանգել է, որ գործում առկա ապացույցներով չի հաստատվում ամբաստանյալ Մայիս Սաֆարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարումը, և օրինական ուժի մեջ է թողել Առաջին ստյանի դատարանի դատավճիռը՝ գտնելով, որ ամբաստանյալի արարքին ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով տրվել է ճիշտ քրեա-իրավական գնահատական (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

17. Մինչդեռ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում գործի փաստերի հիման վրա արձանագրել, որ վկաներ Կարեն Բլբուլյանի և Արման Բաղդասարյանի ցուցմունքներում առկա չեն դեպքի բուն ընթացքին, մասնավորապես՝ ամբաստանյալ Մ.Սաֆարյանի և տուժող Հ.Վասիլյանի միջև տեղի ունեցած **վիճաբանության բնույթին, մանրամասներին և, հատկապես, տուժողի կողմից մահակ ունենալուն կամ գործադրելուն վերաբերող տեղեկություններ** (տե՛ս սույն որոշման 6.3-6.4-րդ կետերը):

Դեպքի բուն ընթացքին վերաբերող տեղեկություններ պարունակվում են միայն ամբաստանյալի, տուժողի, վկաներ Արմեն Պետրոսյանի և Մարգիս Հակոբյանի ցուցմունքներում (տե՛ս սույն որոշման 6-6.2-րդ, 6.6-րդ կետերը):

Տուժող Հայկ Վասիլյանի ձեռքին «երկաթյա մահակ» լինելու հանգամանքը ստորադաս դատարանները հաստատված են համարել հատկապես ամբաստանյալ Մայիս Սաֆարյանի ցուցմունքներով՝ պատշաճ գնահատման չենթարկելով այն իրողությունը, որ տուժող Հայկ Վասիլյանն իր թե՛ նախաքննական և թե՛ դատաքննական ցուցմունքներով հերքել է ամբաստանյալին մահակով հարվածներ հասցնելու հանգամանքը, իսկ վկա Արմեն Պետրոսյանը նշել է, որ որևէ մեկի ձեռքին որևէ իր չի նկատել (տե՛ս սույն որոշման 6.1-6.2-րդ կետերը):

Ավելին՝ Մայիս Սաֆարյանի ցուցմունքների արժանահավատությունը գնահատելիս ստորադաս դատարաններն ուշադրության չեն արժանացրել հանգամանքներն այն մասին, որ տուժող Հայկ Վասիլյանի կողմից գործադրված «մահակն» ամբաստանյալ Մայիս Սաֆարյանի կողմից տարբեր իրավիճակներում նկարագրվել է տարբերվող բնորոշումներով: Այսպես, 2013 թվականի նոյեմբերի 22-ի հարցաքննությամբ Մ.Սաֆարյանը հայտնել է Հ.Վասիլյանի կողմից «արծաթագույն, փայլուն մետաղե զսպանակ», 2014 թվականի ապրիլի 26-ի առերեսմամբ՝ «ինչ-որ սև բան», իսկ նույն թվականի ապրիլի 30-ի հարցաքննությամբ՝ «զսպանակե մահակ» գործադրելու մասին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Վճարելի դատարանն ընդգծում է, որ չնայած Մայիս Սաֆարյանն իր ցուցմունքներում վկայակոչել է նաև վաղ տարիքում ստացած գանգուղեղային վնասվածքի մասին, սակայն այդ

փաստական տվյալի իրական լինելը դեռևս բավարար չէ տուժողի ձեռքին մահակ լինելու և դրանով ամբաստանյալի ձեռքին հարվածներ հասցնելու վերաբերյալ նրա հայտնած տվյալները հաստատված գնահատելու համար:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ ամբաստանյալ Մ.Սաֆարյանն առաջին իսկ ցուցմունքով հայտնել է տուժող Հ.Վասիլյանի կողմից «մահակ» գործադրելու մասին, ինչպես նաև այն պնդել է տուժողի հետ առերես հարցաքննության ընացքում, Վճարելի դատարանն արձանագրում է, որ ի հակառակ դրա՝ ինչպես տուժող Հ.Վասիլյանը, այնպես էլ վկա Արմեն Պետրոսյանը գործի քննության ամբողջ ընթացքում հաստատապես պնդել են տուժող Հ.Վասիլյանի ձեռքին մահակի բացակայության հանգամանքը:

Վերոնշյալի հիման վրա Վճարելի դատարանը հիմնագուրկ է գնահատում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունները, թե ամբաստանյալի ցուցմունքների արժանահավատությունը պայմանավորված է նրա առաջին իսկ ցուցմունքով տուժողի կողմից գործադրված «մահակի» մասին հայտնելու և այն տուժողի հետ առերես հարցաքննության ընթացքում պնդելու հանգամանքներով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Մինևույն ժամանակ Վճարելի դատարանի համար անհասկանալի է, թե Վերաքննիչ դատարանը ամբաստանյալի ցուցմունքն արժանահավատ գնահատելիս ինչու է կարևորել նրա կողմից նախկինում ստացած գանգոլեղային վնասվածքի հետևանքով որոշակի հիվանդություններով տառապելու հանգամանքը:

Ավելին՝ դատաբժշկական փորձագետի՝ 2013 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 3924 եզրակացության համաձայն՝ *Մ.Սաֆարյանի մոտ, փորձաքննության պահին, մարմնական վնասվածքների օբյեկտիվ հարկանիշներ չեն հայտնաբերվել* (տե՛ս սույն որոշման 6.5-րդ կետը):

Այս առնչությամբ Վճարելի դատարանը հիմնավորված չի համարում դատաբժշկական փորձագետի եզրակացության գնահատման կապակցությամբ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված հանգամանքներն առ այն, որ «*Վերաքննիչ դատարանի դատաքննության ընթացքում պաշտպանական կողմը, առարկելով մեղադրողի վերաքննիչ բողոքի դեմ, հայտնել է, որ դեպքը տեղի է ունեցել 2013 թվականի նոյեմբերի 21-ին, և ամբաստանյալ Մայիս Սաֆարյանը գրնվել է ձմեռային հագուստներով, որի պարճառով էլ տուժողի հարվածներից Մայիս Սաֆարյանը ձեռքի շրջանում տեսանելի մարմնական վնասվածքներ չի սրացել: Միաժամանակ, դատաքննության ընթացքում առարկելով փորձագետի եզրակացության դեմ ամբաստանյալ Մայիս Սաֆարյանը հայտնեց, որ փորձաքննության ընթացքում իր մարմնի և ձեռքերի զննումը կատարվել է հագուստով և կրել է ձևական բնույթ»* (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը, բացառապես վկայակոչելով պաշտպանական

կողմի փաստարկները, որևէ հիմնավորում չի նշել դրանք գործի նյութերում առկա համապատասխան տվյալներով հաստատված լինելու մասին:

17.1. Անդրադառնալով վկա Սարգիս Հակոբյանի ցուցմունքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ս.Հակոբյանի ցուցմունքի գնահատելիս քննարկման առարկա չեն դարձրել.

- նախաքննության ընթացքում որպես վկա հարցաքննված Սամվել Հակոբյանի որդու՝ Վահրամ Հակոբյանի ցուցմունքը, որով վերջինս հերքել է «02» հաղորդաշարը նայելու և Մայիս Սաֆարյանի ու Հայկ Վասիլյանի միջև տեղի ունեցած վիճարանությունը հոր հետ քննարկելու հանգամանքը: Վկա Վահրամ Հակոբյանը խնդրել է չընդունել Սամվել Հակոբյանի կողմից տրված ցուցմունքները՝ նրա մոտ առողջական խնդիրների (հիշողության և տեսողության հետ կապված), ինչպես նաև հոգեկան անհավասարակշիռ վիճակի, ուժեղ երևակայության և հաճախակի հորինվածքներ ներկայացնելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 6.7-րդ կետը)

- բժիշկ-նյարդաբանի կողմից տրված «Էտապային էպիկրիզ»-ը, որի համաձայն՝ վկա Սամվել Հակոբյանի մոտ ախտորոշվել են կայուն մնացորդային երևույթներ կրած գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարումից ձախ հետին ուղեղային զարկերակի ավազանում, աջակողմ հոմոնիմ հեմիանոպսիա և ասթենո-դեպրեսիվ սինդրոմ (տե՛ս սույն որոշման 6.8-րդ կետը),

- իր կողմից տրված ցուցմունքներում Ս.Հակոբյանը հայտնել է, որ ճանաչում է Մ.Սաֆարյանի հորը և նրա առաջարկով է եկել ցուցմունք տալու, ինչպես նաև **վատատողջ է, ունի հիշողության հետ կապված խնդիրներ, տեսածը և լսածը շուտ է մոռանում** (տե՛ս սույն որոշման 6.6-րդ կետը),

- ցուցմունքներ տալիս օգտվել է գրառումներից (տե՛ս սույն որոշման 6.6-րդ կետը):

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկա Սամվել Հակոբյանի շահագրգռվածության, մասնավորապես՝ ամբաստանյալ Մայիս Սաֆարյանի հոր ծանոթը լինելու մասին հենց իր կողմից հայտնած տեղեկությունները, ինչպես նաև նրա կողմից հանգամանքներն ընկալելու, մտապահելու և վերարտադրելու դժվարությունների ու վատ տեսողության վերաբերյալ ինչպես իր, այնպես էլ իր որդու ցուցմունքներում, բժիշկ-նյարդաբանի ախտորոշումներում պարունակվող տվյալները կասկածի տակ են դնում Սամվել Հակոբյանի ցուցմունքների արժանահավատությունը:

18. Սույն որոշման 16-17.1-րդ կետերում կատարված փաստական վերլուծության նկատմամբ կիրառելով 13-15-րդ կետերում շարադրված իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժողի նախահարձակ լինելու և ամբաստանյալին մահակով հարվածներ

հասցնելու՝ ստորադաս դատարանների կողմից հաստատված փաստերը արժանահավատության տեսանկյունից կասկած են հարուցում: Այլ խոսքով՝ ստորադաս դատարանների կողմից պատշաճ չի հիմնավորվել սույն գործով ապացուցման առարկան կազմող այնպիսի էական հանգամանք, ինչպիսին է տուժող Հ.Վասիլյանի կողմից ամբաստանյալի նկատմամբ հանրորեն վտանգավոր ոտնձգություն կատարելը: Այսինքն՝ չի հիմնավորվել, որ ամբաստանյալն իրեն մեղսագրվող արարքը կատարել է **անհրաժեշտ պաշտպանության վիճակում**, որպիսի հանգամանքը բացառում է նրա արարքն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ հանցագործություն որակելու հնարավորությունը:

Վերոնշյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Մ.Սաֆարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

Արդյունքում Վճարելի դատարանը եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանը, Մ.Սաֆարյանի արարքը վերաորակելով որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ մեկ ուրիշի առողջությանը ծանր վնասի պատճառում, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ, 116-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի խախտում, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հիմք են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Մայիս Լևոնի Սաֆարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

59.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0030/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դատախազ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Տ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ Նարեկ Արկադիի Սահակյանի պաշտպան Ժ.Վարդյանի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի որոշման դեմ Վահե Վարուժանի Պարանյանի պաշտպան Ժ.Վարդյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ Հարություն Կառլենի Պետրոսյանի պաշտպան Դ.Պապոյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 90278811 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2011 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումներով Նարեկ Սահակյանը, Վահե Պարանյանը և Հարություն Պետրոսյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ 2011 թվականի հոկտեմբերի 24-ի որոշումներով Տիգրան Կոստանդյանը, Գևորգ Խնուսյանը և Սերգո Մելիքբեկյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2012 թվականի մարտի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով Ն.Սահակյանը, Վ.Պարանյանը, Հ.Պետրոսյանը, Տ.Կոստանդյանը, Գ.Խնուսյանը և Ս.Մելիքբեկյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել Ն.Սահակյանի և Վ.Պարանյանի պաշտպան Ժ.Վարոսյանը, Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանը և Վ.Բաբայանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2012 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ Վ.Պարանյանի մասով պաշտպան Ժ.Վարոսյանի վերաքննիչ բողոքով և 2012 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանի և Վ.Բաբայանի վերաքննիչ բողոքով վերաքննիչ վարույթները կարճվել են՝ իրենց դիմումների հիման վրա:

Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ Ն.Սահակյանի մասով պաշտպան Ժ.Վարոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, բեկանվել է Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, գործի վարույթը կարճվել է, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցվել:

Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ վճռարեկ բողոք չի ներկայացվել, և այն մտել է օրինական ուժի մեջ:

4. Վ.Պարանյանի պաշտպան Ժ.Վարոսյանի, Տ.Կոստանդյանի պաշտպան Գ.Մադոյանի, Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանի և Վ.Բաբայանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի մարտի

19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, գործի վարույթը Վ.Պարանյանի, Տ.Կոստանոյանի, Գ.Խնուսյանի մատով կարճել, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցրել:

Հ.Պետրոսյանի պաշտպան Ղ.Պապոյանի, Ս.Մելիքբեկյանի պաշտպան Ա.Քալաշյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը 2013 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, Հ.Պետրոսյանին, Ս.Մելիքբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացրել և նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել՝ կարճելով քրեական գործի վարույթը:

Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի և ապրիլի 29-ի որոշումները վճարելության կարգով չեն բողոքարկվել ու մտել են օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի որոշման դեմ Տ.Կոստանոյանի, Գ.Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի, իսկ նույն դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 29-ի որոշման դեմ մեղադրող Տ.Հարությունյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի հիմքով բերվել են վճարելի բողոքներ:

Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ վճարելի բողոքները մասնակիորեն բավարարվել են, ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի որոշումը Գ.Խնուսյանի և Տ.Կոստանոյանի մատով, ինչպես նաև նույն դատարանի՝ Հ.Պետրոսյանի և Ս.Մելիքբեկյանի վերաբերյալ 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումը բեկանվել են, գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

6. Նոր քննության արդյունքում վերաքննիչ դատարանը 2014 թվականի մայիսի 6-ի որոշմամբ պաշտպաններ Ա.Քալաշյանի, Ղ.Պապոյանի, Գ.Մադոյանի վերաքննիչ բողոքները բավարարել է ամբողջությամբ, իսկ պաշտպաններ Կ.Գրիգորյանի, Վ.Բաբայանի բողոքները՝ մասնակիորեն, այն է՝ Հ.Պետրոսյանի, Տ.Կոստանոյանի, Գ.Խնուսյանի և Ս.Մելիքբեկյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը բեկանել է և նրանց նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել ու քրեական հետապնդումը դադարեցրել:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել Գ.Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանը: Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ վճարելի բողոքը բավարարվել է մասնակիորեն, Գ.Խնուսյանի վերաբերյալ ՀՀ

վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանվել, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի հիմքով վճարելի բողոք է բերել Տ.Կոստանոյանի պաշտպան Կ.Գրիգորյանը: Վճարելի դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ վճարելի բողոքը բավարարվել է մասնակիորեն, Տ.Կոստանոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանվել, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

9. Հ.Պետրոսյանի պաշտպան Ղ.Պապոյանը Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի հիմքով բերել է վճարելի բողոք, որը վճարելի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Ն.Սահակյանի և Վ.Պարանյանի պաշտպան Ժ.Վարդյանը Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 21-ի և 2013 թվականի մարտի 19-ի որոշումների դեմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի հիմքով բերել է վճարելի բողոքներ, որոնք վճարելի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 30-ի որոշումներով ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով՝ Ն.Սահակյանը, Վ.Պարանյանը, Հ.Պետրոսյանը, Տ.Կոստանոյանը, Գ.Խնուսյանը և Ս.Մելիքբեկյանը մեղավոր են ճանաչվել այն բանի համար, որ նրանք, հանդիսանալով ՀՀ պաշտպանության նախարարության 54574 զորամասի ժամկետային զինծառայողներ, կոչումով կրտսեր սերժանտներ, 2011 թվականի հոկտեմբերի 14-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում, խախտելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ հոդվածով սահմանված զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները, զորամասի հրետանային դիվիզիոնի զորանոցում 7-ից 10 րոպե տևողությամբ ծաղրուծանակի են ենթարկել նույն զորամասի ժամկետային զինծառայող՝ կրտսեր սերժանտ Սամվել Արսենի Պապիկյանին, ստորացրել նրա պատիվն ու արժանապատվությունը և բռնություն գործադրել նրա նկատմամբ, այն է՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել նրա գլխին ու մարմնի տարբեր մասերին, ինչպես նաև սեռական բնույթի

հայեցողությանը հնչեցրել նրա հասցեին (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 14):

11. 2012 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «(...) [Ս]ույն գործով մեղադրանքի փաստական կողմը կազմող գործողությունները կատարելու համար Նարեկ Արկադիի Սահակյանի նկատմամբ ՀՀ ՊՆ 54574 զորամասի հրամանատարի 15.10.2011թ. թիվ 237 հրամանով նշանակվել է կարգապահական փուլով 10 օր ժամանակով: Նույն օրը Նարեկ Սահակյանը տեղափոխվել է ՀՀ ՊՆ Երևանի կայազորի Ռազմական Ուղղակիության կարգապահական մեկուսարան: (...) [Ա]մբաստանյալ Նարեկ Սահակյանը կարգապահական մեկուսարանում անազատության մեջ պահվել է 7/յոթ/ օր:

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) Նարեկ Սահակյանի նկատմամբ նշանակված և կիրառված 7 /յոթ/ օր կարգապահական կալանքն իր բնույթով և տևողությամբ հանդիսացել է քրեական պարիծ:

[Վ]երաքննիչ դատարանը գտնում է, որ Նարեկ Սահակյանի կողմից 7/յոթ/ օր կարգապահական կալանք կրելուց հետո նույն արարքի համար նրա դատապարտումը խախտել է կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը: Այսինքն՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արջանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով Նարեկ Սահակյանը կրկին անգամ դատվել է նույն արարքի համար»:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը որոշել է. «Նարեկ Արկադիի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արջանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը բեկանել, գործի վարույթը կարճել և նրա նկատմամբ դատարեցնել քրեական հետապնդումը» (տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 56-74):

12. Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի որոշման համաձայն՝ «(...) [Ս]ույն գործով մեղադրանքի փաստական կողմը կազմող գործողությունները կատարելու համար Գևորգ Խնուսյանի, Վահե Պարանյանի և Տիգրան Կոստանյանի նկատմամբ ՀՀ ՊՆ 54574 զորամասի հրամանատարի 15.10.2011թ. թիվ 237 հրամանով նշանակվել է կարգապահական փուլով 10-ական օր ժամանակով:

[Ա]մբաստանյալներ Գևորգ Խնուսյանը և Տիգրան Կոստանյանը կարգապահական մեկուսարանում անազատության մեջ պահվել են 10/փաստ/ օր, իսկ Վահե Պարանյանը՝ 7/յոթ/ օր:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) Գևորգ Խնուսյանի և Տիգրան Կոստանյանի նկատմամբ կիրառված 10/փաստ/ օր, իսկ Վահե Պարանյանի նկատմամբ կիրառված 7 /յոթ/ օր կարգապահական կալանքն իր բնույթով և տևողությամբ հանդիսացել է քրեական պարիծ:

[Վ]երաքննիչ դատարանը գրնում է, որ Գևորգ Խնուսյանի, Վահե Պարանյանի և Տիգրան Կուսուրյանի կողմից կարգապահական կալանք կրելուց հետո նույն արարքի համար նրանց դատապարտումը խախտել է կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը: Այսինքն՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով Գևորգ Խնուսյանը, Վահե Պարանյանը և Տիգրան Կուսուրյանը կրկին անգամ դատվել են նույն արարքի համար»:

Վերոշարադրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը որոշել է. «Գևորգ Սերոբի Խնուսյանի, Վահե Վարուժանի Պարանյանի, Տիգրան Ռուբենի Կուսուրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի 2012թ. օգոստոսի 23-ի դատավճիռը բեկանել, գործի վարույթը Գևորգ Սերոբի Խնուսյանի, Վահե Վարուժանի Պարանյանի և Տիգրան Ռուբենի Կուսուրյանի մասով կարճել և նրանց նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 134-142):

13. Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 29-ի որոշման համաձայն՝ «(...) [Մ]ույն գործով մեղադրանքի փաստական կողմը կազմող գործողությունները կատարելու համար Հարություն Պետրոսյանի և Սերգո Մելիքբեկյանի նկատմամբ ՀՀ ՊՆ 54574 զորամասի հրամանատարի 15.10.2011թ. թիվ 237 հրամանով նշանակվել է կարգապահական տույժ 10-ական օր ժամանակով:

[Ա]մբաստանյալ Սերգո Մելիքբեկյանը կարգապահական մեկուսարանում անազատության մեջ պահվել է 10/տաս/ օր, իսկ Հարություն Պետրոսյանը՝ 7/յոթ/ օր:

(...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ (...) Սերգո Մելիքբեկյանի նկատմամբ կիրառված 10/տաս/ օր, իսկ Հարություն Պետրոսյանի նկատմամբ կիրառված 7/յոթ/ օր կարգապահական կալանքներն իրենց բնույթով և տևողությամբ հանդիսացել են քրեական պարիժ:

[Վ]երաքննիչ դատարանը գրնում է, որ Հարություն Պետրոսյանի և Սերգո Մելիքբեկյանի կողմից կարգապահական կալանք կրելուց հետո նույն արարքի համար նրանց դատապարտումը խախտել է ՀՀ Սահմանադրության 22-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածներով սահմանված կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը»:

Վերոշարադրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը որոշել է. «Հարություն Կառլենի Պետրոսյանի և Սերգո Արմենի Մելիքբեկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի 2012թ.

օգտարուսի 23-ի դատարվճիորը քեկանել, Հարություն Կառլենի Պեարոսյանին, Մերգո Արմենի Մեյիքքեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հողվածի 2-րդ մասի 2-րդ կեարով առաջարկված մեղադրանքում արդարացնել և դադարեցնել նրանց նկարմամբ քրեական հեարապնդումը՝ կարճելով քրեական գործի վարույթը» (տե՛ն քրեական գործ, հատոր 8, թերթեր 203-208):

14. Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման համաձայն՝ «[Զ]րեական գործի վարույթը կարճելու և քրեական հեարապնդումը դադարեցնելու մասին Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի և 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումներն օրինական, հիմնավորված և պարճառարանված չեն, քանի որ դրանցում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հեարապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատարվարության օրենսգրքի 35-րդ հողվածի 1-ին մասով նախարեակված որևէ հիմբ:

Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հեարապնդումը դադարեցնելու մասին որոշումներում ՀՀ քրեական դատարվարության օրենսգրքի 35-րդ հողվածի 1-ին մասով նախարեակված որևէ հիմբ չմարնանշելով՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Գ.Խնուսյանի, Տ.Կուսրանդյանի, Հ.Պեարրոսյանի և Ս.Մեյիքքեկյանի իրավունքները՝ թույլ տալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազարությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությանը և քրեադատարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտում:

(...)» (տե՛ն քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 122-135):

15. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշման համաձայն՝ «[Գ]ործի քննության արդյունքում թույլ են տրվել նյութական և դատարվարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են դատական սխալի, հեարևարար Դատարանի 23.08.2012թ. դատարվճիորը՝ քրեական գործով ըար մեղադրանքի՝ Գևորգ Մերոքի Խնուսյանի, Հարություն Կառլենի Պեարրոսյանի, Տիգրան Ռուրենի Կուսրանդյանի և Մերգո Արմենի Մեյիքքեկյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հողվածի 2-րդ մասի 2-րդ կեարով, պեարք է քեկանել և նրանց նկարմամբ քրեական գործի վարույթը կարճել և քրեական հեարապնդումը դադարեցնել՝ ՀՀ քրեական դատարվարության օրենսգրքի 35-րդ հողվածի 5-րդ մասի հիմբով կրկին դատարարվելու անթույլարրելիության պարճառարանությանը» (տե՛ն քրեական գործ, հատոր 10, թերթեր 118-138):

16. Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի և 2015 թվականի փետրվարի 27-ի որոշումներով Գ.Խնուսյանին և Տ.Կուստանդյանին վերաբերող մասերով գործը նոր քննության ուղարկելու արդյունքում **2015 թվականի հունիսի 9-ին Վերաքննիչ դատարանը կայացրել է որոշում, որի եզրափակիչ մասն ունի հետևյալ**

բովանդակությունը. «(...) Ամբաստանյալ Գևորգ Սերոբի Խնուսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքով ճանաչել անմեղ և արդարացնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Ամբաստանյալ Տիգրան Ռուբենի Կուսրանդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքով ճանաչել անմեղ և արդարացնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 39-51):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքները քննվում են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

17. Բողոքների հեղինակները փաստարկել են, որ սույն գործով թույլ են տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև՝ Կոնվենցիա) թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ մասի, ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ և 35-րդ հոդվածների պահանջների խախտումներ:

18. Բողոքաբերներն իրենց վճարելի բողոքներում, մասնավորապես, նշել են, որ կալանքի ձևով կարգապահական տույժ կրելուց հետո Ն.Սահակյանը, Վ.Պարանյանը և Հ.Պետրոսյանը միևնույն արարքի համար ենթարկվել են քրեական պատասխանատվության և դատապարտվել մեկական տարվա ազատազրկման, որի արդյունքում խախտվել է կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը: Այսինքն՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով Ն.Սահակյանը, Վ.Պարանյանը և Հ.Պետրոսյանը կրկին դատվել են նույն արարքի համար:

Այս պայմաններում Վերաքննիչ դատարանը, հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ արդարացման դատական ակտ կայացնելու փոխարեն, Ն.Սահակյանի, Վ.Պարանյանի, Հ.Պետրոսյանի մասով կարճել է քրեական գործի վարույթը և նրանց նկատմամբ դադարեցրել քրեական հետապնդումը՝ առանց մատնանշելու կարճման արդարացնող հիմքը:

19. Վերոշարադրյալի հիման վրա՝

ա) Ն.Սահակյանի պաշտպանը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը և Ն.Սահակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնել,

բ) Վ.Պարանյանի պաշտպանը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի որոշումը և

Վ.Պարանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնել,

գ) Հ.Պետրոսյանի պաշտպանը խնդրել է քեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը և Հ.Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

20. Վճարելի դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. սույն գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման առկայության պայմաններում օրինական և հիմնավորված են արդյոք Վերաքննիչ դատարանի՝ Ն.Սահակյանի վերաբերյալ 2012 թվականի նոյեմբերի 21-ի, Վ.Պարանյանի վերաբերյալ 2013 թվականի մարտի 19-ի որոշումները:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

2. Դատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են փվյալ քրեական գործը լուծելիս:

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա,

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրված բոլոր հետևությունները և որոշումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

1) բացակայում է հանցագործության դեպքը.

2) արարքի մեջ հանցակազմ չկա.

3) վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ.

4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.

5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում փուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ.

6) անցել են վաղեմության ժամկետները.

7) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ դատարանի այլ որոշում, որը հաստատում է քրեական հետապնդման անհնարինությունը.

8) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում.

9) անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված փարիքին.

10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանցանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար.

11) անձը կամովին հրաժարվել է հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, եթե նրա փաստորեն կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում.

12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից.

13) ընդունվել է համաներման ակտ»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները»:

21.1. Վերոնշյալ նորմերի համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը Գ.Խնուսյանի և մյուսների գործով որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «[Թ]եև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայությունը քրեական դատավարության ցանկացած փուլում անվերապահորեն պետք է հանգեցնի քրեական հետապնդման դադարեցման (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի), այնուամենայնիվ նշված հիմքերն իրենց բովանդակությամբ և կիրառման իրավական հետևանքներով փարբեր են: Հետևաբար, նշված հիմքերից որևէ մեկի հայրնաբերման դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ոչ միայն որոշում կայացնել քրեական գործի վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, այլ նաև իր որոշման մեջ

հարակ պետք է ամրագրի քրեադատարարական օրենքի այն նորմը, որի հիման վրա կայացվում է այդ որոշումը:

Քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվող որոշման մեջ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի հարակ ամրագրման պահանջը պարտադիր է ոչ միայն քննարկվող քրեադատարարական ակտի օրինականության, հիմնավորվածության և պարճատարանվածության օրենսդրական պահանջն ապահովելու համար, այլ նաև անհրաժեշտ նախապայման է դատական ակտի որոշակիության, արդարադատության մարչելիության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներին համարժեք՝ անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար: Այլ կերպ՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և (կամ) քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ ՀՀ քրեական դատարարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որևէ հիմքի հարակ ամրագրումը պարտադիր է և ի թիվս այլոց, պայմանավորված է.

ա) անձի իրավական կարգավիճակի հարակեցման, և դրանից ելնելով՝ քրեական հետապնդման հերևանքով խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման, ինչպես նաև պարճատված վնասի հարուցման իրավունք վերապահելու անհրաժեշտությամբ,

բ) քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի, այդ թվում՝ արդարացման հիմքի մասով բողոքարկելու իրավունք վերապահող քրեադատարարական նորմերի գործողության ապահովման անհրաժեշտությամբ» (տես Գևորգ Մերքի Խնույանի և մյուսների գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 17-րդ կետը):

Մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործով Գ.Խնույանի և Տ.Կոստանոյանի մասերով կայացված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի որոշումը՝ Վճարելի դատարանը գտել է, որ այն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, քանի որ դրանում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատարարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք, որի արդյունքում Վերաքննիչ դատարանը սահմանափակել է, ի թիվս այլոց, Գ.Խնույանի, Տ.Կոստանոյանի իրավունքները՝ թույլ տալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատարարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտում:

22. Այսպիսով, Վճարելի դատարանը դեռևս 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ Գ.Խնուսյանի և Տ.Կոստանոյանի մասերով անդրադարձել է Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի որոշման օրինականությանն ու հիմնավորվածությանը և արձանագրել, որ այն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, քանի որ դրանում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք:

22.1. Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի որոշումը բողոքարկվել էր Վճարելի դատարան միայն Գ.Խնուսյանի և Տ.Կոստանոյանի մասով, իսկ Վ.Պարանյանի մասով վճարելի բողոք չէր ներկայացվել: Հետևաբար Վճարելի դատարանն իրավասու չի եղել գործը ստուգման ենթարկել նաև նրա մասով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

22.2. Հաշվի առնելով, որ Գ.Խնուսյանի և Տ.Կոստանոյանի, ինչպես նաև Վ.Պարանյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի որոշման պատճառաբանությունները նույնական են (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը)՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Գ.Խնուսյանի և Տ.Կոստանոյանի վերաբերյալ Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման հիմնավորումները հավասարապես վերաբերելի են բողոքարկվող դատարան ակտի օրինականությանը՝ Վ.Պարանյանի մասով: Հետևաբար Վերաքննիչ դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի որոշումը Վ.Պարանյանի մասով նույնպես օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, քանի որ դրանում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք:

23. Անդրադատնալով Ն.Սահակյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 21-ի որոշման օրինականությանը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ հիշյալ որոշմամբ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտման փաստը, գործի վարույթը կարճել է և Ն.Սահակյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել՝ չնշելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

23.1. Հաշվի առնելով, որ նախորդ կետում մեջբերված փաստերը և Գ.Խնուսյանի ու մյուսների վերաբերյալ Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ հիմք ընդունված փաստերը նույնանման են՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման հիմնավորումները հավասարապես կիրառելի են նաև Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի

նույնների 21-ի որոշման օրինականության նկատմամբ: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի նույնների 21-ի որոշումը նույնպես օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, քանի որ դրանում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք:

24. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի՝ Ն.Սահակյանի վերաբերյալ 2012 թվականի նույնների 21-ի, Վ.Պարանյանի վերաբերյալ 2013 թվականի մարտի 19-ի որոշումները օրինական և հիմնավորված չեն:

25. Վճարելի դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. սույն գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի և 2015 թվականի փետրվարի 27-ի որոշումների առկայության պայմաններում օրինական և հիմնավորված է արդյոք Վերաքննիչ դատարանի՝ Հ.Պետրոսյանի վերաբերյալ 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը:

26. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական արյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճարելի դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճարելի դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի համաձայն՝ *«Վճարելի դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճարելի դատարանը՝*

(...)

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճարելի բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստոադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճարելի դատարանի (...) դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն Կրիմեյի փաստական հանգամանքների նկատմամբ:

26.1. Մեջբերված իրավական նորմերը Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել Գ.Խնուսյանի վերաբերյալ որոշմամբ, որով դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «(...) [Մ]տորադաս դատարանում գործի նոր քննության սահմանները կանխորոշվում են վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով և դրանով սահմանված նոր քննության ծավալով, ինչը բխում է արդարադատության արդյունավետության ապահովման ինտրից, մասնավորապես դատական ակտերի բողոքարկման և կրկին բեկանման շրջապտույրից խուսափելու անհրաժեշտությունից: Բացի այդ, նման կարգավորումն անհրաժեշտ նախապայման է վճարելի դատարանի կողմից օրենքի միաբեկակ կիրառության ապահովման գործառույթի արդյունավետ իրականացման համար: Միասնական դատական պրակտիկայի ձևավորումը հնարավոր է միայն ստորադաս դատարանի համար պարտադիր և ուղղորդող նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումների մշակմամբ:

(...)

[Ը]նդհանուր կանոնի համաձայն՝ ստորադաս դատարանն իրավասու չէ դուրս գալ վճարելի դատարանի որոշմամբ սահմանված գործի նոր քննության ծավալներից և, միևնույն ժամանակ, պարտավոր է կատարել գործի նոր քննության ծավալով սահմանված անհրաժեշտ դատավարական գործողությունները: Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և դրանով սահմանված նոր քննության ծավալը պարտադիր են ստորադաս դատարանի համար, ուղղորդում են գործի նոր քննությունը, սակայն չեն կանխորոշում դրա արդյունքը:

[Օ]րենսդիրը նախատեսել է Վճարելի դատարանի որոշման պարտադիրության ընդհանուր կանոնից բացառություն: Դատական ակտ կայացնելիս ստորադաս դատարանը կարող է չկատարել Վճարելի դատարանի որոշման պահանջները, որի դեպքում սակայն ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ պետք է հիմնավորի այնպիսի բացառիկ հանգամանքի առկայությունը, որի պայմաններում Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշումը կիրառելի չէ Կրիմեյի գործով կամ նոր քննությունը չի կարող կատարվել սահմանված ծավալով: (...)» (տես

Գևորգ Սերոբի Խնուսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 16-րդ և 18-րդ կետերը):

26.2. Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Գ.Խնուսյանի մասով գնահատելով սույն գործի փաստերը՝ Վճարելի դատարանն արձանագրել է. «(...) [Մ]որ քննության ընթացքում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և դրանով սահմանված նոր քննության ծավալն իր համար պարտադիր քննությունն են: Վերաքննիչ դատարանը, չկատարելով Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման պահանջը, ղեկավարվելով ընդհանրական քննությունն անցողու քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք չհանդիսացող իրավական նորմով, իր դատական ակտում չի մատնանշել քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք, ինչպես նաև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չի հիմնավորել այնպիսի բացառիկ հանգամանքի առկայությունը, որի պայմաններում Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումը կիրառելի չէ, որովայն գործով կամ նոր քննությունը չի կարող կատարվել սահմանված ծավալով» (տես Գևորգ Սերոբի Խնուսյանի գործով Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 20-րդ կետը):

26.3. Սույն որոշման 26-26.2-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և դիրքորոշումների հիման վրա Վճարելի դատարանը 2015 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ նույնական դիրքորոշում է արտահայտել նաև Տ.Կոստանդյանի մասով Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշման օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ:

27. Այսպիսով, Վճարելի դատարանը դեռևս 2014 թվականի հոկտեմբերի 31-ի և 2015 թվականի փետրվարի 27-ի որոշումներում, համապատասխանաբար Գ.Խնուսյանի և Տ.Կոստանդյանի մասերով անդրադարձել է Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշման օրինականությանն ու հիմնավորվածությանը և արձանագրել, որ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում չի մատնանշել քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք՝ դրանով իսկ չկատարելով Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման պահանջը, ինչպես նաև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չի հիմնավորել այնպիսի բացառիկ հանգամանքի առկայությունը, որի պայմաններում Վճարելի դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումը կիրառելի չէ

տվյալ գործով, կամ նոր քննությունը չի կարող կատարվել սահմանված ծավալով:

27.1. Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ վճարելի բողոքներ են բերվել միայն Գ.Խնուսյանի և Տ.Կոստանդյանի մասերով, իսկ Հ.Պետրոսյանի մասով վճարելի բողոք չի ներկայացվել (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը), հետևաբար Վճարելի դատարանն իրավասու չի եղել գործը ստուգման ենթարկել նաև նրա մասով:

Արդյունքում Վճարելի դատարանը 2014 թվականի հոկտեմբերի 31-ի և 2015 թվականի փետրվարի 27-ի որոշումներով Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության միայն Գ.Խնուսյանի և Տ.Կոստանդյանի մասերով (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը):

28. Հիմք ընդունելով *Գ.Խնուսյանի և Տ.Կոստանդյանի* վերաբերյալ գործերով Վճարելի դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն որոշման 27-27.1 կետերում կատարված վերլուծությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վճարելի դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի և 2015 թվականի փետրվարի 27-ի որոշումների առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի՝ Հ.Պետրոսյանի վերաբերյալ 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը օրինական և հիմնավորված չէ:

29. Մինևսույն ժամանակ Վճարելի դատարանը վերահաստատում է Գ.Խնուսյանի վերաբերյալ որոշմամբ ձևավորած իրավական դիրքորոշումն առ այն, որ «(...) *[Ն]ույն արարքի համար կրկին դարվելու անթույլատրելիության պարճառարանությանը քրեական հետապնդումը դադարեցնելիս անձին պետք է փրվի արդարացվածի կարգավիճակ:*

(...)

[Թ]ողոր այն դեպքերում, երբ նույն արարքի համար կարգապահական կամ վարչական պարասխանարվությանը հաջորդած քրեական դատարարությունը կամ քրեական հետապնդումը գնահատվի որպես նույն արարքի համար կրկին դարվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում, իրավակիրառողները քրեական հետապնդումը դադարեցնելիս պետք է ղեկավարվեն ՀՀ քրեական դատարարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (բացակայում է հանցագործության դեպքը), ինչն իր բնույթով արդարացնող (ռեաբիլիտացիոն) հիմք է: Արդյունքում անձը ձեռք կբերի արդարացվածի կարգավիճակ, հետևաբար կդադարեցվի նաև խախտումը և նրան կտրամադրվի համարժեք հատուցում» (տե՛ս Գևորգ Սերոբի Խնուսյանի գործով Վճարելի դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 28-րդ կետը):

Մեջբերված իրավական դիրքորոշման լույսի ներքո Վճարելի դատարանը ընդգծում է, որ սույն գործով Վ.Պարանյանի, Ն.Սահակյանի և

Հ.Պետրոսյանի՝ կարգապահական պատասխանատվությանը հաջորդած քրեական հետապնդումը և քրեական դատապարտումը նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում համարվելը անվիճարկելի փաստեր են (տե՛ս սույն որոշման 11-12-րդ, 15-րդ կետերը), ավելին՝ գործի նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2015 թվականի հունիսի 9-ի որոշմամբ Գ.Խնուսյանի և Տ.Կոստադյանի մասերով արդեն իսկ կայացրել է արդարացման դատական ակտ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը):

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ելնելով արդարադատության արդյունավետության շահերից և, մասնավորապես, սույն գործի քննության ողջամիտ ժամկետները պահպանելու անհրաժեշտությունից՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա անհրաժեշտ է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, ճանաչել Ն.Սահակյանի, Վ.Պարանյանի և Հ.Պետրոսյանի անմեղությունը նրանց առաջադրված մեղադրանքներում, նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցադեպի բացակայության պատճառարանությամբ, և քրեական գործի վարույթը կարճել:

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Վերաքննիչ դատարանում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 3611-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքները բավարարել:

2. Նարեկ Արկադիի Սահակյանի վերաբերյալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը բեկանել: ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ

կետով առաջադրված մեղադրանքում Նարեկ Արկադիի Սահակյանին արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել:

3. Վահե Վարուժանի Պարանյանի վերաբերյալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2013 թվականի մարտի 19-ի որոշումը բեկանել: ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում Վահե Վարուժանի Պարանյանին արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել:

4. Հարություն Կառլենի Պետրոսյանի վերաբերյալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանել: ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում Հարություն Կառլենի Պետրոսյանին արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Մայաք-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ info@asoghik.am